

Հարգելի՛ ընթերցող,

«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունն իր գործունեության հինգ տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան երեք տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:



Ներկայումս կայքում առկա նյութերի քանակն անցել է 6000-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 3000-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆ-ԱՃԱԲ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO has initiated more than two dozen programs during four years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out – www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 6000, and the number of authors of materials - 3000.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) в течение пятилетней своей деятельности инициировала более трёх десятков программ. Среди них можно выделить сайт Электронной библиотеки Арцаха – www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 6000, а количество авторов материалов - 3000.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищите сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(3), 2019



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(3), 2019

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(3), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Նվիրվում է Երևանի պետական համալսարանի
հիմնադրման 100-ամյակին**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՄԻՍՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԱՆԿՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏՅԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
Ռուզաննա ՀԱՎՈՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 2(3), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 472 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 2-րդ համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Հարավային Օսեթիան, Ռուսաստանի Դաշնությունը և Ուկրաինան ներկայացնող մոտ հինգ տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

*Dedicated to the 100th Anniversary
of Yerevan State University*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 2(3), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 472 pages.

The second issue of «Scientific Artsakh» journal 2019 comprises the scientific works of approximately 50 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Islamic Republic of Iran, Poland, South Ossetia, Russia and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert

Издаётся решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Посвящается 100-летию основания
Ереванского государственного университета*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Ариун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джультетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 2(3), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 472 страниц.

В втором номере 2019 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Исламской Республики Иран, Польши, Южной Осетии, России и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее Армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS СОДЕРЖАНИЕ

ՔՍՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Գրիգոր Բալասանյան, Դիանա Նանյան. Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում և չճանաչված պետությունների գործոնը.....12
Grigor Balasanyan, Diana Nanyan. Turkey's Policy in the South Caucasus and Fact of the Non Recognized States.

Григор Баласанян, Диана Нанян. Политика Турции на Южном Кавказе и фактор непризнанных государств

Խաչիկ Գալստյան. Կարգավիճակի ճանաչման և նախավիճակի (status quo) փոփոխման հիմնահարցը արցախյան կարգավորման բանակցություններում.....22

Khachik Galstyan. The Status Recognition Problem and the Primary State Change (Status Quo) in the Negotiations on Artsakh Settlement

Хачик Галстян. Проблема признания статуса (status) и изменения первичного состояния (status quo) в переговорах по арцахскому урегулированию

Աբրահամ Գասպարյան. Կուսակցապետության և անվտանգային կառույցների զերիշխանության իրավաքաղաքական հիմքերը Սիրիայում.....29

Abraham Gasparyan. The Legal and Political Basis for Superior Leadership of “Ba’ath” Party and Intelligence Services in Syria

Абраам Гаспарян. Политико-правовая основа поддержки партийных и безопасных структур в Сирии

Դմիտրի Դեսյաև. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում միջազգային ակտորները. ռազմավարական հետաքրքրություններ և կարգավորման մոտեցումներ.....43

Dmitry Desyaev. The International Actors in the Nagorny Karabakh Conflict: Strategic Interests And Approaches to Settlement

Дмитрий Десяев. Международные акторы в нагорно-карабахском конфликте: стратегические интересы и подходы к урегулированию

Մարեկ Շեյմո. Լեհաստանի հայերը միջնադարից մինչև մեր օրերը.....59

Marek Zejmo. Polish Armenians from Middle Ages Today

Марек Жеймо. Польские армяне со средневековья по настоящее время

Ռոման Կարապետյան. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները. հայացք միջազգային ճգնաժամային խմբի զեկույցների զնահատականների դիտանկյունից.....76

Roman Karapetyan. Prospects for the Settlement of the Nagorno-Karabakh Conflict: Review of the Reports of the International Crisis Group

Роман Карапетян. Перспективы урегулирования нагорно-карабахского конфликта: обзор докладов международной кризисной группы

Ալեն Ղևոնդյան. Անվտանգային ռիսկերի կառավարման հիմնահարցը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում.....86

Alen Ghevondyan. The Issue of Security Risk Management in the Context of National Security of the Republic of Armenia

Ален Гевондян. Проблема управление рисками безопасности в контексте обеспечения национальной безопасности РА

Ռոբերտ Ղևոնդյան, Տաթևիկ Հայրապետյան. Ադրբեջանական ագրեսիայի կանխարգելումը՝ հասարակության սպասումների ուղղորդման միջոցով.....93

Robert Ghevondyan, Tatevik Hayrapetyan. The Prevention of Azerbaijani Aggression with Redirection of Social Expectations

Роберт Гевондян, Татевик Айрапетян. Предотвращение азербайджанской агрессии посредством каналирования ожиданий общества

Մարինե Մովսիսյան. Մասնակցային ժողովրդավարության և ազգային անվտանգության փոխհարաբերությունները՝ որպես պետականության ամրապնդման պայման.....103

Marine Movsisyan. Participatory Democracy and National Security Relations as a Condition for Statehood Strengthening

Марине Мовсисян. Отношения между партиципаторной демократией и национальной безопасностью как условие обеспечения государственности

Լիլիթ Չիչոյան. Պետական կառավարման որակը որպես պետության իմիջի արդիականացման գործոն. ազատության վիճակն աշխարհում (freedom in the world) միջազգային ինդեքսը Հայաստանի ու Արցախի համար.....112

Lilit Chichoyan. The Quality of Public Administration as a Factor of Modernizing the State Image: Freedom in the World International Index for Armenia and Artsakh

Лилит Чичоян. Качество государственного управления как фактор модернизации имиджа государства: международный индекс свободы в мире для Армении и Арцаха

Սոսլան Պլիև. Պետության կայացվածության հիմնական հատկանիշների գիտական սահմանումները.....124

Soslan Pliev. Scientific Definitions of the Main Signs of Public State

Сослан Плиев. Научные дифиниции основных признаков государственной состоятельности

Գուրգեն Սիմոնյան. Կենսատարածք. Հայաստանի աշխարհագրական քաղաքականությունն ու տարածքների արդյունավետ կառավարման հիմնահարցերը.....131

Gurgen Simonyan. Living Space: Armenian Geographical Policy and Matters of Territorial Good Governance

Гурген Симонян. Жизненное пространство: географическая политика армении и вопросы эффективного управления территорией

Էդգար Զալանթարյան. Կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածք և արդյունավետություն.....141

Edgar Kalantaryan. Organizational Structure and Effectiveness of Organizations

Эдгар Калантарян. Организационная структура и эффективность организаций

SՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

- Արման Ասրյան.** Համատիրությունների գործունեության խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում..... 148
Arman Asryan. The Barriers to the Operation of Condominiums and the Ways to Overcome them in the RA
Арман Асрян. Препятствия деятельности кондоминиумов и пути их преодоления в РА
- Մարինե Ավետիսյան.** Բանկային ճգնաժամերը պայմանավորող գործոնների համեմատական վերլուծություն հայաստանի և Արցախի տնտեսությունների համար..... 163
Marine Avetisyan. Comparative Analysis of the Factors of Banking Crises for the Economies of Armenia and Artsakh
Марине Аветисян. Сравнительный анализ факторов банковского кризиса для экономики Армении и Арцаха
- Նադեժդա Աֆյան.** Հայաստանի հանքավայրերի շահագործման շահագրգիռ կողմերի հակասությունները..... 176
Nadezdha Afyan. Conflicts of Stakeholders of Armenian Mining
Надежда Афян. Противоречия заинтересованных сторон по эксплуатации месторождений армении
- Ճաննա Բազիյան.** Տեխնոպարկերի ստեղծումը՝ որպես գիտելիքահեղձ տնտեսության զարգացման գործիք. օտարերկրյա փորձը և դասեր Հայաստանի համար..... 184
Zhanna Baziyan. Formation of Technoparks as an Instrument of Development of the Knowledge Economy: Foreign Experience and Lessons for Armenia
Жанна Базиян. Создание технопарков как инструмент развития экономики знаний: зарубежный опыт и уроки для Армении
- Տիգրան Բեգլարյան.** ՀՀ սոցիալական հիփոթեքի, բնակարանաշինության և հիփոթեքային շուկայի ֆինանսական խթանման միջոցները ՀՀ-ում..... 193
Tigran Beglaryan. Financial Measures of State Incentives for Social Mortgage, Housing Construction and Mortgage Market in RA
Тигран Бегларян. Финансовые меры государственного стимулирования социальной ипотеки, жилищного строительства и ипотечного рынка в РА
- Սամսոն Դավոյան, Լուսյա Գալոյան.** Երկրների իրականացրած բազմաբնույթ վերափոխումների ընդհանրական գնահատումը. փաստեր և վերլուծություններ..... 204
Samson Davoyan, Lusya Galoyan. Integral Assessment of Various Reforms Implemented in Countries: Facts and Analysis
Самсон Давоян, Люся Галоян. Всеобщая оценка разнородных преобразований, осуществленных странами: факты и анализы
- Հայկարամ Դրմեյան.** Հայաստանի և Արցախի Հանրապետությունների համայնքների զարգացման հիմնախնդիրներն ու մարտահրավերները..... 219
Haykaram Drmeyan. Problems and Challenges of Community Development in Armenia and Artsakh
Айкарам Дрмеян. Проблемы и вызовы развития общин в Армении и Арцахе

Վահագն Խաչատրյան. Պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը.....224
Vahagn Khachaturyan. Institutional Bases for the Interaction of the State and the Market
Ваагн Хачатурян. Институциональные основы взаимодействия государства и рынка

Ռոզա Կուրղինյան. Տնտեսական աճի և ֆինանսական խորության փոխկապակցվածության գործոնային վերլուծությունը ՀՀ տվյալներով.....233
Roza Kurghinyan. Factor Analysis of Economic Growth and Financial Dependence on Data RA
Роза Кургиян. Факторный анализ зависимости экономического роста и финансовой глубины по данным РА

Եվգենյա Հայրիյան. Հիփոթեքային վարկային շուկայի արդի իրավիճակի վերլուծությունը և զարգացման հեռանկարները Արցախի Հանրապետությունում...241
Yevgenya Hayriyan. Mortgage Loan Market Analysis and Development Perspectives in Artsakh Republic
Евгения Айриян. Анализ ипотечного кредитного рынка и перспективы его развития в Республике Арцах

Կարլեն Մարգարյան. Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավումը՝ որպես ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման էական գործոն.....250
Karlen Margaryan. Improving Access to Finance as an Essential Factor for SME Development in Ra
Карлен Маргарян. Улучшение доступа к финансовым ресурсам как существенный фактор развития малого и среднего предпринимательства в РА

Էլլա Նահապետյան. Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման վերաբերյալ առաջարկներ և վերլուծություն.....261
Ella Nahapetyan. Analysis and Recommendations on Attracting Foreign Direct Investments in the Republic of Armenia
Элла Нагапетян. Анализ и рекомендации по привлечению прямых иностранных инвестиций в Республику Армения

Իրինա Պետրոսյան, Լիլիթ Սարգսյան. Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի առանձնահատկությունները.....268
Irina Petrosyan, Lilit Sargsyan. Specificity of the Macroeconomic Situation in the Republic of Armenia
Ирина Петросян, Лилит Саркисян. Особенности макроэкономической ситуации в республике армения

Արփինե Սարգսյան. ԵԱՏՄ երկրների մրցունակության ներուժը: Փոխադարձ և միջազգային առևտուր.....277
Arpine Sargsyan. Competitiveness Potential of EAEU Countries. Mutual and International Trade
Арпине Саргсян. Конкурентоспособность стран еаэс. взаимная и международная торговля

Աննա Փախլյան, Անուշ Անանյան. Տնտեսական զարգացման մարտահրավերները համաշխարհային հանրության կողմից չճանաչված երկրներում. պատմատնտեսագիտական զուգորդումներ.....285
Anna Pakhlyan, Anush Ananyan. Economic Development Challenges in the Countries Unrecognized by the World Community: Historical-Economic Comparisons
Анна Пахляян, Ануш Ананян. Вызовы экономического развития в странах, не признанных мировым сообществом: историко-экономические ассоциации

***ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE,
 ЮРИСПРУДЕНЦИЯ***

Լուսինե Բարխուդարյան. Իրավական ակտիվությունն ու նրա դերակատարությունն Արցախի Հանրապետության՝ որպես իրավական պետության կայացման գործում.....294

Lusine Barkhudaryan. Legal Activity and its Role in the Formation of the Republic of Artsakh as a Legal State

Лусине Бархударян. Правовая активность и ее роль в становлении республики арцах как правового государства

Մարիամ Գրիգորյան. Միջազգային հանրային իրավունքը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ազգային-ազատագրական պայքարի իրավաչափության հարցը.....306

Mariam Grigoryan. International Public Law and Question of Legitimacy of the National-Liberation Struggle of the People of Nagorno-Karabakh Republic

Мариам Григорян. Международное публичное право и вопрос правомерности национально-освободительной борьбы населения Нагорного- Карабахской Республики

Արտաշես Խալաթյան. Արցախյան հակամարտության կարգավորման նոր հայեցակարգի սաղմերը հետհեղափոխական Հայաստանում.....316

Artashes Khalatyan. Sprouts of New Concept of Resolution of the Artsakh Conflict in Postrevolutionary Armenia

Арташес Халатян. Зачатки новой концепции урегулирования арцахского конфликта в постреволюционной Армении

Աղվան Հովսեփյան. Հայրենասիրությունը և հայոց պետականությունը հայ իրավունքի նորմերում.....333

Агван Овсепян. Патриотизм и армянская государственность в нормах армянского права
Aghvan Hovsepyan. Patriotism and Armenian Statehood in the Norms of Armenian Law

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

Աննա Պետրոսյան. Տնային աշխատանքը որպես կրտսեր դպրոցականի ինքնուրույն ուսումնական գործունեության արդյունավետ հնար.....345

Anna Petrosyan. Homework as a Method for Developing Learners' Activities

Анна Петросян. Развитие собственной активности учащихся во время выполнения домашних заданий

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY,
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

Հասմիկ Հովսեփյան. Գրիգոր Մագիստրոսի թղթերը Բագրատունիների հայոց թագավորության մասին.....355

Hasmik Hovsepyan. Grigor Magistros' Letters on the Armenian Kingdom of the Bagratids
Асмик Овсеян. Письма Григора Магистроса об армянском царстве Багратидов

Աննա Սարգսյան. Մտավորականության նկարագիրը Չապել Եսայանի «Հոգիս արքայալ» վիպակում.....368

Anna Sargsyan. Description of the Intelligentsia in the Novel "My Soul in Exile" by Zapel Yesayan

Анна Саргсян. Образ интеллигенции в повести Запел Есаян "Моя душа в изгнании"

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
HISTORY, ORIENTAL STUDIES
ИСТОРИЯ, ВОСТОКОВЕДЕНИЕ**

Իրինա Հայուկ. Ուկրաինայի հայերի մշակութային ժառանգության արդիականացման խնդիրները. իրադարձություններ և մարդիկ.....379

Irina Hayuk. The Problems of Actualization of the Cultural Heritage of the Armenians of Ukraine: Persons and Events

Ирина Гаюк. Проблемы актуализации культурного наследия армян Украины: события и люди

Աշխեն Հովսեփյան. Պակիստան-ադրբեջան ռազմական համագործակցությունը և Հնդկաստանի դիրքորոշումը.....394

Ashkhen Hovsepyan. Pakistan-azerbaijan Military Cooperation and India's Decision

Ашхен Овсеян. Военное сотрудничество Пакистана и Азербайджана и позиция Индии

Գայանե Շաբունց. Վերաբնակեցման խնդիրների կարգավորման ուղիները Արցախի Քաշաթաղի շրջանի հարավում (Բարկուշատ գյուղի օրինակով). գիտագործնական վերլուծություն.....401

Gayane Shabunts. Ways to Resolve Resettlement Problems in the South of Artsakh-Kashatag Region (Following the Example of the Village of Barkushat). Scientific and Practical Analysis

Гаяне Шабунц. Пути разрешения проблем заселения юга Кашатагского района Арцаха (по примеру села Баркушат). научно-практический анализ

Չբիգնև Շմուրլո. Հայկական մշակույթի հետկերպարները Լեհաստանի Էլբլոնգ քաղաքի հանրային տարածքում.....407

Zbigniew Shmurlo. Armenian Culture of Post-image in the Public Space of the Polish City Elblag

Збигнев Шмурло. Послеобразы армянской культуры в общественном пространстве польского города Эльблонг

Գևորգ Ստեփանյան. Ռոստոմ Չորյանի դերը բաբվի 1918 թվականի հերոսամարտի կազմակերպման և Նորանկախ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման գործում.....421

Gevorg Stepanyan. Rostom Zoryan's Role in the Heroic Battle of Baku in 1918 and in Providing Security for the Newly-Independent Republic of Armenia

Геворг Степанян. Роль Ростома Зоряна в деле организации героического сражения за Баку 1918 года и обеспечения безопасности новообразованной Республики Армения

Սեյեդեհնասիմ Ֆաթեմի. Կրթության հիմնախնդիրները կրոնափոխ եզդիների շրջանում (եհովայի վկաներ, հիսունականներ).....433

Sayedehnasim Fatemi. Education Issues Among Converted Yezidis (Jehovah’s Witnesses, Pentecostals)

Сейедехнасим Фатем. Проблемы образования среди обращённых езидов (свидетели иеговы, пятидесятники)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՆ
TRIBUNE OF YOUNG SCIENTIST
ТРИБУНА МОЛОДОГО УЧЕНОГО

Վահե Բայադյան, Տաթևիկ Հովհաննիսյան. Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն՝ խնդիր, թե՞ հնարավորություն կառավարությունների համար.....439

Vahe Bayadyan, Tatevik Hovhannisyan. Industry 4.0. Challenge or Opportunity for Governments?

Vahe Баядян, Татевик Оганнисян. Индустрия 4.0. проблема или возможность для правительств?

Վահե Պողոսյան. Ազգային գաղափարախոսության ռազմավարական նշանակությունը ՀՀ հարատևության համատեքստում.....451

Vahe Poghosyan. The Strategic Significance of National Ideology in the Context of Armenia's Continuity

Vahe Погосян. Стратегическое значение национальный идеологии в контексте долговечности РА

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ

«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովը՝ Ստեփանակերտում.....460

«Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքի շնորհանդեսները Հայաստանում և Արցախում.....463

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները.....466

The requirements for «Scientific Artsakh» journal.....467

Требования к оформлению статей журнала «Научный Арцах».....468

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**



**ԹՈՒՐԵԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ԵՎ ԶՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ***

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

*ԱԵԳՄՍ անդամ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության
ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
grigorbalasanyan@mail.ru*

ԴԻԱՆԱ ՆԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի մագիստրոս, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
diana.nanyan@mail.ru*

*Հոդվածի նպատակն է ցույց տալ ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի
իրականացրած քաղաքականությունը Հարավային Կովկասում: Մեր խնդիրն է
ներկայացնել Թուրքիայի դիրքորոշումը ԼՂՀ հիմնախնդրում, ինչպես նաև
Թուրքիայի իրականացրած քաղաքականությունը Աբխազիայում: Ուշադրության է
արժանի նաև թուրք-վրաց-ադրբեջանական համագործակցությունը և
Հայաստանի դիրքորոշումը:*

*Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես
համագիտական (անալիզ, սինթեզ, պատմականության սկզբունք), այնպես էլ
հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական) մեթոդներ:*

*Հետապոտության արդյունքում հանգել են ելույթագրության, որ ԽՍՀՄ
փլուզումից հետո տարածաշրջանում նոր թափ ստացան արդեն իսկ սառեցված
հակամարտությունները, ինչպես նաև ծագեցին նորերը: Ստեղծված իրավիճակում
Թուրքիան ակտիվացրեց քաղաքականությունը Հվ. Կովկասում՝ հավակնելով
դառնալ տարածաշրջանային դերակատար, սակայն մի շարք հանգամանքներ
այդպես էլ թույլ չտվեցին նրան ստանձնելու այդ «տիտղոսը»: Այդ հանգամանքներից
էր ՀՀ-ն և նրա հետ անմիջականորեն կապված ԼՂՀ հիմնախնդիրը:*

*Տարածաշրջանային մեկ այլ խնդիր էր Աբխազիայի խնդիրը, որը, որպես
դամոկլյան սուր, Թուրքիան ճոճում էր Վրաստանի գլխին՝ ունենալով բավականին
խոշոր համայնք:*

*Կարևոր իրադարձություն էր նաև տարածաշրջանում թուրք-վրաց-
ադրբեջանական եռակողմ համագործակցությունը, որն իր բոլոր երանգներով
ուղղված է ՀՀ-ի դեմ:*

* Հոդվածը ներկայացվել է 03.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության
ընդունվել՝ 12.12.2019թ.:

Հիմնաբառեր՝ Էթնո-քաղաքական հակամարտություն, հեգեմոնիա, կասպիան տարածաշրջան, ռավմաքաղաքական դաշինք, արտաքին քաղաքականություն, տարանցիկ երկիր, նախապայմանների քաղաքականություն, դիվանագիտական հարաբերություններ, արձանագրություններ:

1990-ական թթ.-ին միջազգային հարաբերություններում տեղ գտան դարակազմիկ իրադարձություններ, որոնք սահմանելու էին աշխարհաքաղաքական Նոր կարգեր և փոփոխելու արդեն իսկ գոյություն ունեցող աշխարհակարգը: Այդ իրադարձություններից թերևս կարելի է առանձնացնել ԽՍՀՄ փլուզումը, որը և պարարտ հող նախապատրաստեց իր գոյության շրջանում սառեցված հակամարտությունների ի հայտ գալու համար: Հակամարտություններից անմասն չմնացին նախկին հետխորհրդային հանրապետությունները, մասնավորապես՝ արցախյան հակամարտությունը Հայաստանի ու Ադրբեջանի միջև, աբխազական և հարավօսեթական հակամարտությունները Վրաստանի հետ և այլն:

Էթնո-քաղաքական հակամարտություններից գատ՝ միջազգային հարաբերություններում ի հայտ եկան Նոր, ավելի լուրջ վտանգներ: Խոսքն այն մասին է, որ միջազգային բեմահարթակում տեղի ունեցավ ուժերի հարաբերակցության փոփոխություն: Սառը պատերազմում հաղթանակած ԱՄՆ-ը ցանկանում էր հաստատել իր հեգեմոնիան ամբողջ աշխարհում: Ուստի ԽՍՀՄ փլուզումը և Սառը պատերազմի ավարտն իր հետ բերեց ինչպես կայունություն, այնպես էլ անկայունություն ամբողջ աշխարհում: Այն հակամարտությունների Նոր օջախների բռնկման պատճառ դարձավ, որոնցից շատերն այսօր էլ լուծում չեն ստացել:

Նման իրավիճակում Հարավային Կովկասն ու Կենտրոնական Ասիան կրկին հայտնվեցին Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում: Թուրքիային թվում էր, թե եկել է ժամանակը, երբ հնարավոր կլինի ստեղծել Մեծ Թուրան պետությունը, որը ձգվելու էր Ադրիատիկ ծովից մինչև Հիմաստան: Այդ տարածքները ընդգրկելու էին Կենտրոնական Ասիան, Բալկաններ ու Կովկասը 1:

Փաստորեն Թուրքիայի համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ՝ այս տարածաշրջան ներթափանցելու համար:

ԽՍՀՄ փլուզումը և Հարավային Կովկասում ինքնիշխան պետությունների ի հայտ գալը հիմնարար կերպով փոխեցին Թուրքիայի Եվրասիական քաղաքականությունը: Հարավային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն էր ներկայացնում Թուրքիայի համար, ուստի Թուրքիան սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Հարավային Կովկաս: Այդ ուղղությամբ առաջին քայլերից մեկը Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի հետ սերտ հարաբերություններ հաստատելու քաղաքականությունն էր:

Վերոնշյալ տարածաշրջաններում Թուրքիան ԱՄՆ օգնությամբ հավակնում էր լուրջ դերակատար դառնալ: Արդյունքում՝ Թուրքիան սկսեց հանդես գալ որպես գործիք Արևմուտքի ձեռքում՝ հետխորհրդային տարածաշրջանից, մասնավորապես Կենտրոնական Ասիայից ու Հարավային Կովկասից Ռուսաստանին դուրս մղելու համար: Մյուս կողմից՝ Նոր նշանակություն ձեռք բերեց տարածաշրջանում կառուցվող խողովակաշարերի համար պայքարը, որի մասնակիցներից մեկը դարձավ Թուրքիան՝ փորձելով դառնալ տարանցիկ երկիր և դրանով բարձրացնել իր աշխարհաքաղաքական նշանակությունը:

¹ DePauw Freddy Turkey's Polices in Trancaucasia, Contested borders in the Caucasus, VUB University, Press 1996, <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0801.htm>.

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԵԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱԽՅԱՆ ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի անկախության վերականգնումից հետո հայ-թուրքական հարաբերություններում անհեռանկարային կարգավորման մի քանի փորձեր տեղի ունեցան: Այսպիսով՝ 1996 թվականից հետո նկատվեցին մի շարք փոփոխություններ, թեև դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին, իսկ Հայաստանի շրջափակումը չվերացվեց:

1997թ.-ին ստեղծվեց «հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհուրդը», որի գործունեությունը բավական համեստ էր: Փոխարենը, ակտիվացան հասարակական կազմակերպությունների միջև շփումները²:

2001թ.-ին Հայաստանը Ստամբուլում բացեց Սևծովյան համագործակցության մշտական ներկայացուցչություն³:

ԱՉԿ-ի իշխանության գալուց հետո ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը մասնակի փոփոխություններ արձանագրեց:

Թուրքիայի քաղաքական շրջանակներում նույնիսկ հայտարարություններ եղան, որ եթե հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և սահմանի վերաբացումը բխեն Թուրքիայի շահերից, ապա վերջինս հաշվի չի նստի Ադրբեյջանի հետ: Իրականում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը Թուրքիայի համար արդյունավետ միջոց էր իր հեռավա նպատակներին հասնելու համար: Կարող ենք ասել, որ Թուրքիան, Հայաստանի հետ հարաբերությունները վերականգնելով, կարող էր լուծել մի քանի կարևոր հարցեր, այն է՝ ցեղասպանության ճանաչման գործընթացի սառեցում, ԱՄՆ Նորընտիր Նախագահի առաջին ապրիլի քսանչորսյան ուղերձում «ցեղասպանություն» բառի օգտագործման արգելափակում, Հայաստանի իշխանությունների ու Սփյուռքի միջև աննախադեպ լարվածություն Տեղասպանության հարցում, աննախադեպ կարևոր դերակատարություն տարածաշրջանում, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրամիության հետ հարաբերությունների էական բարելավում⁴:

Այսպիսով, Հայաստանի հետ հարաբերությունների վերականգնման փորձը Թուրքիայի կողմից հորինված հերթական մի խաղ էր: Այնուամենայնիվ, Թուրքիայի հետագա քայլերը ցույց էին տալու, որ այն, տեղի տալով ադրբեյջանական կողմի ճնշումներին, հերթական անգամ գերեզմանելու էր Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման փորձը:

Պետք է նշել, որ հետագայում ակտիվացան նաև արտգործնախարարների մակարդակով հանդիպումները, որոնց ընթացքում քննարկվում էին այլընտրանքային տարբերակներ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Վ. Օսկանյանի վկայությամբ՝ այդ հանդիպումների սկիզբը խոստումնալից էր, սակայն յուրաքանչյուր հաջորդ հանդիպում ավելի անարդյունավետ էր, քան նախորդը: Վերջին հանդիպման ընթացքում Գյուլն իր հայ գործընկերոջը տեղեկացրեց, որ Թուրքիայի կառավարությունը ձեռնպահ կմնա Հայաստանի հետ համագործակցային որևէ քայլ ձեռնարկելուց, քանի դեռ արցախյան հարցում շոշափելի առաջընթաց չկա⁵: Արդեն իսկ ակնհայտ էր, որ Թուրքիան առաջ է քաշելու

² **Սաֆրաստյան Ռ.**, Թուրքիայի Հանրապետության պատմություն: Բուհական դասագիրք, Ե., 2018թ., էջ 282:

³ Տե՛ս ՀՀ Արտաքին գործերի պաշտոնական կայք էջ, <https://www.mfa.am/hy/international-organisations/15>:

⁴ **Սիմոնյան Ա. Հ.**, Հայագիտության հարցեր, հանդես 2(8), Ե., 2016, էջ 17:

⁵ **Սաֆրաստյան Ռ.**, Թուրքիայի Հանրապետության պատմություն: Բուհական դասագիրք, Ե., 2018թ., էջ 282:

Նախապայմանների իր քաղաքականությունը, որը, բնականաբար, մերժվելու էր պաշտոնական Երևանի կողմից:

2008թ.-ին Յարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության մեջ տեղի ունեցան զգալի փոփոխություններ, որոնք հիմնականում թելադրված էին ռուս-վրացական պատերազմում ՌԴ-ի հաղթանակով: ՌԴ-ն պատերազմից հետո վերստին ակտիվացրեց իր դերակատարությունը տարածաշրջանային հակամարտություններում: Դրան հետևեց ՅՅ-ի հետ ռազմական համագործակցության պայմանագիրը երկարաձգելու առաջարկը⁶: Նման պարագայում տազնապալից իրավիճակում հայտնվեց առաջին հերթին Թուրքիան, հատկապես երբ ՅՅ-ի իշխանությունները հանդես եկան Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման նախաձեռնությամբ: Այսպիսով, պատերազմից հետո պարզ դարձավ Թուրքիայի՝ տարածաշրջանային առաջատար դառնալու հնարավորությունների բացակայության փաստը, և այն ներթափանց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դաշտ:

Սկիզբ էր առնում մի գործընթաց, երբ Թուրքիան Յարավային Կովկասում աստիճանաբար կորցնում էր դիրքերը: Դա էր պատճառը, որ Թուրքիան վերստին ակտիվացրեց «գրո ինդիր հարևանների հետ» քաղաքականությունը և փորձեց հանդես գալ տարածաշրջանային նոր ծրագրերով, որոնցից մեկը Ռ.Թ.Էրդողանի առաջ քաշած Կովկասի կայունության ու համագործակցության պլատֆորմի գաղափարն էր:⁷ Այդ ծրագրի գլխավոր նպատակն էր չեզոքացնել պատերազմից հետո տեղի ունեցած փոփոխությունները և վերահաստատել իր՝ տարածաշրջանային դերակատար լինելու հանգամանքը: Սակայն ծրագիրը տապալվեց, և դրան զուգընթաց առաջ մղվեց հայ-թուրքական հաշտեցման գործընթացը:

Հատկանշական է, որ նոր թափ առած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն առաջին հերթին մեծ դժգոհություն առաջացրեց Ադրբեջանում և իր ազդեցությունը ունեցավ թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա: Ադրբեջանական կողմը ՅՅ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման մեջ որոշակի վտանգներ էր տեսնում: Ադրբեջանն այդ գործընթացը համարում էր Անկարայի ու Բաքվի միջև համագործակցության առանցքային սկզբունքների դավաճանություն՝ վախենալով, որ սահմանները բացելու և Հայաստանը մեկուսացումից հանելու դեպքում ինքը կկորցնի կարևոր լծակներ՝ ազդելու Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի շուրջ ընթացող բանակցությունների վրա:⁸ Լարվածությունը հատկապես խորացավ, երբ Ցյուրիխում ստորագրվեցին արձանագրությունները: Դրան ի պատասխան՝ թուրք-ադրբեջանական հարաբերությունների լարվածությունը խորացավ էներգետիկ բնագավառում:

Ստեղծված իրավիճակում Ադրբեջանը դիմեց մանիպուլյացիոն քաղաքականության՝ առաջ քաշելով նավթային գործոնը, որը, բնականաբար, դառնալու էր գործընթացի արգելակմանը նպաստող հիմնական գործոններից մեկը: Կարծում ենք, որ թուրք-ադրբեջանական եղբայրական հարաբերությունների «գոհաբերումը» կարող էր բավականին թանկ ստտել Թուրքիայի վրա՝ ընդհուպ մինչև զրկվելը էներգետիկ պաշարներից և այն խոշոր ծրագրերից, ինչպիսիք էին՝ Բաքու-

⁶ Протокол № 5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г., 20.08.2010, http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storagviewer/bilateral/page-97/45120.

⁷ Սիմոնյան Ա. Հ., Հայագիտության հարցեր, հանդես 2(8), Ե., 2016, էջ 4:

⁸ Mikhelidze N., The Turkish-Armenian Rapprochement at the Deadlock // Istituto Affari Internazionali, March 2010 p. 4.

Թբիլիսի-Չեյհան Նավթամուղը, Բաբու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը, Բաբու-Թբիլիսի-Կարս երկաթուղին:

Ադրբեջանի քաղաքականության հանգուցալուծումը եղավ այն, որ Ադրբեջանի Նավթային ընկերությունը պայմանագիր կնքեց ռուսական «Գազպրոմի» հետ: Այնուհետև Ի.Ալիևը հանդես եկավ կոշտ արձագանքով և զգուշացրեց, որ եթե Թուրքիան շարունակի այդ քաղաքականությունը, Ադրբեջանն իր ամբողջ գազը կարտահանի ՌԴ⁹:

Իրադարձությունների ընթացքը ցույց էր տալիս, որ Անկարան մտադիր է հետքայլ կատարելու ձեռք բերված պայմանավորվածություններից և միջազգային պարտավորություններից: Թուրքիան սկսեց Նախապայմանների քաղաքականությունը, այն է՝ ԼՂՀ հիմնախնդրի կարգավորում՝ հոգուտ Ադրբեջանի: Փաստորեն, Ադրբեջանին հաջողվեց «ստիպել» Թուրքիային՝ Չայաստանի հանդեպ վարելու Նախապայմանների քաղաքականություն, որը հակասում էր թուրքական «գրո ինդիրներ հարևանների հետ» սկզբունքին: Թուրքիան ստիպված եղավ ընտրություն կատարել երկու կարևոր առաջնահերթությունների միջև՝ հաշվի առնելով սեփական շահերը: Երկար ժամանակ Թուրքիան փորձում էր գերծ մնալ այդ ընտրությունից, որը սահմանափակելու էր նրա քաղաքական ներկայությունը տարածաշրջանում, սակայն Ադրբեջանի կեցվածքի պատճառով ընտրություն կատարեց հոգուտ երկրորդի: Դրա դրսևորումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի սառեցումն էր: Արդյունքում՝ ստեղծված իրավիճակը հանգուցալուծում ստացավ 2010թ.-ի ապրիլի 24-ի Նախօրյակին. ապրիլի 22-ին Չայաստանի իշխող կոալիցիան Նախ որոշում կայացրեց ՀՀ Ազգային ժողովում արձանագրությունների վավերացման ընթացքը առկախելու մասին, ինչը նշանակում էր գործընթացի սառեցում¹⁰: Նույն օրը հետևում է Ս. Սարգսյանի հայտարարությունը ՀՀ կողմից արձանագրությունների վավերացումը կասեցնելու մասին: Այդ մասին ծանուցումն ուղարկվում է Թուրքիայի Հանրապետություն¹¹: Այդպիսով ավարտվում է դիվանագիտական հարաբերությունների վերականգնման փորձի և սեկ փուլ:

ԹՈՒՐԷ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԽԱԶԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանը դարձավ Թուրքիայի ամենակարևոր արտաքին քաղաքական գործընկերներից մեկը: Թուրքիայի համար Վրաստանի կարևորությունը հիմնականում պայմանավորված էր երկու գործոնով: ԽՍՀՄ փլուզումից հետո թուրք-հայկական հարաբերությունները լարված բնույթ էին կրում, ուստի Թուրքիայի համար Վրաստանը դարձավ հիմնական դարպաս դեպի Կենտրոնական Ասիա: Երկրորդ գործոնը գլխավորապես կապված էր Թուրքիայի Էներգետիկ քաղաքականության հետ, մասնավորապես՝ Բաբու-Թբիլիսի-Չեյհան Նավթամուղի և Բաբու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի հետ: Բացի այդ, Թուրքիայի համար լրջագույն խնդիր էր Ադրբեջանի հետ անմիջական սահման չունենալու հարցը: Խնդիրն այն էր, որ Թուրքիան Ադրբեջանի հետ անմիջական սահման չունեի, և տվյալ պարագայում Վրաստանը դառնում էր «կամուրջ» ու հնարավորություն ընձեռնում Թուրքիային մուտք գործելու Էներգետիկ ռեսուրսներով հարուստ կասպիական տարածաշրջան:

⁹ Սիմոնյան Ա. Հ., Հայագիտության հարցեր, հանդես 2(8), Ե., 2016, էջ 11:

¹⁰ Տե՛ս Կոալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22.04.2010, <https://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/140490>:

¹¹ Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Չայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, <https://www.aysor.am/am/news/2010/04/22/serzh-sargsyan-address/140902>:

Այսինքն՝ Անդրկովկասում սեփական դիրքերն ամրապնդելու քաղաքականությունն իրականացնելիս Թուրքիան հատկապես կարևորում էր Վրաստանի աշխարհագրական դիրքը, որը վերոհիշյալ էներգետիկ ռեսուրսների տեղափոխման ճանապարհին միակ կամուրջն էր, քանի որ մյուս հավանական կամուրջը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, հասկանալի պատճառներով դուրս էր մղվում թուրքական արտաքին քաղաքականության հաշվարկներից:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Թուրքիան 1991թ.-ի նոյեմբերի 1-ին ճանաչեց Վրաստանի տարածքային ամբողջականությունը¹²: Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ Վրաստանն էլ իր հերթին շահագրգռված էր թուրք-ադրբեջանական կողմի հետ համագործակցությամբ՝ գիտակցելով սեփական շահերը որպես տարանցիկ երկիր: Այդ հարաբերությունների խորացմանը հատկապես նպաստեցին Ռուսաստանի հետ լուրջ տարածայնություններն ու հարաբերությունների բացակայությունը: Ինչևիցե, սրանք էին հիմնական դրդապատճառները, որոնք ստիպեցին Թուրքիային առանձնահատուկ վերաբերմունք դրսևորել Վրաստանի նկատմամբ:

Վրաստանի անկախությունը ճանաչելուց հետո Թուրքիան իր օրակարգի առանցքային հարցերից մեկը դարձրեց Աբխազիայի կարգավիճակի շուրջ առաջացած վրաց-աբխազական հակամարտության նկատմամբ սեփական մոտեցումների ձևավորումը:

Սկսած 1990-ական թվականներից՝ թուրքական իշխանությունները պաշտոնական հայտարարություններում մշտապես հանդես են եկել Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքի պաշտպանության դիրքերից, սակայն միևնույն ժամանակ շարունակում էր զարգանալ Անկարայի ու Սուխումի միջև առկա համագործակցությունը տարբեր ոլորտներում:

Անկարայի քաղաքականությունը պայմանավորված է մի շարք արտաքին ու ներքին գործոններով: Մի կողմից՝ Սուխումի նկատմամբ Անկարայի որդեգրած քաղաքականության օրակարգի վրա անմիջական ազդեցություն ունի Ռուսաստանի ու Վրաստանի հետ Թուրքիայի ունեցած համագործակցությունը ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ոլորտներում, մյուս կողմից՝ թուրքական իշխանությունները գործ ունեն միջազգայնորեն չճանաչված պետության հետ, որի օգտին վրաց-աբխազական պատերազմի սկսվելուց հետո ակտիվ լրբիստական գործունեություն են իրականացնում Թուրքիայում հաստատված աբխազական ու չերքեզական համայնքները: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Թուրքիայում աբխազների ու չերքեզների թիվը հասնում է մոտ 2 մլնի:

Չխոչընդոտելով իր տարածքում բնակվող աբխազներին ու հյուսիսկովկասցիներին Աբխազիային աջակցություն ցուցաբերելու փորձերը՝ Թուրքիան միշտ էլ պաշտոնապես հանդես է եկել Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին: Վրաց-աբխազական պատերազմի սկսվելուց հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարար Յ. Չեթինը հայտարարել է, որ դա Վրաստանի ներքին գործն է: Իր հերթին Թուրքիայի փոխվարչապետ Է.Ինոլյուն դատապարտել է Հարավային Օսիային և Աբխազիային Վրաստանում տեղի ունեցած ընտրություններին չմասնակցելու համար: Ավելին, 1992թ.-ի հոկտեմբերի 13-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հանդես եկավ Վրաստանի տարածքային ամբողջականությունն ընդունող հայտարարությամբ:

Բնականաբար, Թուրքիան չէր վտանգելու տարածաշրջանային սեփական շահերը, որոնք ուղղակիորեն կապված էին Վրաստանի հետ:

¹² Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրք-վրացական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1991-2001թթ., «21-րդ դար», թիվ 2 (48), 2013, էջ 42:

Վրաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը ավելի հետևողական դարձավ, երբ Անդրկովկասում վերստին ակտիվացավ Ռուսաստանի քաղաքականությունը:

Մասնավորապես, 2008թ.-ի օգոստոսյան իրադարձություններից և Ռուսաստանի կողմից Աբխազիայի ճանաչումից հետո Թուրքիան ակտիվացրեց իր քաղաքականությունն Աբխազիայում:

Աբխազիայի հետ հարաբերությունների դինամիկ զարգացումը Թուրքիան բացատրում էր Աբխազիայի ու Վրաստանի հաշտեցման նպատակով: Իրականում Թուրքիան, հստակ գիտակցելով սեփական երկրում արխազական համայնքի կարևորությունը, այն օգտագործում էր իբրև գործիք տարածաշրջանում իր ազդեցությունը մեծացնելու նպատակով: Ստեղծված իրավիճակում Թուրքիայի՝ «միջնորդի» դերակատարության ստանձնումը Վրաստանին դժգոհելու հնարավորություն չէր ընձեռնում: Սակայն Թուրքիայի ակտիվությունն այդ տարածաշրջանում չէր կարող չանհանգստացնել Թբիլիսիին և սառեցնող ազդեցություն չունենալ թուրք-վրացական հարաբերությունների վրա: Վրաստանին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Թուրքիան կարող է ճանաչել Աբխազիայի անկախությունը:

Ստեղծված իրավիճակը երկու երկրների միջև կարող էր հանգեցնել լուրջ քաղաքական լարվածության, ինչը հարկավոր չէր կողմերից և ոչ ոքի, ուստի Թուրքիան քայլեր ձեռնարկեց քաղաքական լարվածությունը մեղմելու համար: Մասնավորապես, պատերազմի օրերին սկսեց մարդասիրական օգնություն ցուցաբերել Վրաստանին¹³:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Վրաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ Թուրքիան նպատակ էր հետապնդում տարածաշրջանում գերակա դիրք զբաղեցնել: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ Նոր թափ ստացող թուրք-վրաց-ադրբեջանական եռակողմ հարաբերությունները միտված էին տարածաշրջանում թուլացնելու Ռուսաստանի ազդեցությունը և ապահովելու ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում, ինչը դրսևորվեց ինչպես Էներգետիկ, այնպես էլ ռազմաքաղաքական համագործակցության բնագավառներում: Ինչ վերաբերում է Աբխազիայի խնդրին, ապա թուրքական քաղաքական շրջանակներում պաշտոնապես ճանաչվել է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, սակայն փաստ է, որ Թուրքիան առիթը բաց չի թողնում օգտագործելու արխազական ու չերքեզական համայնքի առկայությունը:

ԹՈՒՐԷ-ՎՐԱՑ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանի պետությունները հակված են համագործակցելու ինչպես համաաշխարհային ուժային կենտրոնների հետ, այնպես էլ զարգացնելու հարաբերությունները տարածաշրջանում հարակից պետությունների հետ:

Նմանատիպ է թուրք-վրաց-ադրբեջանական գործընկերությունը, որը հիմնված է տնտեսական, քաղաքական ու ռազմաքաղաքական փոխգործակցության վրա: Բաբու-Թբիլիսի-Չեյհան նավթամուղի նախագծի հաջող կենսագործումը և դրա

¹³ Արշակյան Գ., Օգոստոսյան ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը թուրք-վրացական հարաբերությունների վրա, Ե., 2013թ., էջ 149:

հետևանքները ցույց տվեցին, որ այդ համագործակցությունն ունի Յարավային Կովկասի աշխարհաքաղաքական գործընթացների վրա լուրջ ազդեցություն թողնելու լծակներ, որոնք էլ ավելի ամրապնդվեցին Բաբու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի գործարկումից և Բաբու-Թբիլիսի-Կարս նախագծի նախաձեռնումից հետո: Այդ համագործակցության շրջանակներում ակնհայտորեն երևան են գալիս Թուրքիայի տարածաշրջանային շահերը և, բնականաբար, հարցականի տակ է դրվում Յայաստանի՝ որպես շրջափակված պետության, անվտանգությունը:

Կերոհիշյալ եռակողմ համագործակցությունը կարելի է համարել թուրքական նախաձեռնություն, որը հեռահար տնտեսական ու քաղաքական նպատակներ է հետապնդում: Թուրքիան եռակողմ համագործակցության շրջանակներում հարաբերությունները տնտեսապես կայունացնելուց հետո ձեռնամուխ եղավ նաև քաղաքական ու ռազմական համագործակցության վերաբերյալ ծրագրեր մշակելուն: Տվյալ պարագայում ինչ վերաբերում է Վրաստանին, ապա նա հաստատուն քայլերով հայտնվում է Թուրքիայի ազդեցության ուղեծրում և հետագայում այնտեղից դուրս գալը դժվարագույն խնդիր կարող է լինել Վրաստանի համար: Այնուամենայնիվ, Վրաստանի տարածաշրջանային շահերը նրան ուղղորդում են տնտեսապես կայուն Թուրքիա: Վրաստանի ամենախոշոր առևտրային գործընկերը Թուրքիան է, և Վրաստանում օտարերկրյա ամենամեծ ներդրումները թուրքական կապիտալով են: Վրաստանը հսկայական եկամուտներ է ստանում իր տարածքով անցնող էներգետիկ ենթակառուցվածքներից, ինչը խոսում է այն մասին, որ մոտ ապագայում էլ Վրաստանի համագործակցությունը հարևան թուրքական երկրների հետ շարունակելու է ընդլայնվել: Կարծում ենք, որ սա լուրջ մարտահրավեր է Յայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական ու քաղաքական անվտանգությանը: Պաշտոնական Թբիլիսիի բազմիցս հայտարարել է, որ այդ համագործակցությունն ուղղված չէ Յայաստանի դեմ: Սակայն կարծում ենք, որ Վրաստանն անուղղակիորեն ներթաշվում է Յայաստանի մեկուսացման մեջ: Որքան էլ Թբիլիսիի փորձի պահպանել չեզոքություն հայ-ադրբեջանական հարաբերություններում, Արցախի Յանրապետությունում կամ ՅՅ-Ադրբեջան շփման գծում, ռազմական սրացման պայմաններում Վրաստանը կարող է կողմնորոշվել ոչ թե դեպի քրիստոնյա Յայաստանը, այլ դեպի տնտեսապես ավելի խոշոր գործընկերները և նպաստել Յայաստանի տնտեսական շրջափակմանը¹⁴: Ի հակակշիռ՝ Յայաստանը հարաբերությունները պետք է ջերմացնի եվրոպական երկրների և հարևան Իրանի ու Ռուսաստանի հետ:

Անդրադառնալով Ադրբեջանի քաղաքականությանն այդ համագործակցության շրջանակներում պետք է նշել, որ բացի Արցախյան հիմնախնդիրը շոշափելուց, Ադրբեջանն ու Թուրքիան համատեղ փորձում են ավելացնել քաղաքական, տնտեսական ազդեցությունը Թբիլիսիի վրա, որպեսզի իրականացնեն իրենց պանթուրքիստական ծրագրերը և փոխեն հայաբնակ Չավախքի էթնիկ դեմքը, ինչը թույլ կտա թուրքաբնակ տարածքներով շրջապատել Յայաստանն այս անգամ հյուսիսից: Բնականաբար, սա բավականին լուրջ մարտահրավեր է Յայաստանի համար, քանի որ այդ ծրագիրն իրականացնելու դեպքում Յայաստանը կզրկվի արտաքին աշխարհի հետ կապող միակ ցամաքային ուղուց և տնտեսապես «կոչկչանա»:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական հետևողական քաղաքականության շնորհիվ Վրաստանն աստիճանաբար ներգրավվում է նրանց ռազմաքաղաքական դաշինքում: Ակնհայտ է, որ այդ համագործակցությունը միտված է նաև չեզոքացնելու

¹⁴ Կարապետյան Ռ., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունը և Յայաստանի անվտանգության հիմնախնդիրները, 23.03.2017թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15566:

Ռուսաստանի Էներգետիկ մենաշնորհը Հարավային Կովկասում, ինչն իր հերթին կհանգեցնի տարածաշրջանի պետությունների ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կախվածության նվազմանը ՌԴ-ից¹⁵:

TURKEY'S POLICY IN THE SOUTH CAUCASUS AND FACTOR OF THE NON RECOGNIZED STATES

GRIGOR BALASANYAN

*Member of UYSSA, Yerevan State University,
PhD, Associate Professor of the Chair of International Relations and Diplomacy,
Yerevan, Republic of Armenia*

DIANA NANYAN

*Yerevan State University, Master's Degree of International Relations
c. Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to illustrate Turkey's policy in the South Caucasus after the collapse of the USSR. Our task is to present Turkey's stance on the NKR issue, as well as Turkey's policy in Abkhazia, and Turkish-Georgian-Azerbaijani relations and Armenia's position.

Sociological (analysis, synthesis, the principle of history) and special (formal-logical, comparative) research methods were used in the course of the study.

As a result of the research we came to the conclusion that after the collapse of the USSR frozen conflicts in the region gained new momentum and new ones emerged.

In the current situation, Turkey strengthened its policy in the Caucasus, claiming to be a regional player, but a number of circumstances did not allow it to assume this "title". One of such circumstances was the Republic of Armenia and the NKR problem directly related to it.

Another regional problem was the problem of Abkhazia.

Another important event was the Turkish-Georgian-Azerbaijani trilateral cooperation in the region, which is directed against Armenia in all its shades.

Keywords: *ethno-political conflict, hegemony, Caspian region, military-political alliance, foreign policy, transit country, preconditions policy, diplomatic relations, protocols.*

¹⁵ **Justyna Glogowska**, Turkey and Georgia: Strategic Connections, BilGESAM, 23 March 2012. <http://www.bilgesam.org/en/incele/452/-turkey-and-georgia--strategic-connections>.

ПОЛИТИКА ТУРЦИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ И ФАКТОР НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ

ГРИГОР БАЛАСАНИЯ

*Член ОМУСА, кандидат исторических наук, доцент кафедры
международных отношений и дипломатии ЕГУ,
г. Ереван, Республика Армения*

ДИАНА НАНЯН

*Магистр международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель этой статьи - показать политику Турции на Южном Кавказе после распада СССР. Наша задача - представить позицию Турции по вопросу НКР, политику Турции в Абхазии, а также турецко-грузино-азербайджанское сотрудничество и позицию Армении.

В ходе исследования использовались социологические (анализ, синтез, принцип истории) и специальные (формально-логические, сравнительные) методы исследования. В результате исследования мы пришли к выводу, что после распада СССР замороженные конфликты в регионе приобрели новый импульс и возникли новые.

В сложившейся ситуации Турция усилила политику на Кавказе, претендуя на роль регионального игрока, однако ряд обстоятельств не позволил ему взять на себя этот «титул». Одним из таких обстоятельств была Республика Армения и непосредственно связанная с ней проблема НКР.

Другой региональной проблемой была проблема Абхазии. Важным событием также стало турецко-грузино-азербайджанское трехстороннее сотрудничество в регионе, которое направлено против Армении во всех ее оттенках.

Ключевые слова: *этнополитический конфликт, гегемония, каспийский регион, военно-политический альянс, внешняя политика, транзитная страна, политика предпосылок, дипломатические отношения, протоколы.*

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՆԱԽԱՎԻՃԱԿԻ (STATUS QUO) ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԳՆԱԲՑԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ԽԱԶԻԿ ԳԱԼՍՅԱՆ

*ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների դոկտոր, ԱԵԳՄՄ պատվավոր անդամ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
khgalstyan@ysu.am*

Արցախյան հակամարտության կարգավորման համատեքստում առանցքային նշանակության հարցերից է կարգավիճակի հիմնահարցը, որի շուրջ հակամարտող հիմնական կողմերի շրջանում առկա է խորքային ռազմավարական անհամաձայնություն ու դիրքորոշումների առավելագույն բևեռացում: Հոդվածի նպատակն է բացահայտել Արցախի կարգավիճակի բանակցային Էվոյուցիան, ցույց տալ կարգավիճակի ու նախավիճակի փոփոխման պատճառահետևանքային կապերը: Այդ առումով որպես հետապոտական խնդիրներ են սահմանվում բանակցային փաստաթղթերում առկա կարգավիճակին առնչվող ձևակերպումների քննական վերլուծությունը, կարգավիճակով պայմանավորված նախավիճակի փոփոխման հնարավորությունների դիտարկումը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում ժամանակագրական ու բովանդակային վերլուծության մեթոդներն են:

Հոդվածի շրջանակներում դիտարկվում են Արցախի կարգավիճակի շուրջ ընթացող բանակցությունների Էվոյուցիան, առաջ են քաշում նորարարական մի քանի թեզեր, որոնք կառուցված են Արցախի գոյության, ինքնուրույնության և ինքնուրույն քաղաքական ինքնության իրողությունների ճանաչման վրա՝ որպես Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում նախավիճակի փոփոխման կարևոր գրավականներ:

Հիմնաբառեր՝ Արցախյան հակամարտություն, կարգավիճակի ճանաչում, նախավիճակի փոփոխություն, ինքնուրույն քաղաքական ինքնություն:

Բախումնաբանության մեջ տիրապետող մոտեցում է, որ էթնոքաղաքական հակամարտությունները կարգավորման դժվար են ենթարկվում: Այս առումով բացառություն չի կազմում նաև Արցախյան հակամարտությունը, որի հանգուցալուծմանն ուղղված ինչպես հակամարտող կողմերի, այնպես էլ միջազգային միջնորդների ջանքերը շարունակվում են արդեն 25 տարուց ավելի՝ առանց շոշափելի արդյունքների և լուրջ առաջընթացի: Նման իրավիճակը վկայում է, որ ընդհանուր առմամբ, Արցախյան հակամարտությունը տեղավորվում է գիտության մեջ տիրապետող այդ օրինաչափության մեջ: Բացի դրանից, Արցախյան հիմնահարցն աչքի է ընկնում նաև հակամարտությանը ներգրավված սուբյեկտների բազմազանությամբ, հակամարտող հիմնական կողմերի դիրքորոշումների խիստ բևեռացված տարբերությամբ, կարգավորման դինամիկայի վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների բարդ համակցությամբ, տարածաշրջանում անընդհատ ու արագ փոփոխվող աշխարհաքաղաքական վերադասավորումներով, որոնք իրենց հերթին որոշակիորեն ազդում են Արցախյան հակամարտության վրա՝ կարգավորման տեսանկյունից այն դարձնելով ավելի բարդ ու խճճված: Մասնավորապես Արցախյան

* Հոդվածը ներկայացվել է 06.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

հակամարտության կարգավորման համատեքստում խորքային ռազմավարական անհամաձայնությունն ու կողմերի դիրքորոշումների առավելագույն բևեռացում նկատվում է հենց Արցախի կարգավիճակի շուրջ տարվող քննարկումներում: Դեռ առաջին միջնորդական նախաձեռնությունների՝ մասնավորապես Նոր ձևավորվող ԵԱՀԽ (ԵԱՀԿ) Մինսկի խմբի մանդատի շրջանակներում ենթադրվում էր ԼՂ կարգավիճակի հարցը քննարկել Մինսկում հրավիրվելիք Արցախյան կարգավորման խաղաղ բանակցությունների ժամանակ, որին մասնակցելու էին նաև Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչները¹⁶: Անցած տարիների ընթացքում միջնորդները հակամարտության կողմերին ներկայացված բանակցային փաստաթղթերում փորձել են տալ հակամարտության այդ առանցքային՝ Արցախի կարգավիճակի լուծման հարցի պատասխանը: Օրինակ՝ 1997թ.-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Լիսաբոնից հետո, այդ գազաթափողվի ազդեցության տակ ներկայացրին մի փաստաթուղթ, որում ԼՂ կարգավիճակը ներկայացված էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում¹⁷: Այդ առաջին՝ «փաթեթային» կոչվող փաստաթղթում ԼՂ կարգավիճակի հարցին լուծում էր տրվում համաձայնագրի երկրորդ մասում: Իսկ առաջին մասում, որը վերաբերում էր զինված հակամարտության դադարեցմանը, ենթադրվում էր զինված ուժերի դուրս բերում «գրավյալ» տարածքներից, բուֆերային գոտու ստեղծում և միջազգային խաղաղարար ուժերի տեղակայում, փախստականների ու տեղահանված անձանց վերադարձ մշտական բնակության վայրեր, կոմունիկացիաների ապաշրջափակում, երկաթուղային կապի ապահովում Ադրբեջանի ու Հայաստանի միջև Բաբու-Յորադիզ-Մեղրի-Օրդուբադ-Նախիջևան-Երևան երթուղով, Լաչինի միջանցքի միջազգային վարձակալում (ԵԱՀԿ կողմից) և դրա տրամադրում ԼՂ իշխանություններին, Շուշու և Շահումյանի շրջանի հարցերի լուծում և այլն: Համաձայնագրի երկրորդ մասը վերաբերում էր ԼՂ կարգավիճակին, որի II-րդ կետով Լեռնային Ղարաբաղը հանդիսանում էր պետական ու տարածքային կազմավորում Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղին թույլատրվում էր ունենալ սեփական սահմանադրություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ, գերբ, դրոշ ու հիմն: Սակայն այն սկզբունքի ամրագրումը, որ ԼՂ-ի կարգավիճակի հարցը ի սկզբանե պետք է դիտարկել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման շրջանակներում, լուրջ խոչընդոտ էր բանակցային հետագա առաջխաղացման համար և մերժվեց հակամարտության մասնակից երկու կողմերի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների կողմից:

Նույն թվականին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ներկայացրած ղարաբաղյան կարգավորման երկրորդ առաջարկը հենվում էր «փուլային» եղանակով հակամարտող կողմերի միջև համաձայնության հասնելու մեթոդի վրա: Ըստ այդ տրամաբանության՝ առաջնային էր համարվում զինված հակամարտության հետևանքների վերացման հիմնախնդիրը, այսինքն՝ զինված ուժերի դուրս բերման (հոդված II), բուֆերային գոտու ստեղծման և միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխման (հոդված III), փախստականների և տեղահանված անձնաց վերադարձի (հոդված V) խնդիրները և միայն դրանից հետո փաստաթուղթը ենթադրում էր, որ «Երեք կողմերը, վերջ ղնելով հակամարտության ռազմական կողմին, համաձայնության են գալիս բարեխղճորեն շարունակել բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մինչև հակամարտության մյուս ասպեկտների համապարփակ կարգավորումը՝ ներառյալ նաև քաղաքական ասպեկտը, որը ներառում է ԼՂ կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի

¹⁶ Տե՛ս <https://www.osce.org/mg>:

¹⁷ Տե՛ս <https://www.anisarc.am/2019/07/01/nk-package-1997-july/>:

հիմնահարցերի լուծումը»¹⁸: Այս մոտեցումը որպես հիմք ընդունվեց ՀՀ-ի և ԱՀ-ի կողմից, սակայն մերժվեց Լեռնային Ղարաբաղի կողմից, քանի որ բացակայում էին երաշխիքները, որ ԼՂ կողմից վերահսկվող տարածքների վերադարձից հետո հանկարծ ադրբեջանական իշխանությունների շրջանում չէր անհետանա ցանկությունը բանակցությունների հետագա շարունակման համար:

1998թ.-ին ներկայացված «ընդհանուր պետության» կոնցեպցիայի վրա հիմնվող բանակցային փաստաթղթում նկատելի էր որակական անցում հակամարտության հիմնական բաղադրատարրերի լուծման ուղիների ընդունման հարցում: Մասնավորապես, հակամարտության կարգավորման՝ կարևորությամբ առաջին հիմնահարցն էր դիտարկվում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ սկզբունքային համաձայնության ձեռք բերումը: Համաձայնության տեքստի առաջին մասում նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է պետական և տարածքային կազմավորում հանրապետության ձևով, որը կազմավորում է ընդհանուր պետություն Ադրբեջանի հետ»¹⁹: Բացի վերը նշված ձևակերպումից, ԼՂ կարգավիճակը ներառում էր նաև այնպիսի իրավասությունների ձեռք բերում, ինչպիսիք էին՝ հանրաքվեի միջոցով սեփական սահմանադրության ընդունումը, պետականության ատրիբուտները, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները և այլն: Միաժամանակ, հենվելով կողմերի հռչակած «սիմետրիկ փոխզիջման» եղանակով որոշումների ընդունման մեթոդոլոգիայի վրա՝ այդ փաստաթղթում լուծում էր առաջարկվում նաև Շուշիի ու Շահումյանի ապագա կարգավիճակների համար:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման կուլմինացիոն մյուս փուլը համընկնում է 2001թ.-ի սկզբներից բանակցային գործընթացում նկատվող որոշակի ակտիվացման հետ, որն իր արտացոլումը գտավ Փարիզյան և Զի Ուեսթյան բանակցություններում: Այսպես կոչված «Փարիզյան սկզբունքների» հիման վրա կազմված Զի Ուեսթյան համաձայնագրի փաթեթում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակն ամրագրված էր համաձայնագրի երկրորդ հոդվածում, ըստ որի՝ դե ֆակտո ամրագրվում էր, որ նախկին ադրբեջանական Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը Ադրբեջանի վերահսկողության տակ չէ և անցնում է Հայաստանի ինքնիշխանության ներքո²⁰: Փաստորեն, սրանով ամրագրվում էր Լեռնային Ղարաբաղի փաստացի գոյությունը և Ադրբեջանի վերջնական վերահսկողության կորուստը այդ տարածքի նկատմամբ:

2007թ.-ից հետո կողմերը բանակցությունները շարունակեցին Մադրիդյան սկզբունքների հիման վրա, որը ենթադրում էր հակամարտության կարգավորման նոր փիլիսոփայություն՝ կառուցված սկզբունքների համադրման գաղափարի վրա: Այն իր հերթին ենթադրում էր իրավական պարտադիր ուժ ունեցող կամարտահայտության միջոցով (պլեբիսցիտ) Արցախի կարգավիճակի վերջնական հստակեցումը, միջանկյալ կարգավիճակի ճանաչումը, զինված ուժերի հետ քաշումը, Արցախի և ՀՀ-ի միջև ցամաքային կապի ապահովումը, փախստականների վերադարձն ու միջազգային խաղաղապահ գործողությունները²¹: Դրանից հետո միջնորդների կողմից հնչեցին մի շարք հայտարարություններ Աբվիլայում²², Մուսկոկոյում²³, Կազանում և այլն:

Ինչու՞, այնուամենայնիվ, չնայած առաջարկների նման բազամազանությանը՝ Արցախյան կարգավորման բանակցային գործընթացում էական առաջընթաց չի գրանցվում: Մեր կարծիքով՝ այստեղ կա մի պարզ, բայց միևնույն ժամանակ շատ

¹⁸ Տե՛ս <https://www.aniarc.am/2019/03/27/step-by-step-1997-december-nkr/>:

¹⁹ Տե՛ս <https://www.aniarc.am/2019/01/24/common-state-1998-nk/>:

²⁰ Տե՛ս **Գալստյան Խ.**, Զաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա, Ե., 2007, էջ 181:

²¹ Տե՛ս Мадридские принципы [<https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/>]:

²² Տե՛ս <https://www.osce.org/item/38731.html>:

²³ Տե՛ս <https://ria.ru/20100717/255734396.html>:

խորթային հարցադրում, որն անկյունաքարային նշանակություն ունի Արցախյան հիմնախնդրի կարգավորման նոր հայեցակարգի մշակման համար: Խոսքը նախևառաջ վերաբերում է Արցախի գոյության փաստի ճանաչման սկզբունքին: Օրինակ՝ եթե դիտարկենք խնդրի վերաբերյալ Ադրբեջանի մոտեցումը, ապա կարող ենք նկատել, որ այդ երկիրը ժխտում է Արցախի գոյության փաստն ընդհանրապես, քանի որ ըստ իրենց պաշտոնական դիրքորոշման՝ դեռ 1991թ.-ի նոյեմբերի 26-ին Ադր. ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունել է ԼՂԻՄ լուծարման մասին որոշումը²⁴, ըստ որի՝ նախկին ինքնավար մարզի տարածքում ձևավորվել են սովորական վարչական միավորներ: Իսկ 2019թ.-ի հոկտեմբերի 3-ին Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի՝ միջազգային բանավեճային «Վալդայ» ակումբում ունեցած ելույթը, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի պատմական տարածք է, իսկ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ընդհանրապես գոյություն չունի²⁵, լիովին համապատասխանում է մեր կողմից առաջ քաշված այն թեզին, որ Ադրբեջանը վարում է արսիենտիստական ու Արցախի գոյության ժխտման քաղաքականություն: Հետևաբար, հետևողականորեն ժխտելով Արցախի գոյության փաստը՝ Ադրբեջանը կառուցում է մի ողջ բանակցային փոխհարաբերություն, ըստ որի՝ որպես բանակցային ապագա հնարավոր զիջում մատուցվում է այն թեզը, որ կարելի է ընդունել Արցախի գոյությունը, սակայն միմիայն իրենց տարածքային ամբողջականության շրջանակներում: Տրամաբանությունը կարծես թե հասկանալի է՝ մի քայլ հետ, երկու քայլ առաջ մարտավարությամբ ստանալ բաղձալին, կեղծ օրակարգեր առաջ քաշելով ու չափազանցված պահանջներ ներկայացնելով՝ բանակցություններում ստանալ առավելագույն օգուտներ:

Որքան էլ տարօրինակ թվա առաջին հայացքից, սակայն եթե դիտարկում ենք Հայաստանի Հանրապետության՝ Արցախյան կարգավորման դիրքորոշումների եվոլյուցիան, ապա տեսնում ենք, որ ի տարբերություն Ադրբեջանի, թեև հայաստանյան քաղաքական ղեկավարները ընդունում են Արցախի գոյությունը, սակայն չեն ընդունում կամ առնվազն դժվար են համակերպվում Արցախի ինքնուրույն գոյության փաստի հետ: Հատկապես կարգավորման վերջին 20 տարիների հայաստանյան տրամաբանությունը կառուցվել է երկու բանակցային սուբյեկտները՝ Արցախն ու ՀՀ-ն մեկ անձի տեսքով ներկայացնելու մարտավարության հիման վրա: Չէ՞ որ և՛ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Ջոյարյանի, և՛ նրան փոխարինած Ս. Սարգսյանի պարագայում ենթադրվում էր, որ նրանք, կանգնած լինելով Արցախյան շարժման ակունքներում և առանցքային պաշտոններ զբաղեցնելով Արցախի Հանրապետությունում, նույնչափ հետևողականորեն բանակցություններում կներկայացնեն բուն Լեռնային Ղարաբաղի մոտեցումները: Բանակցային ձևաչափի նման փոխակերպումը մի կողմից՝ թույլ տվեց «մեռյալ» կետից տեղաշարժել կարգավորման գործընթացը, մյուս կողմից՝ էական վնաս հասցրեց Արցախի քաղաքական ինքնությանը: Իսկ արդեն 2018թ.-ին ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունից հետո մարտավարական այդ գիծն ուղղակի շարունակելն անհնար էր, քանի որ, ինչպես նշել էր ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը, ինքը պատրաստ է մասնակցել բանակցություններին ՀՀ անունից, բայց չի կարող բանակցել Արցախի Հանրապետության անունից, որովհետև չունի Արցախի վարչապետի կամ նախագահի կարգավիճակ, որովհետև Արցախի ժողովուրդը չի մասնակցում ՀՀ իշխանությունների ձևավորման գործընթացին և ըստ էության իր անունից

²⁴ Закон Азербайджанской Республики «Об упразднении Нагорно-Карабахской автономной области Азербайджанской Республики» от 26 ноября 1991 года [http://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=2890].

²⁵ Алиев в Сочи: Карабах - это Азербайджан и восклицательный знак [https://az.sputniknews.ru/video /20191004/421923678/karabah-jeto-azerbajdzhan-aliev-valdaj.html].

բանակցություններին մասնակցելու մանդատ չի տվել²⁶: Փաստացի, հեղափոխությունից հետո մի կողմից՝ բարձրաձայնվում է Արցախին բանակցությունների սեղան վերադարձնելու մասին թեզը, մյուս կողմից՝ տարբեր հարթակներում ու միջոցառումներում Հայաստանից հնչում են Արցախի քաղաքական ինքնությունն ու ինքնուրույնությունը նսեմացնող կոչեր:

Utrum has verum an falsum est

Դեռ Հին Հռոմում տարաբնույթ վիճահարույց հարցերի ու կոնֆլիկտների կարգավորման համատեքստում լայնորեն կիրառվող փաստարկներից էր փաստացի իրողությունների ճանաչման և դրանք անվերապահորեն հաշվի առնելու սկզբունքը կամ ինչպես հռոմեացիներն էին ձևակերպում Utrum has verum an falsum est (ճիշտ է, թե սխալ, բայց դա այդպես է)²⁷: Հետևաբար Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման համատեքստում առաջնային նշանակություն ունի. **1. Արցախի գոյության փաստի ընդունումը, 2. Արցախի ինքնուրույն գոյության փաստի ընդունումը, 3. Արցախի ինքնուրույն քաղաքական ինքնության ընդունումը**: Այս երեք հիմնարար պրոպոզիցիաները պետք է դրվեն Արցախյան հիմնախնդրի կարգավորման հայկական կողմերի բանակցային հայեցակարգի հիմքում, քանի որ Արցախի Հանրապետությունն ունի ինքնուրույն քաղաքական ինքնություն. ուզեք թե չուզեք, բայց դա այդպես է:

Հիմա դիտարկենք Արցախի կարգավիճակի ճանաչման և նախավիճակի փոփոխման կորեյացիան: Չզիտես ինչու, այս տարիների ընթացքում և՛ միջազգային հանրության, և՛ հակամարտության մեջ ներթաշված կողմերը թյուր տպավորություն ունեն, որ Արցախյան համակարտության նախավիճակի՝ (Status Quo) այս տեսքով պահպանումը ձեռնտու է հայկական կողմին, իսկ ահա փոփոխությունը՝ Ադրբեյջանին: Կարծում եմ, որ սխալ պատկերացում է, այս հարցում էլ մենք պետք է նախաձեռնողականություն ցուցաբերենք ու առաջ քաշենք նախավիճակի անհապաղ փոփոխման հարցը Արցախի կարգավիճակի ճանաչման ճանապարհով: Ըստ էության, այս դիրքորոշման հիմքում ընկած է նախորդ թեզը, որ Արցախն ինքնուրույն քաղաքական ինքնություն ունի, որն այլևս անհնար է հաշվի չառնել, ու միայն այդ փաստի անհապաղ ճանաչման ճանապարհով փոխել արդեն շուրջ քառորդ դար հաստատված Արցախյան հակամարտության նախավիճակը: Հետևաբար ստացվում է, որ նախավիճակի փոփոխման գլխավոր նախապայմանը Արցախի ներկայիս կարգավիճակի ճանաչման փաստն է: Ինչ վերաբերում է «հավերժական» դիսկուրսին՝ Արցախը Հայաստանի Հանրապետության մա՞ս է, թե՞ անկախ պետություն, ապա այդ հարցում առնվազն պետք է առաջնորդվել համազգային շահերի ամրագրման հեռահար, երկարաժամկետ ու կարճաժամկետ ռազմավարական նպատակներով: Ընդ որում, որպես հեռահար ռազմավարական նպատակ պետք է ամրագրել Արցախի՝ Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորումը, իսկ կարճաժամկետ՝ Արցախի անկախության միջազգային ճանաչումը: Մեր խորին համոզմամբ՝ միայն Արցախի անկախության միջազգային ճանաչման ճանապարհով է հնարավոր հասնել նաև մեր համազգային հեռահար նպատակին՝ մայր հայրենիքի հետ հայության այդ հատվածի վերամիավորմանը: Եթե չի ստացվելու կամ ՀՀ արտաքին քաղաքականության ուղեծրից դուրս է մնալու Արցախի անկախության միջազգային ճանաչման գիծը, ապա նույնքան անհնար է լինելու նաև դե յուրե Հայաստանի Հանրապետության հետ միացումը: Ըստ էության, այդ ռազմավարական նպատակներով առաջնորդվեցին նաև

²⁶ Տե՛ս ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի ելույթը ՀՀ 7 գումարման առաջին նստաշրջանի նիստին, 12 փետրվարի, 2019թ. [<http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3577&day=12&month=02&year=20>]

²⁷ Мокшанцев Р. Психология переговоров. М., 2002. с. 112.

Կոսովոն ու Ալբանիան: Այն բանից հետո, երբ ՄԱԿ-ի անդամ պետությունների մեծամասնությունը ճանաչեց Կոսովոն՝ որպես անկախ պետություն, Ալբանիայի և Կոսովոյի բարձրագույն իշխանության ներկայացուցիչները 2019թ.-ի հուլիսին Տիրանայում ստորագրեցին ռազմավարական համագործակցության համաձայնագիրը, որը նախատեսում էր երկու պետությունների՝ արտերկրում գործող դեսպանատների միավորում՝ վերջնականապես ունենալով խորացված ազգային ինտեգրացիայի և Ալբանիայի ու Կոսովոյի միավորումը մեկ միասնական պետության կազմում²⁸:

Փաստորեն, միջազգային հանրության մի ստվար հատվածի ճանաչումից հետո միայն երկու ալբանական պետությունները սկսել են նախաձեռնել վերամիավորման գործընթաց: Այդ մասին հրապարակային հայտարարություն արեց նաև Ալբանիայի վարչապետ Է. Ռամին՝ նշելով, որ Կոսովոն Ալբանիայի անբախտելի մասն է, որի միավորումը ոչ թե պլան Բ-ն է, այլ պլան Ա-ն²⁹: Միջազգային պրակտիկայի այս թարմ օրինակը նույնպես ուղենշային պետք է լինի մեզ համար համազգային բաղձալի նպատակներին հասնելու ճանապարհին: Այնպես որ Արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում «սայլը» տեղից շարժելուն ուղղված առաջին գործնական քայլերը պետք է ներառեն հենց վերոշարադրյալ քայլերի հաջորդականությունը, որոնք ներառում են Արցախի գոյության, ինքնուրույնության ու ինքնուրույն քաղաքական ինքնության անվիճելի փաստերի ճանաչումը:

THE STATUS RECOGNITION PROBLEM AND THE PRIMARY STATE CHANGE (STATUS QUO) IN THE NEGOTIATIONS ON ARTSAKH SETTLEMENT

KHACHIK GALSTYAN

Yerevan State University, Associate Professor at the Chair of History and Theory of Political Science, Doctor of Sciences (Political Science), honorary member of UYSSA, Yerevan, Republic of Armenia

In the context of the settlement of the Artsakh conflict, one of the key issues is the problem of status, according to which the main conflicting parties have deep strategic differences and the most polarized positions. The purpose of this article is to identify causal relationships between the negotiation evolution of the status issue and the change in the status quo in the Artsakh conflict. In this sense, the objectives of the study are a critical analysis of negotiation documents affecting status formulations and, therefore, the study of the possibilities for changing the status quo of the conflict. The methodological basis of the work is the chronological and content analysis methods.

The article discusses the evolution of negotiations on the status of Artsakh putting forward a number of innovative theses based on recognition of the existence of Artsakh, independence, and independent political identity as important factors for changing the status quo of the Artsakh conflict.

Keywords: *Artsakh conflict, recognition of status, status quo change, independent political identity.*

²⁸ Косово и Албания объединят посольства [<https://ria.ru/20190704/1556206392.html>].

²⁹ Տե՛ս նույն տեղում:

ПРОБЛЕМА ПРИЗНАНИЯ СТАТУСА (STATUS) И ИЗМЕНЕНИЯ ПЕРВИЧНОГО СОСТОЯНИЯ (STATUS QUO) В ПЕРЕГОВОРАХ ПО АРЦАХСКОМУ УРЕГУЛИРОВАНИЮ

ХАЧИК ГАЛСТЯН

*Доцент кафедры теории и истории политической науки ЕГУ,
доктор политических наук, почётный член ОМУСА,
г.Ереван, Республика Армения*

В контексте урегулирования арцахского конфликта одним из ключевых является вопрос статуса, по которому основные конфликтующие стороны имеют глубокие стратегические разногласия и максимально поляризованные позиции. Целью данной статьи является выявление причинно-следственных связей между переговорной эволюцией вопроса статуса и изменением статус-кво в арцахском конфликте. В этом смысле задачами исследования становятся критический анализ переговорных документов, затрагивающих статусные формулировки и в связи с этим изучение возможностей изменения статус-кво конфликтного противостояния. Методологической основой работы стали хронологический метод и метод контент-анализа.

В статье обсуждается эволюция переговоров по статусу Арцаха, выдвигается ряд инновационных тезисов, основанных на признании существования Арцаха, независимости и самостоятельной политической идентичности в качестве важных факторов для изменения статус-кво арцахского конфликта.

Ключевые слова: *арцахский конфликт, признание статуса, изменение статус-кво, самостоятельная политическая идентичность.*

ԿՈՒՍԱԿՑԱԴԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ*

ԱՐԱՐՅԱՍ ԳԱՍԴԱՐՅԱՆ

*Քաղաքական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի միջապագային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
abrahamgasparyan@gmail.com*

Հոդվածի նպատակն է ցույց տալ Սիրիայի արաբական հանրապետության քաղաքական համակարգի նախագահական, խորհրդարանական ու անվտանգային ինստիտուտների սահմանադրաիրավական կարգավիճակի ու իրական քաղաքական գործընթացներում այդ լիազորությունների իրականացման խորքային հակասությունները: Հոդվածում առաջ է քաշվում և հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի՝ Սիրիայի Սահմանադրության բազմաթիվ հոդվածներ ու ենթաօրենսդրական վանապան ակտեր 1963թ.-ից մինչև մեր օրերը սահմանափակում են երկրում ցանկացած համակարգային ապատականացում կամ ժողովրդավարացում, ապահովում են իշխող «Բաաս» կուսակցության և Ասադների ընտանեվարությունը իշխանությունում: Մեր խնդիրն է ամբողջատիրական այդ վարչակարգի կողմից ուղղորդվող գործընթացներում բացահայտել դերն ու տեղը անվտանգային կառույցների, որոնք շուրջ վեց տասնամյակ շարունակում են գործել բռնության փոխտոկայությանը, արձանագրելով մարդու իրավունքների և ապատությունների աղաղակող ոտնահարումներ:

Հետապոտության իրականացման ընթացքում քաղաքական երևույթները ուսումնասիրել ենք դրանց իրական համատեքստում՝ օգտագործելով ապացուցման բազմաթիվ աղբյուրներ և պարզելով քաղաքական երևույթների ու դրանց համատեքստի սահմանները: Կիրառվել են քաղաքական հետապոտության համեմատական ու համակարգային վերլուծության մեթոդները:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Սիրիայում որոշումների ընդունման իշխանության կենտրոնները օրենսդրական ու գործընթացային բոլոր հնարավոր միջոցներով քաղաքական համակարգը վերծ են պահել «անվստահելի» տարրերից, որոնց գործունեությունը կարող է վտանգել իշխանության վերարտադրումը: Էլիտայի շրջապատյուտի միջոցով նրանց չի հաջողվել համակարգը տանել ժողովրդավարացման, հակառակը՝ անվտանգային կառույցների բարձրաստիճան պաշտոնները դարձնելով իշխող փոքրամասնության համայնքի՝ այլափնների «սեփականությունը» և նրանց միջոցով սահմանելով ավելի քան կեսդարյա արտակարգ դրություն, հաստատել են «Բաաս»-ի կուսակցապետության տոտալիտար գաղափարախոսությունը:

Հիմնաբառեր՝ Սիրիա, Անվտանգային կառույցներ, «Բաաս» կուսակցություն, Սահմանադրություն, կոռուպցիա, բռնություն, հեղաշրջում, Ասադ, ընդդիմություն, Ալավի, Սուննի:

* Հոդվածը ներկայացվել է 15.10.2019թ., գրախոսվել՝ 12.11.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Քաղաքական մասնակցության ինստիտուցիոնալ ամրագրման ու իրախուսման՝ օրենսդրական ու սահմանադրական տեսահայեցակարգային դրույթներից անդին Սիրիայում քաղաքական գործընթացներին՝ շահերի ու ճշման խմբերի, առևտրատնտեսական միությունների, ուժային տարբեր կենտրոնների, հասարակական, քաղաքական, քաղաքացիական հատվածների³⁰ ներգրավվածության հարցը հաճախ ուղղորդված և մշտապես վերահսկելի է եղել կենտրոնացված իշխանության տարբեր ինստիտուտների, անվտանգային բազմաշերտ ու բազմաֆունկցիոնալ մարմինների կողմից: Նման իրողությամբ էլ պայմանավորված է փաստը, որ երկրում քաղաքական գործընթացների համալիրը ստեղծվել է բրգաձև, հիերարխիկ, հաճախ բռնության ոչ լեգիտիմ գործադրման տրամաբանությամբ և բաղկացած է փոխկապակցված, միևնույն գաղափարաբանական դիկտատուրայի տրամաբանությունից բխող, համադրված գործողություններից: Պետության համընդհանուր և վարչատարածքային առանձին հատվածներում տեղի ունեցող գործընթացներն իրենց գործառնական նշանակությամբ հիմնականում կրել են դիսֆունկցիոնալ բնույթ: Կոռուպցիայի համակարգային բնույթը, դրա անվերահսկելիությունը, արատավոր այդ երևույթի նկատմամբ հանրության լայն շերտերի, պետական ու գործարար շրջանակների միանման ընկալումներն ու այդ հարցում համերաշխության՝ ոչ ֆորմալ դաշինքի կնքումը թույլ են տալիս պնդելու, որ քաղաքական համակարգի պետական հատվածի ու դրանից դուրս դե յուրե գոյություն ունեցող, բայց իշխանությունների կողմից վերահսկվող քաղաքացիական հասարակության միջև փոխըմբռնումը ստեղծել է իրավիճակ, որը կարելի է բնութագրել որպես «կոռուպցիոն համերաշխություն»³¹: Այդ դաշտում

³⁰ Իրավական պետության սահմաններում գործող կազմակերպված զանգված՝ իր հումանիտար, սոցիալական, տնտեսական, հոգեւոր, տեղեկատվական, տարածքային-կառավարչական և կազմակերպական սեգմենտներով: Ժողովրդավարության կայացման անհրաժեշտ պայմաններից է քաղաքացիական հասարակության՝ նվազագույնը գոյությունն ու կայացումը: Դեմոկրատիայի բառացի թարգմանությունը՝ ժողովրդաիշխանությունը, սակայն, իրավական մտքի ու տեսության մեկնաբանությամբ որոշակիորեն տարբերվում է «ժողովրդավարություն»-ից: Առաջինը երկրորդի տարրերից է. այլ կերպ ասած՝ ժողովրդի իշխանության իրացումը ժողովրդավարական հասարակության բնութագրիչներից է: Այն ենթադրում է հասարակական արդյունավետ ու մշտական ազդեցություն գործող իշխանության վրա, ընտրական համակարգի, գործընթացի ու սուբյեկտների միջոցով վերահսկողություն, պլեբիսցիտների կամ հանրաքվեների միջոցով պետության համար կարևորագույն որոշումների ընդունում: Սակայն որքան էլ սոցիոլոգիական ու քաղաքագիտական ընկալումներում ժողովրդավարությունը բնութագրվի որպես «ժողովրդի անմիջական իշխանություն», այդուհանդերձ պետական իշխանությունը կառուցված է ժողովրդավարական այլ սկզբունքների վրա: Վ. Ներսիսյանցի համոզմամբ՝ «ժողովրդի անմիջական իշխանությունը ֆիկցիա է, որը կոչված է լեգիտիմացնելու քաղաքական էլիտաների իրական իշխանությունը»: Պետական իշխանությունը միշտ ուղղված է համընդհանուր շահերն արտահայտելուն: Ժողովրդավարական իշխանությունն ուղղված է ժողովրդի կամքն արտահայտելուն: Այլ կերպ ասած՝ ժողովրդաիշխանության գաղափարը այլախեղում է պետական իշխանության իմաստը, ստեղծում ժողովրդի իշխանության և պետական իշխանության դուալիզմի տպավորություն: Տե՛ս **Нерсесянц В. С.**, *Общая теория права и государства.*-М.: ИНФРА-М, 1999, էջ 285.

³¹ Պետության, միջնորդ ինստիտուտ-օղակի՝ բյուրոկրատիայի ու քաղաքացիների՝ «կոռուպցիոն համերաշխություն» եռանկյունու ստեղծման ու առաջմղման պատասխանատվությունը կրում են բոլորը: Կոռուպցիայի տարածման պատասխանատվությունը պետք է վերագրել ոչ միայն կրթական ցածր ցեղ, կենսամակարդակ ու արժեքաբանական տարբերակված ընկալումներ ունեցող, գյուղական կենցաղավարությամբ ու բարոյագիտությամբ ապրող, դարաշրջանի հրամայականներին ոչ համընթաց, ժամանակավրեպ ավանդույթներով ու մտածելակերպով ապրող հասարակությանը, այլ նաև առաջին հերթին անկախ պետականաշինության ու զարգացման տարբեր փուլերում իշխանությունների գործարկած այն մեխանիզմներին, որոնք ստիպեցին հանրությանը հաշտվել

կենսունակություն են ստացել կաշառակերությունը, հովանավորչությունը, նեպոտիզմը, պաշտոնական դիրքի չարաշահումն ու դրա օգտագործմամբ պետական ու մասնավոր սեփականության յուրացումն ու վատնումը, գումարած՝ որոշումների ընդունման ինստիտուցիոնալ տարբեր օղակներում բյուրոկրատական հատվածի՝ ժամանակի ընթացքում անվտանգային օղակների հետ սերտաճումը, ազդեցության ձեռքբերումը, ցանցային մոդելով տարածումը, արտաօրենսդրական կամ անօրինական ծառայությունների մատուցումը, համատարած հանցավորությունը, հասարակական համերաշխության ձևավորման համար անհրաժեշտ դիսկուրսի բացակայությունը, այդ հարցում պետական հատվածից դուրս գտնվող շերտին հավասար բանակցային կողմ չընկալելու դիրքորոշումը, իրավունքի գերակայության անբավարարությունը, որոնք քայքայեցին սիրիական բազմաշերտ ու բազմազան հասարակության խարխուլ և հատկապես 1980-ականներից հետո «անվտանգային-հետախուզական թելերով» կարված կառուցվածքը՝ վտանգելով պետության օրինակարգությունը, տնտեսական ու քաղաքական օրինական գործունեությունը դուրս մղելով իրավական վերահսկողության դաշտից ու սպառնալով ներքին անվտանգությանը: Քաղաքական համակարգի սուբյեկտների միջև կոռուպցիոն նման «ցանկալի համակեցության» շուրջ կոնսենսուսը հանգեց իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքի պակասի, քաղաքական՝ քիչ թե շատ ձևավորված մշակույթի խեղմանը, քաղաքացիական իշխանության թուլացմանն ու անվտանգության

իրերի դրության հետ: Այլափական փոքրամասնությունն, օրինակ, Սիրիայում իշխանության կոնսոլիդացիայից հետո, հատկապես՝ 1970-ականների կեսերից և 1973 թ.-ի հոկտեմբերի արաբաիսրայելական 4-րդ պատերազմից «հաղթանակած» դուրս գալուց հետո իր ամբողջական վերահսկողության տակ գտնվող քարոզամեթենայով սիրիական հանրությանը մատուցեց թեզ, թե պետությունը հաղթանակ է տարել «փմպերիայիզմի և համաշխարհային Սիոնիզմի գործակալ պետության՝ Իսրայելի նկատմամբ»՝ այդպիսով ճանապարհ հարթելով այդ պատերազմի «հերոսներին»՝ անարգել մուտք գործելու պետական համակարգ և «վայելելու» հաղթանակի պտուղները: Լաթափայի, Ջարբեի, Թարթուսի՝ ծովափնյա և լեռնային Սիրիայի շրջաններում, այլափական փոքրամասնության կոմպակտ բնակության վայրերում, ժողովրդի սոցիալ-տնտեսական պայմանները բավական անբարենպաստ էին. մեծամասամբ աղքատ, կրթությունից ու քաղաքակրթության կենտրոններից մտածողությամբ ու աշխարհագրորեն գրեթե առանձնացված, գետոյական մտածողությամբ ու կացութաձևով ապրող ժողովուրդը հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ, հնարավորություն չէր ունեցել կրթություն ստանալու մայրաքաղաքում կամ այլ կենտրոններում: Հաճեց Ասադի իշխանության գալուց հետո այլափների կենտրոն համարվող Լաթափան ապրեց աննախընթաց զարգացում: Այս քաղաքում բացվեցին Պետական համալսարանի բոլոր մասնաճյուղերը, վերահսկվող ու իշխանական մամուլի ու մտավորականության հավաքների կենտրոնը, գումարած՝ նավթագազային ռեսուրսներով հարուստ լինելու փաստը. նպատակը գործող էլիտայի շրջապտույտի գործընթացը բարձր կենսամակարդակ և կրթություն ունեցող «յուրայիններով» ապահովելն էր (այնպես, ինչպես Ծոցի արաբական երկրներից Քուվեյթը՝ աշխարհագրորեն փոքր տարածք, մեկ շնչին ընկնող բարձր ՀՆԱ, ծովային էլք, կենտրոնացված իշխանություն, զարգացած տնտեսություն, արտասահմանյան առաջատար համալսարաններում կրթված պետական համակարգի ներկայացուցիչներ, վերահսկվող հարկային ու մաքսային համակարգ): Իսկ մինչև այդ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների՝ որպես յուրային և հարագատ համայնքի ներկայացուցիչների, զանգվածային մուտքն ապահովվեց պետական կառավարման ու անվտանգային կառույցների համակարգ, հատկապես՝ վերջինը, որտեղ բյուրոկրատական ապարատում աշխատելու համար անհրաժեշտություն չկար ստանալու գիտակրթական բարձր որակավորում, դիցուք՝ իրավապահ համակարգում, Դատախազությունում և Ոստիկանության օպերատիվ ու հետաքննչական տարբեր օղակներում չէին պահանջվում իրավաբանի կրթությամբ մասնագետներ: Այստեղ էր, որ իշխանությունը կարողացավ համակարգը դարձնել կենտրոնաձիգ՝ «համայնքային երկաթետունե ցեմենտով» և պետական համակարգում բարձրագույն «բանալի» պաշտոնները վստահելյուրայիններին:

մարմինների կամայական գործողություններին ու հաճախ անօրինական որոշումներ ընդունելուն ու իրականացնելուն, քրեական արդարադատության կամայական և ոչ արդյունավետ համակարգի ձևավորմանը, ինչն էլ իր հերթին արգելակեց հասարակության կայուն զարգացման տեսլականի գնացքը: Թեև պետք է խոստովանել, որ սիրիական հասարակության գրեթե բոլոր շերտերի համար անընդունելի, բայցև միաժամանակ ընկալելի էր իշխանության ջանքն ու աշխատանքը՝ ձևավորելու յուրայինների նեղ շրջանակ, որը կպաշտպաներ նրան չվերարտադրվելու վտանգից: Այդ շրջանակը հետագայում պիտի ընդլայնվեր, դուրս գար նեղ ալավիական բնույթից, զինվեր գանգստերական ու հանցավոր խմբավորումների գործելակերպին ու գաղափարախոսությանը բնորոշ արսենալով: Այդ շրջանակում ներառվեցին «գործակալներ» սիրիական էթնիկ ու կրոնական բազմազան գունապնակի բոլոր դերակատարներից՝ սուննիներ, շիաներ, դրուզներ, թուրքմաններ, քրդեր, քրիստոնեաներ և այլն: Կենտրոնաձիգ այդ համակարգը, փաստորեն ապահովելով բազմազանության շղարշ, ծառայում էր բացառապես իշխող վարչախմբի նեղ շրջանակի: Այդ շրջանակը նույնպես հիերարխիկ կառուցվածք ուներ՝ իրական որոշումների ընդունման փոքր բջիջից մինչև այդ որոշումները բռնությամբ ու ամեն գնով կյանքի կոչող կամակատարներ և նրանց վերահսկող «միջնորդ օղակ»:

Առհասարակ՝ տնտեսական աճի հայտարարվող բարձր ցուցանիշերը, ՅՆԱ-ի՝ հետզհետե աճ արձանագրող թվերը, ՅՆԱ-արտաքին պարտք հարաբերակցության դրական սալոն, արտաքին պարտքի ցածր ցուցանիշերը³², Էտատիզմի հայեցակարգային ու կիրառական դրսևորումները, տեղական կապիտալի ու

³² «Մուսուլման եղբայրների» դոպեի կարգավորումից հետո՝ հատկապես՝ 1980-ականների երկրորդ կեսին, Սիրիայի տնտեսական քաղաքականության դիվերսիֆիկացումը դարձավ ավելի ակնհայտ: Պետությունն ընդունեց տեղական արտադրողին խրախուսող օրենքներ՝ օգնելով նրան արտահանման գործում և ոլորացնելով սեփական արտադրանքն արտաքին շուկաներ հասցնելու ներպետական իրավաօրենսդրական մեխանիզմները: Սա, ինչպես նաև ԽՍՀՄ-ից ստացած ֆինանսական ու տեխնիկական օժանդակությունն իրենց հերթին նվազեցրին երկրի կախվածությունը արտաքին խաղացողներից և արտաքին պարտքը ՅՆԱ-ի հարաբերակցությամբ, զգալիորեն թեթևացավ: Պատկերը փոխվեց 90-ականների երկրորդ կեսից, երբ ԽՍՀՄ կազմաքանդումն զգալիորեն երևան բերեց չհավասարակշռված տնտեսական կուրսի ու իրական բարեփոխումների բացակայության բացասական կողմերը: Պետության արտաքին տնտեսական հարաբերությունների համալիրի վրա չէր կարող էականորեն չազդել կոռուպցիայի ու կլեպտոկրատիայի ծավալների ահազնացումն ու դրանց վտանգավոր անդրադարձը երկրի արտաքին իմիջի, հետևաբար նաև՝ ներդրումային միջավայրի վրա: Հետխորհրդային իրողություններն ու նոր ձևավորվող միաբևեռ աշխարհի տնտեսական հրամայականները ստիպեցին Սիրիային արտաքին տնտեսական օգնության նպատակով ճեղքում մտցնել տարածաշրջանային խաղաղության ճարտարապետության մեջ և բանակցային սեղանի շուրջ կարգավորել Իսրայելի հետ պաշտոնապես գոյություն չունեցող հարաբերությունները, ինչը, սակայն, տարբեր պատճառներով չունեցավ ցանկալի արդյունք: Ավելի մանրամասն տե՛ս ԱՄՆ Հեմիչիիի համալսարանի տնտեսագետներ Յ. Մունիֆի և Օմար Դահիի՝ «Նեոլիբերալիզմը և բռնապետությունը Սիրիայում» հոդվածը, <https://www.bidayatmag.com/node/258>, ինչպես նաև Ֆուադ Աբդուլ Ազիզի՝ «Հաֆեզ Ալ Ասադ. Ի՛նչ կատարվեց 90-ականների տնտեսությունում» հոդվածաշարը հետևյալ հղումներով՝ <https://www.eqtsad.net/news/article/20092/>, <https://www.eqtsad.net/news/article/19857/>: Արտաքին տնտեսական հարաբերությունների բարդացումն ու արտաքին պարտքի տասնապատիկ ավելացումն այդ երկրում ակնհայտ դարձավ 2011թ.-ից ծավալված զանգվածային անկարգությունների, հեղափոխության, պատերազմի տարիներին: Պատերազմական գործողությունների երրորդ տարում՝ 2014թ.-ին, արտաքին պարտքն արդեն կազմում էր ՅՆԱ-ի 57 տոկոսը: Սիրիայի և արաբական պետությունների 1995-2000թթ.-ի արտաքին պարտքի ցուցանիշերի մասին տե՛ս Իմադ Թահուսի «Արաբական արտաքին պարտքերը» ուսումնասիրությունը հետևյալ հղմամբ՝ <https://www.aljazeera.net/specialfiles/pages/f48d1bc3-e558-4226-bcb1-56f5a3eb9462>.

արտադրողի փոխարինումը օտարերկրյա ներդրողին, արհեստական զնակայունացումը, նվազագույն սպառողական զամբյուղի մի քանի բաղադրիչի սուբսիդավորումը, արտարժույթի տատանումներից խուսափելու հարցում պետական կոպիտ միջամտությունը, գնաճի կանխման՝ մասամբ հաջողված փորձերը, տեղական արդյունաբերության զարգացումը և դրա մասնաբաժինը տնտեսությունում 35 տոկոսի հասցնելը, ներմուծումների հաշվին արտահանման ծավալների ավելացումը, տնտեսական ու գյուղվարկերի տրամադրման ընթացակարգային ոլորացումները, գյուղատնտեսության 23 տոկոս մասնաբաժինը ՀՆԱ-ում, հարկային ճկուն քաղաքականությունը, անվճար կրթություն և առողջապահություն (տարածաշրջանում թեկուզև ոչ այնքան մրցունակ) ապահովելը և այլ փոփոխություններ, այդուհանդերձ, չկարողացան արդարացնել հասարակական լայն շերտերի ակնկալիքները, ապահովագրել նրան ծայրահեղ աղքատությունից, սոցիալական խորացող բևեռացումից, չերաշխավորեցին տնտեսական բարիքի արդար վերաբաշխում: Հայտարարված ու սահմանադրորեն ամրագրված այս նպատակի իրականացման անհնարինությունն ու հռչակված քաղաքականության ձախողման պատճառները պետք է տեսնել նաև անվտանգային համակարգի բազմաթիվ կառույցների դիսֆունկցիոնալ գործունեության մեջ³³: Այդ կառույցները ամբողջական վերահսկողություն էին սահմանել հասարակության քաղաքական ու տնտեսական, սոցիալ-կրթական ու համակարգային բոլոր բնագավառների նկատմամբ: Նրանք խանգարում էին արհեստավարժ ուժերի, տեղական կապիտալի, «այլախոհ» ինտելեկտուալ, բայց պետականամետ շերտի մուտքը պետական կառավարման համակարգ՝ պրոֆեսիոնալ ու մրցունակ գործակցության փոխարեն նախընտրելով հիերարխիկ, ուղղահայաց բնույթի աշխատանքը: Այդ տարրը հետագայում պիտի դառնար «պետության հիմքերը քայքայող թշնամի, որը համագործակցում է արաբական երազանքը ոչնչացնող թշնամի Իսրայելի հետ»:

Սուպերնախագահական կառավարման համակարգի սահմանադրական մեխանիզմները

Միջազգային իրավասուբյեկտիվությամբ օժտված և կառավարման հանրապետական ձևը որդեգրած ցանկացած պետության պես Սիրիայի Արաբական Հանրապետության Սահմանադրությունն այդ երկրի իշխանությունները բաժանում է երեք հիմնական ճյուղերի՝ Գործադիր իշխանություն, որը գլխավորում է հանրապետության նախագահը, Օրենսդիր իշխանությունը միպալատանի խորհրդարանն է՝ Ժողովրդային ժողովը, Դատական իշխանության բարձրագույն մարմինն էլ Բարձրագույն դատական խորհուրդն (ԲԴԽ): Սահմանադրության մեջ դե յուրե ամրագրված իշխանությունների տարանջատման ու կառավարման ժողովրդավարական այս բնորոշ միայն ձևական բնույթ է կրում և կիրառական

³³ Պետք է ընդգծել նաև, որ նման բարդ իրողություններում համակարգված ու ոչ նյութական ռեսուրսների՝ հիմնականում «փափուկ ուժի» կիրառման սկզբունքային մոտեցումների բացակայության պատճառով Սիրիայի արտաքին քաղաքականությունը կազնեց լուրջ մարտահրավերի առջև՝ համակերպվել միջազգային հարաբերությունների նոր ձևաչափին, որոշումների ընդունման համաշխարհային կենտրոնների նոր պահանջներին, պատրաստվել ժողովրդավարացման ալիքի հետխորհրդային «հարվածներին», տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ու ինտեգրացիոն գործընթացներում միջազգային դերակատարների ներկայությունն ու առավել ակտիվ ներգրավման փաստին, բեկում մտցնել արաբաիսրայելական բանակցային գործընթացում, սառեցնել Դամասկոս-Թեհրան-«Հըզբոլլահ» հակաիսրայելական, ռազմավարական ու դաշնակցային հարաբերությունները, ստանձնել լուրջ հանձնառություն՝ իրագործելու Լիբանանի քաղաքացիական պարերազմի ավարտն ազդարարող, սաուդարաբական Թաեֆում կնքված համաձայնագրի դրույթները:

դրսևորումները բացակայում են իրական քաղաքական կյանքում: Քաղաքացիների ու պետության փոխհարաբերությունները կարգավորող, առանձնահատուկ սոցիալական նորմերի ամբողջություն հանդիսացող այս փաստաթղթի նկատմամբ մասնագիտական ընկալումներն ու վերաբերմունքը տարբեր են³⁴, ծայրաստիճան հակասական: Թեև պետք է խոստովանել, որ ռազմական հեղաշրջումների հարուստ տարեգրություն³⁵ ունեցող այս երկրում (18 հեղաշրջում 20 տարում, որից 7-ը՝ ձախողված³⁶) Գործադիր իշխանությունը անկախությունից սկսած ներկայացնում են Հանրապետության նախագահն ու Նախարարների խորհուրդը (Կառավարությունը): Սահմանադրության 93-րդ հոդվածը³⁷ սահմանում է, որ «երկրի նախագահն իրականացնում է Գործադիր իշխանության կառավարումը ժողովրդի փոխարեն և նրա անունից», իսկ 94-րդ հոդվածով «Հանրապետության նախագահը մշակում է պետության ընդհանուր քաղաքականությունը՝ խորհրդակցելով Նախարարների խորհրդի հետ»³⁸: Հանրապետության նախագահը միաժամանակ Գործադիր իշխանության և կառավարության ղեկավարն է, ղեկավարում է նաև Դատական իշխանության բարձրագույն ինստիտուտը՝ ԲԴԽ-ն: Հանրապետության նախագահին գերագույն դատական այդ ինստիտուտում ներկայացնում է (կամ փոխարինում) Արդարադատության նախարարը: ԲԴԽ կազմը բաղկացած է յոթ անդամից, որից երեքին նշանակում է Գործադիր իշխանությունը՝ Կառավարությունը՝ հանրապետության նախագահի հաստատմամբ: Մյուս երեքը նշանակվում են մասնագիտական դաշտում գործող դատավորներից: ԲԴԽ-ն փաստորեն զրկված է իշխանության Գործադիր թևին զսպելու և հակակշռելու կարգավիճակից ու սահմանադրական պարտավորությունից, քանի որ Գործադիր իշխանությունն այդ մարմնում ունի ձայների պարզ մեծամասնություն:

³⁴ 14 ص، العروبة تومظاهوالان تماءالأخرى فيالذسات يرالراهنقل لأق طارال عرب ية، جورجج بور د.
³⁵ Սիրիայում հեղաշրջումների պատմության մասին ավելի մանրամասն՝ տե՛ս Արաբական ժողովրդավարական կենտրոնի հրապարակած աշխատությունը հետևյալիղմամբ՝ <https://democraticac.de/?p=55444>.

³⁶ Վերջինը 1970-ի նոյեմբերի 16-ին Պաշտպանության նախարար Հաֆեզ Ասադի իրականացրած հեղաշրջումն էր, որը հետագայում պիտի ներկայացվեր որպես «Բարենորոգչական կամ ուղղիչ շարժում»: (Շարժման մասին տե՛ս Գևորգ Դարիբջանյան, «Սիրիայում ուղղիչ շարժման սոցիալ-տնտեսական քաղաքականության որոշ առանձնահատկությունները, (1970-ական թթ.)», http://serials.flib.sci.am/openreader/arevel_jogh_23/book/index.html#page/176/mode/2up): Հեղաշրջման հայտարարված նպատակը երկրում քաղաքական կայունության հաստատումն էր, իսկ իրականում միևնույն փոթորամասնության՝ այլավիական համայնքի և իշխող «Բասա» կուսակցության ներսում ճեղքում առաջացած երկու հիմնական թևերի՝ երկրի նախագահ Սալահ Չադիդի և Պաշտպանության նախարար, «Բասա» կուսակցության սիրիական ղեկավար խորհրդի անդամ Հաֆեզ Ասադի միջև հակամարտությունը և իշխանության համար կատաղի պայքարը: Հետագայում իշխանությունը հեղաշրջմամբ նվաճած ռազմական խունտան երկրում հաստատեց ամբողջատիրական դիկտատուրա: Սիրիայում հեղաշրջումների մասին ավելի մանրամասն տե՛ս
 سوريا، سكريتياسمرزوق في، الا نقال بات لا اع pp 20-21,
<https://daraj.com/%D8%A7%D9%84%D8%AC%D9%8A%D9%88%D8%B4-%D9%88%D8%B1%D9%87%D8%A7%D8%A8-%D8%A7%D9%84%D8%AB%D9%88%D8%B1%D8%A7%D8%AA%D9%A1%D8%A7%D9%84%D8%A7%D9%86%D9%82%D9%84%D8%A7%D8%A8%D8%A7%D8%AA-%D8%A7%D9%84%D8%B9/>, <https://arabiya.com/2018/05/05/%D8%A3%D8%B3%D8%B1%D8%A7%D8%B1-%D8%A7%D9%84%D8%A7%D9%86%D9%82%D9%84%D8%A7%D8%A8%D8%A7%D8%AA-%D8%A7%D9%84%D8%B9%D8%B3%D9%83%D8%B1%D9%8A%D8%A9-%D9%81%D9%8A-%D8%B3%D9%88%D8%B1%D9%8A%D8%A7-1949-1969/>□

³⁷ Տե՛ս ՍԱՀ Սահմանադրությունը, <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/ar/sy/sy014ar.pdf>.

³⁸ Նույն տեղում:

Չկենտրոնանալով ՍԱՀ Սահմանադրական բարեփոխումների պատմության³⁹ ու վերլուծության վրա՝ կառանձնացնենք այն դրույթները, որոնք 1973 թ.-ից⁴⁰ հետո այդ երկրում սահմանադրորեն սահմանեցին միակուսակցական տոտալիտար համակարգ՝ հանրապետության նախագահի ինստիտուտին վերապահելով վերահսկողական ու չհակակշռվող անսահմանափակ լիազորություններ: Նոր փաստաթուղթը հեռու էր ընդունման ժամանակաշրջանի՝ ժողովրդավարացման 3-րդ այլքի երկրների որդեգրած սահմանադրություններում արտացոլված ժողովրդավարական ինստիտուտներ ու հասարակություն կառուցելու տեսլականից: Ավելին, ԽՍՀՄ դաշնակից երկիրն, իր ռազմականացված էլիտայի միջոցով, մայր օրենքում պիտի ամրագրեր հասարակության զարգացման նպատակն ու վեկտորը՝ «Միություն, ազատություն, սոցիալիզմ» կառուցելը, իշխող կուսակցության համար ապահովելով ամբողջական ու անմրցակից կառավարման լեգիտիմ ու լեգալ մեխանիզմները:

Ուշագրավ է փաստը, որ հեղաշրջումների հարուստ տարեգրություն ունեցող երկրում քաղաքական երկարատև կայունությունն իրականություն դարձավ միայն «Բաաս» կուսակցության բռնիշխանության տարիներին՝ շուրջ հիսուն տարի: Հեղաշրջման միջոցով իշխանությունը նվաճած այս կուսակցությունը հետաքրքիր քայլով նպաստեց քաղաքական մրցակիցների չեզոքացմանն և, առհասարակ, նրանց հեռացմանը քաղաքական որոշումների ընդունման գործընթացից ու համաժողովրդական ընտրություններում վստահության քվե ստանալու հնարավորությունից: Այսպես, հեղաշրջումը նպաստեց, որպեսզի արմատական-ձախակողմյան ու մարքսիստական կուսակցություններն ազդեցության լծակներ որոնելու համար դուրս գան քաղաքական դաշտից և մուտք գործեն բանակ՝ ուժի միջոցով քաղաքական ազդեցություն ձեռք բերելու ակնկալիքով: Դաշտի ամայացմամբ «Բաաս»-ին հաջողվեց հասարակական շրջանակներում սերմանել վախի մթնոլորտ և քաղաքական ուղղորդվող մասնակցության հրամայական, այլապես բռնություն գործադրելու իրավական գործիքակազմին տիրապետող բանակը կոխմեր «պատժիչ քայլերի»: «Բաաս»-ի կազմում Ռազմական խորհրդի հայտնի ղեկավար-զինվորականները կարողացան իրենց տիրապետության ու վերահսկողության տակ գտնվող մամուլի ու քարոզության այլ միջոցներով հանրությանը հրամցնել «կայունություն՝ օրինական բռնության դիմաց» սկզբունքը: Եվ հաշվի առնելով հանգամանքը, որ ռազմական ինստիտուտի անձնակազմը՝ շարքային զինվորականից մինչև սպա ու հրամանատար, սերում էր համեմատաբար սոցիալական խոցելի խավերից, ապրում էին թերզարգացած շրջաններում, հեռու էին քաղաքային համակեցության նորմերից ու մշակույթից, չունեին կրթական բարձր ցենզ, կոռումպացված համակարգն էլ առևտրաարդյունաբերական բուրժուազիային հեռու պահեց Չինված ուժերի ինստիտուտից (մեծահարուստների ու սոցիալական տարբեր

³⁹ 7. ص، م بادئ ال قاذونالاد سد توري وال نظامال سد ياسد ية، كمال غالي، د.

⁴⁰

Սիրիա-Եգիպտոս միասնական համադաշնության՝ Արաբական միացյալ հանրապետության բաժանումից և արդյունքում 1961թ.-ին Սիրիայի ունիտար կարգավիճակի վերականգնումից հետո՝ 1963թ.-ին, իշխանությունը նվաճեց «Մարտի 8-ի հեղափոխությունն» իրականացրած արաբական «Բաաս» կուսակցությունը, որն, ավելի քան 50 տարի մնալով իշխանությունում, մշակեց ու ձևավորեց ՍԱՀ սահմանադրական կառուցվածքն ու հայեցակարգը: 1963թ.-ին ընդունված ժամանակավոր Սահմանադրությունը սահմանեց արտակարգ դրություն՝ «երկրում քաղաքական տևական կայունություն ապահովելու նպատակով»: Այն տևեց 48 տարի և պաշտոնապես վերացավ միայն «Արաբական գարնան» այլքի՝ սիրիական պոռթկման առաջին տարում՝ 2011թ.-ի ապրիլին: Հաֆեզ Ասադի «Բարենորոգչական շարժման» հաջողությունից հետո՝ 1971-1973 թթ.-ին, երկիրը դարձյալ կառավարվում էր ժամանակավոր Սահմանադրությամբ մինչև 1973թ.-ը, երբ Հաֆեզ Ասադն արդեն որպես հանրապետության նախագահ ձևավորեց հանձնաժողով «պետության համար մշտական Սահմանադրություն գրելու» նպատակով:

արտոնություններով օժտված խավերի զինապարտները՝ կաշառքով, հովանավորչությամբ, նեպոտիզմի բոլոր հնարավոր միջոցներով, խուսափում էին պարտադիր զինծառայությունից), ուստիև քաղաքացիական-բուրժուական կառավարման ավանդույթներն իրենց տեղը զիջեցին ռազմական հիերարխիկ ու բիրտ տրամադրություններին: Արդյունքում Սիրիան զրկվեց քաղաքացիական վերահսկողությամբ ժամանակակից պետականաշինության օրենսդրական ու ինստիտուցիոնալ հնարավորությունից՝ ՉՌԲ-ի ինստիտուտի համար ճանապարհի հարթելով դեպի երկրի ներքաղաքական գործընթացներին միջամտելու լավագույն հնարավորություն: Այդ հանգամանքն էլ պատճառ հանդիսացավ բանակի վարչարարական առաքելության մեծացման, քյուրդկրատիայի ուռճացման համար, հետևաբար կոռուպցիոն ռիսկերի անվերահսկելիության, մարտունակության անկման, կարողությունների և Սահմանադրությամբ իրեն վերապահված գլխավոր առաքելության՝ պետության սահմանների ու անվտանգության պահպանման ոչ լիարժեք օգտագործման, ռազմաքաղաքացիական հարաբերությունների ձևախեղման ու գեներալիտետի՝ քաղաքացիական ու տնտեսական իշխանության սերտացման համար⁴¹:

Ամենախնդրահարույցը Սահմանադրության 8-րդ հոդվածն էր, որը քաղաքական կյանքի ու գործընթացների մենաշնորհը վերապահում էր արաբական վերածննդի «Բասս» կուսակցությանը՝ որպես «պետության և ազգի առաջնորդող ուժի»⁴²: Քաղաքական այդ ուժն իր կազմակերպական կառուցվածքով, գաղափարախոսությամբ, բովանդակությամբ, նպատակներով, ներկուսակցական կարգապահական-օրենսդրական դրույթներով, կանոնադրությամբ, պատժի ինստիտուտով, հանրային ու պետական կյանքում մասշտաբային ներգրավվածությամբ (բացառությամբ՝ ազգային պետությունն ու սոցիալիզմ կառուցելու տեսլականից⁴³) ոչնչով չէր տարբերվում գաղափարական նախահորից՝ ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցությունից⁴⁴: Գործունեության մեթոդաբանությունը

⁴¹ Սիրիայում ժողովրդավարացման գործընթացի հիմնախնդիրների ու խոչընդոտների մասին ավելի մանրամասն, տե՛ս: «زيد اذقر ضوان , زياد قمر سوريا , 7/2/2001. المازق ا ل سيد يا سيد يوا شكلا يقال تعه ثرالاديم قراط ي ف يسوريا , زياد قمر ضوان , 7/2/2001.

⁴² Սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է, որ Հանրապետության նախագահի թեկնածու կարող է առաջադրել միայն «Բասս» կուսակցության Սիրիայի ղեկավարությունը՝ Աժ-ի միջոցով: Առաջադրվում է միայն մեկ թեկնածու՝ առանց մրցակցի: Հանրապետության նախագահի ընտրական ինստիտուտ՝ որպես իրավակառուցակարգերի ամբողջություն, գոյություն չունի: Նախագահի թեկնածությունը հաստատվում կամ մերժվում է հանրաքվեի միջոցով:

Չեկոյցում խոսվում է նաև փախստականների ու ներքին տեղահանված անձանց՝ իրենց նախկին բնակության վայրերը անվտանգ ու կամավոր տեղափոխվելու մասին: Այդ հարցի առնչությամբ առաջ են գալիս մի շարք բարդություններ: Նախ՝ Ադրբեջանը, փախստականների նկատմամբ վարելով հումանիզմից զուրկ քաղաքականություն, նպաստավոր պայմաններ է ստեղծել, որպեսզի նրանք հետագայում շահագրգռված լինեն մեկնելու Արցախ: Նրանց մեջ են մտնում նույնիսկ ՀՀ տարածքից Ադրբեջան գաղթածները: Այսօր արդեն պաշտոնական Բաքուն խոսում է ավելի քան մեկ միլիոնանոց փախստական համայնքի մասին¹⁵⁶: Սա, իհարկե, իրականության հետ որևէ աղերս չունի և հանդիսանում է հայկական կողմի վրա ճնշումներ գործադրելու ադրբեջանական քաղաքականության հերթական գործիքը: Եվ հետո՝ առանց ԼՂ կարգավիճակի մասին որոշման՝ փախստականների վերադարձը կնշանակի հակամարտության նոր փուլ, նոր պատերազմ: Ուստի կարծում ենք, որ փախստականների հարցը պետք է քննարկվի միայն հակամարտության հանգուցալուծումից և ԼՂ կարգավիճակի որոշումից ու իրացումից հետո:

Որպես Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման մեխանիզմ՝ Չեկոյցը դիտարկում է հանրաքվեի տարբերակը: Մեկնաբանվում է, որ հանրաքվեն պետք է անցկացվի Լեռնային Ղարաբաղում 1988թ.-ին եղած էթնիկ կազմի թվաքանակի ստատուս քվոյի վերականգնումից հետո: Մի կողմ դնելով սա իրականացնելու դեպքում

¹⁵³ TREATY ON CONVENTIONAL ARMED FORCES IN EUROPE

<https://www.osce.org/library/14087?download=true>.

¹⁵⁴ VIENNA DOCUMENT 1999 OF THE NEGOTIATIONS ON CONFIDENCE AND SECURITY BUILDING MEASURES, 16 NOVEMBER 1999, <https://www.osce.org/fsc/41276?download=true>.

¹⁵⁵ Армии Азербайджана и Армении: бюджет, численность, вооружения, https://www.bbc.com/russian/international/2016/04/160404_karabakh_armies.

¹⁵⁶ Эльмар Мамедьяров: Азербайджан является страной с наибольшим количеством вынужденных переселенцев и беженцев, <https://www.trend.az/azerbaijan/politics/3025323.html>.

ամաջ գալիք դժվարությունների հարցի քննարկումը՝ Նշենք, որ 1991թ.-ի դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի արդյունքները, որոնցով վերջինս ձեռք է բերել անկախություն, պաշտոնական Երևանի համար լիովին ընդունելի են, և Նոր հանրաքվեի անցկացումը կարող է հարցականի տակ դնել Նախորդի արդյունքների իրավաչափությունը: Ի վերջո, մի կողմ թողնելով այս կետի բովանդակային մասը, կարևոր ենք այն հանգամանքը, որ խումբը հակամարտության կարգավորման ճանապարհը տեսնում է այնտեղ ապրող բնակչության կամարտահայտության միջոցով:

Չեկույցում խոսվում է Նաև Եվրոպական Միության՝ հակամարտության կարգավորման ուղղությամբ հետագա անելիքների մասին: Կազմակերպությանն ամաջարկվում է ավելի ինտենսիվորեն ներգրավվել հակամարտության կարգավորման գործընթացում: Առաջարկվում է Նախ և ամաջ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի գրասենյակ բացել, ով ամենօրյա խոշորացույցի տակ կպահվի խնդիրը: Վերջինիս գլխավոր խնդիրը լինելու է հակամարտության կարգավորման ու հակամարտող կողմերի միջև վստահության միջոցառումների իրականացման շուրջ երկարաժամկետ պլանների մշակումը:

Անդրադառնալով հակամարտության կարգավորման սոցիալ-քաղաքական կողմին՝ զեկույցի հեղինակները նշում են, որ հայ-ադրբեջանական դիսկուրսի կայացման գլխավոր գրավականները կարող են դառնալ հայերի ու ադրբեջանցիների միջև շփումների ու վստահության մթնոլորտի վերականգնումը: Բնակչությանը խաղաղության պայմանագրի ստորագրմանն ու իրացմանը պատրաստելու համար անհրաժեշտ է մշակել հակամարտության վերաբերյալ Նոր հռետորաբանություն ու սիմվոլիկա: Չեկույցը կարևորում է հակամարտության կարգավորման վերաբերյալ ևս մեկ կարևոր վերջակետ. Լեռնային Ղարաբաղը պետք է Հայաստանի հետ կապված լինի Լաչինի ու Զեյրաջարի միջանցքներով: Փաստորեն, զեկույցը կարևորում է, որ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև կապն ապահովվի երկու միջանցքով՝ ելնելով անվտանգային նկատառումներից:

Պետք է շեշտել, որ զեկույցը բավականին ընդարձակ է և ընդգրկում է հարցերի շատ լայն շրջանակ, անդրադառնում է հակամարտության գրեթե բոլոր կողմերին: Չեկույցը պարունակում է մի շարք դրույթներ անվտանգության միջազգային միջոցառումների, միջազգային դոկտրինների վերաբերյալ և այլն: Անվտանգության միջոցառումները կամ ռեալ երաշխիքները, որոնք Լեռնային Ղարաբաղն ու հայությունը կունենան հակամարտության փուլային կամ փաթեթային լուծման դեպքերում, այստեղ տեսանելի չեն:

2007թ.-ին ՄՃԽ-ն հրապարակում է հակամարտության վերաբերյալ հերթական՝ «Լեռնային Ղարաբաղ. պատերազմի վտանգը» վերտառությամբ զեկույցը¹⁵⁷: Հակամարտության կարգավորման ուղղությամբ վերջին շրջանում բանակցային գործընթացում տեղ գտած իրադարձություններին հակիրճ անդրադառնալուց հետո զեկույցը հիմնականում կենտրոնանում է բանակցող կողմերի տնտեսական ու ռազմական քաղաքականությանը: Չեկույցում քննարկվում է երկու կողմերի ռազմական ներուժը, երկրների տնտեսությունների զարգացման տեմպերը: Նշվում է, որ երկու կողմերն էլ ինտենսիվորեն զինվում են, իսկ դրան օգնում է վերջին տարիներին գրանցված տնտեսական աճի արագ տեմպերը և բյուջետային հոսքերի ավելացումը: Ի վերջո, ասվում է, որ կողմերը ամրապնդում են իրենց դիրքերը, և ժամանակի ընթացքում նրանցից յուրաքանչյուրը բանակցային գործընթացում զիջումներ անելու հարցում կոշտացնում է իր դիրքորոշումը: Կողմերը Նաև ուժեղացնում են ռազմական հռետորաբանությունը, և երկու երկրներում էլ մեծանում է հակամարտության

¹⁵⁷ Nagorno-Karabakh: Risking War, Europe Report N 187, 14 November 2007, <https://d2071andvip0wj.cloudfront.net/187-nagorno-karabakh-risking-war.pdf>.

կարգավորման նկատմամբ ռադիկալ մոտեցում ունեցողների թվաքանակը՝ մեծացնելով պատերազմի վտանգը:

Այս գաղափարը ամրապնդվում է ՄՃԽ կողմից 2009թ.-ին հրապարակված հակիրճ զեկույցում, որն արվել է Մադրիդյան սկզբունքների հրապարակումից հետո: «Լեռնային Ղարաբաղ. մոտենալով հանգուցալուծմանը» վերնագիրը կրող զեկույցում¹⁵⁸ ասվում է, որ կողմերը, բանակցություններին մասնակցելով, մտադիր են միայն ամրապնդելու իրենց դիրքերը և մտածում են միայն պատերազմին ավելի լավ նախապատրաստվելու մասին: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ բանակցող կողմերի ղեկավարների՝ բանակցությունների սեղանի շուրջ և ներքաղաքական դիսկուրսում արված հայտարարությունները միմյանցից ամբողջությամբ տարբերվող բովանդակություն ունեն:

2016թ.-ի ապրիլին արցախա-ադրբեջանական շփման գծում ռազմական եսկալացիայից հետո խուճապ հրապարակեց Նոր հետազոտություն՝ «Լեռնային Ղարաբաղ. Նոր սկիզբ, թե՞ ավելի մեծ վտանգ» վերնագրով¹⁵⁹: Չեկույցում նշվում է, որ Ադրբեջանը կրում է եսկալացիայի սանձազերծման գլխավոր պատասխանատվությունը: Այնուհետև բերվում են այն հիմնական պատճառները, որոնք ստիպեցին Ադրբեջանին գնալու այդ քայլին: Որպես առաջնային պատճառ՝ նշվում է 1992-1994թթ.-ի դարաբաղյան պատերազմից հետո հաստատված ստատուս քվոյի փոփոխության ձգտումը: Սա մեծ կարևորություն ուներ ադրբեջանական կողմի համար առաջին հերթին թեկուզ փոքր, բայց մարտավարական առումով որոշակի տեղաշարժեր գրանցելու առումով, իսկ հետո՝ իր զինված ուժերում և հասարակության շրջանում առկա հոգեբանական որոշ խնդիրներ լուծելու նպատակով:

Հաջորդ պատճառը մատնանշվում է Ադրբեջանի՝ սեփական զինված ուժերի պոտենցիալի գնահատման համատեքստում: Ադրբեջանը կարիք ուներ տեսնելու, թե ինչ ռազմական պոտենցիալ ինքն ունի, և ինչպես է հակառակորդը պատրաստ դիմակայելու: Սա, բնականաբար, կարող է մեկնաբանվել որպես ավելի լայնամասշտաբ ռազմական գործողություններից առաջ արվող ստուգատես: Մյուս կողմից՝ ըստ զեկույցի՝ Ադրբեջանը ցանկանում էր փորձարկել վերջին տարիներին կատարված գնումները, ինչն անելու հնարավորություն չունեի կամ դրանք սահմանափակ էին գորավարժությունների ընթացքում:

Ռազմական եսկալացիայի՝ ադրբեջանական դրդապատճառների հետևում փորձագետները տեսնում են նաև երկրի ներքաղաքական ու տնտեսական զարգացումները: 2015թ.-ին ադրբեջանական ազգային արժույթը հսկայական ինֆլացիայի ենթարկվեց, ինչը շղթայական ռեակցիայով բերեց երկրում տնտեսական նախաճգնաժամային իրավիճակի¹⁶⁰: Հասարակությունն իր բողոքը սկսեց արտահայտել ցույցերի միջոցով, որոնք կարճ ժամանակահատվածում վերածվեցին ընդդիմադիրների կողմից կազմակերպվող հակաիշխանական ավելի լայն ակցիաների¹⁶¹: Իշխանությունները սկսեցին գործի դնել իրենց կողմից ավանդաբար օգտագործվող և ներքին լսարանի համար աշխատող քարոզչական գործիքը. «Ադրբեջանում աղքատության ու բոլոր դժբախտությունների համար մեղավոր են հայերը, քանի որ նրանք շարունակում են «օկուպացիայի» մեջ պահել երկրի տարածքի

¹⁵⁸ Nagorno-Karabakh: Getting to Breakthrough, Europe Briefing N 55, 7 October 2009, <https://d2071andvip0wj.cloudfront.net/b55-nagorno-karabakh-getting-to-a-breakthrough.pdf>.

¹⁵⁹ Nagorno-Karabakh: New Opening, or More Peril?, Europe Report N 239, 4 July 2016, <https://d2071andvip0wj.cloudfront.net/239-nagorno-karabakh-new-opening-or-more-peril.pdf>.

¹⁶⁰ The Jamestown; Protests in Azerbaijan: A Political and Economic Watershed, 01 February 2016; <https://jamestown.org/program/protests-in-azerbaijan-a-political-and-economic-watershed/>.

¹⁶¹ The Guardian; Azerbaijan forced to cut bread taxes after widespread protests, 15 January 2016; <https://www.theguardian.com/world/2016/jan/15/azerbaijan-forced-to-cut-bread-taxes-after-widespread-protests>.

20 տոկոսը»: Փաստորեն, ճգնաժամային խումբը եզրակացնում է, որ այս անգամ ևս ադրբեջանական կողմը ներքին լսարանին երկրում առկա խնդիրներից շեղելու նպատակով մեծացնում է լարվածությունը ադրբեջանա-արցախյան շփման գծում:

Չեկույցում շեշտադրվում է նաև հարևան պետությունների, մասնավորապես՝ Թուրքիայի և Իրանի աճող հետաքրքրությունը հակամարտության նկատմամբ: Վերջիններս, օգտվելով հակամարտությունում ռազմական սրացումներից, փորձում են օգտագործել հնարավորությունը մեծացնելու ներգրավվածությունը հակամարտության կարգավորման գործընթացում¹⁶²: Իսկ դրան կարող է նպաստել այն, որ միջևորդ կողմերն ու ԵԱԿԿ Մինսկի խումբն իրենց գործունեության ընթացքում չեն կարողացել իրական դրական արդյունք գրանցել, որի վերջնարդյունքն էլ հենց ռազմական եսկալացիան է: Չեկույցի հիմնական հարցադրումներից մեկն այն է, թե արդյո՞ք բանակցողները կօգտագործեն ստեղծված իրավիճակը՝ հակամարտության կարգավորման ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար: Տրվում են որոշակի գնահատականներ նաև առ այն, որ սա կարող է միջևորդների համար դառնալ սահմանային իրավիճակ՝ փորձելու փոխել բանակցությունների տրամաբանությունը:

Վերջին հարցադրման պատասխանն էլ ՄԾԽ-ն փորձում է տալ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ 2017թ.-ին հրապարակված այս պահին դեռևս վերջին համապարփակ՝ «Լեռնային Ղարաբաղը պատերազմի ամպեր է կուտակում» վերնագիրը կրող զեկույցում¹⁶³, որում ներկայացվում է վերջին մեկ տարվա ընթացքում բանակցային գործընթացում գրանցված արդյունքները և փաստվում, որ ոչ միայն դրանցում ոչ մի ռադիկալ փոփոխություն չի արվել, այլև կողմերն ավելի են ամրապնդել իրենց դիրքորոշումներն ու մեծացրել ռազմական հռետորաբանությունը: Ավելին, երկու երկրների բնակչությունն էլ սկսել է ավելի մեծ չափով սատարել Ղարաբաղյան հիմնախնդրում իրենց իշխանությունների կողմից վարվող քաղաքականությանը:

Ուսումնասիրության ամփոփում-եզրակացությունները: Եթե ամփոփենք Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Միջազգային ճգնաժամային խմբի փորձագիտական գործունեության արդյունքները, ապա կարող ենք առանձնացնել դրանց վերաբերյալ հետևյալ գնահատականները. 2000-ականների սկզբներին փորձագետները տեսնում էին բավականին մեծ ներուժ հակամարտությունը խաղաղ ու փոխզիջումային տարբերակով կարգավորելու համար, իսկ վերջին տարիներին նրանք ընդամենը ֆիքսում են, որ կողմերը ավելի ու ավելի են ուժեղացնում մաքսիմալիստական պահանջատիրությունը և ավելացնում պատերազմը վերսկսելու պատրաստականության մասին հայտարարությունները: Սրա հետևում, իհարկե, նաև այն փաստն է, որ վերջին տասնամյակում բանակցող կողմերը, առավելապես Ադրբեջանն ինտենսիվորեն զինվում են: Վերջինիս ռազմական գնումները ամենախոշորներից են աշխարհում երկրի բյուջեի հետ տոկոսային հարաբերակցությամբ¹⁶⁴:

Փորձագիտական խմբի անդամները նաև կարծում են, որ նոր իրողությունների պայմաններում հակամարտության կարգավորում փոխզիջումային տարբերակով հնարավոր չէ, ուստի միջևորդներին մնում է միայն մեծացնել ճնշումը կողմերի վրա՝ խնդրի քաղաքական ու դիվանագիտական լուծմանը հասնելու նպատակով: Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ ՄԾԽ-ն հակամարտության միայն

¹⁶² BBC РУССКАЯ СЛУЖБА, Эскалация в Нагорном Карабахе: стороны винят друг друга, 05 апреля 2016, https://www.bbc.com/russian/international/2016/04/160405_karabakh_escalation_wrap.

¹⁶³ Nagorno-Karabakh's Gathering War Clouds, Europe Report N 244, 1 June 2017, <https://d2071andvip0wj.cloudfront.net/244-nagorno-karabakhs-gathering-war-clouds.pdf>.

¹⁶⁴ Լշված հղումներով կարող եք գտնել տեղեկատվություն Ադրբեջանի վերջին տարիների ռազմական ծախսերի վերաբերյալ,- <https://tradingeconomics.com/azerbaijan/military-expenditure>; <https://razm.info/94115>; <https://razm.info/130524>:

քաղաքական լուծման տարբերակ է տեսնում՝ առայժմ բացառելով կողմերի դիրքորոշումների մեղմացումը: Կարծում ենք, որ բանակցող կողմերի, առավելապես ադրբեջանական կողմի անզիջում դիրքորոշման հետևում կանգնած է նաև ներքին քարոզչության հետևանքների գործոնը: Պաշտոնական Բաքուն երկար տարիներ է, ինչ իր քաղաքացիներին հրամցնում է կեղծ թեզեր հայերի՝ եկվոր լինելու և ադրբեջանական տարածքները «օկուպացնելու» մասին: Սա բերել է մի իրավիճակի, երբ ադրբեջանական հասարակության ստվար մասը չի կարող ընկալել իր ղեկավարության՝ ղարաբաղյան հարցում զիջումների գնալու քայլերը: Իսկ հայ հասարակության ներսում ժամանակի ընթացքում ավելի է ամրապնդվում ու հիմնավորվում այն թեզը, որ Արցախի Յանտարապետության անվտանգության գործուն մակարդակը պահելու ու զարգացնելու համար ներկայիս տարածքային ամբողջականության պահպանումն ուղղակի անհրաժեշտություն է: Այս թեզը ևս մեկ անգամ հիմնավորվեց ապրիլյան ռազմական էսկալացիայից և պաշտոնական Բաքվի՝ Յայաստանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունենալու վերաբերյալ բազմաթիվ հայտարարություններից հետո¹⁶⁵:

Մեր հետազոտության արդյունքում կարող ենք առանձնացնել հետևյալ գործոնները, որոնք, ըստ ՄՃԽ փորձագետների, հակամարտության կարգավորման հիմնական խոչընդոտներն են.

- բանակցող կողմերի կառավարման համակարգերը¹⁶⁶,
- քարոզչությունն ու ռազմական հռետորաբանության ակտիվ կիրառումը,
- զիջումներ անելու հարցում քաղաքական կամքի բացակայությունը,
- հասարակական կարծիքը և հակամարտության վերաբերյալ խիստ տարբերվող ընկալումները երկրներում,
- տարածաշրջանային ու միջազգային աշխարհաքաղաքական գործոնները:

Կատարած ուսումնասիրությունների, համեմատական վերլուծությունների արդյունքում կարող ենք նաև եզրակացնել, որ Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցներում առաջ քաշված դրույթները, հակամարտության կարգավորման հեռանկարների ու տարբերակների վերաբերյալ ունեցած տեսլականները հիմնականում համահունչ են և համընկնում են Եվրոպական Միության դիրքորոշման հետ: Թեպետ ՄՃԽ-ն անկախ հետազոտական կառույց է, չենք խուսափի նշել, որ այս հետազոտական կենտրոնի կողմից կատարվող շեշտադրումները մեծ մասամբ արտահայտում են նաև ԵՄ երկրների դիրքորոշումները: Կառույցի փորձագետները մեծապես կարևորում են Եվրոպական փորձի կիրառման անհրաժեշտությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում՝ միևնույն ժամանակ գնահատելով, որ այդ փորձի կիրառման արդյունավետությունը ժամանակի ընթացքում ավելի մեծ հարցականի տակ կարող է դրվել:

¹⁶⁵ Ильхам Алиев заговорил о передаче Зангезура Армении,- <https://haqqin.az/news/160538>; Заявление Алиева по Зангезуру – агрессия по отношению к территории Армении – политолог,- <https://newsarmenia.am/news/politics/zayavlenie-alieva-po-zangezuru-agressiya-po-otnosheniyu-k-territorii-armenii-politolog/>.

¹⁶⁶ ՄՃԽ զեկույցներում կարմիր թելի նման ընդգծվում է այն միտքը, որ հակամարտող երկրների իշխանությունները հիմնախնդիրն օգտագործում են քաղաքական նպատակներով: Առավելապես ընդգծվում է ադրբեջանական քաղաքականությունն այս հարցում: Ըստ փորձագետների՝ հիմնախնդիրը Ադրբեջանի ղեկավարների ձեռքին մշտական լծակ է իշխանությունը պահպանելու համար:

PROSPECTS FOR THE SETTLEMENT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT: REVIEW OF THE REPORTS OF THE INTERNATIONAL CRISIS GROUP

ROMAN KARAPETYAN

*Yerevan State University, Associate Professor
at the Chair of International Relations and Diplomacy, Member of UYSSA,
Ph.D in History, Associate Professor in Political Sciences
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present and analyze studies on the Nagorno-Karabakh conflict in the main think tanks of Europe. The main indicator of the relevance of the topic is the analysis of European views on the Nagorno-Karabakh conflict. Taking into account the fact that the conflict has been in the field of active researches of the International Crisis Group for rather a long period, we have researched the expert works of this group. To achieve this goal, we set the following main objectives:

- ✓ to study, analyze and evaluate the International Crisis Group research reports on the Nagorno-Karabakh conflict,
- ✓ to present the main accents in the reports and make a comparative analysis, try to see the dynamics of views on the settlement of the conflict,
- ✓ to present the International Crisis Group main proposals for resolving the conflict, including from the point of view of Western states.

During our studies according to this article general scientific research methods - argumentation, historical and comparative analysis - as well as the methods of content analysis and event analysis were used.

The study concluded that the Western expert community (in this case, the International Crisis Group) does not have high hopes for a peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict, although they consider the negotiation process as the main mechanism for resolving the conflict. Over the past years, on the one hand, the willingness of the parties to make concessions has decreased, and on the other, the danger of war has increased. It can also be concluded, that the views of this group are largely consistent with the position of the European Union.

Key words: *Nagorno-Karabakh conflict, Republic of Armenia, Republic of Azerbaijan, European Union, think tanks, security, Southern Caucasus, regional policy.*

ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА: ОБЗОР ДОКЛАДОВ МЕЖДУНАРОДНОЙ КРИЗИСНОЙ ГРУППЫ

РОМАН КАРАПЕТЯН

*Ереванский государственный университет, доцент кафедры
международных отношений и дипломатии, член ОМУСА,
кандидат исторических наук, доцент политологии,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является представление и анализ исследований по нагорно-карабахскому конфликту в основных аналитических центрах в Европе. Основным показателем актуальности рассматриваемой темы является анализ европейских взглядов

на нагорно-карабахский конфликт. Принимая во внимание тот факт, что конфликт находится в сфере активных исследований Международной кризисной группы в течение достаточно долгого периода, мы выделили экспертные работы данной группы. Для достижения этой цели мы поставили следующие основные задачи:

- ✓ изучать, анализировать и оценивать исследовательские отчеты Международной кризисной группы по карабахскому конфликту;
- ✓ представить основные акценты в докладах и сделать сравнительный анализ, попытаться увидеть динамику взглядов на урегулирование конфликта;
- ✓ представить предложения Кризисной группы по урегулированию конфликта, в том числе с точки зрения западных стран.

В ходе исследования использовались как общенаучные методы исследования - аргументация, историко-сравнительный анализ, так и методы контент-анализа и ивент-анализа.

В исследовании сделан вывод о том, что западное экспертное сообщество (в данном случае - Международная кризисная группа) не возлагает больших надежд на мирное урегулирование нагорно-карабахского конфликта, хотя оно рассматривает переговорный процесс как основной механизм разрешения конфликта. За прошедшие годы, с одной стороны, готовность сторон пойти на уступки уменьшилась, а с другой, возрастает опасность войны. Можно также сделать вывод, что взгляды этой группы в значительной степени соответствуют позиции Европейского союза.

Ключевые слова: *нагорно-карабахский конфликт, Республика Армения, Республика Азербайджан, Европейский союз, аналитические центры, безопасность, Южный Кавказ, региональная политика.*

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

ԱԼԵՆ ԴԵՎՈՆԴՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու
Ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
al.ghevondyan@gmail.com*

Հոդվածի նպատակն է առաջ քաշել ու հիմնավորել այն մոտեցումը, որ ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգում առաջնահերթ նշանակություն ունի ռիսկերի չափման ու կանխարգելման հիմնահարցը:

Հոդվածի խնդիրն է նախ ներկայացնել «անվտանգային ռիսկ» հասկացության մեկնաբանման տեսական մոտեցումները, ապա չափել ՀՀ ազգային անվտանգության ռազմական, տնտեսական ու ժողովրդագրական ոլորտներում առկա ռիսկերի ներկա վիճակը:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, կառուցվածքային-ֆունկցիոնալ անալիզ), այնպես էլ համեմատական գիտական մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ այսօր ՀՀ ազգային անվտանգության ռազմական չափման պարագայում Ադրբեյջանի հետ առկա է կառավարելի կայունություն: Նույն վիճակը չէ ՀՀ ազգային անվտանգության տնտեսական ու ժողովրդագրական չափումներում, որտեղ ՀՀ-ն մրցունակ վիճակում չէ: Հակառակ է՝ այդ ոլորտների կայունության ու պարզացման համար առկա են տեսանելի սպառնալիքներ:

Հիմնաբառեր՝ ռիսկ, անվտանգային ռիսկ, ՀՀ ազգային անվտանգություն, սպառնալիք, ռազմական, տնտեսական, ժողովրդագրական չափում, պինված ուժեր, Ադրբեյջան, Արցախ:

Ժամանակակից ցանցային ու ոչ գծային աշխարհում միջազգային իրավունքի ու հումանիտական նորմերի փոփոխական կարևորության պայմաններում ազգային անվտանգության ավանդական սպառնալիքների նշանակությունը ամենևին չի նվազել: Այսօր ընդհամենը որոշակիորեն փոխվել է այդ սպառնալիքների բնույթը, գործընթացային վարքը, խոցման ձևը և ազդեցության ծավալը: Հենց այդ առումով ժամանակակից աշխարհում առաջնահերթ նշանակություն է ստացել սպառնալիքների ու անվտանգային ռիսկերի որոշակիացումը, հաշվառումը, դրանց կառավարումն ու չեզոքացումը: Նշյալը առանձնակի կարևորություն ունի ՀՀ-ի ազգային անվտանգության առումով, որն այսօր հայեցակարգային փոփոխությունների, ազգային շահերի նորովի ուրվագծման, դրանց սպառնացող ռիսկերի ու վտանգների հստակեցման փուլում է: Նշենք սակայն, որ չնայած արևմտյան մի շարք մտածողներ (Յ.Հայմեն, Կ.Յանգ, Զ.Գիերշի, Զ.Է.Ալթաուս) փորձել են «ռիսկ» ու «անվտանգային ռիսկ» հասկացություններին փոխընդունելի մեկնաբանություն տալ, սակայն մինչ օրս հայեցակարգային առումով «ռիսկ» հասկացության, դրա դրսևորման ձևերի ու չափման մեթոդաբանության միացյալ մոտեցում առկա չէ: Հենց այս առումով սույն

* Հոդվածը ներկայացվել է 12.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

հողվածում մենք նախ՝ անդրադարձ կկատարենք ռիսկերի որոշակիացման ու նրանց սահմանման գործընթացին, ապա կփորձենք ՀՀ-ի մատով անվտանգային չափումներ իրականացնել:

Սոցիալ-բաղաբալական ու միջազգային համակարգերում ցանկացած ռիսկ կապված է համակարգի, պետության անվտանգության ու զարգացման հետ և ենթադրում է որոշակի գործոնների հնարավոր ազդեցության կամ դրա բացակայության վիճակ համակարգի անվտանգության բնականոն ապահովման ու կանախատեսելի զարգացման վրա: Այդ առումով ռիսկերի հետազոտությունը ոչ միայն սոցիալական գիտության տիրույթի հիմնախնդիր է, այլև տնտեսության, ժողովրդագրության, տեղեկատվական տեխնոլոգիաների, արտակարգ իրավիճակների, բնապահպանության. ուստի բարդ է ոչ միայն սահմանել ռիսկերը, այլև տարբերակել նրա անվտանգային տարատեսակները, քանզի դրանք, ունենալով վերնաշենքային բնույթ, ամփոփում են ոչ միայն բուն անվտանգության ոլորտի վիճակը, այլև կրում հարակից ոլորտների ազդեցությունները:

Անդրադառնալով «ռիսկ» հասկացության հայեցակարգային բնորոշմանը՝ նշենք, որ այն ուղղակիորեն կապված է սպառնալիք/վտանգ հասկացությունների հետ: «Սպառնալիք» եզրը նեղ առումով «վնասող գործողություն» է, լայն իմաստով՝ հանգամանք, որը կարող է «վնասել, կորուստներ պատճառել կամ նեգատիվ իրավիճակ ստեղծել»¹⁶⁷: Ըստ տեսաբան Զ.Դասսի՝ սպառնալիքները գոյություն ունեն այն դեպքում, երբ պետությունը ֆիքսում-ընկալում է հակադիր շահերի կրող մեկ այլ պետություն (նրանց խումբ), որն ունի հավակնոտ ծրագրած, հանպատրաստի ձգտումներ, ինչպես նաև անհրաժեշտ հզորություններ այդ հավակնությունները իրացնելու համար¹⁶⁸: Այսինքն՝ ռիսկը սպառնալիքի հնարավոր առկայությունն է նրա գործընթացային դինամիկայի մեջ, որը կարող է վնասել/չվնասել պետությանը: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ ռիսկը «անցանկալի արդյունքների հավանականության և ազդեցության չափում»¹⁶⁹ է, որի գլխավոր բաղադրիչը «անորոշություն» եզրույթն է, քանզի եթե գործողության հետևանքները կախված են որոշակի հնարավոր իրադարձություններից, ապա նման գործողությունները բնորոշվում են որպես ռիսկային, որովհետև բարդ է կանխորոշել՝ կոնկրետ իրադարձությունը տեղի կունենա՞, թե՞ ոչ¹⁷⁰: Այս համատեքստում կարող ենք արձանագրել, որ պետության համար ռիսկը անորոշության բաղադրիչ ենթադրող, կողմերի խոցելիության հանգամանքով պայմանավորված իրավիճակային այնպիսի զարգացում կամ զարգացման հնարավորություն է, որի դեպքում կարող է վտանգվել պետության անվտանգությունը, զարգացման հնարավորությունը: Ռիսկերի որոշակիացումը և հատկապես դրանց արձագանքումը կարևոր է իրագործել պետության անվտանգային քաղաքականության մեջ, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել պետության պաշտպանականության մակարդակի թուլացմանը: Այս է պատճառը, որ այսօր անվտանգային քաղաքականությունը վերածվել է ոչ թե վտանգների արձագանքման, այլ ռիսկերի կառավարման քաղաքականության:

Եթե անվտանգային ռիսկերի ու սպառնալիքների դիրքերից փորձենք վերլուծել ՀՀ Ազգային անվտանգության ապահովման ու պետականության պահպանման ներկա

¹⁶⁷ Carl Young. Metrics and methods for security risk management. Elsevier inc 2010., էջ 20:

¹⁶⁸ Christopher Daase. International risks and the perils of proactive security policy. (Paper prepared for the six pan-european International Relation Conference) Turin, 12-15 September, 2007, էջ 10:

¹⁶⁹ Lowrance WW. Of acceptable Risk. Los Altos, CA: William Kaufman, 1976// Yacow Haimes, On the complex definition of risk: A systems-based approach. Risk analysis, Vol 29, No 12, 2009. էջ 1647:

¹⁷⁰ John Copas. "Statistical modeling for risk assessment". Risk management. Vol. 1, No 1, 1999, էջ 35:

վիճակը, պետք է առանձնացնենք հստակ ոլորտային ցուցիչներ, որոնց դիտարկում-վերլուծությունը հնարավորություն կտան պատկերացում կազմելու ռիսկերի ու սպառնալիքների հետ կապված ՀՀ-ում առկա վիճակի, դրա կառավարման ուղիների և, ամենակարևորը, պետության որդեգրած ռազմավարության արդարացվածության վերաբերյալ: Պարզ է, որ նման քանակի ցուցանիշների միաժամանակյա վերլուծությունը և սցենարների կազմումը, հաշվի առնելով նրանց զարգացման դինամիկ հեռանկարը, բարդ գործընթաց է և մեծածավալ հետազոտության նյութ է, սակայն հիմք ընդունելով նշյալ գիտական ուսումնասիրության ծավալային սահմանափակումները՝ մենք կանդորդառանաք միայն մի խումբ ցուցիչների դիտարկմանը: Այս համատեքստում մեր կողմից որպես ՀՀ անվտանգային ռիսկերի հետազոտման բաղադրիչներ կառանձնացվեն ռազմական, տնտեսական, ժողովրդագրական ցուցիչները, որոնք կդիտարկվեն ՀՀ ազգային անվտանգության առաջնահերթ սպառնալիք հանդիսացող Ադրբեջանի համանման ցուցիչների հետ հարաբերակցության համատեքստում:

ՀՀ անվտանգային ռիսկերի դիտարկման ու գնահատման առումով առաջնային ցուցանիշ է համարվում **ռազմականը**, որն ինքը բաղկացած է բազմամակարդակ ու բազմատարր գործոններից: Ռազմական ոլորտում ուժերի հարաբերակցության և դրա դինամիկայի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել մի շարք կառուցվածքային չափումներ, որոնք են՝ զինված ուժերի քանակը, սպառազինությունների քանակական ու որակական ցուցիչները, ռազմական ոլորտի ծախսերը, մարտունակության աստիճանը և այլն: Ռազմական կարողության գնահատման ամենից ընդհանուր չափումը պետության զինված ուժերի (ՀՈՒ) քանակն է: Ըստ հրապարակված տվյալների՝ ՀՀ զինված ուժերի կազմում ընդգրկված է 49(46) հազ., Արցախի հանրապետությանը՝ 18-20 հազ. զինվոր, Ադրբեջանի՝ 81 հազ.¹⁷¹:

Ռազմական հարաբերակցության գնահատման հաջորդ կարևոր չափումը կողմերի ՀՈՒ-ում սպառազինությունների վիճակը և հարաբերակցությունն է հնարավոր հակառակորդի սպառազինությունների հետ: Չինված ուժերում կողմերի սպառազինության տեսակներն ու չափը որոշելը բարդ է, եթե չասենք անհնար: Որպես կանոն՝ այս պարագայում անհրաժեշտ տեղեկատվության հիմնական աղբյուր են միջազգային թեմատիկ զեկույցները¹⁷², մամուլը, ՄԱԿ սպառազինությունների շրջանառությունը կանոնակարգող փաստաթղթերը¹⁷³, պաշտոնական հայտարարությունները, երբեմն էլ՝ «մասնավոր» բնույթի տեղեկատվությունը: Վերոնշյալի հիմքով վերլուծություն անելով՝ պարզ է դառնում¹⁷⁴, որ անվտանգային ռիսկերի տեսակյունից ունենք հետևյալ իրավիճակը.

- Կողմերի գիտեխնիկայի զգալի մասը ռուսական է, որը փաստում է՝ կողմերի սպառազինությունների հարաբերակցությունը կառավարելի է տարածաշրջանային տերության կողմից, այսինքն՝ արցախյան հակամարտությունում ռազմական ճանապարհով և կողմերի ընդհանուր մրցակցության վրա երրորդ՝ կողմերի ազդեցությունը շոշափելի է:

- Երկու կողմերն էլ ունեն ինչպես պաշտպանողական (.....), այնպես էլ հարձակողական զինանոց (....), որի միջոցով կարող են խոցել հակառակորդի՝ շփման

¹⁷¹ Կողմերի զինված ուժերի քանակի վերաբերյալ կան տարբեր տվյալներ. Ադրբեջան 70-90 հազար, ՀՀ՝ 46-48 հազար, Արցախի Հանրապետություն՝ մինչև 20 հազար: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **С. Минсян**, Сдерживание в карабахском конфликте, Ереван, Институт Кавказа, 2016г., с. 266:

¹⁷² Military Balance report, SIPRI Arms Transfers Database, Janes world armies և այլն:

¹⁷³ «The Global Reported Arms Trade», The UN Register of Conventional Arms.

¹⁷⁴ **Ղևոնդյան Ա.**, Հայ-ադրբեջանական ուժային հարաբերակցության հիմնահարցը տարածաշրջանային կայունության ապահովման համատեքստում, <http://ysu.am/science/hy/1564132129>, ԵՊՀ, էջ 19:

գծին մերձակա, ինչպես նաև խորը թիկունքում (ներառյալ ռազմավարական նշանակության օբյեկտներ) տեղակայված օբյեկտներ ու կենդանի ուժ:

- Կողմերի մոտ ռուսական սպառազինության գերակայությունը ենթադրում է, որ դրանց տեխնիկական սպասարկումը, մատակարարումները կառավարելի են ՌԴ-ի կողմից:

Ռազմական ցուցիչում կարևոր չափում է ռազմական հատկացումների չափը: Ներկայում ԶՅ-ն ռազմական կարիքների համար ծախսում է մոտ 437 մլն \$, Ադրբեջանը՝ 1,479 մլրդ¹⁷⁵: Անկախությունից ի վեր ռազմական ոլորտում ԶՅ-ի և Ադրբեջանի ընդհանուր ծախսերը կազմում են համապատասխանաբար՝ 4.042 և 19.6 մլրդ \$¹⁷⁶: Այսինքն՝ Բաթուն մոտ 4,85 անգամ ավել միջոցներ է հատկացրել ռազմական ոլորտին, քան Երևանը: Չնայած փորձագիտական շրջանակներում կարծիք կա, թե Ադրբեջանում կոռուպցիայի հետևանքով ռազմական ոլորտի հատկացումներն օգտագործվում են ցածր արդյունավետությամբ, սակայն անգամ այս պարագայում ակնհայտ է, որ նման դինամիկայի դեպքում քանակական առավելությունն ինչ-որ մի կետից հետո որակականի փոխվելու մեծ ռիսկ է պարունակում: Հարկ է նշել, որ անվտանգային նման ռիսկի կառավարումը ԶՅ-ն փորձում է իրականացնել միջպետական համաձայնագրերով ստացվող զինատեսակներով՝ որպես ՀԱՊԿ անդամ երկիր օգտվելով ՌԴ-ից կողմից տրամադրած վարկային միջոցներով ներքին գներով սպառազինություններ ձեռք բերելու ֆինանսական արտոնություններից:

Անվտանգային ռիսկերի վրա ուղղակի ու անմիջական ազդեցություն ունի պետության **տնտեսական ներուժը**: ԶՅ-ն, ի համեմատություն Ադրբեջանի, ունի շոշափելի սուղ տնտեսական հզորություններ, որոնք անդրադառնում են նրա անվտանգային կարողությունների ողջ սպեկտրի սպասարկման ու կառավարման վրա: Առավել լավ պատկերացնելու համար երկրների տնտեսական հզորությունների հարաբերակցման բնույթը, փորձենք մի քանի ցուցանիշներով դիտարկել այն (տես Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ԶՅ և Ադրբեջանի տնտեսական հիմնական ցուցանիշները¹⁷⁷:

Տարեթիվ	ՀԱՅԱՍՏԱՆ				ԱՂՐԲԵՋԱՆ			
	ՀՆԱ, մլրդ, \$	Փոփոխություն %	ՀՆԱ 1շնչի հաշվով, \$	Փոփոխություն %	ՀՆԱ, մլրդ, \$	Փոփոխություն, %	ՀՆԱ 1շնչի հաշվով, \$	Փոփոխություն, %
2018	12,41	7,58	4 149	7,57	45,42	10,09	4 569	8,78
2017	11,54	9,40	3 857	9,38	41,26	9,06	4 200	7,76
2016	10,55	-0,07	3 526	-0,08	37,83	-25,60	3 898	-26,46
2015	10,55	-9,10	3 529	-9,26	50,84	-32,42	5 300	-33,24
2014	11,61	4,40	3 889	4,21	75,24	1,46	7 939	0,17

Աղյուսակ 2-ից երևում է, որ ԶՅ-ի և Ադրբեջանի ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ ոչ հօգուտ ԶՅ-ի, 2018-ին կազմել է 6.4 անգամ, 2017-ին՝ 4.8, 2016-ին՝ 3.6, 2015-ին՝ 3.5, 2014-ին՝ 3.6: Սա, իհարկե, շոշափելի հարված է տարածաշրջանում մեր մրցակցային դիրքերին:

¹⁷⁵ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտի բազայից, <http://www.sipri.org/databases>.

¹⁷⁶ **Ղևոնդյան Ա.**, նշվ.աշխ., էջ 23:

¹⁷⁷ **Мировой Атлас Данных**, <https://knoema.ru>.

Հետազոտելով Ադրբեջանի՝ առնվազն վերջին մեկ ու կես տասնամյակի արտաքին առևտրային հաշվեկշիռը՝ պարզ է դառնում, որ նրա տնտեսական հաջողությունները պայմանավորված են Էներգետիկ ռեսուրսների արդյունահանմամբ ու արտահանմամբ: Դա առնվազն վերջին 10 տարիներին ուղղակիորեն անդրադարձել է Ադրբեջանի ռազմական ծախսերի ավելացման վրա, որոնք, շնորհիվ վառելիքաէներգետիկ ռեսուրսների, ավելացել են գրեթե տասնապատիկ: Պարզ է, որ Ադրբեջանի նավթին հայկական կողմը հակադրելու անհրաժեշտ տնտեսական միջոցներ չունի մասնավոր վերջին տարիներին երկրում տնտեսական աճի տեմպերի նվազման պարագայում: Մյուս կողմից՝ գերաշուկաբեր լինելուց զատ այդ գործոնը Ադրբեջանին դարձնում է խոցելի և միջազգային վառելիքաէներգետիկ շուկաներից կախված: Այդուհանդերձ պարզ երևում է, որ նավթի գնանկումը միջազգային շուկաներում 2014-16թթ.-ին խիստ բացասական ազդեցություն ունեցավ Ադրբեջանի ՀՆԱ-ի վրա, որը կրճատվեց համապատասխանաբար 32 և 25 %-ով: Դա բացի տնտեսական ազդեցությունից ունեցավ որոշակի ներադրություն լատենտ սոցիալական դժգոհության: Չնայած վերոնշյալին՝ ակնհայտ է, որ Ադրբեջանի տնտեսական ցուցանիշներն ակնհայտ մրցունակ են, և ՀՀ-ի ու Արցախի իշխանություններն առավել մեծ ջանք պետք է գործադրեն տնտեսական բարեփոխումների և առկա դժվարին պայմաններում ազգային եկամուտը շեշտակիորեն ավելացնելու ուղղությամբ:

ՀՀ-ի անվտանգային ռիսկերի հստակեցման կարևոր հաջորդ ցուցիչը ժողովրդագրականն է: Մարդկային կապիտալի ու ժողովրդագրության ոլորտում Հայաստանն ու Արցախը վերջին 20 տարիների ընթացքում լուրջ հետընթաց են արձանագրել: Ըստ ոլորտի մասնագետների հաշվարկների՝ ՀՀ-ի բնակչությունն անցած երկու տասնամյակների ընթացքում մոտ 1/3-ով կրճատվել է, ինչը լուրջ մարտահրավեր է պետության համար: Ի տարբերություն ՀՀ-ի՝ Ադրբեջանում գրանցվում է բնակչության ենթադրելի աճ: Թեև միջազգային փորձագետները վստահեցնում են, որ Ադրբեջանի բնակչության 25-30 տոկոսը աշխատանքային միգրացիայի հետևանքով տեղափոխվել է արտերկիր, սակայն երկրի պաշտոնական վիճակագրությունն այդ մասին լռում է: ՄԱԿ-ի կանխատեսումներով՝ առաջիկայում Ադրբեջանում բնական աճի տեմպերը թեև կնվազեն, սակայն կունենան դրական միտում: Մինչդեռ ՀՀ-ում միջնաժամկետ կտրվածքով սպասվում է բնական աճի բացասական հաշվեկշիռ՝ պայմանավորված առաջին հերթին արտագաղթով (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՀՀ և Ադրբեջանի ընդհանուր և աշխատունակ տարիքի ազգաբնակչության տվյալներ¹⁷⁸:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ				
Տարեթիվ	Հայաստան		Ադրբեջան	
	Բնակչություն մլն	15-64 տարեկան անձինք	Բնակչություն մլն	15-64 տարեկան անձինք
2010	2,963000	2043000	9095000	6492000
2015	2,989000	2073000	9613000	6939000
2020	2,991000	2048000	10030000	7109000
2025	2,989000	2023000	10309000	7193000
2030	2,970000	1978000	10474000	7261000

¹⁷⁸ Տվյալները վերցված են ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի ղեկավարամենտի բազայից, <http://esa.un.org/wpp/Excel-Data/population.htm>:

Ըստ ներկայացվող աղյուսակ 2-ի՝ եթե Հայաստանի և Ադրբեջանի բնակչության՝ 19-64 տարեկան (աշխատունակ տարիքի) սեզմենտի հարաբերակցությունը 2010-ին 3.17 էր, ապա ըստ կանխատեսումների՝ 2030-ին կկազմի 3.67: Սա Հայաստանում ինչպես ծնելիության տեմպերի նվազման, այնպես էլ արտագաղթի ու բնակչության ծերացման հետևանք է: Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները վկայում են, որ ՀՀ-ն արդեն կանգնած է կարծաժամկետ ու միջնաժամկետ հատվածում ժողովրդագրական ռիսկային իրողությունների առաջ: Ժողովրդագրական խնդրի լուծումը, անշուշտ, ուղղակիորեն կապված է նաև Արցախյան հակամարտության հետ, քանզի ցուցանիշների անկումը դժվարություններ է ստեղծում ինչպես տնտեսության, զինված ուժերի համալրման, այնպես էլ Արցախի՝ ազատագրված տարածքների բնակեցման համար: Շարունակակալան արտագաղթը ոչ միայն խոչընդոտում է երկրի անվտանգությանը և կայուն զարգացմանը, այլև ամենատարբեր ոլորտներում առաջատար մասնագետների արտահոսքի հետևանքով խնդիրներ է ստեղծում մարդկային կապիտալի մեջ ներդրումներ կատարելու գործընթացում: Մինչդեռ այդ ոլորտը 21-րդ դարում պետությունների միջև ռազմավարական առավելություն ստանալու երաշխիքներից մեկն է:

Ամփոփելով անվտանգային ռիսկերի հիմքով ՀՀ ազգային անվտանգության ցուցիչների վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել.

- ՀՀ ազգային անվտանգության համակարգը պետք է գործի ոչ այնքան վտանգներին արձագանքելու, որքան դրանք կանխորոշելու, սպառնալիքների համար նպաստավոր պայմանների վերացման, առկա ռիսկերի հստակեցման ու կառավարման տրամաբանությամբ. սա շոշափելիորեն կնվազեցնի պետության համար հնարավոր ոչ կառուցողական գործընթացների անդրադարձը և պայմաններ կստեղծի ռազմական հավասարակշռության պահպանման համար:

- ՀՀ ազգային անվտանգության համակարգում անվտանգային ռիսկերի չափման համատեքստում ռազմական բաղադրիչի մասով մենք ունենք հնարավոր հակառակորդին երբեմն քանակապես ու որակապես գիջող, բայց իրականում դեռևս կառավարելի հավասարակշռություն ապահովող միջոցներ: Սա նշանակում է, որ ուժային հարաբերակցության հնարավոր խախտման ռիսկի նվազեցման ուղղությամբ պետությունը պետք է գործունե քայլեր ձեռնարկի՝ հիմք ընդունելով պետության անվտանգության ապահովման հեռահար կարիքներից բխող սցենարները:

- ՀՀ ազգային անվտանգության ապահովման օրակարգում տնտեսական հզորությունների ճգնաժամային ու ժողովրդագրական ռիսկերի բացասական դինամիկայի վտանգավոր ազդեցությունը կայուն մեծ է: Սա կարող է շեմային ինչ-որ սահմանից հետո վերածվել պետականությանը սպառնացող իրական վտանգի, որը անհարժեշտ ու օպերատիվ լուծում չտալու պարագայում միգրացե կառավարելի չլինի:

THE ISSUE OF SECURITY RISK MANAGEMENT IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

ALEN GHEVONDYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Political Institutions and Processes, PHD in Political Science,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to put forward and reveal that risk management and risk prevention are of primary importance in the context of National Security of the Republic of Armenia.

The aim of the article is first of all to present different interpretations of the notion “security risk” and then assess the risk management process in the military, economic and demographic dimensions of the National Security of the Republic of Armenia.

In the course of the study, both scientific (analysis, synthesis, the principle of historicity) and special comparative methods were applied.

As a result of the study, we came to the conclusion that currently there is a manageable stability in the military dimension of the RA National Security. We cannot state the same regarding economic and demographic dimensions of the National Security of the RA, as Armenia is not competitive in these fields. In addition, there are visible threats to the stability and development of these sectors.

Keywords: *risk, security risk, national security of the RA, military, economic, demographical component, military forces Azerbaijan, Artsakh.*

ПРОБЛЕМА УПРАВЛЕНИЯ РИСКАМИ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

АЛЕН ГЕВОНДЯН

*Ереванский государственный университет,
факультет международных отношений,
кафедра политических институтов и процессов,
кандидат политических наук, доцент,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – выдвижение и обоснование подхода, согласно которому в процессе обеспечения национальной безопасности РА первостепенное значение имеет проблематика оценки и предотвращения рисков.

Задача статьи – представление теоретического определения категории «риск безопасности» и оценка военных, экономических и демографических рисков национальной безопасности РА.

В ходе исследования были применены как научные (анализ, синтез, структурно-функциональный анализ), так и сравнительный методы исследования.

В результате исследования были выведены следующие заключения: сегодня в сравнении с Азербайджаном в сфере военной составляющей национальной безопасности РА существует управляемый паритет. Не аналогична ситуация в сферах экономики и демографии, где Армения не только не конкурентоспособна, но и имеет определенные угрозы стабильности и развития.

Ключевые слова: *риск, риск безопасности, национальная безопасность РА, военная, экономическая, демографическая составляющие, вооруженные силы, Азербайджан, Арцах.*

ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՈՐԴՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ*

ՌՈՐԵՐՏ ԴԵՎՈՆԴՅԱՆ

բաղաբաական գիտությունների թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
robert.gh81@gmail.com

ՏԱԹԵՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր,
պատմական գիտությունների թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
haytatev@gmail.com

Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել Ադրբեջանի հասարակության նկատմամբ ապրեցություն գործելու մեխանիզմների գործարկման միջոցով հայության նկատմամբ ադրբեջանական ագրեսիայի մեղմացման հնարավորությունները: Այս համատեքստում խնդիր է դրված հետազոտել Ադրբեջանի հասարակական տրամադրությունները, վերհանել հայկական կողմերի ապրեցության ուղիներն ու առաջնահերթությունները:

Հետազոտությունն իրականացվել է ընդհանուր գիտական, պատմական և քաղաքագիտական մի շարք միջոցների կիրառմամբ, որոնք են պատմահամեմատական, համակարգային վերլուծության, հերմենևտիկայի և այլ մեթոդները:

Հետազոտությունը ցույց է տվել, որ հայատյացությունը Ադրբեջանում շարունակում է լինել իշխանության պաշտոնական գաղափարախոսություն: Այն ուղղված է ոչ միայն Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների դեմ, այլ իր նշանակետում ունի ամեն մի հայի ու հայկականությանն ընդհանրապես: Այս իրավիճակում Ադրբեջանի հասարակության շրջանում քաղաքական արժեքային սպասումները տրանսֆորմացվում են միջազգային փոխհարաբերությունների: Այլ կերպ ասած՝ հասարակության սոցիալական, տնտեսական և այլ պահանջմունքների բավարարմանը զուգահեռ քաղաքական հարթությունում սպասումները կազմակերպված ձևով ուղղորդվում են դեպի հայատյացություն:

Հետազոտության արդյունքում եզրակացրել ենք, որ հայկական կողմերն ունեն ապրեցություն գործելու մի շարք տարբերակներ, որոնք կնվազեցնեն հնարավորությունների ընկալումը՝ հասարակության դժգոհությունը ուղղորդելով դեպի Ադրբեջանի ներքաղաքական դաշտ, ինչը կանխարգելիչ նշանակություն կունենա հակահայկական ագրեսիայի համար:

Հիմնաբառեր՝ դեպրիվացիա, ագրեսիա, կանխարգելում, հասարակություն, տնտեսություն, ուղղորդում, արժեքային սպասումներ, արժեքային հնարավորություններ, հայատյացություն:

Ադրբեջանական հասարակական ու քաղաքական դաշտում նկատվում են միտումներ՝ ադրբեջանական կողմի «ձախողումները» կապելու բանակցային գործընթացում և հակամարտության համատեքստում երկրում ավտորիտար

* Հոդվածը ներկայացվել է 26.11.2019թ., գրախոսվել՝ 08.12.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

վարչակարգի գոյության հետ: Խաղաղությանը նախապատրաստելու, պատերազմական հռետորաբանությունը մեղմելու կոչերը միանշանակ չեն ընկալվել Ադրբեջանում: Հայաստանի ժողովրդավարական գործընթացները ադրբեջանցի ընդդիմադիրները համարում են լուրջ մարտահրավեր¹⁷⁹ և շարունակ պնդում, որ ավտորիտար Բաքուն միջազգային ասպարեզում տանուլ է տալիս ժողովրդավարական Հայաստանի ֆոնի ներքո: Նույն համատեքստում են դիտարկվում սոցիալ-տնտեսական խնդիրների շարունակականությունը, հասարակական կյանքում սոցիալական աստիճանով վերելքի սահմանափակվածությունը, եթևիկ փոքրամասնությունների և այլակարծության նկատմամբ ճնշումները և այլն: Իշխանությունները փորձում են ներհասարակական կյանքի այս ամբողջ խնդրահարույց գունապակը փոխապայմանավորել հայկական կողմի «դավադրական» գործունեությամբ, ինչը տեղի է ունենում հայության նկատմամբ ատելություն սերմանելու միջոցով: Սակայն ադրբեջանական հասարակությունում աստիճանաբար ընդգծվում են իշխանությունների նկատմամբ անվստահության միտումները:

Ադրբեջանի հասարակական-քաղաքական իրավիճակի պատկերը:

Ստեփանակերտում տեղի ունեցած Անվտանգության խորհուրդների համատեղ նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթից անմիջապես հետո Ադրբեջանի ընդդիմադիր, ազգայնական ուղղվածություն ունեցող «Ժողովրդական ճակատ» կուսակցության ղեկավար Ալի Զերեմլին իր ֆեյսբուքյան էջում գրառում կատարեց՝ Նշելով հետևյալը. «Փաշինյանի կողմից Խանթենդիում Ախ Նիստի անցկացումը մարտահրավեր է ոչ միայն Ադրբեջանի համար: Փաստացի սա ջանք է օրինականացնելու օկուպացիան: Արդյունքում Ադրբեջանը վերածվում է թույլ կողմի: Ադրբեջանի իշխանությունների կոռուպցիոն, զոդ ու ավազակային գործելակերպը մեծապես հարվածում է մեր երկրի իմիջին, թշնամին ամեն օր նոր հաջողություններ է գրանցում: Հայաստանը խաղաղ հեղափոխությունից հետո իր քաղաքական կապիտալը վերածել է Ղարաբաղի հարցում դիվիդենտներ շահելու ռեսուրսի: Նախ պետք է իշխանությունը վերադարձնենք ժողովրդին, որ հետո կարողանանք Ղարաբաղը ետ բերել»: Զերեմլին այս գրառումը լայն տարածում էր ստացել և ակտիվ քննարկումներ առաջ բերել սոցցանցերում: Դրան հաջորդեց ադրբեջանական քարոզչական կայքի haqqin.az-ի հոդվածը, որ Զերեմլին դավադրություն է նախապատրաստում պետության դեմ¹⁸⁰: Այնուհետև մարտի 16-ին ակնկալվող համաներման շրջանակներում Ադրբեջանի նախագահն անսպասելի քայլ կատարեց՝ ազատ արձակելով աննախադեպ թվով քաղբանտարկյալների՝ մոտ 50 հոգի: Նշենք, որ նախորդ տարիներին համաներման շրջանակներում ազատ էր արձակվում առավելագույնը մեկ տասնյակ քաղբանտարկյալ: Սա մի կողմից՝ կարելի է պայմանավորել երկրում ստեղծված իրավիճակով, մյուս կողմից՝ միջազգային ճնշմամբ, քանի որ ԵՆԽՎ առաջիկա նստաշրջանի ժամանակ կար առանձին զեկույց Ադրբեջանում քաղբանտարկյալների իրադրության վերաբերյալ:

Դրանից հետո՝ մարտի 19-ին, վարչապետ Փաշինյանի՝ ասուլիսի ժամանակ հնչեցրած կոչը՝ ուղղված հայերին ու ադրբեջանցիներին՝ հայիոյելուց բացի մտածել առարկայական հնարավոր քննարկումներ ունենալու մասին¹⁸¹, ադրբեջանական սոցցանցերում տարածում էր գտել գերազանցապես ընդդիմադիր մամուլի միջոցով: Մասնավորապես Meydan.tv կայքն այդ խոսքերը ադրբեջաներեն լեզվով տեղադրել էր

¹⁷⁹ Տաթևիկ Հայրապետյան, Ի՞նչ մարտահրավերներ առաջ բերեց հայկական ժողովրդավարությունը ավտորիտար Բաքվի համար, հունվար 3, 2019: <https://www.aniarc.am/2019/01/03/tatev-hayrapetyan-article-analyticon/>, 27.07.2019:

¹⁸⁰ Эйнулла Фатуллаев, Али Керимли и Гаджи Талех готовят беспорядки в Азербайджане, 14 марта 2019, <https://haqqin.az/dictatorship/146629>, 28.07.2019.

¹⁸¹ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը, 19.03.2019, <https://www.primeminister.am/hy/videos/item/uGz4tufeoXc/>, 28.07.2019:

իր ֆեյսբուքյան էջում՝ քննարկումների առիթ տալով¹⁸², սակայն շատ շուտով հեռացրեց: Մեկնաբանություններն ընդհանուր առմամբ կարելի է պայմանականորեն բաժանվել մի քանի խմբի.

- Քննադատություններ սեփական իշխանությունների հասցեին, օրինակ՝ «Ճիշտ է ասում Հայաստանի վարչապետը, հերիք է դատարկ խոսեք, գործի անցեք և ետ բերեք հողերը», «Մեր իշխանությունները դատարկ խոսելուց բացի այլ բան չեն կարող անել»:
- Հայ-ադրբեջանական խաղաղ համակեցության մասին հիշատակումներ, օրինակ. «Ռուսաստանում խաղաղ ապրել ստացվում է հայերի ու ադրբեջանցիների շրջանում», «այլ երկրներում կարողանում ենք խաղաղ ապրել, ինչպե՞ս է ստացվում», «Իրավացի է, պետք է սկսենք խոսել, աշխարհի շատ ժողովուրդներ հաղթահարել են հակամարտությունները, միգուցե մենք էլ կարողանանք»:
- Կոչեր էին հնչում չհավատալ ՀՀ վարչապետի խոսքերին, օրինակ. «Այ միամիտներ, չե՞ք հասկանում, որ հատուկ է ասում, ժամանակ են շահում, ևս քսան տարի էլ անցնի, մենք հույսներս կկտրենք մեր հողերից», «Որքան ուզում է խոսենք, միևնույն է դուք հողերը ետ չեք տալու»:
- Խոսակցության կոչեր միայն «հողերը տալուց հետո», օրինակ. "Հողերը վերադարձրեք, նոր հետո կմտածենք ձեզ հետ խոսելու մասին»:
- Մեդադրանքներ Meydan.tv-ի հասցեին՝ Հայաստանի իշխանություններին պրոպագանդելու համար:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշ մեկնաբանություններ ուղղորդված են, կեղծ պրոֆիլներով, այդուհանդերձ խոսքերը տարածելու փաստն իսկ կարևոր է ու հետաքրքրական:

Վարչապետի ելույթի այդ հատվածին անդրադարձել էր նաև «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությունը¹⁸³, նաև կայքի youtube-յան ալիքը¹⁸⁴: Ըստ ելույթի, Փաշինյանի ելույթները ադրբեջանական հանրությանն են հասնում ընդդիմադիր աղբյուրների միջոցով՝ նպաստելով հնարավոր քննարկումների առաջացմանը, որոնք հաճախ ուղղորդվում են Ալիևի իշխանության դեմ:

Դրա հետ մեկտեղ որոշ ընդդիմադիր լրագրողների հրապարակումներում կոչեր են հնչում ընդդիմադիր գործիչների դեմ պայթարելու փոխարեն, պայթարել Ղարաբաղի համար: Մասնավորապես լրագրող, հրապարակախոս Ռովշան Հաջիբեյլին «Meydan.tv» կայքում հրապարակած «Կռվախնձորը» և ընդդիմադիր «պահակները» վերտառությամբ հողվածում անդրադառնալով Դավիթ Գարեջայի վանական համալիրի շուրջ ստեղծված իրավիճակին՝ նշում է. «Պարոն նախագահ, չգիտեմ որքանով է ճիշտ մի երկրում, որի տարածքի 20%-ը օկուպացված է, շարունակ խոսել անվտանգությունից և կայունությունից, անվտանգությունը ավարտվել է, փոխանակ դեկավարությունը ուշադրություն դարձնի այդ հարցի վրա, զբաղված է այլ հարցերով, որովհետև ձեր նպատակը ոչ թե թշնամու դեմ պայթարն է, հողերը օկուպացիայից ազատելը, այլ պայթարը անուժ ընդդիմության, ձեզ քննադատողների դեմ: Այդ պայթարը հարուստ է պարադոքսներով: Մի կողմից՝ քննադատում եք ընդդիմությանը,

¹⁸² <https://www.facebook.com/MeydanTelevision/photos/a.498789073501490/2078322792214769/?type=3&theater>, 21.03.2019:

¹⁸³ Nikol Paşinyan sosial şəbəkələrdə söyüşmələr haqda, Mart 21, 2019, <https://www.azadliq.org/a/nikol-pashinyan-sosial-shebekelerde-soyushler/29834732.html>, 28.07.2019:

¹⁸⁴ Nikol Paşinyan: azərbaycanlılarla ermənilərlər niyə söyüşür?, Mar 21, 2019, <https://www.youtube.com/watch?v=9A7KoFnpX7g>, 28.07.2019:

մյուս կողմից՝ ֆինանսավորում ձեռք համար «ցանկալի» ընդդիմադիրներին...»¹⁸⁵: Յեղիևակի մեկ այլ հոդվածում, որը վերնագրված է «Աշխատավարձի բարձրացում և խաղաղության կոչեր», նշվում է, որ հունիսի 18-ը հարուստ է եղել նախագահ Ալիևի հրամանագրերով, որոնք վերաբերում էին աշխատավարձի՝ սպասվող բարձրացումներին: Նախատեսվում է, որ հոկտեմբերի 1-ից Ադրբեջանում նվազագույն աշխատավարձը կբարձրանա՝ 180 մանաթից դառնալով 250 մանաթ (106\$-ից 148\$), կավելանա նաև թոշակը՝ 160 մանաթից դառնալով 200 մանաթ (95\$-ից 118\$)¹⁸⁶: Յեղիևակը նշում է, որ սրանք կեղծ փոփոխություններ են, որոնց ներքո «քողարկվում են խաղաղության կոչեր»: Յոդվածում մասնավորապես նշվում է. «Ուշագրավ է, որ այս օրերին, երբ կառավարությունը խոսում է աշխատավարձերի բարձրացման մասին, խաղաղության հայտարարություններ են հնչում Ղարաբաղի հարցով: Օրինակ, Չաքիր Չասանովը վերջերս հայտարարեց, որ միջազգային իրավիճակը թույլ չի տալիս պատերազմ սկսել: ԱԳՆ մամլո խոսնակ Աբդուլանևն էլ ասում է, որ շարունակվում է բնակչությանը խաղաղության նախապատրաստելու գործընթացը»¹⁸⁷: Կարող ենք ենթադրել, որ խաղաղության նախապատրաստման մասին հայտարարությունն իսկ «սվիններով» է ընդունվում Ադրբեջանի հասարակության ընդդիմադիր հատվածի կողմից:

Դրան զուգահեռ խոսվում է նաև տնտեսական բացթողումների մասին: Մասնավորապես ադրբեջանցի տնտեսագետ, ընդդիմադիր հայացքներ ունեցող Նաթիգ Ջաֆարլին ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել. «Ադրբեջանի ՀՆԱ-ն 2018թ.-ին կազմել է 46 միլիարդ 900 միլիոն դոլար՝ մեկ շնչի հաշվով 4690 դոլար: 2018թ.-ին օկուպանտ Չայաստանի ՀՆԱ-ն կազմել է 12 միլիարդ 400 միլիոն դոլար՝ մեկ շնչի հաշվով 4275 դոլար: 5 տարի առաջ Ադրբեջանի ՀՆԱ-ն կազմել է 74 միլիարդ 240 միլիոն դոլար՝ մեկ շնչի հաշվով 7500 դոլար: 5 տարի առաջ Ռուսաստանի ֆորպոստ Չայաստանի ՀՆԱ-ն կազմել է 11 միլիարդ 610 միլիոն դոլար՝ մեկ շնչի հաշվով 4146 դոլար: վերջին 5 տարվա ընթացքում Ադրբեջանի ՀՆԱ-ն փաստացի նվազել է 27 միլիարդ 340 դոլարով՝ մեկ շնչի հաշվով 2900 դոլար, իսկ մեր թշնամի Չայաստանինը ավելացել է 800 միլիոն դոլարով՝ մեկ շնչի հաշվով 130 դոլար: Սրանք զուտ թվեր են, թվերը չեն խաբում...»¹⁸⁸: Մեկ այլ ընդդիմադիր հայացքներով տնտեսագետ Գուբադ Իբադոգլուի՝ հունիսի 9-ի գրառման մեջ նշվում է. «Ադրբեջանի պետական բյուջեի՝ պաշտպանությանը հատկացված ծախսերը հետևյալ կերպ են փոխվել 20 տարվա ընթացքում. 1992 թ.-ին՝ 11,1 միլիոն դոլար, 1993 թ.-ին՝ 77,5 միլիոն դոլար: 2012թ.-ին՝ 3 միլիարդ 246 միլիոն դոլար, 2013թ.-ին՝ 3 միլիարդ 368 միլիոն դոլար: Արդյունքում ոչինչ չկա»¹⁸⁹: Այսպես իշխանությունների ռազմական հսկայական ծախսերը համարվում են ոչ արդարացված, իսկ պատերազմի վերսկսումն այս պահի դրությամբ՝ քիչ հավանական՝ հատկապես մթնոլորտի առողջացմանն ուղղված կոչերի համատեքստում:

Ի պատասխան՝ Բաքվի իշխանական շրջանակները մեղադրում են ընդդիմության գործիչներին հակապետական ու դավաճանական գործողություն-

¹⁸⁵ Rövşən Hacıbəyli, Keşikcidağ və müxalifət "keşikçiləri", 18 İyul 2019, [¹⁸⁶ Azerbaijan raises minimum wage by \\$41, and minimum pension by \\$23, June 20, 2019, \[¹⁸⁷ Rövşən Hacıbəyli, Maaş artımı və sülh çağırışları, 24 June 2019, \\[¹⁸⁸ Natig Jafarli \\\[¹⁸⁹ Gubad İbadoglu \\\\[96\\\\]\\\\(https://www.facebook.com/gubad.ibadoglu/posts/10217139414749226, 28.07.2019:</p>
</div>
<div data-bbox=\\\\)\\\]\\\(https://www.facebook.com/natig.jafarli/posts/10217720327813630, 28.07.2019:</p>
</div>
<div data-bbox=\\\)\\]\\(https://d9mc3ts4czbpr.cloudfront.net/en/article/maas-artimi-ve-sulh-cagirislari/?ref=article-related-artciles, 27.07.2019:</p>
</div>
<div data-bbox=\\)\]\(https://jam-news.net/azerbaijan-raises-minimum-wage-by-41-and-minimum-pension-by-23/, 28.07.2019:</p>
</div>
<div data-bbox=\)](https://d9mc3ts4czbpr.cloudfront.net/az/article/kesikcidag-ve-muxalifet-kesikcileri/?fbclid=IwAR2VD MnD 1xFU _MaBHwrkVlr4G28ahOxpcLo-KViVOhDT9a7ZdDrGBDQq0o, 27.07.2019:</p>
</div>
<div data-bbox=)

Ներում, ինչպես նաև անձնական վարկաբեկող տեղեկություններ են հրապարակում փորձելով ազդել հանրային կարծիքի վրա: Այսպես, իշխանամետ պատգամավոր Իլիամ Մամեդովն Ալի Զերիմլին անվանում է «դավաճան և ժողովրդի թշնամի»¹⁹⁰: Իսկ իշխանամետ լրագրող Էլշադ Մամեդլին տարածում է վարկաբեկող տեղեկություններ ընդդիմադիր Ալի Իսանովի և Վահաբաձեի վերաբերյալ¹⁹¹:

Միևնույն ժամանակ պետական լրահոսը առավելապես տարածում է տնտեսական հաջողությունների, առաջընթացի վերաբերյալ կյուբեր¹⁹², որոնց միջոցով փորձում է նվազեցնել հասարակության մեջ առկա դժգոհության մակարդակը: Մյուս կողմից՝ պաշտոնական Բաբուն շարունակում է տարածաշրջանային ու ներքին տնտեսական խնդիրների գոյությունը փոխկապել Ղարաբաղյան հակամարտության հետ¹⁹³: Հակահայկական քարոզչությունը օգտագործվում է նաև այս ուղղությամբ՝ հանդիսանալով Ադրբեջանի իշխանությունների կողմից սեփական ներթափառական խնդիրների լուծման ևս մեկ գործիք:

Կարող ենք արձանագրել, որ ադրբեջանական հասարակությունը չի հավատում պաշտոնական Բաբվի կողմից տարածքների վերադարձի վերաբերյալ հայտարարություններին, ինչպես նաև իշխանությանը մեղադրում է տնտեսական ոչ արդյունավետ քաղաքականություն վարելու համար: Մի կողմից՝ ռազմական ծախսերի հսկայական ծավալը խլում է տնտեսության առողջացմանն անհրաժեշտ ռեսուրսների առկայության բաժինը, մյուս կողմից՝ այդ ծախսերը չեն ապահովում այնպիսի ռազմական առավելություն, որը հնարավորություն կտար ուժի միջոցով լուծելու խնդիրը:

Նման իրավիճակում Հայաստանի ու Արցախի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ վարքագիծը, որը դրսևորվում է սահմանային սրացումներով ու հայտարարություններով, այնուամենայնիվ որոշակիորեն ստանում է հասարակության աջակցությունը: Այդ աջակցությունը հիմնականում բացատրվում է խնդիրը մեռյալ կետից շարժելու, լուծման և հետագայում տնտեսության մեջ փոփոխություններ իրականացնելու հույսով: Սակայն հասարակությունը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի է սկսում հասկանալ կորստի անդառնալիությունը: Դա նշանակում է, որ Ադրբեջանի հասարակության շրջանում տեղի ունեցող գործընթացը կարելի է նկարագրել «նվազող դեպրիվացիայի» երևույթի միջոցով:

Նվազող դեպրիվացիայի խթանումը՝ որպես ագրեսիայի կանխարգելման միջոց: Արժեքային սպասումների և արժեքային հնարավորությունների ընկալումների անհամապատասխանությունը կազմում է հարաբերական դեպրիվացիայի երևույթը: «Նվազող դեպրիվացիան» սպասումների ընկալման համեմատական հաստատուն լինելու պայմաններում հնարավորությունների ընկալման աստիճանական նվազումն է: Ադրբեջանի հասարակության շրջանում Արցախի հարցում սպասումները հանգում են այսպես կոչված «տարածքային ամբողջականության վերականգնման» հայեցակարգին, իսկ հնարավորությունները ընդգրկում են խաղաղ


¹⁹⁰ Али Керимли – наглядный пример предательства, враждебности к народу <https://www.trend.az/azerbaijan/politics/3153401.html>, 25.11.2019:

¹⁹¹ Исфандияр Вахабдзе, примкнувший к Али Исанову, превратил гостевой дом Азербайджана в Молдове в гнездо любовных утех <https://www.trend.az/azerbaijan/politics/3153788.html>, 25.11.2019:

¹⁹² «Азеригаз»: За девять месяцев зарегистрировано 65 тысяч 124 новых абонента https://azertag.az/ru/xeber/Azerigaz_Za_devyat_mesyacev_zaregistrirvano_65_tysyach_124_novyh_abonenta-1340815; В Азербайджане увеличился объем грузоперевозок <https://www.trend.az/business/economy/3154066.html>, 25.11.2019:

¹⁹³ Продолжение оккупации Арменией азербайджанских территорий создает препятствия полноправному региональному сотрудничеству https://azertag.az/ru/xeber/Prodolzhenie_okkupacii_Armeniei_azerbaidzhanskih_territorii_sozdaet_prepyatstviya_polnopravnomu_regionalnomu_sotrudniches tvu-1095352, 21.09.2019:

բանակցություններից մինչև լայնածավալ պատերազմն ընկած գործողությունների ողջ շրջանակը:



Գծանկար. Ադրբեջանի հասարակության շրջանում Արցախի հարցում ժամանակի ընթացքում սպասումների ու հնարավորությունների ընկալման տարբերության աճը («Նվազող դեպրիվացիայի» երևույթը)*:

Ինչպես տեսնում ենք գծագրում, Արցախի հարցում Ադրբեջանի հասարակության սպասումները ժամանակի ընթացքում հաստատուն են, ենթադրում են տարածքների վերադարձ: Սակայն այդ նպատակի իրականացման հնարավորությունների ընկալումը ժամանակի ընթացքում նվազում է: Համակարգային տեսության շրջանակներում դիտարկելով այս գործընթացը՝ կարող ենք նկատել, որ ժամանակի ընթացքում հասարակության շրջանում տնտեսական ու սոցիալական առաջընթացի սպասումները խորացող դժգոհություն են ձևավորում իշխանության նկատմամբ: Իսկ այդ դժգոհությունը հիմնավորվում է Արցախի հարցում հնարավորությունների նվազման համատեքստում ռեսուրսների վատնմամբ:

Այսպիսով՝ Ադրբեջանի հասարակությունն արդեն որոշակիորեն հասկանում ու արտահայտում է իշխանության կողմից արժեքային համակարգի առանցքային կողմնորոշիչների մանիպուլյատիվ դրսևորումները: Այդ դրսևորումների միջոցով Ադրբեջանի իշխանությունը պահպանում է որոշակի լեգիտիմության մակարդակ, փորձում է նվազեցնել դժգոհությունը անարդյունավետ տնտեսական քաղաքականությունից, կանխել սոցիալական բողոքի ակցիաները, իսկ ներքին ագրեսիան ամբողջովին ուղղորդում է դեպի «դուրս»՝ հայությունն ու հայկականը. «Որոշակի կամ անորոշ աղբյուրներ ունեցող դժգոհության տարբեր տեսակները, որոնք առաջանում են տնտեսական, միջանձնային, ինչպես նաև իշխանական դեպրիվացիաների հետևանքով, կարող են ուղղորդվել դեպի հստակ, նեղ ուղղվածությամբ քաղաքական բողոքի գործողությունները»¹⁹⁴:

Ադրբեջանական իշխանությունները ամբողջապես օգտվում են ուղղորդման հնարավորությունից, ինչը բավական վտանգավոր է, քանի որ հասարակության

* Գծագրում բերված արդյունքները հարաբերական են, արտացոլում են երևույթի ֆունկցիոնալ արտապատկերումը:

¹⁹⁴ Гапп Т., Почему люди бунтуют, СИ, 2005, с. 241.

ինքնագիտակցության աճը կարող է ժամանակի ինչ որ պահի դուրս գալ վերահսկողությունից, ինչը հղի է անկանխատեսելի հետևանքներով. «Եթե ռեժիմի կողմից ներքին թշնամանքը նույնիսկ հնարավոր է լինում ուղղորդել դեպի արտաքին օբյեկտներ, այդպիսի գործողության գինը կարող է շատ թանկ լինել»¹⁹⁵: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հակադարձ ազդեցություն գործել Ադրբեջանի հասարակության վրա՝ փորձելով նպաստել արժեքային համակարգի մանիպուլյատիվ երևույթների վերհանմանը. «Շրջակա միջավայրի հետ արժեքների սինխրոնիզացիան կարող է նվազել փոփոխության էկզոգեն աղբյուրների ազդեցության, այսինքն՝ տարբեր տիպի արտաքին ցուցադրական էֆեկտների հետևանքով»¹⁹⁶: Տվյալների վերհանման ու ներկայացման միջոցով էլ ավելի արդյունավետ կլինի խորացող դեպրիվացիոն միտումները դեպի ներհասարակական խնդիրների դաշտն ուղղորդելը: Այդ նպատակով անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ և Արցախի կողմից Ադրբեջանի հասարակության վրա ազդեցության հնարավոր բոլոր միջոցները:

Ադրբեջանի հասարակության հետ հաղորդակցման միջոցները: Արտաքին ազդեցությունը հնարավոր է իրականացնել և՛ Հայաստանից, և՛ Արցախից, և՛ միջնորդավորված՝ աշխարհի տարբեր երկրներում համանման գործընթացների վերհանման ու զուգահեռների անցկացման միջոցով: Այդ ազդեցությունը կարելի է իրականացնել նաև Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների, հիմնականում թալիշների ու լեզգիների միջոցով՝ խթանելով նրանց քաղաքական պահանջների ձևավորումն ու ներկայացումը Ադրբեջանում: «Ժողովրդավարական երկրները ստեղծում են ֆորմալ ուղիներ, որոնցով կարող են ներկայացվել քաղաքական պահանջները, ինչը նպաստում է դեպրիվացիայի ոչ բռնի մեթոդներով նվազմանը: Իսկ տարբեր խմբերի նկատմամբ խտրական քաղաքականությունը ավելի հաճախ հանդիպում է ավտորիտար երկրներում»¹⁹⁷: Ադրբեջանը դժվար է ժողովրդավարական երկիր անվանել, իսկ ներքին խտրական վերաբերմունքը, ըստ էթնիկ պատկանելիության, ակնհայտ է: Հայաստանի ու Արցախի կողմից թալիշների և լեզգիների դեպրիվացիոն գործընթացների մատնանշումը կարող է Ադրբեջանի հասարակությունում մտածելակերպի փոփոխություն հարուցել: Այս առումով կարևոր օրինակ է Երևանի պետական համալսարանի իրանագիտության ամբիոնի կողմից ամենամյա թալիշագիտական գիտաժողովների անցկացումը¹⁹⁸:

Հայաստանից Ադրբեջանի հասարակության սպասումների վրա ազդեցություն գործելու հնարավորություն է նաև ՀՀ վարչապետի՝ Ադրբեջանի ժողովրդի հետ չմիջնորդավորված խոսելու մասին ցանկությունը¹⁹⁹: Փաշինյանը նշում է, թե ցանկալի կլիներ, որ այդ հաղորդակցությունը երկկողմանի բնույթ ունենար, սակայն ՀՀ ղեկավարի և իշխանության ամենաբարձր օղակի այլ ներկայացուցիչների պարբերական ուղերձները Ադրբեջանի հասարակությանը կարող են որոշակի նստվածքային էֆեկտ ունենալ: Այս հաղորդակցական ուղին կարելի է օգտագործել Ադրբեջանի իշխանությունների ներքին լսարանի համար տարածվող ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկությունների հերքման, Հայաստանի տեսակետի տարածման համար: Ընդ որում, այդ տեղեկատվությունը կարող է պարունակել ինչպես Արցախի հարցում, այնպես էլ Ադրբեջանի և ամբողջ տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և այլ

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 388:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 195:

¹⁹⁷ Koos C., Does Violence Pay? The Effect of Ethnic Rebellion on Overcoming Political Deprivation, Giga working papers, N244, 2014, p. 16.

¹⁹⁸ Թալիշագիտական 3-րդ միջազգային գիտաժողով, 24-25 մայիսի, 2019թ. <https://haydazayn.com/am/page/talisnerin-nvirvac-gitajoxov-ereanoum>, 30.07.2019:

¹⁹⁹ Կուզեի հնարավորություն ունենայի խոսելու Ադրբեջանի ժողովրդի հետ, բայց չէմ ուզում, որ դա լինի միակողմանի. Փաշինյան <https://www.tert.am/am/news/2019/04/11/Pashinyan/2971273>:

ուլորտներին վերաբերվող լայնամասշտաբ խնդիրների վերաբերյալ դիրքորոշումներ, փորձագիտական վերլուծություններ, կարծիքներ և այլն: Ցանկալի կլիներ, որ նման նախաձեռնությամբ հանդես գար նաև Արցախը՝ տարբեր պաշտոնյաների մակարդակով:

Ադրբեջանական հասարակությանը իրական տեղեկատվության տրամադրման ևս մեկ կարևոր մեխանիզմ կարող է լինել քաղաքացիական հասարակության կառույցների միջև փոխհարաբերությունների ձևավորումը: Այդ հարթակը կարող է իրականանալ ինչպես ուղղակիորեն՝ լրագրողների փոխայցերի օրինակով, այնպես էլ միջազգային ձևաչափերում մասնակցության մակարդակի աճի միջոցով:

Ադրբեջանի հասարակության վրա ազդեցության կարևորագույն միջոց է ադրբեջանագիտական հետազոտությունների անցկացումը Հայաստանում և դրանց հեռարձակումը սոցիալական ցանցերով ու տեղեկատվահաղորդակցական այլ միջոցներով: Կովկասյան տարածաշրջանում սոցիալական ցանցերը, հատկապես facebook, twitter, vkontakte ռեսուրսները քաղաքական ու սոցիալական գործընթացների վրա ազդեցության հսկայական ներուժ են պարունակում: Այդ եղանակով կարելի է տեղեկատվությունն ուղղակիորեն հասցնել Ադրբեջանի հասարակությանը՝ շրջանցելով իշխանական մանիպուլյացիոն դաշտը: Տեսուչության, սոցիալական, ներքաղաքական հարցերի շուրջ նվազող դեպրիվացիան խթանել կարելի է Ադրբեջանի ներքին սոցիալական իրավիճակի ներկայացմամբ, ռազմական ծախսերի ու տնտեսական իրավիճակի համեմատական վերլուծություններով, Արցախի հարցում ուժերի իրական դասավորության մեկնաբանություններով և այլն: Առավել արդյունավետ կլիներ այս գործընթացներն իրականացնել Արցախում գրանցված օգտատերերի կողմից, որոնք կարող էին տեղային օրինակներով փաստարկել համեմատական հետազոտությունների արդյունքները: Կոնֆլիկտների սլովակ մասնագետ, պրոֆեսոր Ռաստիսլավ Կազանսկին, ուսումնասիրելով Եթնիկ կոնֆլիկտները, դրանց կանխարգելման հարցում մեծ նշանակություն է հատկացնում մեդիա-հաղորդակցության հնարավորություններին: Նա նշում է, որ միջազգային բազմաէթնիկ հեռարձակումները, ինչպես նաև այլընտրանքային ռեսուրսների գոյությունը կարող են նշանակալի նվազեցնել կոնֆլիկտի սրման հավանականությունը²⁰⁰: Մեր դեպքում ևս այս պնդումը առարկայական է: Նույնիսկ ՀՀ վարչապետի երկկողմանի հաղորդակցման ցանկությունը կարող է ժամանակի ընթացքում առարկայական դառնալ՝ տեղեկատվահաղորդակցական նորագույն միջոցների կիրառմամբ: Ավելորդ չի լինի նշել, որ Արցախի ու Հայաստանի շարունակական ժողովրդավարական զարգացումն ու հզորացումը նշանակալի կավելացնեն գործողությունների արդյունավետությունը:

Ամփոփենք. Ադրբեջանի ընդդիմադիր դաշտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հասարակության մեջ դեպրիվացիոն միտումներն իշխանության մանիպուլյացիաների միջոցով հիմնականում ուղղորդված են հայության դեմ: Սակայն ժամանակի ընթացքում խորանում է ներքաղաքական, տնտեսական ու սոցիալական ուլորտներում փոփոխությունների պահանջը: Արցախի հարցում նվազող դեպրիվացիայի ընթացքին զուգահեռ աճում են դեպրիվացիոն միտումները հանրության տնտեսական ու սոցիալական կարիքների բավարարման խնդիրներում:

Այդ իրավիճակը հնարավորություն է տալիս նպաստելու հասարակության մեջ հայության նկատմամբ ագրեսիայի կերպափոխմանը սեփական իշխանություններից ներքին փոփոխությունների պահանջին: Այլ կերպ ասած, հայկական կողմերի ազդեցության արդյունավետությունը պետք է գնահատել Ադրբեջանի հասարակությունում Արցախի հարցում հնարավորությունների ընկալման նվազման խորացման և ներքին խնդիրների վրա սևեռման ինտենսիվությամբ:

²⁰⁰ Kazansky R., The theory of conflicts, Banska Bystrica, 2015, p. 137.

Այդ համատեքստում Ադրբեջանի հասարակություն վրա ագրեսիայի գործիքակազմը պարունակում է մի շարք հնարավորություններ, որոնցից կարևորագույններն են.

1. Տեղեկատվահաղորդակցական միջոցները, առանձնապես սոցիալական ցանցերը,
2. Տարբեր մակարդակի պաշտոնյաների հարցազրույցներն ու հայտարարությունները,
3. Ադրբեջանի էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ, ինչպես նաև նրանց ներկայացուցիչների ներգրավմամբ գիտակրթական ու մշակութային խոշորածավալ միջոցառումների պարբերական իրականացումը,
4. Քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների միջև երկխոսության հարթակների ստեղծման նախաձեռնություններն ու իրական հնարավորությունների ձևավորումը:

THE PREVENTION OF AZERBAIJANI AGGRESION WITH REDIRECTION OF SOCIAL EXPECTACIONS

ROBERT GHEVONDYAN

PhD in politics

Yerevan, Republic of Armenia

TATEVIK HAYRAPETYAN

PhD in history, MP of National Assembly of RA,

Yerevan, Republic of Armenia

The aim of the article is to explore the possibilities to decrease the aggression of Azerbaijan towards Armenians with the use of certain mechanisms. In this context the focus is to examine the mood of Azerbaijani society and underline the tools and priorities of Armenian sides to impact on those moods.

The research is based on scientific, historical and political analysis with use of methods of historical comparison, structural analyze, hermeneutic and so on.

The research shows that Armenophobia still remains the official ideology of Azerbaijani state. It is not just against Armenian and Artsakh, but against all Armenians in general. In this case, the political expectations of Azerbaijani society turn into international relations. In other words, while trying to fulfill the socio-economic expectations of the society the government turns the political expectations into anti-Armenian moods.

As a result of the research we summed that Armenian sides have opportunities for the influence, which will help to redirect the social disappointment into domestic politics of Azerbaijan, which might prevent the aggression.

Key words: *deprivation, aggression, prevention, society, economy, directing, value based expectations, value based opportunities, Armenia-phobia.*

ПРЕДОТВРАЩЕНИЕ АЗЕРБАЙДЖАНСКОЙ АГРЕССИИ ПОСРЕДСТВОМ КАНАЛИРОВАНИЯ ОЖИДАНИЙ ОБЩЕСТВА

РОБЕРТ ГЕВОНДЯН

*кандидат политических наук,
г. Ереван, Республика Армения*

ТАТЕВИК АЙРАПЕТЯН

*Депутат Национального Собрания РА,
Кандидат исторических наук
г. Ереван, Республика Армения*

Основная цель статьи - раскрыть возможности смягчения азербайджанской агрессии против армянства путем эффективного использования механизмов влияния на общество Азербайджана. В этом контексте поставлена задача исследовать общественные настроения Азербайджана, выявить пути и приоритеты влияния армянских сторон.

В исследовании использованы общие научные, исторические и политологические методы, которые включают в себя историко-сравнительные и герменевтические методы, системный анализ и т.д.

Исследование показало, что армянофобия в Азербайджане продолжает являться государственной идеологией. Она направлена не только против Армении и Арцаха, но и нацелена на любого армянина и армянское в целом. В такой ситуации политические ожидания у общества Азербайджана трансформируются в международные отношения. Другими словами, параллельно удовлетворению ожиданий в социальных, экономических и других сферах, политические ожидания организованно канализуются в армянофобию.

В результате исследования был сделан вывод о том, что у армянских сторон есть ряд вариантов влияния. Воспользовавшись этими вариантами, можно умерить восприятие возможностей по карабахскому вопросу, направляя негодование общества во внутривнутриполитическое поле Азербайджана. Это может снизить вероятность антиармянской агрессии.

Ключевые слова: депривация, агрессия, предотвращение, общество, экономика, канализование, ценностные ожидания, ценностные возможности, армянофобия.

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ*

ՄԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայություն,
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և
հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
movsisyanmarine8@gmail.com*

Հոդվածում առաջ է քաշվել մոտեցում, ըստ որի՝ հարահոս և աններդաշնակ փոխհարաբերությունների համատեքստում սերտորեն փոխկապակցված են մասնակցային ժողովրդավարությունը և ազգային անվտանգությունը, որտեղ վերջինս կարող է դիտարկվել առանձին մարդկանց անվտանգության համագումար՝ նպաստելով պետականության ամրապնդմանը: Մեր խնդիրն է բացահայտել ազգային անվտանգության ապահովման գործընթացում մասնակցային ժողովրդավարության դերակատարումը, տալ վերջիններիս փոխկապակցվածության բնութագիրը, պարզացնել դրույթ՝ մասնակցային ժողովրդավարությունը որպես ազգային անվտանգության ապահովման պայման, առանց որի վտանգվում է պետականությունը:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական) մեթոդներ:

Հետապոտության արդյունքում ելքահանգել ենք՝ մասնակցային ժողովրդավարությունը որպես ազգային անվտանգության ապահովման պայման բավամակարդակ երևույթ է: Այն անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգի բաղադրիչ է, սակայն հարաբերական անկախության մեջ է գտնվում պայմանավորված կենտրոն-ծայրամաս տարածական հարթություններում առկա մարդու անվտանգության հիմնախնդրի վերլուծության ու պատասխանատվության հետ: Այս համատեքստում ԱՀ-ի և ՀՀ-ի անվտանգության ռազմավարությունը անհրաժեշտ է մշակել՝ պարզացնելով մասնակցային ժողովրդավարության իրական բնույթը:

Ներկայիս գլոբալ-ցանցային կերպափոխումները, յուրաքանչյուրիս պատությանն ուղղված սպառնալիքները առաջ են բերել պատասխանատվությամբ կենսունակ քաղաքականություն վարելու անհրաժեշտություն: Հեղինակը հիմնավորում է, որ գիտակից, կրթված, քաղաքացիական աշխարհայացքով մարդկանց ներգրավումը, լայնամասշտաբ մասնակցության ապահովումը կարևոր նախապայմաններ են կայուն անվտանգային միջավայրի և մարդու անվտանգության ապահովման համար:

Հիմնաբառեր՝ մասնակցային ժողովրդավարություն, մարդու անվտանգություն, ազգային անվտանգություն, պետականության ամրապնդում, երջանիկ ապագա, կայունություն, մրցունակություն, ազգային ինքնություն, արժեհամակարգ, պատասխանատվություն:

* Հոդվածը ներկայացվել է 31.08.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Գլոբալացման բազմաՎեկտոր գործընթացը լուրջ մարտահրավերներ է նետել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների ու քաղաքացու անվտանգային համակարգին՝ կերպափոխելով պետության ավանդական ինստիտուտը՝ պետականությունն առավել խոցելի դարձնելով: Գլոբալացման պայմանները ոչ միայն բարձրացրել են միջազգային տնտեսական ազատականացման, առևտրի ու ֆինանսական հոսքերը, այլև **բացել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության, մաքսանենգ ճանապարհով գաղթող միգրանտների և անդրազգային՝ առողջապահական, բնապահպանական վտանգների հոսքերը՝ փորձության տանելով մարդուն:** Ուստի գլոբալիզացիան անվտանգության նոր հարթություն է առաջ բերել՝ ոչ ավանդական անվտանգության տեսքով: Վերջինս գործում է միջպետական հակամարտություններից և աշխարհաքաղաքական մտահոգություններից դուրս: Եթե նախկինում միմյանց հաջորդելով՝ ծովային, ցամաքային, օդային ուժերն էին գտնվում գերակա դիրքում, ապա արդի աշխարհաքաղաքական, բազմաչափ գործընթացներում վերոնշյալներին ավելացել է ևս մեկ հզոր և քաղաքական գործընթացներում լրջագույն դերակատարում ունեցող տեղեկատվական, մասնավորապես կիբեռ տիրույթը, ընդ որում, շատ հաճախ կիբեռ տիրույթում իրականացվող գործողությունները առավել աղետալի ու անդառնալի հետևանքների կարող են հանգեցնել, քան զինտեխնիկայի և այլ ավանդական միջոցների կիրառման դեպքում: Ռաֆ Էմմերսը պնդում է, որ անվտանգության ռազմական ասպեկտները աննպատակահարմար են, սակայն անվտանգության ավանդական ընկալումը ավելի շատ հարցականի տակ է դնում, թե ինչպես պետք է սահմանվի անվտանգությունը, քանի որ գլոբալիզացիան մարտահրավեր է նետել ազգային ինքնիշխանությանը և պետության՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի ժողովրդավարացմանը: «Գլոբալիզացիան վերաբերում է տնտեսական ազատականացման և վերափոխման գործընթացներին, ինչպես նաև արագընթաց գիտական զարգացումներին՝ հաղորդակցության, տրանսպորտի, տեղեկատվության ոլորտներում»²⁰¹:

Այս համատեքստում ձևավորվող նոր աշխարհակարգը տրանսֆորմացիայի է ենթարկում լոկալ, տարածաշրջանային, գլոբալ տարածություններում առկա սպառնալիքները՝ նետելով նոր՝ ցանցային մարտահրավերներ: Կենտրոն-ծայրամաս տարածություններում առաջացած ցանցային մարտահրավերները **արմատական խզում են առաջացրել՝ ստեղծելով բնակչության ցածր կենսամակարդակ, տնտեսության զարգացման հետընթաց, տարատեսակ հակամարտություններ, բազմաբևույթ ահաբեկչական գործողություններ, քաղաքական անկայուն վիճակ, կոռուպցիա, միգրացիա, թրաֆիքինգ:** Այս ամենը հանգեցրել է ճգնաժամային այնպիսի իրավիճակի, որի շրջանակներում մարդը տեղից տեղ է գաղթում ցանկանալով ապահովել իր բարեկեցությունը, անվտանգությունը և երջանիկ ապագայի նկատմամբ իր հավակնությունները: Գործընթացն առավել վտանգավոր է դառնում, երբ առաջ են գալիս տեղեկատվական պատերազմները, որոնք ընթանում են միջէթնիկական բախումների, միջպետական հարաբերությունների սրման, ներքաղաքական անհանդուրժողականության դրսևորումների արդյունքում: Գլոբալ-ցանցային հասարակության զարգացումն ուղղակիորեն մարտահրավեր է նետում **մարդու ազգային, մշակութային ինքնությանը՝ խաթարելով նրա անվտանգության մարդաբանական հիմքերը:** Օգտվելով «ծայրամասերի» պետական ինքնիշխանության և համայնքային համակեցության աններդաշնակ կերպափոխումներից՝ զարգացած երկրները մշակել են տեղեկատվության միջոցով մարդու գիտակցությունը

²⁰¹ Emmers R., Non-Traditional Security in the Asia Pacific: The Dynamics of Securitization (2004) Eastern University Press, Singapore, pp. 388-391.

մանկապուլացնելու տեխնոլոգիաներ: Դա էլ հնարավորություն է տվել նրանց վերահսկել ողջ աշխարհի տեղեկատվական հոսքերը:

Այսպիսով, աստիճանաբար փոփոխության ենթարկվող արդի պատերազմների տրամաբանությունը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է համակարգված ուսումնասիրել առկա մարտահրավերները և սպառնալիքները, **հարկ եղած դեպքում մարտահրավեր նետել դիմակայման փոխարեն:** Նմանօրինակ մոտեցմամբ մարդը հնարավորություն է ստանում իրատես գնահատել իրականությունը՝ **բարձրացնելով իր ազգային ինքնության մրցունակությունը:** Հետևաբար, կարծում ենք, որ **գլոբալացման գործընթացում անվտանգության ապահովման քաղաքականության արժեքաբանությունը արմատապես փոխվել է՝ պայմանավորված տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների ցանցային կիրառմամբ:** Այս համատեքստում էլ մարդու անվտանգությունն հասկացությունը առաջարկում ենք կիրառել Արցախի Հանրապետության ճանաչման գործընթացում և կարծում ենք, որ այն արմատապես կփոխի քաղաքական դիսկուրսի բովանդակությունը: **«Մարդու անվտանգություն»** եզրույթը դիտարկվում է միջազգային անվտանգության դիսցիպլինում, որը հրապարակվել է 1994 թ.-ին ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի կողմից: Չեկոյցում ներկայացվել է մարդու անվտանգության 7 ոլորտ՝ տնտեսական, սննդի, առողջապահական, բնապահպանական, անձնական, համայնքային և քաղաքական անվտանգություն²⁰²: Այն նաև սահմանում է մարդու անվտանգության հիմնական վեց սպառնալիք՝ չկարգավորված բնակչության աճը, տնտեսական հնարավորությունների անհավասարությունները, միգրացիոն գործընթացները, շրջակա միջավայրի դեգրադացիան, թմրամիջոցների թրաֆիքինգը և միջազգային ահաբեկչությունը²⁰³:

Փաստորեն, **մարդու անվտանգությունը** ոչ միայն պետության արտաքին հարաբերությունների և ռազմական ուժի արդյունք է, այլև **կապված է նոր աշխարհակարգի տիրույթներում մակաձվող կյանքի որակի և ցանկացած հնարավոր սպառնալիքից մարդու ազատության ընկալման գաղափարի հետ:** Փոխներթափանցելիության նմանօրինակ իրողությունների պայմաններում պետությունները պետական, ազգային, հասարակության, մարդու, սոցիալականացված անհատի (անձի), ինչպես նաև տարածաշրջանային ու գլոբալ պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով իրենց քաղաքական օրակարգ են ներառել տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության հիմնախնդիրները, ազգի, քաղաքացիների, մարդու բարոյահոգեբանական, գիտելիքահեն պահանջմունքներով ձևավորված շահերի ներկայացումը: Նմանօրինակ ռազմավարությունը, ապահովելով պետության անվտանգությունը, հնարավորություն է տալիս մարդուն **ինքնադրսևորվել և ինքնաիրացվել** իր ծննդավայրում՝ **հուսաահեռու հողուհեռի կողմից սամաստուսած մանկապուլացիաներից:** Միաժամանակ դա հնարավորություն է տալիս քննադատաբար վերաբերել զանգվածային խուճապ հրահրող գործընթացներին (օրինակ՝ ԱՀ-ում անընդհատ պատերազմի վերսկսման սպառնալիքին, տեղեկատվական տիրույթում հակահայկական քարոզչության հզոր ալիքի շրջանառմանը), ընտրական և այլ տիպի քաղաքական ու հասարակական գործընթացների լեգիտիմությանը, ինչպես նաև հանրային համակեցություն կազմակերպող գործոնների վերլուծությանը: Ըստ Ջ.Հարթմանի (Jim Hartman)՝ ազգային անվտանգության ապահովման արժեքաբանությունը կերպարվել է, քանի որ աշխարհը վերջին հիսուն տարիներին էականորեն փոխվել է, և փոփոխությունների

²⁰² Oxford University Press. Published for the United Nations Development Programme (UNDP). Human Development Report 1994. New York. http://hdr.undp.org/sites/default/files/reports/255/hdr_1994_en_complete_nostats.pdf.

²⁰³ Նույն տեղում:

քայլերը պատմության մեջ վերջին տասնամյակներում իրենց հավասարը չունեն²⁰⁴: Մարդու ներգործությունը բնական ռեսուրսների և համակարգերի վրա, տեղեկատվության փոխանցման արագությունն ու լայնությունը, պետությունների, կառավարությունների փոխհարաբերությունը, ինչպես նաև անհամաչափ պատերազմներ վարելու փոքր խմբերի հնարավորությունը կամ պրոժոդրդավարական շարժումների ուղղորդումը (կառավարումը/առաջ մղումը) ակնհայտորեն ցույց են տալիս, որ մենք այլևս պարփակված համակարգում չենք ապրում, որտեղ մարդը կարող է կառավարել, վերահսկել իր սեփական ճակատագիրը մեծամասամբ բիրտ ուժի, տեխնիկայի և միակողմանի որոշումների կայացման միջոցով²⁰⁵:

Ավաճի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել նորովի քննարկելու մարդու արժեհամակարգի կառուցվածքում բարոյական հրամայականները և պատասխանատվության մակարդակը, որոնք անվտանգության ապահովման կարևոր պայմաններ են: Իսկ առանց կայուն անվտանգային համակարգի, մասնավորապես կերպափոխվող աշխարհին հատուկ արդիականացվող մեխանիզմների պետականությունն ու պետության գոյությունն առհասարակ դառնում են խոցելի: Հասարակության յուրաքանչյուր անդամ, պահանջելով ազատություն, պարտավոր է ճանաչել այլոց ազատությունը: Մարդկանց ի վերուստ տրված ազատությունների ապահովումը և հասարակության համընդհանուր շահի համար պարտավորությունների ստանձնումը քաղաքականության օրակարգային խնդիր է: Ըստ երևույթին ազատությունը կամքի դրսևորում է՝ պաշտպանելու մյուսներին ներքին ու արտաքին վտանգներից: Այսինքն՝ մեր կարծիքով մասնակցային ժողովրդավարությունը պարտավոր է լինել պաշտպանունակ և պետք է գործառնվի իրավական պետությունում: Հիմնվելով համերաշխության սկզբունքի և համակեցության կանոնների վրա՝ հանրային գիտակցության և քաղաքացիական համատեղ, պատասխանատու մասնակցությամբ հնարավոր է կանխել ցանցային ռիսկերը, որոնք մարդիկ անհատապես չեն կարողանա. անհրաժեշտ է ինքնուրույն քաղաքացիների՝ միասնաբար՝ փոխադարձության սկզբունքով հանդես գալը: Արձանագրենք, որ **հասարակությունը պատասխանատու է հանրային շահի և ազգային անվտանգության ապահովման գործընթացում:**

Սոցիետալ անվտանգության տեսաբան Փ. Յոնգը պնդում է, որ «մարդկությունը մուտք է գործել նոր դարաշրջան. հին միջազգային համակարգերը փլուզվել են, հին կարգախոսները ոչ ուսուցողական են, հին լուծումները՝ ոչ օգտակար»²⁰⁶: Ներկայիս դարակազմիկ կերպափոխումները, գլոբալացման հետևանքները, յուրաքանչյուրիս ազատությանն ուղղված սպառնալիքները առաջ են բերել պատասխանատվությամբ կենսունակ քաղաքականություն վարելու անհրաժեշտություն: Ավելի մեծ թվով գիտակից, կրթված ու քաղաքացիական աշխարհայացքով մարդկանց ներգրավումը, լայնամասշտաբ մասնակցության ապահովումը կարևոր նախապայմաններ են ինչպես կայուն անվտանգային միջավայրի, այնպես էլ մարդու անվտանգության ապահովման համար:

Այսօրվա հարահոս ու աններդաշնակ փոխհարաբերությունների դաշտում սերտորեն փոխկապակցված են ժողովրդավարությունը և ազգային անվտանգությունը: Ժողովրդավարությունը ամրապնդում է ազգային անվտանգության հասարակական հիմքը, որն էլ խթանում է պետական և ոչ պետական

²⁰⁴ **Hartman J.**, Sustainability and National Security. Sustainability and National Security, Center for Strategic Leadership, US Army War College, Carlisle, PA, January/2012, p. 22-23. [http://www.csl.army.mil/usacsl/publications/SustainabilityandNationalSecurity\(webversion\).pdf](http://www.csl.army.mil/usacsl/publications/SustainabilityandNationalSecurity(webversion).pdf).

²⁰⁵ Նույն տեղում:

²⁰⁶ **Hough P.**, “Understanding global security”, second edition. Routledge, Taylor & Francis Group, London and New York, 2008, p. 1-4.

դերակատարներին՝ ազգային անվտանգության կառուցվածքը ձևավորելու համար՝ ապահովելով մարդու անվտանգությունը: Ժողովրդավարական-քաղաքական մասնակցությունը, ներառելով քաղաքացիական հասարակության խմբերի լայնամասշտաբ մասնակցություն, կարող է նպաստել արտաքին քաղաքականության կոնսենսուսի ստեղծմանը: Մասնակցային ժողովրդավարությունն ըստ էության ենթադրում է **ինքնօգնության, փոխօգնության, պատասխանատվության, հավատի ու վստահության, արդարության ու հավասարության սկզբունքները**, որոնց հիմքով անվտանգային քաղաքականության և արտաքին քաղաքականության գծերը կարելի է զարգացնել՝ ապահովելով կայուն անվտանգային միջավայր: Այս համատեքստում նոր սոցիալական տարածությունների ձևավորումը հանգեցնում է այսպես կոչված **“non-war community”** առաջացմանը, այսինքն՝ այնպիսի հանրույթի, որը միավորվում է ոչ թե արտաքին սպառնալիքի առկայությամբ, այլ փոխկապակցվածությամբ, որը ջնջում է «մերոնց և օտարների» միջև սահմանները²⁰⁷:

Արտաքին միջավայրի տեսանկյունից նման միջավայրը պետք է լինի խաղաղ ու կայուն, որպեսզի պահպանվեն և բնականոն արդիականացման ճանապարհով զարգացվեն ազգային գործընթացները, ներառյալ քաղաքական զարգացումը: Երբ պետությունը ժողովրդավարական է, մեծանում է հավանականությունը, որ հարևանները նույնպես կսկսեն ընկալել իրենց՝ խաղաղաշտի նույն մակարդակի վրա գտնվելու փաստը, կծավորվի համագործակցություն՝ առնվազն զաղափարախոսությունների մակարդակով: Այս համատեքստում Բ. Բուզանը «անվտանգության ընդլայնված օրակարգը պետություններին հարկադրում է հրաժարվել ինքնաբավ անվտանգության քաղաքականությունից՝ ընդունելով հարևանների անվտանգության իրավունքը»²⁰⁸:

Տեղական միջավայրի տեսանկյունից ժողովրդավարության հաստատումը հանգեցրել է քաղաքացիական հասարակության տարբեր տարրերի առաջացմանը, որոնք ներառում են ՅԿ-ներ, համայնքային խմբեր, մասնագիտական կազմակերպությունների գործարար միություններ, հավատքի վրա հիմնված կազմակերպություններ, ինքնօգնության խմբեր, սոցիալական շարժումներ և շահերի պաշտպանության խմբեր: Քաղաքացիական հասարակության այդ խմբերը կարող են առանցքային դեր խաղալ հակամարտությունների ժողովրդավարական լուծումների կամ վեճերի ժողովրդավարական կարգավորման գործում: **Իրական մասնակցային ժողովրդավարության հայեցակարգում մարդու արժանապատվությունը գերակա է, և մարդկանց ճակատագրերն իրենց ձեռքում են:** Մասնակցային ժողովրդավարության ջատագովները ընդունում են ոչ պետական դերակատարների ներդրումը ազգային քաղաքականության ձևավորմանը և իրականացմանը, ներառյալ արտաքին քաղաքականությանը: Կառուցողական մասնակցության շրջանակում նրանք նպաստում են արտաքին քաղաքականության նպատակների համաձայնեցմանը՝ աջակցելով պետությանը քաղաքականության կառուցողական քննադատությամբ:

Այսօր մասնակցային ժողովրդավարությունը, մասնավորապես ժողովրդավարական մասնակցությունը և ազգային անվտանգությունը դարձել են արտաքին քաղաքականության կարևոր տարրեր: Ժողովրդավարական և անվտանգ տարածաշրջանային, միջազգային կառույցները կարևոր են ազգային անվտանգության, տարբեր երկրներում կայուն զարգացման և ժողովրդավարացման անկաշկանդ գործընթացների համար:

²⁰⁷ Морозов В. Е., Безопасность как форма политического. О секьюритизации и политизации. ПОЛИС, Н. 3 (123) 2011, с. 27-29.

²⁰⁸ Buzan B., ‘People, states and fear: the national security problem in international relations. G. B., Biddies LTD, 2001, p. 92-94.

Մասնակցային ժողովրդավարության և անվտանգության ապահովման կարևորությունը արտացոլում է համապարփակ անվտանգության սկզբունքի ճանաչումը, որն ընդունում է քաղաքական, տնտեսական ու սոցիալական իրողությունների միջև ուժեղ փոխկապակցումները: **Քաղաքական զարգացման, խաղաղության, կայունության, մասնակցային ժողովրդավարության բարձր որակի և մասշտաբայնության, բարգավաճման հասնելու համար բոլոր երկրները պետք է միանման կամք ցուցաբերեն և յուրաքանչյուր գործընթացում պետք է դրսևորեն բարձրագույն քաղաքական պարտավորություն, որը հիմք կհանդիսանա հաջողված քաղաքական համագործակցության համար:**

Մասնակցային ժողովրդավարության և ազգային անվտանգության բարդ փոխկապակցվածության համատեքստում ազգային անվտանգությունը կարելի է դիտարկել որպես առանձին անհատների (մարդու) անվտանգության համագումար: Այսօրինակ մարդակենտրոն հեռանկարը կարևոր է, երբ հաշվի ենք առնում այն, որ անվտանգության սպառնալիքները կարող են առաջանալ ազգի և՛ ներքին, և՛ արտաքին միջավայրից: Սակայն անվտանգությունը կարող է ընկալվել նաև համապարփակ և ոչ ստանդարտ՝ ներառելով աղբատությունը, սովը, առողջապահական խնդիրները, բնական աղետները և կրթական ցածր ցենզը՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք: Պատմության հոլովոյթում ծագումնաբանական առանձնահատկություններից անկախ՝ «...անվտանգության ընկալումը մնում է նույնը, այն է՝ ինքնապաշտպանություն և սպառնալիքի բացակայություն»²⁰⁹: Համաձայն Թ. Հոբսի՝ «...պետական քաղաքականության հիմնական խնդիրը միաժամանակ պետության, հասարակության և անձի անտանգության ապահովումն է»²¹⁰: Այս համատեքստում արժեքների կերպափոխման ու ձևավորման գործընթացում «...երիտասարդ սերունդը նպատակադրվում է հետինդուստրիալ հետևյալ արժեքների հաստատմանը՝ ինքնարտահայտում, անձնական ազատություն, սոցիալական հավասարություն, ինքնաիրացում, կյանքի որակի ու մակարդակի բարձրացում»²¹¹:

Հաշվի առնելով, որ քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարության զարգացման ողնաշարն է, պետք է փաստել, որ Նոր ժողովրդավարությունների համատեքստում մասնակցային ժողովրդավարությունը լավագույնս բնորոշում է ժողովրդավարության տեսական ու գործնական ազդեցությունը: Մասնակցային ժողովրդավարությունը, հիմնվելով պետական հեղինակության լիազորությունների և պարտականությունների իրականացման վրա որոշելու կամ ազդելու իրավունքին, նպաստում է ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարությանը, և որ քաղաքական որոշումների կայացման գործընթացում պետք է ապահովվի քաղաքացիական մասնակցությունը, ՀԿ-ների և, ընդհանրապես, քաղաքացիական հասարակության ակտիվ ու արդյունավետ մասնակցությունը:

«Նոր աշխարհակարգն իր աստիճանակարգային և ցանցային կառավարման տարածական հարթությունների բոլոր մակարդակներում մարտահրավերներ է նետել քաղաքական արդիականացման գործընթացում գտնվող ժողովուրդների ինքնությանը»²¹²: Նոր մարտահրավերների պայմաններում անհրաժեշտություն է առաջացել լրացնել Հանրապետության երրորդ այլիքի և Ֆուկույամայի պատմության վերջի տեսության շրջանակներում հետագա քաղաքական զարգացումները: Եթե

²⁰⁹ **Շահգեղյան Մ.**, «Ազգային անվտանգություն. հասկացությունը, եությունը, ձևավորումը, առանձնահատկությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003, էջ 5:

²¹⁰ **Wunderlich Jens-Uwe**, Warriar Meera. A dictionary of globalization. First edition, UK, Routledge, 2010, p. 252-255.

²¹¹ **Մարգարյան Մ. Գ.**, «Քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2015, էջ 53:

²¹² **Մարգարյան Մ. Մ.**, «Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2019 թ., էջ 5:

Հանրագրոնը²¹³ քաղաքական փոփոխությունների շրջանակում դիտարկում է ժողովրդավարացումը որպես հնարավարություն, ապա Ֆուկույաման²¹⁴ բացարձականացում է ժողովրդավարացման ազատականացման մոդելով ժողովրդավարացվելու հրամայականը: ԽՍՀՄ փլուզումից հետո երկու հետազոտողների հայեցակարգերն էլ սկսեցին քննադատվել, քանի որ նրանք մեխանիկորեն դրվեցին նորանկախացած երկրների մասնակցային ժողովրդավարության հիմքում: Այդ առումով ուշագրավ է անցումագետ Օ' Դոնելի տեսակետը, ըստ որի՝ «...կարևորվում էր քաղաքական փոփոխությունների ինստիտուցիոնալ հիմքերը՝ ժողովրդավարական արժեքների յուրացման առումով արժևորում է անձի սոցիալականացման հիմնախնդիրները»²¹⁵: Հետագայում Օ' Դոնելը, Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտերը, համատեղ համեմատելով ժողովրդավարական անցման մոդելը քաղաքական զարգացման գործընթացում, հաստատված ժողովրդավարական ինստիտուտների արդյունավետ գործունեության դիրքերից սկզբունքային են համարում քաղաքական փոփոխությունների երեք մակարդակ՝ **ազատականացում, քաղաքացիական հասարակության ձևավորում և արդար ընտրությունների անցկացում**: Այս առումով կարևորվում է դոկտոր, պրոֆեսոր Մ. Մարգարյանի դիտարկումը, որով կարևորվում են բազմաչափ անցումները, «...որոնց դեպքում պահանջվում է միաժամանակ լուծել և՛ սեփականության լեգիտիմության, և՛ ազգային ինքնության արդիականացման, և՛ քաղաքական էլիտայի բաց հավաքագրման, և՛ համագործակցության մշակույթի և՛ սոցիալական երկխոսության, և՛ քաղաքական դիսկուրսի հիմնախնդիրները»²¹⁶:

Վերոշարադրյալը ելակետ ունենալով՝ ներկայացնենք մեր հիպոթեզը մասնակցային ժողովրդավարությունը որպես մարդու անվտանգության ապահովման գործոն դիտարկելու առումով: **Քանի որ մասնակցային ժողովրդավարությունը ենթադրում է սոցիալական շերտերի ընդգրկվածություն և արժեշահային համակարգի ներկայացման իրավունք, հետևաբար այն համակարգում է հասարակությունում առկա սպասումները, ինչպես նաև անվտանգության ապահովման հնարավորությունները և ապագայի տեսլականը:**

Մասնակցային ժողովրդավարությունը մարդկանց ու նրանց իրավունքները ազգային գործընթացների հիմքում է դնում ներառելով իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային իրավունքները, ինչպես նաև խոսքի ազատության, կրոնի, հավատքի, հաղորդակցման, լրատվամիջոցներին առնչվելու, արտահայտելու իրենց դժգոհություններն ու խնդրանքները՝ առանց բռնության վախի: Ազատություն է տրվել մարդկությանը՝ ձերբազատելով ավտոկրատների և ապստամբների ճշումներից, դեգրադացումից, օտարումից՝ տալով մասնակցության լայն հնարավորություններ կյանքի բոլոր ոլորտներում և **քաղաքացիների լայնամասշտաբ մասնակցության ապահովում**: Արձանագրենք, որ **ժողովրդավարացման գործընթացները՝ աստիճանական, կայուն, գիտակցված, երկարաժամկետ տեսլականով և տեսանելի առաջընթացով, նպատակադրված ստեղծում են քաղաքական համագործակցության հնարավորություններ՝ հանրային շահի հիմքով**: Այս համոզմամբ էլ զարգացրել ենք դրույթ՝ **մասնակցային ժողովրդավարության և ազգային անվտանգության փոխհարաբերությունները՝ որպես պետականության**

²¹³ **Huntington S. P.**, The Third Wave: Democratization in the late Twentieth Century (1991). University of Oklahoma Press: Norman and London, P. 13.

²¹⁴ **Fukuyama F.**, The End of History and The Last Man (1992), Avon Books, New York Pix <http://www.democraziapura.altervista.org/wp-content/uploads/2015/01/1992-Fukuyama.pdf>.

²¹⁵ **Օ'Դոնել Գ.**, Делегативная демократия, https://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Article/donn_del.php (22.07.2019).

²¹⁶ **Մարգարյան Մ. Մ.**, «Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2019 թ., էջ 49:

ամրապնդման պայման: Վերոնշյալ կերպով զարգացող երկրներից Չինաստանը լավագույն օրինակն է, որը, հատկապես տնտեսական բյուրեղում այս մոտեցմամբ առաջնորդվելով, դարձել է համաշխարհային դասի տնտեսական ուժ: Ժողովրդավարական կայուն զարգացում ապահովելիս պետք է ապահովվի պետության կայունությունը՝ զերծ մնալով հնարավոր ցնցումներից, ճգնաժամներից:

«Ժողովրդավարական անցումային գործընթացը միայն մի փուլն է, որին պետք է հաջորդի ժողովրդավարական համախմբումը»²¹⁷: Համախմբումը հիմնային հասկացություն է՝ արտացոլելու նոր ռեժիմի կառույցների ու գործընթացների կայունությունը: Ընդհանուր չափանիշը, որով չափվում է իրավիճակի ժողովրդավարական համախմբման փուլի առկայությունը, էլիտաների ու զանգվածների կողմից ժողովրդավարության ընկալումն է որպես «միակ խաղը քաղաքում» (“the only game in town”)²¹⁸: Մարդկանց՝ ժողովրդավարության հետ կապված փորձի բացակայությունը և նոր կառույցների ճշգրտումը ներառում են անցումային գործընթացներով պայմանավորված մի շարք մարտահրավերներ²¹⁹: Այս համատեքստում կարևորվում է «մասնակցային անվտանգությունը», որտեղ քաղաքացիները պատասխանատու են հանրային անվտանգությունը պահպանելու համար՝ մասնակցելով հասարակական, պետական ծրագրերին: Ժողովրդավարական մասնակցությամբ համընդհանուր «ներգրավման» նպատակները խաթարում են քաղաքական գաղափարախոսությունները, որոնք պաշտպանում են քաղաքացիների իրավունքները, ազատությունները և պարտականությունները՝ հիմքում կրելով մասնակցային պատասխանատվություն:

Վերոշարադրյալը հանրագումարելով՝ փաստենք, որ մասնակցային ժողովրդավարությունը, որպես ազգային անվտանգության ապահովման, պետականության ամրապնդման, պահպանման պայման, բազմամակարդակ երևույթ է: Որպես այդպիսին՝ այն անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգի բաղադրիչ է, սակայն հարաբերական անկախության մեջ է գտնվում՝ պայմանավորված կենտրոն-ծայրամաս տարածական հարթություններում առկա մարդու անվտանգության հիմնախնդրի վերլուծության ու պատասխանատվության հետ: Այս համատեքստում ԱՀ-ի և ՀՀ-ի անվտանգության ռազմավարությունը անհրաժեշտ է մշակել՝ զարգացնելով մասնակցային ժողովրդավարության իրական բնույթը:

PARTICIPATORY DEMOCRACY AND NATIONAL SECURITY RELATIONS AS A CONDITION FOR STATEHOOD STRENGTHENING

MARINE MOVSISYAN

*National Security Service of the Republic of Armenia, Department of Political
Management and Public Policy of the Public Administration Academy of the RA,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to propose the approach that participatory democracy and national security are closely interlinked in the context of turbulent and disharmonious relationships, where the latter can be viewed as an individual security convention contributing to

²¹⁷ **Linz J. and Stepan A.**, Problem of Democratic Transitions and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe (1996) Johns Hopkins University Press Baltimore. Pp. 140-149.

²¹⁸ **Higley J. and Gunter R.**, eds. Elites and Democratic Consolidation in Latin America and Southern Europe (1992) Cambridge University Press, Cambridge. Pp. 112-116.

²¹⁹ **Thomas C. Bruneau**, Intelligence in New Democracies: The Challenge of Civilian Control (1999) Occasional Paper No. 5, The Center for Civil-Military Relations, Naval Post Graduate School, Monterey, California. Pp. 602-609

the strengthening of statehood. We discover the role of participatory democracy in the process of ensuring human security and provide a description of their interdependence, develop a provision of participatory democracy as a condition of national security without which the statehood is at stake.

The author argues that the involvement of conscious, educated, civic-minded people, the provision of large-scale participation is a prerequisite for both a stable and secure environment and for human safety assurance. Participatory democracy is part of an expanded security agenda, relatively independent due to the analysis and responsibility of the human security problem in the spatial dimensions of the center-periphery. In this context, the security strategy of the Republics of Artsakh and Armenia needs to be raised by developing the true nature of participatory democracy.

***Key words:** participatory democracy, human security, national security, strengthening of statehood, happy future, stability, competitiveness, national identity, value system, responsibility.*

ОТНОШЕНИЯ МЕЖДУ ПАРТИЦИПАТОРНОЙ ДЕМОКРАТИЕЙ И НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТЬЮ КАК УСЛОВИЕ ОБЕСПЕЧЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ

МАРИНЕ МОВСИСЯН

Национальная служба безопасности Республики Армения, аспирант кафедры политического управления и государственной политики Государственной академии управления Республики Армения, Ереван, Республика Армения

Цель этой статьи состоит в том, чтобы предложить и обосновать подход, согласно которому партиципаторная демократия и национальная безопасность тесно взаимосвязаны в контексте сегодняшних бурных и негармоничных отношений, где последнюю можно рассматривать как конференцию по безопасности отдельно взятых людей. Наша задача состоит в том, чтобы раскрыть роль партиципаторной демократии в процессе обеспечения национальной безопасности, дать описание их взаимозависимости, разработать положение партиципаторной демократии как условия обеспечения безопасности человека.

В исследовании сделан вывод о том, что партиципаторная демократия как условие национальной безопасности – многоуровневое явление. Как таковая она является составной частью расширенной повестки дня в области безопасности, но относительно независимой из-за анализа и ответственности за проблему безопасности человека в пространственных измерениях центральной периферии. В этом контексте необходимо разработать стратегию безопасности Республики Арцах и Республики Армения, развивая истинную природу партиципаторной демократии.

Принимая во внимание, что нынешние глобально-сетевые преобразования, угрозы нашей свободе привели к необходимости формулировать и проводить ответственную жизнеспособную политику, автор утверждает, что привлечение сознательных, образованных, цивилизованных людей, обеспечение ширококомасштабного участия является предпосылкой как для стабильной безопасной среды, так и для обеспечения безопасности человека.

***Ключевые слова:** демократия участия, безопасность человека, национальная безопасность, укрепление государственности, счастливое будущее, стабильность, конкурентоспособность, национальная идентичность, система ценностей, ответственность.*

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՄԻՋԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ (FREEDOM IN THE WORLD) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ ԶԱՅԱՍԱՆԻ ՈՒ ԱՐՑԱԽԻ ԶԱՄԱՐ*

ԼԻԼԻԹ ԶԻՉՈՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիա, քաղաքական
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
lilitch@mail.ru*

Հոդվածի նպատակն է ներկայացնել պետության կառավարման որակի վրա ապդող ցուցանիշները, վերլուծել «Freedom House» կազմակերպության կողմից հրապարակվող «Ազատության վիճակն աշխարհում» (Freedom in the World) պեկույցի տվյալները Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար:

Պետության կառավարման որակը անմիջականորեն կապված է կառավարող ընտրանու գործունեության որակի հետ: Պետական կառավարման որակի վրա ապդող ցուցանիշների համակարգի հստակեցումը հնարավորություն է տալիս կառավարող ընտրանուն մշակել ու իրականացնել այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք նպաստում են պետության դրական իմիջի ձևավորմանն ու արդիականացմանը: Այդ համատեքստում կարևորվում է նաև արդյունավետ պետական քաղաքականության մշակման ռազմավարական նպատակադրման անհրաժեշտությունը:

Հոդվածում օգտագործվել են համեմատության, տվյալների հավաքագրման ու վերլուծության մեթոդները:

Վերլուծության արդյունքում հանգել ենք ելրակացության, որ միջազգային ինդեքսների չափումները պայմանավորում են պետության իմիջի ձևավորումը և ապդում արդիականացման ուղու ընտրության վրա՝ դիտարկելով կառավարող ընտրանուն պետության իմիջի արդիականացման գլխավոր դերակատար:

Հիմնաբառեր՝ պետության իմիջ, արդիականացում, կառավարող ընտրանի, քաղաքական պարզացում, պետական կառավարման որակ, քաղաքական դերակատար, ապատություն, օրենքի գերակայություն:

Քաղաքական գործընթացների դերակատարները, պայմանավորված մրցակցող քաղաքական ուժերի փոխհարաբերություններով, պատասխանատու են պետական քաղաքականության մշակման ու իրականացման, ինչպես նաև պետության իմիջի արդիականացման համար: Պետության զարգացման տարբեր կողմերի որակի գնահատման համար մշակվել են որոշակի ինդեքսներ՝ զլրբալ մրցունակության, կոռումպացվածության, իրավունքի և ազատության, պետականության կայացման, ժողովրդավարության զարգացման: Սակայն հարց է առաջանում՝ գոյություն ունի՞ արդյոք առավել օբյեկտիվ, ամբողջական և այդ իմաստով համընդհանրական պետական քաղաքականության կառավարման չափանիշների հայեցակարգ: Ենթադրվում է, որ վերջինս հավասարապես կիրառելի պիտի լինի բոլոր պետություններում՝ ներառյալ ձախողված պետությունները (failed states): Այդ

* Հոդվածը ներկայացվել է 25.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

հայեցակարգը լայն իմաստով ենթադրում է պետության կենսունակություն. չի լինի պետություն, չի լինի իրավունք ու ազատություն, ժողովրդագրություն, շուկա, անվտանգություն, ժողովրդավարություն, ոչ էլ քաղաքացիական և համագործակցության մշակույթ: **Այդ առումով հաջողված պետության գործառնումը ներառում է երկու չափանիշ՝ Նախ պետությունը գոյաբանության առումով կենսունակ է և դիմակայում է ներքին, արտաքին մարտահրավերներին, երկրորդ՝ նրա գոյությունը պայմանավորող ցուցանիշները ապահովում են պետության և քաղաքացիների ինքնիշխանությունը:** Այդ ամենը որպես պետական քաղաքականության և պետական կառավարման համընդհանուր չափանիշ փոխհարաբերվում է սուբորդինացիայի մեջ գտնվող քաղաքական գործիչների անհատական գործունեության որակը գնահատող չափանիշների հետ: Գործունեության որակն իմաստաբանական ու արժեքաբանական զուգամիտումներով հնարավորություն է տալիս համակարգված ուսումնասիրելու ՀՀ և ԱՀ կառավարող ընտրանուն՝ որպես պետության իմիջի արդիականացման պատասխանատու: Այդ մոտեցումը հնարավորություն է տվել պետական կառավարման արդյունավետությունը, պետական կառավարման որակը, պետական կառավարման և պետական քաղաքականության գործառնումը դիտարկել որպես հոմանիշներ՝ հստակեցնելով հասարակության զարգացման աստիճանը և անհատի ինքնորոշման մակարդակը:

Պետական կառավարման որակի ցուցանիշների համակարգի մշակումը հնարավորություն կտա Նախագծելու պետության իմիջի արդիականացման Նպատակով իրականացվող գործողությունները՝ մշակելով գիտավերլուծական մոտեցումներ: Համապատասխան ձևով պետք է գնահատվի Նաև պետական կառավարման որակը և պետական քաղաքականության մշակման ռազմավարական Նպատակադրումը: Սակայն կերպարփոխվող հասարակություններում ռազմավարական Նպատակադրման հանրայնացման գործընթացը թույլ է, քանի որ գծային փոփոխությունների արդյունքում առաջացած անորոշությունները սոցիալական շերտերին օտարում են քաղաքականությունից: Մինչդեռ անցումից համախմբում գործընթացում հիմնախնդիրը լուծելի է միայն համընդհանուր չափանիշների սահմանման դեպքում: Այդպիսի մոտեցումը բացահայտում է պետության առաջնային գործառույթը՝ ինքապահպանություն, պետության կենսունակություն և պետականության կարևորագույն Նպատակային բանաձևի՝ «ժողովրդավարական պետությունը հանուն հանրային շահի և հանրության անվտանգության պետք է հզորանա»²²⁰: Հետևաբար պետական կառավարման որակը և պետական քաղաքականության մշակման ռազմավարական Նպատակադրումը, բարձրացնելով երկրի կենսունակությունը, հնարավորություն է տալիս խուսափելու սուբյեկտիվ ինդեքսավորումից:

Այդ համատեքստում որպես համընդհանուր չափանիշներ դիտարկվում են ժողովրդավարության որակը, շուկայական տնտեսության սոցիալական բնույթը, երկրի ներդրումային գրավչության մակարդակը, PR և GR նոր տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև կառավարող ընտրանու կողմից քաղաքական զարգացման ճգնաժամերից դուրս գալու ուղիների մշակման ռազմավարությունը: Այդ ամենը միասին վերցրած հնարավորություն է տալիս արդիականացնելու պետության իշխանական համակարգը և իշխանության իրականացման մշակույթը: Նշվածի շրջանակներում ձևավորվում, զարգանում և արդիականանում է պետության իմիջը, իսկ պետությունը, բարձրացնելով իր պատասխանատվության մակարդակը, սահմանում է անհատ դերակատարների համար խաղի կանոններ ու վարքագծի նորմեր:

²²⁰ Фукуяма Ф. Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке. М., 2006.

Շվեդիայի մենիշխան Կարլ XII (1697-1718թթ.) թագավորական բանակի սպա, գիտնական Ֆիլիպ Յոհան ֆոն Ստրալենբերգը (1676-1747 թթ.) 1730 թվականին հրապարակեց Նոր քարտեզ, որով առաջարկում էր Եվրոպայի ու Ասիայի սահմանազատումը պատմության մեջ առաջին անգամ կատարել Ուրալյան լեռնաշղթայով (Տե՛ս *Զարոնեյ №2*): «Հյուսիսային և արևելյան մասերը Եվրոպայի և Ասիայի»²⁶⁰ գրքում նա առաջարկեց երկու աշխարհամասերի սահմանն անցկացնել Հյուսիսային սառուցյալ օվկիանոսից սկիզբ առնող Ուրալյան լեռնաշղթայով. «Հյուսիսից Հյուսիսային սառուցյալ օվկիանոսից մինչև Տազովյան հրվանդան, Պեչորա և Օբ գետերի միջակայքով, 100 վերստ լայնությամբ դեպի հարավ մինչև 50⁰ հյուսիսային լայնություն, այսինքն՝ մինչև Սամարա գետի գլխամաս: Այնուհետև Ստրալենբերգը սահմանը տարավ Սամարա գետով՝ նույնպես լեռնոտ վայրերով մինչև Վոլգա, Վոլգայով ներքև՝ մինչև Կամիշենկա, դրանով էլ մինչև Դոնի կորություն, որտեղ հյուսիսային մասից թափվում է Իլովյա գետը՝ հյուսիսային լայնությամբ մոտավորապես 49 ½⁰ և, վերջապես, Դոնով ներքև»²⁶¹:

1736 թվին մեկ այլ գիտնական՝ ռուս պատմաբան, աշխարհագրագետ Վասիլի Տատիշևը (1686-1750թթ.), համաձայնվելով Ստրալենբերգի տեսակետին, Ուրալյան լեռնաշղթան համարեց իբրև Եվրոպան Ասիայից անջատող բնական անջրպետ. «հույժ պատշաճ և բնական դիրքով հարմար է սահմանը անցկացնել Վալգաչի նեղուցից Մեծ Պլետով (Ուրալյան լեռնաշղթայով - Ա. Չ.) և Յայկով (Ուրալ գետով - Գ. Ս.), ներքև՝ մինչև Կասպից ծովը, մինչև Կումա գետը կամ մինչև Տաուրյան լեռները (Կովկաս - Ա. Չ.), այստեղից էլ դեպի Դոնի գետաբերան, հետո Ազովի և Սև ծովեր, իսկ հետո՝ Կոստանտնուպոլի նեղուցով դեպի Միջերկրական ծով»²⁶²:

Վերոգրյալից հստակ երևում է, որ պատմության մեջ երբևէ Եվրոպան չի տարածվել Ուրալյան լեռնաշղթայից արևելք՝ Կումա-Մանիչյան ցածրությունից հարավ Ռուսաստանը դարձնելով անդրաշխարհամասային «**transcontinental country**» երկիր (Տե՛ս *Զարոնեյ №1, №3*): Հաջորդիվ կպարզաբանենք, որ մինչև ռուսական պետության

sur l'origine et les fondemens de l'inégalité parmi les homes. Bibliothèque publique de Genève. Q 114 https://www.e-rara.ch/gep_r/content/pageview/2247364, (<https://www.rousseauonline.ch/Text/discours-sur-l-origine-et-les-fondemens-de-l-inegalite-parmi-les-hommes.php>).

²⁵⁸ <http://www.kremlin.ru/acts/news/6666>.

²⁵⁹ Большая советская энциклопедия: (в 30 т.), гл. ред. А. М. Прохоров. 3-е изд. Том 9: Евклин-Ибсен. М.: Советская энциклопедия, 1972, 10 с.

²⁶⁰ Stralenberg Ph. I. «Das Nord- und Ostliche Teil von Europa und Asia», - Stockholm, 1730 (<https://archive.org/details/dasnordundostli00kruegoog/page/n8>).

²⁶¹ Чубарян А.О. Российский европеизм. М.: ОЛМА-ПРЕСС, 2005, 89 с.

²⁶² Նույն տեղում:

ընդլայնումը դեպի Կովկասյան լեռներ և դրանցից էլ հարավ, մինչև Արաքս գետի ավազան, Կովկասը երբեք չի եղել տարածաշրջան, այդ անունով հայտի է եղել միայն Սև ծովից Կասպից ձգվող լեռնաշղթան:

XIX դարի ռուսական նվաճումները կայսրության հարավում ներառեցին նոր տարածքներ, որոնք ենթարկվեցին վարչատարածքային բաժանումների ռուսական ավանդույթներին ու կանոններին:

1804-1813թթ.-ի ռուս-պարսկական պատերազմից հետո կնքված «24.10.1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրի»²⁶³ և 1826-1828թթ.-ի ռուս-պարսկական պատերազմի ռուսական հաղթանակը ամրագրող «10.02.1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի»²⁶⁴ արդյունքում ռուսական կայսրությունը ընդլայնվեց Կովկասյան լեռնաշղթայից հարավ՝ հասնելով մինչև Արաքս և Քուր գետերի ջրբաժան և նվաճելով ներկայիս Վրաստանի, Հայաստանի, Արցախի ու Ադրբեջանի տարածքները:

Հայաստանի կովկասացման լայնածավալ գործընթացը հայեցակարգային տեսքի բերվեց ռուս համհարզ, պրոֆեսոր Ս.Մ. Լիտվինովի (1844-1900թթ.) նախաձեռնությամբ: Նրա «Ռուսաստանի ծայրամասերը: Կովկաս. ռազմաաշխարհագրական ակնարկներ» գիրքը (1884 թ.) դարձավ Արաքսից հյուսիս ընկած Արևելյան Հայաստանի, Վիրքի, Շիրվանի տարածքները, դարձան Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս ընկած վարչատարածքային միավորի հարավային շարունակությունը. «Կովկասյան լեռների գլխավոր շղթան, որը հարավարևելյան կողմում ձգվում է 1372 վերստ (190 մղոն), ծովերի միջակայքում, իրենից ներկայացնում է հրաշալի միանմանություն և կիսում է Կովկասը երկու մասի՝ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի...»²⁶⁵:

Պատմական տեսանկյունից ոչ մի տարօրինակ բան չկա, որ Ռուսաստանն իր հայեցողությամբ է վերաձևակերպել իր կողմից նվաճված նոր տարածքների վարչատարածքային կառուցվածքը՝ ելնելով ոչ թե այդ տարածքների վրա ապրող բնիկների պատմական արդարության տեսանկյունից, այլ իր իսկ կայսրության ռազմաքաղաքական շահերից: Սակայն տարօրինակ ու անտրամաբանական է այն, որ Հայաստանի Հանրապետությունը, լինելով միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, չի խմբագրում իր արբետիպերը՝ ելնելով Հայաստանի ազգային շահերից և հայ ազգի պատմական հիշողություններից ու արդարության ակնկալիքներից (Տե՛ս *Զարոնեկ N°4*):

Բացի բարոյահոգեբանական հանգամանքից առկա է նաև ձևախեղված պատմության առողջացման խնդիր: Գաղտնիք չէ, որ մեր թշնամիները վաղուց շրջանառում են հայերի «եկվոր» լինելու հիպոթեզը՝ Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում փորձելով զրկել հայկական կողմին բնիկների կարգավիճակով հանդես գալու բարոյական առավելությունից: Հայկական եթնոտիպը՝ մարդաբանական տեսակը, մերձավորարևելյան է, հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, ուստի ներկայիս Հայաստանի ու Արցախի տարածքները Կովկասյան տարածաշրջանի մեջ դիտարկելը խթանում է թշնամի երկրների հակահայ քարոզչությանը: Այստեղից հարց է ծագում՝ «Ի՞նչ գործ ունի մերձավորարևելյան ազգը Կովկասում, որը կովկասցիների բնօրրանն է» (Տե՛ս *Զարոնեկ N°6*):

Վերոնշյալ հայատյաց քարոզչության վտանգավոր ազդեցությունը չեզոքացնելու համար վաղուց ժամանակն է ամեն ինչ իրենց անունով կոչելը: Օր առաջ պետք է

²⁶³ http://hrono.ru/dokum/1800dok/18131012ru_per.php.

²⁶⁴ <http://www.hist.msu.ru/ER/Etext/FOREIGN/turkman.htm>.

²⁶⁵ Литвинов М. «Окраины России. Кавказ: военно-географические очерки. Издание второе, исправленное. Дозволено цензурой С.-Петербург, 29-го марта 1884 г. СПб: Тип. Департамента делов, 1884, 52 с.

հրաժարվել օտար պետության վարչատարածքային միավորի անվանումից, և Հայաստանը տեղորոշել հազարամյակների ընթացքում հայտնի, սակայն առժամանակ մոռացված «Հայկական լեռնաշխարհ» տեղանունով (Տե՛ս *Զարոնեյ N°4*):

Հայաստանը դեռևս Յերոդոտեսի (մ.թ.ա 484 – մ.թ.ա. 425) և Պոմպոնիոս Մելայի (15-60 թթ.) (Տե՛ս *Զարոնեյ N°7, N°8*) ժամանակներից մինչև 18-րդ դարի գրեթե բոլոր քարտեզներում²⁶⁶ ընկալվել է որպես Ասիայում տեղակայված մերձավորարևելյան երկիր:

ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) «**Central Intelligence Agency**» պաշտոնական կայքում Հայաստանը նկարագրված է որպես ասիական երկիր. «Հայաստանը տեղակայված է Հարավարևմտյան Ասիայում, Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Նկատառում. Հայաստանը ինքն իրեն համարում է Եվրոպայի մաս. աշխարհաքաղաքականորեն այն կարելի է դասակարգել որպես Եվրոպայի կամ Մերձավոր Արևելքի կամ միաժամանակ երկուսի տիրույթում»²⁶⁷:

Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ մուրրության աղբյուրը Հայաստանում է, որտեղ հայերն իրենց կոչում են կովկասցի, իսկ իրենց երկիրը համարում են կովկասյան: Բոլորը ճանաչում են իրենց շրջապատող աշխարհն այնպես, ինչպես եղել է ու այնպես, ինչպես կա, իսկ Հայաստանում դեռևս շատ են հնացած, արդիականությունը կորցրած, հետադիմական, ծայրամասային, հաճախ վտանգավոր գաղափարները սնող մտքերը:

«Ճանաչիր և մեզ ճանաչելուց առաջ իմացիր, որ աշխարհի վրա արևի առաջին ծագումից ի վեր, մեր Աղվանից և Ալանների սահմանից մինչև հարավ՝ դեպի մեր Կորճկահայքը, Տորոս լեռան ստորոտից մինչև արևմուտք՝ դեպի մեծ Անտիոք, Միջերկրական ծովի ափը, այդ վայրից էլ հյուսիս, մինչև Մամաստիա, այնտեղից էլ մինչև արևմուտք, դեպի Կիլիկիա՝ մեր աշխարհը Երրորդ Հայքի, Կիլիկիայից հյուսիս, միջև Լեւո Պոնտոս ու Սև ծովի ափը, այնտեղից էլ հյուսիս-արևելք մինչև մեր Տայք աշխարհը, Տայքից էլ արևելք, մինչև մեր Աղվանք աշխարհը և ալանների դուռը: Արևմուտքում, Միջերկրական ծովի ափից և Մեծ Անտիոքից մինչև արևելք, դեպի Տավրոսյան լեռնաշղթայի վերջը, մինչև գիլանի հարևանությամբ Կասպից ծովի ափը: Հարավում Տավրոս լեռան ստորոտից մինչև հյուսիս՝ որ սուլթանիոսից արևելք է, մինչև ալանների սահմանները, և այն, որ Հարավում է փոքր փոքր, հազբակաից մինչև մեր Տայք աշխարհը, և արևմտյան կողմում մեծ Անտիոքից դեպի հյուսիս-արևմուտք, մինչև Լեւո Պոնտոս, Լեւո Պոնտոսից էլ դեպի հյուսիս-արևելք մինչև մեր Տայք աշխարհը, Տայքից էլ արևելք, մինչև ալանների սահմանը՝ Կասպից ծովի ափը, այս տիրույթում գտնվող ամբողջ աշխարհը իր բոլոր լեռներով, բլուրներով, անտառներով, ծովերով, լճերով, գետերով, աղբյուրներով, քաղաքներով, գավառներով, դաշտերով, գյուղերով, տներով, բնակատեղերով և այն ամբողջով, որ կա երկրի վրա ու ծովերի խորքում, գետերում, աղբյուրներում, բնության մեջ գոյություն ունեցող, մարդկանցով և անասուն կենդանիներով, գազաններով, սողուններով, թռչուններով և ամբողջ երկրի կենդանիներով և անտառի բերքով կար և մնում է Հայաստան անունով երկիր, որտեղ բնակվում են Հայի բնությամբ մարդիկ: Հայոց երկրի երեսին և ծովերի խորքում գոյություն ունեցող անասուն կենդանիները միասնաբար հանդիսանում են ՀԱՅ ԱԶԳԻ ժառանգությունը, երկրից ոչ ավելին ոչ էլ գեթ մեկ քայլ պակաս: Պահպանեցի տունը հայոց համաձայն Հայաստանի օրենքների մինչև հավիտյան»²⁶⁸:


«Որոգայթ փառաց» (1773)
Շահամիր Շահամիրյան (1723-1798)

266

David Rumsey map collection. Cartography associates.

<https://www.davidrumsey.com/view/atlases#world-atlases-1570-1800>.267 <https://www.cia.gov/library/publications/resources/the-world-factbook/fields/276.html>.268 <http://www.digilib.am/book/195/199/2611/?siteMapItem=authors&lang=en>.

Քարտեզ N°1



Քարտեզ N°2

	<p>Ա Ստրալենբերգի սահման, որը կիրառվում է միջազգային աշխարհագրական միության կողմից Ուրալյան լեռնաշղթայով Էմբա գետ, այնուհետև Կասպից ծովով-Կումա-Մանիչյան ցածրություն (Կումա, Մանիչ և Ներքին Դոն գետեր)</p> <p>Բ Ուրալյան լեռնաշղթայով Ուրալ գետ</p> <p>Գ Յուզգորյան նեղուցի հրվանդանով Պայ-Յոյ լեռներ, այնուհետև Ուրալյան լեռնաշղթայով Ուրալ գետ</p> <p>Դ Ուրալյան լեռնաշղթայով դեպի Ղազախստանի պետական սահման, մինչև Կասպիցի ջրամբար</p> <p>Ե Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային ստորոտ</p> <p>Զ Մեծ Կովկասյան լեռնաշղթայի ջրբաժանի գիծ (ժամանակակից հիմնական բնորոշում)</p> <p>Է Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտ</p> <p>Ը Ռիոն և Զուր գետերի հոսանքով</p> <p>Թ Փոքր Կովկասի լեռնաշղթայով մինչև Զուր և Արաքս գետեր</p> <p>Ժ ՍՍՀՄ նախկին սահման</p>
--	---

Զարտեպ N^o3

**Եվրոպա և Ասիա աշխարհամասերի
ժամանակակից սահմանները արևելքում և
հարավ-արևելքում**



**ՌԴ Գյուևիսկովկասյան
դաշնային շրջան**



Զարտեպ N^o4



Հայկական Լեռնաշխարհ



Հայերը ըստ «Աշխարհացոյց»-ի



Պատմական փաստերի ներգալիտման օրինակ

Քարտեչ N°7



Աշխարհը ըստ Չերոդոտեսի (մ.թ.ա. 450)

Քարտեչ N°8



Պոմպոնիոս Մելայի հին աշխարհի քարտեչը

**LIVING SPACE:
ARMENIAN GEOGRAPHICAL POLICY AND MATTERS OF
TERRITORIAL GOOD GOVERNANCE**

GURGEN SIMONYAN

*Institute of Philosophy and Law of NAS RA,
PhD in Political Sciences,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to substantiate the value and symbolic connection of political institutions with the living space of the nation. Nations, acting from a position of strength, have constantly forced others to accept their own perceptions of geography. Independent nations attached themselves to geographic and physical phenomena subject to such symbols (names, signs, myths) that forever affirmed both the cultural and the political and legal belonging of these spaces to civilizations claiming them.

Our task is to present the problem not as a subject of a historical, scientific-research debate, but as one of the instruments of self-identification of a competitive nation.

In the course of the study, both historical-comparative and semantic methods of analysis were applied.

The study concluded that it is completely natural that different civilizations have different, often conflicting, relations that are tangential to the same geographical space. Competitive is the community that, in the context of historical justice, is able to edit past events and adjust the concepts, which underlie their civilizational identity.

The foregoing provides an opportunity for a developing and competitive nation, due to historical facts and hard work of civil society, to deny other epics about these spaces proposed by others, depriving them of rational, historical and legal foundations and forming legitimate claims in relation to these physical, mental and virtual spaces.

Key words: *Living space, strategy, interests, message, security, self-government, ideology, communication, classification, center.*

ЖИЗНЕННОЕ ПРОСТРАНСТВО: ГЕОГРАФИЧЕСКАЯ ПОЛИТИКА АРМЕНИИ И ВОПРОСЫ ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ ТЕРРИТОРИЕЙ

ГУРГЕН СИМОНЯН

*Институт философии, социологии и права НАН РА,
кандидат политических наук,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – обосновать ценностную и символическую связь политических институтов с жизненным пространством нации. Нации, выступая с позиции силы, постоянно принуждали других принимать собственное восприятие географии. Свободные нации придавали подвластным себе географическим, физическим явлениям такие символы (наименования, знаки, мифы), которые навсегда утверждали как культурную, так и политико-правовую принадлежность этих пространств соответствующим цивилизациям.

Наша задача – представить проблему не в качестве предмета исторического, научно-исследовательского спора, а как один из инструментов самоидентификации конкурентоспособной нации.

В ходе исследования были применены как историко-сравнительные, так и семантические методы анализа.

В результате исследования мы пришли к выводу о закономерности того, что разные цивилизации имеют разные, часто взаимоисключающие подходы к одному и тому же географическому пространству. Конкурентоспособно то сообщество, которое в контексте исторической справедливости в состоянии редактировать прошедшие события и корректировать понятия, которые лежат в основе их цивилизационной идентичности.

Вышесказанное предоставляет возможность развивающейся и конкурентоспособной нации, благодаря историческим фактам и упорным трудам гражданского общества, отрицать предложенные другими мифы об этих пространствах, лишая их рациональных, историко-правовых основ и формируя легитимные притязания по отношению к этим физическим, ментальным и виртуальным пространствам.

Ключевые слова: *жизненное пространство, стратегия, интересы, послание, безопасность, самоуправление, идеология, коммуникация, классификация, центр.*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ*

ԵՂԳԱՐ ԶԱԼԱՆԹԱՐՅԱԼ

ԵՂՅ Միջապգային հարաբերությունների ֆակուլտետի
դեկանի տեղակալ, հանրային կառավարման ամբիոնի դոցենտ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgar.kalantaryan@ysu.am

Հողվածի նպատակն է արժևորել արդի պայմաններին համահունչ կազմակերպությունը կառավարելու ձևերը, կազմակերպչական կառուցվածքները և կազմակերպության գործունեության արդյունավետության խնդիրները: Որպես ենթանպատակ՝ կարելի է առանձնացնել վերոնշյալ խնդիրների կարգավորմանն ուղղված համապատասխան լուծումներ տալը: Մեր խնդիրն է նաև հստակեցնել հանրային կազմակերպությունների բարեփոխումների «որակյալ կառավարման» համակարգի մշակման գործընթացը, որն իրականացվում է ենթակառուցվածքներ ստեղծելու, հանրային ծառայությունների որակը բարելավելու միջոցով:

Հետապոտության իրականացման հիմքում ընկած են ինչպես համագիտական (ինդուկցիա, դեդուկցիա, համեմատություն), այնպես էլ հատուկ մեթոդներ և հետապոտական գործիքակազմ:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ վարգացած կառավարման փորձ ունեցող երկրները ձգտում են իրենց համար առաջնային դիրքեր ապահովել համաշխարհային շուկայում, որին հասնելու նպատակով ստեղծվում են կազմակերպությունների կառավարման նոր ձևեր: Հաշվի առնելով այն իրողությունը, որ կազմակերպությունների կառուցվածքային բոլոր նոր ձևերն ու բաղադրիչներն ուղղված են կազմակերպության արդյունավետ գործունեության ապահովմանը, հեղինակը հիմնավորում է, որ կառուցվածքային կառուցակարգերի միջոցով է հնարավոր ապահովել արդյունավետություն:

Հիմնաբառեր՝ կազմակերպություն, արդյունավետություն, կառուցվածքային բաղադրիչ, կառավարման ձևեր, հիերարխիա, կազմակերպության տարրեր, շահույթ, իրավական նորմեր, միօրինականացում:

Արդի կառավարման մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ժամանակին համահունչ վերաձևակերպել կազմակերպությունների կառավարման ձևերը, խնդիրները, գործունեությունը՝ տալով համապատասխան լուծումներ: Ժամանակակից աշխարհը հաճախ դիտարկվում է կազմակերպությունների ամբողջություն, որոնք այս կամ այն նպատակին հասնելու կամ որևէ խնդիր լուծելու համար միավորում են մարդկանց, խմբերի, պետությունների: Չարագացած երկրներում սկսվում է հանրային կազմակերպությունների բարեփոխումների՝ «որակյալ կառավարման» համակարգի մշակման գործընթաց, որն իրականացվում է ենթակառուցվածքներ ստեղծելու, հանրային ծառայությունների որակը բարելավելու միջոցով: Այդ երկրները փորձում են իրենց համար ապահովել առաջնային դիրքեր համաշխարհային շուկայում, որին հասնելու նպատակով ստեղծվում են կազմակերպությունների կառավարման նոր ձևեր:

* Հողվածը ներկայացվել է 15.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Կազմակերպությունները ստեղծվում են մարդկանց տարբեր պահանջները բավարարելու համար և այդ պատճառով ունեն տարբեր նպատակներ, չափեր, կառուցվածք և այլ առանձնահատկություններ: Վերջիններիս խնդիրների ու նպատակների բազմազանությունը հանգեցնում է այն բանին, որ դրանց կառավարման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ, մեթոդներ ու եղանակներ, որոնք կկարողանան ապահովել աշխատողների համատեղ գործունեությունը²⁶⁹:

Հասարակության պահանջմունքների, սպասումների, շահերի փոփոխման արդյունքում փոփոխվում են նաև կազմակերպությունների կառուցվածքային տարրերը, մեթոդները, ձևերը, տեսակները: Ներկայումս կազմակերպություններն ունեն շատ ավելի բարդ կառուցվածք, քան մի քանի տասնամյակ առաջ: Դա է պատճառը, որ կազմակերպությունների զարգացմանը զուգընթաց կարևորվեց կառավարման ձևերի, մեթոդների գնահատումը, ինչը նպաստում է աշխատակիցների ու ղեկավարների մոտիվացիայի բարձրացմանը, հետևաբար նաև արտադրանքի որակի և արդյունավետ գործունեության ապահովմանը: Պատահական չէ, որ նշված հիմնախնդիրների գիտակցումը հիմք հանդիսացավ ստեղծելու գիտահետազոտական կենտրոններ, որոնց ուսումնասիրությունները կարևոր դերակատարություն ունեցան:

Կազմակերպությունը բարդ, բազմանպատակ համակարգ է՝ սերտորեն պայմանավորված միջավայրով, որը վերջինիս վրա ազդում է բազմակողմանիորեն: Վերջինիս տարրերն են՝ անհատները, նպատակները, միջոցները, ռեսուրսները (բյուջե), սոցիալական կազմը, տեխնոլոգիան, կառուցվածքը և այլն: *Կազմակերպությունը մեկ կամ մի քանի նպատակների իրականացման համար միավորված մարդկանց խումբ է*: Յուրաքանչյուր կազմակերպության գործունեություն պահանջում է կառավարում, առանց որի անհնար են ոչ միայն դրա արդյունավետ գործունեությունն ու զարգացումը, այլև գոյատևումը: Կառավարմանն առնչվում են բազմաթիվ մարդկանց հետաքրքրություններն ինչպես հենց կազմակերպության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Այդ ամենը միտված է բարելավելու հասարակության բարեկեցությունը, զերծ պահելու նրան արտաքին ու ներքին բացասական ազդակներից²⁷⁰: Դա այն վայրն է, որտեղ մարդիկ կառուցում են հարաբերություններ ու փոխազդում են միմյանց: Կազմակերպությունը սոցիալական կատեգորիա է և միաժամանակ նպատակներին հասնելու միջոց²⁷¹:

Կազմակերպությունների կառավարման անհրաժեշտությունն առաջացել է դեռևս մարդկային հասարակության ձևավորման հնագույն շրջանում, երբ համայնքների առաջնորդները կազմակերպում էին համատեղ աշխատանքներ, այնուհետև բաշխում արդյունքները: Ստրկատիրական, ֆեոդալական, սոցիալական հասարակարգերում և պատմության զարգացման այլ փուլերում հանդիպում ենք կառավարման տարբեր մոտեցումների: Տեխնոլոգիական զարգացումը, խոշոր մեքենաշինական արտադրությունը և հատկապես սեփականատիրոջից կառավարման գործառույթի տարանջատումն առաջ քաշեց մասնագիտական նոր խմբի՝ «մենեջերների» ձևավորման անհրաժեշտությունը:

Տեսականորեն կազմակերպությունների կառավարման զարգացումը կարելի է բաժանել երկու փուլի.

1. *Կառավարման նախահիմք* - ներառում է երկարատև պատմական շրջան՝ հնագույն ժամանակներից մինչ 17-18-րդ դարերը: Հնագույն հասարակություններում այն արտահայտվել է հոգևորականների դասից ֆունկցիոներների առանձնացմամբ, որոնք իրականացնում էին հարկահավաք, վերահսկում էին բյուջեն և այլն: Այդ փուլում

²⁶⁹ Տե՛ս **Քալանթարյան Է. Ա.** *Հանրային կազմակերպությունների տեսություն*, Ուս. ձեռնարկ: ԵՊՀ հրատ., 2016թ. էջ 6:

²⁷⁰ Տե՛ս **Քալանթարյան Է. Ա.** նշվ. աշխ., էջ 9:

²⁷¹ Տե՛ս **Ferrante M. e Zan S.** *Che cos'è un'organizzazione?*, in *Il fenomeno organizzativo*, Capitolo primo, Roma, Carocci, 1994, էջ 11-47:

առաջացավ նաև գրավոր խոսքը, որը հնարավորություն տվեց քրմերին՝ վարելու հաշվետվություններ, գրագրություններ:

2. *Վաղ և գիտական մենեջմենթի առաջացում* - ներառում է 17-18-րդ դարերի ինդուստրիալ հեղափոխությունը, արդյունաբերության զարգացումը, բաժնետիրական կապիտալի զարգացումը, սեփականատերերի կառավարումից տարանջատվելը և այլն: Այդ փուլի առանձնահատկությունն էլ այն էր, որ ղեկավար-սեփականատիրոջը փոխարինելու եկան բազմաթիվ բաժնետերերը, արտադրության աճը, կապիտալի շրջանառության արագացումը, բանկային կառավարումը: Փոփոխությունների այդ շրջանակը պահանջում էր հատուկ մասնագիտական հմտություններ, գիտելիքներ: Որքան ընդլայնվում էին գործառույթները, այնքան մեծանում էր մասնագիտական խմբերի ներգրավվածությունը կազմակերպության կառավարման համակարգ²⁷²:

Կազմակերպությունների կառավարման տեսական գաղափարների զարգացումը հիմք հանդիսացավ կազմակերպությունների կառավարման ամբողջական ուսմունքի ձևավորման համար: Գիտական մենեջմենթի հիմնադիր Ֆ.Թեյլորը նշում էր, որ մենեջմենթը գիտություն է, որի հիմքում օրենքներ, նորմեր ու կանոններ են: Նրա առաջարկած մոտեցման համաձայն՝ անհրաժեշտ է ռացիոնալիզացնել արտադրությունը, վերահսկել աշխատանքը և աշխատակիցներին, ինչի արդյունքում ընկերության շահույթը կավելանա, կբարձրանա աշխատակիցների աշխատավարձը, կավելանա բաժնետերերի շահույթը և այլն: Այսինքն՝ աշխատանքի ռացիոնալիզացման, աշխատանքի վերահսկողականության բարձրացման արդյունքում կբարձրանա կազմակերպության հեղինակությունը, ինչն իր հերթին կնպաստի նոր ներդրումների և արտադրանքի որակի ու քանակի ավելացմանը²⁷³:

Կառավարման հմտությունների միջոցով կազմակերպությունը անկազմակերպ ամբոխին վերափոխում է արդյունավետ, նպատակաուղղված արտադրող խմբի: Այսպիսի սահմանումներից ելնելով՝ կազմակերպությունների կառավարումը կարելի է բնութագրել կազմակերպման, պլանավորման, կառավարման, վերահսկողության գործընթաց, որի նպատակը կազմակերպության նպատակների իրականացումն է: Այդ նպատակները կարող են լինել կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ: Ըստ կազմակերպության նպատակների, գործառույթների, կառուցվածքի՝ առանձնանում են բարդ ու պարզ, ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպություններ:

Արդյունավետ գործունեության համար կազմակերպություններում ստեղծվում են ստորաբաժանումներ, որոնք ապահովում են տարբեր ոլորտների գործունեությունը, մշակվում է կազմակերպությունների կանոնադրություն, ներքին իրավական նորմեր, որոնցում սահմանվում են ստորաբաժանումների, առանձին աշխատակիցների, կառավարիչների իրավասություններն ու պարտականությունները: Զանի որ յուրաքանչյուր ընկերությունում հաղորդակցության միջոցները, որոշումների ընդունման կարգը տարբեր են, հետևաբար դրանք ամրագրվում են յուրաքանչյուր կազմակերպության կանոնադրությունում:

Անկախ ամեն ինչից՝ բոլոր կազմակերպություններն ունեն ընդհանուր հատկանիշներ.

- աշխատանքի ուղղահայաց ու հորիզոնական բաժանում,
- համապատասխան ռեսուրսների առկայություն (մարդկային, տնտեսական, ֆինանսական, տեխնոլոգիական, տեղեկատվական, սոցիալական և այլն),
- արտադրանքի ստեղծում ու իրացում,
- գործունեության պայմաններ,

²⁷² Տե՛ս *Дорофеев В.Д., Шмелева А.Н., Шестопал Н.Ю. Менеджмент*, Москва, «Инфра-М» 1996г., էջ 11:

²⁷³ Ավելի մանրամասն տե՛ս գիտական կառավարման Թեյլորյան սկզբունքները հոլման մեջ // [http://www.treccani.it/enciclopedia/taylorismo_\(Enciclopedia-delle-scienze-sociali\)](http://www.treccani.it/enciclopedia/taylorismo_(Enciclopedia-delle-scienze-sociali)):

– գործունեության արդյունավետության կախվածությունը ներքին միջավայրի փոփոխականներից (տեխնոլոգիա, խնդիրներ, կադրեր և այլն):

Յուրաքանչյուր կազմակերպության առջև պետք է դրված լինեն որոշակի նպատակներ, որոնց հասնելուն է միտված տվյալ կազմակերպության գործունեությունը: Կազմակերպության գործունեությունը սոցիալական, արտադրական, հոգեբանական և այլ միմյանց փոխկապակցված գործառույթների համալիր է: Իր գործառույթների հստակ իրականացումից է կախված խմբի աշխատանքի արդյունավետությունը²⁷⁴:

Կառուցվածքը յուրաքանչյուր կազմակերպության կարևորագույն տարրերից է, որով կարող է և պայմանավորված լինել վերջինիս գործունեության արդյունավետությունը: Այդ տարրը հանդես է գալիս *հիերարխիկ կառուցվածքով*, որում յուրաքանչյուր օբյեկտ հանդիսանում է առավել մեծ տարրի բաղկացուցիչ և իր հերթին պարունակում է առավել փոքր մասնիկներ: Կազմակերպությունների միջև ստեղծվում են հաղորդակցային պատնեշներ, և այստեղ մենեջմենթի հիմնական խնդիրն է դառնում վերացնել այդ պատնեշները: Կազմակերպության կառուցվածքային ձևերից հաջորդը *աշխատանքի նախագծումն* է. սա պահանջում է բացահայտել, թե աշխատանքի կատարման համար աշխատակիցների ինչպիսի որակավորում է պահանջվում, տարբեր ստորաբաժանումներ աշխատանքի որ հատվածն են կատարում, ինչպիսի արտաքին գործոններ են ազդեցություն ունենում վերջիններիս վրա և այլն: Կազմակերպության կառուցվածքի ձևավորման մեջ հաջորդ քայլը *կառուցվածքային բաժանումն* է: Այն իրենից ենթադրում է ստորաբաժանումների ստեղծումը, յուրաքանչյուրի համապատասխան իրավունքների ու պարտականությունների բաշխումը, պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը և այլն²⁷⁵:

Կազմակերպություններն, ըստ իրենց կառուցվածքի, կարող են լինել *կայուն* ու *ճկուն*: *Կայունությունը* հատկապես վերաբերում է ուշադրության կենտրոնացմանը ֆինանսների ղեկավարման և «վերևից ներքև» վերահսկողությանը: *Ճկունությունը* կարևորում է փոփոխություններին դիմակայելու և հարմարվելու ունակությունը: *Ճկունությունը* և դեպի արտաքին աշխարհ կենտրոնացումը հանգեցնում են բաց համակարգի և արագ զարգացման: Կազմակերպությունն այսպիսի արդյունքի հասնում է արտաքին միջավայրի հետ բարենպաստ հարաբերությունների հաստատման, արտաքին աշխարհի փոփոխություններին արագ արձագանքման շնորհիվ: Կան կազմակերպություններ, որոնք ուշադրությունը կենտրոնացնում են մարդկային փոփոխարարությունների վրա, այն իրականացնում է ներքին գործունեության վրա կենտրոնացման և ճկուն համակարգի միջոցով: Այս դեպքում մենեջմենթի վերահսկողության հիմնական սուբյեկտներն են բարոյականությունը, կրթության հնարավորությունը, որակավորման բարձրացումը և այլն²⁷⁶:

Կազմակերպությունների կառուցվածքային առանձնահատկությունները յուրովի է մեկնաբանել կանադացի հայտնի վերլուծաբան Յ. Մինցբերգը: Նա ծնվել է 1939թ.-ի սեպտեմբերի 2-ին Մոնրեալում (Կանադա), բավականին հարուստ ընտանիքում: Նրա հորը պատկանել է մի փոքր, բայց հաջողակ ընկերություն, որը մասնագիտացել է կանանց զգեստների պատրաստման գործում: Դպրոցն ավարտելուց հետո Յենրին ընդունվել է Մաթգիլ համալսարան և ստացել բակալավրի աստիճան մեխանիկական ճարտարագիտության գծով: Համալսարանից հետո Մինցբերգը հասկացավ, որ չի ուզում աշխատել հոր ձեռնարկությունում, և այժմ արդեն պրոֆեսոր Մինցբերգը դասավանդում է Նոյն համալսարանի կառավարման ֆակուլտետում (Desautels Faculty Կառավարում): Մինձբերգն ունի 150-ից ավելի հոդվածներ և 15

²⁷⁴ Шипунов В.Г. *Основы управленческой деятельности*, М.: "Высшая шк.", 2001, էջ 12-28:

²⁷⁵ Виханский О.С., Наумов А.Н., *Менеджмент*, М., "Гардарики", 2006, էջ 25:

²⁷⁶ Дафт Р. *Теория организации*, М., "Зарубежный учебник", 2006, էջ 85:

գիրք, որոնցից մի քանիսը դարձել են աշխարհի տարբեր երկրներում կառավարման ուսանողների համար անփոխարինելի դասագրքեր: 1994թ.-ին հրատարակած իր ամենահայտնի գրքում «Կերելքը և ռազմավարական պլանավորման անկումը» («Strategic Planning of the Rise and Fall»), քննադատում է ժամանակակից ռազմավարական պլանավորման մի շարք սովորական գործելակերպեր և կազմակերպական կառուցվածքներ: 2004թ.-ին պրոֆեսորը հրատարակել է «Փնտրված մենեջերներ» գիրքը, որում հավատում է, որ կառավարման ժամանակակից դասավանդումը սխալ ուղիով է գնում: Մինցբերգի կարծիքով թե՛ կառավարիչները, թե՛ ամբողջ հասարակությունը ընդունում են մենեջմենթը ավելի շուտ որպես գիտություն և որպես մասնագիտություն, որը կարելի է սովորել համալսարանի պատերի ներքո: Ըստ այդմ, պրոֆեսորի կարծիքով ներկայումս կարելի է առանձնացնել մենեջմենթի երկու սահմանում:


1. *Որպես արվեստ*, որին տիրապետել առանց փորձի անհնար է: Միայն փորձի շնորհիվ կարելի է հասկանալ կառավարչական գործընթացի անսահման նրբությունները, սեփական գիտելիքները գործածել տրված առաջադրանքի ենթատեքստում:

2. *Որպես գիտություն*, որի հիմքը կարելի է ուսանել, և որը կարելի է գործածել:

Մոնրեալի Մաքգիլի համալսարանում մենեջմենթի պրոֆեսոր Յ.Մինցբերգը առանձնացրել է կազմակերպությունների կառուցվածքային բաժանման մի ձևաչափ, որում կազմակերպությունները, կախված ձևից, պարբերաշրջանից, կարող են ունենալ տարբեր կառուցվածքային տարրեր. օրինակ՝ առավել փոքր կազմակերպություններում հիմնական օղակ են հասարակ աշխատավորները, որոնց վերապահված են բազային հիմնական աշխատանքներն ու ծառայությունների մատուցումը, այսինքն՝ *գործառական միջուկը*: Կախված կազմակերպության ձևից՝ գրեթե միշտ կազմակերպական գործունեության վերահսկման անհրաժեշտություն է առաջանում, որն իր վրա է կրում կազմակերպության *վերին օղակը*: Այդ երկու կարևոր սուբյեկտների միջև ստեղծվում է *միջին օղակ*, որը կապ է ապահովում արտադրության ոլորտում մասնագիտացած անձանց և այդ աշխատանքը վերահսկողների միջև: Երբ գործ ունենք խոշոր արտադրություն իրականացնող կազմակերպությունների հետ, ապա այդ դեպքում անհրաժեշտություն է առաջանում հատուկ մասնագիտական կարողություններով օժտված անհատների, որոնք կարող են լինել ինժեներները, վերլուծաբանները, տեխնիկական և հատուկ մասնագիտացում ունեցող սուբյեկտները, որոնք էլ մաս են կազմում նոր կառուցվածքային տարրի՝ *տեխնոկառուցվածքի*, որոնք հիմնականում ունեն բարձրագույն որակավորում և համարվում են կազմակերպության «ուղեղը»: Կազմակերպություններում օժանդակ խնդիրների լուծման, անվտանգության, մաքրության և այլ տեխնիկական խնդիրներ լուծելու համար ստեղծվում է մի մարմին, որը աշխատանքային գործընթացի շրջանակներում և այդ շրջանակներից դուրս աջակցություն է ցուցաբերում կազմակերպությանը՝ ձևավորելով կազմակերպության *օժանդակ աշխատակազմը*²⁷⁷ (տե՛ս նկ. 1):

²⁷⁷ Տե՛ս **u Минцберг Г.** *Структура в кулаке: создание эффективной организации*, Питер, "Издательский дом", 2004, стр. 7-13, <http://pqm-online.com/assets/files/lib/books/minzberg.pdf>:

Նկ. 1. Կազմակերպությունների կառուցվածքային բաղադրիչները



Կազմակերպությունների կառուցվածքային այս բոլոր բաղադրիչներից յուրաքանչյուրն իրականացնում է հստակ սահմանված գործառնություններ, որոնք միմյանցից տարբերվում են իրենց առանձնահատկություններով և գործունեության ոլորտներով: Կախված կազմակերպության ձևից՝ այդ բաղադրիչների առկայությունը խիստ կարևոր է կազմակերպության անխափան ու արդյունավետ գործունեության համար, չնայած կան կազմակերպություններ, որտեղ ամենևին էլ պարտադիր չէ բոլոր բաղադրիչների առկայությունը, միևնույն ժամանակ կարող է իրականացվել արդյունավետ գործունեություն:

Ամփոփելով եզրահանգենք, որ կազմակերպությունն իրենից ներկայացնում է բարդ օրգանիզմ, որը, կախված կառուցվածքային ձևից, կարող է ունենալ տարբերվող նպատակներ: Այդ նպատակներն իրականացվում են զանազան մեթոդներով՝ փոխադարձ համաձայնության, ուղղակի վերահսկողության, աշխատանքային գործընթացների ու արտադրանքի, գիտելիքների ու հմտությունների միօրինականացման և այլն: Այդ ամենի համադրման արդյունքում կարևորվեց կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքը՝ որպես միջնորդավորված ընտրության արդյունք, որով կատարվում է աշխատանքի բաժանում համակարգված կազմակերպական համակարգի ներսում: Կազմակերպական կառուցվածքի հիմնական ասպեկտներն են՝

- աշխատանքի բաժանումը (տարբերակում),
- հրամանն ու կարգավորումը (կառուցում),
- համակարգումը և վերահսկումը (իևտեգրում),
- առաջնորդությունը (ձգտում և մոտիվացիա):

Կազմակերպական կառուցվածքն իրենից ներկայացնում է կազմակերպության “spina dorsale”-ն (կազմակերպության պատմությունը), և համարվում է գործունեության զարգացման պտուղը:

Այդ ամենի համատեքստում կարևորվում է կազմակերպության արդյունավետ համակարգման լավագույն կառուցակարգերի ներդրումը, որն էլ ուղղակիորեն կարող է նպաստել կազմակերպությունների կառավարման հետագա վերելքին:

ORGANIZATIONAL STRUCTURE AND EFFECTIVENESS OF ORGANIZATIONS**EDGAR KALANTARYAN**

*PhD in Political Sciences, Associate Professor,
Lecturer at Chair of Public Administration,
Deputy Dean at the faculty of International Relations*

The purpose of the article is to evaluate the contemporary ways of management in the organizations, organizational structures and problems of organizational effectiveness. The sub-goal of research research is possibility to identify the appropriate solutions to the abovementioned issues. Our task is also the clarification of the public organization reforms, the process of developing a "qualitative management", which is being implemented through the creation of infrastructures and improving the quality of public services.

In the course of the study, both scientific (induction, deduction, comparison) and special methods and research tools.

As a result of the study, it is concluded that the developed countries seek to secure their primary and dominant role in the global market by creating new forms of organization and management tools. Taking into account the fact that all the new organizational structures and components of the organization are aimed at ensuring the effective functioning of the organization, the author reaffirms that through structural mechanisms it is possible to ensure efficiency.

Key words: *organization, effectiveness, structural component, forms of management, hierarchy, elements of organization, profit, legal norms, homogeneity.*

ОРГАНИЗАЦИОННАЯ СТРУКТУРА И ЭФФЕКТИВНОСТЬ ОРГАНИЗАЦИЙ**ЭДГАР КАЛАНТАРЯН**

*Кандидат политических наук, доцент,
преподаватель кафедры государственного управления,
заместитель декана факультета международных отношений ЕГУ*

Целью статьи является оценка современных способов управления в организациях, организационных структур и проблемы организационной эффективности. Особенной целью исследования является возможность определения соответствующих решений вышеуказанных проблем. Нашей задачей является также прояснение реформ общественных организаций, процесс развития «качественного управления», который реализуется посредством создания инфраструктур и повышения качества государственных услуг.

В ходе исследования используются как общенаучные (индукция, дедукция, сравнение) так и специфические научные методы, и инструменты исследования.

В результате исследования автором сделан вывод, что развитые страны стремятся обеспечить свою первичную и доминирующую роль на мировом рынке путем создания новых форм организации и инструментов управления. Принимая во внимание тот факт, что все новые организационные структуры и компоненты организации направлены на обеспечение эффективного функционирования организации, автор подтверждает, что с помощью структурных механизмов можно обеспечить эффективную деятельность организации.

Ключевые слова: *организация, эффективность, структурный компонент, формы управления, иерархия, элементы организации, прибыль, юридические нормы, однородность.*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

ԱՐՄԱՆ ԱՍՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարան,
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
arman.asryan@yahoo.com*


Հոդվածի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետությունում համատիրությունների գործունեությունը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ՀՀ բնակարանային ֆոնդի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդրի համատեքստում համատիրությունների գործունեության բարելավման անհրաժեշտությամբ: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ հետապնդել համատիրությունների գործունեության տարաբնույթ խոչընդոտները, իրականացնել դրանց պատճառային դասակարգում և առաջադրել համապատասխան լուծումներ:

Համակարգային և իրավական մեթոդներով սահմանվում է համատիրությունը՝ որպես բազմաբնակարան շենքերի բնակելի շինությունների սեփականատերերի կամավոր միություն, ներկայացվում են այդ ինստիտուտի առանցքային նպատակներն ու ընձեռած հնարավորությունները: Վերլուծական ու համեմատական մեթոդների կիրառությամբ ՀՀ-ում համատիրությունների արդյունավետ գործունեության խոչընդոտները դասակարգվում են երեք խմբի՝ ա) կազմակերպա-կառավարչական, որի մեջ մտնում են համատիրությունների պարտականությունների թերակատարումները, դրանց գործունեության հաշվետվողականության ու թափանցիկության ցածր մակարդակը և ղեկավար անձնակազմերի շրջանում կառավարչական հմտությունների բացակայությունը, բ) ֆինանսատնտեսական, որի մեջ մտնում են համատիրությունների ֆինանսական պլանավորման թերացումները, վճարների հավաքագրման ցածր արդյունավետությունը և կուտակված դեֆիտորական պարտքերը, վարչական անձնակազմերի աշխատավարձերին ուղղվող ծախսերի բարձր մակարդակն ու վերստուգիչ հանձնաժողովների անգործությունը, գ) սոցիալ-հոգեբանական, որի մեջ մտնում են սեփականատերերի շրջանում նախաձեռնողականության բացակայությունը և նրանց ու համատիրությունների միջև փոխըմբռնման պակասը: Առաջարկվում են համատիրությունների գործունեության խոչընդոտները հաղթահարելուն ուղղված համակարգային լուծումներ:

Հիմնաբառեր՝ համատիրություն, բնակելի շինությունների սեփականատերերի ժողով, բազմաբնակարան շենքի կառավարում, ընդհանուր բաժնային սեփականություն, բազմաբնակարան շենքի տարեկան բյուջե, համատիրության կանոնադրություն, պարտադիր նորմեր:

** Հոդվածը ներկայացվել է 27.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:*


ՀՀ տնտեսության զարգացումը սերտորեն կապված է քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման հետ, ինչն էլ մեծապես կախված է բնակարանային-կոմունալ հատվածի զարգացման մակարդակից և քաղաքացիների կենսապայմանների բարելավումից: Վերոնշյալ երկու միջանկյալ նպատակներն իրենց հերթին կախված են բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդի պահպանման և օգտագործման արդյունավետության մեծացումից, կոմունալ ծառայությունների մատուցման որակի բարձրացումից, առկա ենթակառուցվածքների թարմացումից և բնակֆոնդի կառավարման համակարգում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումից: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ շինության սեփականատերերը պարտավոր են իրականացնել ընդհանուր բաժնային սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքները (այսուհետ՝ պարտադիր նորմեր), որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի հիման վրա ՀՀ կառավարությունը 2007թ. հոկտեմբերի 4-ի համար 1161-Ն որոշմամբ սահմանել է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը: Դրանց մեջ ներառվում են հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման և այլ միջոցառումներ: Օրենքը սահմանում է նաև, որ շինության բոլոր սեփականատերերը



Գծապատկեր 1. Բազմաբնակարան շենքերի քանակն ըստ կառավարման մարմինների (աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ)

պարտավոր են տվյալ նորմերի պահպանման համար կատարել համապատասխան վճարումներ կամ իրենց ուժերով ու միջոցներով իրականացնել պարտադիր նորմերի պահանջները: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածներով սահմանվում է բազմաբնակարան շենքերի սեփականատերերի՝ ընդհանուր բաժնային գույքի պարտադիր նորմերի մասով կառավարման երեք եղանակ՝ «Համատիրություն», «Լիազորագրային կառավարում» և «Հավատարմագրային կառավարում»: Այն համայնքներում, որտեղ չեն գործում վերոնշյալ կառավարման ձևերից և ոչ մեկը, բազմաբնակարան շենքի կառավարումն, ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ կետերի, իրականացվում է տվյալ համայնքի ղեկավարի կողմից: Հարկ է նշել, որ ՀՀ մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակարանների գերակշիռ մասը կառավարվում է համայնքների, իսկ Երևանում՝ համատիրությունների, հավատարմագրային կառավարիչների կամ լիազորագրային կառավարիչների կողմից (տե՛ս Գծապատկեր 1 և Գծապատկեր 2):

Համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է, որը հիմնադրվում է բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով²⁷⁸: Ներկայումս համատիրությունների



Գծապատկեր 2. Համատիրությունների, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բնակարանների քանակը (աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ)

²⁷⁸ Տե՛ս «Համատիրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

գործունեությունը կարգավորող Նորմերը տեղ են գտել երեք օրենքներում՝ Քաղաքացիական օրենսգրքի 222-224-րդ հոդվածներում, «Համատիրությունների մասին» օրենքում և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում:

Համատիրության գործունեության հիմնական նպատակներն են՝

1. բազմաբնակարան բնակելի շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը,
2. պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական և այլ իրավասու մարմիններում բնակարանների սեփականատերերի ընդհանուր շահերի ներկայացումը և պաշտպանությունը:

Համատիրության՝ որպես բազմաբնակարան շենքի կառավարման եղանակի ընձեռած հիմնական հնարավորություններն են.

1. Բազմաբնակարան շենքի բնակարանների սեփականատերերի շահերի պաշտպանությունը: Համատիրությունը բազմաբնակարան շենքերի բնակելի շինությունների սեփականատերերին միավորվելու հնարավորություն է ընձեռում՝ համակարգելու ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման, շահագործման, տնօրինման, օգտագործման և օտարման հետ կապված աշխատանքները: Համատիրությունների ղեկավար մարմնի նպատակները համընկնում են բնակելի շինությունների սեփականատերերի շահերին:

2. Բազմաբնակարան շենքի կառավարմանը վերաբերող հարցերին անմիջական մասնակցությունը: Համատիրությունը թույլ է տալիս բազմաբնակարան շենքի կառավարմամբ շահագրգռված բոլոր սեփականատերերին անմիջականորեն մասնակցել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարմանը վերաբերող որոշումների կայացմանը:

3. Բազմաբնակարան շենք(եր)ի կառավարչի (կառավարող կազմակերպության) քաղաքականության վրա ներազդելու հնարավորությունը: Բազմաբնակարան շենքերի բնակելի շինությունների սեփականատերերը, միավորվելով և կազմելով համատիրություններ, հնարավորություն են ստանում ներազդելու կառավարչի ընտրության և նրա վարած քաղաքականության վրա: Բնակարանների սեփականատերերի (կամ նրանց կողմից հանդես եկող լիազորված բնակիչների) ամբողջությունը կարող է ինքնուրույն ընտրել կառավարչին և հետևել նրա կողմից իրականացվող աշխատանքների որակին: Եթե կառավարչի գործունեությունը չի բավարարում համատիրության անդամներին (յուրաքանչյուր սեփականատեր կարող է դառնալ համատիրության անդամ), համատիրությունը կարող է խզել գործող կառավարչի հետ պայմանագիրը և ներգրավել այնպիսի կառավարչի (կառավարող կազմակերպության), որի կողմից իրականացված աշխատանքների որակը և գինը համապատասխանում են համատիրության անդամների պատկերացումներին ու շահերին: Ի հավելումս՝ համատիրությունը կարող է խուսափել կառավարչի նշանակումից և դրա փոխարեն վարձել իր սեփական վարչական աշխատակազմը:

4. Բազմաբնակարան շենքի սեփականատերերի ծախսերի հնարավոր կրճատումը: Համաձայն «Համատիրությունների մասին» օրենքի՝ համատիրությունն ունի օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված քաղաքացիական այնպիսի իրավունքներ, որոնք անհրաժեշտ են գործունեություն իրականացնելու համար, եթե այն չի հակասում կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկային ու նպատակներին: Համատիրության գործունեության ընթացքում առաջացած միջոցներն օգտագործվում են կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Այստեղից բխում է, որ համատիրության բյուջե հավելյալ մուտքեր ապահովելու նպատակով համատիրությունը կարող է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքները

(սկուղները, ձեղնահարկերը և այլն) վարձակալական հիմունքներով տրամադրել երրորդ կողմի: Ի հավելումս՝ բազմաբնակարան շենքի արտաքին պատերը կարող են օգտագործվել գովազդի (տարատեսակ գովազդային վահանակների տեղադրման) նպատակով²⁷⁹: Հարկ է նշել սակայն, որ սույն կետում նշված քայլերը հնարավոր են միայն նշված գույքը որպես համատիրության սեփականություն գրանցելու կամ բնակելի շինությունների սեփականատերերի ժողովի հաստատման պարագայում: Համատիրության բոլոր եկամուտներն ուղղվում են ընդհանուր ծախսերի մարմանը (կամ կարող են ուղղվել տարբեր ֆոնդերի, եթե կանոնադրությամբ այդպես է պահանջվում): Հաշվարկային տարում համատիրության բյուջեի հավելյալ (չծախսված) միջոցները մնում են համատիրության հաշվին և ծախսվում բազմաբնակարան շենքի հետագա կարիքների համար:

5. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող մասերի վերանորոգման աշխատանքների ինքնուրույն պլանավորումը: Համատիրության ընդհանուր ժողովի ընթացքում հաստատվում է անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների ցանկը, որոնք պետք է իրականացվեն՝ համաձայն առաջնահերթության:

6. Բազմաբնակարան շենքում աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման հնարավորությունը²⁸⁰: Համատիրությունը վերահսկում է ինչպես կապալառուների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը, այնպես էլ դրանց շրջանակներում իրականացվող աշխատանքների որակը և ժամկետները: Գործնականում դա նշանակում է, որ սեփականատերերն իրենք հնարավորություն ունեն վերահսկելու մատուցվող ծառայությունների որակը:

7. Բազմաբնակարան շենքի բնակարանների շուկայական արժեքի բարձրացման հնարավորությունը²⁸¹: Համատիրությունը կարող է էապես մեծացնել կառավարվող շենքի բնակելի և ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հատվածների շուկայական արժեքը: Բարեկարգ, լավ պահպանված բակերի ապահովումը, մանկական խաղահրապարակների ու սիգամարզերի կառուցումը, ինտերկոմների և անվտանգության աշխատակիցների առկայությունը, վերանորոգված վերելակները, մաքուր սանիտուրներն էապես բարձրացնում են ինչպես բազմաբնակարան շենքի բնակիչների բարեկեցության մակարդակը, այնպես էլ շենքի բնակարանների շուկայական արժեքը:

Համատիրությունը քաղաքացիական հասարակության ձևավորման սկզբնական քիչն է: Այն բազմաբնակարան շենքերում, որտեղ լիարժեք գործում են համատիրություններ, զգալիորեն բարձր է բնակիչների (սեփականատերերի) իրավագիտակցության մակարդակը և պատասխանատվության զգացումը: Բացի այդ, համատիրության անդամները գիտակցում են, որ ընդհանուր բաժնային սեփականության վնասման դեպքում նրանք ստիպված են լինելու միջոցներ հատկացնել վերանորոգման նպատակով, ուստի ավելի հետևողական են դառնում: Համատիրությունների զարգացումը հնարավորություն է տալիս մարդկանց շրջանում արմատավորելու իսկական, սրտացավ սեփականատիրոջ ու բնակչի մոդելը, որն իր հերթին երկրում քաղաքացիական հասարակության զարգացման կարևոր նախադրյալներից է:

²⁷⁹ **Алферина, О. Н.**, Развитие товариществ собственников жилья в России: проблемы и перспективы, Современные проблемы науки и образования, (6), 2014, стр. 541.

²⁸⁰ **Валиев, Ш. З., Гавриленко, И. Г.**, Товарищество собственников жилья: проблемы и перспективы развития. Вестник Томского государственного университета, (350), 2011, стр.146-151.

²⁸¹ **United Nations**, "Guidelines on condominium ownership of housing for countries in transition", New York 2014, p. 10.

Համատիրությունների աշխատանքների խոչընդոտները ՀՀ-ում: ՀՀ-ում համատիրությունների՝ որպես բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կառավարչական, կազմակերպական և ֆինանսատնտեսական գործունեության ամբողջական տարեկան շրջափուլը, սկսած տարեկան բյուջեի մշակումից մինչև դրա կատարումը և հաշվետվությունների ներկայացումը, խախտված է, իրականացվում է թերի և ոչ ամբողջական: Այդ ամենի պատճառները բազմազան են՝ բազմաբնակարան շենքերի բնակիչների հետաքրքրվածության ու վստահության ցածր մակարդակ, ներքին ու արտաքին թույլ վերահսկողություն, սոցիալական հաշվետվողականության բացակայություն, ֆինանսավորման աղբյուրների անկայունություն, ոչ արհեստավարժ կառավարում և այլն: Հայաստանում համատիրությունների՝ որպես բազմաբնակարան շենքերի կառավարման մարմնի կայացումն արգելակող խոչընդոտները դասակարգվում են կազմակերպ-կառավարչական, ֆինանսատնտեսական և սոցիալ-հոգեբանական խմբերի (տե՛ս Գծապատկեր 3):

Կազմակերպ-կառավարչական խոչընդոտներ: Համատիրությունների գործունեության առանցքային կազմակերպ-կառավարչական խոչընդոտներն են.


1. Համատիրության գործառույթների ոչ լիարժեք իրականացումը

Խնդիրների այս ենթախմբի մեջ մտնում են՝

- ոչ բավարար մարդկային ու նյութական ռեսուրսների առկայությունը,
- բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հատվածների՝ բնակարանային ֆոնդի շահագործման կանոններին ու պարտադիր նորմերին համապատասխանող բարեկարգ վիճակի բերելը,
- բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքագրման և վավերացման աշխատանքների թերակատարումը²⁸²:

Համատիրությունները պարտաճանաչ ու կանոնավոր կերպով չեն իրականացնում ՀՀ կառավարության 2007թ.-ի հոկտեմբերի 4-ի համար 1161-Ն որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեսողական զննումները: Համատիրությունները պետք է տարեկան առնվազն երկու անգամ տեսողական զննում անցկացնեն և արդյունքները գրանցեն համապատասխան մատյանում, ինչն էլ պիտի հիմք հանդիսանա հետագա վերանորոգման աշխատանքների համար: Սակայն իրականությունն այլ է. բազմաբնակարան շենքերում առաջացած խնդիրների ու նորմերի չպահպանման մասին տեղեկատվությունը համատիրությունները ստանում են միայն բնակիչների ահազանգերի շնորհիվ: Այդ ամենի արդյունքում պարտադիր նորմերի բազմաթիվ պահանջներ բնակիչների անտեղյակության արդյունքում անտեսվում են համատիրությունների կողմից:

²⁸² «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ, Կոտայքի, Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի քաղաքային համայնքների բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների գործունեության մոնիտորինգի զեկույց, Արմվան, 2018, էջեր 9-10:



Գծապատկեր 3. Համատիրությունների գործունեության խոչընդոտները ՀՀ-ում

2. Համատիրության անդամների կառավարչական հստությունների ցածր մակարդակը/բացակայությունը

ՀՀ-ում համատիրությունների գերակշիռ մասի անդամները չունեն բազմաբնակարան բնակելի շենք(եր)ի պատշաճ կառավարման համար անհրաժեշտ հստություններ, ինչը հանգեցնում է ոչ գրագետ կառավարման և գործունեության թերացումների: Հարկ է նշել, որ մինչ այժմ երբևէ չեն կազմակերպվել համատիրությունների անդամների կամ ղեկավար անձնակազմերի կառավարչական կարողությունների զարգացմանն ուղղված լայնամասշտաբ նախաձեռնություններ:

3. Համատիրությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականությանը վերաբերող թերացումները

Համատիրությունների գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման խնդիրը դիտարկելիս հարկ է հաշվի առնել հարցի երկկողմ բնույթը. մի կողմից՝ համատիրությունները շահագրգռված չեն հաշվետվողականությամբ, մյուս կողմից՝ բազմաբնակարան շենքերի բնակելի շինությունների սեփականատերերը պահանջկոտ ու հետևողական չեն: Այս տեսակետից կարևոր է նաև արդյունավետ տեղեկատվական մեխանիզմի բացակայությունը, որի միջոցով համատիրությունները կարող են իրենց գործունեության արդյունքները հասանելի դարձնել սեփականատերերին:

Ֆինանսատնտեսական խոչընդոտներ: Համատիրությունների գործունեության առանցքային ֆինանսատնտեսական խոչընդոտներն են՝

1. Ֆինանսական պլանավորման բացակայությունը կամ թերացումները.

Համատիրությունների մի մասը հաշվետու ժամանակահատվածի համար պարտադիր նորմերի պահպանման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների հստակ պլանավորում ու նախահաշիվներ չունի՝ չնայած այն հանգամանքին, որ «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը պահանջում է բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեի հաստատում ընդհանուր ժողովի կողմից: Ներկայումս համատիրությունները ծախսերն իրականացնում են՝ ելնելով ընթացիկ անհրաժեշտություններից: Հավաքագրված եկամուտներն ուղղվում են կառավարիչների գնահատմամբ առաջնահերթ համարված խնդիրների լուծմանը, իսկ պարտադիր նորմերի կատարման ապահովման համար անհրաժեշտ կապիտալ ու ընթացիկ ծախսերի իրականացումը ֆինանսների ոչ բավարար ապահովվածության պայմաններում մնում է երկրորդ պլանում²⁸³:

Համատիրությունները ֆինանսական պլանավորման փուլում չեն իրականացնում ծախսերի դասակարգում: Արդյունքում շենքի պատշաճ կառավարման համատեքստում բացակայում են հստակ սահմանված առաջնահերթությունները: Որոշ դեպքերում սահմանափակ ֆինանսական միջոցների բաշխումը կատարվում է՝ ելնելով տեղային տեսանելի խնդիրների լուծման և/կամ ընդհանուր բաժնային սեփականության պահպանության պարտադիր նորմերի իրականացման կարճաժամկետ առաջնահերթություններից, ինչը կարող է շենքի պահպանման ավելի երկարատև կարիքները դնել խտրական վիճակի մեջ:

2. Համատիրություններում եկամուտների հավաքագրման ցածր մակարդակը

²⁸³ ««Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ, Համատիրությունների կառավարման արդյունավետությունը Գյումրիում, Գյումրի, 2016, էջեր 64-72:

Արդյունքում **0.1 միավորով համաթվի նվազումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Պակիստանում մարդկային կապիտալի (HCI), շրջագայությունների, զբոսաշրջության մրցունակության (TTCI) որոշտում տեղի ունեցած բացասական զարգացումներով, որի արդյունքում ամբողջությամբ չէզոքացվել է բնապահպանության արդյունավետության (EPI), բարգավաճման (LP) և մարդկային զարգացման (HDI) համաթվերի բարելավմամբ պայմանավորված դրական զարգացումները (տե՛ս աղյուսակ 20.):

Աղյուսակ 20. Պակիստանի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
EPI	LPI/L	HDI	SPI	Basel	FSI	GTCI	GEI	GII	GGGI	GCI	FOTF	DB	DI	EF	LPI	CPI	GPI	TTCI	HCI
0,06	0,05	0,04	0,03	0,03	0,02	0,02	0,01	0,01	0	-0,01	-0,01	-0,02	-0,02	-0,03	-0,03	-0,04	-0,07	-0,07	-0,1

Թեև համաթվի վարկանիշային միավորը վատթարացել է, սակայն Պակիստանի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում անփոփոխ է մնացել (տե՛ս աղյուսակ 19.): Մասնավորապես, 2012-2017 թվականներին Պակիստանը զբաղեցնում է կայուն 66-րդ տեղը 66 երկրների շարքում:

Կամբոջա (4-րդ կլաստեր): Կամբոջայի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին գրեթե անփոփոխ է մնացել՝ **2012 թվականի 1.2-ի փոխարեն 2017 թվականին կազմելով ընդամենը 1.3** (տե՛ս աղյուսակ 21.):

Աղյուսակ 21. Կամբոջա: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	62	1,2
2013	63	1,2
2014	64	1,1
2015	64	1,2
2016	64	1,3
2017	63	1,3

Արդյունքում **0.1 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Կամբոջայում ահաբեկչության ֆինանսավորման (Basel AML), գեներալին անհավասարության համաշխարհային համաթվի (GGGI) և գործարար ակտիվության (DB) բարելավմամբ, որը ամբողջությամբ չեզոքացրել է բնապահպանության արդյունավետության (EPI) և համաշխարհային ձեռներեցության (GEI) համաթվերի վատթարացմամբ պայմանավորված տվյալ ոլորտների բացասական զարգացումները (տե'ս աղյուսակ 22.):

<i>Աղյուսակ 22.</i>																			
<i>Կամբոջայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում</i>																			
<i>Basel</i>	<i>GGGI</i>	<i>DB</i>	<i>GII</i>	<i>HDI</i>	<i>GPI</i>	<i>EF</i>	<i>GCI</i>	<i>LPI</i>	<i>FSI</i>	<i>SPI</i>	<i>CPI</i>	<i>LPI_L</i>	<i>GTCI</i>	<i>HCI</i>	<i>FOTP</i>	<i>TTCI</i>	<i>DI</i>	<i>GEI</i>	<i>EPI</i>
0,09	0,08	0,06	0,05	0,05	0,04	0,03	0,03	0	0,02	0,02	0,01	0,01	-0,01	-0,04	-0,05	-0,07	-0,07	-0,09	-0,1

Թեև համաթվի վարկանիշային միավորը փոքր-ինչ բարելավվել է, սակայն Կամբոջայի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում հետընթաց է ապրել (տե'ս աղյուսակ 21.): Մասնավորապես, եթե 2012 թվականին Կամբոջան զբաղեցնում էր 62-րդ տեղը 66 երկրների շարքում, ապա **2017 թվականին զբաղեցրել է 63-րդ տեղը՝** պայմանավորված իրականացրած բարեփոխումների համեմատաբար դանդաղ ընթացքով:

Այսպիսով, իրականացված վերլուծությունները վկայում են, որ վերլուծության ենթարկված երկրների իշխանությունները և հանրությունն իրենց երկրի վերափոխումների բազմաբնույթ ծրագրերը մշակելու և իրականացնելու ընթացքում գիտական հիմնավորվածության ու գործնական նշանակության տեսանկյունից պետք է առավել հետևողական լինեն և կարողանան բարձրացնել վերոնշյալ վերափոխումների (որոնք սահմանափակում են երկրի սոցիալ-տնտեսական վարգացումը) համեմատական արդյունավետությունը: Իսկ վարգացմանը նպաստող վերափոխումները առնվազն պետք է իրականացվեն ոչ պակաս աճի տեմպերով, քան իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում:

INTERGRAL ASSESSMENT OF VARIOUS REFORMS IMPLEMENTED IN COUNTRIES: FACTS AND ANALYSIS

SAMSON DAVOYAN

*Head of Master Program in the faculty of Economics and Management in YSU,
Doctor of Economics, Professor*

LUSYA GALOYAN

*Associate Professor in the department of General Economics in ASUE GB,
PhD, Associate Professor*

The purpose of the article is to create an integral index of reforms through 20 partial indexes based on the methodology that we suggest, to assess implemented various reforms in 66 countries for 2012-2017 and to analyze comparative efficiency.

In the article we represent the methodology of creation of the integral index of reforms and results with the principal component method, then we assess the input of each partial index in the change of the integral index of reforms. In the last stage we have grouped countries by the integral index of reforms with the help of cluster analysis. We have also make judgements about the assessments of each country in clusters based on the assessments and analysis.

Implemented analysis witnesses that the society and the authorities of countries that we analyze while developing and implementing various programs of reforms should be more aspiring and be able to increase the comparative efficiency of reforms that restrict social-economic development of countries. Reforms that foster development at least should be implemented with the pace not lower than those in reporting period.

Keywords: *reforms, principal component, panel data analysis, cluster analysis, comparative efficiency, index, input.*

ВСЕОБЩАЯ ОЦЕНКА РАЗНОРОДНЫХ ПРЕОБРАЗОВАНИЙ, ОСУЩЕСТВЛЕННЫХ СТРАНАМИ: ФАКТЫ И АНАЛИЗЫ

САМСОН ДАВОЯН

*Руководитель магистерской программы на факультете экономики и
управления Ереванского государственного университета,
доктор экономических наук, профессор*

ЛЮСЯ ГАЛОЯН

*Доцент кафедры общей экономики Гюмрийского филиала
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук, доцент*

Цель нашей статьи – сформировать всеобщий индекс преобразований при помощи двадцати частичных индексов на основе разработанной с нашей стороны методологии, с помощью которого произвести оценку и анализ сравнительной эффективности на уровне различных преобразований в 66 странах за 2012-2017гг.

В статье представлены, в соответствии с методом главного компонента, методология и результаты формирования всеобщего индекса преобразований, затем оценено способствование каждого отдельного частичного индекса изменению всеобщего индекса сформированных преобразований. На последнем этапе исследования с помощью инструментов кластерного анализа осуществлена группировка стран по всеобщему индексу преобразований. Чтобы сделать оценки и анализы более привлекательными, были интерпретированы оценки отдельных стран, включенных в кластер (зафиксированные максимальные, минимальные и средние значения в кластерной группе).

Осуществленный анализ показывает, что в процессе разработки и осуществления разнородных планов преобразований власти и общественность исследуемых стран должны быть более последовательными с точки зрения научной обоснованности и конструктивного значения, с тем чтобы могли повысить сравнительную эффективность вышеуказанных преобразований (которые ограничивают социально-экономическое развитие стран). А способствующие росту преобразования должны быть осуществлены не меньшими темпами роста, чем в период отчетности.

Ключевые слова: *преобразование, главный компонент, панельный анализ данных, кластерный анализ, сравнительная эффективность, индекс, способствование.*

1. մարդկային ռեսուրսների համախմբումը,
2. համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
3. տեղական ինքնակառավարման մարմինների մրցակցային և թափանցիկ ընտրությունների ապահովման հնարավորությունների ընդլայնումը,
4. ենթակառուցվածքների զարգացումը և ծառայությունների արդյունավետության ու որակի բարձրացումը,
5. ավելի մեծ թվով մարդկանց որակյալ ծառայություններ տրամադրելու հնարավորությունների ստեղծումը,
6. ֆինանսական կարողությունների ուժեղացումը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնումը,
7. համայնքային զարգացման կապիտալ ծրագրերի իրականացումը և այլն:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ համայնքների խոշորացումը կարող է առաջացնել լուրջ ու բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց անտեսումը հղի է վտանգավոր հետևանքներով:

Հետազոտության ընթացքում բացահայտվեցին մի քանի բացասական հետևանքներ, որոնք լոջորեն մտահոգում են բնակչությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին: Դրանք են³⁵⁷

1. համայնքային ծառայողների կրճատումը,
2. ծառայությունների տեղափոխումը համայնքներից, օրինակ՝ սոցիալական ծառայությունների տարածքային մարմինները, ոստիկանության անձնագրային բաժանմունքները և այլն, հեռու են հատկապես հեռավոր, բարձրլեռնային համայնքներից, և բնակիչները լրացուցիչ ժամանակ ու գումար են ծախսում դրանք ստանալու համար,
3. միավորված համայնքների միջև ռեսուրսների անհամաչափ բաշխման վտանգը. այս դեպքում շատ կարևոր է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք.
 - կառավարման տեսանկյունից գրեթե անհնար է դառնում փոքր համայնքից ընտրվել միավորված համայնքի ղեկավար, հիմնական հավակնորդները լինում են ամենամեծ բնակավայրից,
 - համայնքների միավորումը կխոչընդոտի ավելի մեծ պոտենցիալ ունեցող համայնքների զարգացմանը, կնվազեցնի զարգացման տեմպերը, կստացվի, որ փոքր բնակավայրերի զարգացումը տեղի կունենա զարգացման մեծ տեմպեր ու ռեսուրսներ ունեցող բնակավայրերի հաշվին:

Այս պահին Հայաստանում ունենք 61 խոշորացված համայնք, և խոշորացման գործընթացը շարունակվում է, բայց որևէ եական ու առարկայական պատկեր, որևէ մասնագիտական գնահատում չկա, թե խոշորացումից հետո ի՞նչ փոփոխություններ են գրանցվել առանձին ոլորտներում: Չկա պետական մակարդակով իրականացված որևէ հետազոտություն, որը գնահատում է բյուջետային միջոցների արդյունավետությունը մինչև համայնքների միավորումը և դրանից հետո:

Արցախի հանրապետությունում համայնքների միավորման գործընթաց ընդհանրապես տեղի չի ունեցել: Այսօր Արցախում իրականացվում է գերկենտրոնացված պետական կառավարում, ինչն արգելակում է երկրի զարգացումը: Արցախյան շրջաններում պետական կառավարումն իրականացվում է շրջանային վարչակազմերի կողմից, որոնք լրացուցիչ բեռ են և նպաստում են համակարգի ուռճացմանը և ռեսուրսների անարդյունավետ օգտագործմանը:

³⁵⁷ Տե՛ս «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», էջ 26-27:

³⁵⁸ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», էջ 21:

խոսելով Արցախի ու Հայաստանի համայնքների կառավարման արդյունավետության մասին, պետք է նկատել, որ երկու պետություններում էլ բյուջեները կազմվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարիների տվյալները: Ստացվում է, որ առանձին ոլորտային ծառայությունների համար չկա որևէ գնահատման մեխանիզմ և նոր մոտեցում: Ծրագրային բյուջետավորումը ավելի հստակ, պարզ ու վերահսկելի է դարձնում բյուջետային միջոցները՝ ամեն մի ծրագրի համար սահմանելով չափորոշիչներ: Սակայն ՏԻՄ-երը տարին ամփոփելիս ոլորտի վերլուծություն ու խնդիրների գնահատում չեն անում՝ հասկանալու, թե ինչ միջոցներ են պետք հաջորդ տարում խնդիրը արմատապես լուծելու համար:

Բացի այդ, ՏԻՄ-երը չունեն հստակ հաշվարկ, թե ինչքան գումար է անհրաժեշտ մի ոլորտի խնդիրների լուծման համար և ինչ միջոցներ են պահանջվում հինգ տարվա կտրվածքով բոլոր ոլորտների խնդիրները լուծելու համար: Սա բերում է պլանավորման ձախողման, իսկ արդյունավետ կառավարման հիմքը ճիշտ պլանավորումն է:

Ո՛չ Հայաստանում և ո՛չ Արցախում տեղական ինքնակառավարման մարմինները չունեն իրենց կողմից գնվող ծառայությունների որակի ստուգման մեխանիզմներ, ինչն էլ բերում է բյուջետային միջոցների անարդյունավետ օգտագործման և արդյունավետ կառավարման խնդիրների:

Որպես օրինակ ուսումնասիրենք Հայաստանի ու Արցախի համայնքների համար թերևս ամենակարևոր ու ամենածախսատար ոլորտներից մեկը՝ ներհամայնքային ճանապարհները: Ծառայությունների գնման-մատուցման պայմանագրերում երաշխիքային սպասարկման մասին որևէ խոսք չկա, ինչի արդյունքում հիմնանորոգված փողոցում հաջորդ մեկ-երկու տարիների ընթացքում իրականացվում են փոսայցման աշխատանքներ: Մինչդեռ մի շարք եվրոպական երկրներում շինարարական կազմակերպությունները հինգից տասը տարվա երաշխիք են տրամադրում:

Ո՛չ Հայաստանում և ո՛չ Արցախում ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ասֆալտի որակի փորձաքննություն չի իրականացվում, որպեսզի գնահատվի, թե արդյո՞ք շինարարական կազմակերպության կողմից տրամադրված ծառայությունը համապատասխանում է Կառավարության կողմից սահմանված նորմատիվային պահանջներին:

Չուզահեռներ անցկացնելով պետական ու համայնքային բյուջեների կազմման սկզբունքներիմիջև՝ կոտեսենք, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն կազմելիս շեշտը դրվում է հիմնականում բոլոր ոլորտների հիմնական ծախսերի պլանավորման ու իրականացման, այնուհետև բյուջեի պակասուրդի ծածկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման վրա՝ պետական պարտք ներգրավելով: Ի տարբերություն պետական բյուջեի կազմման մեխանիզմի՝ համայնքների բյուջեները կազմվում են՝ հաշվի առնելով առկա կամ պլանավորվող ֆինանսական միջոցները: Չնայած երկու հայկական պետությունների օրենսդրությունները թույլ են տալիս դեֆիցիտով կազմելու նաև համայնքների բյուջեները³⁵⁹, բայց հաշվի առնելով համայնքների կախվածությունը պետական բյուջեներից տարեկան դոտացիաների մեծ թվով՝ համայնքները բյուջեները հաստատում են առանց պակասուրդի:

Բացի այդ, համայնքային պարտատոմսերի թողարկման պրակտիկան կիրառելի չէ: Այն չի կիրառվում Նույնիսկ Հայաստանի ամենամեծ՝ Գյումրի համայնքում, որի բյուջեն վերջին հինգ տարիներին մոտավորապես 3.2 միլիարդ դրամ է:

³⁵⁹ ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», Արցախի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»:

Արցախի բյուջեն վերջին տասը տարիներին կազմվել է ղեֆիցիտով՝ բացառությամբ 2019 թվականի, երբ պետական բյուջեն կազմվել է պրոֆիցիտով, և միջոցներն ուղղվել են փոխառու զուտ միջոցների մարմանը³⁶⁰:

Ամեն տարի և՛ Հայաստանի, և՛ Արցախի պետական բյուջեներով մեծ թվով դոտացիոն գումարներ են հատկացվում համայնքներին, ինչն էլ խոսում է պետական բյուջեներից համայնքների կախվածության մասին: Եթե Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ունի բյուջետային վարկեր ներգրավել այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից, ապա Արցախի Հանրապետության ճանաչման գործընթացով պայմանավորված՝ Արցախն այդ հնարավորությունից զրկված է: Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության բյուջեն ղեֆիցիտով է կազմվում, ներգրավվում են լրացուցիչ միջոցներ, բայց բյուջետային վարկ է տրամադրվում Արցախի հանրապետությանը՝ երկու երկրների անվտանգության և այլ հարցերի համար³⁶¹:

Այդ պայմաններում կայուն, զարգացող ու ֆինանսապես անկախ համայնքների մասին խոսելն ավելորդ է:

Հարկ է խոսել նաև համայնքային ձեռնարկատիրությունների մասին, որոնց պրակտիկան ևս կիրառելի չէ մեր համայնքներում: Եվրոպական մի շարք երկրներում կարելի է հանդիպել բազմաթիվ համայնքապատկան հյուրանոցներ, սրճարաններ և ժամանցի այլ վայրեր, որոնք լրացուցիչ եկամուտ են ապահովում համայնքին: Այժմ ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում լայն կիրառում ունի սոցիալական ձեռնարկատիրությունների գաղափարը: Համայնքի պարագայում այն առավել քան արդյունավետ կլինի, քանի որ և՛ ստեղծված արդյունքը, և՛ ստացված եկամուտը կմնա համայնքին և մեծ սոցիալական ազդեցություն կունենա:

Համայնքների զարգացման հաջորդ կարևոր նախապայմանը համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումն է: Կառավարման արդյունավետության բարձրացումն առանց ավագանիների զարգացած ինստիտուտի առկայության գրեթե անհնար է, քանի որ համայնքների կառավարման միակ մարմինը ավագանու ինստիտուտն է: Հայաստանում ու Արցախում, ցավոք սրտի, ավագանու զարգացած ինստիտուտ գոյություն չունի: Ավագանիները մեծամասամբ ձևական բնույթ են կրում և հեշտորեն կառավարվում են համայնքների ղեկավարների կողմից, ինչն էլ խոչընդոտում է գրագետ կադրերի ներգրավմանը և որոշումների արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, ՀՀ-ի և ԱՀ-ի համայնքներում ավագանիների զարգացած ինստիտուտ ունենալու պարագայում տեղական ինքնակառավարման մարմինների դերի ու լիազորությունների ուժեղացումը կնպաստի ինքնաբավ համայնքների ստեղծմանն ու տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը:

³⁶⁰ Արցախի Հանրապետության 2019 թ. օրենքը «Պետական բյուջեի մասին»

³⁶¹ ՀՀ օրենքը 2018 թ-ի «Պետական բյուջեի մասին», ընդունված 2017 թ.-ի դեկտեմբերի 8-ին, հոդված 9, կետ 3:

PROBLEMS AND CHALLENGES OF COMMUNITY DEVELOPMENT IN ARMENIA AND ARTSAKH

HAYKARAM DRMEYAN

*Lecturer, Chair of General Economics Gyumri branch of the Armenian State University of Economics, Member of Founding Council of Compass Research, Training and Consulting Center NGO
Gyumri, Republic of Armenia*

The purpose of the work is to promote and justify the approach according to which the flight development of the communities of Armenia and Artsakh can only be achieved as a result of attracting large investment funds and improving the management efficiency. The problem of work is to show that communities do not have adequate resources and can't provide additional resources for the sustainable development of communities due to inefficient management of resources.

Empirical research methods, analysis, combination, induction, deduction and theoretical methods of research were used during the research.

As a result of the survey, we have come to the conclusion that sustainable development of communities can't be provided at the expense of individual communities' budgets, as well as subsidies from Armenia and Artsakh republics. The problems facing the community, the deviation between the emerging income and the necessary costs are incomparably greater, which hampers the sustainable development of communities. Lack of implementation of new technologies and different approaches in management leads to inefficient use of resources.

Key words: *community, development, good governance, budget, united communities, efficiency, management.*

ПРОБЛЕМЫ И ВЫЗОВЫ РАЗВИТИЯ ОБЩИН В АРМЕНИИ И АРЦАХЕ

АЙКАРАМ ДРМЕЯН

*Преподаватель кафедры общей экономики Гюмрийского филиала
Армянского государственного экономического университета,
член учредительного совета НПО научно-исследовательский,
учебно-консультационный центр «Компасс»,
г. Гюмри, Республика Армения*

Целью данной работы является продвижение и обоснование подхода, согласно которому развитие общин Армении и Арцаха может быть достигнуто только в результате привлечения крупных инвестиционных фондов и повышения эффективности управления.

Наша задача – выявить направления расходов ресурсов общин и их эффективность.

В ходе исследования использовались эмпирические методы исследования, анализ, комбинация, индукция, дедукция и теоретические методы.

В результате мы пришли к выводу, что устойчивое развитие общин не может быть обеспечено за счет бюджетов отдельных общин, а также дотаций, предоставляемых Республикой Армения и Республикой Арцах. Проблемы, стоящие перед общинами, большая разница между формирующимся доходом и необходимыми затратами препятствуют устойчивому развитию общин. Отсутствие внедрения новых технологий и различных подходов в управлении приводят к неэффективному использованию ресурсов.

Ключевые слова: *община, развитие, хорошее управление, бюджет, объединенные общины, эффективность, управление.*

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ*

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

տնտեսագետ,

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

khachatryanvahagn@yahoo.com

Հոդվածի նպատակն է անդրադառնալ տնտեսագիտության առանցքային արդի հիմնախնդիրներից մեկի՝ պետության ու շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերի, տնտեսության պետական ու շուկայական կարգավորման ժամանակակից առանձնահատկությունների բացահայտումը:

Ելնելով առաջադրված նպատակից՝ հոդվածում քննարկվել են հետևյալ հիմնախնդիրները՝ ներկայացվել են պետության ու շուկայի միջև փոխառնչությունների և դրանց արդյունավետության մոտեցումները, պետության ու շուկայի ձախողումների միջև ընտրությունը՝ որպես ժամանակակից տնտեսագիտության հիմնական խնդիր, մի շարք օրինակներով ներկայացվել են տնտեսական վերջին ճգնաժամերի պատճառները, մեր և Նախկին խորհրդային հանրապետությունների օրինակները՝ որպես պետության դերի մեծացման չհիմնավորված, միայն քաղաքական դրդապատճառներով պայմանավորված փաստեր, ինչպես նաև ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիները:

Աշխատանքում կիրառվել են համեմատական վերլուծությունների, մասնակից դեպի ընդհանուր ամփոփումների, ուսումնասիրությունների մեթոդները:

Հետապոտության ընթացքում հանգել ենք մի շարք ելրակացությունների, որոնցից գլխավորներն են՝ ժամանակակից տնտեսության վերաբերյալ հիմնական վեճը նրա մասին չէ, թե ինչպիսին է տնտեսության կառուցվածքը, ինչպիսին է իդեալականը, այլ նրա մասին է, թե ինչպես է այն աշխատում. ո՞րն է ավելի վատ՝ պետության միջամտությունը, որն ուղեկցվում է լուրջ անարդյունավետությամբ, թե՞ պետության չմիջամտությունը և այն, ինչը հաճախ անվանում են շուկայի ձախողում, որն առաջացնում է սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր հետևանքներ: Այսպիսով, ժամանակակից տնտեսագիտության հիմնախնդիրներից մեկը պետության ու շուկայի միջև փոխառնչությունների ձախողումների ուսումնասիրությունն է, որը պահանջում է ինչպես տնտեսագետների, այնպես էլ հասարակագիտության տարբեր ոլորտների մասնագետների համատեղ ու արդյունավետ աշխատանքի կոորդինացում ու կապակերպում:

Հիմնաբառեր՝ պետություն, շուկա, ճգնաժամ, պետական կարգավորում, սեփականություն, մրցակցություն, ապատություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, ինստիտուտներ:

Չնայած տարածված այն տեսակետին, ըստ որի՝ տնտեսագետների շրջանում չկա ոչ մի համաձայնություն, իրականում շատ քիչ հարցերի վերաբերյալ համաձայնություն չկա: Շատ հարցերի վերաբերյալ տարիների ընթացքում ընդհանուր համաձայնություն է հաստատվել և առաջին հերթին այն պատճառով, որ այդ

* Հոդվածը ներկայացվել է 30.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Ժամանակահատվածում որպես գիտություն տնտեսագիտությունը, աշխատելով որոշակի մեթոդներով, սահմանել է ընդհանուր, ընդունելի կանոններ:

Համաձայնությունը եղել է մի քանի առանցքային խնդիրների շուրջ: Առաջին հերթին դա մակրոտնտեսագիտությունն է: Բոլոր մակրո տնտեսագետները գիտեն, որ բյուջեի պակասուրդը, ինֆլյացիան վատ է և հասկանալի է, գիտեն՝ ինչպես ինֆլյացիան կազմակերպել:

Կա համաձայնություն ինստիտուցիոնալ առաջնային հարցերի վերաբերյալ: Տնտեսագետները կարծում են, որ մրցակցությունը լավ է, սեփականության իրավունքները պետք է պաշտպանվեն, բաց առևտուրը լավ է, մասնավոր սեփականությունը՝ նույնպես: Ոչ ոք չի վիճում մասնավոր սեփականության կամ մրցակցության լավ կամ վատ լինելու խնդրի շուրջ: Պարզապես պարզ չէ, թե ինչպես ստեղծել խթաններ, ինչպես պաշտպանել սեփականության կամ գույքային իրավունքները, ինչպես պարտադրել կատարել պայմանագրերը: Այս հարցերի վերաբերյալ տնտեսագետները խնդիրներ ունեն: Եթե նույնիսկ անդրադառնանք այնպիսի տնտեսագետների, ինչպիսիք են՝ Ջոզեֆ Սթիգլիցը³⁶² կամ Դանի Բորդիկը³⁶³, որոնք համարվում են տնտեսության զարգացման հիմնական ուղղության վերաբերյալ տեսակետների հակառակորդներ, ակնհայտ է, որ նրանք համաձայն են, որ տնտեսության հիմնական սկզբունքները՝ սեփականության կամ գույքային իրավունքների պաշտպանություն, պայմանագրային պարտավորությունների կատարում, մրցակցություն, պետք է կատարվեն: Ինչպես մակրոտնտեսական կայունությունը, դրանք նույնպես շատ կարևոր են տնտեսական կայուն աճի համար: Սակայն իրականացման ճանապարհները այնքան էլ հասկանալի չեն:

Ժամանակակից տնտեսության վերաբերյալ հիմնական վեճը այն մասին չէ, թե ինչպիսին է նրա կառուցվածքը, ինչպիսին է իդեալականը, այլ այն մասին, թե ինչպես է այն աշխատում: Ո՞րն է ավելի վատ՝ պետության միջամտությունը, որն ուղեկցվում է լուրջ անարդյունավետությամբ, թե՞ պետության չմիջամտությունը և այն, որը կոչվում է շուկայի ձախողում, նշանակում է մեծ խնդիրներ: Խնդիրներ՝ կապված այն հանգամանքի հետ, որ ընդհանրապես սեփականության իրավունքները ինչ-որ մեկը պետք է պաշտպանի, պայմանագրերը, պայմանավորվածությունները ինչ-որ մեկը պետք է կատարի, մրցակցությունը ինչ-որ մեկը պետք է պահպանի և մակրո տնտեսական քաղաքականությունը ինչ-որ մեկը պետք է իրականացնի: Այսինքն՝ պետական ծառայությունների պահանջարկ կա, բայց պետությունն իր հերթին չի կարողանում կառավարել սեփականությունը, ստեղծել խթաններ բյուրոկրատների համար, միշտ փորձում է ոչ թե պաշտպանել մրցակցությունը, այլ սահմանափակում է այն:

Շուկայի ձախողման և պետության ձախողման միջև ընտրությունը հենց ժամանակակից տնտեսագիտության հիմնական խնդիրն է:

Հիմնական խնդիրը՝ ինչպես հայեցակարգային, այնպես էլ գործնական հարթության մեջ այն է, որ կա անհրաժեշտություն հստակ սահմանելու հանրային բարիքների սահմանները և պետական պատասխանատվության գոտիները, այսինքն՝ այն խնդիրներն ու գործառնությունները, որոնք բացի պետությունից ոչ ոք արդյունավետ չի կարող իրականացնել: Մնացածը պետք է փոխանցվի մասնավոր հատվածին:

Մարդիկ սկսում են ավելի շատ կարիք զգալ պետության, երբ շուկան իր գործունեության ինչ-որ մի շրջանում ձախողվում է, օրինակ, ճգնաժամերի ժամանակ, և դա ներկայացվում է որպես շուկայական տնտեսության կամ շուկայի և ոչ թե պետության ձախողում: Օրինակ, վերջին ճգնաժամը, որ կոչվեց համաշխարհային

³⁶² Joseph E. Stiglitz (2006). Making Globalization Work. Norton, 358 p

³⁶³ **Rodrik, Dani** (2011). *The Globalization Paradox*. Norton & Company, Inc. ISBN 978-0-393-07161-0.

Ֆինանսական և տեղի ունեցավ 2008 թվականին, հիմնականում պետության կամ պետական համապատասխան կառույցների բացթողումն էր, քաղաքական գործիչների անպատասխանատու գործունեության արդյունքը, իսկ շուկան այս դեպքում այլևս չկարողանալով դիմանալ քաղաքականության իրականացողների ճշումներին, անտեղի ու անհարկի միջամտություններին, պարզապես պատասխանեց իրեն բնորոշ ձևով՝ ճգնաժամով: Սակայն ամենահետաքրքիրը և կարևորը ոչ թե ճգնաժամի պատճառն էր, այլ իրավիճակից դուրս գալու մեթոդները: Արդյունքում պետության միջամտության անհրաժեշտությունը բերեց նրան, որ պետության դերը շատ երկրների տնտեսական կյանքում մեծացավ: Կարգավորիչի դերակատարումից զատ պետությունը մեծացրեց իր սեփականությունը, դարձավ խոշոր սեփականատեր: Այդ ամենի արդյունքում մարդիկ, անհատներ-քաղաքացիներ և իրավաբանական անձինք, շատ դեպքերում ինքնական հրաժարվեցին իրենց սեփականությունից՝ հանուն իրենց բիզնեսի առողջացման, ֆինանսական վիճակի վերականգնման և, ի վերջո, հանուն ապագայի:

Այդ ամենի ականատեսը եղանք մենք, այդ ամենը տեղի ունեցավ կայացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Քննարկվող հարցի շրջանակներում մեզ համար կարևոր է արձանագրել, որ ճգնաժամը և վերը նշվածը դրանից դուրս գալու այն ճանապարհներից է, որը և՛ քաղաքական, և՛ տնտեսական ոչ ճշգրիտ, ավելի շուտ չկանխամտածված քայլերի ու գործողությունների հետևանք էր, որը բերեց պետության դերի արհեստական մեծացման³⁶⁴:

Կա նաև այլ ճանապարհ, որը նույնպես մարդկանց կամ հասարակությունների շրջանում մեր տեսանկյունով առաջացնում է պետության դերի չիմնավորված պահանջ: Ամենատիպիկ ու ամենացայտուն օրինակները վերաբերում են Նախկին խորհրդային միության շատ երկրներին, որոնց թվում կարելի է ընդգրկել նաև Չայաստանի Հանրապետությունը՝ իր կառավարման՝ մինչ 2018 թվականի մոդելով: Խոսքը վերաբերում է բոլոր այն երկրներին, որոնք իրենց զարգացման ճանապարհին Նախընտրեցին ավտորիտար կամ կիսավտորիտար կառավարման համակարգը: Այդ երկրներում իշխանությունները, գործելով պետության անունից, արհեստական խոչընդոտներ ստեղծելով սեփական երկրի քաղաքացիների համար առօրյա կենցաղում, տնտեսական դաշտում, սոցիալական բնագավառում և հանրային կյանքի այլ բնագավառներում, մարդկանց առաջարկեցին այնպիսի կառավարման համակարգ, որտեղ բոլոր հարցերի, խնդիրների լուծողը պետությունը պետք է լիներ: Մարդկանց դրանով զրկեցին հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքից, որն էլ հետագայում մեծ անջրպետի պատճառ դարձավ պետություն- քաղաքացի հարաբերություններում: Սա էլ իր հերթին անվստահության մի այնպիսի մթնոլորտ ձևավորեց հասարակության մեջ, որը վերածվեց պետության անվտանգության սպառնալիքի: Այդպիսի վարքագծի դրսևորումը, օրինակ, պատճառ դարձավ մարդկանց զանգվածային արտագաղթի, դրա արդյունքում պետական կարևորագույն ինստիտուտների նկատմամբ վստահությունը հասավ շատ ցածր մակարդակի, որն էլ իր հերթին արգելակ է ցանկացած բարեփոխման համար³⁶⁵:

Ըստ երկայն, այդպիսի մոտեցումը բերում է իշխանության անհավասար բաշխման, իշխանության ասիմետրիայի: Իհարկե, իշխանությունը անհավասարաչափ

³⁶⁴ Տե՛ս՝ ա/ **Գորթնի Ջ., Սթրուկի Ռ., Լի Դ., Ֆերարինի Թ.**, «Ընդհանուր տնտեսագիտություն», Ե., Տիգրան Մեծ, 2013, 288 էջ; ք / **Joseph E. Stiglitz** «Capitalist Fools»//Vanity Fair, New York, 9 Dec,2008, <http://www.yoism.org/?q=node/386>; Գ / **Гурьев С.** «Мифы экономики»- М.:Манн,Иванов и Фербер, 2014-320 с.; Դ / **Кругман Пол** «Почему экономическая наука бессильна», <https://republic.ru/posts/1/130856>.

³⁶⁵ Տե՛ս՝ **Кудрин А.**: Старая модель экономики не работает, новой модели нет, <https://www.finanz.ru/novosti/aktsii/kudrin-staraya-model-ekonomiki-ne-rabotaet-novoy-modeli-net-1001664688>.

Է բաշխվում ցանկացած հասարակությունում, միևնույն ժամանակ իշխանության ասիմետրիան միշտ չէ, որ կործանարար է: Մասնավորապես, այն կարող է ապահովել արդյունավետություն, օրինակ՝ իշխանության պատվիրակման միջոցով: Սակայն, եթե ա գործող զղեցիկանձինք վախենում են, որ քաղաքականության այս կամ այն միջոցառումները՝ ուղղված բնակչության բարեկեցության բարձրացմանը, կարող են թուլացնել իրենց ազդեցությունը (այժմ կամ ապագայում), կարող են փորձել արգելափակել այդ միջոցառումների ընդունումը կամ խոչընդոտել դրանց իրականացումը: Շատ հեռու պետք չէ գնալ, մեր երկիրը երկար տարիներ այդ սկզբունքով է կառավարվել: Այդ միտումը զգալի բացասական հետևանքներ ունի հատկապես ամենաաղքատ ու մարգինալացված խմբերի համար, որոնց շահերի պաշտպանության հնարավորությունները սահմանափակ են: Իշխանության ասիմետրիկությունը կարող է վնասակար հետևանքներ ունենալ և վտանգել ինստիտուտների հիմնական գործառույթները՝ կապված այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են՝ մեկուսացումը, յուրացումը և հաճախորդների մոտեցումը՝ կլիենտելիզմը (clientelism): Մարդիկ, մեծամասամբ չցանկանալով իրենց վրա պատասխանատվություն վերցնել, պայթարել իրենց ազատությունների համար, ընդունեցին խաղի առաջարկված կանոնները: Շուկան այդ երկրներում դարձավ ընդամենը համակարգը սպասարկող, կորցրեց իր կարգավորիչ ու զարգացում ապահովող դերը: Լշված երկրները չեն փայլում իրենց զարգացածությամբ, քաղաքացիների բարձր կենսամակարդակով: Ընդհակառակը, նրանք սովորաբար հայտնի են որպես ամենակոռումպացված, ցածր մրցունակություն ու բարեկեցություն ունեցող երկրներ:

Վերը նկարագրված իրավիճակներն ապացույց են, որ պետության ու շուկայի դերի մասին պատկերացումները ձևավորվում են հիմնականում տեղի ունեցող կամ ունեցած իրադարձությունների ոչ ամբողջական ներկայացման, շատ դեպքերում խեղաթյուրման արդյունքում: Դա միշտ էլ եղել է, երբ իշխանություններն իրենց ձախողումները ներկայացրել են որպես շուկայի ձախողումներ, սակայն մարդկության պատմությունը այլ կերպ է մեզ ներկայացնում իրավիճակը, որը փաստում է շուկայական տնտեսության, ազատ շուկայի կենսունակությունը, այն համարում մարդկության առաջընթացի գրավական:

Պետություն: Շուկայական տնտեսության պայմաններում ամենաբարդ խնդիրը պետության ու շուկայի մասնակցության չափն է: Պետության բնութագրերը տարբեր ժամանակներում, տարբեր գիտնականների կամ քաղաքական-հասարակական գործիչների կողմից տրամազծորեն տարբերվել են:

19-րդ դարի հանրահայտ ֆրանսիացի հրապարակախոս, հասարակական ու քաղաքական գործիչ Ֆրեդերիկ Բաստիան, բնութագրելով պետությունը, գրում է. «Ի՞նչ գիտենք նրա մասին - այն խորհրդավոր անձնավորություն է, ով, ամենայն հավանականությամբ բոլորից շատ է անհանգստանում, բոլորից շատ է արգելակում, բոլորից շատ է ծանրաբեռնված աշխատանքով, ում հետ բոլորից շատ են խորհրդակցում, ում բոլորից շատ են մեղադրում, ում առավել հաճախ են դիմում և օգնություն խնդրում:...Պետությունը հսկայական ֆիկցիա է, որի միջոցով բոլորը աշխատում են ապրել բոլորի հաշվին»³⁶⁶: Իսկ Յենրի Լյուիս Մենկեն իր «Կրկին դրա մասին» էսսեում, որը հրապարակվել է 1925 թվականին, գրում է. «Ինչքան էլ սովորական մարդը թերություններ ունենա, նա բոլոր դեպքերում հիանալի հասկանում է, որ պետությունը դուրս է նրա շահերից և շատ այլ մարդկանց շահերից, որ այն հանդիսանում է առանձին, անկախ ու հաճախ թշնամի ուժ, որը մասամբ է իր կողմից վերահսկելի և ի վիճակի է իրեն մեծ վնաս հասցնել»³⁶⁷:

³⁶⁶ S Է u ` **Бастия Ф.**, Экономические гармонии.избранное-М,: Эксмо, 2007.- 1200с.

³⁶⁷ S Է u ` Менкен Г. Л., Вновь о том же, <http://old.inliberty.ru/library/117-vnov-o-tom-zhe>:

Մարքսիստական ընկալմամբ՝ «Պետությունը մեքենա է՝ մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու համար»³⁶⁸:

Կառլ Պոպերը այսպեսի բնորոշում է տալիս. «Պետությունն անհրաժեշտ չարիք է: Նրա իշխանական լիազորությունները չպետք է գերազանցեն անհրաժեշտ չափը: Այս սկզբունքը կարելի է կոչել «ազատական ածելի» (հետևելով Օքհամի ածելիին, այսինքն՝ այն հռչակավոր սկզբունքին, որ մետաֆիզիկական էությունների թիվը չպետք է շատացվի անհրաժեշտ չափից ավելի): ... Սակայն դժվար չէ նաև ցույց տալ, որ պետությունը մշտական վտանգ է և այդպիսով նաև չարիք, թեև անհրաժեշտ չարիք: Զանի որ, եթե պետությունը պիտի կատարի իր խնդիրը, ապա պիտի ավելի շատ իշխանություն ունենա, քան յուրաքանչյուր առանձին քաղաքացի: Անգամ եթե հաստատություններ հորինենք, որոնք հնարավորինս կսահմանափակեն այդ իշխանության չարաշահման վտանգը, միևնույն է, այդ վտանգը երբեք չենք կարողանա ամբողջությամբ վերացնել: Հակառակը, թվում է, թե միշտ ստիպված ենք լինելու վճարել պետության իրավական պաշտպանության գինը, այն էլ ոչ միայն հարկերի ձևով, այլև նույնիսկ նվաստացման ձևով, որի հետ ստիպված ենք հաշվի նստել («պաշտոնների ամբարտավանությունը»): Բայց այդ ամենը չափի հարց է: Ամենակարևորը իրավական պաշտպանության համար չափազանց բարձր գին չվճարելն է»³⁶⁹:

Ժամանակակիցներից Սերգեյ Գուրիևը, որ մինչև վերջերս Վերակառուցման և Չարագացման Եվրոպական Բանկի գլխավոր տնտեսագետն էր, անդրադառնալով վերջին ֆինանսական ճգնաժամից հետո աշխարհում ամբոխավարության տարածման դրդապատճառներին՝ պայմանավորված նաև անհավասարության չափերի մեծացմամբ, ընդգծում է ստեղծված իրավիճակում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Մասնավորապես անդրադառնալով պետության դերին՝ նա նշում է. «...Մենք ասում էինք այն մասին, որ իրականացնելով բարեփոխումներ՝ պետք չէ փորձել պետության դերը հասցնել զրոյի: «Ինչքան փոքր պետություն, այնքան լավ շուկային» մոտեցումը սխալ է: Ճիշդը՝ «Ինչքան լավն է պետությունը, այնքան դա լավ է շուկայի համար»³⁷⁰: Հետո որպես ապացույց ներկայացնում է հետևյալ հիմնավորումը. «Օրինակ, մասնավորեցում իրականացնելիս հնարավոր չէ բավարարվել միայն նրանով, որ սեփականության անցումը մասնավորին կրեթի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը տվյալ ձեռնարկությունում: Վաղ թե ուշ դա լինելու է, տարբեր երկրների փորձն է ասում: Սակայն խնդիրն այն է, որ անհրաժեշտ է նոր հնարավորություններ տալ այն մարդկանց, որոնք մասնավորեցման արդյունքում ազատվել են աշխատանքից: Դա ձեռնարկության ղեկավարության խնդիրը չէ, դա հասարակության ու պետության խնդիրն է: Եթե այդ խնդիրը լուծում չի ստանում, ապա սպասվում է հակառակ արդյունքը, որը խանգարում է բարեփոխումներին»³⁷¹:

Այսօր էլ պետություն-շուկա հարաբերությունները քննարկման կարիք ունեն: Մի կողմից կարող է թվալ, որ ամեն ինչ ասված է, սակայն իրականում նոր իրավիճակներում, որում հայտնվել է մարդկությունը, այն կրկին արդիական է դարձել: Տեխնոլոգիական դարաշրջանը, այսպես կոչված չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը, փոխում է նաև պետության կամ շուկայի մասին մարդկանց պատկերացումները, դերակատարումները: Հիմա առավել, քան երբևէ անհրաժեշտություն կա նորից ու նորից անդրադառնալ հավերժություն թվացող, բանավեճի առարկա թեմային՝ պետություն-շուկա հարաբերությանը:

³⁶⁸ Ленин В., Полн. собр. соч. т. 39. М. Гос. изд. полит. лит. 1963, стр. 75.

³⁶⁹ Տես՝ Կարլ Ռ. Պոպեր, «Ազատականությունը. մի քանի թեզեր, Ազատականության հիմունքները», Ե., Էդիտ Պրինթ, 2008թ., 90 էջ:

³⁷⁰ Տես՝ Գուրիև Ս., «Բոլոր երջանիկ երկրները միանման են երջանիկ», slon.ru, 09.11.2016, <https://republic.ru/posts/75917>:

³⁷¹ Տես՝ նույն տեղը:

Բայց մինչ այդ, ըստ մեզ, կարիք կա մեկ անգամ ևս անդրադառնալու «շուկայական տնտեսություն» եզրույթին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որը հատկապես վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված և՛ մեր երկրում, և՛ աշխարհում դժգոհությունների մեծ ալիքի հետ, շատ դեպքերում ու հիմնականում առանց հիմնավորումների կապում են շուկայի, շուկայական տնտեսության հետ:

Շուկա, շուկայական տնտեսություն: Քաղաքականապես ոչ կոռեկտ համարվելու մտավախությունից դրդված՝ շատերը «շուկայական տնտեսություն» եզրույթը գործածում են բացառապես «սոցիալական» ածականի հետ միասին: Ազատական մոտեցումը այս հարցին հետևյալն է. որևէ պատճառ չկա տեղի տալու մի մոտեցման, որը սխալմամբ համարվում է քաղաքական կոռեկտություն, քանի որ պետության կամ սոցիալական պետության ջատագովների և գլոբալացման հակառակորդների քարոզչությանը հակառակ՝ շուկայական տնտեսությունը կարիք չունի այլևայլ որոշիչների՝ հանրորեն ընդունելի համարվելու համար: Նա միշտ է **սոցիալական:** Մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանգամանք. լիարժեք շուկայական տնտեսություն առանց ազատական ժողովրդավարության չի լինում, որովհետև շուկայական տնտեսությունը պահանջում է հաշվետվության և հակակշռության համակարգ, օրենքի շրջանակներ ու թափանցիկություն, որն անհրաժեշտ է բաց շուկայում ազնիվ մրցակցության համար, անկախ նրանից՝ մեծամասնությամբ, թե՛ փոքրամասնության անդամ էք, արտասահմանցի՞, թե՛ տեղացի, կի՞ն, թե՛ տղամարդ, աղքատ թե՛ հարուստ, իշխանությունի՞ց, թե՛ ընդդիմությունից: Այդ հարցը սկզբունքային է, քանի որ շուկայական տնտեսությունը չի կարող գոյություն ունենալ, եթե պետությունն ու բնակչությունը չեն հարգում իրավունքը և օրենքների համակարգը: Չլինելով հավասար՝ մարդիկ կիրառում են միանման իրավունքներ, հակառակ դեպքում կվարկաբեկվեն խաղաղ համագործակցության սկզբունքները, առանց որի չկա շուկայական տնտեսություն: Մյուս կողմից՝ շատ կարևոր է՝ ընկալվի, ընդունվի, որ շուկան կարիք չունի գերկարգավորման. ինքը՝ շուկան, ինքնակարգավորվող է և ունակ է իրավիճակը կարգավորելու տնտեսության բոլոր բնագավառներում: Պետությունը չի միջամտում շուկայի գործունեությանը: Պետությունը ստեղծում ու ապահովագրում է շուկայի գործունեության շրջանակներն այնպես, որ տնտեսությունը ի վիճակի լինի անվտանգ գործելու»³⁷²:

Շուկայի մասին խոսելիս հնարավոր չէ չանդրադառնալ նորեյյան մրցանակակիր Միլտոն Ֆրիդմանին: Խոսելով շուկայի մասին՝ նա մասնավորապես այսպես է բնութագրում. «Շուկան կով չէ, որ կարելի է կթել: Այն նաև բոլոր ենթադրելի հիվանդությունների համար հրաշագործ սպեղանի չէ: Բառացիորեն շուկա հասկացությունը պարզապես մարդկանց միջև շփումներ է հատուկ վայրում և որոշակի ժամի, իսկ այդ շփումների նպատակը գործարքներ կատարելն է: ... Կախված այն բանից, թե ինչպես է շուկան օգտագործվում, այն կարող է դրական ներդրում ունենալ տնտեսական ու սոցիալական զարգացման մեջ, կարող է և խանգարել: Ցանկացած հասարակարգ օգտագործում է շուկան: Այստեղ իսկապես կարևոր ընտրություն է մասնավոր սեփականության առկայության և դրա բացակայության միջև: Իրական տնտեսության մեջ ազատ շուկան և մասնավոր սեփականությունը հենց «անվճար պանիր»-ն է»³⁷³:

Ինստիտուտներ: Պետություն-շուկա հարաբերությունները քննարկելիս հնարավոր չէ շրջանցել ինստիտուտներին վերաբերող հարցադրումները: Այլևս անվիճարկելի է այն հանգամանքը, որ տնտեսական քաղաքականության

³⁷² Мизес Людвиг фон. Либерализм; «Экономика», 2001.-239с.

³⁷³ Տե՛ս՝ **Փրիդման Մ.**, Рынок как средство развития общества, Cato Journal. Vol. 8. № 3 (Winter 1989). P. 567–579.

արդյունավետությունը կախված է ինստիտուտների կայացվածությունից և հանրային կյանքում դրանց մասնակցության աստիճանից³⁷⁴:

Տնտեսագիտությունն ասում է, որ հաջողությունը և բարեկեցությունը կախված են ինստիտուտների որակից, այսինքն՝ հասարակության մեջ ընդունված խաղի կանոնների որակից՝ պայմանագրերի կատարում, իրավունքի գերակայություն, մարդ-պետություն, կորպորացիա և մարդ հարաբերություններում: Սակայն եթե նախկինում այս եզրակացությունների մասին խոսում էին որպես զարգացման «ճանապարհային քարտեզ», ապա վերջին տարիներին միասնական խաղի կանոնների մասին քննարկումներն այլ ուղղությամբ են գնում: Ավելի առաջնային կամ պակաս կարևոր չեն սահմանված նորմերի կատարումը: Մեզանում և նմանատիպ երկրներում կան շատ օրենքներ ու կանոնակարգեր տարբեր բնագավառների կարգավորումների վերաբերյալ, սակայն ոչ բոլորն են կատարում դրանք: Կան մարդիկ, որոնք ընդհանրապես կարող են չենթարկվել օրենքների պահանջներին, կան նաև մարդիկ, որոնք կարող են մասամբ հետևել դրանց: Օրենքները շատ հաճախ են փոփոխվում, ոչ մի ընտրություն չի անցնում նույն օրենքներով, բիզնեսի գործունեության պայմանները անկանխատեսելի են, մասնավոր սեփականության իրավունքը սահմանափակվում է բազմաթիվ վերապահումներով:

Այսօր այլևս կասկածի տակ չի դրվում ինստիտուտների կարևորության ու նշանակության հարցը, ավելին, կա արդեն ընդհանուր ձևավորված տեսակետ՝ ինչու ոչ բոլոր երկրներն են փորձում լավ ինստիտուտներ ստեղծել: Բանն այն է, որ իշխող քաղաքական գործիչներին ու էլիտային ձեռնտու է ոչ թե այն քաղաքականությունը, որ աճ է ապահովում, օգուտ բերում, այլ այն քաղաքականությունը, որը թույլ է տալիս նրանց մնալ, պահպանել իշխանությունը, իսկ դա միշտ չէ, որ նույնն է:

Մեզանում չեն եղել անձի ու քաղաքացու ինստիտուտներ: Սրանք անընդունելի ու վտանգավոր են եղել իշխող քաղաքական ուժի համար, որը, հանձինս ՀՀ քաղաքացիների, տեսնում էր միայն հպատակների: ՀՀ քաղաքացիները միայն հպատակներ ու հարկատուներ պետք է լինեին: Մեզանում իրավունքը եղել է ոչ թե ազատական, այլ ավելի շուտ ֆեոդալական: Փորձը ցույց է տալիս, որ շատ երկրների նման, Հայաստանում էլ նման իրավիճակը երկար չէր կարող շարունակվել: Սովորաբար նման մոտեցումները աստիճանաբար բերում են իշխանության ու ժողովրդական զանգվածների օտարման: Սա բնորոշ է ոչ միայն ոչ ժողովրդավարական, ավտորիտար երկրներին: Պատահական չեն այսօր տնտեսապես զարգացած, արմատական ժողովրդավարական շատ երկրներում տեղի ունեցող զանգվածային դժգոհությունները, որոնք առանձին դեպքերում ծայրահեղ դրսևորումներ են ունենում: Ինդիքը այն է, որ այդ երկրներում էլ տարիների ընթացքում իշխանությունը կենտրոնացել է առանձին քաղաքական կամ տնտեսական խմբերի ձեռքում, որն էլ, աստիճանաբար մարդկանց հեռացնելով իշխանությունից, դարձել էր միայն իր համախոհներին սպասարկող իշխանություն:

Այս առումով հետաքրքիր և ուշադրության արժանի դիտարկում է արել հանրահայտ Իցհակ Ադգիգենը: Ռուսական pro.rbc.ru կայքին վերջերս տված հարցազրույցում անդրադառնալով դեմոկրատիայի ուժին՝ այսպիսի մի բացահայտում է կատարել. «Պետությունը նույնիսկ զարգացած երկրներում ուժեղանում է, քանի որ պետությունների առջև ծառայած խնդիրները դառնում են ավելի բարդ, խճճված ու շփոթեցնող՝ հիմնականում պայմանավորված փոփոխությունների արագացմամբ: Այս խճճվածքի քանդումը, թվում է, ի գորու է իրականացնելու միայն իշխանությունը, և այդ պատճառով էլ նա ավելի շատ իշխանություն է վերցնում: Սա սպանում է

³⁷⁴ S ե u ` w / **D. Hopt** /North D. Structure and Change in Economic History. N. Y.: W.W. Norton & Co, 1981; p / **D. Acemoglu** (Author), **J. A. Robinson** (Author) Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and Poverty Deckle Edge, March 20,2012:

ժողովրդավարությունը: ... ժողովրդավարության մահվան մեկ այլ պատճառն էլ այն է, որ կուսակցությունները չափից ավել են տարված իշխանության պայքարով: Նրանք մեղադրում են միմյանց կոռուպցիայի մեջ, և սովորական քաղաքացին դադարում է հասկանալ, թե ով է վաճը և ով է վատը: Եվ ցանկություն է ունենում, որ իրեն ղեկավարի այսպես կոչված մի «հայրիկ, որը կարգ ու կանոն կհաստատի: Կենտրոնացումը բերում է նոր ֆեոդալիզմին»³⁷⁵:

Ընգծենք, որ ճշմարտությունն այն է, որ ոչ մի ինստիտուտ կամ իստիտուտներ չեն կարող գոյատևել երկար և գործել հանուն ժողովրդի՝ առանց ժողովրդական լայն զանգվածների աջակցության-լեգիտիմության: Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ օրակարգում դրված է հետևյալ հարցը՝ մերօրյա ինչպիսի՞ հասարակություն ստեղծել, որ մարդիկ այն պարտադրված չհամարեն: Ինչպե՞ս ինստիտուտներին շունչ տալ և նրանց վերադարձնել լեգիտիմությունը: Սա վերաբերում է բոլոր այն հասարակարգերին կամ երկրներին, որոնց համար ազատությունը, ազատ խոսքի իրավունքը, մարդը, տնտեսական ու քաղաքական ազատություններն առաջնային են: Այսօրվա Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է վերը նշված սկզբունքները և փորձում է դրանք իրականություն դարձնել:

Հաշվի առնելով այս հանգամանքը և մեկ անգամ ևս կարևորելով պետություն-շուկա ժամանակակից մարտահրավերների առկայությունը՝ կարծում ենք, որ ստեղծված իրավիճակում Հայաստանի համար խիստ կարևոր է փոքր, բայց ուժեղ ու արդյունավետ պետություն ունենալու տեսլականը: Սրա ընկալումն ու ընդունումը պահանջում է նախ և առաջ պետական ինստիտուտների համակարգային փոփոխություն, ազատ շուկայական տնտեսության պահանջների կատարում, նոր որակի փոփոխարեքությունների հաստատում պետություն-քաղաքացի, պետություն-շուկա հարթությունում: Սա նաև նշանակում է պատասխանատվության բարձր աստիճան հանրային կյանքի խնդիրների լուծմանը վերաբերող որոշումների ընդունման և իրականացման գործընթացներում:

INSTITUTIONAL BASES FOR THE INTERACTION OF THE STATE AND THE MARKET

VAHAGN KHACHATURYAN

Economist

Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is to address one of the key problems of modern economic science – the institutional foundations of interaction between the state and the market, as well as the identification of modern features of state and market regulation of the economy.

Based on the goal, the article resolves the following tasks: it presents various approaches to the effectiveness of interaction between the state and the market; the choice between market and state failures - as the main task of modern economics; based on a few examples, the causes of the recent economic crises are illustrated; The examples of the Republic of Armenia and the former Soviet republics are given as examples of the unreasonable and exclusively politically motivated increase in the role of the state, and ways out of the current situation are discussed.

The studies were conducted using the methods of comparative analysis, as well as the method of generalization from the particular to the general.

³⁷⁵ С т у ` И. Адизес — РБК: «Если пресечь коррупцию, все перестанет работать», https://pro.rbc.ru/news/5c9c9b819a79471ca9843366?from=column_11.

Discussion of modern problems associated with the relationship of state and market, allowed the author to identify a number of patterns - the main dispute about the modern economy is not what its structure is, or what is considered as ideal, but how the economy works. What is worse? - governmental interventions, that are accompanied by serious inefficiency or non-interference on the part of the state and what is often called the "failure" of the market - with associated social, economic and political consequences. Consequently, the study of the shortcomings of the interaction between the state and the market is one of the main problems of the modern economy, and this task requires the joint and effective work of both economists and specialists in various fields of social sciences.

Keywords: *state, market, crisis, state regulation, property, competition, freedom, democracy, rule of law, institutions.*

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ОСНОВЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ ГОСУДАРСТВА И РЫНКА

ՎԱԱԳՆ ԽԱՇԱՏՄՐՅԱՆ

Քոնոմիստ

Ճ.Երևան, Հանրապետություն Արմենիա

Целью статьи является рассмотрение одной из ключевых проблем современной экономической науки – институциональных основ взаимодействия государства и рынка, а также выявление современных особенностей государственного и рыночного регулирования экономики.

Исходя из поставленной цели, в статье решены следующие задачи: представлены различные подходы к обеспечению эффективности взаимодействия государства и рынка; затронут вопрос выбора между провалами рынка и государства – как основной задачи современной экономической науки; на основе нескольких примеров проиллюстрированы причины недавних экономических кризисов; в качестве примеров необоснованного и исключительно политически мотивированного повышения роли государства приведены факты о Республике Армения и о бывших советских республиках, обсуждены также пути выхода из сложившейся ситуации.

Исследования проведены с использованием методов сравнительного анализа, а также метода обобщения от частного к общему.

Исследование современных проблем, связанных с взаимоотношениями государства и рынка, позволило автору выделить ряд закономерностей, в частности, что основной спор о современной экономике не в том, какова ее структура, или какая считается идеальной, а в том, как работает экономика. Что хуже – государственное вмешательство, которое сопровождается серьезной неэффективностью, или невмешательство со стороны государства и то, что часто принято называть «провалом» рынка, с сопутствующими социально-экономическими и политическими тяжелыми последствиями. Следовательно, исследование недостатков взаимодействия между государством и рынком является одной из основных проблем современной экономики, и данная задача требует совместной и эффективной работы как экономистов, так и специалистов в различных областях общественных наук.

Ключевые слова: *государство, рынок, кризис, государственное регулирование, собственность, конкуренция, свобода, демократия, верховенство закона, институты.*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՅ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ*

ՈՈՉԱ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս,
ՀԴՏՀ ԳՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի հայցորդ
Ը. Գյումրի, Հայաստանի Հանրապետություն
rozakurghinyan@yahoo.com

Հոդվածի նպատակն է բացահայտել և վերլուծել ՀՀ տնտեսական աճի և ֆինանսական խորության փոխակախվածության առանձնահատկությունները: Ինչպես գիտենք, որքան մեծ է ֆինանսական ու դրամական ռեսուրսներով տնտեսության հագեցվածությունը և բազմազան ֆինանսական համակարգերի ենթակառուցվածքները, այնքան այլ հավասար պայմաններում բարձր են տնտեսական աճի տեմպերը: Չնայած ֆինանսական վարձագման շարունակական աճը հանգեցնում է տնտեսական աճի՝ այնուամենայնիվ ֆինանսական վարձագման բարձր մակարդակների դեպքում կապը թուլանում է և, ի վերջո, դառնում է բացասական:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ գնահատել ու բացահայտել Հայաստանում տնտեսական աճի և ֆինանսական խորության միջև առկա բանական ու որակական կապը, ինչպես նաև դիտարկել տնտեսական աճի և ֆինանսական խորության միջև առկա փոխապդեցության տեսական որոշ մոտեցումներ:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, վերացարկման, ինչպես նաև մաթեմատիկական(բազմագործոն ռեգրեսիա) մեթոդները:

Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարող են ասել, որ ՀՀ ֆինանսական համակարգում նշանակալի դեր ունի բանկային համակարգը, իսկ ֆինանսական համակարգի մյուս ինստիտուտները փոքրածավալ միջոցների, ինստիտուցիոնալ անկատարության, սահմանափակ ֆինանսական գործիքների կիրառության և մի շարք այլ խնդիրների պատճառով չեն կարող նպաստել երկրում տնտեսական աճի ապահովմանը:

Հիմնաբառեր՝ ֆինանսական վարձագվածություն, ֆինանսական խորություն, տնտեսական աճ, Բարրո ռեգրեսիա, ֆինանսական ակտիվներ:

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս պայմաններում տնտեսության իրական ու ֆինանսական հատվածները սկսել են գործել ու զարգանալ անհամաչափ՝ պայմանավորված ֆինանսական շուկաների և ինստիտուտների զարգացմամբ, շրջանառվող ֆինանսական գործիքների ընդլայնմամբ, ինչպես նաև Նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ: Կախված զարգացածության մակարդակից՝ տարբեր երկրներում կիրառվում են ֆինանսական գործիքների տարբեր տեսակներ ու խմբաբանակներ, որը բխում է ինչպես երկրի օրենսդրությունից, ինստիտուցիոնալ համակարգից, այնպես էլ ֆինանսական ինստիտուտների առկայությունից ու

* Հոդվածը ներկայացվել է 22.09.2019թ., գրախոսվել՝ 05.11.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:


զարգացածության մակարդակից: Չեռևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել տնտեսության ֆինանսական խորության աստիճանը³⁷⁶ (ֆինանսական շուկաների և ինստիտուտների միջնորդության մակարդակը), ինչպես նաև բացահայտել վերջինիս՝ որպես տնտեսական աճի գործոնի:

Ցանկացած տեսակի տնտեսությունում տնտեսական աճի որոշիչ գործոն է հանդիսանում նրա ամբողջ ֆինանսական համակարգի, մասնավորապես՝ բանկային ու վարկային հատվածների զարգացման մակարդակները: Ուստի տնտեսության ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածները պետք է դիտարկվեն և գործեն որպես ազգային տնտեսության միասնական համակարգ՝ ունենալով զարգացման ընդհանուր ռազմավարական նպատակներ և դրանց համենլու մարտավարական մոտեցումներ³⁷⁷:

Ֆինանսական խորության և տնտեսական աճի միջև կապի բացահայտման գործում լավագույն գործիք է **ֆինանսական զարգացման համաթվի կիրառումը**, որը նաև հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ հաշվարկելու հետազոտվող երկրների խմբում առկա տարբերությունները³⁷⁸: Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից իրականացված ուսումնասիրություններից (1980-2015 թվականներին աշխարհի 128 երկրներում) պարզվում է, որ ֆինանսական զարգացման աճը հանգեցնում է տնտեսական աճի, բայց ֆինանսական զարգացման բարձր մակարդակների դեպքում կապը թուլանում է և, ի վերջո, դառնում է բացասական:

Գծապատկեր 1

Ֆինանսական զարգացման ազդեցությունը տնտեսական աճի վրա³⁷⁹



³⁷⁶ Տնտեսության ֆինանսական խորությունը ցույց է տալիս, թե գործարարները, տնային տնտեսությունները, պետական կառավարման մարմինները ի՞նչ չափով են իրենց գործունեությունը ֆինանսավորում կապիտալի շուկաների, բանկերի և այլ ֆինանսական միջնորդների հաշվին:

³⁷⁷ Александровна Т. Ок., "Значение финансовой глубины в развитии экономики страны", г. 214, с. 128

³⁷⁸ IMF Working paper, prepared by Katsiaryna Svirydzhenka-«Introducing a New Broad-based Index of Financial Development», January 2016, page 11

³⁷⁹ IMF Staff discussion Note: "Rethinking Financial Deeping: Stability and Growth in Emerging Markets", May 2015 p. 16

Եթե ֆինանսական զարգացման համաթվի արժեքը գտնվում է 0,4-0,7 միջակայքում, ապա ենթադրելի է, որ տնտեսական աճի հետ կապը գնալով թուլանում է: Այս գնահատականը զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների համար 30 տարիների կտրվածքով հանդիսանում է միջին գնահատական: Գծապատկերում պատկերված է, թե ֆինանսական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների խմբերը ինչպես են տեղաբաշխված գնահատման կորի վրա: Պետք է նշել, որ «շրջման կետի» շուրջ կա մի լայն շերտ (ստվերագծված հատվածը), որն արտացոլում է երկրների փոխհարաբերությունների և ինստիտուցիոնալ պարամետրերի փոփոխությունները: 95% հավանականությամբ համաթվի այն արժեքը, որի դեպքում ֆինանսական զարգացման մարժային ազդեցությունը տնտեսական աճի վրա դառնում է զգալի բացասական, մոտ 0,7 է³⁸⁰:

Գոյություն ունեն որոշակի փաստարկներ այն մասին, որ ֆինանսական զարգացման շատ բարձր մակարդակը տնտեսական աճի վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն: Մասնավորապես.

1. ֆինանսական զարգացման շատ բարձր մակարդակը մեծացնում է երկրում ցնցումների հավանականությունը, որի հետևանքով երկիրը հայտնվում է այնպիսի իրավիճակում, որ իրական ՀՆԱ-ի աճի տեմպը շատ փոքր է լինում,
2. ֆինանսական զարգացման շատ բարձր մակարդակը բերում է արտադրական ոլորտից ուղեղների, մարդկային կապիտալի հոսքի դեպի ֆինանսական ոլորտ,
3. զարգացած ֆինանսական ոլորտը կարող է զգայուն լինել բարոյական ռիսկի նկատմամբ, որն էլ կարող է բերել ռեսուրսների սխալ տեղաբաշխման (սպեկուլյատիվ ռիսկ)³⁸¹:

Գնահատումներից պարզվում է, որ եթե ֆինանսական զարգացման համաթիվը գտնվում է 0,4-0,7 շրջակայքում, ապա ֆինանսական զարգացման աճը կհանգեցնի տնտեսական աճի ամենաբարձր տեմպին՝ 4-5,5 տոկոսային կետի միջակայքում, իսկ տնտեսական աճ ձևավորող մյուս գործոնները կթողնի հաստատուն³⁸²:

Արժույթի միջազգային հիմնադրամի հետազոտություններում տնտեսական աճ և ֆինանսական զարգացում փոխադարձ կապը ուսումնասիրվում է տնտեսական աճի 2 հիմնական գործոնների՝ գործոնների ընդհանուր արտադրողականության և կապիտալի կուտակման տեսանկյունից:

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ֆինանսական զարգացման շատ բարձր մակարդակը առաջին հերթին ազդեցություն է ունենում գործոնների ընդհանուր արտադրողականության աճի վրա: Այն, ճիշտ է, նշանակալիորեն չի ազդում կապիտալի կուտակման վրա, սակայն բերում է ներդրումներում արդյունավետության մակարդակի նվազման, իսկ ֆինանսավորման որակը (օրինակ՝ ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումը արտադրական գործունեության և մարդկային կապիտալի մեջ) ֆինանսական զարգացման բարձր մակարդակների դեպքում ընկնում է: Այլ կերպ ասած՝ ֆինանսական հատվածի շատ ֆունկցիաներ, ինչպիսիք են՝ ինայոդությունների կենտրոնացումը, գործարքների ոլորինացումը, ֆինանսական զարգացման շատ բարձր մակարդակների դեպքում կարող են մնալ հաստատուն, բայց այլ ֆունկցիաներ, ինչպիսիք են՝ կապիտալի բաշխման արդյունավետությունը և կորպորատիվ հսկողության արդյունավետությունը, կարող են փոփոխվել³⁸³:


³⁸⁰ IMF Staff discussion Note: "Rethinking Financial Deeping: Stability and Growth in Emerging Markets", May 2015 p. 15

³⁸¹ IMF Staff discussion Note: "Rethinking Financial Deeping: Stability and Growth in Emerging Markets", May 2015 p. 15

³⁸² IMF Staff discussion Note: "Rethinking Financial Deeping: Stability and Growth in Emerging Markets", May 2015 p. 16

³⁸³ IMF Staff discussion Note: "Rethinking Financial Deeping: Stability and Growth in Emerging Markets", May 2015 p. 16

Ֆինանսական զարգացման ազդեցությունը կապիտալի կուտակման և գործունեի ընդհանուր արտադրողականության վրա³⁸⁴



Հայաստանի տնտեսության համար տնտեսական աճի տեմպերի վրա ֆինանսական խորության ազդեցության վերլուծության նպատակով կիրառենք «Բարրո ռեգրեսիան» : Վերջինս ունի հետևյալ տեսքը.³⁸⁵

$$\Delta ZU = a + b * \frac{\text{արժեթղթերի շուկայի կապիտալիզացիա}}{\text{վարկեր}} + c * \frac{\text{Ֆինանսական ակտիվներ}}{ZU} + d * \frac{\text{Ներդրումներ}}{ZU}$$

Որտեղ ΔZU -բնակչության մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն է,

արժեթղթերի շուկայի կապիտալիզացիա /վարկեր -ը արժեթղթերի շուկայի և կապիտալիզացիայի և

առևտրային բանկերի կողմից տրված վարկերի հարաբերությունն է: Ցուցանիշը ցույց է տալիս երկրի ֆինանսական շուկայի կառուցվածքը: Եթե արժեթղթերի շուկայի կապիտալիզացիան գերազանցում է կազմակերպություններին առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ծավալները, այսինքն՝ ցուցանիշը մեծ է 1-ից (կամ 100%-ից), ապա կարելի է խոսել այնպիսի ֆինանսական շուկայի մասին, որում գերակշիռ դիրք ունի արժեթղթերի շուկան: Հակառակ դեպքում, եթե արտաքին ֆինանսավորման վարկային աղբյուրը գերակա է արժեթղթերի թողարկման նկատմամբ, այսինքն՝ ցուցանիշի արժեքը գտնվում է 0,1 միջակայքում, ապա խոսքը գնում է բանկային կենտրոնացում ունեցող ֆինանսական շուկայի մասին:

³⁸⁴ IMF Staff discussion Note: "Rethinking Financial Deeping: Stability and Growth in Emerging Markets", May 2015 p. 17

³⁸⁵ Столбов М. И., "Финансовый рынок и экономический рост: контуры проблемы.", Москва, г. 2008, с.103

Ֆինանսական ակտիվներ
ՀՆԱ

ն կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ընդհանուր ակտիվների տեսակարար կշիռն է ՀՆԱ-ում: Ցուցանիշը բնութագրում է տնտեսությունում ֆինանսական շուկայի նշանակությունը (ֆինանսական խորությունը)՝ առանց հաշվի առնելու ֆինանսական շուկայի կառուցվածքը:

Ռեգրեսիոն հավասարման մեջ այս ցուցանիշների համատեղ ներմուծումը հնարավորություն է տալիս պատասխանել մի շարք հարցերի՝ արդյոք տնտեսության ֆինանսական խորությունը ունի՞ ազդեցություն բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վրա, եթե այո, ապա ի՞նչ ուղղությամբ (այլ կերպ ասած՝ արդյոք գործակիցը նշանակալի՞ է և այն դրական՞ է, թե՞ բացասական), ֆինանսական կայունության ցուցանիշի բացակայության դեպքում որքա՞ն նշանակալի է ֆինանսական շուկայի կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի տեմպի վրա (b և c գործակիցները արդյոք միաժամանակ նշանակալի՞ են),

Ներդրումներ
ՀՆԱ

-ը հիմնական կապիտալում կատարված ներդրումների հարաբերությունն է ՀՆԱ-ին, արտահայտում է իրական հատվածում ներդրումային գործընթացների դինամիկան. a-ն՝ ռեգրեսիոն հավասարման ազատ անդամն է, b,c,d-ն վերը նշված համապատասխան փոփոխականների փոփոխությունների նկատմամբ բնակչության մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի ճկունության գործակիցներն են (դիտարկվող առանձին երկրների համար), ε -ը ռեգրեսիայի սխալն է:

Այսպես, վերը նշված ռեգրեսիոն հավասարման մոդելը բավականին հարմար է տնտեսական աճի վրա ֆինանսական խորության և ֆինանսական շուկայի կառուցվածքի ազդեցությունը վերլուծելու համար:

ՀՀ տնտեսության համար ռեգրեսիոն մոդելի կառուցման նպատակով օգտագործել ենք բնակչության մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի, արժեթղթերի շուկայի կապիտալիզացիա/վարկեր հարաբերակցություն³⁸⁶, ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցություն³⁸⁷, ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցություն³⁸⁸ ցուցանիշների ամսական ժամանակային շարքերը 2007-2018թթ.-ի կտրվածքով:

Ստորև ներկայացնենք ռեգրեսիոն մոդելի բնութագրերը.

Աղյուսակ 1

ՀՀ տնտեսության համար 2007-2018թթ.-ին «Բարրո ռեգրեսիա» մոդելի բնութագրերը³⁸⁹

Բնութագրիչ	R	R ²	p	F
Արժեք	0,746	0,557	0.000	53,553

³⁸⁶ Արժեթղթերի շուկայի կապիտալիզացիա ցուցանիշի փոխարեն մոդելի ստացման համար կիրառվել է ՀՀ ֆոնդային բորսայի շուկայական կապիտալիզացիա ցուցանիշը, որը պայմանավորված է արտաբորսայի թվային տվյալների բացակայությամբ:

³⁸⁷ Ֆինանսական ակտիվներ ասելով այս դեպքում հասկանում ենք ՀՀ ԿԲ-ի, առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և ներդրումային ընկերությունների ակտիվների հանրագումարը:

³⁸⁸ Ներդրումներ ասելով մոդելում ի նկատի ունենք հիմնական կապիտալում կատարված համախառն ներդրումները:

³⁸⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ ԿԲ 2007-2018թթ.-ի ամսական վիճակագրական տեղեկագրերի տվյալների բազաների հիման վրա կառուցելով ամսական տվյալների բազաներ, ինչպես նաև օգտագործելով IBM SPSS Statistics 21 ծրագրային փաթեթը:

ՀՀ տնտեսության համար 2007-2018թթ.-ին «Բարրո ռեգրեսիա» մոդելի պարամետրերի բնութագրերը

Գործոններ	T վիճ	Նշանակալիություն
Կապիտալիզացիա/վարկեր	1,811	0,004
Ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ	7,296	0,000
Հիմնական կապիտալում կատարված ներդրումներ/ՀՆԱ	1,086	0,028

Ելնելով մոդելի արդյունքներից՝ կարող ենք փաստել, որ ՀՀ տնտեսության համար «Բարրո ռեգրեսիա» մոդելի պարամետրերը բնակչության մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի մակարդակի փոփոխության վրա միջին և միջինից բարձր ազդեցություն ունեն ($R = 0,746$, $R^2 = 0,557$, մոդելը նշանակալի է): Նշվածը վկայում է այն մասին, որ «Բարրո ռեգրեսիա» մոդելում ընդգրկված պարամետրերը դիտարկվող ժամանակահատվածում էական ազդեցություն չեն ունեցել ՀՀ տնտեսական աճի տեմպերի վրա: Դիտարկելով իրական ՀՆԱ-ի փոփոխության վրա մոդելի առանձին բաղկացուցիչների ազդեցությունը՝ տեսնում ենք, որ ամենամեծ ազդեցությունը դրսևորել է ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը ($p = 0,000$): Սա պայմանավորված է նրանով, որ երկրում տնտեսական աճի տեմպերի վրա վերոնշյալ փոփոխականներից ազդեցություն ունի միայն բանկային հատվածը՝ վերջինիս համեմատաբար բարձր զարգացվածության պատճառով: Ի տարբերություն ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ ցուցանիշի՝ մոդելի մյուս պարամետրերի ազդեցությունը համեմատաբար ցածր է (կապիտալիզացիա/վարկեր՝ $p = 0,004$, ներդրումներ/ՀՆԱ՝ $p = 0,028$): Այս ցուցանիշների ազդեցության ցածր մակարդակը պայմանավորված է ՀՀ-ում արժեթղթերի շուկայի թերզարգացվածությամբ, տնտեսությունում ներդրումային դաշտի պասիվությամբ, բնակչության կողմից ներդրումներ կատարելու այլընտրանքների բացակայությամբ, ֆինանսական գործիքների կիրառման մշակույթի թերզարգացվածությամբ, արժեթղթերի շուկայում սահմանափակ ֆինանսական գործիքների կիրառմամբ, ինչպես նաև բնակչության գնողունակության ցածր մակարդակով:

Արդյունքում ՀՀ տնտեսության համար «Բարրո ռեգրեսիա» մոդելը ունի հետևյալ տեսքը.

$$\Delta \text{ՀՆԱ} = 95,933 + 0,144 * \text{արժեթղթերի շուկայի կապիտալիզացիա/վարկեր} + 0,250 * \text{ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ} + 0,037 * \text{ներդրումներ/ՀՆԱ} + 1,25$$

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ մոդելում ճկունության ամենամեծ գործակիցն ունի ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը: Մյուս երկու պարամետրերից ՀՆԱ-ի փոփոխության վրա համեմատաբար ավելի մեծ ազդեցություն կարող է ունենալ ֆինանսական շուկայի կառուցվածքը բնութագրող կապիտալիզացիա/վարկեր ցուցանիշը, քանի որ վերջինիս ճկունության գործակիցը, ի տարբերություն ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի, ավելի մեծ է՝ 0,144:

Վերոնշյալ վերլուծությունից կարող ենք եզրակացնել, Հայաստանի ֆինանսական հատվածի կառուցվածքային առանձնահատկություններով է պայմանավորված, որ տարաբնույթ ֆինանսական ինստիտուտների առկայության պարագայում բացակայում է ֆինանսական խորության բարձր մակարդակը: Վերջինս բնութագրվում է հիմնականում բանկային հատվածի զարգացվածությամբ, իսկ ֆինանսական համակարգի մյուս ինստիտուտները (վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ, կենսաթոշակային հիմնադրամներ և այլն) ճիշտ է առկա են, սակայն թերզարգացվածության պատճառով դեռևս չեն նպաստում ֆինանսական խորության մակարդակի բարձրացմանը:

FACTOR ANALYSIS OF ECONOMIC GROWTH AND FINANCIAL DEPENDENCE ON DATA RA

ROZA KURGHINYAN

*Lecturer of the Armenian State University of Economics,
department of General Economics,
applicant of the Armenian State University of Economic,
department of General Economics,
Gyumri, Armenia*

The purpose of this article is to identify and analyze the peculiarities of interconnection between economic growth and financial depth of Armenia. As it is known, in other equal conditions how the higher economy's financial and monetary resources and diverse financial systems infrastructures, then higher the rates of economic growth. Although continued growth of financial development leads to economic growth, nevertheless in the case of high levels of financial development, the connection weakens and ultimately becomes negative.

Taking into account the above we have set the following issues: assess and identify the quantitative and qualitative relationship between economic growth and financial development in Armenia, as well as consider some theoretical approaches to the interaction between economic growth and financial depth.

Induction, deduction, abstraction, analysis and synthesis, as well as mathematical / multivariate regression / methods were used to perform the study.

Based on the results of the analysis we can conclude that the banking system has a significant role in the financial system of Armenia. Other institutions of the financial system cannot contribute to the economic growth in the country because of the small-scale funds, institutional imperfection, limited financial instruments and a number of other issues.

Key words: Financial development, financial depth, economic growth, Barro regression, financial assets

ФАКТОРНЫЙ АНАЛИЗ ЗАВИСИМОСТИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА И ФИНАНСОВОЙ ГЛУБИНЫ ПО ДАННЫМ РА

РОЗА КУРГИНЯН

*Гюмрийский филиал Армянского государственного экономического
университета, преподаватель кафедры общей экономики,
соискатель кафедры общей экономики,
г.Гюмри, Республика Армения*

Целью данной статьи является выявление и анализ особенностей взаимозависимости экономического роста и финансовой глубины в Республике Армения. Как мы знаем, насколько велика насыщенность экономики финансовыми и денежными ресурсами и разнообразна инфраструктура финансовых систем, настолько (в иных равных условиях) высоки темпы экономического роста. Несмотря на то, что последовательный рост финансового развития ведет к экономическому росту, тем не менее в случае высокого уровня финансового развития связь ослабевает и в конечном итоге становится отрицательной.

С учетом вышеизложенного мы поставили перед собой следующие задачи: оценить и определить количественную и качественную связь между экономическим ростом и финансовой глубиной в Армении, а также рассмотреть некоторые теоретические подходы к взаимовлиянию экономического роста и финансовой глубины.

В ходе исследования были применены методы индукции, дедукции, абстракции, анализа и синтеза, а также математические (множественная регрессия) методы.

Исходя из результатов анализа, можно сказать, что банковская система играет значительную роль в финансовой системе Армении, а другие институты финансовой системы не могут способствовать экономическому росту в стране из-за использования небольших фондов, институционального несовершенства, ограниченных финансовых инструментов и ряда других проблем.

Ключевые слова: *финансовое развитие, финансовая глубина, экономический рост, регрессия Барро, финансовые активы.*

ՀԻՓՈԹԵԶԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ԵՎԳԵՆՅԱ ՀԱՅՐԻՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ)
evgenyahayriyan@mail.ru

Հոդվածի նպատակն է ներկայացնել Արցախի Հանրապետության հիփոթեզային վարկային շուկայի ձևավորման ու կայացման գործընթացը, պարզացման հեռանկարները: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել Արցախի Հանրապետության հիփոթեզային շուկայի հիմնական ցուցանիշները 2007-2018թթ. ընկած ժամանակահատվածի համար, վերահսկել վերջիններիս դրսևորման առանձնահատկությունները, ներկայացնել Արցախի Հանրապետության հիփոթեզային վարկային շուկայի պարզացման հեռանկարները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական (համակարգային վերլուծություն, համադրում, վերլուծում, ինդուկցիա, դեդուկցիա և ստուգում՝ հետևելով մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկային և միտումներին), ինչպես նաև հատուկ գիտական (համեմատական-վերլուծական, նորմատիվ տրամաբանական) մեթոդներ:

Ինչպես յուրաքանչյուր պետությունում, Արցախի Հանրապետությունում պետության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը բնակչության կենսամակարդակի բարձրացման համար նորմալ պայմանների ապահովումն է: Վերջինիս տեսանկյունից կարևորվում է բնակչության բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացումը: ԱՅ հիփոթեզային շուկայի ձևավորման ու կայացման գործում բացառիկ նշանակություն ունի պետության կողմից հիփոթեզային վարկավորման ոլորտում ֆինանսական աջակցության բազմաբնույթ ծրագրերի իրականացումը, որի շնորհիվ հիփոթեզային վարկերը որոշ չափով հասանելի դարձան բնակչության համար: Հոդվածում ներկայացված են հիփոթեզային շուկայի ձևավորման ու կայացման փուլերը, հիփոթեզային շուկայի պարզացմանը խոչընդոտող գործոնները:

Հիմնաբառեր՝ հիփոթեզային շուկա, անշարժ գույք, բնակարանային պայմաններ, պետական ֆինանսական առակցություն, վարկավորում:

Յուրաքանչյուր պետության առջև դրված կարևոր խնդիրներից է բնակչության բարեկեցության համար նորմալ պայմանների ապահովումը: Բնակչության բարեկեցությունը բնութագրող կարևոր ցուցանիշներից է բնակարանային նորմալ պայմանների առկայությունը:

Խորհրդային միության գոյության ժամանակահատվածում բնակչության բնակարանային ապահովության խնդիրները հիմնականում լուծում ստանում էին պետության կողմից: Խորհրդային միության փլուզումից հետո հետխորհրդային

* Հոդվածը ներկայացվել է 01.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

տարածաշրջանների երկրները կանգնեցին բնակչությանը բնակարաններով ապահովելու խնդրի լուծման հրամայականի առջև: Նշված խնդրի լուծումը առավել բարդ ու կարևոր էր Արցախի Հանրապետությունում, որտեղ բացի հետխորհրդային ժամանակաշրջանին բնորոշ դժվարություններից, առկա էր նաև պատերազմից տուժած ենթակառուցվածքների՝ այդ թվում բնակարանային ֆոնդի վերականգման բարդ խնդիրը:

Արցախի Հանրապետությունում օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ պետական միջոցների անբավարարության պայմաններում բնակչության բնակարանային ապահովության խնդրի լուծման առավել իրատեսական ճանապարհը հիփոթեքային վարկավորման ինստիտուտի ձևավորումն ու զարգացումն էր:

Ընդհանուր առմամբ, ԱՀ-ում հիփոթեքային վարկավորման շուկան ձևավորվել է 2008 թվականից: Մինչ այդ ժամանակահատվածը հիփոթեքային վարկավորումը մասսայական բնույթ չէր կրում: Գտնվելով ՀՀ հետ միասնական բանկային համակարգի վերահսկողության ներքո՝ Արցախի Հանրապետությունում հիփոթեքային վարկավորման շուկան ձևավորվեց ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման գործընթացի իրավական կարգավորման գործընթացին համահունչ³⁹⁰ Հիփոթեքային վարկավորման պայմանները գրեթե չէին տարբերվում սպառողական վարկերի տրամադրման պայմաններից. վերջիններս տրամադրվում էին բարձր տոկոսադրույքով ու կարճաժամկետ:

Հիփոթեքային վարկավորման շուկայի կայացումն ու զարգացումը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ փուլերի.

1. Հիփոթեքային շուկայի ձևավորման փուլ(2008-2009թթ): Այս փուլում Նախանշվեցին ԱՀ-ում հիփոթեքային վարկավորման հիմնական ուղղությունները, մշակվեցին հիփոթեքային վարկավորման պետական աջակցության ծրագրերը: 2008 թվականի փետրվարի 26-ի ԼՀՀ Կառավարության N101 որոշմամբ հաստատվեց բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ ու բնակելի տներ ձեռքբերելու պետական աջակցության տրամադրման կարգը³⁹⁰, որի շրջանակներում հստակեցվեցին պետության կողմից քաղաքացիներին տրամադրվող հիփոթեքային վարկերի տոկոսների մասնակի սուբսիդավորման չափերը: Այդ փուլը համարվում է ԱՀ-ում հիփոթեքային վարկային շուկայի ձևավորման ու կայացման կարևոր փուլ, երբ հիփոթեքային վարկավորման ծավալները գրանցեցին աննախադեպ աճի դինամիկա: Այն նշանավորվեց նաև ԱՀ-ում բնակարանաշինության ծրագրերի մեկնարկով, որոնք հիմք հանդիսացան հիփոթեքային շուկայի ձևավորման ու հետագա զարգացման համար:

2. Հիփոթեքային վարկային շուկայի զարգացման փուլ (2010-2014թթ): Այս փուլը բնութագրվում է հիփոթեքային վարկավորման ոլորտում, պետական ֆինանսական աջակցության իրավական դաշտի կարգավորման կատարելագործմամբ, հիփոթեքային վարկավորման կայուն աճի դինամիկայով:


3. Հիփոթեքային վարկային շուկայի համեմատական անկման փուլ(2015-2016թթ): Արցախի Հանրապետությունում հիփոթեքային վարկային շուկայի այս փուլը բնութագրվեց հիփոթեքային վարկավորման ծավալների անկմամբ՝ պայմանավորված ԱՀ-ում բանկերի կողմից հիփոթեքային վարկերի տրամադրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարար մակարդակով: Չնայած անկման միտումներին՝ այս փուլը հիփոթեքային շուկայի զարգացման համար կարևոր

³⁹⁰ ԼՀՀ Կառավարության որոշումը «Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգը հաստատելու մասին», 2008 փետրվարի 26, N101:

Նշանակություն ունեցավ ԱՅ-ում 2015 թվականից եկամտային հարկի մասին օրենքում կատարվեց փոփոխություն, որը վերաբերում էր առաջնային շուկայից բնակարաններ ձեռք բերելու և բնակելի տներ կառուցելու համար հիփոթեքային վարկերի համար վճարված տոկոսների՝ եկամտային հարկի հաշվին փոխհատուցմանը: Օրենքի կատարումն ապահովելու համար ԼՂՀ Կառավարությունը 2015 թվականի մայիսի 26-ի N306Ն որոշմամբ հաստատեց «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը»: Հիփոթեքային վարկավորման շուկայի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 2015 թվականից ուժի մեջ մտած ԼՂՀ Կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N889-Ն որոշումը, որը բնակչության որոշակի խավերի համար սահմանում էր հիփոթեքային վարկերի տոկոսների լրիվ սուբսիդավորման, կանխավճարների տրամադրման և այլ աջակցության մեխանիզմները: Նշված ժամանակահատվածում ընդունված պետական աջակցության նոր իրավական ակտերը հիմք հանդիսացան հիփոթեքային վարկավորման շուկայի հետագա զարգացման համար:

4. Հիփոթեքային վարկային շուկայի աշխուժացման և զարգացման փուլ (2017թվականից առ այսօր): Պետական ֆինանսական բազմաբնույթ աջակցության ծրագրերի շրջանակների անընդհատ ընդլայնման արդյունքում հիփոթեքային շուկան ԱՅ-ում թևակոխել է կայուն զարգացման փուլ: 2019 թվականի փետրվարի 01-ից ուժի մեջ է հիփոթեքային վարկավորմամբ բնակարանային պայմանների բարելավման համար ԱՅ քաղաքացիներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման նոր կարգը, որով ընդլայնվել է հիփոթեքային վարկավորման ոլորտում պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների շրջանակը, ինչի արդյունքում ԱՅ-ում հիփոթեքային վարկավորման շուկան թևակոխել է զարգացման նոր՝ կայուն ու դինամիկ փուլ:


Արցախի Հանրապետությունում հիփոթեքային շուկայի վերլուծության համար կարևոր նշանակություն ունի անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պետական գրանցման գործարքների քանակների ուսումնասիրումը:



Գծապատկեր 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործարքների քանակը 2007-2018թթ.³⁹¹

³⁹¹ www.stat-nkr.am, 2007-2018թթ. տարեգրքեր:

2007-2018թթ. ընկած ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործարքների քանակը դրսևորվել է ինչպես աճի, այնպես էլ անկման տեսքով: Նշված ժամանակահատվածում սեփականության իրավունքի գրանցման գործարքների քանակն իր առավելագույն դրսևորումն ունեցավ 2009 թվականին, իսկ նվազագույն քանակով գործարքներ կատարվեցին 2016 թվականին: Գրավի իրավունքի գրանցման գործարքները 2007-2018թթ. ընթացքում իրենց նվազագույն արտահայտությունը ունեցան 2015 թվականի, որը պայմանավորված էր բանկային համակարգի կողմից հիփոթեքային վարկավորման ծավալների անկմամբ: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործարքների կազմում մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում սեփականության իրավունքի գրանցման գործարքները (2007-2018թթ. ընթացքում կշիռը տատանվել է 60-70%-ի սահմաններում): Ընդհանուր առմամբ, 2007-2018թթ. ընկած ժամանակահատվածում տարեկան գրանցված գործարքների միջին քանակը կազմել է 8074, որից սեփականության իրավունքի գրանցման` 5065, վարձակալության իրավունքի գրանցման` 1298, օգտագործման իրավունքի` 74, կառուցապատման իրավունքի` 305, գրավի իրավունքի` 1332:




Գծապատկեր 2. Բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական գները Ստեփանակերտ քաղաքում (միջին) ԱՄՆ դոլար, 1 քառ.մ³⁹²

Հիփոթեքային շուկայի կարևոր բնութագրիչներից են բնակարանների մեկ քառակուսի մետրի շուկայական գները: Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2007-2018 թվականների ընթացքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական գներն ունեցել են տատանողականության բարձր մակարդակ, իրենց առավելագույն ցուցանիշը գրանցել են 2008 թվականին, որը մի կողմից` պայմանավորված էր բնակարանային շինարարության ծավալների բարձր աճի տեմպով, մյուս կողմից` Արցախի Հանրապետությունում սկիզբ առած պետական ֆինանսական աջակցության ծրագրերի մեկնարկով` պայմանավորված բնակարանների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ: Բնակարանների գները 2010 թվականից սկսած կայունացել են, իսկ վերջին երկու տարիներին

³⁹² www.stat-nkr.am, 2007-2018թթ. տարեգրքեր:

Ստեփանակերտ քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական գները կտրուկ նվազել են՝ պայմանավորված նոր բնակարաշինության գործընթացի անավարտ լինելու հանգամանքով: ԱՅ-ում 2020 թվականին նախատեսվում է շահագործման հանձնել նորակառուց բնակերի շենքեր, ինչի արդյունքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գները կդրսևորեն աճի դինամիկա:


2008 թվականից Արցախի Հանրապետությունում սկսեց գործել բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգը, որի շնորհիվ ձևավորվեց և իր զարգացման ուղին սկսեց հիփոթեքային վարկային շուկան:



Գծապատկեր 3. Պետական ֆինանսական աջակցությամբ ֆինանսավորված հիփոթեքային վարկերի քանակն ու գումարը 2008-2018թթ.³⁹³

Արցախի Հանրապետության հիփոթեքային վարկային շուկայի կայացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ հիփոթեքային վարկերի տոկոսների մասնակի սուբսիդավորման ծրագիրը, որի շնորհիվ հիփոթեքային վարկը դարձավ համեմատաբար հասանելի բնակչության համար: 2008-2018թթ ընկած ժամանակահատվածում պետական աջակցությամբ տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալների կտրուկ աճ գրանցվեց 2010 թվականից մինչև 2014 թվականը, իսկ նշված ժամանակահատվածում տրամադրված հիփոթեքային վարկերի թե՛ քանակային, թե՛ գումարային ցուցանիշներն առավելագույն դրևորում ունեցան 2011 թվականին, որից հետո այն գրեթե պահպանվեց նույն մակարդակում մինչև 2014 թվականը, իսկ 2015 թվականին տեղի ունեցավ հիփոթեքային վարկավորման կտրուկ անկում, որն իր արտահայտությամբ նվազագույնը եղավ 2008-2018թթ. ընկած ժամանակահատվածում: 2016 թվականից հիփոթեքային վարկերի ծավալները սկսեցին աճել կայուն տեմպով՝ ապահովելով միջին տարեկան 23 տոկոս աճ:

³⁹³ www.aif.am/գործունեության, տարեկան հաշվետվություններ 2008-2018թթ.:



Գծապատկեր 4. Պետական ֆինանսական աջակցությամբ տրամադրված հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը ԱՅ վարկային ներդրումներում 2008-2018թթ.,%

Ինչպես երևում է գծապատկերից, պետական աջակցությամբ տրամադրված հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը ԱՅ վարկային ներդրումներում նշված ժամանակահատվածում դրսևորվել է նվազման տեսքով, բացառությամբ 2010 թվականի, երբ հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը վարկային ներդրումներում կազմեց 10,7%, որը պայմանավորված էր մի կողմից՝ ԱՅ վարկային ներդրումների նախորդ տարվա համեմատ մոտ 27 տոկոս անկմամբ, իսկ մյուս կողմից՝ հիփոթեքային վարկերի ավելի քան երկու անգամ աճով: 2011 թվականից հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերի կազմում դրսևորել է նվազման դինամիկա, որը պայմանավորված էր վարկային ներդրումների տարեկան աճի առաջանցիկ տեմպով հիփոթեքային վարկերի տարեկան աճի տեմպի նկատմամբ: Նշված ժամանակահատվածում վարկային ներդրումների միջին տարեկան աճի տեմպը կազմել է 33%, իսկ հիփոթեքային վարկի տարեկան աճի տեմպը՝ 12%:

Ընդհանուր առմամբ, զարգացած երկրներում հիփոթեքային վարկային շուկայի ձևավորման ու կայացման գործընթացին նպաստում են պետության կողմից իրականացվող բազմաբնույթ ծրագրերը, իսկ վերջինիս հետագա զարգացումը ապահովվում է մասնավոր ֆինանսական ինստիտուտների կողմից: Չարգացող և անցումային տնտեսությունն ունեցող պետություններում հիփոթեքային վարկային շուկայի զարգացման գործում առավել կարևոր նշանակություն ունի հիփոթեքային վարկավորման ոլորտում պետական արդյունավետ քաղաքականության իրականացումը: Անցած տարիների ընթացքում ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում իրականացվել են բազմաբնույթ պետական ծրագրեր, որոնք գտնվում են անընդհատ կատարելագործման փուլում: Լինելով ՀՀ միասնական բանկային համակարգի վերահսկողության տիրույթում ԱՅ-ում գործում են վարկավորման ոլորտում ՀՀ ԿԲ կողմից իրականացվող վերահսկողության իրավական նորմերը: ՀՀ և ԱՅ հիփոթեքային վարկային շուկայի ոլորտում կարևոր էր «Հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, վերջինից բխող ՀՀ ԿԲ իրավական ակտերի ընդունումը, որով կանոնակարգվեցին հիփոթեքային վարկավորման ոլորտում վարկատու կազմակերպություններին, ինչպես նաև վարկավորման գործընթացին ներկայացվող հիմնական պահանջները՝ Արցախի Հանրապետության հիփոթեքային վարկային շուկայի զարգացմանը խոչընդոտող

կարևոր գործոնը քաղաքական անկայուն իրավիճակն է: ԱՅ-ում գործող վարկատու կազմակերպությունների մեծամասնությունը ՀՀ գործող վարկատուների մասնաճյուղերն են, որոնց կողմից ԱՅ տարածքում հիփոթեքային վարկերի տրամադրումը շատ հաճախ դիտարկվում է որպես բարձր ռիսկային, ինչի պատճառով էլ որոշ դեպքերում վարկատուների կողմից նախընտրելի է ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումը առավել քիչ ռիսկային պրոդուկտներում: Վերջինների կողմից հիփոթեքային վարկավորում իրականացնելու դեպքում լրացուցիչ պահանջներ են առաջադրվում ապագա վարկառուների նկատմամբ, որոնք երբեմն ոչ մատչելի են դարձնում հիփոթեքային վարկի ստացումը: Այս տեսանկյունից ԱՅ-ում կարևոր դերակատարություն ունեն «Արցախբանկ ՓԲԸ»-ն և «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՌԻՎԿ ՓԲԸ-ն, որոնք հիփոթեքային վարկեր տրամադրելիս նպաստում են հիփոթեքային ոլորտում ԱՅ-ում գործող պետական ծրագրերի կյանքի կոչմանը:

Հիփոթեքային վարկավորման ոլորտում ռիսկերի նվազեցման տեսանկյունից նշանակություն ունի անշարժ գույքի օբյեկտիվ ու ճիշտ գնահատման արդյունավետ մեխանիզմների ապահովումը: Անշարժ գույքի օբյեկտիվ գնահատումից էլ կախված է տրամադրվող վարկի գումարը, ժամկետը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում տալու հիփոթեքային շուկայի իրական գնահատականը: Այդ առումով անհրաժեշտ է համապատասխան իրավական կարգավորմամբ հստակ պահանջներ առաջադրել գնահատող ընկերություններին, ինչպես նաև խիստ վերահսկողություն սահմանել վերջիններիս նկատմամբ:

Երկարաժամկետ հատվածում հիփոթեքային շուկայի զարգացումն ապահովելու տեսանկյունից կարևորվում է հիփոթեքային առաջնային շուկայի զարգացմանը նպաստելը, որը մի կողմից՝ բնակչության բնակարանային ապահովման մակարդակը կթևափոխի առավել բարձր հարթակ, իսկ մյուս կողմից՝ կնվազեցնի հիփոթեքային վարկավորման գործընթացում գրավադրվող անշարժ գույքի իրացվելիության ռիսկը:

Հիփոթեքային վարկային շուկայի զարգացմանը նպաստող կարևոր գործոն է նաև հիփոթեքային վարկավորման գործընթացում ապահովագրության ինստիտուտի զարգացումը: Ապահովագրությունը պետք է ներառի ինչպես գրավադրվող անշարժ գույքը, այնպես էլ կորուստների վնասման, վարկառուների կյանքի ու աշխատունակության ապահովագրությունը:

Այսպիսով, Արցախի Հանրապետությունում բնակչության բնակարանային պայմանների բարելավման հիմնական ուղղությունը հիփոթեքային վարկային շուկայի զարգացումն է: Արցախի Հանրապետության նման քաղաքական անկայուն դաշտում պետություններում հիփոթեքային վարկային շուկայի զարգացումը մեծապես պայմանավորված է պետության կողմից հիփոթեքային վարկավորման ոլորտում արդյունավետ քաղաքականության իրականացմամբ: Անցած տարիների ընթացքում ԱՅ-ում իրականացվել են բազմաթիվ պետական ֆինանսական աջակցության ծրագրեր, որոնք հիմք են հանդիսացել ԱՅ-ում հիփոթեքային վարկային շուկայի ձևավորման ու կայացման համար: Չնայած իրականացված ծրագրերին՝ հիփոթեքային շուկայի հետագա զարգացման համար դեռևս առկա են որոշ խոչընդոտող գործոններ, որոնց լուծումը պահանջում է հիփոթեքային վարկավորման ոլորտում պետական ֆինանսական աջակցության ծրագրերի անընդհատ կատարելագործում: Վերջինիս իրականացման արդյունքում միայն հիփոթեքային վարկային շուկան հանրապետությունում լիարժեք կնպաստի հիփոթեքային վարկերի հասանելիությանը, արդյունքում հիփոթեքային վարկային շուկայի՝ առավել բարձր տեմպերով զարգացմանը:

MORTGAGE LOAN MARKET ANALYSIS AND DEVELOPMENT PERSPECTIVES IN ARTSAKH REPUBLIC

YEVGENYA HAYRIYAN

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Artsakh State University, Department of Financial accounting, Faculty of Economics,
Ph.D. in Economics, Associate Professor,
Stepanakert, The Republic of Artsakh (NKR)*

The purpose of this article is to present the process of formation and development of the mortgage loan market of Artsakh Republic, as well as its development prospects. The objectives are as follows: to study the key performance indicators of the Artsakh Republic mortgage market for the period 2007-2018, to reveal the specifics of their performance, to present the prospects of development of Artsakh Republic mortgage credit market.

During the research, it has been used general scientific (systematic analytics, combination, analyze, induction, deduction and verification, follow the dynamics and trends of macroeconomic indicators) and special scientific (comparative-analytical, standard-logical) methods.

As in any other state, the main aim of the state's economic policy in the Artsakh Republic is to provide normal conditions for raising living standards for the population. From this point of view, it is important to implement various programs aimed at improving the housing conditions of the population.

The implementation of various types of financial assistance programs by the state in the field of shaping and establishing the mortgage market of the Republic of Artsakh is of great importance, as a result of which the mortgage loans have become somewhat accessible to the population. The article presents the stages of formation and development of the mortgage market, factors that hinder the development of the mortgage market.

Keywords: *mortgage market, real estate, housing conditions, government financing, lending.*

АНАЛИЗ ИПОТЕЧНОГО КРЕДИТНОГО РЫНКА И ПЕРСПЕКТИВЫ ЕГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

ЕВГЕНИЯ АЙРИЯН

Член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА), кандидат экономических наук, доцент кафедры финансового учета экономического факультета Арцахского государственного университета, г. Степанакерт, Республика Арцах (НКР)

Цель данной статьи – представить процесс формирования и развития рынка ипотечного кредитования Республики Арцах, а также перспективы его развития. Задачи заключаются в следующем: изучить основные показатели эффективности ипотечного рынка Республики Арцах за период 2007-2018 гг., выявить особенности их функционирования, представить перспективы развития рынка ипотечного кредитования Республики Арцах.

В ходе исследования использовались общие (системный анализ, синтез, индукция, дедукция, проверка и отслеживание динамики и тенденций макроэкономических показателей) и специальные (сравнительный анализ, нормативно-логический) научные методы.

Как и в любом другом государстве, главной целью экономической политики государства в Республике Арцах является обеспечение соответствующих условий для повышения уровня жизни населения. С этой точки зрения важно реализовать различные программы, направленные на улучшение жилищных условий населения.

В области формирования и развития ипотечного рынка Республики Арцах большое значение имело осуществление государством различных программ финансовой помощи, в результате чего ипотечные кредиты стали в какой-то степени доступными для населения. В статье представлены этапы становления и развития рынка ипотеки, факторы, препятствующие развитию рынка ипотеки.

Ключевые слова: *ипотечный рынок, недвижимость, жилищные условия, государственное финансирование, кредитование.*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ-ՈՒՄ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԷԿՎԱՆ ԳՈՐԾՈՒ*

ԿԱՐԼԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*«Արմսվիսթալ» ՓԲԸ-ի ՓՄՁ վարկավորման խմբի ղեկավար,
Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
karlenmargaryan@yahoo.com*

Հոդվածի նպատակն է հիմնավորել, որ ներկայումս մեր երկրում փոքր ու միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ-ներ) պարզացման հիմնական մարտահրավերը ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարդություններն են: Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ դիտարկել մեր երկրում ՓՄՁ-ների պետական աջակցության ծրագրերը, ինչպես նաև ուսումնասիրել ու բացահայտել ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի պարզացման խոչընդոտները:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են համեմատության, վերլուծության և ինդուկցիայի մեթոդները:

Հոդվածում արվել են մի շարք ելքակազմություններ, մասնավորապես՝ միջազգային կապակերպությունների կողմից իրականացված մի քանի ուսումնասիրությունները փաստում են, որ, իսկապես, ֆինանսական ռեսուրսների ցածր հասանելիությունը ՀՀ-ում ՓՄՁ-ների պարզացման հիմնական խոչընդոտն է, որն արտահայտվում է ֆինանսավորման դիմաց մեծ գրավային պահանջներով, բարձր տոկոսադրույքներով, նորաստեղծ ձեռնարկությունների համար ֆինանսական աջակցության ծրագրերի բացակայությամբ և այլն: Միաժամանակ, արձանագրվել է, որ ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը բավարար մակարդակի վրա չէ ոլորտում շոշափելի հաջողություններ գրանցելու համար, և ներկայացվել են ոլորտի պարզացմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ:

Հիմնաբառեր՝ փոքր և միջին ձեռնարկատիրություն, ՓՄՁ սուբյեկտներ, ՓՄՁ սահմանումներ, ՓՄՁ պարզացման խոչընդոտներ, ՓՄՁ պարզացման բաղաբաղականություն, փոքր բիզնեսի ակտ, ֆինանսական ռեսուրսների հասանելիություն, ՀՀ ՓՄՁ ՉԱԿ:

ՓՄՁ-ները կարևորագույն դեր են խաղում երկրների տնտեսական զարգացման գործում, հատկապես զարգացող երկրներում: Ողջ աշխարհի մասշտաբով ձեռնարկությունների շուրջ 90%-ը փոքր ու միջին են, որոնք ապահովում են ընդհանուր զբաղվածության ավելի քան 50%-ը: Չարգացող երկրներում ՓՄՁ-ները ձևավորում են ՀՆԱ-ի մինչև 40%-ը, ինչպես նաև ստեղծում են 10 աշխատատեղերից 7-ը³⁹⁴, ուստի դրանց դերն ու նշանակությունը թերագնահատել հնարավոր չէ: Աշխարհի շատ երկրներ պետական մակարդակով մշակում են ՓՄՁ-ների զարգացման ծրագրեր և

* Հոդվածը ներկայացվել է 23.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

³⁹⁴ Small and medium enterprises (smes) finance. Improving SMEs' access to finance and finding innovative solutions to unlock sources of capital, <https://www.worldbank.org/en/topic/sme/finance>, 17.09.2019.

ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել մրցունակ տնտեսություն և բնակչության զբաղվածություն, հաղթահարել աղքատությունը և այլն: Այդ առումով բացառություն չէ նաև ՀՀ-ն, որտեղ վերջին երկու տասնամյակում մշակվել ու իրականացվել են ՓՄՁ ոլորտի աջակցության և զարգացման մի շարք ծրագրեր:

Հարկ է նշել, որ դեռևս գոյություն չունի ՓՄՁ-ների միասնական սահմանում, որը համընդհանուր կիրառություն կունենա բոլոր երկրներում և տնտեսագետների կողմից: ՓՄՁ-ների սահմանման ու դասակարգման չափանիշները տարբերվում են երկրից երկիր՝ կախված տվյալ երկրի զարգացման մակարդակից, բնակչության թվից, երկրում ձեռնարկությունների մեծությունից և այլ ցուցանիշներից: Այնուամենայնիվ, ՓՄՁ-ների դասակարգման հիմքում ընկած են մի շարք համընդհանուր սկզբունքներ, որոնց անդրադարձել է Միջազգային ֆինանսական կորպորացիան (International Finance Corporation): Վերջինս, նպատակ ունենալով դասակարգել և ընդհանրացնել ողջ աշխարհում կիրառվող ՓՄՁ-ների սահմանումները, 2014թ.-ին իրականացրել է լայնածավալ հետազոտություն՝ ուսումնասիրելով 155 երկրներում կիրառվող ՓՄՁ-ների ավելի քան 260 սահմանումներ: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ողջ աշխարհում ՓՄՁ-ների դասակարգման համար կիրառվում են նույն փոփոխականները, մասնավորապես *ձեռնարկության աշխատակիցների քանակը* (կիրառվում է ուսումնասիրվող սահմանումների 92%-ում), *չրջանառությունը* (49%), *ակտիվների արժեքը* (36%), *կանոնադրական կապիտալի և վարկային պարտավորությունների մեծությունը*, *գործունեության ժամանակահատվածը*, *արտադրական հզորությունները* (11%): Ընդ որում, ուսումնասիրվող սահմանումների շուրջ 45%-ը ՓՄՁ-ների դասակարգման համար կիրառում է միայն մեկ փոփոխական ցուցանիշ, իսկ 55%-ը՝ այս կամ այն փոփոխականների համադրությունը³⁹⁵:

Մեր երկրում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները սահմանվում են դեռևս 2000թ.-ին ընդունված «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի կողմից: Ի սկզբանե օրենքը ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հիմքում դնում էր միայն ձեռնարկության աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, սակայն հետագայում ՓՄՁ պետական աջակցության առավել նպատակային իրականացման, ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման, ինչպես նաև Եվրամիության չափանիշներին մոտեցման և ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման համար անհրաժեշտություն առաջացավ վերանայել ու հստակեցնել ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները:³⁹⁶ 2010թ.-ին վերոնշյալ օրենքում իրականացված համապատասխան փոփոխությունների արդյունքում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հիմքում դրվեց երկու փոփոխական ցուցանիշների համադրություն, այն է՝ ձեռնարկության աշխատողների թվաքանակը և նախորդ տարվա գործունեությունից ստացած հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը: Ներկայումս ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ներկայացված է աղյուսակ 1-ում:

³⁹⁵ **International Finance Corporation**, MSME Country Indicators 2014: Towards a Better Understanding of Micro, Small, and Medium Enterprises, 2014, p. 5.

³⁹⁶ «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հիմնավորում, էջ 3, <https://www.gov.am/files/meetings/2009/4362.pdf>, 10.09.2019

Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ՀՀ-ում³⁹⁷

	Աշխատողների թվաքանակ (մարդ)	Հասույթ (ՀՀ դրամ)	Ակտիվների արժեք (ՀՀ դրամ)
ԳԵՐՓՈՆԵՐ	<10 մարդ	≤100 մլն	≤100 մլն
ՓՈՆԵՐ	<50 մարդ	≤500 մլն	≤500 մլն
ՄԻՋԻՆ	<250 մարդ	≤1500 մլն	≤1000 մլն

ՀՀ-ում փոքր ու միջին ձեռնարկատիրության վերաբերյալ պատկերացում կազմելու համար ստորև ներկայացված են ոլորտը նկարագրող մի շարք վիճակագրական ցուցանիշներ:

2017թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում ըստ հարկ վճարողների սկզբունքի (ներառված են այն հարկ վճարողները, որոնք ներկայացրել են եկամտային հարկի հաշվարկ, տարեկան ֆիզ.անձի եկամուտների հաշվետվություն, արտոնագրային վճարի հաշվարկ կամ ունեն շրջանառության ծավալ, այդ թվում՝ գրոյականները) գրանցված և գործող ՓՄՁ սուբյեկտների քանակը կազմել է 79,747, ինչը ՀՀ-ում հարկ վճարող բոլոր ձեռնարկությունների ընդհանուր թվաքանակի 99.3%-ն է:³⁹⁸ ՓՄՁ-ների կազմում գերակշռում են գերփոքր ձեռնարկությունները՝ ՓՄՁ-ների ընդհանուր քանակի 91.5%-ը, ապա փոքր ձեռնարկությունները՝ ՓՄՁ-ների ընդհանուր քանակի 7%-ը և միջին ձեռնարկությունները՝ ՓՄՁ-ների ընդհանուր քանակի 0.5%-ը:³⁹⁹

ՓՄՁ-ների թվաքանակի ցուցանիշները համեմատության մեջ դիտարկելու համար ընդունված է կիրառել «1000 բնակչի հաշվով ՓՄՁ-ների քանակ» ցուցանիշը: Այսպես, ՀՀ-ում 2017թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 26.8:⁴⁰⁰ Համեմատության համար նշենք, որ ԵՄ երկրներում այդ ցուցանիշը միջինում կազմում է 57, ընդ որում ամենացածրը Ռումինիայում է՝ 29, իսկ ամենաբարձրը Չեխիայում՝ 115⁴⁰¹, ԱՄՆ-ում կազմում է 100, Չինաստանում՝ 17, ՌԴ-ում՝ 16, Թուրքիայում՝ 30, Իրանում՝ 14, Ադրբեջանում՝ 19:⁴⁰²

Երկրի տնտեսության մեջ ՓՄՁ-ների գործունեության և դերի գնահատման համար լայն կիրառություն ունի ՀՆԱ-ում ՓՄՁ-ների մասնակցության ցուցանիշը, ուստի գծապատկերում ներկայացված է մեր երկրի ՀՆԱ-ում 2010-2017թթ. ժամանակահատվածում փոքր և միջին ձեռնարկատիրության մասնաբաժնի դինամիկան:

Ինչպես երևում է գծապատկերից, 2010-2014թթ. ժամանակահատվածում ՀՆԱ-ի ձևավորման մեջ ՓՄՁ-ների մասնակցությունը ունեցել է նվազման միտում՝ 27.2%-ից


³⁹⁷ Աղյուսակը կազմվել է «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (05.10.2010թ., ՀՕ-142-Ն) 1-ին հոդվածի հիման վրա:

³⁹⁸ **Հայկական բիզնես կոալիցիա**, ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Երևան 2018, էջ 13:

³⁹⁹ **Նույնը**, էջ 18:
⁴⁰⁰ Հաշվարկը իրականացվել է՝ հիմք ընդունելով 2017թ.-ի ՀՀ մշտական բնակչության միջին թվաքանակը ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2979.5 հազ. մարդ: Աղբյուրը՝ <https://www.armstat.am/am/?nid=12&id=11001>, 10.09.19թ.

⁴⁰¹ **European Commission**, Annual Report on European SMEs 2017/2018, 2018, p. 5
⁴⁰² <https://www.smefinanceforum.org/sites/default/files/2019%20MSME-EI%20 Database.xlsx>, 02.09.19թ.

համեմտվում է 24.4%, իսկ 2015-2016թթ. ժամանակահատվածում կտրուկ աճել է՝ համեմտվում է մինչև 36%, ապա կրկին նվազել՝ 2017թ.-ին կազմելով 28%:



Գծապատկեր 1. ՓՄՁ-ների մասնակցությունը համախառն ներքին արդյունքի ստեղծմանը ԴԴ-ում ըստ տարիների⁴⁰³

Համեմատության համար նշենք, որ 2017թ.-ի տվյալներով ԵՄ անդամ երկրներում այդ ցուցանիշը միջինում կազմել է 56.8%⁴⁰⁴, Վրաստանում 59%⁴⁰⁵: Այսպիսով, քննարկվող ցուցանիշի ցածր մակարդակը վկայում է մեր երկրում ՓՄՁ-ների հետագա զարգացման և տնտեսության մեջ դրանց դերի մեծացման հսկայական չիրացված ներուժի առկայության մասին:

Ողջ աշխարհի մասշտաբով ՓՄՁ-ներ մշտապես բախվում են մի շարք խնդիրների, որոնք խոչընդոտում են դրանց կայուն աճն ու զարգացումը և ՀՀ ՓՄՁ ոլորտը ևս բացառություն չէ: Մեր երկրում փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի խնդիրների բացահայտման նպատակով վերջին մի քանի տարիներին իրականացվել են մի շարք հետազոտություններ և ուսումնասիրություններ: Այսպես, 2012թ.-ի Նոյեմբերից 2013թ.-ի հուլիսն ընկած ժամանակահատվածում ՎՇԵԲ-ի և Համաշխարհային բանկի համատեղ նախաձեռնությամբ իրականացված «Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտության» (BEEPS V) արդյունքների համաձայն՝ մեր երկրում գործարար միջավայրի զարգացման գլխավոր խոչընդոտը ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրներն են, ապա հարկային վարչարարությունը և քաղաքական անկայունությունը: Հետազոտությունը արձանագրել է նաև, որ հայաստանյան ձեռնարկությունները շրջանառու միջոցները համալրում են գլխավորապես բանկային վարկերով և այլ աղբյուրներով (օրինակ՝ ընկերներից ստացված փոխառություններ), իսկ հիմնական միջոցների համալրումը տեղի է ունենում գլխավորապես ներքին ռեսուրսների հաշվին: Այսպես, հարցված


⁴⁰³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ **Հայաստանի ՓՄՁ 2014**, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ., Երևան 2013, էջ 19, **EU4Business**, Investing in SMEs in the Eastern Partnership, Armenia, Country report, June 2018, p. 6, **European Investment Bank**, Neighbourhood SME financing: Armenia, Luxembourg, November 2016, p. 16, **Հայկական բիզնես կոալիցիա**, ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Երևան 2018, էջ 4:

⁴⁰⁴ **European Commission**, Annual Report on European SMEs 2017/2018, 2018, p. 15

⁴⁰⁵ **EU4Business**, Investing in SMEs in the Eastern Partnership, Georgia, Country report, June 2019, p. 2.

ձեռնարկությունների շուրջ 25%-ը ձեռք է բերել հիմնական միջոցներ, և այդ ձեռքբերումների շուրջ 75%-ի ֆինանսավորումը իրականացվել է ներքին ռեսուրսների հաշվին: Հարկ է նշել, որ նախորդ՝ 2009թ.-ին իրականացված BEEPS IV հետազոտության դեպքում ձեռնարկությունների ավելի քան 50%-ն էր ձեռք բերել հիմնական միջոցներ, որի շուրջ 50%-ն էր ֆինանսավորվել ներքին ռեսուրսների հաշվին և հիմնական միջոցների ձեռքբերման դեպքում բանկային ֆինանսավորման մասնաբաժինը 21.7%-ից (BEEPS IV) նվազել է մինչև 9.5% (BEEPS V):⁴⁰⁶

«Համաշխարհային մրցունակության զեկույց 2017-2018»-ը ևս անդրադարձ է կատարում մեր երկրում գործարարության վարման խոչընդոտներին, որոնք ամփոփված են գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Գործարարության վարման հիմնական խոչընդոտները ՀՀ-ում 2017թ.⁴⁰⁷

Այս հետազոտությունը ևս փաստում է, որ գործարարության վարման թիվ մեկ խոչընդոտը մեր երկրում շարունակում է մնալ ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները (13%), ապա հարկերի դրույթաչափերը (12.9%), հարկային վարչարարությունը (11.5%) և կոռուպցիան (9.9%):

Հարկ է նշել, որ, որպես կանոն, փոքր ու միջին ձեռնարկությունները խոշորների համեմատությամբ առավել սուր են բախվում ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրներին՝ պայմանավորված դրանց սկսնակ բնույթի, փոքր չափերի, գործունեության ցածր թափանցիկության, վատ հաշվետվողականության և այլ հանգամանքների հետ, ինչը հանգեցնում է բանկերի և այլ ֆինանսավորող կառույցների կողմից ՓՄՁ-ների ֆինանսավորման գործընթացում առավել պահպանողական և զգուշավոր քաղաքականությանը:

Համաձայն «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան, ՓՄՁ քաղաքականության համաթիվ, Արևելյան գործընկերության երկրներ, 2016» զեկույցի՝ ֆինանսավորման հասանելիությունը մարտահրավեր է ՓՄՁ-ների համար, քանի որ ֆինանսավորումն իրականացվում է գլխավորապես բանկային վարկավորման միջոցով, որտեղ կարևոր հիմնախնդիր է գրավի ապահովման բարձր պահանջը, լիարժեք կայացած չեն ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրները, մասնավորապես լիզինգը, որը ՓՄՁ սուբյեկտների համար կարող է լինել բանկային

⁴⁰⁶ <https://ebrd-beeps.com/reports/beeps-v/armenia/>, 24.08.19թ.

⁴⁰⁷ World Economic Forum, The Global Competitiveness Report 2017–2018, Geneva, 2017, p.

ֆինանսավորման այլընտրանք:⁴⁰⁸ Նման իրավիճակում ՓՄՁ-ների համար կենսական նշանակություն է ստանում պետական աջակցությունը և հոգածությունը՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները հաղթահարելու համար:

Այն երկրում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը հռչակվել է որպես կառավարության քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, ընդ որում, առաջիկա տարիներին ՓՄՁ զարգացման քաղաքականության գլխավոր նպատակը ներքին և միջազգային շուկաներում մրցունակ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ապահովումն է՝ կազմակերպությունների զարգացման և ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման, մասնավոր հատվածի հետ երկխոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարությունների և կայուն զարգացման խթանման միջոցով:⁴⁰⁹ ՀՀ-ում ՓՄՁ աջակցության քաղաքականությունը կարգավորվում է դեռևս 2000թ.-ին ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, որը հստակ սահմանում է ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները և գործիքակազմը: Համաձայն նշված օրենքի՝ ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրերով, որոնք մշակում և հաստատում է ՀՀ կառավարությունը, իսկ իրականացումը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներով:

ՀՀ-ի համար փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման և զարգացման քաղաքականության շրջանակներում կարևորագույն քայլ էր Եվրամիության «Փոքր բիզնեսի ակտի» (ՓԲԱ)-ի սկզբունքների գնահատմանը մասնակցությունը: ՓԲԱ-ն իրենից ներկայացնում է տասը սկզբունքների խումբ, որոնք մշակվել են Եվրամիության կողմից 2008թ.-ին և նպատակ ունեն ԵՄ անդամ հանդիսացող, ինչպես նաև չհանդիսացող երկրներում բարելավելու ձեռնարկատիրության մոտեցումները, պարզեցնելու երկրների՝ ՓՄՁ-ների աջակցության քաղաքականությունները և վերացնելու դրանց զարգացման խոչընդոտները:⁴¹⁰ Երկրների կողմից ՓԲԱ-ի սկզբունքների իրականացումը որոշակի պարբերականությամբ մոնիթորինգի է ենթարկվում, գնահատվում և ամփոփվում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից հրապարակվող «ՓՄՁ քաղաքականության համաթիվ» զեկույցներում: ՀՀ-ն առաջին անգամ մասնակցել է ՓԲԱ-ի գնահատմանը 2012թ.-ին, որի արդյունքներով տասը սկզբունքների մասով հիմնականում ստացել է 2-3 միջակայքում ընկած գնահատականներ (հնարավոր գնահատականների միջակայքը 1-ից 5-ն է): Սկզբունքներից վեցերորդը՝ «ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիությունը», ՀՀ-ում գնահատվել է 3: Միաժամանակ արձանագրվել են այս ոլորտում առկա հիմնական խնդիրները, մասնավորապես բանկային վարկավորումը՝ որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր, ընդ որում, բանկերը բավականին զգուշավոր են ռիսկային գործարքների նկատմամբ, մասնավոր կապիտալը սահմանափակ է, բաժնեմասային ֆինանսավորման շուկաները փոքր են և ունեն ցածր իրացվելիության մակարդակ, վարկառուների իրավունքների պաշտպանությունը թույլ է, ինչպես նաև բավականին ցածր է ֆինանսական գրագիտությունը և այլն:⁴¹¹ ՀՀ-ում ՓԲԱ-ի երկրորդ գնահատումը տեղի է ունեցել 2015-2016թթ.-ին, և արդյունքներն ամփոփվել են ՏՀԶԿ-ի կողմից հրապարակվող «Երկրի


⁴⁰⁸ **OECD, EC, EBRD, ETF**, Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան, ՓՄՁ քաղաքականության համաթիվ, Արևելյան գործընկերության երկրներ 2016, Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016, էջ 17:

⁴⁰⁹ <https://mineconomy.am/page/86>, 16.07.19թ.

⁴¹⁰ https://ec.europa.eu/growth/smes/business-friendly-environment/small-business-act_en, 13.08.19թ.

⁴¹¹ **OECD, EC, EBRD, ETF**, ՓՄՁ քաղաքականության համաթիվ, Արևելյան գործընկերության երկրներ 2012, Փոքր բիզնեսի ակտի իրականացման առաջընթաց, 2012, էջ 16:

Այսպիսով, արտահանման կենտրոնացվածության ինդեքսի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ԵԱՏՄ երկրների ցուցանիշները համապատասխանում են միջազգային ստանդարտներին, ուստի կարելի է պնդել, որ այս երկրներում մրցակցության մակարդակը ևս բավարար է:

Համանման կերպով դիտարկվել ու վերլուծվել են նաև ԵԱՏՄ անդամ երկրների **ներմուծման կենտրոնացվածության ինդեքսի** արժեքները, որոնք բերված են ստորև՝ զծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2: ԵԱՏՄ երկրների ներմուծման կենտրոնացվածության ինդեքսը, 2010-2018թթ⁴³¹:

Դիտարկված ցուցանիշները վկայում են ԵԱՏՄ երկրների ներմուծման կենտրոնացվածության բավականին ցածր մակարդակի առկայության մասին, ինչն իր հերթին ներմուծման դիվերսիֆիկացիայի ցուցիչ է: Հետևաբար Եվրասիական միության շրջանակներում ապրանքաշրջանառությունն իրականացվում է բավականին կոշտ մրցակցության պայմաններում, իսկ սանկցիաների կիրառումն այս պարագայում

⁴³¹ Կազմվել է հեղինակի կողմից՝ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի տվյալների քաղաքայի հիման վրա: <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

Ներմուծման փոխարինման գործընթացի արագացման, ինտեգրացիոն խմբավորման ներսում ապրանքահոսքերի ծավալների աճի խթան է դառնում:

➤ *Արտահանման դիվերսիֆիկացիայի ինդեքս*-ցույց է տալիս արտահանվող ապրանքների ու ծառայությունների ապրանքային դիրքերի քանակական փոփոխությունները՝ համաշխարհային առևտրի աշխարհագրական կառուցվածքի համեմատ:

Դիվերսիֆիկացիայի ոչ բարձր մակարդակը ցույց է տալիս արտադրական ոլորտի բարձր մրցակցային ներուժը, ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացների ազդեցության տեսանկյունից խմբավորման շրջանակներում ընդլայնում է մրցակցային առավելությունները, մեծացնում է մասնակից երկրների տնտեսությունների փոխարինելիության, միմյանց փոխլրացնելու հնարավորությունները, չեզոքացնում է տարածաշրջանում տեղի ունեցող բացասական իրադարձությունների ազդեցությունը՝ նպաստելով առևտրային ուղղվածություն ունեցող ինտեգրացիայի դրական ազդեցությունների մեծացմանը:

Ինդեքսը հաշվարկվում է որպես տվյալ երկրի արտահանման կառուցվածքում առանձին ապրանքի տեսակարար կշռի և նույն ապրանքի՝ համաշխարհային արտահանման կառուցվածքում տեսակարար կշռի տարբերության բացարձակ մեծություն՝ հետևյալ բանաձևով՝

$$S_j = \frac{\sum_{i=1}^n (h_{ij} - h_i)}{2}$$

Որտեղ՝


S_j - j-րդ երկրի արտահանման դիվերսիֆիկացիայի ինդեքսն է;

h_{ij} - i րդ ապրանքի տեսակարար կշռն է j-րդ երկրի արտահանման կառուցվածքում;

h_i - i րդ ապրանքի տեսակարար կշռն է համաշխարհային արտահանման կառուցվածքում:

Արտահանման դիվերսիֆիկացիայի ցուցանիշները ևս ուսումնասիրվել ու վերլուծվել են 2011-2018թթ.-ի համար: Ստացված արդյունքները, որոնք ներկայացված են ստորև՝ գծապատկեր 3-ում, վկայում են այն մասին, որ ինտեգրացիոն միավորման գրեթե բոլոր անդամ-պետությունների կողմից արտահանվող ապրանքները բազմազան են, ուստի միավորումն ունի արտահանման խթանման ու բազմազանեցման, ԵԱՏՄ շրջանակներում առևտրաշրջանառության ծավալների ավելացման ներուժ:

Ընդհանուր առմամբ, գծապատկեր 3-ում ներկայացված ցուցանիշների համաձայն՝ ԵԱՏՄ անդամ բոլոր երկրները հետ են մնում զարգացած երկրների ցուցանիշներից, որոնց համար արտահանման դիվերսիֆիկացման ինդեքսի արժեքները տատանվում են (0,2;0,4) միջակայքում: Միաժամանակ հարկ է նշել, որ ԵԱՏՄ երկրների ցուցանիշները գերազանցում են զարգացող երկրների ցուցանիշներին (0,8;0,9):



Գծապատկեր 3: ԵԱՏՍ երկրների արտահանման դիվերսիֆիկացիայի ինդեքսը, 2010-2018թթ⁴³²:

Աղյուսակ 1: ԵԱՏՍ երկրների համար բնութագրական են հետևյալ առանձնահատկությունները՝ ըստ արտահանման դիվերսիֆիկացիայի ինդեքսի:


Չայաստան	Ցուցանիշները մոտ են զարգացող երկրների միջին ցուցանիշներին, դրսևորել են աճի միտում:
Ղազախստան	Ցուցանիշները ցուցաբերել են նվազման միտում՝ արդյունաբերականացման քաղաքականության իրականացման շնորհիվ, որը նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների ավելացմանը:
Ղրղզստան և Ռուսաստան	Այս երկրներին միավորում է միջին ցուցանիշների առկայությունը, սակայն դրանց զարգացման ուղղությունները էապես տարբերվում են: Ռուսաստանի ներուժն անհամեմատ ավելի մեծ է, քանի որ արտահանման դիվերսիֆիկացիայի ինդեքսը չի արտացոլում այս երկրների արտահանման կառուցվածքի որակական կողմը:
Բելառուս	Արտահանման դիվերսիֆիկացիայի ինդեքսի արժեքները մոտ են զարգացած երկրների ցուցանիշներին:

- *Արտաքին առևտրի քվոտայի* ցուցանիշն արտացոլում է երկրի ներքին շուկայի բացության, ինչպես նաև մրցակցության ազատության աստիճանը⁴³³: Այս ցուցանիշը կիրառելի է համաշխարհային առևտրում ներգրավվածության գնահատման համար: Այնուամենայնիվ, ցուցանիշը տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման գնահատման համար լայն կիրառություն չի կարող ունենալ:

⁴³² Կազմվել է հեղինակի կողմից՝ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի տվյալների բազայի հիման վրա: <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

⁴³³ Шапатов Ю.Е. Классификация стран мира по степени открытости экономики // Современные научные исследования и инновации. 2013. № 12, <http://web.snauka.ru/issues/2013/12/30452>

$$I_{ftq} = \frac{EX + IM}{GDP}$$



Գծապատկեր 4: ԵԱՏՄ երկրների արտահանման բաղադրիչի ցուցանիշը⁴³⁴:

ԵԱՏՄ անդամ երկրների համար 2011-2018թթ.-ին դիտարկված արտահանման բաղադրիչի ցուցանիշների դինամիկայի վերլուծության արդյունքները փաստում են, որ այս երկրների համար բնութագրական է զարգացման ոչ միատարրությունը՝ պայմանավորված դրանց տնտեսությունների կառուցվածքային տարբերություններով:

Ղրղզստանի տնտեսությունը արտաքին շուկաների համար բաց է, այնինչ Բելառուսիը՝ ոչ, քանի որ այս երկրի ներքին շուկան ենթարկվում է պետական կարգավորման: Բացության բարձր աստիճանով աչքի են ընկնում Հայաստանի ու Ղազախստանի տնտեսությունները, իսկ Ռուսաստանի տնտեսությանը բնորոշ է բացության ցածր մակարդակը՝ պայմանավորված արդյունաբերական ներուժով, արտաքին հարաբերությունների բնույթով:

Այսպիսով, ընդհանրացնելով իրականացված վերլուծությունների արդյունքները՝ կարելի է նշել, որ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների բացության աստիճանները տարբեր են՝ բացության բացարձակ մակարդակից (*Ղրղզստան*) մինչև պետական կարգավորում (*Բելառուս*):

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ անդամ երկրների մրցակցային միջավայրի ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ են տալիս կատարելու մի շարք եզրակացություններ.

- ✦ Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կենտրոնացվածության ցուցանիշները բավարար մակարդակում են, ինչը խոսում է այս երկրների ներքին շուկաներում մրցակցության բավարար մակարդակի մասին: Դիտարկված երկրներում արտահանման գործառնությունների միակ

⁴³⁴ Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների բազաների հիման վրա:

սահմանափակումը ռեսուրսային ներուժի ու մրցակցային միջավայրի վիճակն է, իսկ ներմուծման դեպքում մրցակցության մակարդակն ավելի բարձր է:

- ✦ Դիտարկված բոլոր երկրներում արտահանման ապրանքային դիվերսիֆիկացիայի մակարդակը զգալիորեն հետ է մտնում ներմուծման դիվերսիֆիկացիայի մակարդակից: Նման միտումը վկայում է հայրենական արտադրողների ցածր մրցունակության մասին: Այնուամենայնիվ, արտահանման ապրանքային բազմազանությունը երկրների մեծ մասում պահպանվում է:
- ✦ Ռուսաստանի, Ղազախստանի ու Բելառուսի պարագայում առկա է նաև մրցակցային բավարար ներուժ:
- ✦ Ներքին շուկաների բացության աստիճանը բավականին բարձր է և, ընդհանուր առմամբ, համապատասխանում է զարգացած երկրների ցուցանիշներին (բացառությամբ Բելառուսի):
- ✦ Վերջինը նույնպես բավարար հիմք է՝ ԵԱՏՄ երկրների մրցակցային ներուժի զարգացման համար:

COMPETITIVENESS POTENTIAL OF EAEU COUNTRIES. MUTUAL AND INTERNATIONAL TRADE

ARPINE SARGSYAN

*Lecturer, Department of General Economics and Natural Sciences, PhD student,
Armenian State University of Economics Gyumri branch
Gyumri, Republic of Armenia*

The purpose of the article is to examine and analyze the international and mutual trade indices of the EAEU member states, the dynamics of the latter, as well as to draw conclusions from the analysis of the results on the nature, quantitative and qualitative characteristics of the countries involved in international trade.

The research question is to present a system of indicators that are important for ensuring and improving the level of competitiveness of the country's economy, when participating in mutual and international trade.

The study used many methods, such as functional dependence, mathematical and statistical.

It is concluded that one of the cornerstones of improving economic competitiveness of a country is the qualitative and quantitative improvement of international trade participation. For the purpose of studying international and mutual trade, the indicators of trade concentration and diversification were considered.

The results of the research are applicable for observing countries' participation in international trade, characterizing trade-economic relations with each other, and suggesting ways to improve their competitiveness.

Keywords: *competitiveness, diversification, index, integration, indicator, potential, quota*

КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ СТРАН ЕАЭС. ВЗАИМНАЯ И МЕЖДУНАРОДНАЯ ТОРГОВЛЯ

АРПИНЕ САРГСЯН

*Преподаватель кафедры общей экономики и естественных наук, соискатель,
Гюмрийский филиал Армянского государственного экономического университета,
г.Гюмри, Республика Армения*

Целью данной статьи является изучение и анализ международных и взаимных торговых показателей стран-членов ЕАЭС, динамики последних, а также произведение на основании результатов анализа выводов относительно характера, количественных и качественных характеристик стран, вовлеченных в международную торговлю.

Задачей исследования является представление системы показателей, которые важны для обеспечения и повышения уровня конкурентоспособности национальной экономики при участии во взаимной и международной торговле.

В ходе исследования были использованы многие методы, такие как функциональная зависимость, математический и статистический методы.

В исследовании сделан вывод о том, что одним из краеугольных камней повышения экономической конкурентоспособности страны является качественное и количественное улучшение участия в международной торговле. В целях изучения международной и взаимной торговли следует учитывать показатели концентрации и диверсификации торговли.

Результаты исследования применимы к наблюдению за участием стран в международной торговле, характеризуют торгово-экономические отношения друг с другом и предлагают пути повышения их конкурентоспособности.

Ключевые слова: *конкурентоспособность, диверсификация, индекс, интеграция, индикатор, потенциал, квота.*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՅՐԱԿԵՐՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԶՃԱՆԱԶԿԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐ*

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ),
տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական
հարաբերությունների ֆակուլտետի միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
ք Երևան, Հայաստանի Հանրապետություն
anna.pakhlyan@gmail.com

ԱՆՈՒՇ ԱՆԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ)
տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական
հարաբերությունների ֆակուլտետի միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
a.i.ananyan@mail.ru

Երկրի հիթնիչիանության ճանաչումն այլ երկրների կամ Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) կողմից կարող է նշանակալի տնտեսական ազդեցություն ունենալ վերջինիս վրա: Նմանօրինակ «ոչ տնտեսական» խնդիրների տնտեսական հետևանքների բացահայտումն անչափ կարևոր է համաշխարհային հանրության կողմից չճանաչված երկրների կարգավիճակի հնարավոր փոփոխության տեսանկյունից:

Հետազոտության շրջանակներում նպատակ է դրվել ուսումնասիրել համաշխարհային հանրության կողմից չճանաչված երկրներին բնորոշ առանձնահատկություններն ու ընդհանրությունները, դրանց տնտեսական առաջընթացը խոչընդոտող հիմնական գործոնները, վերհանել նման երկրների տնտեսական անհաջողությունների էական պատճառները: Հեղինակների խնդիրն է եղել բացահայտել հակամարտությունների միջով անցած և, ի վերջո, ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից պաշտոնապես ճանաչված երկրների՝ արտաքին աշխարհի հետ սերտ հարաբերությունների հաստատման ուղղությամբ ձեռքբերումները, որոնք կարող են ուսանելի լինել ինչպես Արցախի Հանրապետության, այնպես էլ այլ չճանաչված երկրների համար:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տվյալների համադրման, համեմատության, վիճակագրական զուգանիշների վերլուծության մեթոդները:

Հակառակ սպասումների՝ ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ միայն համաշխարհային հանրության կողմից չճանաչված լինելու փաստը դեռևս բավարար չէ նման երկրների տնտեսական ծախողումները հիմնավորելու համար, և այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ենթակառուցվածքների վարագացվածությունը երկրում կամ հովանավորող երկրի տնտեսական վարագացման մակարդակը, կարող են լուրջ ներգործություն ունենալ չճանաչված երկրի տնտեսական առաջընթացի ներուժի վրա:

* Հոդվածը ներկայացվել է 23.09.2019թ., գրախոսվել՝ 05.11.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Հիմնաբառեր՝ չճանաչված երկրներ, համաշխարհային հանրություն, Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), Արցախի Հանրապետություն, Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), արտաքին առևտուր, արտահանում, ներմուծում, ապրանքներ և ծառայություններ:

Մինչ ապագա դրությամբ աշխարհի քաղաքական քարտեզը նման էր տեղ-տեղ համընկնող ինքնիշխանությունների (կայսրությունների, ինքնիշխան պետությունների, գաղութների, պրոտեկտորատների⁴³⁵) կցանի, սակայն այժմ այն ֆորմալ առումով ներկայանում է որպես միայն ինքնիշխան պետություններից բաղկացած գունագեղ պատկեր: Երկրորդ հայացքից սակայն ակնհայտ է դառնում, որ աշխարհի քաղաքական քարտեզի ետևում գոյություն ունի մեկ այլ իրողություն՝ ինքնավար, ինքնիշխան, վիճելի և համաշխարհային հանրության կողմից չճանաչված տարածքների բազմազանությամբ:

Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) կամ վերջինիս անդամ հանդիսացող այլ պետությունների (առավել տարածված բնորոշմամբ՝ «համաշխարհային հանրության») կողմից չճանաչված երկրների «վիճահարույց» կարգավիճակը մի շարք մարտահրավերներ է ստեղծում դրանց տնտեսական զարգացման համար: Նմանատիպ երկրներում բազմաթիվ սահմամափակումներով ու խոչընդոտներով է ուղեկցվում գործարարության վարման ցանկացած փորձ:

Իրավիճակն ավելի է սրվում, երբ փորձ է արվում ինքնապահովումից (բնատնտեսությունից) անցում կատարել երկկողմ տնտեսական համագործակցության նույնիսկ պարզագույն ձևերին: Մասնավորապես, չճանաչված երկրի նախաձեռնությամբ համաշխարհային հանրության կողմից ընդունված երկրների հետ երկկողմ առևտրային հարաբերությունների հաստատման փորձերի դեպքում ի հայտ են գալիս ամենատարբեր խնդիրներ՝ կապված ապրանքների արտահանման ու ներմուծման մաքսային հաշվառման, բեռների փոխադրման, հարևան երկրների միջնորդավորված ծառայություններից օգտվելու անհրաժեշտության և այլնի հետ:

Այդուհանդերձ 1-ում ներկայացված են աշխարհի հիմնական չճանաչված երկրները: Բնականաբար, չճանաչված պետությունների ցանկն էապես փոփոխվում է ժամանակի ընթացքում: Այսպես, օրինակ, նախկինում չճանաչված Պաղեստինյան պետությունը 2019թ.-ի հուլիսի 31-ի դրությամբ ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 193 երկրից 138-ի կողմից և դեռևս 2012 թ.-ից ստացել ՄԱԿ-ի դիտորդի կարգավիճակ: Իսկ 1961-1993թթ.-ին չճանաչված երկիր համարվող Երիթրեան ներկայումս հանդես է գալիս որպես ՄԱԿ-ի լիիրավ անդամ:

Իհարկե, համաշխարհային պատմության մեջ բացառություն չեն նաև հետընթաց զարգացումները, երբ ինքնավարություն հռչակած չճանաչված երկիրը վերստին միանում է մայր պետությանը, ինչպես, օրինակ, Հարավային Կասայը, Կատանգան կամ Բիաֆրան⁴³⁶:

⁴³⁵ Գաղութային կախվածության (հովանավորչության) ձև, որի դեպքում միջազգային հատուկ պայմանագրով մի պետությունը (հովնավորող) մյուսին (հովնակորողին) է հանձնում իր արտաքին հարաբերությունների վարումը: Միաժամանակ հովանավորյալ պետությունը ներքին գործերում պահպանում է որոշակի ինքնուրույնություն:

⁴³⁶ **Mgr. Martin Riegl**, Prospects and Limits of Economic Development of Uncognized States: Between Organized Hypocrisy and Private Interests // European Scientific Journal, February 2014 edition, vol. 10, No.4, p. 25.

Աղյուսակ 1.

Աշխարհի չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված երկրները

N	Չճանաչված երկիրը (անկախության հռչակման տարեթիվը)	Տարածքային հավակնություն ունեցող երկիրը	Կարգավիճակը
1.	Սոմալիլենդի Հանրապետություն (1991)	Սոմալի	Չի ճանաչվել որևէ երկրի կողմից:
2.	Արցախի Հանրապետություն/Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991)	Ադրբեջան	Ճանաչվել է ոչ ՄԱԿ-ի անդամ այլ չճանաչված երկրի ⁴³⁷ կողմից:
3.	Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետություն / Տրանսնիստրիա (1990)	Մոլդովա	Ճանաչվել է ոչ ՄԱԿ-ի անդամ այլ չճանաչված 3 երկրի ⁴³⁸ կողմից:
4.	Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն (2014)	Ուկրաինա	Ճանաչվել է ոչ ՄԱԿ-ի անդամ 2 չճանաչված երկրի ⁴³⁹ կողմից:
5.	Լուզանսկի Ժողովրդական Հանրապետություն (2014)	Ուկրաինա	Ճանաչվել է ոչ ՄԱԿ-ի անդամ 2 չճանաչված երկրի ⁴⁴⁰ կողմից:
6.	Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն (1983)	Կիպրոսի Հանրապետություն	Ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 1 երկրի կողմից ⁴⁴¹ :
7.	Աբխազիայի Հանրապետություն (1999)	Վրաստան	Ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 5 երկրի ⁴⁴² և ոչ ՄԱԿ-ի անդամ 3 երկրի ⁴⁴³ կողմից:
8.	Հարավային Օսիայի (Օսեթիայի) Հանրապետություն (1991)	Վրաստան	Ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 5 երկրի ⁴⁴⁴ և ոչ ՄԱԿ-ի անդամ 4 երկրի ⁴⁴⁵ կողմից:
9.	Չինաստանի Հանրապետություն / Թայվան (1912)	Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետություն	Ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 16 երկրի կողմից, որոնց մեծամասնությունը կղզի-պետություններ են:
10.	Սահրավի Արաբ Դեմոկրատական Հանրապետություն / Արևմտյան Սահարա (1976)	Մարոկկո	Ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 42 երկրի ⁴⁴⁶ և ոչ ՄԱԿ-ի անդամ Հարավային Օսեթիայի կողմից:
11.	Կոսովոյի Հանրապետություն (2008)	Սերբիա	Ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 110 երկրի կողմից:

⁴³⁷ Աբխազիա, Հարավային Օսիա, Մերձդնեստր:

⁴³⁸ Աբխազիա, Արցախի անրապետություն, Հարավային Օսիա:

⁴³⁹ Դոնեցկի Ժողովրդական Հանրապետությունը ճանաչվել է Հարավային Օսիայի և Լուզանսկի Ժողովրդական Հանրապետության կողմից:

⁴⁴⁰ Լուզանսկի Ժողովրդական Հանրապետությունը ճանաչվել է Հարավային Օսիայի և Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության կողմից:

⁴⁴¹ Թուրքիան Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության ինքնիշխանությունը ճանաչած միակ ՄԱԿ-ի անդամ երկիրն է:

⁴⁴² Աբխազիան ճանաչել են ՄԱԿ-ի անդամներ Ռուսաստանը, Նիկարագուան, Վենեսուելան, Լատուրուն և Սիրիան:

⁴⁴³ ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող և միջազգային հանրության կողմից չճանաչված երկրներից Աբխազիան ճանաչել են Հարավային Օսիան, Տրանսնիստրիան և Արցախի Հանրապետությունը:

⁴⁴⁴ Հարավային Օսիան ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ Ռուսաստանի, Նիկարագուայի, Վենեսուելայի, Լատուրուի և Սիրիայի կողմից:

⁴⁴⁵ Ոչ ՄԱԿ-ի անդամ երկրներից Հարավային Օսիան ճանաչել են Սահրավի Արաբ Դեմոկրատական Հանրապետությունը, Աբխազիան, Տրանսնիստրիան և Արցախի Հանրապետությունը:

⁴⁴⁶ ՄԱԿ-ի անդամ ևս 42 երկրներ նախկինում ճանաչել են Սահրավի Արաբ Դեմոկրատական Հանրապետության ինքավարությունը, ապա հրաժարվել ճանաչումից:

Ներկայացված աղյուսակում ամենից խնդրահարույցը, թերևս, Սոմալիլենդի կարգավիճակն է, որն անգամ համանման երկրների կողմից չի ճանաչվել: Բացի այն, որ Սոմալիլենդը չորրորդն է աշխարհի ամենաաղքատ երկրների ցանկում, առանձնապես է նաև չճանաչված երկրների շրջանում ամենափոքր և անբարենպաստ բյուջեներից մեկով, որի 70%-ը հատկացվում է պաշտպանության հատվածին և միայն 30%-ն է ուղղվում զարգացման ծրագրերին⁴⁴⁷:

Ընդհանուր առմամբ, չճանաչված երկրների գերակշիռ մասը ցածր եկամուտներով երկրներ են, որոնց չճանաչվածության ծախսերը հետզհետե աճում են՝ ռազմական հատվածում ներդրումների կենտրոնացվածության արդյունքում դրանց տնտեսությունների քայքայմանը զուգընթաց:

Աղյուսակ 2.-ում ներկայացված են չճանաչված երկրների որոշ մակրոտնտեսական ցուցանիշներ, որոնք թույլ կտան համեմատել նմանատիպ երկրների տնտեսական հաջողությունները կամ ավելի ճիշտ՝ «անհաջողությունները»: Վիճակագրական տվյալների բացակայության պատճառով ուսումնասիրությունից դուրս են մնացել Հարավային Օսեթիայի Հանրապետությունը, ինչպես նաև վերջերս ինքնավարություն հռչակած Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունները:

Այսպես, բնակչության մեկ շնչին ընկնող Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշով ամենացածր դիրքում, ինչպես և կանխատեսվում էր, գտնվում է Սոմալիլենդը, որտեղ մեկ անձին բաժին ընկնող միջին տարեկան արդյունքը կազմում է ընդամենը 675 ԱՄՆ դոլար, ամսական կտրվածքով՝ 56,25 ԱՄՆ դոլար: ՀՆԱ-ի նման մակարդակ բնորոշ է ծայրահեղ աղքատ երկրներին: Վերջինիս հետևում են Աբխազիայի Հանրապետությունը՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 1372 ԱՄՆ դոլար մակարդակով, Պրիդնեստրովյան Մոլդովական Հանրապետությունը (1959,9 ԱՄՆ դոլար), Արևմտյան Սահարան (2500 ԱՄՆ դոլար), Կոտվոյի Հանրապետությունը (3746,8 ԱՄՆ դոլար), Արցախի Հանրապետությունը (1 շնչին ընկնող ՀՆԱ-ի 3844,67 մակարդակով): Համեմատության համար նշենք, որ Արցախին քաղաքական ու տնտեսական առումով հովանավորող Հայաստանի Հանրապետությունում 2017թ.-ին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը կազմել է 3872 ԱՄՆ դոլար⁴⁴⁸, այսինքն՝ երկու երկրներում դիտվել են գրեթե համարժեք ցուցանիշներ: Այդ ցուցանիշով Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը (14268 ԱՄՆ դոլար) և Հինաստանի Հանրապետությունն (24408 ԱՄՆ դոլար) եականորեն գերազանցում են մյուս չճանաչված երկրներին:

Աղյուսակ 2.

Որոշ չճանաչված երկրների մակրոտնտեսական ցուցանիշները (2017թ., ԱՄՆ դոլար)⁴⁴⁹

Երկիր	Բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ	Ատոանթների և ծառայությունների արտահանում	Ատոանթների և ծառայությունների ներմուծում
Սոմալիլենդ ⁴⁵⁰	675	202 մլն	1154 մլն

⁴⁴⁷ **Muktar Adan A.**, Overcoming Challenges in an Unrecognized Economy: Experience from Somaliland // American International Journal of Contemporary Research, Vol. 7, No. 1; March 2017, pp. 79-86.

⁴⁴⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ ԱՎԿ, Երևան, էջ 231:

⁴⁴⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից՝ անհատական ուսումնասիրությունների հիման վրա:

⁴⁵⁰ “Somaliland in figures 2017”, Somaliland Central Statistics Department, Hargeisa, Somaliland, April 2019, p. 6 (<http://www.somalilandcsd.org/wp-content/uploads/2019/07/Somaliland-infigures-2017.pdf>).

Արցախի Հանրապետություն ⁴⁵¹	3844,67 ⁴⁵²	194,56 մլն	299,19 մլն
Պրիդնեստրովյան Մոլդովական Հանրապետություն ⁴⁵³	1959,9 ⁴⁵⁴	633,3 մլն ⁴⁵⁵	982,7 մլն ²¹
Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն	14268 ⁴⁵⁶	-	-
Աբխազիայի Հանրապետություն	1372 ⁴⁵⁷	-	-
Չինաստանի Հանրապետություն (Թայվան)	24408 ⁴⁵⁸	395003 մլն ⁴⁵⁹	322813 մլն ²⁵
Սահրավի Արաբ Դեմոկրատական Հանրապետություն (Արևմտյան Սահարա)	2500 ⁴⁶⁰	-	-
Կոսովոյի Հանրապետություն ^{461 462}	3746,8	1443.29 մլն	3746,81 մլն

Իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ դիտարկում ենք չճանաչված երկրների հարաբերություններն արտաքին աշխարհի հետ: Ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման ցուցանիշներով Արցախի Հանրապետությունը զիջում է համեմատվող բոլոր երկրներին (համեմայն դեպս՝ հասանելի տվյալներով): Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության, Աբխազիայի Հանրապետության և Սահրավի Արաբ Դեմոկրատական Հանրապետության համար ապրանքների ու ծառայությունների արտաքին առևտրի ցուցանիշները հասանելի չեն: Արտաքին առևտրի մասով առավել բարենպաստ իրավիճակում է Չինաստանի

⁴⁵¹ Աղբյուրը՝ «Արցախի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2018թ.», ԱՀ ԱԿԾ, Ստեփանակերտ, 2019թ., էջեր 27, 276, 295 (<http://stat-nkr.am/hy/component/content/article/896--2018>):

⁴⁵² Հաշվարկվել է 2017 թվականի միջին տարեկան հաշվարկային փոխարժեքի հիման վրա, այն է՝ 1 ԱՄՆ դոլարը = 482,72 ՀՀ դրամ:

⁴⁵³ Աղբյուրը՝ “Статистический ежегодник 2018”, статистический сборник (за 2013-2017 гг.) // Государственная служба статистики Проднестровской Молдавской Республики, Тирасполь 2018, с. 20-21, 169 (<http://mer.gospmr.org/gosudarstvennaya-sluzhba-statistiki/informacziya/ezhegodnik-gosudarstvennoj-sluzhby-statistiki/statisticheskij-ezhegodnik-2018.html>):

⁴⁵⁴ Հաշվարկվել է հեղինակների կողմից՝ ՀՆԱ-ի բացարձակ մեծության և բնակչության թվաքանակի հարաբերությամբ:

⁴⁵⁵ Այդուհանդերձ ընդգրկվել են Պրիդնեստրովյան Մոլդովական Հանրապետության ապրանքների արտահանման և ներմուծման ցուցանիշները՝ ծառայությունների արտաքին առևտրի վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով:

⁴⁵⁶ Northern Cyprus Economy Competitiveness Report 2018-2019, Turkish Cypriot Chamber of Commerce, Northern Cyprus, 2018, p. 8. (https://www.ktto.net/wp-content/uploads/2019/04/KTTO2018-2019_eng.pdf):

⁴⁵⁷ <https://en.populationdata.net/countries/abkhazia/>.

⁴⁵⁸ Statistical Yearbook of the Republic of China 2018, National Statistics, Republic of China (Taiwan), - <https://eng.stat.gov.tw/ct.asp?xItem=37408&CtNode=5347&mp=5>.

⁴⁵⁹ Balance of Payments by period // Central Bank of the Republic of China (Taiwan) - <https://cpx.cbc.gov.tw/Tree/TreeSelect>.

⁴⁶⁰ OCHA - United Nations Office for Humanitarian Affairs (<https://www.unocha.org/middle-east-and-north-africa-romena/western-sahara>).

⁴⁶¹ Statistical Yearbook of the Republic of Kosovo 2018, Prishtina 2018, p.225 - <http://ask.rks-gov.net/media/4369/statistical-yearbook-2018.pdf>.

⁴⁶² Կոսովոյի դեպքում ներկայացված են 2016թ. տվյալներ, որոնք ամենաթարմն են հասանելի տվյալների շարքում: Բացի այդ, Կոսովոյի վիճակագրական աղբյուրներում ցուցանիշներն արտահայտված են եվրոյով, ուստի տվյալների համադրելիության նպատակով, դրանք մեր կողմից վերափոխվել են ԱՄՆ դոլարի՝ հիմք ընդունելով 2016թ. միջին տարեկան փոխարժեքը, այն է՝ 1 € = 1,10656 \$ (տե՛ս <https://www.ofx.com/en-au/forex-news/historical-exchange-rates/yearly-average-rates/>):

Հանրապետությունը (Թայվանը)՝ դիտարկվող երկրներից միակը, որն արձանագրել է արտաքին առևտրի դրական հաշվեկշիռ. 2017թ.-ին երկրի արտահանման ցուցանիշը ներմուծմանը գերազանցել է 72,2 մլրդ ԱՄՆ դոլարով:

Թեև Արցախի Հանրապետության ապրանքների ու ծառայությունների արտահանման (194,56 մլն ԱՄՆ դոլար) և ներմուծման (299,19 մլն ԱՄՆ դոլար) ցուցանիշները զիջում են Նույնիսկ Սոմալիլենդի համապատասխան ցուցանիշներին, վերջինս առանձնանում է արտահանման (202 մլն ԱՄՆ դոլար) և ներմուծման (1154 մլն ԱՄՆ դոլար) առավել անբարենպաստ հարաբերակցությամբ. ներմուծումը գերազանցում է արտահանումը 5,7 անգամ: Նմանօրինակ պատճառների բացահայտումը թերևս անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր երկրի համար անհատապես:

Այսպիսով, ներկայացված տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ չճանաչված երկրների՝ արտաքին աշխարհի հետ առևտրային հարաբերությունների հաստատման հնարավորությունները խիստ տարբերվում են, ինչը մատնանշում է որոշ երկրների առևտրային «անհաջողությունների» հիմքում համաշխարհային հանրության կողմից «չճանաչվածության» փաստից բացի նաև այլ պատճառների առկայությունը:

Հիմնարար բիզնես ծառայությունները, ինչպիսիք են՝ փոստային առաքումը, դրամական փոխանցումները, միջպետական բեռնափոխադրումներն ու միջսահմանային մաքսային ընթացակարգերը, կարգավորվում են իրավական համաձայնագրերով, որոնք հաճախ այդպիսի ծառայությունները հասանելի են դարձնում միայն ՄԱԿ-ի կողմից պաշտոնապես ճանաչված երկրների համար: Մինչդեռ համաշխարհային հանրության կողմից չճանաչված երկրների բիզնեսների համար այդ ծառայությունները էապես բարձրացնում են առևտրային գործաքների տևողությունն ու ծախսերը՝ նեղացնելով այդ երկրների՝ միջազգային առևտրում ներգրավվելու հնարավորությունները:

Այսպես, օրինակ, դեռևս մասնակիորեն ճանաչված Կոսովոյում⁴⁶³ (ինչպես և Արցախի Հանրապետությունում) չկա փոստային համակարգ: Արդյունքում Կոսովոն միջազգային փոստային առաքումներին մասնակցում է Ալբանիայի փոստային համակարգի միջնորդությամբ. Կոսովոյի համար նախատեսված առաքանին տեղափոխվում է Ալբանիա, որտեղից էլ ուղղվում է Կոսովո⁴⁶⁴: Նույն կերպ Արցախի Հանրապետության փոստային առաքանու համար որպես նշանակման վայր է նշվում Հայաստանի Հանրապետության որևէ հասցե, որտեղից էլ այն հետագայում փոխադրվում է Արցախ՝ առանց լրացուցիչ գրանցման: Անշուշտ, սա հավելյալ ծախսեր ու անհարմարություններ է առաջացնում չճանաչված երկրի համար:

Նմանօրինակ մեխանիզմով են սովորաբար իրականացվում նաև ապրանքների առաքումները՝ պայմանավորված չճանաչված երկրներում դրանց մաքսային հսկողության մեխանիզմների կիրառման խոչընդոտներով:


Տևտեսվարող սուբյեկտների միջազգային դրամական փոխանցումները նման երկրներում նույնպես խնդրահարույց են, քանի որ չճանաչված երկրների բանկերը չեն կարող ներառվել S.W.I.F.T հեռահաղորդակցման համակարգում և ունենալ թղթակցային հաշիվներ արտասահմանյան բանկերում: Ուստի չճանաչված երկրների ընկերությունները ստիպված են լինում օգտվել միջնորդ բանկերից, իսկ այդպիսի

⁴⁶³ Դեռևս 2008թ. անկախություն հռչակած Կոսովոն զգալի առաջընթաց է արձանագրել միջազգային ճանաչման հարցում. 2017թ. դրությամբ, Կոսովոյի ինքնիշխանությունը պաշտոնապես ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 110 երկրի կողմից, որը, սակայն, բավարար չէ ՄԱԿ-ի անդամ դառնալու համար: ՄԱԿ-ի անդամ կարող է դառնալ այն երկիրը, որի ինքնիշխանությունը ճանաչվել է աշխարհի երկրների 2/3-ի կողմից:

⁴⁶⁴ Choi J., The costs of not being recognized as a country: The case of Kosovo, November 16, 2017 - <https://www.brookings.edu/blog/future-development/2017/11/16/the-costs-of-not-being-recognized-as-a-country-the-case-of-kosovo/>.

փորձառությունը ենթադրում է լրացուցիչ վարչական ընթացակարգեր՝ առցանց գործարքների սահմանափակ հասանելիության ու հավելյալ ծախսերի: Թերևս այդ է պատճառը, որ Արցախի Հանրապետությունում գործում են միայն Հայաստանում գրանցված և ՀՀ ռեզիդենտ համարվող որոշ բանկերի մասնաճյուղեր (տե՛ս Գձ. 1.):

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2019թ.-ի առաջին կիսամյակի տվյալներով հայաստանյան 17 առևտրային բանկերից 6-ն Արցախում ունեն ընդհանուր թվով 26 մասնաճյուղ, մասնաճյուղերի ամենամեծ ցանցը, բնականաբար, ունի Արցախբանկը՝ 15 մասնաճյուղ: Արարատբանկն Արցախում ունի 7 մասնաճյուղ, և մեկական մասնաճյուղով հանդես են գալիս Կոնվերս բանկը, Հայբիզնեսբանկը, Հայէկոնոմբանկը և Յունիբանկը:



Գծապատկեր 1.

Առաջին Հանրապետությունում գործող բանկերի մասնաճյուղերի թիվը (2019 թ.-ի 1-ին կիսամյակի տվյալներով)⁴⁶⁵

Հատկանշական է, որ ի տարբերություն այլ բանկերի՝ ՀՀ ռեզիդենտ Արցախբանկն Արցախի Հանրապետությունում է կենտրոնացրել իր սպասարկման ցանցն ապահովող ընդամենը 22 մասնաճյուղերի գերակշիռ մասը (68.2%)։ Երևանում գործում է Արցախբանկի ընդամենը 7 մասնաճյուղ, ՀՀ այլ մարզերում բանկը մասնաճյուղ չունի: Այս հանգամանքը թերևս մատնացույց է անում Արցախբանկի «արցախյան արմատները»՝ անկախ ՀՀ-ում գրանցված լինելու իրողությունից: Ակնհայտ է, որ հայաստանյան գրանցումը բանկին անհրաժեշտ էր լիարժեք գործունեություն ծավալելու հնարավորություն ստանալու համար:

Ընդհանրացնելով համաշխարհային հանրության կողմից չճանաչված երկրներին բնորոշ առաձևահատկությունները՝ մեր կողմից փորձ է արվել սահմանել դրանց տնտեսական առաջընթացը զսպող հիմնական գործոնները, մասնավորապես՝

- Տարածքային հակամարտության պատճառով ստեղծված պատերազմական իրավիճակը, որն առկա Նյութական, Ֆինանսական ու մարդկային ռեսուրսների

⁴⁶⁵ Կազմվել է հեղինակների կողմից՝ ՀՀ-ում գործող 17 բանկերի վերաբերյալ դրանց պաշտոնական կայքերում և www.banks.am կայքում տեղադրված համապարփակ տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:

ահռելի մասը կենտրոնացնում է ռազմական հատվածում ետին պլան մղելով տնտեսությունը:

- Առաջընթացի սահմանափակ հնարավորությունները և տնտեսական կախվածությունը հովանավորող կամ տարածքային հավակնություններ ունեցող երկրներից:
- Սեփական տրանսպորտային, կապի, էներգետիկ և այլ ենթակառուցվածքների բացակայությունը կամ թերզագացվածությունը, ինչն էապես սամանափակում է արդյունավետ տնտեսվարման հնարավորությունները:
- Հովանավորող երկրների փոքր տնտեսությունները, դրանցում աճի ու զարգացման խոչընդոտների առկայությունը:

Բնականաբար, այս ցանկն ամբողջական չէ և կարող է էապես տարբերվել՝ ըստ կոնկրետ երկրների:

ECONOMIC DEVELOPMENT CHALLENGES IN THE COUNTRIES UNRECOGNIZED BY THE WORLD COMMUNITY: HISTORICAL-ECONOMIC COMPARISONS

ANNA PAKHLYAN

*Armenian State University of Economics (ASUE), Faculty of Regulation of Economy and International Economic Relations,
Assistant Professor at the Chair of International Economic Relations, PhD in Economics,
Yerevan, Republic of Armenia*

ANUSH ANANYAN

*Armenian State University of Economics (ASUE), Faculty of Regulation of Economy and International Economic Relations,
Associate Professor at the Chair of International Economic Relations,
PhD in Economics, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

Recognition of the country's sovereignty by other countries or the United Nations Organization (UN) can have a significant economic impact on the latter. Identifying the economic consequences of such "non-economic" issues is extremely important in case of the possible change in the status of countries, not recognized by the international community.

The research aims to study the peculiarities and commonalities of countries unrecognized by the world community, the main factors impeding their economic progress, and identifying the root causes of such countries' economic failures. The achievements of the countries officially recognized by the UN member states, which have passed through the conflicts and finally, can establish close relations with the outside world and can be beneficial both for the Artsakh Republic and other unrecognized countries.

The study used the methods of data collating, comparison and statistical analysis.

Contrary to expectations, studies have shown that just being unrecognized by the international community is not yet sufficient to justify the economic failures of such countries. And factors such as infrastructure development in the country or the level of economic development of the sponsoring country can have a serious impact on the economic potential of an unrecognized country.

Key words: *unrecognized countries, world community, United Nations (UN), Republic of Artsakh, Gross Domestic Product (GDP), foreign trade, export, import, goods and services.*

ВЫЗОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В СТРАНАХ, НЕ ПРИЗНАННЫХ МИРОВЫМ СООБЩЕСТВОМ: ИСТОРИКО-ЭКОНОМИЧЕСКИЕ АССОЦИАЦИИ

АННА ПАХЛЯН

Армянский государственный экономический университет (АГЭУ), факультет регулирования экономики и международных экономических отношений, ассистент кафедры международных экономических отношений, кандидат экономических наук, г.Ереван, Республика Армения

АНУШ АНАНЯН

Армянский государственный экономический университет (АГЭУ), факультет регулирования экономики и международных экономических отношений, доцент кафедры международных экономических отношений, кандидат экономических наук, доцент, г.Ереван, Республика Армения

Признание суверенитета страны другими странами или Организацией Объединенных Наций (ООН) может оказать существенное экономическое воздействие на нее. Выявление экономических последствий таких «неэкономических» проблем чрезвычайно важно с точки зрения возможного изменения статуса стран, не признанных международным сообществом.

Целью исследования является изучение особенностей и общностей не признанных мировым сообществом стран, основных факторов, препятствующих их экономическому прогрессу, а также выявление коренных причин экономических неудач в таких странах. Достижения стран, официально признанных государствами-членами ООН, которые прошли через конфликты и, наконец, могут установить тесные отношения с внешним миром, могут быть полезны как для Республики Арцах, так и для других непризнанных стран.

В исследовании использовались методы сопоставления, сравнения и статистического анализа данных.

Вопреки ожиданиям, исследования показали, что одного непризнания международным сообществом еще недостаточно для оправдания экономических неудач в таких странах. А такие факторы, как развитие инфраструктуры в стране или уровень экономического развития страны-спонсора, могут оказать серьезное влияние на экономический потенциал непризнанной страны.

Ключевые слова: *непризнанные страны, мировое сообщество, Организация Объединенных Наций (ООН), Республика Арцах, валовой внутренний продукт (ВВП), внешняя торговля, экспорт, импорт, товары и услуги.*

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ



ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ, ԱԵԳՄՍ անդամ, ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ barkhudaryan.lusine@gmail.com

Հոդվածի նպատակն է բացահայտել իրավական ակտիվության դերակատարությունն Արցախի Հանրապետության՝ որպես իրավական պետության կայացման գործում:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են համագիտական և հատուկ մեթոդները:

Հետապոտության ընթացքում բացահայտվել են իրավական ակտիվությունը խթանող գործոնները և ուղղությունները:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եպրակացության, որ իրավական ակտիվությունը նախևառաջ ենթադրում է անհատի իրավական կարգավիճակի բոլոր տարրերի օգտագործում: Բացի այդ, այն ներառում է իրավաչափ գործողություններ, որոնք կոչված են վերափոխելու, պարզացնելու ինչպես սեփական իրավական կարգավիճակը, այնպես էլ իրավական համակարգն ամբողջությամբ:

Անհատի իրավական ակտիվությունն իրավական պետության կառուցման ու գործունեության կարևոր նախադրյալներից է, քանի որ մարդու ու քաղաքացու իրավունքների և պատությունների լրիվ ծավալով պաշտպանությունը, պետության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը, օրինականությունը, իրավակարգը, իրավական պետականության ամրապնդումը, քաղաքացիական հասարակության կատարելագործումը, ժողովրդավարության պարզացումն ուղղակիորեն բխում են անհատի դրական իրավական ակտիվությունից:

Հոդվածում նշված առաջարկություններն իրագործելու դեպքում հնարավոր կլինի կայուն հիմք ստեղծել Արցախի Հանրապետության՝ որպես իրավական պետության կայացման համար:

Հիմնաբառեր՝ իրավական ակտիվություն, իրավական պետություն, Սահմանադրություն, քաղաքացիական հասարակություն, նախաձեռնողականություն, իրավագիտակցություն, անհատ, քաղաքացի:

«Անհատի իրավական ակտիվություն» հասկացությունն իրավաբանական գիտությունում նորություն չէ, բայցևայնպես քիչ հետազոտված է: Մինչ օրս չկա

* Հոդվածը ներկայացվել է 28.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

միասնական մոտեցում այս հասկացության վերաբերմամբ, հստակ բացահայտված չէ նրա դերակատարությունն իրավական պետության կառուցման գործում: Բայց չէ՞ որ հենց ակտիվ անհատն է հանդիսանում քաղաքացիական հասարակության հիմքը, իրավական պետության կառուցման ու արդյունավետ գործունեության հենասյունը:

Հասարակության ու պետության սոցիալ-իրավական կյանքում ակտիվ մասնակցություն ունեցող քաղաքացիների առկայությունն իրավական պետության կառուցման կարևոր նախադրյալներից է: Անհատի իրավական ակտիվությունից է կախված իրավական համակարգի գործունեությունը, նրա բոլոր օղակների աշխատանքը, լայն իմաստով՝ քաղաքացիական հասարակության արագացված զարգացումը⁴⁶⁶:

Արցախի Հանրապետության՝ որպես իրավական ու ժողովրդավարական պետության կառուցումն անհնար է առանց ակտիվ քաղաքացիների: Մեր հասարակությունն ունի նախաձեռնող, իրենց իրավունքներն ակտիվ իրականացնող և պարտականությունները կատարող քաղաքացիների կարիք:

Անհատի ակտիվությունը (լատիներեն «activus»)՝ ակտիվ) մարդու ակտիվ վերաբերմունքն է կյանքի նկատմամբ, որն արտահայտվում է մարդու ստեղծագործ գործունեության, կամային գործողությունների, շփումների մեջ: Ակտիվությունը մի կողմից՝ կարելի է դիտարկել որպես մարդկային գործունեության նախադրյալ, մյուս կողմից՝ որպես սուբյեկտի՝ սոցիալական հարաբերություններում որոշակի խնդիրների լուծմանն ուղղված վարքագիծ:

Անհատի իրավական ակտիվությունը համակարգային անհատական որակ է, որում արտացոլվում է անհատի՝ հասարակության, իրավական համակարգի հետ փոխկապակցվածության խորությունն ու ամբողջականությունը, անհատի՝ իրավունքի սուբյեկտի վերածվելու կարողությունը:

Իրավական ակտիվության բնույթի ու սոցիալական ուղղվածության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ ձևավորվել է երկու մոտեցում: Առաջին մոտեցման կողմնակիցները (Ի.Պոկրովսկի, Ս.Կոժևնիկով, Ն.Մատուզով և այլք) իրավական ակտիվությունը մեկնաբանում են որպես սուբյեկտի դրական, իրավաչափ, հասարակայնորեն օգտակար և պետության ու հասարակության կողմից հաստատված գործունեությունն իրավական ոլորտում⁴⁶⁷: Երկրորդ մոտեցման համաձայն՝ իրավական ակտիվությունը կարող է լինել նաև բացասական, հակաիրավական (Մ.Օրզիկ⁴⁶⁸, Յու. Օբորոտով⁴⁶⁹, Վ.Չատոնսկի⁴⁷⁰): Այսպես, օրինակ, Մ.Օրզիկը հավաստիացնում է, որ «իրավական ակտիվությունն իր մեջ ներառում է ոչ միայն իրավունքի պահանջների կենսագործմանն ուղղված գործողություններ, այլև օրենքին չհամապատասխանող գործունեություն»⁴⁷¹:

Այսպիսով, ներկայումս «իրավական ակտիվություն» հասկացությունը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ որպես իրավաչափ վարքագծի ձև ու տեսակ: Որպես իրավաչափ վարքագծի ձև՝ իրավական ակտիվությունն «օգտագործում»

⁴⁶⁶ Матузов Н.И., Правовая система и личность. Саратов, 1987, էջ 6:

⁴⁶⁷ Покровский И. Ф., О правовой активности личности и формировании ее правосознания // Вестник. 1971. №17, էջ 143-147: Кожевников С. Н. Правовая активность: Понятие и сущность// Правоведение. 1979. №4, էջ 33-39: Матузов Н. И. Правовая система и личность. Саратов, 1986, стр. 6.

⁴⁶⁸ Орзих М. Ф., Личность и право. М., 1975, стр. 26.

⁴⁶⁹ Оборотов Ю. Н., Основные вопросы теории правовой активности личности социалистического общества: автореф. дис. ... канд. юр. наук. Киев, 1979, стр. 51.

⁴⁷⁰ Затонский В. А., Сильное государство и активная личность: теоретико-правовой аспект. Саратов, 2005, стр. 216.

⁴⁷¹ Орзих М. Ф., Личность и право. М., 1975, стр. 26.

հասկացության համարժեքն է, իսկ որպես տեսակ՝ օգտագործման բովանդակությունն է՝ որպես իրավունքի կենսագործման ձև⁴⁷²:

Իրավական պետությունում իրավական ակտիվությունը զարգանում է մի շարք գործոնների շնորհիվ, մասնավորապես՝ իրավական դաստիարակության, իրավագիտակցության և իրավական մշակույթի միջոցով:

Իրավական դաստիարակության միջոցով անհատն ունենում է իրավական պահանջմունքներ, որոնք որոշ չափով կանխորոշում են համապատասխան գործողությունների ու արարքների ընտրությունը: Իրավական պահանջմունքն ակտիվացնում է սուբյեկտին, դրդում է գնահատել իրավական իրականությունը, պարբերաբար ուշադրություն դարձնել իրավական երևույթներին ու առարկաներին, որոնք նպաստում են այդ պահանջմունքների բավարարմանը: Այդ համատեքստում ձևավորվում է շահը՝ իրավաչափ վարքագծի կարևորագույն բաղադրատարրը:

Իրավագիտակցությունն ու իրավական մշակույթը ևս սերտ փոխկապակցված են իրավական ակտիվության հետ: Իրավական մշակույթը ոչ միայն իրավամտածողության բարձր մակարդակն է, այլև իրավաբանական գործունեության բարձր որակը:

Իրավական ակտիվության առանձնահատկությունն այն է, որ ծագում է իրավունքի դրական ազդեցության հիման վրա և ուղղված է նրա անհատական ու ստեղծագործ իրագործմանը: Հենց իրավական ակտիվության մեջ է արտահայտվում քաղաքացիական հասուն գիտակցությունը, իրավագիտակցության բարձր մակարդակը⁴⁷³:

Իրավական ակտիվությունն անհրաժեշտ է դիտարկել որպես անհատների՝ իրավունքի ոլորտում արդյունավետ գործունեություն, որը համակցում է ինչպես դրական (պետության ու հասարակության կողմից ընդունված), այնպես էլ բացասական (պետության ու հասարակության կողմից բացասականորեն ընկալվող) գործոններ:

Անհատի իրավական ակտիվությունն առանձնանում է մի շարք հատկանիշներով.

1. Անհատի իրավական ակտիվությունն արտահայտվում է գործողություններով, այսինքն՝ ակտիվության եռությունը հենց գործողության, մարդու ակտիվ վարքագծի մեջ է:

2. Գործողություններն իրականացվում են ազատ անձանց կողմից: Ազատությունն այս պարագայում դիտարկվում է որպես «այն բանի երաշխիք, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է անել ինչ-որ բան առանց ուրիշների միջամտության՝ վերջիններիս կողմից արգելելու կամ հարկադրվելու»⁴⁷⁴:

3. Այդ գործողությունները տեղի են ունենում իրավունքի ոլորտում, ուստի կարող են կրել ինչպես իրավաչափ, այնպես էլ հակաիրավական բնույթ: Հակաիրավական վարքագիծը ևս իրավական վարքագիծ է (բայց ոչ իրավաչափ), ուստի հակաիրավական բնույթը նրա բաղադրիչներից է:

4. Իրավական ակտիվությունն արտահայտում է անհատի՝ իրավունքի հետ հարաբերակցվելու հոգեբանական պատրաստվածությունը, ինչի շրջանակներում յուրաքանչյուրը պետք է ունենա իրավունքի բարձր նշանակության վերաբերյալ կայուն համոզմունք:

5. Անհատի իրավական ակտիվությունը ձևավորվում է տեղեկատվության հիման վրա, որը վերջինս ստանում է որպես իրավունքի սուբյեկտ:

⁴⁷² **Горовенко В. В.**, Методология правовой активности: К постановке проблемы, Юридическая наука и правоохранительная практика, 1 (19), 2012, стр. 12.

⁴⁷³ **Мечетина Т. А.**, Рыбаков В. А., О понятии и содержании социально - правовой и гражданско-правовой активности, стр. 97.

⁴⁷⁴ **Арон Р.** Эссе о свободах/ пер. с фр. Н.А. Руткевич. М., 2005, стр. 162.

6. Իրավական ակտիվությունն իր կենսագործունեության ընթացքում որպես ուղենիշ պիտի ունենա համամարդկային արժեքները և գործի՝ ի շահ նրա սուբյեկտների: Իրավական ակտիվությունն անհնար է առանց սուբյեկտների. իրավական ակտիվությունը հնարավոր է այնտեղ, որտեղ առկա է անհատը և կան ակտիվ վարքագիծ դրսևորելու անհրաժեշտ պայմաններ:

7. Անհատների իրավական ակտիվությունը որոշվում է նրանց արժեհամակարգային հատկանիշներով. անհատները գիտակցում են իրավունքի արժեքը, ընտրում են վարքագծի թույլատրելի կանոնը՝ այդ կերպ ձևավորելով վերաբերմունք օրենքի նկատմամբ:

8. Անհատի իրավական ակտիվությունը սերտ փոխկապակցված է նրա իրավագիտակցությանը:

Իրավական ակտիվությունը դրսևորվում է մի շարք ուղղություններով.

1. գործունակ օրենսդիր կառույցների ձևավորում, որոնք արտացոլում են հասարակության բոլոր անդամների շահերը,

2. իրավաբանական նորմերի համակարգի զարգացմանն ուղղված գործունեություն,

3. պետական կառույցների գործունեության օրինականության պահանջ,

4. սահմանադրականության սկզբունքի կյանքի կոչում,

5. ակտիվ իրավաչափ վարքագիծ,

6. անհանդուրժողական վերաբերմունք իրավախախտումների նկատմամբ,

7. քաղաքացիական հասարակության բոլոր կառույցների փոխհամաձայնեցված գործունեություն և այլն:

Անհատի իրավական ակտիվությունը դիտարկելով որպես անհատի՝ պետության ու հասարակության կողմից ինչպես դրական, այնպես էլ բացասական ընկալվող գործունեություն (կախված իրավական հետևանքներից)՝ անհրաժեշտ է առանձնացնել իրավական ակտիվության դրական ու բացասական տեսակները⁴⁷⁵:

Անհատի դրական իրավական ակտիվությունն իրավունքի՝ առանց խորն ու համակողմանի գիտակցման ենթակայությունը չէ, այլ իրավունքի սուբյեկտի գիտակցական, նախաձեռնողական, իրավաչափ գործունեությունն է, որն ուղղված է իրավունքների արդյունավետ օգտագործմանը, պարտականությունների կատարմանը, օրենքով պաշտպանվող պետական, հասարակական և այլ անձնական շահերի կենսագործմանը:

Անհատի իրավական ակտիվությունն իրավական պետության կառուցման ու կայացման ամենակարևոր ու անհրաժեշտ պայմաններից է, ինչն արտահայտվում է հետևյալում.

Առաջին. իրավական պետության ձևավորման համար անհրաժեշտ է քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետական կյանքի կազմակերպմանը:

Իշխանության կարևորագույն գործառույթը օրինաստեղծությունն է: Օրինաստեղծությունն ամբողջությամբ կանխորոշում է պետության և նրա քաղաքիչների գործունեությունը, կարգավորում է ոչ միայն առանձին անձանց ու խմբերի հարաբերակցությունը, այլև պետության վերաբերմունքը քաղաքացիների, ամբողջ հասարակության նկատմամբ, ինչպես նաև բոլոր պետական կառույցների

⁴⁷⁵ Հատկանշական է, որ իրավաչափ վարքագիծը միշտ չէ դիտարկվում որպես սոցիալ-օգտակար վարքագիծ: Այսպես, օրինակ, Արցախի Հանրապետության Սահմանադրության 58-րդ հոդվածով ամրագրված և աշխատանքային օրենսգրքով մանրամասնված գործադրվի իրավունքը կենսագործելու ժամանակ կարող են կաթվածահար լինել հասարակական կյանքի մի շարք ոլորտներ: Ուստի իրավական պետության տեսանկյունից առանձնակի կարևորություն է ներկայացնում դրական իրավական ակտիվությունը, քանզի անհատը գործում է իր իրավաչափ գործողությունների անհրաժեշտության, նպատակահարմարության և սոցիալական նշանակության հիման վրա:

գործունեությունը: Ակնհայտ է, որ անհատի ազատության դեպքում նրա իրավական ակտիվությունը դրսևորվում է օրենսդրությամբ ամրագրված այս կամ այն նորմի կամ կանոնի ձևավորման մեջ, որոնք նրան կկապեն կամ կպարտավորեցնեն:

Այսպես, Արցախի Հանրապետության Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն երկուսուկես տոկոսը ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք: Ավելին, Արցախի Հանրապետության Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 6-րդ, 9-րդ և 11-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 87-90-րդ, 92-94-րդ, 96-րդ, 106-րդ հոդվածներում, 107-րդ հոդվածի 1-ին մասում, 108-րդ հոդվածի 1-ին մասում, 109-րդ, 121-րդ, 131-րդ, 132-րդ և 175-րդ հոդվածներում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրությունն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, հանրապետության նախագահը կամ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն տասը տոկոսը⁴⁷⁶:

Իրավական ակտիվություն ցուցաբերելով՝ անհատը ժողովրդական ներկայացուցչության միջոցով ազդում է օրինաստեղծության ողջ գործընթացի վրա⁴⁷⁷:

Իրավական պետությունում պետական գործառնությունների ճիշտ կենսագործումը պայմանավորված է քաղաքացիներից յուրաքանչյուրի և ամբողջ հասարակության իրավական ակտիվությամբ: Առանց իրավական կարգի ու պետական շահերի նկատմամբ գիտակցված-ակտիվ վերաբերմունքի անհնար է պատկերացնել ժամանակակից իրավական պետությունը: Իրավական պետության կայուն զարգացումը հնարավոր է միայն անհատի բարձր իրավական մշակույթի, իրավագիտակցության և իրավական ակտիվության դեպքում:

Երկրորդ. իրավական պետության կառուցումն անհնար է առանց զարգացած քաղաքացիական հասարակության առկայության ու գործունեության, որի հիմքը գիտակցված ակտիվ գործունեության ունակ, սոցիալ-տնտեսական, քաղաքական-իրավական և այլ խնդիրները պրագմատիկ լուծող անհատն է:

Ոչինչ այնքան չի արժևորում անհատին, որքան կենսական ակտիվ կեցվածքը, հասարակական պարտքի նկատմամբ գիտակցված վերաբերմունքը:

Քաղաքացիների իրավական ակտիվության մակարդակի հիման վրա կարելի է պատկերացում կազմել քաղաքացիական հասարակության «որակի» մասին: Որքան շատ քաղաքացիներ են դրսևորում իրավական ակտիվություն՝ ուղղված նախևառաջ հասարակական շահերի պաշտպանությանը, այնքան կյանքի ավելի շատ պահանջմունքների է համապատասխանում քաղաքացիական հասարակությունը, որն ունակ է ապահովելու կյանքի կայուն ու անվտանգ պայմաններ, իրավական ակտիվության դրսևորում կյանքի բոլոր բնագավառներում:

Քաղաքացիական հասարակության կառույցները, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները, շարժումները և այլն, ձևավորվում են նախաձեռնողականության հիման վրա, որն իրավական ակտիվության կարևոր բաղադրատարրերից է:

⁴⁷⁶ Ուշագրավ է այն փաստը, որ Արցախի Հանրապետության քաղաքացիները կյանքի են կոչել Արցախի Հանրապետության Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավունքը՝ ձևավորելով նախաձեռնող խումբ և պահպանելով «Հանրաքվեի մասին» օրենքով ամրագրված պահանջները: Նախաձեռնել են ստորագրահավաք՝ միտված Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուն:

⁴⁷⁷ Անհատի իրավական ակտիվություն դրսևորելու կարևոր ձևերից է նաև համընդհանուր հավասար ընտրություններին մասնակցելը:

Նախաձեռնողականությունը շատ հաճախ դիտարկվում է որպես «ակտիվ գործունեության (մասնավորապես իրավական ակտիվության) էական հատկանիշ»⁴⁷⁸: Նախաձեռնողականությունն ասելով հասկանում ենք ստեղծագործ, ինքնուրույն, ազատ-կամային գործունեություն, որն ուղղված է հասարակական կարևոր նախագծերի, առաջարկությունների հայեցակարգերի մշակմանը, նախագծմանը, հրապարակայնացմանը, իրականացմանը:

Իրավական ակտիվության հիմնական գործառույթը հասարակության ու պետության ամրապնդումը, պահպանումը և անընդհատ զարգացումն է, յուրաքանչյուր անհատի և ամբողջ հասարակության պահանջմունքների բավարարումն է: Նախաձեռնողականությունը դրական իրավական ակտիվության դրսևորման յուրահատուկ ձևերից է:

Իրավական կյանքում նախաձեռնողականությունն արտահայտվում է սուբյեկտների իրավական ակտիվության մեջ, որոնք ունեն հնարավորություն և, որպես կանոն, օգտվում են այդ հնարավորությունից՝ կյանքի կոչելով իրավունքները և պարտականությունները:

Արցախի Հանրապետությունում գործում են բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր, որոնք Արցախի Հանրապետության քաղաքացիներին ընձեռնում են բոլոր հնարավորությունները՝ նախաձեռնող վարքագիծ դրսևորելու համար:

Այսպես, օրինակ, Արցախի Հանրապետության Սահմանադրության 45-րդ և 46-րդ հոդվածներում սահմանվում են **միամոռումնեռի առատութուն և համաատասահանաբառ. կուսանտութուն ստեղծելու և կուսանտութունն անդամագրվելու իրավունք**: Միավորումների, կուսակցությունների ստեղծման ու գործունեության կարգը սահմանվում են համապատասխանաբար «Հասարակական կազմակերպությունների մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով: Վերոգրյալից պարզ է դառնում, որ մեր երկրում ստեղծված են բոլոր պայմանները հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների ձևավորման ու գործունեության համար: Անհրաժեշտ է միայն ակտիվ անհատների, քաղաքացիների առկայություն, որոնք կյանքի կկոչեն սահմանադրական իրավունքը: Ուշագրավ է այն փաստը, որ վերջին ժամանակաշրջանում նկատվում է Արցախի Հանրապետության քաղաքացիների ակտիվություն, որոնք, օգտվելով Սահմանադրությամբ ամրագրված իրավունքից, կազմավորում են հասարակական կազմակերպություններ, կուսակցություններ, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում ինչպես հասարակական, այնպես էլ պետական կյանքում:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 53-րդ հոդվածը սահմանում է հանրագիր ներկայացնելու իրավունք⁴⁷⁹: Հանրագիր ներկայացնելու իրավունքը

⁴⁷⁸ **Матузова Н.И. [и др.]**, Правовая жизнь в современной России: теоретико-методологический аспект/ Саратов, 2005, стр 379-380.

⁴⁷⁹ Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով: (Արցախի Հանրապետության Սահմանադրություն, ԼՂՀՊՏ 2017.02.28/04(318) «Հանագրերի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ հանրագիրն Արցախի Հանրապետության Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրությունը կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական ու հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունն է: [/http://minjustnkr.am/nkr/documents/Hanragreri%20-Hyup-tex-AH%20orenqneri-naxagceri-patet.pdf](http://minjustnkr.am/nkr/documents/Hanragreri%20-Hyup-tex-AH%20orenqneri-naxagceri-patet.pdf):

Նպատակ է հետապնդում հնարավորինս օգտագործել քաղաքացիական հասարակության ներուժը, ապահովել պետական իշխանության և հանրության ներկայացուցիչների միջև կայուն հաղորդակցությունը⁴⁸⁰: Արցախի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերի բազմազանությունը վկայում է, որ օրենսդիրը համաձայն է այն գաղափարի հետ, որ քաղաքացիների իրավական ակտիվության բարձր մակարդակը նպաստում է իրավաստեղծության որակի կատարելագործմանը, իրավունքի նորմերի կենսագործմանը, սահմանափակում է պետական իշխանության կամայականությունը⁴⁸¹:

Այսպես, նախաձեռնողականությունը նախաձեռնողական գործունեության, դրական իրավական ակտիվության ամենակարևոր տարրերից է, քանզի հասարակությունն առաջ է շարժվում նախաձեռնությունների, նորարարությունների յուրօրինակ⁴⁸²:

Երրորդ. անհատի իրավական ակտիվությունը հանդիսանում է մարդու և քաղաքացու իրավունքների՝ պետության իրավունքների նկատմամբ առաջնահերթ լինելու երաշխավոր՝ այդ կերպ երաշխավորելով իրավական պետության կարևորագույն սկզբունքի կյանքի կոչումը, այն է՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առավելագույն ապահովումը: Պետությունը (պետական իշխանությունը) ինքն իրեն չի սահմանափակում, դա կարող է անել միայն մի ուրիշ իշխանություն՝ անհատի իշխանությունը, քաղաքացիական հասարակության կամքը: Իրավական ոլորտում իրավական ակտիվություն ցուցաբերելու անհրաժեշտության գիտակցումը, սոցիալ-իրավական մշակույթի բարձրացումը կնպաստեն իրավական պետության կարևորագույն սկզբունքների կյանքի կոչմանը:

Չորրորդ. իրավական պետության կառուցման կարևոր տարրերից է պետության ու անհատի փոխադարձ պատասխանատվությունը: Հենց անհատի իրավական ակտիվությունն է ապահովում իշխող սուբյեկտի պատասխանատվության անխուսափելիությունն այն դեպքում, երբ խախտվում են վարքագծի համապարտադիր կանոնները:

Հինգերորդ. իրավական պետությանը ներհատուկ են օրինականությունն ու իրավակարգը: Այն դեպքերում, երբ քաղաքացիներն անտարբեր չեն մնում օրենքի, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների խախտման նկատմամբ, դրսևորում են իրավական ակտիվություն. պաշտպանում են իրենց իրավունքներն ու շահերը, օգտվում են օրենսդրությամբ երաշխավորված պաշտպանության բոլոր եղանակներից ու միջոցներից, պատրաստակամություն են հայտնում իրավախախտումները բացահայտելու հարցում, իրավակարգն ու օրինականությունը գտնվում են պատշաճ մակարդակի վրա, այսինքն՝ երաշխավորվում է իրավունքի և օրենքի գերակայությունը:

Իրավական ակտիվությունն է կանխորոշում իրավական պետության սոցիալական, իրավական, տնտեսական զարգացումը: Այսպես, օրինակ, ցուցաբերողով ակտիվություն ընտրությունների ժամանակ՝ քաղաքացիները մասնակցում են իշխանությունների ձևավորման գործընթացին, աջակցում են այն թեկնածուներին, որոնց ծրագրերը կոչված են ապահովելու ավելի բարենպաստ կյանք:

Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը պայմանավորված է քաղաքացիների գրագիտությունից, իրավագիտակցությունից, սոցիալական ու

⁴⁸⁰ Հանրագիրը միջոց է պարտադրելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ հաշվի առնելու հասարակության կարծիքը, միջոցներ ձեռնարկելու հասարակության անդամների կողմից բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ:

⁴⁸¹ **Тепляшин И.В.** Правовая активность российских граждан: перспективы исследования категории // Российский юридический журнал. 2010. N 5, стр 40-49.

⁴⁸² **Арон Р.** Эссе о свободах/ пер. с фр. Н.А. Рут-кевич. М., 2005, стр 162.

իրավական ակտիվությունից: Միայն անհատի սոցիալական-իրավական ակտիվության վրա հիմնված ամուղջ քաղաքացիական հասարակության միջոցով է հնարավոր իրավական պետությունում ապահովել ժողովրդավարության, իրավակարգի, օրինականության զարգացում:

Անհատի իրավական ակտիվության ցուցանիշներից են նախաձեռնողականությունը, նպատակաուղղվածությունը, կազմակերպվածությունը, գործունեության արդյունավետությունը, ուժեղ, կայուն, այլ ոչ թե իրավիճակային ձգտումը՝ ազդելու սոցիալական գործընթացների ու հասարակական գործերի վրա:

Իրավաբանական գրականությունում անհատի իրավական ակտիվությունը դիտարկվում է որպես իրավական նորմերին համապատասխանող իրավական գործունեության մակարդակ, որը կարևոր դերակատարություն ունի անհատների իրավագիտակցության ձևավորման գործընթացում:

Անհատի իրավական ակտիվությունը բարդ երևույթ է, որի բոլոր տարրերը սերտ փոխկապակցված են և ամբողջական: Անհատի իրավական ակտիվության տարրերից համակարգաստեղծ են իրավական գիտելիքները (իրավական իրազեկվածություն), իրավունքի նկատմամբ վերաբերմունքը (գնահատականներ, համոզմունքներ), իրավակարգավորումները և իրավական վարքագիծը:

Մարդու պահանջմունքների, շահերի, արժեքների վրա հիմնվում է իրավունքի ուղորտում նրա վարքագիծը, իսկ տեղեկատվական ու գնահատողական հատկանիշների հիման վրա կանխորոշվում է իրավագիտակցության կամային հատկանիշը:

Իրավագիտակցությունը սերտ փոխկապակցված է իրավական ակտիվության հետ: Իրավագիտակցությունն իրավական նորմերի կենսագործմանն ուղղված անհատի լիակատար ներքին պատրաստվածության աղբյուրն է⁴⁸³:

Անհատի իրավական ակտիվությունն իրավագիտակցության բարձր մակարդակի արդյունքն է, ինչի պատճառով մի շարք մասնագետներ այն դիտարկում են որպես երևույթ, որն «անցնում է օրենքի սովորական պահանջը»⁴⁸⁴:

Անհատի իրավական ակտիվությունն անհրաժեշտ է դիտարկել որպես կրթական, ինչպես նաև նրանց բարոյական հասունացման հետ կապված իրավահարաբերությունների ուսուցման բնագավառում իրավաչափ վարքագծի և գործունեության որոշակի մակարդակ:

Անհատի իրավական ակտիվությունն արտահայտվում է իրավունքի բնագավառում պետության ու հասարակության կողմից ընդունված դրական գործունեության մեջ: Դա նախնառաջ անհատի նախաձեռնողական վարքագիծն է, ինչը պայմանավորված է նրա իրավագիտակցության բարձր մակարդակով, իրավական համոզվածությամբ:

Անհատի իրավական ակտիվության ձևավորման հենասյունը իրավունքի բնագավառում ճանաչողական ակտիվությունն է: Վերջինս բխում է անհատի «իրավական շահերից» ու ստացած գիտելիքներից⁴⁸⁵: Անհատների ճանաչողական ակտիվությունը նրանց իրավագիտակցության ձևավորման կարևոր նախադրյալներից է: Բայց ինչպիսի՞ միջոցներ պիտի ձեռնարկվեն, որպեսզի անհատի վարքագիծը լինի ոչ միայն իրավաչափ, այլև ակտիվ: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել իրավունքի ճանաչման ներքին պահանջմունքների համակարգի և ակտիվ իրավական վարքագծի ձևավորման վրա:

⁴⁸³ **Тепляшин И. В.** Становление российской правовой государственности и правовая активность граждан / И. В. Тепляшин // Журнал российского права. – 2002. – № 1, стр 26-27.

⁴⁸⁴ Современный воспитательный процесс: состояние и проблемы. Материалы круглого стола // Социологические исследования. 2005 №.4.

⁴⁸⁵ **Щукина Г. И.** Активизация познавательной деятельности учащихся в учебном процессе, М.: Просвещение, 1979.

իրավունքի՝ որպես սոցիալական արժեքի գիտակցված պահանջարկը դրսևորվում է որպես սուբյեկտիվ վիճակ, որը կարգավորում է անհատների վարքագիծը, կանխորոշում է մտածելու ու կամքի ուղղությունը:

Պահանջարկն անհատի վարքագծի սկզբնաղբյուրն է, ինչի պատճառով էլ այն ոչ միայն նախորդում է շահին, այլև առաջացնում է այն, քանզի առանց պահանջարկի շահ չի կարող առաջանալ, և հենց պահանջարկն է հիմնավորում շահի բովանդակությունը: Շահը դիտարկվում է որպես «անհատների գործունեության օբյեկտիվ հիմնավորվածության միասնություն և դրա արտացոլում ձգտումներում ու արաքներում»⁴⁸⁶:

Անհատների իրավական ակտիվությունն իրավունքի ոլորտում նրանց կամավոր, ստեղծագործ գործունեությունն է⁴⁸⁷: Անհատների իրավական ակտիվության համար հիմք կարող է լինել իրավունքի արժեքի, սուբյեկտի օրինական շահերի պաշտպանության արդյունավետության՝ նրանց ներքին համոզմունքը:

Անհատների իրավական ակտիվությունը նրանց իրավագիտակցության բարձր մակարդակի հետևանք է, ուստի այն կարելի է դիտարկել որպես պրակտիկ գործունեության անհատների պատրաստվածություն (օրինակ՝ սեփական շահերի պաշտպանությունը, սեփական կարծիքի արտահայտում, որը հաշվի է առնվում իրավակիրառ սուբյեկտի կողմից իրավական խնդիրների առաջացման դեպքում), որի արդյունքը իրավական փորձառությունն է⁴⁸⁸:

Անհատների իրավական ակտիվությունը դրսևորվում է նրանց գործունեության մեջ՝ դառնալով նրանց իրավական մշակույթի անբակտեյի բաղադրիչը: Անհատների իրավական ակտիվության սահմանները կանխորոշված են նրանց իրավասուբյեկտության սահմաններով:

Անհատների գործունեության տիրապետող տեսակը իրավական բնույթի կրթական գործունեությունն է, ինչն էլ համարվում է իրավական գործունեության տարատեսակ: Անհատները մասնակցում են իրավաբանական նշանակություն ունեցող տարաբնույթ գործողությունների՝ դառնալով ընտանեկան, քաղաքացիական, վարչական, աշխատանքային և այլ իրավահարաբերությունների մասնակիցներ⁴⁸⁹:

Անհատների իրավական ակտիվության տարատեսակ է տեղեկատվական-իրավական գործունեությունը, որին նրանք ակտիվ մասնակցում են⁴⁹⁰:

Անհատների իրավական ակտիվությունը սերտ կապված է իրավագիտակցության հետ, ինչն արտահայտվում է անհատների կողմից սեփական վարքագիծը ծրագրավորելու գիտակցված հնարավորությամբ, ինչն էլ հիմք է կայուն վարքագծի ձևավորման համար, և սեփական վարքագիծը կառավարելու հնարավորություն է ընձեռնում:

Անհատների իրավական ակտիվությունը դրսևորվում է սպառողների շահերի պաշտպանության բնագավառում: Այսպես, Արցախի Հանրապետությունում գործում է

⁴⁸⁶ **Покровский И. Ф.**, Формирование правосознания личности. Л., 1972:

⁴⁸⁷ **Батурин Ф. А.**, Социальная активность трудящихся: сущность и управление. Новосибирск: Наука, 1986, стр 64: Чефранов В. А. Правовое сознание как разновидность социального отражения. Киев, 1986, стр 202:

⁴⁸⁸ **Сабиненов С. И.**, О правовой активности личности при социализме // Актуальные проблемы теории социалистического государства и права. М., 1974:

⁴⁸⁹ Իրավաբանական գրականության մեջ առանձնանում են իրավական գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են, նյութաիրավական, դատավարաիրավական, միջազգային-իրավական, հանրային-իրավական, մասնավոր իրավական. մասնավորապես՝ Шагинева Р. В. Правовая деятельность и ее разновидности в современном российском обществе // Журнал российского права. 2004. №10, էջ 93: Фаткуллин Ф. Н. Проблемы общей теории социалистической правовой надстройки. Казань, 1980, стр 85-86:

⁴⁹⁰ **Морозов А.В.**, Система правовой информатизации Минюста России. М., 1999:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը, որը կարևոր երաշխիք է Արցախի Հանրապետության սպառողների շահերի պաշտպանության գործում: Հատկանշական է, որ Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կազմում գործում է շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը⁴⁹¹:

Անհատների իրավական վարքագիծը կարելի է դիտարկել որպես սուբյեկտի՝ իրավունքի նորմերի պահանջների գիտակցված կատարմանն ուղղված գործունեություն: Իրավունքի նորմը անհատների վարքագծի արտաքին կարգավորիչներից է: Կամային ակտիվություն առաջացնելու համար այդ նորմը պետք է արտացոլվի նրա գիտակցության մեջ, վերածվի անհատների կողմից իրենց գործողությունները գնահատելու ներքին չափանիշի և հետո միայն արտահայտվի իրավական գործողություններում: Սեփական պահանջմունքները գիտակցելու, շահերը, նպատակները կոնկրետացնելու միջոցով անհատներն իրենց գիտակցության մեջ նախանշում են ապագա ցանկալի ու պարտադիր վարքագծի մոդելը: Այդ ծրագիր-մոդելները կարևոր նշանակություն ունեն վարքագծի տեսլականի համար:

Անհատների իրավական ակտիվությունը վերջիններիս իրավական վարքագծի հատկանիշներից է, որը համապատասխանում է իրավունքի ոգուն ու իմաստին, դիտարկվում է որպես իրավագիտակցության ձևավորման կարևոր նախադրյալ՝ հնարավորություն ընձեռելով ոչ միայն յուրացնելու իրավական տեղեկատվությունը, այլև իրացնելու այն իրական կյանքում:

Ներկայումս օրենսդրության մեջ ամրագրված հավասարության, ժողովրդավարության, ընտրության ազատության սկզբունքները, որոնց իրացման շրջանակներում արտահայտվում է անհատների իրավական ակտիվությունը, ցավոք սրտի, ոչ միշտ են կյանքի կոչվում վերջիններիս կողմից: Մեր կարծիքով՝ առկա է համապատասխան օրենսդրական ակտերի ընդունման անհրաժեշտություն: Օրենսդրության կատարելագործման առաջնային ուղղություններից պետք է լինի այնպիսի իրավական ակտերի մշակումն ու ընդունումը, որոնք ունակ լինեն խթանելու անհատների իրավական ակտիվությունը: Անհրաժեշտ է մշակել ու կյանքի կոչել անհատների իրավական ակտիվությունը խթանող համապատասխան հայեցակարգեր, ծրագրեր⁴⁹²:

⁴⁹¹ Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների, բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների պահպանման, թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքի և դրանցով գործարքների իրականացման, համապատասխանության գնահատման և չափումների միասնականության ապահովման, սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառներում հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

⁴⁹² Այս պարագայում կարճ ժամկետում հաջողության հասնելու համար առավել նպատակահարմար է առկա հիմնախնդրի լուծման հնարավոր լուծումները վերածել «պիլոտային» ծրագրերի, փորձարկել դրանք Արցախի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքներում, իրականացնել մշտադիտարկում, հետագոտել ծրագրի արդյունքները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ծրագրի մշակման ընթացքում չհաշվարկված երևույթներին, այնուհետև առավել արդյունավետ ծրագիրը վերածել պետական քաղաքականության:

Ցավալի է, բայց և փաստ, որ հասարակության անդամները ներկայումս բաժանվում են երկու խմբի՝ ակտիվ ու պասիվ: Պասիվ անհատներին ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է շահագրգռել նրանց: Այդ պարագայում որպես սկզբնական օղակ պետք է դիտարկվեն հանրակրթական ուսումնական հաստատությունները, այնուհետև բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները: Հանրակրթական ու բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսումնական տարվա ամբողջ ընթացքում պետք է կազմակերպվեն աշակերտների և ուսանողների ակտիվությունը խթանող միջոցառումներ, մասնավորապես՝ բրեյն-դինգներ, օլիմպիադաներ, կլոր սեղաններ, տարաբնույթ թեմաներով ընթերցումներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս թե՛ աշակերտները, թե՛ ուսանողներն օգտվում են համացանցից, նպատակահարմար է ակտիվություն դրսևորելու հարթակ ստեղծել նաև համացանցում: Կարելի է օգտագործել հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կայքէջերը, տարբեր առաջադրանքներ տեղադրել կայքէջերում, կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ և այլն:

Ինչ վերաբերում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա նրանք ևս պիտի շահագրգռված լինեն անհատների իրավական ակտիվությամբ: Ընդ որում, պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների և իրավասությունների շրջանակներում պետք է իրականացնեն ինչպես ամբողջ պետության, այնպես էլ իրենց համակարգում աշխատողների իրավական ակտիվությունը խթանող միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռնելով աշխատողներին իրենց ստեղծագործ մտածելակերպով առաջադրելու ինչպես պետության, այնպես էլ համակարգի առջև դրված խնդիրների լուծումներ:

Այսպիսով՝ անհատների իրավական ակտիվությունն Արցախի Հանրապետության՝ որպես իրավական ու ժողովրդավարական պետության կառուցման և գործունեության կազմակերպման անհրաժեշտ պայմաններից է:

Անհատների իրավական ակտիվությունն անհատների իրավաչափ, հասարակայնորեն օգտակար և պետության ու հասարակության կողմից հաստատված գործունեությունն է իրավական ոլորտում: Անհատների իրավական ակտիվությունն իրավագիտակցության բարձր մակարդակի արդյունքն է, որն արտահայտվում է անհատների կողմից սեփական վարքագիծը ծրագրավորելու գիտակցված հնարավորությամբ, ինչն էլ հիմք է կայուն վարքագծի ձևավորման համար և սեփական վարքագիծը կառավարելու հնարավորություն է ընձեռնում:

LEGAL ACTIVITY AND ITS ROLE IN THE FORMATION OF THE REPUBLIC OF ARTSAKH AS A LEGAL STATE

LUSINE BARKHUDARYAN

Leading Specialist of the Department of Examination of

Legal Acts and Improving Legislation of the

Staff of the Ministry of Justice of the Republic of Artsakh, Member of UYSSA,

Stepanakert, Republic of Artsakh (NKR),

The purpose of the article is to reveal the role of legal activity in the formation of the Republic of Artsakh as a legal state.

In the course of the study scientific and special methods were applied.

The study identified factors and areas that stimulate legal activity.

As a result of the study, the following conclusion was formed: legal activity, first of all, involves the use of all elements of a person's legal status. In addition, legal activity includes

legitimate actions aimed at transforming, developing both the legal status of the individual and the legal system as a whole.

The legal activity of the individual is one of the most important prerequisites for the construction and functioning of the legal state, since the full protection of the rights and freedoms of human and citizen, the mutual responsibility of the state and the individual, legality, the rule of law, the strengthening of legal statehood, the improvement of civil society, and the development of democracy are directly related to positive legal activity of persons.

With the implementation of the proposals made in the article, it will be possible to create a solid foundation for the establishment of the Republic of Artsakh as a state of law.

Key words: *legal activity, legal state, Constitution, civil society, initiative, legal consciousness, personality, citizen.*

ПРАВОВАЯ АКТИВНОСТЬ И ЕЕ РОЛЬ В СТАНОВЛЕНИИ РЕСПУБЛИКИ АРЦАХ КАК ПРАВОВОГО ГОСУДАРСТВА

ЛУСИНЕ БАРХУДАРЯН

*Ведущий специалист отдела экспертизы правовых актов и
совершенствования законодательства аппарата
министерства юстиции Республики Арцах, член ОМУСА
г.Степанакерт, Республика Арцах (НКР)*

Цель статьи - раскрыть роль правовой активности в становлении Республики Арцах как правового государства.

В ходе исследования были применены научные и специальные методы, выявлены факторы и направления, стимулирующие правовую активность.

В результате исследования было сформировано следующее заключение: правовая активность прежде всего предполагает использование всех элементов правового статуса личности. Кроме того, правовая активность включает в себя правомерные действия, направленные на преобразование, развитие как правового статуса личности, так и правовой системы в целом.

Правовая активность личности является одной из важнейших предпосылок построения и функционирования правового государства, поскольку полная защита прав и свобод человека и гражданина, взаимная ответственность государства и личности, законность, правопорядок, укрепление правовой государственности, совершенствование гражданского общества, развитие демократии напрямую связаны с позитивной правовой активностью личности.

При осуществлении предложений, приведенных в статье, станет возможным создать прочную основу для становления Республики Арцах как правового государства.

Ключевые слова: *правовая активность, правовое государство, Конституция, гражданское общество, инициативность, правовое сознание, личность, гражданин.*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԶՈՓՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ*

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի ասպիրանտ, ԱԵԳՄՄ անդամ,
բ.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ)
mariamgrigoryan93@yandex.ru*

Գաղտնիք չէ, որ միջազգային հանրային իրավունքում բավական քիչ թիվ են կազմում ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարների ուսումնասիրման վերաբերյալ գիտական աշխատությունները: Հոդվածի նպատակն է հետազոտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ազգային-ազատագրական պայքարի՝ միջազգային հանրային իրավունքին համապատասխանելու հարցը: Այդ նպատակով ուսումնասիրվել են համապատասխան միջազգային իրավական ակտեր և բազմապիսի տեսական գրականություն: Մասնավորապես, հոդվածում խորը և բազմակողմանիորեն վերլուծվել են միջազգային իրավական փաստաթղթեր և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձեռ, ինչպես նաև պատմական իրողություններ ու հեղինակավոր գիտնականների աշխատություններ:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակի կողմից կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Լեռնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս է եկել միջազգային իրավունքի բոլոր նորմերին համապատասխան, հետևաբար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ազգային-ազատագրական պայքարը լրիվությամբ համահունչ է միջազգային հանրային իրավունքին:

Հիմնաբառեր՝ ազգային-ազատագրական պայքար, Լեռնային Ղարաբաղ, բնակչություն, ինքնորոշում, միջազգային հանրային իրավունք:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ ազգաբնակչությունն իրականացրել է ԽՍՀՄ-ի փլուզմանը նախորդած՝ ինքնորաշման վերաբերյալ ԽՍՀՄ համապատասխան օրենսդրության ընձեռած հնարավորության հիման վրա՝ հենվելով միջազգային իրավունքի *jus cogens* սկզբունքների վրա: Գաղտնիք չէ, որ ԼՂՀ-ի բնակչության նախաձեռնությամբ սկսված հասարակական շարժման գլխավոր նպատակն էր ինքնավար մարզի դուրս բերումն Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից և միացումը Հայկական ԽՍՀ-ին (1980-ականների վերջից մինչև 1990-ականների սկիզբը):

Ըստ միջազգային իրավունքի՝ գիտության կողմից ձևավորված տեսության՝ ազգային-ազատագրական շարժումները ժողովուրդների ինքնաբուխ կամ կազմակերպված, խաղաղ կամ զինված, զանգվածային, տեղական պայքարի բոլոր ձևերի համադրությունն են գաղութատիրության և ոչ գաղութատիրության դեմ, որը նպատակ ունի ազատվել օտար տիրապետությունից, վերացնել ազգային ճնշումներն՝ ինքնիշխան պետություն ստեղծելու և ամրապնդելու նպատակով:

* Հոդվածը ներկայացվել է 29.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Ազգային-ազատագրական շարժման կվինտեսենցիան ցանկացած ազգի կամ ժողովրդի՝ միջազգայնորեն ճանաչված պայթարի իրավունքն է՝ ինքնուրույն տնօրինելու իր կյանքն ու ճակատագիրը:

Կարծում ենք, սույն հիմնախնդրի ուսումնասիրության համար անհրաժեշտ է բացահայտել, թե՞ ազգային-ազատագրական շարժումների համատեքստում «ժողովուրդ» հասկացությունն ինչպես է մեկնաբանվում:

Հարկ է ընդգծել, որ թե՛ միջազգային իրավունքի գիտության և թե՛ միջազգային կոնվենցիոն գործիքակազմում բացահայտված չէ «ժողովուրդ» ձևակերպման միջազգային իրավական բովանդակությունը: Չկա նաև օբյեկտիվ ու բացարձակ չափանիշներ մարդկանց խումբը որպես ժողովուրդ որակելու համար: Բացի զբաղեցրած տարածքի առկայության չափանիշից, չափանիշ են նաև ընդհանուր լեզուն, մշակութային միասնությունը և էթնիկական կապերը:

Աշխարհաբաղաբական տեսակետից տարածքը կարող է միասնական չլինել և ներառել տարբեր լեզվական, մշակութային ու էթնիկ առանձնահատկություններ ունեցող ժողովուրդների խմբեր: Կարևոր գործոն է մեկ ժողովուրդ լինելու ընդհանուր զգացողությունը և, որպես առանձին ժողովուրդ, միասին բնակվելու քաղաքական կամքը: Նման զգացողությունն ու կամքն արդյունք են վերը թվարկված մեկ կամ ավելի չափանիշների, որոնք հիմնականում ամրապնդված են լինում ընդհանուր պատմությամբ: Դա նշանակում է, որ տվյալ ժողովրդին պատկանող մարդկանց միջև կա կապ, որը միավորում է նրանց, և կա ինչ-որ բան, որով նրանք տարբերվում են մյուս ժողովուրդներից, այսինքն՝ առկա է և՛ ընդհանուր բաղադրիչ, և՛ տարբերիչ բաղադրիչ⁴⁹³:

Միջազգային իրավական փաստաթղթերն, առանց անդրադառնալու «ժողովուրդ» հասկացության բովանդակության մեկնաբանմանը, ընդամենն ամրագրում են այն իրավունքները, որոնցով օժտված են բոլոր ժողովուրդներն անխտիր: Ըստ միջազգային իրավունքի՝ պատմական հայրենիքի տարածքում ապրող ժողովուրդն, իր իրավունքների խախտումների, իր վրա իրականացվող ճնշումների ու բռնությունների դեպքում իրավունք ունի առանց հաշվի առնելու մետրոպոլիայի կարծիքը, խաղաղ կամ ոչ խաղաղ միջոցներով պայթարել իր ինքնորոշման իրավունքի իրացման համար:

Լիբերալ-բուրժուական, իրավական տեսանկյունից հեղափոխության դիմելու հնարավորությունը ճանաչված էր դեռևս վաղուց, չնայած միջազգային իրավունքի ներկայիս համատեքստում դրա մասին ավելի ու ավելի շատ է խոսվում:

Ազգերի ու ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ծագել է ազգային-ազատագրական շարժումների ազդեցության ներքո: Դրան նախորդում էր ազգության սկզբունքը, որը հռչակվել էր XVIII դարում՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների դարաշրջանում⁴⁹⁴:

Ժողովրդի ինքնորոշման իրավունքի իմաստը նախ և առաջ կապված էր ժողովրդի ձգտման հետ՝ ձեռք բերելու ազատություն ու անկախություն, ինչպես նաև ազգային-պետական ինքնիշխանություն:

Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, որպես *jus cogens* նորմ, առաջին անգամ ամրագրվեց ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Այնուհետև այն բազմիցս հաստատվել է այլ միջազգային իրավական փաստաթղթերում, որոնցից են՝ 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական

⁴⁹³ **Zimmermann B.** with the collaboration of Jean Pictet, Commentary on the Additional Protocols of 8 June 1977 to the Geneva Conventions of 12 August 1949 //International Committee of the Red Cross, Martinus Nijhoff Publishers, Geneva 1987, էջ 52.

⁴⁹⁴ **Международное публичное право:** учеб./ Л.П.Ануфриева, К.А. Бекашев, Е.Г.Моисеев, В.В.Устинов и др.; отв. Ред.К.А.Бекашев.- 5-е изд., перераб. И доп.- М.: Проспект, 2010. էջ 136:

և մշակութային իրավունքների մասին դաշնագրերը, 1960թ. Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը, 1970թ. Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը, 1975թ. Համաեվրոպական խորհրդակցության եզրափակիչ ակտը և այլ փաստաթղթեր:

Ըստ ժամանակակից միջազգային իրավունքի՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը բովանդակում է հետևյալ տարրերը.

- Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, որի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

- Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչնդոտելու փոխաշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որևէ պարտավորության և միջազգային իրավունքին: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության սեփական միջոցներից:

- Ինքնիշխան ու անկախ պետության ստեղծումը, այլ անկախ պետությանն ազատորեն միանալը կամ միավորվելը կամ նրա կազմում ցանկացած քաղաքական կարգավիճակի սահմանումը, որն ազատորեն որոշվում է ժողովրդի կողմից, վերջինիս կողմից իրենց ինքնորոշման իրավունքի իրագործման միջոցներ են: Ինչպես տեսնում ենք, այստեղ որևէ կերպ չի նշվում, որ կոնկրետ տարածքում բնակվող ժողովրդին պատկանող ինքնորոշման իրավունքը սահմանափակվում է այդ պետության տարածքային ամբողջականության պահպանմամբ:

- Համաձայն միջազգային իրավունքի՝ բոլոր պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ժողովուրդների ինքնորոշման, ազատության ու անկախության իրենց իրավունքից զրկող ցանկացած բռնի գործողություններից: Ժողովուրդները նման բռնության դեմ իրենց պայքարի ու դիմադրության ընթացքում իրավունք ունեն դիմելու ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան աջակցություն ստանալու համար⁴⁹⁵:

Անդրադառնալով ինքնորոշման իրավունքի իրականացմանը՝ հարկ է նշել, որ դա *inter alia* ենթադրում է պետության ներսում այնպիսի մի գործընթաց, որի արդյունքում հաստատվում է նոր կառավարական կազմ կամ տապալվում է գործող կառավարությունը: Այդպիսի փոփոխությունը կարող է կատարվել դանդաղ կամ արագ, խաղաղ կամ բռնության ճանապարհով: Անդրադառնալով այս հիմնախնդրին՝ Աբրահամ Լինքոլնը նշում էր, որ իշխանությունը բխում է Միացյալ Նահանգների ժողովրդից և օժտված լինելով նման լիազորությամբ՝ ժողովուրդն ունի հեղափոխության իրավունք՝ տապալելու ցանկացած իշխանական կառույց, որը հաշվի չի առնում ժողովրդի կարիքներն ու կամքը: Ի դեպ, այդ իրավունքն իր ամրագրումն էր գտել դեռևս ԱՄՆ-ի Անկախության (1776) և Չենթի դիմելու պատճառների և անհրաժեշտության մասին հռչակագրերում (1775): Միացյալ Նահանգների որոշ Նահանգների Սահմանադրություններում նույնպես ճանաչվում է ժողովուրդի իրավունքը սեփական հայեցողության «բարեփոխելու, փոփոխելու կամ տապալելու կառավարությունը»⁴⁹⁶:

Ինչպես արդեն նշեցինք, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ վերոնշյալ միջազգային իրավական կոնցեպտի հիմքում ընկած է *jus cogens*

⁴⁹⁵ **Международное право:** Учебник для вузов//Отб.ред. Г.М.Мелков.- М.:РиОР, 2009, էջ 90-91.

⁴⁹⁶ **Olalia Edre U.,** The status in international law of national liberation movements and their use of armes force//Published by: International Association of People's Lawyers, էջ 4.

համընդհանուր ու համապարտադիր սկզբունքը: Մինչդեռ Ադրբեջանը, որը, որպես ՄԱԿ-ի անդամ, պարտավոր է հարգել ու խստորեն ղեկավարվել հրամայական բնույթի այս սկզբունքով, վարում է ճիշտ հակառակ քաղաքականություն:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավաչափ իրավունքի իրականացմանն Ադրբեջանը հակադրեց զինված դիմակայություն: Ադրբեջանի վարած ռազմական ճնշում կիրառելու գործելաոճը Լեռնային Ղարաբաղի ժողովրդին իրավունք տվեց սկզբում խաղաղ, այնուհետև ռազմական միջոցներով իրականացնելու իր ինքնորոշման իրավունքը, այդ թվում դուրս գալու տվյալ միութենական հանրապետության կազմից:

Հարկ է հիշեցնել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի խնդիրը, այդ թվում Հայաստանին վերամիացնելու փորձերն արվեցին դեռևս 1930-ական թթ.-ին, 1945, 1965, 1967, 1977թթ.-ին, բայց դրանք դաժանորեն ճնշվեցին: 1985թ.-ին Մ.Գորբուչովի իշխանության գալով՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կրկին բարձրաձայնեց իրեն հուզող հարցը: Ինչպես գիտենք, ժողովրդի պահանջի լուծումը կասեցնելու համար Ադրբեջանը դիմեց տարաբնույթ անմարդկային քայլերի⁴⁹⁷: Մինչդեռ Արցախի ժողովուրդը ամեն ինչ անում էր, որ ի սկզբանե իր պայքարն իրականացվի հորհրդային Միության օրենքների և միջազգային իրավունքի պահանջներին համահունչ:

Ինչպես գիտենք, Ղարաբաղյան շարժումը սկսվեց 1988թ.-ի փետրվարի 20-ին, երբ ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի 20-րդ նստաշրջանում որոշվեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանին միացնելու միջնորդությամբ հանդես գալ Ադրբեջանի ու Հայաստանի ԽՍՀ-ների Գերագույն խորհուրդների առջև: Ի պատասխան այդ բացարձակապես խաղաղ բնույթի գործողության՝ Ադրբեջանում սկսվեցին հայերի զանգվածային կոտորածները: Առաջին զոհերը դարձան Սումգայիթի հայ բնակիչները:

Ստեղծված իրավիճակում Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորման գլխավոր նախադրյալը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանի ԽՍՀ կազմից դուրս գալու մասին հայտարարության ընդունումն էր (1988թ. հուլիսի 11):

1988թ.-ի վերջին Ադրբեջանով մեկ կազմակերպվեց հայկական կոտորածների մի ամբողջ ալիք, որն առավել մեծ չափեր ստացավ Բաքվում, Կիրովաբադում (Գյանջա), Շամախիում, Շամխորում, Մինգեչաուրում, Նախիջևանի ԻԽՍՀ-ում: Բռնի տեղահանման ենթարկվեցին Ադրբեջանի տասնյակ հայկական բնակատեղիներ, այդ թվում և հյուսիսային Լեռնային Ղարաբաղի (որը ԼՂԻՄ կազմավորման ժամանակ չէր ընդգրկվել նրա կազմում Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի և Գեդաբեկի շրջաններ) հայկական բնակավայրերը, Կիրովաբադի 40 հազարանոց հայ բնակչությունը: Այդ դեպքերից հետո 1990թ.-ի դրությամբ բացի ԼՂԻՄ-ից, Շահումյանի շրջանից և Խանլարի շրջանի գյուղերից Ադրբեջանում մնաց հայ բնակչության ընդամենն աննշան մի մասը, հիմնականում Բաքվում՝ մոտ 50 հազար (1988թ. Բաքվում ապրում էին 300 հազար հայեր): 1989թ.-ի սկզբին Ադրբեջանը շրջափակեց ԼՂԻՄ-ն ու Հայաստանը, ինչը ծանր հետևանքներ ունեցավ, քանի որ ԼՂ-ն այդ ժամանակ անկլավ էր, իսկ Հայաստանն Բեռնի 75%-ը գալիս էր Ադրբեջանի տարածքով⁴⁹⁸:

Բնականաբար, ստեղծված իրավիճակում, երբ Ադրբեջանը սկսեց բիրտ ռազմական ուժի գործադրմամբ արգելափակել Արցախի ժողովրդի ինքնորոշման

⁴⁹⁷ 1987թ. Ոստիկանության 200 մարդուց կազմված զինված ջոկատի միջոցով հայաթափ արվեց Գետաշենը: Ադրբեջանի նման գործելակերպը ցույց էր տալիս, որ վտանգված է Լեռնային Ղարաբաղի բնակչության կյանքի իրավունքը և անվտանգությունը:

⁴⁹⁸ **Բաբայան Դ.**, Ղարաբաղյան հակամարտություն. պատմական, իրավական և այլ ասպեկտներ // «21-րդ Դար», թիվ 1(7), 2005թ. էջ 27:

իրավունքի իրականացումը, Արցախի ժողովրդին իրավունք ձեռք բերեց իր ինքնորոշման իրավունքի պայթարի խաղաղ միջոցները փոխակերպել զինված ու հեղափոխական միջոցներով: Նման որոշման իրավաչափությունն, ի թիվս այլնի, հիմնավորվում է մասնավորապես Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի 4-րդ կետով, համաձայն որի՝ ցանկացած բնույթի ռազմական գործողություն կամ ռեպրեսիվ միջոց, որոնք ուղղված են կախյալ ժողովուրդների դեմ, պետք է դադարեցվեն, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռնվի խաղաղության և ազատության պայմաններում իրականացնելու լիարժեք անկախության իրենց իրավունքը, իսկ նրանց ազգային տարածքների ամբողջականությունը պետք է հարգվի⁴⁹⁹:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ինքնորոշման համար պայթարի միջազգայնացումն սկսվեց 1988թ.-ի հուլիսին Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևով: Այն կոչվում էր «խորհրդային Հայաստանում ստեղծված իրավիճակի մասին»: Դրանում ասվում էր. «Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի պատմական կարգավիճակը՝ որպես Հայաստանի բաղկացուցիչ մաս, որի բնակչության 80%-ը կազմում են հայերը և որն Ադրբեջանին միացվել է բռնի կերպով՝ դատապարտելով հայերի զանգվածային ջարդերն Ադրբեջանում, սատարում է ԼՂԻՄ-ի հայերի վերամիավորումը ՀԽՍՀ-ի հետ և կոչ անում ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ուսումնասիրելու Լեռնային Ղարաբաղի մասին հայ պատվիրակների կատարած փոխզիջումային առաջարկները՝ ԼՂԻՄ-ը ժամանակավորապես Ռուսաստանի Դաշնությանը միացնելու կամ ժամանակավորապես «նախագահական մարզային կառավարման իշխանության ներքո դնելու մասին»⁵⁰⁰:

Իր արժանապատվությունը դաժան, անարդար ու կործանարար գործողություններից պաշտպանելու Արցախի ժողովրդի իրավունքն անմիջապես բխում է 1948թ.-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, որի նախաբանում նշվում է. «...որպես մարդկության վեհ նպատակ հռչակված է այնպիսի աշխարհի ստեղծումն, ուր մարդիկ կվայելեն խոսքի և համոզմունքի ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից, քանզի որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու ապստամբության ընդդեմ բռնակալության ու ճնշման՝ որպես վերջնական միջոցի, կարևոր է իրավական պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանությունը»: Ինչպես իրավացիորեն նշվում է իրավաբանական գրականությունում, հռչակագիրը փաստորեն սատարում է հեղափոխության կամ ապստամբության իրավունքը, ինչն արտացոլում է այդ իրավունքի ավելի լայն ճանաչումը՝ սկսած Ամերիկայի անկախության հռչակագրի ընդունումից:

Ինքնորոշման իրավունքի կարևոր բաղադրիչը հանդիսացող հեղափոխության իրավունքն այնքան լայն է ճանաչված, որ որոշ հեղինակներ նույնիսկ կարծում են, որ «բռնակալության դեմ ապստամբելու մարդկանց իրավունքը միջազգային իրավունքի ընդունված սկզբունք է հանդիսանում» և բռնակալության ու բռնությունների դեմ ապստամբության իրավունքը հանդիսանում է միջազգայնորեն ճանաչված իրավունք⁵⁰¹:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային-ազատագրական պայթարի իրավաչափությունը միջազգային հանրային իրավունքի Նորմերով հիմնավորելու համար նպատակահարմար է ստորև ներկայացնել համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծությունը:

⁴⁹⁹ https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/colonial.shtml.

⁵⁰⁰ **Ավագյան Ը.**, Լեռնային Ղարաբաղ. իրավական ասպեկտներ: Երևան, Տիգրան Մեծ, 2006, էջ 13

⁵⁰¹ **Olalia Edre U.**, The status in international law of national liberation movements and their use of armes force//Published by: International Association of People's Lawyers, էջ 6.

Դեռևս մինչև Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թվականի հռչակագրի ընդունումը, ՄԱԿ-ի մարմինների կողմից տարբեր դեպքերի կապակցությամբ հաստատվել են ազգային-ազատագրական պայքարների օրինականությունը: Այսպես՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2649 (XXV) (1970) բանաձևի համաձայն՝ հաստատվում է գաղութային կամ օտարերկրյա իշխանության տակ գտնվող ժողովուրդների պայքարի իրավասությունը, քանի որ նրանք ունեն ինքնորոշման իրավունք և այդ իրավունքը վերականգնելու իրավասություն՝ ունեցած միջոցների կիրառմամբ⁵⁰²:

1970 թվականի Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի վրա հիմնված մեկ այլ կարևոր ձեռքբերում է այն փաստի հաստատումը, ըստ որի՝ ազատագրական շարժումների ակտորները միջազգային իրավունքով իրավասու են դատարան դիմելու և ազգային ազատագրական շարժումները միջազգային բնույթի զինված հակամարտություն են:

1970-ի Հռչակագրով այն շարժումները, որոնք ներկայացնում են ինքնորոշման իրավունքից զրկելու գործողության դեմ ժողովուրդների ընդդիմությունը, պայքարը, իրավունք ունեն աջակցություն փնտրելու և ստանալու դրսից: Ավելին՝ չի համարվում, որ ազատագրական շարժմանն աջակցող երրորդ կողմը խախտել է այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու պարտավորությունը, քանի որ նման միջամտությունն ամբողջովին համապատասխանում է ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին: Հռչակագրի համաձայն՝ պետության ներքին գործերին միջամտելու արգելքը և ինքնորոշումը միջազգային իրավունքի ամրագրված սկզբունքներ են այնպես, որ այդ սկզբունքներից մեկի կիրառումը չի կարող դիտվել որպես դրան համահավասար այլ սկզբունքի խախտում: Այսպիսով՝ ինքնորոշման դեպքում գործում է «բացառիկ» արտոնություն:

1970 թվականի Հռչակագրով նախատեսվում է, որ նման շարժումը, որպես միջազգային սուբյեկտ, իրավասու է ուղղակիորեն հարաբերություններ հաստատելու արտաքին պետությունների հետ⁵⁰³:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համընդհանուր իրականացման կարևորության ու մարդասիրական իրավունքի երաշխավորման և արդյունավետ դիտարկման նպատակով գաղութային երկրներին ու ժողովուրդներին անհապաղ անկախություն շնորհելու վերաբերյալ (1970) 2649 (XXV) որոշմամբ հաստատվում է գաղութային և օտարերկրյա իշխանության տակ գտնվող ժողովուրդների պայքարի օրինականությունը որպես պայքար՝ ուղղված ինքնորոշման իրավունքի վերականգնմանը՝ բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ⁵⁰⁴:

Այդ որոշումն ընդունելուց հետո յուրաքանչյուր տարի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվում էր միևնույն վերնագրով բանաձև, որը հաստատում էր ինքնորոշման իրավունքը: 1971 թվականի դեկտեմբերի 6-ի 2787 (XXVI) բանաձևով Գլխավոր ասամբլեան «հաստատում է ինքնորոշման համար ժողովուրդների պայքարի օրինականությունը»: 1973 թվականի նոյեմբերի 30-ի 3070 (XXVIII) բանաձևով Գլխավոր ասամբլեան վճռականորեն հաստատում է ինքնորոշման հասնելու համար «ցանկացած միջոցների կիրառումը, այդ թվում՝ զինված պայքարը»: 2787 (XXVI) (1971) որոշման մեջ ասվում է.

⁵⁰² **Abi-Saab G.**, Wars of National Liberton in the Geneva Conventions and protocols// Recueil des cours / Académie de droit international. - Dordrecht [etc.]. - Vol. 165(1979), էջ 371-372.

⁵⁰³ **Olalia Edre U.**, The status in international law of national liberation movements and their use of armes force//Published by: International Association of People's Lawyers, էջ 11.

⁵⁰⁴ <https://undocs.org/ru/A/RES/2649%28XXV%29>.

1. Հաստատվում է ժողովուրդների ինքնորոշման համար և գաղութային և օտարերկրյա իշխանությունից ազատվելու պայթարի օրինականությունը՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ:

2. Հաստատվում է գաղութային ու օտարերկրյա տիրապետության դեմ իր ժողովրդի ինքնորոշման համար պայթարելու մարդու անկապտելի իրավունքը⁵⁰⁵:

Նմանապես, գաղութային և օտարերկրյա իշխանության և ռասիստական ռեժիմների դեմ պայթարող կոմբատանտների իրավական կարգավիճակի հիմնական սկզբունքների մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3103 (XXVIII) (դեկտեմբերի 2, 1973) բանաձևի մեջ հայտարարվում է. «Չինված հակամարտությունները, որոնց մեջ ներգրավված ժողովուրդները պայթարում են գաղութային և օտարերկրյա տիրապետության և ռասիստական ռեժիմների դեմ, 1949 թվականի ժնևյան կոնվենիցիաների համաձայն՝ համարվում են միջազգային զինված հակամարտություններ և ունեն նույն իրավական կարգավիճակը, ինչը 1949 թվականի ժնևյան կոնվենցիաներով սահմանված է գաղութային և օտարերկրյա իշխանության և ռասիստական ռեժիմների դեմ պայթարի մեջ ընդգրկված անձանց համար»: Ինչպես նշվում է վերը հիշատակված 3103 բանաձևի նախաբանում՝ «Գաղութացումը իր բոլոր ձևերով և դրսևորումներով հանդիսանում է հանցագործություն և բոլոր գաղութացված ժողովուրդներն օժտված են գաղութային ուժերի և օտարերկրյա իշխանությունների դեմ ցանկացած միջոցներով պայթարելու անկապտելի իրավունքով՝ որպես իրենց ինքնորոշման իրավունքի իրագործում...⁵⁰⁶»:

Գլխավոր ասամբլեան սահմանելու ճանաչել է զինված հակամարտությունների իրավական բնութագիրը՝ սահմանելով դրանք որպես ազգային-ազատագրական շարժումներ, ներառյալ Հարավային Աֆրիկայի, Չիմբաբվեի, Նամիբիայի, Անգոլայի, Մոզամբիկի, Գվինեա Բիսաուի ու Պաղեստինի ժողովուրդների պայթարը (բանաձև 2787, XXVI, 1971): Որոշ ազատագրական շարժումներ ստացել են դիտորդի կարգավիճակ ՄԱԿ-ի տարբեր մարմինների ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից: Շատ պետություններ, ճանաչելով ազատագրական շարժումները, թույլատրել են պաշտոնական ներկայացուցչություն ունենալ իրենց տարածքում՝ նրանց տրամադրելով բարոյական ու նյութական աջակցություն: Ի դեպ, Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության համաժողովը կոչ էր արել, որ Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդները լիակատար օգնություն ցուցաբերեն նրանց, ովքեր պայթարում են իրենց ազատության ու անկախության համար, ցուցաբերել հնարավոր նյութական օգնություն այն ժողովուրդներին, որոնք պայթարում են երկրազնդի ամենատարբեր հատվածներում, քանի դեռ նրանք չեն իրականացրել իրենց ազատության ու անկախության անօտարելի իրավունքը⁵⁰⁷:

Ինչպես վկայում է Լեռնային Ղարաբաղի օրինակը, միշտ չէ, որ ժողովուրդների ազգային-ազատագրական պայթարն իրականացվում է դյուրին ճանապարհով: Որպես կանոն, նախկին գաղութային պետությունները բոլոր անթույլատրելի միջոցներով փորձում են խոչընդոտել այդ իրավունքի իրականացմանը: Այդ հանգամանքից անհանգստացած՝ ՄԱԿ-ն, իր ընդունած Արտակարգ իրավիճակներում և զինված ընդհարումների ժամանակ կանանց ու երեխաներին պաշտպանելու մասին հռչակագրի 1974 թվականի դեկտեմբերի 14-ի 3318 (XXIX) բանաձևում նշում է. «Իսորը մտահոգություն ենք հայտնում այն փաստի կապակցությամբ, որ չնայած

⁵⁰⁵ <https://undocs.org/ru/A/RES/2787%28XXVI%29>.

⁵⁰⁶ <https://undocs.org/ru/A/RES/3103%28XXVIII%29>.

⁵⁰⁷ **Аль-Балауни, Бассам Фатхун**, Права народов и становление палестинской государственности-М., 1992, էջ 42:

համընդհանուր դատապարտմանը՝ շատ ժողովուրդներ շարունակում են մնալ գաղութացման, ռասիզմի և օտարերկրյա տիրապետության տակ, որոնք դաժանորեն ճնշում են ազգային-ազատագրական պայքարները և ծանր կորուստներ ու բազմաթիվ տառապանքներ պատճառում իրենց իշխանության տակ գտնվող ժողովուրդներին, այդ թվում կանանց և երեխաներին: Դատապարտում ենք այն իրողությունը, որ մինչ օրս էլ կոպիտ կերպով ոտնահարվում են մարդու հիմնարար ազատությունները և արժանապատվությունը, և գաղութային և ռասիստական օտարերկրյա ուժերը շարունակում են խախտել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը»:

Անդրադառնալով ինքնորոշման հիմնախնդրին՝ 1975 թվականի Յեյթսկիի եզրափակիչ ակտն ամրագրեց հետևյալ դրույթը. «Ըստ իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի՝ բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը, հետամուտ լինել իրենց տնտեսական, հասարակական և մշակութային զարգացմանը»⁵⁰⁸:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1977 թվականի դեկտեմբերի 6-ի Միջազգային ահաբեկչության կանխարգելման միջոցների վերաբերյալ 32/147 բանաձևում կրկին ամրագրվեց այս հեղինակավոր միջազգային կազմակերպության դիրքորոշումն առ այն, որ վերահաստատվում է գաղութային ու ռասիստական վարչակարգերի և այլ տեսակի օտարերկրյա իշխանության տակ գտնվող բոլոր ժողովուրդների ինքնորոշման ու անկախության անկապտելի իրավունքը և պաշտպանվում է նրանց պայքարի ու հատկապես ազգային-ազատագրական շարժումների օրինականությունը՝ ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների և նպատակների, ինչպես նաև ՄԱԿ-ի այլ մարմինների նմանատիպ բանաձևերի համաձայն, ինչպես նաև դատապարտում է գաղութային, ռասիստական վարչակարգերի և օտարերկրյա իշխանությունների կողմից ահաբեկչական գործողությունների ու պատժիչ միջոցների հարատև կիրառումն ինքնորոշման, անկախության և մարդու այլ իրավունքներից ու հիմնարար ազատություններից զրկելու նպատակով:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի դեկտեմբերի 9-ի 108-րդ Լիազումար նիստի կողմից ընդունվել է միջազգային ահաբեկչության կանխարգելման միջոցների վերաբերյալ նաև այլ բանաձևեր, մասնավորապես 40/61 բանաձևում խոսվում է օտարերկրյա իշխանությունների ու վարչակարգերի տակ գտնվող ժողովուրդների ինքնորոշման ու անկախության անկապտելի իրավունքի մասին: Բանաձևում պաշտպանվում է ժողովուրդների պայքարի օրինականությունը, մասնավորապես՝ ազգային-ազատագրական շարժումների օրինականությունը՝ համաձայն Միավորված ազգերի կանոնադրության և Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև Տնտեսական ու սոցիալական համաժողովի՝ մարդու իրավունքները խախտող, ինքնորոշման իրավունքի կենսագործմանը խոչընդոտելու համար վարձկանների օգտագործման վերաբերյալ 1986/43 բանաձևը, որում արձանագրված է այդ հեղինակավոր միջազգային ինստիտուցիայի պնդումը այն մասին, որ՝ «ժողովուրդների պայքարը և ազատագրական շարժումները իրենց անկախության, տարածքային ամբողջականության, ազգային միության և գաղութատիրությունից, ռասայական խտրականությունից և արտաքին միջամտությունից և նվաճումից ազատվելու համար օրինական է»⁵⁰⁹:

⁵⁰⁸ **Olalia Edre U.**, The status in international law of national liberation movements and their use of armes force//Published by: International Association of People's Lawyers, էջ 13.

⁵⁰⁹ <http://ap.ohchr.org/documents/E/ECOSOC/resolutions/E-RES-1986-43.doc>.

Մեր կողմից վերոնշյալ միջազգային իրավական փաստաթղթերի բովանդակության ներկայացումը, նպատակ ունի կրկին հաստատել այն հանրահայտ ճշմարտությունն, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս է եկել ինչպես Նախկին Խորհրդային միության սահմանադրության և օրենքների, այնպես էլ միջազգային հանրային իրավունքի բոլոր նորմերի ու սկզբունքների համապատասխան, հետևաբար Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության ազգային-ազատագրական պայքարի իրավական հիմքերի իրավաչափությունը որևէ կերպ կասկածի ենթակա չէ:

Ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից միջազգային իրավունքը, ճանաչելով բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, միաժամանակ ամրագրում է, որ ցանկացած հակազդում գաղութատիրության ներքո կամ կախյալ վիճակում գտնվող ժողովրդի ազգային ինքնիշխանությունը հատկապես բռնի եղանակով միջազգային իրավունքի կոպիտ խախտում է, այդ թվում ՄԱԿ-ի կանոնադրության, այն պետության ու կառավարության կողմից, որոնք իրականացնում են այդ հակազդեցությունն ու անօրինականությունը:

Միջազգային իրավական այս կանխադրույթի նորմատիվ հիմքը *inter alia* Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է, որում միանշանակ և հստակորեն դատապարտում է բռնությունը և ղեկավարող իշխանությունների կամայականությունը, ինչը ստիպում է ժողովրդին դիմելու ապստամբության անօրինականության, բռնապետության ու գաղութատիրության դեմ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն արձանագրում է, որ բռնատիրությունը և ճնշումը մարդուն ստիպում են դիմելու «ապստամբության, որպես վերջնական միջոցի»⁵¹⁰:

Միջազգային հանրային իրավունքն իր եությամբ պայմանագրային իրավունք է, հետևաբար ինքնորոշման իրավունքի իրագործման հիմքում ընկած է միջազգային իրավական փաստաթղթերի կողմ հանդիսացող պետությունների կողմից դրանք հարգելու պարտավորությունը: Եվ այն ժողովուրդը, որին փորձում են ռազմական ուժի կիրառմամբ զրկել ինքնորոշման իրավունքից, իրավասու է ոչ միայն ինքնուրույն, այլ նաև այլ պետությունների ռազմաքաղաքական օժանդակությամբ ավարտին հասցնել իր պայքարը:

Ասվածի համատեքստում կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն այսօր ցույց տրվող կյուրական, ռազմական ու քաղաքական աջակցությունը պայմանավորված է ոչ միայն ազգային էմոցիոնալ բնույթի համերաշխությամբ, այլ նաև Հայաստանի Հանրապետության կողմից իր միջազգային պայմանագրային պարտավորությունները բարեխիղճ կատարելու պատրաստակամությամբ:

⁵¹⁰ Аль-Балауи, Бассам Фатхуи, Права народов и становление палестинской государственности-М., 1992, էջ 18:

INTERNATIONAL PUBLIC LAW AND QUESTION OF LEGITIMACY OF THE NATIONAL-LIBERATION STRUGGLE OF THE PEOPLE OF NAGORNO-KARABAKH REPUBLIC

MARIAM GRIGORYAN

*Phd Student in Artsakh State University, Member of UYSSA,
Stepanakert, The Republic of Artsakh (NKR)*

It is no secret that there is quite a small number of scientific works on the study of the national liberation struggle of peoples in international public law. The purpose of this article is to consider the relevance of the national liberation struggle of the population of Nagorno-Karabakh to international public law. For this purpose, relevant international legal instruments and theoretical literature have been studied. In particular, the article deeply and comprehensively analyzes international legal documents and resolutions of the UN General Assembly, as well as historical realities and works of authoritative scientists.

In the course of the study, both scientific (analysis, the principle of historicity) and special (comparative-legal) methods were applied.

As a result of the study, we came to the conclusion that Nagorno-Karabakh seceded from the Soviet Azerbaijan in accordance with all the norms of international law, so the national liberation struggle of the population of Nagorno-Karabakh is fully consistent with public international law.

Key words: *national-liberation struggle, Nagorno-Karabakh, population, self-determination, international public law.*

МЕЖДУНАРОДНОЕ ПУБЛИЧНОЕ ПРАВО И ВОПРОС ПРАВОМЕРНОСТИ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ НАСЕЛЕНИЯ НАГОРНОГО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

МАРИАМ ГРИГОРЯН

*Аспирант Арцахского государственного университета, Член ОМУСА,
г. Степанакерт, Республика Арцах (НКР)*

The aim of this research is to investigate the Artsakh conflict negotiation process after the Velvet revolution in Armenia and to reveal the approaches of the new Government to the regulation of the problem in the light of the program speech of Prime Minister Nikol Pashinyan at the joint session of Security Councils of Armenia and Artsakh, held in March 12, 2019.

Particularly, main theses of that speech were restoration of tripartite format of negotiations and necessity to set aside Madrid principals. Afterwards the research sets the bases of new vision of the Government of Armenia, being grounded on internal and international legal documents: the RA Constitution, final document of the CSCE Budapest summit of 1994, the Bishkek protocol of 1994 etc.

In addition to the aforementioned, within the scope of Prime Minister's program speech a new version of pro-Armenian resolution of the conflict is proposed, based on historical-political and international legal arguments: illegal decision of RC(b)P Caucasus Bureau on transfer of Artsakh to Azerbaijan, legality of the process of secession of Artsakh from Azerbaijan of 1988-1991 in the context of the USSR legislation, the internationally legitimate concept of so-called "remedial secession", which may serve as a basis for substantiation of newly emerged states of their split away from the parent state etc. During elaboration of the research paper historical-legal, comparative and dialectical scientific methods have been used.

The author's main conclusions are: validity of formation of the new concept of regulation of the Artsakh conflict, voidness of the concept "territories in exchange to peace or interim status of Artsakh", possibility of mutual cessions only in case of recognition of independence of Artsakh by Azerbaijan and conducting negotiations over mutual cessions between Azerbaijan and Artsakh in the form of delimitation and demarcation of boundaries of each other and necessity of further political and economical development of Armenia and Artsakh for the sake of maintenance of irreversibility of peaceful negotiation process.

Keywords: *Artsakh conflict, Madrid principles, principle of remedial secession, self-determination of peoples, tripartite negotiation format, Velvet revolution, OSCE Minsk group, referendum.*

ЗАЧАТКИ НОВОЙ КОНЦЕПЦИИ УРЕГУЛИРОВАНИЯ АРЦАХСКОГО КОНФЛИКТА В ПОСТРЕВОЛЮЦИОННОЙ АРМЕНИИ

АРТАШЕС ХАЛАТЯН

*Эксперт по правовым вопросам Палаты адвокатов РА,
адвокат, исследователь, член ОМУСА,
г. Ереван, Республика Армения*

Цель данной научной работы – исследование переговорного процесса по Арцахскому конфликту после Бархатной революции в Армении и выявление подходов нового правительства к урегулированию конфликта на основе программной речи премьер-министра Армении Никола Пашиняна на совместном заседании советов безопасности Армении и Арцаха 12 марта 2019-го года. В частности, основными тезисами речи являлись необходимость восстановления трехстороннего переговорного формата и отказа от Мадридских принципов.

В данном исследовании обосновывается новое видение правительством Армении процесса урегулирования Арцахского конфликта, ставя акцент на внутригосударственные и международные правовые документы, такие как Конституция РА, заключительный документ Будапештского саммита СБСЕ 1994-го года, Бишкекский протокол 1994-го года и т.д. В качестве дополнения к вышеуказанному в данной научной работе представлен вариант отвечающего интересам армян решения Арцахского конфликта, основываясь на следующих историко-политических и международно-правовых аргументах: неправомерное

решение Кавказского бюро РКП(б) 5 июля 1921-го года о передаче Арцаха Азербайджану; правомерность процесса отделения Арцаха от Азербайджана в 1988-1991гг. в контексте законодательства СССР; легитимная на международном уровне т.н. концепция «отделения в качестве компенсации», которая может послужить основой для обоснования национальными меньшинствами, подвергающимся насильственным гонениям, своего отделения от метрополии и т.д.

В процессе данного исследования автором были использованы историко-правовой, сравнительный и диалектический научные методы.

Автором были сделаны следующие основные заключения: формирование новой концепции урегулирования Арцахского конфликта закономерно; формула «территории в обмен на мир или промежуточный статус Арцаха» неприемлема; взаимные уступки возможны только в случае признания Азербайджаном независимости Арцаха и ведения переговоров между Азербайджаном и Арцахом в форме взаимной делимитации и демаркации границ, дальнейшего политического и экономического взаимодействия Армении и Арцаха с целью обеспечения бесповоротности мирного переговорного процесса.

Ключевые слова: *Арцахский конфликт, Мадридские принципы, концепция «отделения в качестве компенсации», право наций на самоопределение, трехсторонний формат переговоров, Бархатная революция, Минская группа ОБСЕ, референдум.*

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԴԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐՈՒՄ*

ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*ՀՀ գլխավոր դատախաչ (2004-2013թթ.),
ՀՀ քննչական կոմիտեի նախագահ (2014-2018թթ.),
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ու ներկայացնել հայ իրավունքի այն աղբյուրները, որոնք հայրենասիրության ու հայոց պետականության վերաբերյալ դրույթներ են պարունակում:

Մեր խնդիրն է հետազոտել Հակոբ և Շահամիր Շահամիրյանների «Որոգայթ փառաց» աշխատության իրավահայրենասիրական նորմերը: Գաղտնիք չէ, որ «Որոգայթ փառաց» աշխատությունը հայ իրավունքի կարևորագույն փաստաթղթերից է, որում առաջին անգամ Հայաստանի իրականության մեջ ներկայացվում է իրավունքի տարբեր ճյուղերի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգ: Բացի այդ, հոդվածում անդրադարձ է կատարվում հնագույն ժամանակաշրջանի հայկական իրավական մտքի այլ հուշարձաններին, որոնք ժողովրդավարության, հայրենասիրության ու մարդասիրության վերաբերյալ առանձին իրավական նորմեր են պարունակում:

Հետազոտության իրականացման արդյունքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) մեթոդներ:

Վերոնշյալ իրավահայրենասիրական նորմերի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ելույթ հանելու, որ դրանք մեր ազգային, իրավական, քաղաքական մտքի կարգաքան մեջ ունեն առանցքային դերակատարություն և հայրենասիրություն ճառագող ինքնատիպ արժեքներ են:

Հիմնաբառեր` հայրենասիրություն, հայ իրավունքի աղբյուրներ, հայոց պետականության կազմավորում, Որոգայթ Փառաց, Շահամիր Շահամիրյան, Արցախ, խամսա:

Ինչպես գիտենք, սովորույթի իրավական նորմերը պատմականորեն սկսել են ծագել ընտանիքների կազմավորումից հետո, ինչի շնորհիվ ձևավորվեց մայրիշխանություն, ապա` հայրիշխանություն: Հարազատական կապերի հենքի վրա այնուհետև ձևավորվեցին ցեղերն ու տոհմերը: Սկզբնական շրջանում դրանք էին մարդկանց համայնավարության տեսակները, այնուհետև աշխատանքի բաժանման, առևտրական հարաբերությունների ծագման ու զարգացման շնորհիվ ձևավորվեցին պետական կառույցները` իրենց կառուցակարգերով, լծակներով, հսկող ու պարտադրող մարմիններով, զուգահեռ ձևավորվեց ու զարգացավ նաև օրենսդրական իրավունքը:

Աշխատանքը վերաբերում է հայ իրավունքի այն աղբյուրներին, որոնք հայրենասիրություն են բովանդակում: Կներկայացնենք Շահամիր և Հակոբ Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ի իրավահայրենասիրական նորմերը` հպանցիկ անդրադառնալով նաև հնագույն ժամանակաշրջանի հայրենասիրություն,

* Հոդվածը ներկայացվել է 15.10.2019թ., գրախոսվել` 30.10.2019թ., տպագրության ընդունվել` 12.12.2019թ.:

ժողովրդավարություն, մարդասիրություն պարունակող առանձին իրավական նորմերին:

Պետության գոյությունը ինքնին իրավունքի և իրավական նորմերի ծագում է ենթադրում, դրանք փոխկապակցված են:

Պատմականորեն պետության և իրավունգի ծագման ու զարգացման ընթացակարգեր տեղի ունեցան նաև Հայկական բարձրավանդակում: Դա Հայաստան աշխարհն էր:

Համաձայն Աստվածաշնչի՝ երկրային դրախտը Հայկական բարձրավանդակն էր, որտեղից սկիզբ են առնում դրախտային գետերը՝ Արաքսը (Գեոն), Տիգրիսը, Եփրատը և Փիսոնը (Ճորոխ), և որտեղ առաջին անգամ բնակություն հաստատեցին Ադամն ու Եվան:

Հայկական բարձրավանդակը համարվել է իրավական գիտելիքների և սրբազան ծեսերի երկիր: Բնակլիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը և օգտակար հանածոների առատությունը նպաստավոր պայմաններ էին ստեղծում տարբեր արհեստների և առևտրի ծագման ու զարգացման համար, ինչը, բնականաբար, առաջ էր բերում առևտրական, տնտեսական, հասարակական և այլ հարաբերությունների իրավակարգավորման անհրաժեշտություն: Անհրաժեշտաբար ծագում ու զարգանում էին այդ հարաբերությունները կարգավորող իրավանորմերը, դրանց ձևավորման, ընդունման ձևերն ու կառուցակարգերը, ուստի և իրավական գիտելիքների պահանջ էր ձևավորվում:

Հայոց նախահայրերի պետությունը Արատտա – Արարատյան (Արը բարձրագույն Աստվածն էր) անունն էր կրում, որը հայտնի էր իր կառույցներով, պետական մեխանիզմներով:

Արմենների պետականության ստեղծումը թվագրվում է մ.թ.ա V-IV-րդ հազարամյակը: Ըստ ավանդապատման՝ Հայկ Անքանազ իշխանը, Վան լճի ափին հաղթելով Բաբելոնի Բել թագավորին, միավորեց հայկական իշխանական տիրությունները մեկ թագավորության սահմաններում, որն էլ կոչվեց Հայք-Հայաստան-Արմենիա:

Այդպես հիմք տրվեց Հայկագունիների թագավորությանը, որը գոյատևեց 1776 տարի՝ թագաժառանգության իրավունքով:

Պետության գլուխը տիրակալն էր՝ միապետը: Նա ենթարկվում էր Աստվածների և անձամբ շփվում նրանց հետ Սուրբ Տաճարում: Տիրակալը նույնպես հայտարարվում էր Աստված, նա էր ողջ իշխանության կրողը, և միայն նա կարող էր վերահանձնարարել այլ անձանց կամ խմբերին իրականացնելու այդ իշխանության առանձին չափաբաժինները՝ իրենց դրսևորումներով: Տիրակալի կամքը օրենքի ուժ ուներ: Նա էր վերապահում իրավունքներ ու պարտականություններ, ստեղծում պաշտոններ, կառավարող մարմիններ և կատարում նշանակումներ: Արքայական տիտղոսը փոխանցվում էր ժառանգության իրավունքով: Կավե արձանագրություններում արտացոլված են մ.թ.ա. V-III հազարամյակներում հայոց արքայական դինաստիաներն ու անձնանունները:

Կավե հուշարձանը պատկերում է Հայոց Արամազդ աստծուն՝ որպես տիրակալ ցամաքի, ջրերի ու երկնքի վրա՝ իր բացարձակ իշխանության ցուցադրմամբ: Նա ձախ ոտքով հենված է կնիքի՝ օրենքի վրա:

Հայ իրավական միտքը ստեղծել է մի քանի հարյուրից ավելի իրավական հուշարձաններ, որոնք մեզ են հասել հերոզիֆների, սեպագիր արձանագրությունների, քարե կոթողների, մագաղաթների, տպագիր ու ձեռագիր մամուլների և այլ տարբեր ձևերով ու միջոցներով:

Հնագույն ժամանակների փիլիսոփա – օրենսդիր Շուրուպպակը իր «Հանձնարարական»-ում պահանջում է. «Խորհուրդները, որ ես կտամ, չարհամարիես, խոսքը, որ ես կասեմ՝ չխախտես»:

խոսքը մի խախտիր. քո խոսքը՝ հիմքն է
 Այն, ինչ դու ուժով տապալես՝ դրանով էլ դու կկործանվես
 Ով տներ կավերի՝ փլատակների տակ կմնա
 Ով մարդկանց վրա կբարձրանա, նրա վրա էլ մարդիկ կբարձրանան
 Մի փորձիր ջուրը ձեռքով բռնել՝ ուժասպառ կլինես
 Մի գողացիր՝ քեզ մի կործանիր»⁵²⁷:

Նկատելի է, որ դրանք պարունակում են ինչպես պրակտիկ, կենցաղային, փիլիսոփայական, այնպես էլ իրավական մտքեր, կանոններ, ինչի շնորհիվ էլ նրան մենք օրենսդիր ենք դիտարկում: Շուրուպպակուն մեծ նշանակություն էր տալիս հասարակական կարծիքին, հասարակական գնահատականին: Նա մարդու արժևորման երաշխիքներ տալը համարում է ավելորդություն, կախյալ վիճակ՝ «Մի երաշխավորիր, որ կախյալ չլինես... Մարդու համար վկայում է իր քաղաքը»:

«Հանձնարարականի» առանձին նորմեր, ինչպես տեսնում ենք, ուղղակի ասանկցիաներ են պարունակում. «Գողը առյուծ է, բռնվեց՝ ստրուկ»:

Շուրուպպակուն մեծագույն դրվատանքով է վերաբերում սխրանք, հերոսություն կատարածին. «Հերոսության հանդեպ պետք է գլուխ խոնարհել»: Նա հերոսին դասակարգում է նույն բարձրություն, ինչ որ արեգակն է:

Շուկգիի-Ար (ուր) (մ.թ.ա. 22 -21 դար)

Օրենքում բացակայում է «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքը և մարմնական պատիժների փոխարեն սահմանում է նյութական պատասխանատվություն՝ տուգանքների տեսքով, ինչն այն ժամանակաշրջանի համար մեծագույն առաջընթաց էր: Բացի այն, որ մարմնական պատիժները հակահումանիստական էին, դրանք զրկում էին մարդկանց աշխատունակությունից և զինվորական ծառայությունից:

Հոդված 15. «Եթե մի մարդ մեկ ուրիշի վերջավորությունները զենքով վնասի՝ պետք է վճարի տասը սիկլեյ արծաթ»:

Հոդված 19. «Եթե ատամն է կտրել՝ նա պետք է վճարի 2 սիկլեյ արծաթ ամեն ատամի համար»⁵²⁸:

Հակիրճ օրինակներ բերելով հնագույն ժամանակների իրավանորմերից՝ այժմ ներկայացնենք Շահամիրյանի «Ոռոզայթ փառաց»-ը: Սահմանադրական իրավունքի այդ գանձարանում Շահամիրյանները արտահայտել են իրենց ողջ իմացյալ և ենթագիտակցական հայրենասիրությունը:

«Ոռոզայթ փառաց»-ը 1760թ.-ին սկսել և 1773թ.-ին ավարտել է համաշխարհային իրավաբանական մտքի գագաթներից մեկը՝ հնդկահայ գաղութի կարկառուն ներկայացուցիչ Հակոբ Շահամիրյանը: Սահմանադրությունը ստեղծելու գործում նրան մեծապես օգնել ու օժանդակել է հայրը՝ Շահամիր Շահամիրյանը:

Շահամիրյանն իր ստեղծագործությունը վերնագրել է «Հայերի, Հայաստան աշխարհի, կառավարման սահմանադրություն», «Ոռոզայթ փառաց»: Այն բաղկացած է 521 հոդվածից, որոնց շուրջ 25 տոկոսը սահմանադրական իրավունքի և, հատկապես, իշխանության ու կառավարման մարմինների կազմակերպմանն ու գործունեությանը վերաբերող իրավական նորմեր են: Այդ նախագիծը պետք է դառնար իր երազած ազատագրված Հայաստանի պետության սահմանադրությունը, որում հռչակվում է Հայաստանի ազգային պետականության, հայ առաքելական եկեղեցու ինքնիշխանությունը:

Հայկական պետության սահմանադրության այդ նախագիծը ստեղծվել ու հրապարակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունից 14 տարի,

⁵²⁷ Айвазян С., Начала законодательного права Армении, Ереван, 2013 г. стр. 26-28.

⁵²⁸ Айвазян С., Начала законодательного права Армении, Ереван, 2013 г. стр. 25-26.

իսկ Ֆրանսիայի սահմանադրությունից 18 տարի առաջ: Այն մնաց որպես նախագիծ, քանզի հայկական ազատագրական շարժումը պարտություն կրեց:

Շահամիր Շահամիրյանի՝ Յուզեփ Արղությանցին (Արզուտիսկի՝ եղել է ռուսաց թեմի առաջնորդը) 1786թ.-ի սեպտեմբերի 3-ին հասցեագրած նամակից (Մատենադարան, ձեռագիր N2699, էջ 98) հայտնի է դառնում, որ իշխան Պոտյոմկինը կարգադրել է ռուսերեն թարգմանել ու հրապարակել «Որոգայթ փառաց»-ը:

Արղությանցը «Որոգայթ փառաց»-ը գանձ է համարել⁵²⁹, հայ ժողովրդի քաղաքաիրավական հանճարը: Իրականում այն 17-18-րդ դարերի նոր գաղափարախոսության վառ արտահայտությունն է:

Անգլիական ու ֆրանսիական հեղափոխությունների դարաշրջանի հետ է կապվում ժողովրդավարության, օրինականության, ներկայացուցչական կառավարման և ազատ ձեռներեցության չափանիշներով առաջնորդվող իրավական պետության գաղափարի հաստատման գործընթացը, այնինչ դրանք պարզորոշ ու հստակ ձևակերպումներով արտահայտված են «Որոգայթ փառաց»-ում: Շահամիրյանը հայ ժողովրդի պետականության անկման պատճառ էր համարում օրինականության և իրավակարգի խախտումներն ու կամայականությունները: «Միայն օրենքները պետք է լինեն հայերի թագավորը և գերիշխեն Հայաստան երկրի վրա⁵³⁰» - գրում է նա:

Հիմք է ընդունվում այն գերակա սկզբունքը, որ հայ ժողովրդին կարող են փրկել ազգային միասնական կամքով ընտրված օրենսդիր մարմինը և նրա կողմից ընտրված օրենքները, որոնք պետք է բխեն մարդու բնական ու բանական բնությունից՝ աստվածային օրենքներից, գործեն հասարակական բարոյականության և բարօրության սկզբունքներով:

Հարց է ծագում ինչո՞վ է պայմանավորված Շահամիրյանի կողմից ստեղծած Հայոց պետականության այդ սահմանադրության նախագիծը, ինչո՞վ էր դա արժևորված, ի՞նչ գործառնական նշանակություն ուներ: Այդ հարցերին պատասխանելու համար վերլուծենք նշված ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի որոշ դրվագներ:

Ազգային պետականության վերաստեղծման, պահպանության գաղափարախոսությունը փիլիսոփայաքաղաքական տեսություն է: Այն անմիջականորեն նպաստել է ազգային մտածողությանը, հայկական ինքնակառավարման համակարգի ստեղծմանն ու զարգացմանը: Ազգային գաղափարախոսության և այդ ուղղությամբ պետական քաղաքականության խնդրակարգը, դրա գործածությունը սերտորեն կապված են իրավունքի և օրենսդրության, դրանց իմացաբանական ու գիտական նպատակների ձևավորման ու իմաստավորման հետ: Օրենքով հաստատված օրինականության նշանավորումը իմաստավորվում է այնքանով, որքանով հենց օրենքն է ազգի, ժողովրդի, բնակչության կամքի արտահայտությունը (ըստ Շահամիրյանի՝ ազգի, քանզի միայն հայն ուներ ընտրվելու իրավունք):

Այդ ժամանակահատվածում Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: 18-րդ դարի երկրորդ կեսը Հայաստանում և Հայաստանից դուրս, հայ առաջատար ուժերի համար ազատագրական պայքարի վերելքի ժամանակաշրջան էր: Շահամիրյանն ու համախոհները մտահոգ էին ապագա հայկական պետության քաղաքական կառուցվածք ձևավորելու հարցով: Նրանք մշակեցին Հայաստանի ազատագրության համար պայքարի մի ամբողջական ծրագիր,

⁵²⁹ Արղության Յ., Մատենադարան, ձեռագիր թիվ 2949 և 1788 թ. նոյեմբերի թր-ի նամակը:

⁵³⁰ Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 2, Ե., 2002 թ., Հ. Շահամիրյան «Որոգայթ փառաց» նախաբան, էջ 37:

որի հիմնական առանցքը Վրաստանի Յերակլի II թագավորին և Ղարաբաղի մեյիթներին⁵³¹ միանալու անհրաժեշտությունն էր:

Ծրագիրը պետք է իրականացվեր Ռուսաստանի ռազմաքաղաքական օգնության շնորհիվ: Հայ գործիչները այդ նպատակներն իրականացնելու համար մշակեցին Ռուսաստանի ու Հայաստանի միջև պայմանագրի երկու նախագիծ, որոնցից մեկը հեղինակեց Յովսեփ Արզումանյանը⁵³², իսկ մյուսը՝ Շահամիրյանը: Նշված ծրագրային գաղափարի նախապայմանը Գեորգիևսկի պայմանագիրն էր, որի կնքմանը նպաստել էր նաև Յովսեփ Արզումանյանը: Ռուսաստանի կողմից պրոտեկտորատ է սահմանվում Զարթի-Կախեթի թագավորության վրա՝ պահպանելով նրա ինքնակառավարումը:

1786 թ. Յերակլի II-ն իր հրովարտակով իշխանական տիտղոս շնորհեց Շահամիրյանին, որ առաջարկում էր թագավորին Վրաստանում մի շարք բարեփոխումներ իրականացնել, ինչի շնորհիվ երկիրը շուտափույթ կհզորանար: Ընդգծելով Վրաստանի ազգաբնակչության մեծացման խնդիրը՝ նա թագավորին խորհուրդ է տալիս զեղչերի, կյանքի և ունեցվածքի ապահովագրության խոստման ուղերձով դիմել աշխարհով մեկ սփռված հայերին:

19-րդ դարի հայ անվանի պատմաբան Ալեքսանդր Երիցյանը հիշատակում է, որ Շահամիրյանը առաջարկել է Յերակլի II-ին, որ թագավորական գերդաստանն իր օրինակով Վրաստանում բոլոր ճորտերին լիարժեք ազատություն տա: Շահամիրյանը Նույնիսկ պատրաստակամ է եղել անհրաժեշտ գումար հատկացնել՝ որպես փրկագին եկեղեցապատկան գյուղացիների համար⁵³³:

1787 թ.-ի հոկտեմբերի 15-ին Վրաստանի Յերակլի II թագավորին ուղղված նամակում Շահամիրյանը գրում է. «Հիշիր, որ ոչ թե ժողովուրդն է ստեղծված քեզ համար... այլ դու ես նախախնամության կողմից ընտրված քո ժողովրդի համար..., որի բարօրությունն ու ազատությունը քո ազատությունն է...»:

Շահամիրյանը Յերակլի II-ին ուղարկում է նաև իր ստեղծագործած հայ ու վրաց միավորված պետության զինանշանը՝ պատրաստված ոսկուց, ադամանդակուտ՝ խնդրելով հաստատել այն:

Յերակլի II-ն իր ստորագրությամբ ու կնիքով հաստատում է այդ զինանշանի նմուշը և 1790թ.-ի դեկտեմբերի 4-ին ուղարկում Շահամիրյանին՝ Մադրաս, որտեղ թագավորի ուղերձը հազար տպաքանակով տպագրվում է ու տարածվում⁵³⁴: Շահամիրյանը ակտիվ նամակագրություն է ունենում Գանձասարի կաթողիկոս Սիմեոն

⁵³¹ Ղարաբաղի մեյիթությունները հինգն էին և կոչվում էին նաև Խամսայի մեյիթություններ. «Խամսա» հին արաբերենով նշանակում է հինգ: Մի շարք ազգեր այդ բառը օգտագործում են Նույն նշանակությամբ: Մուսուլմանները, «խամսա» ասելով, հասկանում են Մուհամեդի ընտանիքի հինգ անդամներին: Դա նշանակում է նաև հինգ մատներից բաղկացած սուրբ Մարիամի ձեռքի փիղ, իսկ մուսուլմանները նկատի ունեն Ֆաթիմային, որ ունեցել է թայիսմանի նշանակություն (հաջողություն է բերում): Մեյիթների պարագայում «խամսա»-ն Նույնպես բացատրվում է որպես ձեռքի փի՝ հինգ մատից բաղկացած, և երբ դրանք միանում ու սեղմվում են, դառնում են բռունցք:

⁵³² Յովսեփ Արզումանյանի (Յովսեփ Արզումանյան, 1743-1801թթ) արքեպիսկոպոս, հայ ազատագրական շարժման գործուն ներկայացուցիչ: Արդության-Երկայնաբազուկների հնագույն իշխանական տոհմի հետևորդն է: 1773թ.-ին Ռուսաստանի հայ բնակչության թեմական առաջնորդն էր: Անձնապես ծանոթ է եղել Եկատերինա II կայսրուհու հետ: Ակտիվ քաղաքական նամակագրություն է վարել Վրաստանի թագավոր Յերակլի II, Ղարաբաղի մեյիթների, Շահամիր Շահամիրյանի և այլ հայրենի գործիչների հետ: Ակտիվ մասնակցություն է ունեցել Ղրիսի հայերի վերաբնակեցման և Նոր Նախիջևանի հիմնադրման գործում, ընտրվել է կաթողիկոս, սակայն չի օծվել՝ Էջմիածնի ճանապարհին՝ Թբիլիսիում, հանկարծամահ լինելու պատճառով:

⁵³³ **Երիցյան Ա.**, (1841-1902թթ.) «Ղնդկաստանի հարուստ կտակները», «Կովկաս» 1883թ. N 94:

⁵³⁴ **Լերսեյան Ս.**, Армяно-русские отношения в 18 веке, сборник документов 1760-1800 гг. под редакцией М.Г. Нерсесяна. Т.4 Ереван, институт истории АН Арм. ССР 1990, стр 547-548:

Երևանցու և Ղարաբաղի մեյիքների հետ: Շահամիրյանի գլխավորած ազգային ազատագրական հոսանքը ապստամբության կոչ էր անում՝ համոզված լինելով, որ այն միակ ճանապարհն է: Պարսկաստանի ճշման ներքո Շահամիրյանն իր զինակիցների հետ արտաքսվում է Վրաստանից, իսկ կաթողիկոս Սիմեոն Երևանցին կարծում էր, որ ապստամբությունը վաղաժամ է և կխորացնի հայերի նկատմամբ բռնակալների վրեժխնդրությունը, ճնշումները և ծանր հետևանքների կհասցնի:

1779թ.-ի հունվարի 15-ին Գանձասարի կաթողիկոս Յովհաննեսին հասցեագրած նամակում (111, էջ 135-137) Շահամիրյանը աստվածաշնչյան օրինակով առաջարկում է. «Առաջին հերթին անհրաժեշտ է հոգևոր և աշխարհիկ անձանցից հավաքագրել 12 ուսուցիչ և նրանց հանձնարարել երեխաներին գրաճանաչություն ուսուցանել, երկրորդ՝ բոլորին պարտադրել իրենց երեխաներին ուղարկել դպրոցներ, ... որպեսզի երիտասարդությունը, գրքեր կարդալով, կարողանա ծանոթանալ հայրենի ժողովրդի պատմությանը և լցվի ազատագրական ոգով... անհրաժեշտ է կազմել «հասարակության օգուտները նկատի ունեցող օրենքների գիրք... դրանց ենթարկվելու պարտականություն ընդունել: Հայերը դեռ չեն հասել այն վիճակին, ինչ հրեաները, եգիպտացիները կամ հույները, նրանք դեռ մասամբ ունեն ազգային իշխանություն, որը հարկ է պաշտպանել թուլակամից և անկամից»⁵³⁵: Նշելով ազգային իշխանության մասին՝ Շահամիրյանը նկատի ուներ Ղարաբաղի մեյիքությունները: Նա երազում էր Արցախի հինգ մեյիքությունների տարածքում ստեղծել ազգային պետություն, որի տնտեսական ու ռազմական հզորությունը հեռանկարում պետք է ազատագրեր ամբողջ Հայաստանը: Ոգևորված այդ գաղափարներով ու չափանիշներով՝ հայ ժողովուրդը և, հատկապես, մտավորականությունը, պայքարում էր՝ Թուրքիայի ու Պարսկաստանի միջև բաժանված Հայաստանն ազատագրելու: Նրանց իրավաբանական միտքը ուղղված էր հայկական պետականաշինությանը: Շահամիրյանն ու իր համախոհները առաջին անգամ ամբողջականացրին ու կանոնակարգեցին հայ քաղաքական և իրավաօրենսդրական ժողովրդավարական գաղափարախոսությունը, որի նշանո՞ղն առ այսօր չի գերազանցվել. այն օրենքների ու բարոյաբանության ներդաշնակ համաձուլվածք է իր ողջ գաղափարախոսական իմաստով: «Եթե մենք ցանկանում ենք լինել ազատ և մեր երկրի տերերը... պահպանել մարդկային պատիվն ու արժանապատվությունը, մաքրվել բարոյական հին ախտերից, ապրել մաքուր խղճով՝ պետք է ամենից առաջ կառուցել սեփական պետական կարգը, մշակել այնպիսի օրենքներ, որոնք կհամընկնեն ազատությանը, մեր ազգի հետաքրքրություններին ..., որի դեպքում մարդիկ կախված կլինեն միայն ժողովրդի կողմից ընդունված օրենքներից, սակայն ոչ առանձին անհատների, երբ մարդկանց վրա իշխում է օրենքը, բայց ոչ մարդկանցից մեկը: Այդ օրենքներն են մեր տերերն ու եկեղեցին, մեր տիրակալը և մեր թագավորը»⁵³⁶:

Շահամիրյանը մահացավ 1797թ.-ին Յնդկաստանում 74 տարեկան հասակում, իսկ մեկ տարի անց մահացավ նաև Հերակլի II թագավորը: Այդ փառահեղ գործիչների երազած պետությունը ստեղծելու գաղափարը մնաց լոկ ծրագիր:

Ցավոք, «Որոգայթ փառաց»-ը չդարձավ անկախ ու ինքնիշխան Հայոց պետության սահմանադրություն և մնաց որպես նախագիծ, ուսմունք՝ իր ազգային բովանդակությամբ և ուղվածությամբ: Այն արթնացրել է հայ ժողովրդի ազգային իրավական ինքնագիտակցությունը: Զաղաքական, իրավափիլիսոփայական, ազգային-ազատագրական գաղափարախոսության հայրենասիրական դրսևորման

⁵³⁵ Армяно-русские отношения в 18 веке, сборник документов 1760-1800 гг. под редакцией М.Г. Нерсисяна. Т.4 Ереван, институт истории АН Арм. ССР 1990, стр. 135-137, 366-373.

⁵³⁶ **Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 2, Ե., 2002 թ., Հ. Շահամիրյան «Որոգայթ փառաց» նախաբան, էջ 3:

գերագույն արժեք է ներկայացնում «Որոգայթ փառաց»-ի նախաբանը: «... Արեգակի ներքո գոյություն ունեցող բոլոր երկրների մեջ ամենաբարեշնորհը, ամենագեղեցիկը և ամենաընտիրը Արարատյան երկիրն է, որին իր բարձրաբերդ Մասիս սարով Տերն ամբողջ երկրի և բոլոր լեռների վրա թագավոր արարեց, որ ինչպես եղեմական դրախտը նախամայր եղավ մեր նախահայր Ադամի համար, այնպես էլ Արարատը՝ Մասիսի հետ բնակության վայր եղավ նախահոր՝ Նոյ նահապետի, հանգրվանի համար: Դրանով Տերը իր օրհնությունը տվեց նախիջևանի տանն ու Արարատի երկրին»⁵³⁷:

Հռոմեական պատմիչ Յովսեփոս Փլավիոսը (37-100թթ.) «Հրեական հնախոսություն» աշխատության մեջ հիշատակում է. «Նոյը տեսավ, որ երկիրն ազատվել է ջրից և, սպասելով ևս յոթ օր, տապանից բաց թողեց կենդանիներին և ինքն էլ դուրս եկավ իր ընտանիքով... Այդ տեղը հայերը կոչում են «Նախիջևան», և տեղի բնակիչները մինչև հիմա էլ այդտեղ ցույց են տալիս տապանի պահպանված մնացորդները»⁵³⁸: Տիրոջ կամքով էր նաև, որ հենց Հայոց Աբգար թագավորն առանց վարդապետների քարոզի, առանց մարգարեությունների և առանց հրաշքների ականատես լինելու հավատաց կենդանի Աստծու որդի Հիսուս Նազովրեցու՝ Քրիստոսի մարդեղության խոսքին և հենց Հայաստանում առաջին անգամ 301 թ.-ին պետականորեն քրիստոնեությունը ընդունվեց սուրբ Գրիգոր Լուսավորչի (Պահլավունու) հրաշքով:

«Որոգայթ փառաց»-ը ժողովրդավարական, խորհրդարանական հանրապետության սահմանադրություն է՝ հիմնաբարային սկզբունքով, որ իշխանությունը բխում է ժողովրդից և հաշվետու է ժողովրդին: Այն հիմնված էր իրավունքի գերակայության, քաղաքացիների, ազգերի և ազգությունների ազատության ու իրավահավասարության, նրանց իրավունքների հավասար պաշտպանության, իշխանությունների բաժանման, հավատքի ազատության հիմնարար սկզբունքների վրա: Ամրագրվում էր, որ պետության օրենսդիր ու գործադիր մարմիններն ընտրովի են: Շահամիրյանը հիմնվել է նախորդ պատմական ժամանակաշրջաններում սաղմավորված ու ձևավորված ազգային գաղափարախոսության հիմնասկզբունքների և հայ իրավունքի աղբյուրների վրա՝ իրավունքի օրենքի իշխանության բնական աստվածային ծագումը, ազատությունը, արդարությունը, մարդն իր բնական իրավունքներով դիտարկելով որպես օրենսդրական հիմք:

Հայաստանի օրենսդիր գերագույն մարմինը Շահամիրյանն անվանեց «Հայոց տուն», որտեղ բացառվում էր այլազգիների, այլադավանների ու աղանդավորների ներկայությունը, որոնց պաշտոնավարումը սահմանադրորեն արգելվում էր նաև գործադիր իշխանությունում: Համաձայն «Որոգայթ փառաց»-ի՝ հայոց պետության յուրաքանչյուր քաղաքացի, անկախ ազգությունից, դավանանքից, սեռից, սոցիալական ու գույքային դրությունից, օրենքի սահմաններում օգտվում է խոսքի, մտքերն արտահայտելու, խղճի ազատությունից, ազատ գործելու, բնակության վայր ընտրելու, երկրից դուրս գալու և այլ իրավունքներից: Ինչպես քրիստոնյաները, այնպես էլ այլադավան օտարահպատակները կարող են ազատ մուտք գործել Հայաստան ու բնակվել պետության պաշտպանության ներքո՝ վճարելով հարկ, մաքս, ընդունելով սեփական արարքների համար պատասխանատվություն նախատեսող Հայաստանի դատական օրենսդրությունը և ընթացակարգերը:

Սահմանադրության նախագծում առկա են զինվորական կանոններին վերաբերող հոդվածներ (արտակարգ դրության հայտարարմանը)՝ զենքի պատրաստման, ներմուծման և արտահանման ընթացակարգերը սահմանող նորմերով:

⁵³⁷ Ավագյան Ռ., Իրավական մտքի գանձարան, «Որոգայթ փառաց» նախաբան, էջ 31-32:

⁵³⁸ Иосиф Плав, Еврейское старословие, книга I, Москва, 1996, стр. 14.

Մարդասիրական վերաբերմունք է սահմանված հայոց բանակի պաշարած բնակավայրերի, զինվորների ու խաղաղ բնակչության համար: Մարդու բնական իրավունքներին ու օրենքներին հակասող, ինչպես նաև պատմական այդ ժամանակաշրջանում և, հատկապես, արևելքում տարածված անձի ազատությունը սահմանափակող և նրա արժանապատվությունը ստորացնող պայմանագրերը համարվում էին անվավեր: Սահմանադրության 1-ին հոդվածը Հայաստանի ողջ տարածքն ու բնական հարստությունը հռչակում է ազգային սեփականություն, ընդ որում՝ որպես ժառանգության իրավունքով ստացած, որը տնօրինելու իրավունք ունի միայն հայոց պետությունը՝ համաձայն Հայաստանի սահմանադրության: Հողի սեփականության ու վաճառքի իրավունք ունեն միայն հայ եկեղեցու դավանությունն ընդունած հայերը: Այլազգի ու այլադավան քաղաքացիները կարող էին օգտագործել և տիրապետել հողն ու ընդերքը, սակայն տնօրինման իրավունք չունեին և չէին կարող այն օտարել: Նշված հոդվածի համաձայն՝ Հայաստանի սահմանները դիտարկվում են Մեծ Հայքի և Կիլիկյան պետության տարածքներում տեղակայված Միջերկրական, Սև ու Կասպից ծովերի միջև, ինչը «հանդիսանում է հայ ծողոկողի ժառանգություն. այս աշխարհից չպետք է ավելանա կամ պակասի ոչ մի թիզ հող, այստեղ միշտ պետք է պահպանվի Հայոց Տունը համաձայն Հայաստանի սահմանադրության»: Սահմանադրորեն հռչակվում է, որ Հայաստանի տարածքում ծնված յուրաքանչյուր անձ «պատիվ ունի իրեն անվանել Հայ»՝ որ ազգից և ինչ դավանանքի էլ լինի: Պարտադիր պահանջ է հայերեն խոսել ու կարդալ իմանալը (հոդված 2):

Նախագծում աշխատանքն ու կրթությունը ոչ միայն ազատություն և իրավունք են, այլև պարտականություն, քանզի Հայաստանի քաղաքացիները պարտավոր են մասնակցել երկրի տնտեսական բարգավաճմանը, ինչը հասարակության բարեկեցության հիմքն է: Գիտնականների, գյուտարարների, ուսուցիչների և այլ մասնագետների նկատմամբ հոգատարությունը դիտարկվում է որպես պետության պարտավորություն: Ծայրահեղ խիստ պատիժներ էին սահմանվում հայոց պետականության և հայ եկեղեցու դեմ ուղղված հանցագործությունների համար: Հստակ սահմանված է, որ պատիժը հանդիսանում է ոչ միայն հատուցում կատարված հանցագործության համար, այլև ունի դաստիարակչական նպատակ:

Շահամիրյանի նախագծած դատարանում 24 երդվյալ ատենակալներ են, որոնցից 12-ի ընտրությունը մեղադրյալի դատավարական իրավունքն է: Առանձին հոդվածներով ուղղակիորեն պարտավորեցվում է «Հայոց տան»-ը սեփական միջոցներով խնամել ու դաստիարակել ապօրինի ծնված կամ ծնողներին կորցրած երեխաներին, հոգ տանել անաշխատունակ հաշմանդամների, խնամազուրկ ծերունիների և այլ կարիքավորների նկատմամբ:

Գանձված միջոցները ծախսվելու էին Հայաստանի անվտանգությունն ամրապնդելու և երկրում լուսավորության, առողջապահության կազմակերպման ու զարգացման նպատակով:

Բարձրագույն գործադիր մարմնի ղեկավարը նախարար նախագահն է: Նա պետության ղեղավարն է՝ «առաջին պաշտոնատար անձը և հայ ժողովրդի ծառան»:

Շահամիրյանը մեծագույն հարգանք է դրսևորում հայոց թագավորական տոհմի հետևորդների նկատմամբ: Մասնավորապես եթե Բագրատունիների արքայատնից որևէ մեկը, ընդունելով «Հայոց Տան» օրենքներն ու որոշումները, ցանկություն հայտնի դառնալ նախարար, նա կարող է ընտրվել այդ պաշտոնում ցմահ այն դեպքում, երբ նախարարները կարող էին ընտրվել երեք տարի ժամկետով:

Չարմանալիորեն արդիական է հնչում «Որոգայթ փառաց»-ի 3-րդ հոդվածը. «Արական, թե իզական սեռի պատկանող յուրաքանչյուր անձ... հավասարապես և միշտ ազատ է իր գործունեության մեջ, ոչ ոք իշխելու իրավունք չունի ոչ մեկի վրա»: Սահմանադրության այդ նորմը համահունչ է Ջոն Լոկի փիլիսոփայական գաղափարախոսությանը մարդու ազատության վերաբերյալ այն դրույթով, որ մարդու

բնական վիճակը նրա բացարձակ ազատության վիճակն է: «Ազատությունը դա այն վարքագիծն է, ինչ չի արգելում օրենքը՝ հետևելու սեփական ցանկությանը և կախված չլինելու մեկ այլ ինքնակամ մարդու անհաստատ, անորոշ, անհայտ կամքից»⁵³⁹:

Հայ ժողովրդական իմաստությունը հռչակում է. «Ազատ ես, բայց ազատ չես՝ խանգարելու այլոց ազատությանը»: Հիացմունք է պատճառում 5-րդ հոդվածը. «Հայաստանի հողի վրա բնակվող յուրաքանչյուր անձ, ինչ սովորույթով որ ներկայումս պաշտում է իր Աստծուն, այդպես էլ հաստատուն մնում է աստվածապաշտության իր հավատքին և ոչ ոք՝ ով էլ լինի, իրավունք չունի նրան արգելք հանդիսանալ»: Ակնհայտորեն ու ամենայն հստակությամբ ձևակերպված է անձի խղճի ազատության իրավունքը՝ այսօրվա հասկացությամբ ու սահմանմամբ:

Նախագծի 8-րդ հոդվածը վերնագրված է. «Հող գնելու և վաճառելու Հայի իրավունքի մասին»: Այն սահմանում է. «Յուրաքանչյուր անձ, որը ազգային պատկանելությամբ հայ է և հայ հանրության անդամ, Քրիստոսով մկրտված և Քրիստոսին հավատացյալ, կարող է որպես սեփականություն գնել և վաճառել հողամաս միայն սեփական ազգին և դավանությանը պատկանող անձանցից կամ անձանց:

Ամեն ինչ հստակ և պարզ է ասված:

Եթե ընտրելու իրավունք ունի Հայաստանի ողջ բնակչությունը, ապա ընտրվելու իրավունքը վերապահվում է միայն ազգությամբ հայ և հայ քրիստոնեական դավանանքի տղամարդկանց. «... ազգային պատկանելությամբ հայ, Հայոց Սուրբ Եկեղեցու դավանությամբ Քրիստոսին հավատացյալ և Հայաստանում ծնված մի բարեմիտ և խոնարհ այր» (հոդված 14):

Նախատեսվում էր, որ պատգամավորները յուրաքանչյուր ընտրող տնից պետք է ստանային տարեկան կես արծաթ դահեկան, ընդհանուր՝ վեց հազար արծաթ դահեկան՝ որպես բավարարման ծախսեր՝ կենցաղի ապահովման հոգսերից զերծ լինելու և ժամանակը ազատորեն նվիրաբերելու ժողովրդի բարօրությանն ուղղված որոշումների ու գործերի իրականացմանը: Բոլոր պաշտոնյաների ընտրության համար պարտադիր պահանջ է դրվում, որ նրանք լինեն «բուն Հայոց սեփական ազգից և Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու դավանությամբ»: Հայոց դավանության մասին սահմանադրության 4-րդ հոդվածը մեզ համար պատիվ է համարում Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու աստվածապաշտության կարգը, որը հավատարմորեն մեզ է ավանդում «աթոռանիստ Վաղարշապատից հայրապետական ծայրագույն աթոռը՝ Էջմիածնի լուսափայլ Սուրբ Եկեղեցին, Հայոց հայրապետի անսուտ բերանով»: Մահվան էր դատապարտվում այն Հայ մարդը, որը, մկրտված լինելով հանդերձ, ուրանում էր քրիստոնեական հավատքը:

Յուրահատուկ բովանդակություն ու իմաստ ունի դրամի նկարագրությունը սահմանող 126-րդ հոդվածը: Այն վերնագրված է «Դրամի կազմության մասին» և պահանջ էր ներկայացնում, որ մետաղադրամի վրա պարտադիր գրված լինի «Բարեկեցություն Հայ ժողովրդին»: Յուրաքանչյուր ոք, ով կառնչվեր մետաղադրամի հետ, կարդալով նշված խոսքը՝ ակնհայտորեն պետք է հասկանար, որ փողը առաջին հերթին պետք է ծառայի Հայոց պետականությանը և Հայ ժողովրդի բարեկեցությանը:

«Ոռոգայթ փառաց»-ում (հոդված 82) նախատեսվում է, որ մինչ Եկեղեցական պսակադրությանը ամուսինները պարտավոր են կնքել ամուսնական դաշնագիր, «... որպեսզի կարողանանք մեր Արարիչ Տիրոջ օրհնությունն ընդունել Հայոց Սուրբ Եկեղեցու քահանայի ձեռքով՝ աճելու և բազմանալու, մեր Տիրոջ ծառայելու համար և ի շահ բարձրագույն և բարեխնամ Հայոց Պետության»: Եթե ամուսիններից մեկը «հետ կանգնի կամ հոգ չտանի դաշնագրի անթերի պատշաճ կատարմանը՝ պարտավոր է Հայոց աղբատանոց մուծել հինգ հազար արծաթ դահեկան»: Ազգի աճն ու բազմանալը

⁵³⁹ Джон Лок, Избранные философские произведения, том 2, Москва, 1962г., стр. 6-17.

օրենսդրորեն ամրագրվում է որպես պարտադիր պայման, որպես ազգային ու պետական շահ:

118-րդ հոդվածը պարտավորեցնում է ծնողներին 12 տարին լրացած զավակներին սեփական ունեցվածքի հաշվին գնել մեկ հրացան և մեկ թուր՝ որպես առաջին ժառանգություն:

Հայոց պետության ողջ տարածքում բոլոր բնակիչները պարտավոր են 25-ական տան հաշվով պահել երկու ուսուցիչ. մեկը՝ երեխաներին հայոց լեզվով կարդալ ու գրել սովորեցնելու համար, մյուսը՝ տղաներին ռազմագիտություն ուսուցանելու (101 հոդված):

Սահմանադրության նախագիծը հողը խոսպան չթողնելու պահանջ է ներկայացնում. ամեն տարի ժամանակին պետք է վարվեն, ցանվեն ու պարարտացվեն՝ առատ բերք ստանալու համար: Իսկ եթե որևէ մեկը արտը կամ այգին անմշակ է թողնում, այդ հողամասերի վար ու ցանքը իրականացնում է պետությունը: Իսկ եթե դրանից հետո էլ հողի սեփականատերը մինչև երեք տարի հողատարածքի հարցը չի լուծում, այսինքն՝ չի մշակում, ապա այդ հողատարածքը դառնում է Հայոց Տան սեփականություն: Եթե անձի նկատմամբ տեղի է ունեցել ավազակություն կամ նրա գույքի հափշտակություն, ապա նահանգի կառավարիչը այդ փաստերի մեջ հավաստիանալուց հետո պարտավոր է անձին հատուցել պատճառված նյութական վնասը և միջոցներ ձեռնարկել հափշտակողին հայտնաբերելու, պատժելու և հատուցած գումարը ստանալու համար (հոդված 112): Ինչպես տեսնում ենք, պետությունն իր վրա է վերցնում հանցագործությամբ անձին պատճառած նյութական վնասի հատուցումը:

Բոլոր տեսակի փաստաթղթերը՝ թե՛ առևտրական, թե՛ պայմանագրային, ում կողմից էլ ստորագրված լինեն, եթե հակասում են Հայաստանի օրենսդրությանը և մարդու բնական կենսագործունեությանը, չեղյալ են համարվում: Օրենքով պետությանը պարտավորեցնում է նաև պաշտպանության տակ առնել յուրաքանչյուր անձի, ով բնակվում է իր տարածքում, և եթե նա գերի ընկնի, Հայոց պետությունը «պարտավոր է փրկել նրան և վերադարձնել իր տանն ու ընտանիքին» (հոդված 138):

Հայաստանի յուրաքանչյուր բնակչի իրավունք է վերապահվում դատական հայց ներկայացնել առանց բացառության ցանկացած՝ այդ թվում՝ պաշտոնյա անձանց դեմ: Կալանավայրերը, մութ բանտերը պետք է լինեն մաքուր, հարմար, որպեսզի կալանվածի առողջությունը չտուժի, և արժանի լինեն հանցավորի գործերին (նկատի ունի կատարած հանցագործության ծանրության աստիճանը):

152-րդ հոդվածով արգելվում է երկրից գենք ու թանկարժեք մետաղներ արտահանել, իսկ թանկարժեք մետաղներ ներմուծողներին տրվում են արտոնություններ՝ հարկերից ու մաքսերից ազատման ձևով (հոդված 153):

Առանձնահատուկ են Շահամիրյանի իրավաձևակերպումները, որոնք վերաբերում են կանանց: Մասնավորապես ասված է. «Չպետք է գերի վերցնել իգական սեռի անձանց, լինեն քրիստոնյա, թե հեթանոս... իգական սեռի անձիք ազատ են բռնադատումից, եթե հանցավոր արարք թույլ չեն տվել»: Իսկ 371 հոդվածում արգելված է որևէ ծառայողի, որևէ իշխանի, ղեկավար պաշտոնատար անձի հրամանով էլ լինի, մտնել կանանց սենյակ, հատկապես ամուսնացած կանանց, քանի որ այդ սենյակը «սուրբ է և անարատ և ոչ մի աղմուկ, խռովություն ու տազնապ չենք ցանկանում մեր մայրերին և մեզ որդիներ ծնող կանանց: Բացառությամբ, եթե հարկավոր է ձերբակալել քրեական կամ մահվան դատապարտված հանցագործի»:

Ինչպես տեսնում ենք, «Որոգայթ փառաց»-ը ազգային քաղաքական սահմանադրաիրավական մտքի զարգացման նոր աստիճան է և ինքնատիպ արժեք համամարդկային սահմանադրական մշակույթի գանձարանում: Աշխատությունից ուղղակի հայրենասիրություն է ճառագում: Այն սոցիալ-քաղաքական մտքի թռիչք էր և, թվում է, թե 18-րդ դարի Պարսկաստանի և Թուրքիայի լծի տակ գտնվող Հայաստանում

առաջադիմական ուժգին հակաճորտատիրական, հանրապետական կարգը միակ հնարավոր առաջատար գաղափարն էր, որի իրականացմանը պիտի ձգտեին:

Շահամիրյանն ինքն իրեն համարում է «հայոց աշխարհի ամենաչնչիներից ու ամենախոնարհներից մեկը և, գրելով իր երկրի սահմանադրությունը, ոչինչ իր համար չի ակնկալում՝ ո՛չ իշխանություն, ո՛չ հարստություն, ո՛չ փառք», այլ առաջնորդվում է միայն «սիրով սեփական ազգի և մեր երկրի նկատմամբ»:

Հակոբ Շահամիրյանը մահացել է 29 տարեկան հասկանում Մալազիայի Մայաթա թերակղզում, որտեղ ունեցել է ծխախոտի սեփական ընդարձակ կալվածքներ: Նրա տապանաքարին գրված է. «Ողջույն ընդ քեզ, դամբարանիս գառն ընդերգող, տուր ազգիս ազատության յուրը, որին եղել եմ միշտ տենչող, թե մեր միջից հառնել է մեզ մի փրկիչ և կառավարող, որին աշխարհում հավետ և հույժ էի գանկացող...»⁵⁴⁰:

PATRIOTISM AND ARMENIAN STATEHOOD IN THE NORMS OF ARMENIAN LAW

AGHVAN HOVSEPYAN

Doctor of Law, Professor, General Prosecutor of RA (2004-2013),

Chairman of the RA Investigative Committee (2014-2018),

Doctor of Law, Professor,

Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is study and present the sources of Armenian law that contain provisions on patriotism and Armenian statehood.

To achieve this goal, our task is to investigate the legal and patriotic labor standards of Hakob and Shahamir Shahamirian's Girk Anvanial Vorokait Parats (Snare of Glory). It is no secret that the work "Vorokait Parats" is one of the most important documents of Armenian law, which for the first time in the reality of Armenia presents a holistic and orderly system of norms of various branches of law.

As a result of the research were applied both scientific (analysis, the principle of historicity) and special (comparative legal) methods.

The study of the above mentioned legal and patriotic norms gives us the opportunity to conclude that they play a key role in the development of our national, legal, political thought and are a kind of value radiating patriotism.

Key words: patriotism, Armenian law sources, formation of Armenian statehood, Vorokait Parats, Shahamir Shahamirian, Artsakh, khamsa.

⁵⁴⁰ Տե՛ս Մեսրոպ արք. Աղեթան, Հանդիպումներ, Ելու Յորթ, 1993, 215-225:

ПАТРИОТИЗМ И АРМЯНСКАЯ ГОСУДАРСТВЕННОСТЬ В НОРМАХ АРМЯНСКОГО ПРАВА

АГВАН ОВСЕПЯН

*Генеральный прокурор РА (2004-2013гг.),
председатель следственного комитета РА (2014-2018гг.),
доктор юридических наук, профессор
г.Ереван, Республика Армения*

Цель статьи изучить и представить те источники армянского права, которые содержат положения о патриотизме и армянской государственности.

Для достижения этой цели была поставлена задача исследовать юридическо-патриотические нормы труда Акопа и Шаамира Шаамирянов «Западня честолубия». Не секрет, что труд «Западня честолубия» является одним из важнейших документов армянского права, в котором впервые в реальности Армении представлена целостная и упорядоченная система норм различных ветвей права.

В результате исследования были применены как научные (анализ, принцип историчности), так и специальные (сравнительно-правовые) методы.

Изучение вышеуказанных юридическо-патриотических норм дает нам возможность сделать вывод о том, что они играют ключевую роль в развитии нашей национальной, правовой, политической мысли и являются своеобразной ценностью, излучающей патриотизм.

Ключевые слова: *патриотизм, источники армянского права, формирование армянской государственности, «Западня честолубия», Шаамир Шаамирян, Арцах, хамса.*

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

**ՏՆԱՅԻՆ ԱԾԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴԴՐՈՑԱԿԱՆԻ
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐ***

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոց համալսարան,
մանկավարժական գիտությունների թեկնածու. դոցենտ
anna.petrosyan5@gmail.com*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել տնային աշխատանքի դերը սովորողների ինքնուրույնության ձևավորման ու պարզացման գործում, վերլուծել կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա ներկայացնել առաջարկություններ:

Նպատակի համաձայն պահանջվել է լուծել հետևյալ խնդիրներ՝ դիտարկել 2-4-րդ դասարաններում տնային առաջադրանքների կազմակերպման հիմնական ձևերը, տնային աշխատանքի ստուգման գործընթացի առանձնահատկությունները, այդ դիտարկումների տեսանկյունից վերլուծել արդյունքները:

Հետազոտությունն իրականացրել ենք հետևյալ մեթոդներով.

1. Գրականության ուսումնասիրում. հայ մանկավարժության տեսության մեջ ու պրակտիկայում հիմնախնդրի դրվածքի, կրթական առարկայական չափորոշիչների ուսումնասիրում:

2. Փորձարարական մեթոդներ. դիտման, փորձարարական դասերի վարման և ունկնդրման, համակարգման մեթոդներ:

Հոդվածում փորձել ենք ներկայացնել տնային հանձնարարությունների որոշ առանձնահատկություններ: Կարծում ենք, որ մեր կրթական համակարգի պարզացման միտումները, կրթության նկատմամբ արդիային նկարագրով պայմանավորված առանձնահատուկ մոտեցումները թույլ են տալիս պնդելու, որ տնային հանձնարարությունները կարող են դիտարկվել որպես ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ, եթե դրանք հիմնովին վերանայվեն բովանդակային ու կազմակերպական առումներով: Դրա համար անհրաժեշտ է հատուկ կարևորություն տալ տնային հանձնարարությանը՝ դիտարկելով այն որպես ուսուցման ու աշակերտի ինքնուրույն գործունեության կարևորագույն բաղադրիչ, մշակել սովորողների հետաքրքրասիրությանը նպաստող, տրամաբանությունն ու երևակայությունը պարզացնող, առարկայական ծրագրերին համապատասխանող տարատեսակ ու բազմամակարդակ տնային հանձնարարությունների նյութեր:

Հիմնաբառեր՝ ինքնուրույն գործունեություն, ստեղծագործական մոտեցում, տնային աշխատանք, գործոններ, համընդհանուր աշխատանք, տարբերակված, խմբային, անհատական ստուգում, հետաքրքրության պարզացում, հրահանգավորում:

* Հոդվածը ներկայացվել է 28.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

**Ես կարծում եմ, որ բոլոր քիչ թե շատ արժեքավոր
բաները ես սովորել եմ ինքնակրթության միջոցով:
Չարլզ Դարվին**

Տնային աշխատանքն աշակերտի ծավալած ուսումնական գործունեությունն է, որը նա կատարում է ինքնուրույն: Այսինքն՝ տնային աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն աշակերտի ինքնուրույնության ձևավորումն է, որը մեծապես նպաստում է նրա՝ ուսումնաճանաչողական գործունեություն ծավալելու կարողության զարգացմանը:

Տնային հանձնարարությունները կատարելիս աշակերտը փորձում է ինքնաստուգման տարբեր ձևեր և ընտրում դրանցից իր համար լավագույնը, բացահայտում է իր հիշողության մակարդակը, ակնկալվող արդյունքին հասնելու համար դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ: Այս դեպքում միայն տնային հանձնարարությունների կատարման գործընթացը կդառնա ուսումնառության և ինքնակրթության խթանիչ: Այսինքն՝ տնային աշխատանքն առաջին հերթին ինքնակրթության ճանապարհ է:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ. վերառարկայական ուսումնական կարողությունների ու հմտությունների յուրացումը, ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու նկատմամբ հետաքրքրության զարգացումը, ստեղծագործելու փորձի ձևավորումն այն կարևորագույն բաղադրիչներն են, որոնցով պայմանավորված է ինքնակրթության կարողության ձևավորումը: Ինքնակրթության պատրաստ լինելն անհրաժեշտ որակ է սովորողի համար, և այն անհրաժեշտ է ձևավորել դեռևս կրտսեր տարիքից⁵⁴¹ :

Տնային ուսումնական աշխատանքի կազմակերպումը ուսումնադաստիարակչական գործընթացի շղթայում ամենաբարդ օղակն է: Բազմաթիվ ուսուցիչներ, ծնողներ այն կարծիքին են, որ տնային աշխատանքներ ընդհանրապես պետք չէ հանձնարարել: Նրանց կարծիքով, տնային առաջադրանքները տրվում են, որովհետև ուսուցիչը դասի ընթացքում չի կարողացել իր պարտականությունները կատարել և դա փոխլրացնում է մեծ ծավալով տնային աշխատանքներ հանձնարարելով: Իսկ ուսուցիչների կարծիքով, եթե տնային աշխատանք քիչ է հանձնարարվում, մեխանիկորեն նվազում է իր առարկայի դերն ու նշանակությունը: Ուզում ենք կարևորել ոչ այն, թե ինչ քանակությամբ առաջադրանք է հանձնարարված, այլ այն, թե ինչ է հանձնարարված: Մեր մանկավարժական փորձն ու հատուկ ուսումնասիրությունները հանգեցրել են այն համոզման, որ անհրաժեշտ է կարևորել տնային աշխատանքի բազմազանությունն ու հնարավորությունները, գնահատել դրանց դերն ու նշանակությունը դպրոցականի դաստիարակության և ուսումնառության գործում և առավելապես հանձնարարել այն, ինչ գետեղված չէ դասագրքում: Ի՞նչ են սիրում 6 – 10 տարեկան երեխաները. ոչ սովորական պատմություններ հորինել: Ուրեմն անհրաժեշտ է տալ նրանց այդ հնարավորությունը՝ գիտակցելով, որ երեխան ոչ թե մեթենա է, որը պարտավոր է կատարել որոշակի աշխատանք, այլ մարդ, որն աշխատանքից ուրախություն ու օգուտ է ակնկալում: Ուրեմն տնային աշխատանքներից ամեն դեպքում չի կարելի հրաժարվել: Սակայն անհրաժեշտ է տնային աշխատանք հանձնարարել այն դեպքում, երբ այն խստորեն հիմնավորված է, անհատականացված ու հետաքրքիր՝ հաշվի առնելով 2-4-րդ դասարաններում տնային աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները.

⁵⁴¹ Թորոյան Կ., Չիբուխյան Կ., 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների մասին, ՄԱՍ 1, Ե., «Չանգակ», 2013թ.:

Դասակարգենք այն պահանջները, որոնք վերաբերում են ինչպես ուսուցչին, այնպես էլ տնային հանձնարարությունների բնույթին:

Ուսուցիչներին վերաբերող պահանջներ	Առաջադրանքներին ներկայացվող պահանջներ
<p>1. Երաշխավորելի չէ տանը հանձնարարել այն, ինչն արդեն յուրացվել է դասարանում:</p> <p>- Անհրաժեշտ է ստույգ իմանալ, թե ինչ նպատակ է հետապնդում տնային աշխատանքը:</p> <p>- Ուսուցիչը պետք է ինքն իրեն հարց տա՝ ինչու՞ է հանձնարարում աշխատանքը, ի՞նչ նպատակ է հետապնդում այն, ի՞նչ կարողություն է զարգացնելու այլն:</p>	<p>1. Առաջադրանքի բովանդակությունը պետք է հասկանալի լինի յուրաքանչյուր աշակերտի, այսինքն՝ բոլոր աշակերտները պետք է իմանան, թե ինչ պիտի անեն և ինչպես պիտի անեն:</p>
<p>2. Յուրաքանչյուր առարկայից տրվող տնային առաջադրանքների ծավալը պետք է համապատասխանեցնել այլ առարկաներից տրվող տնային աշխատանքների ծավալին:</p>	<p>2. Առաջադրանքը չի ծառայի նպատակին, եթե դրա հետ միասին չտրվի համապատասխան հրահանգավորում:</p>
<p>3. Տնային աշխատանքի անհրաժեշտությունը պետք է լինի հիմնավորված: Եթե ուսուցիչը տվյալ օրն աշխատանքը կազմակերպել է այնպես, որ սովորողներն ամբողջ ուսումնական նյութը յուրացրել են դասի ընթացքում, ապա կարող է ընդհանրապես տնային աշխատանք չհանձնարարել:</p>	<p>3. Տնային աշխատանքը պետք է անպայման ստուգվի ուսուցչի կողմից:</p>
<p>4. Պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը՝ առանձին աշակերտների համար կարելի է մասնակիորեն անհատակացնել նրա նպատակը, ծավալը, կատարման հնարները:</p>	<p>4. Առաջադրանքը կարող է լինել տաբեր՝ համընդհանուր կամ համադասարանային, տարբերակված, անհատական և այլն. տեսակն ընտրելիս պետք է հաշվի առնել դասարանի ընդհանուր առանձնահատկությունները:</p>
<p>5. Տնային աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի 2-րդ դասարանում՝ 1,2 ժամը, իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 1,5 ժամը:</p>	<p>5. Առաջադրանքը չպետք է լինի միօրինակ. անհրաժեշտ է ներառել ոչ ստանդարտ հարցեր, դիտարկումներ կատարելու պահանջներ և այլն:</p>
<p>6. Մեկ ուսումնական առարկայից</p>	<p>6. Առաջադրանքը պետք է</p>

<p>տնային աշխատանքի կատարման վրա ծախսվող ժամանակը չպետք է գերազանցի 2-րդ դասարանում՝ 20 րոպեն, իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 30 րոպեն:</p>	<p>կողմնորոշի սովորողներին՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու, հարստացնի նրանց գիտելիքները, զարգացնի կարողությունները:</p>
<p>7. Տնային աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի դասարանում կատարած աշխատանքների 30%-ը:</p>	<p>7. Առաջադրանքներում պիտի ընդգրկվեն այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն ծրագրի հիմնական բաժինների կրկնությանը:</p>
<p>8. Դասագրքում գետեղված բարդ առաջադրանքները, որոնք առանձնացված են աստղանիշով կամ մեկ այլ տարբերակիչ նշանով, չի կարելի հանձնարարել տանը :</p>	<p>8. Ըստ բարդության աստիճանի՝ տնային աշխատանքը պետք է լինի մոտավորապես նույնը կամ փոքր-ինչ ավելի ոյուրին այն առաջադրանքներից, որոնք կատարվել են դասի ընթացքում:</p>
	<p>9. Առաջադրանքները կատարելիս աշակերտները կարող են հանդիպել որոշակի դժվարությունների: Դրանք պետք է հասանելի լինեն նրանց կարողություններին:</p>
	<p>10. Առաջադրանքները պետք է աշակերտից պահանջեն համեմատել, վերլուծել, ընդհանրացնել, դասակարգել հաստատել պատճառա-հետևանքային կապերը, ձևավորել եզրահանգումը, յուրացրած գիտելիքները կիրառել նոր իրավիճակում:</p>

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ տնային աշխատանքները հաճախ նախապես չեն պլանավորվում: Մեր երկարատև մանկավարժական փորձի ու ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ հիմնականում դա է տնային աշխատանքների միօրինակության և ձանձրալի բնույթի պատճառը: Բայց եթե նպատակադրումը դպրոցականի անձնային որակների, չափորոշչում սահմանված որոշակի կարողությունների զարգացումն է, ապա անհրաժեշտ է մշակել երկարատև ռազմավարություն, այսինքն՝ պետք է նախապես պլանավորել մի շարք տնային աշխատանքներ: **Այն ամբողջ ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է և անմիջականորեն պայմանավորված է ուսումնական գործընթացի նպատակներով:**

Փորձը ցույց է տալիս, որ կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են տնային աշխատանքների կատարման ընթացքում որոշակի դժվարությունների առաջացմանը: Դրանք են՝

- աշակերտները տնային աշխատանքի կատարման ընթացքում չեն անդրադառնում հանձնարարությանն առնչվող թեմային, մեխանիկորեն կարդում են առաջադրանքը՝ առանց հասկանալու դրա իմաստը: Ավելին, չեն կատարում ինքնաստուգում:

- Աշակերտները ճիշտ չեն պլանավորում տնային առաջադրանքների կատարման աշխատանքային ժամերը: Դա հանգեցնում է առաջադրանքների հապճեպ կատարմանը և ուսումնասիրվող նյութի մակերեսային յուրացմանը:
- Գրավոր տնային աշխատանքը շատ դպրոցականներ կատարում են՝ առանց նախնական տեսական նյութի յուրացման կամ կրկնության (անդրադարձի): Այդ պատճառով էլ նրանք թույլ են տալիս էական սխալներ:
- Դժվարություններ են ծագում նաև, երբ սովորողները ծանրաբեռնված են լինում տնային առաջադրանքներով:
- Կատարման արդյունքի վրա բացասաբար է ազդում նաև սովորողների կարողություններին անհամապատասխան առաջադրանքների հանձնարարումը:
- Ծանրաբեռնվածությունը հաճախակի պայմանավորված է ոչ միայն հանձնարարված տնային աշխատանքի ծավալով, այլև սովորողների նախապատրաստվածության մակարդակով:⁵⁴²

Չմոռանալ, որ 2-4-րդ դասարաններում տնային աշխատանք նպատակահարմար չէ հանձնարարել հանգստյան, տոնական օրերին և արձակուրդներին⁵⁴³:

ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Գոյություն ունեն մի շարք կանոններ, որոնք կօգնեն աշակերտներին ճիշտ կատարելու տնային աշխատանքները: Առաջին. սովորողները պետք է իմանան, որ գիտելիքների յուրացումն ու իմաստավորումը պետք է կրի կենտրոնացված բնույթ: Սա նշանակում է, որ ծրագրային նյութի ամբողջական ընկալման ու յուրացման համար անհրաժեշտ է սովորել դասերը ոչ թե «մի հայացքով», այլ որոշակի ժամանակի ընթացքում՝ մի քանի անգամ անդրադառնալով ուսումնասիրվող նյութին:

Երկրորդ. տնային աշխատանքն անհրաժեշտ է կատարել հանձնարարված օրը, որովհետև դասի ընթացքում ընկալված նյութը մոռացվում է առաջին 10-12 ժամվա ընթացքում: Հետազոտությունները ցույց են տվել, որ նյութի ուսումնասիրումից մեկ ժամ հետո աշակերտները մտաբերում են դրա 44%-ը, իսկ 2,5-8 ժամ հետո՝ միայն 28 %-ը:

Երրորդ. նախապատրաստվելով տնային աշխատանքի կատարմանը՝ անպայման անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական տրամադրվածություն այն ճիշտ կատարելու և ուսումնասիրվող նյութը գիտակցորեն ու ստեղծագործաբար յուրացնելու համար: Ինչպե՞ս դա անել: Պետք է մանրակրկիտ մշակել այն քայլաշարը, որ անհրաժեշտ է տնային աշխատանքի կատարման համար, հստակեցնել տնային աշխատանքի կատարման նպատակը, չտապել ու ջանալ այնպես ուսումնասիրել, որ տվյալ նյութը խորապես իմաստավորվի ու յուրացվի:

Չորրորդ. եթե տնային առաջադրանքը ներառում է դասագրքում գետնդրված ուսումնական նյութի յուրացումը, ապա դրա կատարումը պետք է սկսել տվյալ թեմայի ուսումնասիրումից. նախ՝ պետք է մտաբերել այն, ինչը մնացել է հիշողության մեջ, ապա՝ անհրաժեշտ է ուշադիր ընթերցել դասագրքի նյութը՝ առանձնացնելով գլխավորը, կատարելով եզրահանգումներ, ձգտելով նյութի յուրացմանն ու իմաստավորմանը: Դրանից հետո պետք է կիրառել վերարտադրելու և ինքնաստուգման հնարները. նյութի պատմում, ընթերցածի պլանի կազմում, դասագրքի մեթոդական կառույցի հարցերի պատասխանում և այլն: Եթե

⁵⁴² Шабалин П.. Домашняя учебная работа школьников, տե՛ղ ը ... 1985 ց.

⁵⁴³ Дремелов Х. и др., Домашние задания, М., 1989 ց.

ինքնաստուգման ընթացքում ծագում են դժվարություններ, անհրաժեշտ է մեկ անգամ ևս աշխատել դասագրքով:

Ինչպես նշեցինք, 2-4-րդ դասարաններում տնային առաջադրանքները հիմնականում կազմակերպվում է **համադասարանային, տարբերակված, անհա-տա-կան**, խմբային ձևերով⁵⁴⁴: **Համադասարանային տնային աշխատանքն** ամենատարածվածն է: Այդպիսի աշխատանքների անընդհատ կիրառումը չի նպաստում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, այնուամենայնիվ, դրանք բացառել պետք չէ, քանի որ դրանց կատարման ընթացքում մշակվում են զանազան հմտություններ, ձևավորվում են անհրաժեշտ կարողություններ:

Անհատական տնային աշխատանքը տրվում է, որպես կանոն, դասարանի առանձին աշակերտներին՝ որոշակի նպատակով: Այս դեպքում ուսուցչի համար դժվար չէ ստուգել տվյալ աշակերտի յուրացրած գիտելիքների ու կարողությունների մակարդակը: Այդպիսի աշխատանքը կարող է կատարվել քարտերի վրա կամ աշխատանքային տետրում: Անհատական տնային աշխատանքները տրվում են, որպեսզի վերացվեն այն բացթողումները, որոնք ունեն սովորողներն առանձին թեմաների ուսումնասիրման արդյունքում: Դրանք գործնական կարողությունների ու հմտությունների մշակմանը նպաստող մարզողական վարժություններ են: Անհատական տնային աշխատանքները կարող են տրվել բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին՝ ստեղծագործական կարողություններ ու հակումներ զարգացնելու նպատակով:

Խմբային տնային աշխատանքի կատարման ընթացքում սովորողների որոշակի խմբեր կատարում են ինչ-որ առաջադրանք, որը ընդհանուր դասարանին տրվող առաջադրանքի մասն է: Օրինակ՝ «Գին: Քանակ: Արժեք» թեմայի ուսումնասիրման ընթացքում առաջադրվում է տեղեկություններ ձեռք բերել տարբեր ապրանքների գների մասին. առաջին խումբը տեղեկանում է գրենական պիտույքների գների մասին, երկրորդ խումբը՝ խաղալիքների, երրորդ խումբը՝ մթերքների: Այս դեպքում տնային առաջադրանքը նախապատրաստում է սովորողներին այն աշխատանքին, որը պետք է անցկացվի դասի ընթացքում: Այդպիսի առաջադրանքները նպատակահարմար է հանձնարարաբեկ նախապես՝ պլանավորելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում պիտի սովորողներն ավարտեն հանձնարարությունը: Սա, փաստորեն, նախագծային աշխատանքի մի տարբերակ է, որը նպաստում է ինքնուրույն-որոնողական գործունեություն ծավալելու կարողության ձևավորմանը:

Տարբերակված տնային աշխատանքի մոտեցման հիմքը կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է, որն իրագործվում է տարբերակված առաջադրանքների միջոցով: Տնային աշխատանք հանձնարարելիս ամեն անգամ հարց է ծագում՝ ու՞մ ներուժը հաշվի առնել տնային աշխատանք հանձնարարելիս՝ ուժե՞ղ, միջի՞ն, թե՞ թույլ աշակերտի: Ուսուցիչները հաճախակի առաջադրում են տնային աշխատանքներ միջին աշակերտի մակարդակով, որովհետեւ եթե հանձնարարվի առաջադրանք թույլ աշակերտի մակարդակով, ապա ուժեղն այն կկատարի շատ արագ և չի ապրի այն հրճվանքը, որը կունենա իր ներուժին համապատասխան աշխատանք կատարելիս: Իսկ եթե հանձնարարվի ուժեղ աշակերտի մակարդակով, ապա թույլ աշակերտը դրա վրա կկորցնի ավելի շատ ժամանակ, ինչը, բնականաբար, վատ կանդրադառնա նրա ինքնագագացողության վրա. նա կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Միևնույն առաջադրանքը ուժեղների համար կարող է լինել հեշտ, իսկ թույլերի համար՝ բարդ: Արդյունքում ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չեն դրսևորի պատասխանատվություն տնային հանձնարարությունների կատարման նկատմամբ: Տվյալ խնդրի իրականացման

⁵⁴⁴ **Пронников В.А., Ладанов И.Д.**, Японцы, 2-ое издание, Наука, 1985 г., 348 с.

հիմնական ուղին տարբերակված մոտեցման ցուցաբերումն է տնային աշխատանքն առաջադրելիս: Ծավալի ու բովանդակության նկատմամբ տարբերակված մոտեցումն իրականացվում է սովորողների առանձնահատկությունների ու ճանաչողական հնարավորությունների հաշվառումամբ: Միայն այդ դեպքում է կատարվում գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ամրապնդում, տրամաբանական մտածողության, ինքուրույնության ձևավորում, ուսումնառության նկատմամբ պատասխանատվության զգացումի վերահսկում: Փաստորեն **տարբերակված տնային աշխատանքը առաջադրելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր անձի անհատական առանձնահատկությունները (ընդունակություններ, հետաքրքրություններ, մտավոր գործունեության առանձնահատկություններ և այլն):**

Տնային աշխատանքի ստուգման գործընթացն ունի որոշ առանձնահատկություններ. պետք է մշտադիտարկել ոչ միայն յուրաքանչյուր աշակերտի տնային աշխատանքի կատարման բարեխղճությունը, այլև ինքնուրույնությունը և ուսումնական նյութի յուրացման մակարդակը:

Տնային աշխատանքի ստուգումը կարող է կատարվել և՛ դասի սկզբում, և՛ դասի ընթացքում, և՛ դասի վերջում՝ այն համապատասխանեցնելով դասի փուլերին: Ստուգման ձևի ընտրությունը պայմանավորված է տնային առաջադրանքի տեսակով, նպատակով և դասի բովանդակությամբ:

Տնային աշխատանքը կարելի է ստուգել տարբեր եղանակներով: Դիտարկենք դրանցից մի քանիսը.

1. Առավել տարածված է տնային աշխատանքի **համադասարանային ստուգումը:** Ուսուցիչը տնային աշխատանքի բովանդակության շուրջ ամբողջ դասարանին տալիս է ընդհանուր հարց, աշակերտները տալիս են համառոտ պատասխան, նշում են դժվարությունները, որոնք հանդիպել են աշխատանքը կատարելիս: Ուսուցիչը բացատրում ու շտկում է սխալները, ամփոփում է կատարում:

2. **Անհատական ստուգումը** ենթադրում է մեկ կամ մի քանի աշակերտի բանավոր հարցում, որի ընթացքում մյուս աշակերտները հետևում են պատասխաններին, անհրաժեշտության դեպքում՝ լրացնում:

3. **Ընտրովի ստուգման** դեպքում ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը ներկայացնում է իր աշխատանքը (գրելով գրատախտակին, կարդալով և այլն), իսկ մյուսները այդ պատասխանի հիման վրա ստուգում են իրենց աշխատանքները: Եթե ուսուցիչը բացահայտում է, որ ներկայացնող աշակերտը կատարել է որևէ սխալ, ապա հարցնում է, թե ո՞վ է այլ կերպ գրել և դասարանի օգնությամբ պարզաբանում է, թե ինչպե՞ս կարող են ճիշտ կատարել առաջադրանքը:

4. Որոշ դեպքերում տնային աշխատանքի ստուգման փոխարեն սովորողներին **տրվում են նույնատիպ վարժություններ:** Դրանց կատարման մակարդակով կարելի է հայտորոշել տնային աշխատանքի որակը:

5. Կարելի է ստուգել նաև անուղղակիորեն՝ **թեստերի, այլ բնույթի ինքնուրույն աշխատանքների միջոցով**, այնպիսի առաջադրանքների, որոնց բովանդակության մեջ ընդգրկված են նյութեր, որոնք համարժեք են տնային առաջադրանքներին:

6. Ստուգման մի ձև էլ դասի ընթացքում **աշակերտի ակտիվությունն է**, եթե ակտիվության պատճառը տնային աշխատանքի կատարումն է:

7. Ստուգման կարևոր ձև է **փոխադարձ ստուգման կազմակերպումը:** Դասարանի բոլոր աշակերտների ներգրավումը տնային աշխատանքի ստուգման գործընթացում, սխալների, դրանց վերացման ուղիների քննարկումը նպատակահարմար է, քանի որ այն յուրաքանչյուր աշակերտի տալիս է պատկերացումներ յուրացման ու հնարավոր դժվարությունների հաղթահարման մասին: Հայտնի է, որ շատ սովորողներ ավելի հեշտորեն սխալներ են գտնում ուրիշի աշխատանքում, քան իրենց: Փոխստուգման անցկացումն առաջին հերթին կրում է

դաստիարակչական բնույթ, բարձրացնում է սովորողների պատասխանատվությունը, նպաստում է ինքնագնահատման բարձրացմանը:

Եթե որևէ աշակերտ չի կատարել տնային աշխատանքը, ապա ուսուցիչը պետք է անպայման բացահայտի դրա պատճառները: Դրանք կարող են լինել ամենատարբեր բնույթի: Այն դեպքում, երբ պարզվում է, որ առաջադրանքը բարդ է, պետք է պարզել, թե ինչու՞մ է դժվարացել և ինչպե՞ս կարելի է այն հաղթահարել:

Եթե տնային առաջադրանքը ուսուցիչը ոչ միշտ է դասապլանում նշում առանձին կետով, ապա տնային աշխատանքի ստուգումը դասի մի մասն է, և այն անհրաժեշտ է անպայման ներառել օրվա դասապլանում:

Արցախի հանրակրթական դպրոցներում կատարված մեր ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունից ելնելով՝ առաջարկում ենք «Մայրենի» դասընթացի շուրջ հանձնարարվել տնային աշխատանքի հետևյալ ձևերը՝ կարդալ տեքստը, որոշել, թե այն քանի մասից է բաղկացած, ամեն մասի համար մշակել հարցեր և պատասխանել դրանց, դասագրքում զետեղված հարցերով լրացնել մշակվածը, առանձնացնել տեքստից հենակետային բառերը, որոնք անձանոթ բառերի բացատրությունը բառարաններում, վերարտադրել տեքստը՝ հենվելով միայն հենակետային բառերի վրա, ըստ հենակետային բառերի՝ նյութը ներկայացնել տրամագրով կամ մշակել քայլաշար և այլն:

Կարող են նաև առաջադրվել ոչ ստանդարտ բովանդակությամբ տնային առաջադրանքներ.

1. եզրույթների բառարանի ինքնուրույն կազմում դրանք դասդասելով ըստ թեմատիկայի,
2. դասագրքի տեքստի հետազոտում,
3. խնդիրների ինքնուրույն կազմում,
4. ցուցադրական միջոցների, աղյուսակների, գծագրերի քայլաշարերի, համառոտագրերի մշակում,
5. կանոնների նոր տարբերակների մշակում, ձևակերպում և այլն,
6. թեստերի, առաջադրանքների, փոխստուգման համար քարտերի նախապատրաստում,
7. տեքստերի խմբագրում,
8. թույլ տված սխալների ուղղում,
9. նախապատրաստում ուսումնասիրվելիք թեմայի, տեղեկատվության որոնում, հատվածների, հոդվածների որոնում,
10. հետազոտական, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք ենթադրում են երկարատև ինքնուրույն աշխատանք (նախագծեր, ստեղծագործական աշխատանքներ և այլն):

Այսպիսով, տնային աշխատանքները նպաստում են աշակերտների ինքնուրույն աշխատանք կատարելու կարողության զարգացմանը, ինքնարտահայտմանը, տարաբնույթ ուսումնական գործունեություն կատարելու միջոցով ինքնադրսևորմանը: Այդպիսի տնային աշխատանքների կատարման ընթացքում մշակվում են նաև բառարանից, լրացուցիչ ու տեղեկատու գրականությունից օգտվելու կարողություններ, ձևավորվում է որոնողական, հետազոտական գործունեություն ծավալելու կարողություն:

HOMework AS A METHOD FOR DEVELOPING LEARNERS' ACTIVITIES

ANNA PETROSYAN

*PhD in Pedagogical Sciences, Associate Professor,
Mesrop Mashtots University,
Stepanakert, Republic of Artsakh*

The aim of the article is to study the role of homework in shaping and developing learners' autonomy and independence and to discuss their ability to engage in creative learning activities from this point of view. According to the aim the following problems were required to solve: to observe the basic types of doing homework tasks in grades 2 – 4, some peculiarities of homework inspection process, homework assignment forms in native language.

The research was done with the use of the following methods:

Literature study: the study of the problematic context in the theory and practice of Armenian pedagogy.

Experimental methods: testing, viewing, study and dissemination of advanced pedagogical experience, conducting and listening to experimental lessons, analysis of their results, coordination methods.

With this work we tried to present some of the features of homework assignments. We believe that trends in development of our education system, specific approaches to education based on national descriptions allow us to insist that homework assignment can be viewed as an important component of the learning process if it is thoroughly reviewed in content and organizational terms. It is important to pay special attention to the home assignment viewing it as an essential component of student learning and self-activity, to develop learners' interest, logic and imagination, materials for different multi-level assignments corresponding to the subject curriculum.

Keywords: *self-activity, creative approach, homework, factors, universal work, differentiated, group, individual check, development of interest, giving instructions.*

РАЗВИТИЕ СОБСТВЕННОЙ АКТИВНОСТИ УЧАЩИХСЯ ВО ВРЕМЯ ВЫПОЛНЕНИЯ ДОМАШНИХ ЗАДАНИЙ

АННА ПЕТРОСЯН

*Университет Месроп Маштоц,
кандидат педагогических наук, доцент,
г.Степанакерт, Республика Арцах (НКР)*

Цель данной статьи - изучить роль домашней работы в формировании и развитии самостоятельности учащихся, и с этой точки зрения обсудить вопрос развития их способности участвовать в творческой учебной деятельности.

Задачи статьи: рассмотреть основные типы домашних заданий в 2-4 классах, особенности процесса проверки домашнего задания и формы домашних заданий.

Исследование проводилось следующими методами:

1. Литературное исследование: изучение проблемного контекста в теории и практике армянской педагогики.

2. Экспериментальные методы. Использовались тестирование, наблюдение, изучение и распространение передового педагогического опыта, преподавание и прослушивание экспериментальных уроков, анализ их результатов, координация.

В данной работе мы постарались представить некоторые особенности домашних заданий. Мы считаем, что тенденции в развитии нашей системы образования, специфические подходы к национальному образованию позволяют нам утверждать, что домашние задания можно рассматривать как важный компонент образовательного процесса, если они тщательно проанализированы как с точки зрения содержания, так и с точки зрения организации. Это требует особого внимания к выполнению домашнего задания, так как оно является важным компонентом самостоятельной работы и самостоятельной деятельности учащихся, развития любознательности учащихся, развития логики и воображения, выполнения индивидуальных и многоуровневых домашних заданий.

Ключевые слова: *самодеятельность, креативный подход, домашняя работа, факторы, глобальная работа, дифференцированная, групповая, индивидуальная проверка, развитие интереса, обучение.*

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

**ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՅՈՑ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*ՀՀ Արմավիրի մարզի «Արտաշարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄ-ի, հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hasmik.hovsepyan.1991@mail.ru*

Հետապոտության նպատակը Բագրատունիների հայոց պետականության կործանման պատճառների բացահայտումն ու հիմնավորումն է՝ ըստ Գրիգոր Մագիստրոսի թղթերի:

Հետապոտության խնդիրն է վերլուծելով Գրիգոր Մագիստրոսի՝ Անիի պետականության վերջին շրջանի պատմական իրադարձությունների գնահատության տեսակետից արժեքավոր թղթերը՝ ներկայացնել վերջինիս՝ քաղաքական ներքին ու արտաքին հակասությունների վերաբերյալ ուշագրավ մեկնաբանությունները:

Հետապոտությունն իրականացրել ենք հետևյալ մեթոդների միջոցով՝ համեմատություն, վերլուծություն (անալիզ), վերացարկում, համադրություն (սինթեզ), դեդուկցիա:

Հետապոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությանը. ըստ Գրիգոր Մագիստրոսի նամակների՝ Անիի պետականության կործանման պատճառը Գագիկ Երկրորդի անփորձ լինելն էր, Վեստ Սարգսի՝ կենտրոնաձիգ պետությանը չենթարկելու հանգամանքը: Չնայած Վեստ Սարգսի բացահայտ դավադիր քայլերին՝ դյուրահավատ արքան շարունակում էր վստահել նրան՝ այդպիսով բռնելով կործանման ուղին և փոխարենը հալածական վերաբերմունք էր դրսևորում Պահլավունի իշխանի նկատմամբ, որը, Վեստ Սարգսի դեմ դուրս գալով, կանխել էր վերջինիս կողմից հայոց գահին տիրանալը՝ թագավորեցնելով Գագիկ Երկրորդին:

Հիմնաբառեր՝ Բագրատունիների հայոց պետականություն, Գագիկ Երկրորդ, Գրիգոր Մագիստրոս, պատմական թղթեր, Վեստ Սարգսի, դավաճանություն, հալածանքներ, նվաճված պետականություն:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Բագրատունիների հայոց թագավորության վերջին շրջանի իրականության ժամանակակիցներից, կերտողներից ու ապա նվաճված պետականության անմիջական վերապրողներից է: Գիտական աշխարհին հայտնի է իր բազմամտով թղթերով, որոնք ֆրանսիացի անվանի հայագետ Վիկտոր

* Հոդվածը ներկայացվել է 28.09.2019թ., գրախոսվել՝ 12.11.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Լանգրուան համարում է Եպիստոլյար ժանրի բացառիկ դրսևորումներ⁵⁴⁵: ԺԱ դարի այս մտավորականից հայտնի են նաև «Տաղասացութիւն ներիուն առն Գրիգորի Մագիստրոսի ուղղափառ իշխանի» չափածո ստեղծագործությունը և «Քերականութեան մեկնութիւն» աշխատությունը⁵⁴⁶: Այս ստեղծագործությունների ընդօրինակություններից պահպանվել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր մատյաններում (98, 739, 874, 1138, 1638, 1715, 1739, 1740, 1741, 1742, 1744, 1748, 1752, 1764, 1797, 1805, 1813, 1837, 2079, 3062, 3068, 3130, 3172, 3293, 3860, 3914, 3917, 4207, 4232, 4330, 4337, 4424, 4669⁵⁴⁷, 5066, 5205, 5997, 6009, 6045, 6331, 6346, 6485, 6562, 6734, 6897, 6988, 7257, 7581 8312, 9827, 10182⁵⁴⁸, 10485, 10982⁵⁴⁹):

Մեր ուսումնասիրության նյութը Մագիստրոսի՝ պատմական բովանդակություն ունեցող թղթերն են, որոնցում վերջինս ներկայանում է քաղաքական խնդիրների ընկալումների յուրովի տրամաբանությամբ, ներքին ու արտաքին հակասությունների ուշագրավ գնահատություններով: Ընդ որում, ԺԱ դարի պատմաքաղաքական դրվագների և դրանց շուրջ ստեղծված իրողությունների ու հարաբերությունների բարդ համակարգն արտացոլող մագիստրոսյան թղթերը կարելի է դիտարկել ժամանակագրական վերլուծության համատեքստում: Այսպես՝ հետաքրքրական փաստեր և ճանաչողական արժեք ունեցող պատմական հարցերին անդրադարձող նամակներում երեք հիմնական խմբով կարելի է ենթակարգել. ա) թղթեր, որոնք գրվել են Գագիկ 2-րդի գահակալությունից առաջ՝ Յովհաննես Սմբատի և Աշոտի գահակալության շրջանում («Առ տեր Պետրոս, ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին, ի վերայ Նորա. բան միսիթարական եւ հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Զննիկոն անուանեն», «Առ հոգեւոր տերն Պետրոս կաթողիկոս ի ժամանակին, յորում ի կապանաց իւրոց վերստին յաջորդեաց յաթոռ իւր, խնդրեալ ի Գրիգորէ զգիր սրբոյն Եփրեմի Յաւատոցն, զոր ընթեռնոյր մինչ ի բանտին եր»), բ) թղթեր, որոնք գրվել են Գագիկ 2-րդի գահակալության ընթացքում («Պատասխանի

⁵⁴⁵ Տե՛ս **Դրուխանյան Ա.**, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, (ուսումնական ձեռնարկ), Ե., 2012թ., էջ 37:

⁵⁴⁶ «Տաղասացութիւնը...» լույս է տեսել 1825 թ. Կոստանդնուպոլսում, իսկ 1868-ին տպագրվել Վենետիկում «Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաունույ» վերնագրով: Իսկ ինչ վերաբերում է «Քերականութեան մեկնութիւն» աշխատությանը, դրան անդրադարձել է Նիկողայոս Ադոնցն իր հայերենագիտական ուսումնասիրություններում: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին մեզ հայտնում է, որ Մագիստրոսն այս աշխատությունը գրել է որդու՝ Գրիգոր Վկայասերի խնդրանքով, մեջբերելով. «Ապա աշխարհս Հայոց ժողովեալի մի վայր՝ կացուցին հայրապետ զտեր Վահրամ զոր անուանեցին Գրիգորիս. զորդին Գրիգորի Մագիստրոսի՝ ի քաղաքէն Բջնոյ, զթոռն Վասակայ մարտիրոսի, զայր իմաստուն և առաքինի: Սա խնդրեաց յիւրմէ մեկնել զարուեստն քերականի, զի էր նա իմաստասեր. և մեկնեաց զնա արուեստաւոր բանիս» (Կիրակոս Վարդապետ Գանձակեցի, Համառոտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւորս իւր լուսբանեալ, Վենետիկ, 1865, էջ 54): Ն. Ադոնցը նշում է, որ «Գրիգորի՝ մեծ հեղինակություն վայելող քերականական երկասիրությունը հետագայում դուրս է մղվել դարոցից և առհասարակ գործածությունից Յովհաննեսի ավելի հանգամանալից բանաբաղով, որը լույս է ընծայվել 1923 թ.: Դրանով է բացատրվում Մագիստրոսի գործի համեմատաբար հազվադեպ լինելը» (Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, հատոր Գ, Երևան, 2008, էջ LX):

⁵⁴⁷ Ցուցակձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատորԱ/ կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա.Չեյթունյան, Փ.Անթաթյան/ ներածությունը՝ Օ.Եզանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965:

⁵⁴⁸ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ/ կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա.Չեյթունյան, Փ. Անթաթյան/ ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եզանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970:

⁵⁴⁹ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Գ/ կազմեց՝ Ա. Մալխասեան, խմբագրությամբ՝ Ա. Տեր-Ստեփանեանի, Երևան, 2007:

Սարգիս վարդապետի եւ ողբ ի վերայ Արամեանս Նահանգի», «Պատասխանի Սարգսի վարդապետին», «Ան վարդապետն Սարգիս ի ժամանակի հալածանաց զոտաց ի մայրաքաղաքն Անի», «Ան որդին Աշոտի պատասխանի, մինչ զօրէն իւր գրեր բանս կեղերջականս»), գ) թղթեր, որոնք գրվել են Գագիկ 2-րդի գահակալությունից հետո («Պատասխանի կաթողիկոսին յաղագս Գագկայ, որ ասեր թէ խորհին կորուսանել զքեզ», «Ան վարդապետն Սարգիս», «Պատասխանի թղթոյն Գագկայ որդւոյն Աշոտոյ, եկեալ վասն ոչինչ իրաց վայրապար զկնի կրօնաւորաց սակս պարտուց ինչ նոցա ի գաւառէն Տարօնոյ»): Խնդրո առարկա թղթերը եղել են նաև պատմաբան Կարեն Մաթևոսյանի ուշադրության կենտրոնում: Վերջինս «Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս» գրքում ներկայացրել է կաթողիկոսական աթոռի անցումը Պահլավունիներին, Բագրատունյաց թագավորության ճզևաժամը, Պետրոս կաթողիկոսի գործունեությունը, Պահլավունիների և կաթողիկոսի հարաբերությունները, Գրիգոր Բջնեցու գործունեությունը մինչև մագիստրոսության արժանանալը, Գագիկ 2-րդին թագադրելը և մագիստրոսի կոչում ստանալը, Վահրամ Պահլավունու մահը, կաթողիկոսության հեռացումն Անիից, ժամանակի վախճանաբանական կանխատեսումները և Գրիգոր Մագիստրոսի ծրագիրը⁵⁵⁰:

Նամակներում Մագիստրոսի հիմնական թղթակիցներն են Գագիկ արքան, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, Սարգիս Անեցի վարդապետը: Նշենք նաև, որ պատմաբան Կարեն Մաթևոսյանը Սարգիս վարդապետին ուղղված հինգ թղթերին՝ ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ, անդրադարձել է նաև իր «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը» աշխատության մեջ: Վերջինս կարևորում է այդ թղթերը Սարգիս վարդապետի կենսագրության, հեղինակության, գիտական և ուսումնական հմտության վերաբերյալ կարևոր նյութեր պարունակելու տեսակետից⁵⁵¹:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Պետրոս կաթողիկոսի հետ «կապուած էր առանձին իմ սիրով և յարգանքով»⁵⁵², և նրա հետ նամակագրական կապի մեջ է եղել նաև այն իրադարձությունների ընթացքում, երբ Յովհաննես Սմբատի և Պետրոս Ա-ի հարաբերությունները սրվել են, ինչպես Սմբատ պատմիչն է ասում, «վասն զի թագաւորն և ամենայն նախարարքն ոչ լսէին նմա, զինչ և խօսէր ընդ խօսա վասն պատուիրանացն Աստուծոյ.....»⁵⁵³, որի հետևանքով «Ի ՆՁՁ (1037) թվին Յայոց զայրացել տէր Պետրոս կաթողիկոսն յԱնի ի Յովանես թագաւորէն եւ յիշխանացն եւ զնացեալ ի Վասպուրական գաւառ եւ եկաց Դ (4) ամ ի Ձորաւանս Սալնապատի, զոր շինեալ էր տէր Ներսէսի: Եւ ապա խաբանօք յուղարկեալ տարան յԱնի եւ եղին յարգելանի»⁵⁵⁴, և նրա փոխարեն կաթողիկոս «նստուցին» Սանահինի հայր Դեոսկորոսին՝ «առանց ժողովոյ եպիսկոպոսաց և քահանայից. և ոչ ոք էր որ ընդունէր զնա, և ոչ քարոզեցաւ անուն նորա ի սուրբ եկեղեցի ընդ այլ հայրապետսն, վասն զի ամենեքեան անարժան համարեցան զնա»⁵⁵⁵, արդյունքում ինչպես կարդում ենք Սամվել Անեցու ժամանակագրության մեջ, սաստիկ բարկացան բոլոր եկեղեցականները «եւ ոչ յինէր խաղաղութիւն մինչեւ եկեալ Աղուանից կաթողիկոսն համոզեաց զնոսա ի խաղաղութիւն մեծաւ աղաչանօք հանեալ զԱր Պետրոս ի

⁵⁵⁰ **Մաթևոսյան Կ.**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015, էջ 36-83:

⁵⁵¹ Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 330-335:

⁵⁵² Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով և ծանօթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ.Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910, էջ 285-286:

⁵⁵³ **Սմբատ Սպարապետ**, Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, 1956, էջ 31:

⁵⁵⁴ **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, ժամանակագրութիւն, Երևան, 2014, էջ 185:

⁵⁵⁵ **Սմբատ Սպարապետ**, Մատենագրութիւնք նախնեաց, էջ 32:

բանդէն եւ յուղարկեալ գԴեոսկորոս ի վանս իւր»⁵⁵⁶: Սմբատ պատմիչը ուղարկվել բառի փոխարեն գործածում է արտաքսվել բառը. «...իսկ զանօրինեալ եպիսկոպոսապետն Դեոսկորոս մեծաւ նախատանօք արտաքսեալ, սուգ մեծ հասուցին նմա»⁵⁵⁷, պատճառը Դեոսկորոսի անչափ ամոթալի արարքներն էին, Մատթեոս Ուռհայեցին այս մասին գրում է, որ նա հանդգնություն ունեցավ կամայականորեն բազմաթիվ անարժանների եպիսկոպոս ձեռնադրել, առաջ քաշել բոլոր նրանց, ովքեր գործած բացահայտ հանցանքների պատճառով նախկին հայրապետների կողմից մերժված էին այթոռից, հայոց աշխարհի եպիսկոպոսներն ու վարդապետները նզովեցին թագավորին և բոլոր հայոց նախարարներին ելեղեցու ներսում ստեղծված հակառակության համար⁵⁵⁸: Այս պայմաններում «...Գրիգոր Բջնեցին միջնորդի դեր ստանձնեց հայ իշխանների ու խռովյալ հայրապետի միջև, Պետրոսը մեղմացավ և իշխաններին թույլ տվեց հորդորներով խորտակեն իր անդրդվելիության դարպասները, մոտենան իր բարկության անմատույց բարձունքին և դեսպանախոսության ճոպան նետեն իր անձկության տապանը»⁵⁵⁹: 1038-ին Պետրոս կաթողիկոսը վերահաստատվում է կաթողիկոսական աթոռին, իսկ Սանահինի վանքի առաջնորդ, գիտնական Դեոսկորոսին «...շուտով ձգեցին, երկու կողմանէ ալ տհաս ընտրութեամբ եւ հաւանութեամբ, յորմէ սրտցաւութիւն և մահ պատճառեցաւ Դեոսկորեայ»⁵⁶⁰: Վարդան Արևելցին, որը չի անդրադարձել դեպքի մանրամասներին, Դեոսկորոսի հանդեպ իր գնահատությունների մեջ միայն ընդգծված համակրանք ունի, իր պատմության մեջ գրում է, որ երբ Աղվանքի Յովսեփ կաթողիկոսի միջամտությամբ Պետրոս հայրապետը հաստատվում է իր աթոռին, «...Դիոսկորոսը՝ առաքինի և սուրբ այդ մարդը, վերադարձավ իր վանքը»⁵⁶¹:

«Առ տեր Պետրոս, ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին, ի վերայ նորա. բան միսիթարական եւ հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Զննիկոն անուանեն» թղթում (թուղթ Բ)բացի այն, որ Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսին իր մտահոգությունն է հայտնում, որ Անանիա Շիրակացու գրվածքները, որոնք «բազում աշխատութեամբ» և «յածաշու խոնջմամբ» հաւաքել էր զանազան և «յոքնաբեղուն» մատյաններից, անուշադրության են մատնվել և առաջ է քաշում դրանց գիտական ըմբռնման և գնահատության հարցը, նա նաև իր միսիթարական խոսքն է ուղղում կաթողիկոսին՝ նրա անվան շուրջ ծագած հասարակական դժգոհությունների առիթով՝ դա կապելով արամյան անմտության հետ. «զի Արամեան անմտութիւն զայս ոչ մի անգամ կամ երկիցս բայց եւ բազում անգամ յամառեալք...»⁵⁶² և հիշեցնում է, որ Գրիգոր Լուսավորչին, Յովներոսին, Դենսթենեսին, Ողիսևսին նույնպես հալածել են, Պլատոնը «ի Սիկիլիայ վաճառեալ»⁵⁶³, Սոկրատեսը մեռել է «սակս համբակացն դիտողութեան եւ ի կատական հեզնաբանութիւնսն»⁵⁶⁴:

Թղթում Մագիստրոսն ընդգծում է կաթողիկոսի արժանիքները, արդար ու ողջախոհ լինելը և քաջալերում է, որ ստեղծված «տկար» դրությունը նրա նման վսեմ մարդուն միայն ու միայն առավել կզօրացնի.«... քանզի յորժամ տկարանամք, յայնժամ զօրանամք.եւ հոգին ի թիկունս հասանէ տկարութեան մերում. քանզի որ զփորձ առեալն է, կարող է փորձաւորացն օգնական լինել»⁵⁶⁵:

⁵⁵⁶ Նույն տեղում:

⁵⁵⁷ Նույն տեղում, էջ 32-33:

⁵⁵⁸ **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 51-52:

⁵⁵⁹ **Գրիգորյան Վ.**, Դար կորոսյան, Երևան, 1985, էջ 83:

⁵⁶⁰ Շնորհայի և պարագայ իւր, գրեաց Յ. Ղևոնդ Մ. Ալիշան, Վենետիկ, 1873, էջ 132:

⁵⁶¹ **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 140:

⁵⁶² Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 6:

⁵⁶³ Նույն տեղում, էջ 5:

⁵⁶⁴ Նույն տեղում:

⁵⁶⁵ Նույն տեղում, էջ 7:

Պետրոս կաթողիկոսին ուղղված Ա թուղթը, որն ունի հետևյալ խորագիրը՝ «Առ հոգեւոր տէրն Պետրոս կաթողիկոս ի ժամանակին, յորում ի կապանաց իւրոց վերստին յաջորդեաց յաթոռ իւր, ինկորեալ ի Գրիգորէ զգիր սրբոյն Եփրեմի Յաւատոցն, զոր ընթեմնոյր մինչ ի բանտին էր», գրվել է այն ժամանակ, երբ կաթողիկոսն արդեն ազատ էր արձակվել, վերանշանակվել աթոռին և Մագիստրոսից խնդրել Սուրբ Եփրեմի գիրքը, որն ընթերցել էր բանտում եղած ժամանակ: Նամակում չկան մանրամասներ կաթողիկոսի բանտարկության, ապա վերստին աթոռին նշանակվելու մասին: Այստեղ կա ստեղծված իրադարձությունների վերաբերյալ Մագիստրոսի վերաբերմունքը: Նա խորին ակնածանքով է դիմում կաթողիկոսին, գնահատում նրա՝ հավատի մեջ հաստատուն լինելը, բանտարկության ու միայնության մեջ միայն ու միայն հավատին ապավինելը. «... վասն զի ըղձալի էր քեզ քան զոսկի եւ քան զարծաթ. վասն զի պատուիրանք Տեառն յոյս են եւ յոյս տան աչաց, եւ յայնմանէ երկիւղ սուրբ, որ մնայ յաւիտեան»⁵⁶⁶:

Պատմական բովանդակության տեսակետից հետաքրքրական է Պետրոս կաթողիկոսին ուղղված մի այլ նամակ՝ «Պատասխանի կաթողիկոսին յաղագս Գագկայ, որ ասեր թէ խորհին կորուսանել զքեզ» վերնագրով: Բովանդակությունից կարելի է ենթադրել, որ նամակը գրվել է Գագիկ արքայի՝ խաբեությամբ Յունաստանում արգելափակվելուց հետո: Մագիստրոսը խորին ցավ է ապրում, որ չնայած իր այդքան ջանքերին՝ չի կարողացել կանխել Բագրատունիների հայոց պետականության կորուստը, և այդ կորստի բեռը ծանրացել է նաև նրա ուսերին: Սակայն այդ ժամանակ Պահլավունի իշխանը բախվել էր պատմաբաղադրական իրավիճակը լոջորեն գնահատելու փաստին, և վերջինս վճռում է նախաձեռնող լինել՝ իր կամքով Բջնիի բանալին հանձնելով Մոնոմախ կայսերը: Խնդիրն այն էր, որ Գագիկն արդեն հավատացել էր թագավորի երդումներին և գնացել նրա մոտ, իսկ վերջինս, ինչպես գրում է Արիստակես Լաստիվերցին, չէր մտաբերել ո՛չ երդումները, ո՛չ էլ խաչի միջնորդությունը, փակել էր նրան և պահանջել, որ իրեն տա Անին⁵⁶⁷: Այս հանգամանքներում է Մագիստրոսը շտապում Մոնոմախ կայսեր մոտ՝ իրավիճակը փրկելու և Գագիկին հետ բերելու նպատակով, սակայն իրադարձությունները մեզ հայտնի ձևով են զարգանում: Լաստիվերցի պատմիչն այս մասին գրում է. «Երբ այս խնդիրը երկարածգվեց, քաջ Վասակի որդի Գրիգորը, որ իմաստուն և աստվածաբանությանը հույժ քաջահմուտ մարդ էր, որի նմանը ոչ ոք չկար, վեր կացավ գնաց թագավորի մոտ: Երբ տեսավ, որ Գագիկին չեն թողնելու վերադառնա իր երկիրը, թագավորին ներկայանալով՝ հանձնեց նրան Բջնու բանալին ու իր հայրական բոլոր կալվածները և նրա կողմից մեծարվելով ստացավ մագիստրոսության պատիվ ու բնակության տեղ Միջագետքի սահմաններում գյուղեր ու քաղաքներ, գրով ու ոսկյա կնիքով հաստատված, որպես ազգեագգ հավիտենական ժառանգություն»⁵⁶⁸: Վարդան Արևելցին նշում է այն կալվածքների անունները, որոնք Մագիստրոսը հանձնել էր կայսերը. «Այդ ժամանակներում քաջ Վասակի որդի Գրիգորը Բջնին, Կայանը, Կայծոնը, որոնք իր ձեռքի տակ էին, տալիս է Մոնոմախին և փոխարենն ստանում է Միջագետքի դքսությունը»⁵⁶⁹:

Հայոց պետականությունն այլևս չկար և չկար Հովհաննես Սմբատի կտակի, Գագիկ արքայի անփորձության պատճառով, և որպեսզի երկինքը հիմնովին չփլուզվեր հայոց աշխարհի վրա, կարծում ենք՝ Մագիստրոսը փորձեց այդ կերպ փրկել դրությունը: Իհարկե, միևնույն ժամանակ հետաքրքրական է Պետրոս Գետադարձի նկատմամբ Գրիգոր Մագիստրոսի դրական վերաբերունքն այն պարագայում, երբ

⁵⁶⁶ Նույն տեղում, էջ 4:

⁵⁶⁷ Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971, էջ 36:

⁵⁶⁸ Նույն տեղում, էջ 36:

⁵⁶⁹ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, էջ 142:

«Անին քյուզանդական կայսերը հանձնել են Վեստ Սարգիսը և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը»⁵⁷⁰: Թղթի վերջին մասում նա պատմում է արտույտի մասին ժողովրդական առակը: Արտույտը փորձում էր զգուշությամբ մեջքի վրա պառկած ոտքերով պահել երկինքը՝ կանխելով վերջինիս փլուզումը երկրի վրա: Եվ երբ նրան ծաղրելով հարցնում են, թե ինչպես է իր ծնկներով երկինքը պահելու, թռչունը պատասխանում է՝ որքան կարողանում է, այդքան էլ պահում է: Մագիստրոսն իրեն համեմատում է այդ արտույտի հետ. «Արդ իմ ծղձ ծնագոթս է. օգնական է սրբոյն Գրիգորի եւ Արամեան Նահանգիս, զոր Երեմիաս ի Տեառնէ կոչէ յօգնականութիւն...»⁵⁷¹: Այստեղ ուշագրավ է մի ուրիշ հանգամանք ևս. Մագիստրոսը ստեղծված անօգնական դրույթան մեջ մեղադրում է հայրենիքը ծախողներին, և այդ վաճառքի պատճառով է, որ սեփական երկրից «... հալածական լեալ փախչիմք, Տեր արասցէ դատաստան»⁵⁷²: Եվ առաջին հերթին հենց ինքը՝ Գագիկն է իբրև գերի կալանավորվել «հեռավոր աշխարհում»: «Այս վաճառքն,- գրում է Լաստիվերցին,- ինձ ավելի անմարդկային է թվում, քան Զուդայինը, որովհետև այն ժամանակ, թեև վաճառվողը անարգանքի ենթարկվեց, բայց վաճառը գին եղավ ամբողջ աշխարհի փրկության... իսկ այստեղ՝ վաճառողը չափազանց տմարդի էր ու անգուրթ, որովհետև այսքան չարիքների պատճառ դարձավ, որովհետև այն այգին, որ տերը տնկեց և մեր Լուսավորիչը իր տասնհինգամյա քրտնաջան աշխատանքով մշակեց, ցանկապատը քանդելով ու աշտարակները կործանելով, դարձրեց օտարների ոտքի կոխան... Այս բոլորի լուրը թող տիրոջը հասնի, և նրա դատաստանը թող տերը տեսնի»⁵⁷³:

Մագիստրոսն անմիջապես Գագիկ 2-րդին ուղղված երկու թուղթ ունի՝ «Առ որդին Աշոտի պատասխանի, մինչ զհօրեն իւր գրեր բանս կեղերջականս» (թուղթ ԶԲ), «Պատասխանի թղթոյն Գագկայ որդւոյն Աշոտոյ, եկեալ վասն ոչինչ իրաց վայրապար զվնի կրօնաւորաց սակս պարտուց ինչ նոցա ի գաւառէն Տարօնոյ» (թուղթ ԶԳ): Թղթերն ամբողջական պատկերացում են տալիս Պահլավունի իշխանի և Գագիկ 2-րդի բարոյ ու անառողջ փոխհարաբերությունների մասին: Մագիստրոսն իր մտահոգությունն է հայտնում այն հարցի շուրջ, թե իր նկատմամբ հալածանքների ալիքը իրատեսական հիմքեր չունի, և խոհեմ արքան չէր կարող չըմբռնել այդպիսի առերևույթ մեղադրանքների անարդարացիությունն ու չար միտումները: Այնուամենայնիվ, տարակուսանքով, կեղծիքով և անօրեն խորհուրդներով չափտի կաշկանդել սեփական միտքը: Այսպիսի դիտողությունն ուղղված էր հենց Գագիկ արքային, և այս հիմնական գաղափարի շուրջ է տարածվում ԶԲ թղթի բովանդակությունը: Նամակից պարզ է դառնում, որ Գագիկ արքան սպառնացել է անիծել իրեն, ի պատասխան դրան, Մագիստրոսը գրում է, որ ինքը ոչ մի գաղտնի նենգության գիտակ չէ և արքայի՝ անիծելու սպառնալիքին կարող է միայն նրա համար աղոթելով արձագանքել. «... դու սպառնաս անիծանել, այլ ես աղօթել ի վերայ քո. զորս ոչ երբեք սխալեցի եւ ոչ սխալեմ...»⁵⁷⁴: Եվ ավելացնում է, որ եթե իրեն խռովարար է կարծում, թող տիրոջ առաջ ասի, որովհետև ինքն անմեղ է. «...գիւրճ ճանաչես գիւ՝ հալածելոցն հաւաքի՞չ կամ խռովութեան շիջուցի՞չ, եթէ ընդ խազմարարս խռովիչ, ասա՛ առաջի Տեառն»⁵⁷⁵: Այսպիսի անհաշտ ու հակասական մթնոլորտը տիրապետող է նաև Գագիկ 2-րդին գրված հաջորդ՝ ԶԳ թղթում, որի բովանդակությունից պարզ է դառնում, որ գրվել է այն ժամանակ, երբ արքան բանտարկված էր: Նամակի վերջին մասում արքային ցավեցնելու համար սուր շեշտերով Մագիստրոսը նշում է բոլոր այն տարածքները, որոնք Մոնոմախ կայսեր կողմից էր ստացել, և որոնց վրա իշխում էր, մինչդեռ Գագիկը

⁵⁷⁰ **Դյուլխանյան Ա.**, Ֆրանսիացի հայագետների (XIX-XX դարեր), էջ 183:

⁵⁷¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 13:

⁵⁷² Նույն տեղում:

⁵⁷³ **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, էջ 35:

⁵⁷⁴ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 210:

⁵⁷⁵ Նույն տեղում:

կորցրել էր իր իշխանությունը. «Ե՛կ տե՛ր իմ, Վասպուրականի եւ Տարօնոյ եւ Մանազկերտի, Արծիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տե՛ր եւ Մոնումախին մագիստրո՛ւս, վեստ եւ տուկ ի խարբի որդւոյդ ի գանգատ գնա՛չէ, մի՛ աւատայք: Բայց յմատուծոյ երկնչիմ յայն, յոր յուսամ, որում երկրպագեմ»⁵⁷⁶: Բայց և այնպէս, Մագիստրոսը պատրաստ է ներել արքային և աստծուց կյանք ու բարի միտք է խնդրում նրա համար: «... եւ ես ներեմ եւ աղաչեմ, որ ձեզ կեանք տայ եւ բարի միտս, ողջ լի՛ք»⁵⁷⁷:

Գագիկի բանտարկությունը Մագիստրոսը կապում է նրա անմտության և դրա հետևանքով «ոմանց» չար խրատների ու խորհուրդների կամակատարը դառնալու հետ և անկեղծորեն խոհեմ լինելու խորհուրդ է տալիս. «Տե՛ր իմ, աղե՛ գմտաւ ա՛ծ զքսութիւն ոմանց եւ զի չարն եւ ի վատթարագոյնս կողմ զհակամիտօղսն զքեզ խրատողացն...եւ ի բարձրագոյնն մակարդակ լեռան ձգեա՛ զքոյդ վեհական խոհեմութիւն: Եւ այսոքիկ նախուստն մինչ տակաւին ի քումն սեպհականի»⁵⁷⁸: «Ոմանց» ասելով՝ Մագիստրոսը նկատի ունի արքային իր դեմ տրամադրած Վեստ Սարգսին ու նրա կողմնակիցներին: Արիստակես Լաստիվերցին իր աշխատության մեջ այս խնդրի մասին գրում է, որ Գագիկը Վահրամի և իրեն թագավորեցնող մյուս իշխանների խորհուրդը չլսեց, այլ ենթարկվելով նենգավոր Սարգսի սադրանքին՝ դուրս եկավ քաղաքից և կարթով բռնված մի ձկան նման կամ ծուղակն ընկած մի թռչունի պէս անդառնալի ուղևորությամբ գնաց Հունաստան⁵⁷⁹: Վարդան Գրիգորյանն իր «Դար կորստյան» պատմավեպում գրում է, որ Անիի մեծամեծները «Գլխապատառ նետվեցին վեստ Սարգսի բացած կորստյան «պատվավոր» ուղին և խոսքները մեկ արած սկսեցին արքայի շուրջ հյուսել դավաճանության ոստայնը»⁵⁸⁰: Այստեղ պիտի ընդգծենք, որ ժամանակի պատմիչներից Սամվել Անեցին համակրանքով է խոսում Վեստ Սարգսի մասին՝ վերջինիս բերդաշինության և եկեղեցաշինության համար⁵⁸¹: Սամվել Անեցու և նրան շարունակողների «ժամանակագրություն»-ում Գագիկի՝ Կոստանդնուպոլիս գնալու հարցում շեշտվում է նաև Գրիգոր Մագիստրոսի միջամտությունը. «Տեր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց, վասն որոյ եին ի բռնիկ աշխարհէն իւրեանց՝ տեր Պետրոս եւ Գրիգոր՝ Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հռոմս»⁵⁸²: Այս նույն դիրքորոշումը տեսնում ենք նաև 17-րդ դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու մոտ, նա գրում է, որ հույներն իրենց սովորության համաձայն խաբեությամբ իրենց մոտ են

⁵⁷⁶ Նույն տեղում, էջ 213:

⁵⁷⁷ Նույն տեղում:

⁵⁷⁸ Նույն տեղում, էջ 212:

⁵⁷⁹ Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, էջ 36:

⁵⁸⁰ Գրիգորյան Վ., Դար կորստյան, էջ 153:

⁵⁸¹ «Մեծապատիւ Վեստն Սարգիս, զկի բազում շինուածոց, բերդից և եկեղեցեաց զիրաշայի վանքն զխցկունս շինեաց, պայծառ պասկաւ զարդարեալ սուրբ քաւարանան, որ ճանաչի անուն Սուրբ Սարգիս: Նաև զԾառաքար վանքն բերդ արարեալ պարսպեալ հաստահեղոյս կրով, բրգունս ձուլածոյս, յորում և ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գեորգա, շինէ Բ (2) այլ յարակիցս զմբեթաւորս, զսուրբ Յովաննես և Սուրբ Սեթենոս» (տե՛ս Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 183):

⁵⁸² Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 187: Կարեն Մաթևոսյանը գրքի «Ծանոթագրություններ» բաժնում գրում է, որ թեև ժամանակագրության վարարչապատյան հրատարակությունից օգտվողներն այս վկայությունը համարել են Սամվել Անեցունը, սակայն այն հավելում է՝ իրագեկ մեկի կողմից արված (տե՛ս Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 395):

Սամվել Անեցու ժամանակագրության վերահրատարակության մեջ «ժամանակագրության լրացումներն ու հավելումները» բաժնում հիշյալ փաստի վերաբերյալ ասվում է, որ հնագույն ձեռագրերից ոչ մեկը չունի նման տեղեկություն, և խնդիրն այն չէ, թե հիշատակությունն ինչ չափով է իրականությանը համապատասխանում, պարզապէս այն չի պատկանում Սամվել Անեցու գրչին (տե՛ս Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 34):

կանչում Գագիկին «ի սաղրելոյ իշխանացն Սարգսի եւ Գրիգոր Բճնեցոյն արգելին զթագաւորն ի կղզին Աղթամար...»⁵⁸³: Իսկ Մատթեոս Ուռհայեցին իր ժամանակագրության մեջ շեշտում է միայն Վեստ Սարգսի անունը՝ նրան անվանելով նենգավոր, որը այլ ազատների հետ քաջալերում է արքային գնալ Մոնոմախի մոտ⁵⁸⁴: Վիկտոր Լանգուան նույնպես կարծում է, որ «Գրիգոր Մագիստրոսը չի եղել Անին բյուզանդացիներին հանձնողների մեջ և չի եղել դավաճան»⁵⁸⁵: Սմբատ պատմիչն այս մասին գրում է, որ անօրէն Սարգիսը, որն այդ ժամանակ Պարսկաստանի արևելքում էր, Մոնոմախ կայսերը խորհուրդ է տալիս, որ Գագիկին «պատճառաւօք սիրոյ» կանչի Կ. Պոլիս և բաց չթողնի, քանի դեռ Անին չի վերցրել նրանից, և հենց ինքն էլ իր համախոհների հետ արքային համոզում է գնալ՝ միջնորդ բերելով տեր Պետրոսին. «Եւ կացուցին միջնորդ գտեր Պետրոս, և բերեալ զսուրբ խորհուրդն, և թացեալ անդ զգրիչն, և արարին սոսկալի երդմունս յաւուր յայնմիկ: Եւ յայնժամ Գագիկ անկասկած էլեալ գնաց ի Կոստանդինուպօլիս»⁵⁸⁶: Սամվել Անեցու և Դավիթ Բաղիշեցու ժամանակագրություններում Գրիգոր Բջնեցու հիշատակումը վիճելի է: Ոչ մի պարագայում չէր կարող Մագիստրոսը համախոհ լինել Վեստ Սարգսի հետ, այն էլ Գագիկին Կ.Պոլիս ուղարկելու, Անիի հայոց պետականության հիմքերը խարխլելու հարցում: Պատմաբան Բարթիկյանը, խորհրդածելով «Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջ»⁵⁸⁷, այն տեսակետն է հայտնում, որ Մագիստրոսի բազմաթիվ թղթեր անսփի ապրենասիրությամբ են տոգորված և ընթերցելով դրանք՝ մեր առաջ պատկերանում է մի անձնավորություն, որին ծայրաստիճան մտահոգում է հայրենիքի ճակատագիրը, նրա ապագան⁵⁸⁸: Չմոռանալով, որ Գրիգոր Մագիստրոսը «...մեծ խոհեմությամբ ջանք էր թափում ամրապնդել Հայաստանի թագավորական գահը և խնդրում աստծուն, որ իրեն ու Բագրատունյաց տոհմին նեցուկ կանգնի»⁵⁸⁹ և Վեստ Սարգսի դեմ դուրս գալով՝ կարողացել է կանխել վերջինիս կողմից հայոց գահին տիրանալը՝ թագավորեցնելով գահի օրինական ժառանգին՝ Գագիկ 2-րդին: Այս մասին հիշատակում են Արիստակես Լաստիվերցին⁵⁹⁰, Մատթեոս Ուռհայեցին⁵⁹¹, Սմբատ պատմիչը⁵⁹², միայն Վարդան Արևելցին է, որ Գագիկին թագավորեցնողների մասին չի խոսում. «Քանի որ չորս հարյուր իննսուներեք թվին մեռան Հովհաննեսն ու Աշոտը, թագը տվեցին Աշոտի որդի

⁵⁸³ Մակր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. հ.2, Երևան, 1956, էջ 339:

⁵⁸⁴ **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, էջ 104:

⁵⁸⁵ **Դուրլանյան Ա.**, Ֆրանսիացի հայագետներ (XIX-XX դարեր), էջ 162:

⁵⁸⁶ **Սմբատ Սպարապետ**, Մատենագրութիւնք Նախնեաց, էջ 40:

⁵⁸⁷ Պատմաբան Հրաչ Բարթիկյանի հոդվածի խորագիրն է (տե՛ս Բարթիկյան Հրաչ Մ., Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատոր Ա, Երևան, 2002, էջ 265-274):

⁵⁸⁸ **Բարթիկյան Հրաչ Մ.**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատոր Ա, էջ 269:

⁵⁸⁹ **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, էջ 58:

⁵⁹⁰ «Բայց Վահրամը, որը մի հզոր, անվանի, բարեպաշտ ու վեհ մարդ էր, այնպես որ ոչ ոք չկար նրան հավասար, իր ազգակիցներով, որդիներով ու եղբորորդիներով հանդերձ, թվով մոտ երեսուն իշխաններ, չմիաբանվեցին նրա հետ, այլ հրավիրելով, այլ հրավիրելով իրենց մոտ Աշոտի որդի Գագիկին՝ թագավորեցրին իրենց վրա և հնարամտորեն քաղաք բերին» (տե՛ս **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, էջ 32):

⁵⁹¹ «Հայոց բոլոր Նախարարները, հավաքվելով տեր Պետրոս հայրապետի մոտ, սուրբ Հոգու շնորհիվ և ազգությանը հայկազնյան, Պահլավունիների տոհմին պատկանող, իր Նախահոր անունով Գրիգոր կոչվող և սուրբ Գրիգորի ազգից սերող մեծ իշխանի հրամանով, Գագիկին օծեցին համայն Հայաստանի թագավոր» (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, էջ 58):

⁵⁹² «...և ժողովեցան իշխանքն Հայոց, հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ Պահլաւունոյ, և գնացեալ առ սուրբ հայրապետն տեր Պետրոս՝ օծին զԳագիկ թագաւոր ի վերայ տանն Հայոց» (տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Մատենագրութիւնք Նախնեաց, էջ 36-37):

Գագիկին»⁵⁹³: Իսկ Սամվել Անեցին, խոսելով արքայի թագադրման մասին, չի նշում Բջնեցու անունը⁵⁹⁴: Չնայած Վեստ Սարգսի՝ Շիրակի ու շրջակա գավառների վրա թագավորելու մտադրությանը, Յովհաննեսի տան ամբողջ գանձերը վերցնելուն⁵⁹⁵ և այլ բացահայտ դավադիր քայլերին՝ Գագիկ արքան շարունակում էր վստահել նրան՝ փոխարենը մեղադրելով ու հալածական վերաբերմունք դրսևորելով Գրիգոր Մագիստրոսի նկատմամբ, իսկ վերջինս չէր դադարում զգուշացնել, որ իրեն մեղադրելով՝ Գագիկ երկրորդը մեծ մեղք է գործում. չգիտե՞ր արքան, որ ինքը երկնչում է Աստծուց. «եւ ո՛չ գիտես, եթէ երնչիմ յԱստուծոյ, տակաւին խոցոտես զիս եւ ոչ երկնչիս յԱստուծոյ ամենակալէն այն, որ նստին ի քերօքես»⁵⁹⁶: Թեև ժամանակի պատմիչները Գագիկ արքայի ու Գրիգոր Մագիստրոսի միջև տարածայնությունների մասին լռում են, բայց այդպիսի փոխհարաբերությունների մասին հաղորդում են Մագիստրոսի նամակները:

Իր նկատմամբ հալածանքների շրջանում Մագիստրոսը գրել է նամակներ նաև Սարգիս վարդապետին: Դրանցից մեկն ունի հետևյալ խորագիրը՝ «Ան վարդապետն Սարգիս ի ժամանակի հալածանաց զրեաց ի մայրաքաղաքն Անի» (թուղթ ԺԸ): Իրավիճակը, որում հայտնվել էր ինքը, Մագիստրոսը գնահատում էր որպես մի «խարդալանաօղ խորհրդովք» լի փորձություն, որն իրեն տարակուսանքի էր մատնել, բայց «ակն ունելով» միայն Աստծուն՝ Մագիստրոսն իրեն հալածող կարճամիտների չարությունից ու ատելությունից ծնված անարգանքներից, խորամանկություններից և անչափելի տառապանքներից դառնացած շուտափույթ օգնություն և փրկություն է ինդրում. «...արի՛ ՏԷ՛ր օգնեա՛ր ինձ, զարթի՛ր, ընդէ՛ր ննջես, եւ ա՛ն զգէն զասպար քո եւ արի՛ յօգնել ինձ»⁵⁹⁷:

Մագիստրոսը հույս է հայտնում, որ արդարը չի արհամարհվի և Աստված կլի իրեն, որովհետև ինքն աղքատ ու տնանկ, և իր հանդեպ անիրավ են եղել. «...խոնարհեցո՛ր ՏԷ՛ր զունկն քո եւ լո՛ւր ինձ, զի աղքատ եւ տնանկ եմ ես...մի՛ մատներ զիս ի ցանկութիւն մեղաւորաց խորհելոց վասն իմ տարապարտ հարկանել զիս. եւ մի՛ բարձրացիւն խորհուրդք նոցա»⁵⁹⁸:

Այսպիսով՝ Մագիստրոսը Սարգիս վարդապետին բացատրում է, որ իր թշնամիների անտեղի հալածանքները վիշտ են պատճառում իրեն, և ինքը մեղմում է այդ վշտի մեծությունը աստվածային խոսքի միջոցով, որը «դիւրացուցանաօղ» և «զօրացուցանաօղ» է նրա համար, ինչպես ջուրը՝ անապատ հողի կամ «որպես եղջերու զի փափագէ աղբերս ջուրց»⁵⁹⁹:

Ոչ միայն պատմական իրադարձությունների, այլև գրական ժանրի տեսակետից խիստ ուշագրավ է Սարգիս վարդապետին ուղղված Գրիգոր Մագիստրոսի ԺԹ թուղթը՝ «Պատասխանի Սարգիս վարդապետի եւ ողբ ի վերայ Արամեանս նահանգի»: Դրանում կան հատվածներ, որոնք ողբի ժանրի յուրահատուկ դրսևորումներ են: Նամակը հավանաբար գրվել է այն ժամանակ, երբ Անիի պետականությունը կորստի շեմին էր և դրանում Մագիստրոսը մեղադրում էր Գագիկին, որը ոչինչ չէր փորձում անել այժոռը պահելու համար, որովհետև ավելի հաճախ ականջալուր է եղել ստին, իսկ «ստուփիւնը»

⁵⁹³ **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, էջ 141:

⁵⁹⁴ «Արդ յետ մահուանն Սմբատայ որ և Յովհաննեսն, միաբանեալ ազատագունդ զաւրացն և իշխանացն, յաւետ ևս պատրիարզին տեսառն Պետրոսի. ժողովեցան առ դրունս մեծափառ Կաթողիկէին՝ ի մայրաքաղաքս յԱնի, և հաստատեն զԳագիկ զեղբաւորդին Յովանիսի, թագաւոր ի վերայ ինքեանց ի տեղի հաւրեղբայր իւրոյ...» (տե՛ս **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, ժամանակագրութիւն, էջ 186):

⁵⁹⁵ **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, էջ 32:

⁵⁹⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 212-213:

⁵⁹⁷ Նույն տեղում, էջ 53:

⁵⁹⁸ Նույն տեղում, էջ 54:

⁵⁹⁹ Նույն տեղում:

Բազրատունյաց թագավորության վերջին ողբերգական շրջանում ընդարձակ սահմաններ ուներ. «...բանգի այժմ լռեալ դարդարեալ է ճշմարտութեանն ճանապարհի եւ ստութեանն ընդարձակեալ հանդես, որում ոչ հաւանիմ»⁶⁰⁰, բայց որին «զմանկան խակութեան» պատճառով հավան է մի ամբողջ թագավորության զուխը՝ Գագիկ արքան. «Արդ այսմ չարեաց դարծեալ հաւանեալ դա, որ երբեմն ուխտեաց Տեառն Աստուծոյ այնմ, որ նստիկի քրովբես, զատելիսն նորա ատել եւ զսիրելիսն սիրել. եւ այժմ եթէ ոչ դարծցի դա ի չարեաց, զոր վերստին ստացաւ, դարծեալ ներեսցո՞ւք արդեօք, քաջ գիտեմ. եթէ ոչ»⁶⁰¹:

Եվ ահա ողբի ժանրին բնորոշ օրինակափոխումը Մագիստրոսը հիշատակում է հայոց աշխարհի անցյալի բոլոր նահապետներին, որոնցից ոմանք թեպետ «...անարի եւ անզոր զոյ, սակայն տիրապետեալ տանս Թորգոմեան, պահելով զաթոռն»⁶⁰²: Այսպիսի մտածությամբ Մագիստրոսը ողբում է Արամյան նահանգի անփարատելի դրության համար. ո՛ր էն Հաբեթը, հայկյան հանդեսը, Արամյան արմատի մեծությունը, Արամ Արամյան նահապետը, Վաղարշակը՝ «քաջ ի քաջացն Բախլայ», Արշակն ու Արտաշեսը, Տիգրանն ու Արտավազը, Արշամն ու Աբգարը, Սանատրուկն ու Երվանդը, Արտաշեսն ու «միւս Արտաւազը», Տիգրանը, Վաղարշը, Խոսրովը. «ո՛ր մերն Տրդատ, Խոսրով, Տիրան եւ Տիգրան, Արշակ, Վարազդատ, Արշակ եւ վերջին Վաղարշակ»⁶⁰³:

Այսպիսով՝ Պահլավունի իշխանի մեծագույն բարկությունը ծնունդ է առնում հիացման արժանի անցյալի և իր ժամանակի այն դառը կենցաղի հակադրությունից, որում, ինչպես ինքն է ասում, անկենցաղների պես են ապրում. «Քանզի զի՞նչ օգուտ մեզ երկարութիւն ամաց, եւ մեծագոյն բարկութիւնս եւ զտառապանս կրել եւ տեսանել եւ ի վերայ յոթունց առնով ողբս եւ զնոցայն ցաւակցել. վասն զի իմ է բոլորիցն բեկումն»⁶⁰⁴:

Սարգիս վարդապետին Մագիստրոսը շատ բարձր է գնահատում, համարում է նրան հզոր «պուլետիկոսական մատենագրութեան» մեջ, իսկ թղթերից մեկում գրում է՝ «...եւ հաւանիմ քեզ, որ բժիշկդ ես հոգևոց մերձ ելոյ ի ծնունդս»⁶⁰⁵: Նա սրբազան վարդապետին ուղղել է մի պատասխան նամակ («Պատասխանի Սարգսի վարդապետին») (թուղթ Ի)՝ հավանաբար Գագիկի գահակալության վերջին շրջանում, որում հայտնում է, որ գնացել է Ամբերդ նրան տեսնելու՝ «առաքեալ ի մանկամիտ արքայե»⁶⁰⁶: Եվ բացատրում է, որ ինքը արքային մանուկ է ասում այն պատճառով, որ վերջինս իմաստուն չէ, այլ իմաստունների կամքը կատարող. «Մանուկ ասելով Հոգին բարբառի ի ձեռն իմաստոնոյն. վա՛յ քեզ քաղաք. վասն զի թագաւոր քո մանուկ է. բաւական է բանդ»⁶⁰⁷:

Թղթում Մագիստրոսը խոսում է այն մասին, որ չնայած Սարգիս վարդապետը իրեն գրել էր, թե մեր արքան դեպի լավն է գալիս և այդպես գործերը խակության կամ անիմաստության նշան չի կարող լինել, և որ ի վերջո նա հռետորական կրթությամբ է զարգացել, բայց այնուամենայնիվ, Գրիգոր Պահլավունին այն համոզմանն է, որ Արամյան աշխարհի ավերածությունն անխուսափելի է, և պատճառը մեր գործած մեղքերն են և Աստուծու զայրույթն ու սրտմտությունը. «...բայց պատճառ աւերածոյ

⁶⁰⁰ Նույն տեղում, էջ 62:

⁶⁰¹ Նույն տեղում, էջ 63:

⁶⁰² Նույն տեղում, էջ 61:

⁶⁰³ Նույն տեղում, էջ 59-61:

⁶⁰⁴ Նույն տեղում:

⁶⁰⁵ Այս բնորոշումը Սարգիս վարդապետին ուղղված ԻԲ թղթում է, որը գրվել է այն ժամանակ, երբ վարդապետը եղել է Սևանում, իսկ Մագիստրոսը՝ Տարոնում: Նամակի խորագիրն է՝ «Առ վարդապետն Սարգիս առաջնորդ ուխտին Սևանայ, բանգի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս, եթէ եկեսցես առ իս և ի միասին գրոց պարապետցուք»:

⁶⁰⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 64:

⁶⁰⁷ Նույն տեղում: Գրիգոր Մագիստրոսն այս միտքը վերցրել է Ժողովողից. «Վա՛յ քեզ, քաղա՛ք, որ թագաւորդ մանուկ է...» (10, 16):

աշխարհիս մեր ըստ մեղաց մերոց պատահեաց մեզ, քանզի մեղաք Տեառն Աստուծոյ մերոյ»⁶⁰⁸: Ինչ վերաբերում է Սարգիս վարդապետի ընդգծած մտքին՝ արքայի կրթված լինելուն, Սամվել Անեցիին իր ժամանակագրության մեջ գրում է Գագիկի մասին՝ «...սա, զի ի մանկութենէ ընդ դպրութեան գրոց վարժեալ էր, ի Նոսին զբաւսնոյր եւ ի տերութեանն աւուրս...»⁶⁰⁹, կամ ինչպէս Մ. Ուռնայեցիին է գրում՝ նա իմաստասիրական շրջաններում անպարտելի էր⁶¹⁰, սակայն այդպիսի պատերազմական իրավիճակը պահանջում էր քաղաքական կամք ու արիություն դրսևորելու ունակություն, բայց Գագիկը «...ո՛չ պատերազմական արութեանց ջանայր, որով վարի իշխանութիւնն, մանաւանդ զի առ այնու ժամանական աւելի իմն զդէպ էր քաջանալ...»⁶¹¹, այդպիսի պայմաններում հույները նրան «առ իւրեանս կոչեցին խաբկանաւք. յաւետ եւս ի սադրելոյ իշխանացն, որք երդմամբ հաստատեցին պահել զիշխանութիւն Նորա աննենզ ի վերայ իւրեանց, եւ ոչ կացին յուխտին Տեառն...»⁶¹²:

Գրիգոր Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին ուղղած մի ուրիշ թղթի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ գրվել է այն ժամանակ, երբ Գագիկ արքան այլևս չէր տիրապետում Բագրատունյաց հայոց գահին, իսկ Գրիգորն արդեն մագիստրոս էր և քյուզանդական կայսեր կողմից նշանակվել էր կուսակալ Միջագետքում:

Այսպէս՝ Սարգիս վարդապետին ուղղված ԻԱ պատասխան նամակում («Առ վարդապետն Սարգիս») Մագիստրոսը գրում է, որ ինքը երբեք դանդաղկոտ, չարակն ու ապաշնորհ չի եղել «առ ընկերս եւ բարուք ծառայակիցս», ամբողջ Հաբեթյան նահանգն է վկա, թէ ինքը ինչպիսի գործառնություն է իրականացրել Տարոն գավառում և իր տկար ձեռքով ինչպիսի բարձրության է հասցրել նահանգը. «...աղէ՛ հարցի՛ր ընդ բոլոր Յաբեթեան նահանգի, զի՛նչ յաւուրս յայտսիկ ի բոլոր տանս Մարդպետական եղեալ գործառնութիւնս՝ ի քաղաքս եւ ի դեղեակս, յաւանս եւ ի գիւղս եւ ի պատս, ի բոլոր տնօրինական առաջարկութիւնս կամ ի հարաւային բնութենէն խաղաղանալս, զի՛նչ եւ ի Միջագետս եւ կամ ո՛րպիսի պատուասիրութիւնս, մանաւանդ եթէ եւ բարձրութիւն մերոյս նահանգի եհաս ի ձեռն իմոյ տկարութեանս»⁶¹³:

Այնուհետև Մագիստրոսը խոսում է իր կատարած թարգմանական աշխատանքների մասին, «վասնզի ոչ ենք երբեք դադարեալ ի թարգմանութենէ եւս» և թարգմանել է այն բազում մատյանները, որոնց հայերեն թարգմանության օրինակներ չկային. «...գերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմեոսի տրամաբանութեանն եւ զՓեդոկլի, յորս բոլոր ճառնն նախագիտականին այն պարփակեալ կայ»⁶¹⁴, բացի սրանցից նաև այլ գործեր, որոնք փիլիսոփայական բնույթ ունեն, և որոնց հայերեն թարգմանությունները կային. «...բայց եւ գտեալ մեր իսկ ի հայ լեզու գրեալ թարգմանչացն՝ զգիրս Ողոմպիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի եւ հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ եւ զԿալիմաքոսի եւ զԱնդռոնիկեայն ի հայ լեզու. բայց եւ զերկրաչափական զեվկլիդոսին սկսայ թարգմանել...»⁶¹⁵:

Ըստ Գրիգոր Մագիստրոսի նամակների՝ Բագրատունիների պետականության կորուստը Գագիկ Երկրորդի դյուրահավատության ու անփորձ լինելու պատճառով էր, միաժամանակ Վեստ Սարգսի ու նրան համակիր նախարարների՝ կենտրոնաձիգ պետությանը չենթարկվելու և դավաճանության դիմելու արատավոր վարքագծի

⁶⁰⁸ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 64:

⁶⁰⁹ **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, ժամանակագրութիւն, էջ 186:

⁶¹⁰ **Մատթեոս Ուռնայեցի**, ժամանակագրութիւն, էջ 58:

⁶¹¹ Նույն տեղում:

⁶¹² Նույն տեղում:

⁶¹³ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 65:

⁶¹⁴ Նույն տեղում, էջ 66:

⁶¹⁵ Նույն տեղում:

հետևանքն էր, որը Գրիգոր Մագիստրոսի համար դարձել էր մեծագույն մտահոգության և ազգային վշտի պատճառ: Այնուամենայնիվ, Գրիգոր Մագիստրոսի՝ պատմական բովանդակությունն ունեցող թղթերի ուսումնասիրության արդյունքում գալիս ենք հետևության, որ դրանցում Բագրատունյաց թագավորության անկման ոչ բոլոր պատճառներն են արձարծված, հետևաբար խնդրո առարկա թղթերը դրանց բացահայտմանն օժանդակող արժեքավոր սկզբնաղբյուրներից են:

GRIGOR MAGISTROS' LETTERS ON THE ARMENIAN KINGDOM OF THE BAGRATIDS

HASMIK HOVSEPYAN

*SNCO “Secondary School of Artashar” of the Armavir Province of RA,
PhD student of the Chair of Ancient and Medieval Armenian Literature and
Methods of its Teaching of the ASPU after K. Abovian
Yerevan, Republic of Armenia (RA).*

The aim of the study is to clarify and substantiate the reasons for the fall of the Armenian Kingdom of Bagratids, according to the epistles of Grigor Magistros.

The subject of the research is the presentation of valuable in terms of assessing the historical events of the last period of the Ani State, by analyzing the epistles of Grigor Magistros, his interesting commentaries on internal and external political contradictions.

The study was carried out by the following methods: comparison, analysis, abstraction, synthesis, deduction.

As a result of the study, we came to the following conclusion: according to the epistles of Grigor Magistros, the inexperience of Gagik II and the circumstance of insubordination to the centripetal state of Vest Sarkis, caused the fall of the Ani State.

Despite the obvious treacherous steps of Vest Sarkis, the credulous king continued to trust him, thus embarking on the path of fall, and instead pursued Prince Pahlavuni, who, coming out against Vest Sarkis, prevented the latter from seizing the throne, raising Gagik II to royalty.

Key words: *Armenian Kingdom of Bagratids, Armenian State, Gagik II, Grigor Magistros, historical epistles, Vest Sarkis, treachery, persecution, conquered State.*

ПИСЬМА ГРИГОРА МАГИСТРОСА ОБ АРМЯНСКОМ ЦАРСТВЕ БАГРАТИДОВ

АСМИК ОВСЕПЯН

*ГНКО «Средняя школа Арташара» Армавирской области РА,
Аспирант кафедры древней и средневековой армянской литературы и
методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна,
г.Ереван, Республика Армения*

Целью исследования является выяснение и обоснование причин падения армянского царства Багратидов по письмам Григора Магистроса.

Предметом исследования является представление, посредством анализа писем Григора Магистроса, ценных с точки зрения оценки исторических событий последнего

периода Анийского государства, его интересных комментариев о внутренних и внешних политических противоречиях.

Исследование было осуществлено методами сравнения, анализа, абстрагирования, синтеза, дедукции.

В результате исследования мы пришли к следующему выводу: согласно письмам Григора Магистроса, причиной гибели Анийского государства стала неопытность Гагика II, обстоятельство неподчинения центростремительному государству князя Вест-Саркиса. Несмотря на очевидные предательские шаги Вест-Саркиса, легковверный царь продолжал доверять ему, вступив таким образом на путь гибели, а взамен преследовал принца Пахлавуни, который, выйдя против Вест-Саркиса, предотвратил овладение трона последним, возведя на царство Гагика II.

Ключевые слова: *Армянское царство Багратидов, армянское государство, Гагик II, Григор Магистрос, исторические письма, Вест-Саркис, предательство, преследования, завоеванное государство.*

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՉԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ «ՅՈՂԻՍ ԱՔՍՈՐՅԱԼ» ՎԻՊԱԿՈՒՄ*

ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

*Խ.Աբովյանի անվան ՅՊՄՅ բանասիրական ֆակուլտետի
դեկանի օգնական, Խ.Աբովյանի անվան ՅՊՄՅ Վ.Պարտիզունու անվան հայ նոր
և նորագույն գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի հայցորդ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
anna-sargsyan-1995@mail.ru*

Հոդվածի նպատակն է Չապել Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակում բացահայտել հայ մտավորականության և շրջապատող իրականության բախման արդյունքները սահմանադրական թուրքիայում: Առանձնացվել են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել վիպակի գաղափարական հիմնական ուղղվածությունը, համակողմանիորեն անդրադառնալ վեպակի ուրույն կերպարային համակարգին, ի ցույց դնել համամարդկայինն զուգահեռ «միամիտ» բերված պատկերներում թաքնված ազգայինը, բացահայտել վիպակում արծարծված գեղարվեստական իրողությունների պատմական հիմքերը: Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ համեմատություն, վերացարկում, վերլուծություն(անալիզ) և համադրություն(սինթեզ):

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ Չապել Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակն ունի ոչ միայն պատմական, այլև համամարդկային ու գեղարվեստական մեծ արժեք: Գրողն իր վիպակում վարպետորեն ներկայացրել է քաղաքական բարդ իրավիճակում իրենց գործունեությունը ծավալող մտավորականների հավաքական կերպարը. այստեղ հստակ պատկերված են մտավորականներ, որոնք լարանին գրավելու և իրենց ստեղծածի ճշմարիտ գնահատականը տեսնելու փոխարեն խճճվել են ընդհանուրի շփոթ առօրյայում: Գրողն այս կերպ ցույց է տվել մտավորականի դժվար ուղին քաղաքականությամբ շնչող մթնոլորտում, բայց և ընդգծել է հոգեկան ավատության ու կաշկանդող պատյանները կոտրելու ուղին՝ որպես արվեստի իրական գործ ստեղծելու նախապայման:

Հիմնաբառեր՝ Չապել Եսայան, անցյալ, կարոտ, արմատներ, հոգի, աքսոր, մտավորականություն:

Չապել Եսայանի ստեղծագործությունների նորովի իմաստավորումը կարևոր է հայ մեծերի թողած գրական ժառանգության առավել համակողմանի ընկալման տեսանկյունից. նրա ստեղծագործությունները պատմական որոշ իրադարձությունների ու տրամադրությունների վերաբերյալ տեղեկատվության առումով արժեքավոր են բոլոր ժամանակների համար, դրանցում ամփոփված են դեպքերին ականատես մտավորական կնոջ տեսածի վավերագրական գեղարվեստականացված փաստեր, հաճախ նաև ստույգ ու հավաստի տվյալներ հայ ժողովրդի համար բախտորոշ, վտանգներով, հույսերով ու հուսախաբություններով լի մի շրջանից: Այսպեսով հանդերձ՝ քաղաքական թեժ մթնոլորտում գրված ստեղծագործություններում հեղինակը չի խուսափել անդրադառնալ հոգեբանական ու փիլիսոփայական հարցերի:

* Հոդվածը ներկայացվել է 27.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Մտավորականի ներաշխարհը սահամանադրական թուրքիայում ներկայացնելու վստահ քայլ է Չապել Եսայանի «Յոգիս աքսորյալ» վիպակը, որում սյուժետային զարգացումներն իրենց տեղն են զիջել մտավորական կնոջ՝ Էմմայի ինքնաբացահայտման ու ինքնաճանաչման ուղուն. հերոսուհին իրեն ճանաչելու շարունակական փնտրտուքների մեջ բռնել է ժամանակի մտավորականության հոգեկան փոթորկումների բացահայտմանը տանող ճանապարհը՝ կրողը դառնալով Չապել Եսայանի՝ կյանքի փորձով ձեռքբերված աշխարհաճանաչմանը:

«Յոգիս աքսորյալ» վիպակն առաջին անգամ տպագրվել է 1922 թվականին «Արեգ» ամսագրի մարտի թիվ 3, ապրիլի թիվ 4 և մայիսի թիվ 5 համարներում, առանձին գրքով՝ 1922 թ.-ին Վիեննայում: Ստեղծագործության արժեքայնությունը անսկատ չի մնացել գրականագիտության մեջ. վիպակին անդրադարձել են մի շարք գրողներ, սակայն գործին համեմատաբար խորքային անդրադարձ է կատարել Սևակ Արզումանյանն իր «Չապել Եսայան (կյանքը և գործը)» գրքում: «Անհատի ներքին խռովքի, հոգեկան բարդ ապրումների յուրովի տարրալուծումով, Եսայանը ցայտուն է դարձնում Էպոխայի որոշ գծերը «Յոգիս աքսորյալ» վիպակում»⁶¹⁶, - գրում է Սևակ Արզումանյանն ու գնում Եսայանական գաղափարները առավել համամարդկայինի, քան ազգայինի դիտակետից քննությանն ընդառաջ: 2012 թվականին «Յոգիս աքսորյալ» վիպակը թարգմանվել է ֆրանսերեն: Գրքում զետեղվել է Գրիգոր Պլտյանի «*Mon âme en exil ou l'art empêché*» հոդվածը, որում հոդվածագիրն առավել ուշադրություն է դարձել գրողի կողմից կյանքի մատուցման ուրույն եղանակին և հոդվածը սկսել է հետաքրքիր մի դիտարկմամբ. «*Une œuvre plutôt étrange*»⁶¹⁷:

2014 թվականին տպագրվել է անգլերեն ("My Soul in Exile"): 2016 թվականին Մեհմեդ Ֆարիհ Ուսլուի կողմից վիպակը թարգմանվել է թուրքերեն ("Sürgün Ruhum") և տպագրվել «Արաս» հրատարակչության կողմից: Արդյունքում թուրք լսարանին հասանելի է դարձել հայ մտավորականի կյանքի ուղին, որն անբաժան է պատմական ճշմարտությունից: Հատկանշական է, որ այնտեղ կան տեղեկություններ ինչպես Աղանայի կոտորածների, այնպես էլ 1915 թվականին երիտթուրքերի իրականացրած ցեղասպանության վերաբերյալ⁶¹⁸: Գրքում ներառված է նաև Գևորգ Բերդակյանի «*Bir Bakışta Yesayan ve Eserleri*» հոդվածը, որտեղ հոդվածագիրը «Վերջին բաժակը» վիպակի կողքին առանձնացրել է «Յոգիս աքսորյալ» վիպակը՝ կարևորելով գրողի կողմից արվեստի, գրականության, հասարակության ու հայրենիքի փոհարաբերությունների քննության բարդ ընթացքը⁶¹⁹: Ինչպես տեսնում ենք, հանրության հետաքրքրությունը Եսայանի թողած ժառանգության նկատմամբ արդիական է. վերժամանակյա է քաղաքական թեժ իրադարձությունների կիզակետում համարձակ մտավորական կնոջ տեսածի քննությունը: Բայց և պետք է հավելենք, որ Չապել Եսայանի ստեղծագործությունները դեռ բավականաչափ ուսումնասիրված չեն. մասնավորապես «Յոգիս աքսորյալ» վիպակում կան կերպարներ, որոնք, դուրս մնալով գրականագետների ուշադրությունից, իրենց մեջ ամփոփ կերպով պահել են ընթերցողին հասցեագրված հեղինակային մի շարք կարևոր գաղափարներ: «Յոգիս աքսորյալ» վիպակի նորովի քննությունը խիստ արդիական է Չապել Եսայանի վիպակի ուղղվածությունը հասկանալու, ստեղծագործության մեջ ժամանակի շունչը բացահայտելու և գեղարվեստական պատկերման մեջ դարասկզբի պոլսահայ մտավորականության հոգեկերտվածքի առանձնահատկությունները ճանաչելու համար:

⁶¹⁶ Արզումանյան Ս., Չապել Եսայան (կյանքը և գործը), ՅՍՍՐ ԳԱ հրատ., Ե., 1965, էջ 201:

⁶¹⁷ **Essayan Zabel** - *Mon âme en exil / auteur(s)* : Traduit de l'arménien par Anahide Drézian et Alice Der Vartanian, Postface de Krikor Beledian. Editeur : Parenthèses. Année : 2012, 65 p.

⁶¹⁸ **Yesayan Zabel**, Sürgün Ruhum, Çeviri Mehmet Fatih Uslu, "Aras Yayincılık", 2015, s. 7:

⁶¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 12:

Չապել Եսայանը «Հոգիս աքսորյա» վիպակը գրելու ցանկություն ունեցել է դեռևս 1910-ական թվականներից: Վերոնշյալ վիպակն ունի կարևոր մի նախապատմություն. ուշադրության է արժանի այն, թե ինչ է ցանկացել գրել գրողն ի սկզբանե և ինչ է ստացվել արդյունքում: Հարցի պատասխանը գտնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Չապել Եսայանի թողած հարուստ նամակագրությանը: Ուշագրավ է 1917 թվականի սեպտեմբերի 23-ին Բաբվից արձակագիր Կարեն Միքայելյանին հասցեագրած նամակը, որում գրողն ասում է. «...Ես ընկղմած եմ այս միջոցին զանազան կարգի աշխատություններու մեջ. անմիջապես, որ քիչ մը թեթևամտ պտի սկսեմ գրել վեպ մը Պոլստ հայոց կյանքեն «Հոգիս աքսորված...» տիտղոսով...»⁶²⁰: Չապել Եսայանը վերոնշյալ նամակում առավել մասնավորել է այն թեմատիկան, որը պետք է ունենար վերացականից նյութականասալու ճանապարհին կանգնած «Հոգիս աքսորյա» վիպակը. «Այնտեղ չիկա կոտորած, գաղթական, պաշլեիք, կամ ուրիշ բան, այլ միմիայն արև, վարդենիներ ու հավիտենական երգերը սիրո, գեղեցկության ու շնորհի: Եթե մասամբ գոնե կարողանամ արտահայտել այդ թաթուն աշխարհը, զոհ կմնամ, շատ զոհ կմնամ»⁶²¹: Սպասելի է, որ գրվելու էր արևով ու ջերմությամբ, հանգստավետ տրամադրություններով լեցուն մի վիպակ, բայց արդյունքում ստացվել է առավել խորը, հոգեբանական նուրբ և միաժամանակ բարդ լուծումներով, ժամանակի, մտավորականի և շրջապատող իրականության բախման արդյունքները բացահայտող մի գործ: Պատահական չէ, որ տարիներ անց «Հոգիս աքսորյա» վիպակում Չապել Եսայանն իր գաղափարակից հերոսուհու՝ Էմմայի միջոցով անկեղծասալու էր. «Ես ուրիշ բան ընել կուզեի եւ ուրիշ բան կար անշուշտ իմ հոգոյս մեջ: Իմ մեջ կար լոյս, զուարթութիւն ու կեանք, այլ սակայն իմ բոլոր պատկերներս քօղարկուած են մշուշով»⁶²²:

Վիպակը գրված է առաջին դեմքով: «Անակնկալ կացութիւններու» երկրում նկարչուհու խորը հայացքով ներկայացվում են ժամանակի տրամադրությունների արդյունքում ձևավորված մտավորականների կերպարներ, նկարչուհու աչքով տեսածը հեղինակը բառերով է նկարում իր վիպակում: Հավելենք, որ հերոսուհու՝ Էմմայի նկարչուհի լինելու հանգամանքը պատահական ընտրություն չի եղել Չապել Եսայանի համար. ուշադրություն դարձնենք Տիգրան Եսայանին 1907 թվականին հասցեագրած նամակին, որում Չապել Եսայանը խոստովանում է. «Տեսակ մը ներքին տանջանք է ինձ համար նկարչի աչքերով տեսնալ և չկարենալ արտահայտելու...»⁶²³: «Հոգիս աքսորյա» վիպակում արդեն տեսնում ենք փորձառու նկարչուհու կարողություններին վարպետորեն տիրապետող կերպարային կերտվածք: Դիպուկ է Թորոս Ազատյանը Չապել Եսայանի ստեղծագործական առանձնահատկությունները բնորոշելիս. «Մերթ անկկա իր ձեռքին մեջ ունի նկարիչի մը վրձինը և իր մօտ՝ անոր ճոխ երանգապնակը, թուղթէկտաւին վրայսեւեռելու համար աչք առնող գեղեցկութիւններ»⁶²⁴:

Խոստացածի համաձայն՝ «Հոգիս աքսորյա» վիպակը ներծծված է ներկայակալի ակնահաճո գույներով՝ ճերմակ, վարդագույն, մանուշակագույն, «լեղակագոյն», ոսկի ու սև: Ուշագրավ է, որ վիպակում գույների նկատմամբ առավել գերիշխող են փիլիսոփայական ու հոգեբանական խորը ենթատեքստ ունեցող մտքերը. Չապել Եսայանին հասկանալու համար անհրաժեշտ է մանրազնին ուսումնասիրություն:

⁶²⁰ **Եսայան 2.**, Նամակներ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1977, էջ 144:

⁶²¹ Նույն տեղում:

⁶²² **Եսայան 2.**, Հոգիս աքսորյա, Միլիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 2:

⁶²³ **Եսայան 2.**, Նամակներ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1977, էջ 52:

⁶²⁴ **Ազատյան Թ.**, «Վերջին բաժակը»/Չապել Եսայան, «Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1924, մայիսի 25:

Պատահական չէ, որ վիպակում Չապել Եսայանը առաջ է բաշում մտավորականի մտավախության պատճառներից մեկը. «Պիտի հասկնա՞ն զիս, գոնէ պիտի գտնուի մեկը որ իր ճիշդ արժեքով գնահատէ կամ քննադատէ գործս: Պիտի հասկնա՞ն գոնէ այսքանը որ իմ թերութիւններս դիպուածի կամ անփութութեան արդիւնք չեն, այլ որոշ անյադրելի տրամադրութեան հետեւանք»⁶²⁵: Չապել Եսայանի «Յոգիս աքսորյալ» վիպակի բուն գաղափարական հենքը գտնելու համար անհրաժեշտ է բացահայտել վերոնշյալ «անհաղթելի տրամադրութիւնները»:

«Հիմնովին սխալ է այն կարծիքը, թէ Առաջին համաշխարհային պատերազմից և հայկական կոտորածներից հետո Եսայանն ապրում էր հիասթափություն և հուսալքություն, որն արտահայտվել է իբրև նրա գեղարվեստական գործերում»⁶²⁶, -ասում է Սևակ Արզումանյանը: Այս միտքը նա պատճառաբանում է Չապել Եսայանի՝ 1915-1920 թթ.-ի հասարակական գործունեություն ծավալելու փաստով. «...Գրիչը դարձրել էր զենք՝ առաջնային համարելով քաղաքացիական պարտքը»⁶²⁷: Ուշադրություն դարձնենք Գ.Ստեփանյանի հետևյալ մտքին. «1922թ.-ին Վիեննայում լույս է տեսնում Եսայանի «Յոգիս աքսորյալ» ստեղծագործությունը: Չերմ շնչով ու բանաստեղծական վառ երևակայությամբ գրված այդ երկում հարազատորեն ներկայացվում է հեղինակի ապրած խոր հիասթափությունն ու հուսալքությունը, այն մեծ փոփոխությունը, որ առաջացել էր նրա մեջ՝ անսխալընթաց դեպքերից հետո»⁶²⁸: Ընդօժենք, որ գրողի վիպակում հուսալքությունն ու հույսը փոխհաջորդում են իրար, բայց և անթաքույց է, որ հերոսուհին շարունակական փնտրտութեան մեջ ինչքան էլ փորձում է անկոտրում կամքով հետ քերել աքսորված հոգին, միևնույն է, նրա կյանքում ներկայություն է հուսահատությունն ու հուսալքությունը: Անդրադառնանք ևս մեկ կարևոր փաստի. Չապել Եսայանի «Երկերի ժողովածու»-ում, որը տպագրվել է 1937 թվականին ՀԽՍՀ Պետհարտի Մոսկվայի տպարանում, վիպակից հանվել է կարևոր մի հատված⁶²⁹. «Այն միջոցին որ Սեպուհեան եւ Չերքեզեան սրահ պիտի մտնէին պատկերներս տեսնելու, խուճք մը ուրիշ ծանօթներ եկան այցելութեան եւ անմիջապէս խօսքը դարձաւ հակայեղափոխական շարժումին, կիլիկիոյ կոտորածներուն, եւ թրքահայ նոր դաշնագրութեան մը ծրագրին վրայ: Խօսակցութիւնը շուտով վեճի փոխուեցաւ եւ բուն կարծիքներու շնորհիւ, աղմկայի վիճաբանութիւնը սանձարձակ դարձուց ամեն մեկը»⁶³⁰: Վիպակի 1959 թվականի տպագրության մեջ «Յոգիս աքսորյալ» վիպակից հանվել է ոչ միայն վերոնշյալ հատվածը, այլև այնպիսի մի նախադասություն⁶³¹, որը կարող էր ակնարկել հեռացված հատվածի բովանդակությունը. «Ի՛նչ պատկեր, ի՛նչ արուեստ այս դժոխքին մեջ. մուլթը պատեց աշխարհը ու հիւրերս մեկնեցան մինչեւ դրան սեմին վրայ վիճելով եւ կատարելապէս մոռցած թէ ինչո՞ւ համար եկած էին ինձ այցելութեան»⁶³²:

Գրականագիտության մեջ չկա արձագանք այն փաստին, որ հանվել է կարևոր հատված, որում երևում է հերոսուհու՝ քաղաքական տվյալ ժամանակաշրջանում իրեն դժոխքում զգալը, երբ իր մտածումներում խորասուզված նկարչուհին փորձում է աքսորված հոգու հետդարձի ճամփաները գտնել, զայիս են մարդիկ, որոնք պետք է գնահատեն արվեստի գործը, բայց հեղինակն իսկույն ակնարկում է այն հուսահատությունը, որը կարող էր զգալ հայ մտավորականը: Իհարկէ, հաճելի է տեսնել մարդու մեջ անցյալից կտրվելու և առաջ շարժվելու բուն ցանկությունը, բայց և

⁶²⁵ **Եսայան Չ.**, Յոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 2:

⁶²⁶ **Արզումանյան Ս.**, Չապել Եսայան (կյանքը և գործը), ՀՍՍՐ ԳԱ իրատ., Ե., 1965, էջ 190:

⁶²⁷ Երկերում:

⁶²⁸ **Եսայան Չ.**, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 9:

⁶²⁹ Տե՛ս **Եսայան Չ.**, Երկերի ժողովածու, Հայպետհրատ, Երևան-Մոսկվա, 1937, էջ 218:

⁶³⁰ **Եսայան Չ.**, Յոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 9:

⁶³¹ Տե՛ս **Եսայան Չ.**, Երկեր, Հայպետհրատ, Ե., 1959, էջ 141:

⁶³² **Եսայան Չ.**, Յոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 9:

արդյունքում առաջանում են կարևոր հարցեր՝ մի՞թե «հայրենաբաղձ» ձգտումներով լեցուն վիպակից կարելի է հանել այն առանցքային հատվածը, որում պարզ ու հստակ խոսվում է կատարվածի և իրականության մասին, մի՞թե կարելի է համամարդկայինի մեջ սպանել ազգայինը. բարեբախտաբար 1922 թվականին Վիեննայում տպագրված գրքում, 1972 թվականին Բեյրութում տպագրված Չապել Եսայանի «Երկեր»-ում⁶³³ և 1987 թվականին Անթիլիասում տպագրված Չապել Եսայանի «Երկեր»-ում⁶³⁴ վերոնշյալ հատվածը ամրապնդված է: Հատվածի ամկայությունն անչափ կարևոր է. այստեղ է, որ գրողը բերում է քաղաքական բարդ իրավիճակում գործունեություն ծավալող մտավորականների հավաքական կերպարը. այստեղ ենք տեսնում մտավորականների, որոնք լսարանին գրավելու և իրենց ստեղծածի ճշմարիտ գնահատականը տեսնելու փոխարեն սկսում են խճճվել ընդհանուրի շփոթ առօրյայում: Գրողը փորձում է ցույց տալ մտավորականի դժվար ուղին քաղաքականությամբ շնչող մթնոլորտում:

Չապել Եսայանը վիպակում բացում է իր հերոսուհու ներաշխարհը. նա իրեն «անօգուտ անձնավորություն» է զգում ժամանակի տրամադրությունների ծնունդ գրողների, բանաստեղծների, երաժիշտների շրջապատում, որոնք «գործօս կերպով մասնակից են այն միջոցին հանրային վեճերում»⁶³⁵: Հեղինակն իր վիպակում հույս է հայտնում, որ նրանց հոգու անկյունում միշտ պահված է իրական արվեստը և անհաղթելի տրամադրությունները չեն սպանել շրջապատի լույսը: Բայց և տեսնում ենք, որ անգամ նրան՝ Էմմային, որ ազատության շարունակական փնտրտությունների մեջ է, չի հաջողվում կերտել այն, ինչ ինքը տեսնում է հոգու աչքերով: Ճիշտ է, նա կարողանում է ժամանակ առ ժամանակ հետ բերել հոգին աքսորից, տեսնել գեղեցիկը, այն, ինչին պիտի ծառայի արվեստը, ինչից պիտի ոգեշնչվի իրական արվեստագետը, բայց արդյունքը նրան չի գոհացնում և նա ընկնում է շարունակական փնտրտությունների լաբիրինթոս: Պատահակն չէ, որ գրողն անկեղծանում է. «Բայց ինչքա՛ն տարբեր է այն, որ կը տեսնեմ իմ հոգի՛ս աչքերով եւ այն որ կը դնեմ մարդկային աչքերու առաջք»⁶³⁶:

«Հոգիս աքսորյալ» վիպակում կարևորը սյուժետային զարգացումները չեն. գրողը ցանկացել է ընթերցողին սովորեցնել կյանքը տեսնել այնպես, ինչպես տեսնում է իրական արվեստագետն ու մտավորականը, և այդ ամենը նրան ճանաչելու, թողած գործը գնահատելու ուղիղ ճանապարհն է, և հենց դա է արվեստագետի՝ Էմմայի հոգեկերտվածի ստեղծման բարդ ուղին ներկայացնելու պատճառներից մեկը: Չապել Եսայանն իր հերոսուհու հոգեբանական նկարագիրը ամբողջացնելու նպատակով նրա հայացքն ուղղել է մանկություն: Արդյունքում պարզ է դառնում, որ դեռ մանկուց է խմորվել Էմմայի մեջ անկարելիին ձգտելու զգացումը և պատահական չէ, որ իշխանուհու կյանքով ապրած աղջնակը, կյանքի դժվարություններն բախվելով, ավելի էր հակվելու դեպի իր իդեալը, բռնելու էր իրական մտավորականի բուն առաքելության կրողը դառնալու բարդ ճանապարհը. «Գտնել մարդոց հոգիներուն ճամբան, դառնալ հաղորդական, իմ երագիս եւ յուզումիս կշռոյթը տալ իրենց անձեւ եւ անզոյն զգացումներուն...»⁶³⁷: Ըստ Չապել Եսայանի՝ սա այն առաջնային մեկնակետն է, այն կարևոր գաղափարը, որի կրողը պետք է լինի իրական արվեստագետը: Այս տեսանկյունից Էմման՝ Չապել Եսայանի գաղափարակից կերպարը, նկարչուհու մանրագին հայացքով քննում է ոչ միայն իր ներաշխարհը, այլև իրեն շրջապատող անձանց՝ գտնելու աքսորված հոգու հետդարձի բանաձևը: «Հոգիս աքսորյալ» վիպակի կերպարային համակարգի վերաբերյալ Սևակ Արզումանյանն ասել է. «Հեղինակին ավելի շատ մտահոգել է ընդհանուր միջավայրի «բնավորությունը», քան առաջին կամ

⁶³³ Եսայան Չ., Երկեր, Շիրակ հրատարակչատուն, Բեյրութ, 1972, էջ 80-81:

⁶³⁴ Եսայան Չ., Երկեր, Բ. հատոր, Կիլիկյո կաթողիկոսության տպարան, Անթիլիաս, 1987,

էջ 30:

⁶³⁵ Եսայան Չ., Հոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 9:

⁶³⁶ Եսայան Չ., Հոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 3-4:

⁶³⁷ Լույս տեղում, էջ 21:

երկրորդական կերպարների բնավորությունը, հերոսների անհատականացումը»⁶³⁸: Այս բնորոշման մեջ, իհարկե, կա ճշմարտություն միջավայրի «բնավորության» ներկայացման տեսանկյունից, սակայն վիպակում շրջապատող մտավորականներին հերոսուհին ներկայացնում է՝ յուրաքանչյուրին տալով անհատականության կնիք, իհարկե, ամեն անգամ չմոռանալով ահազանգել նրանց՝ աքսորի ընկերներ լինելու դառը ճշմարտությունը: Թերևս սա է պատճառը, որ Էմմայից և բանաստեղծուհի Սիրանուշ Դանիելյանից բացի մենք դիտարկել ենք ևս մի քանի կերպարների՝ նրանց մեջ առանձնացնելով մտավորականների, որոնցից յուրաքանչյուրի անհատական քննությունը սահմանադրական Թուրքիայում հայ մտավորականության նկարագրի ամբողջական պատկերը ստանալու ճանապարհ է:

«Յոգիս աքսորյալ» վիպակում հետաքրքիր կերպարային կերտվածք ունի Յրանտ Չերքեզյանը՝ Էմմայի նախկին ուսուցիչը: Յրանտ Չերքեզյանի մեջ Էմման տեսնում է «մտաւորականի մտախոհութիւն», ինչը բուռն ցանկություն է առաջացնում վեր հանելու այն, ինչը թաքնված է այդ խստադեմ ու գրեթե չժպտացող դեմքին: Յերոսուհին, որ կրողն է իրական արվեստագետի հատկանիշների, չի բավարարվում այն ոսկեփոշով, որը տեսանելի է բոլորին, ևս տեսնում է այն, ինչն առավել խորքային է, ուստի պատահական չէ Էմմայի մտավախությունը. «...Երբ նոյնիսկ մարդոց ըսեմ թէ Յրանտ Չերքեզեան բարի է, կը կարծեն թէ կուզեմ հեզնել»⁶³⁹: Գրողը նաև բերում է մտավորականի համար «անհաղթելի տրամադրության» ստեղծման հիմքը, այն է՝ հասարակության համար ըմբռնելի չէ այն, ինչ խորն է, ինչը տեսնելու համար ճիգ է հարկավոր գործադրել, ընդունելի չէ այն, ինչ չի համաձայնվում ձուլումը լինել շրջապատող իրականության, ուստի պատահական չէ, որ իրական Չերքեզյանին հասարակությունը չի ընկալում. «Այդ մարդը ոչ միայն անհանգիստ է իր առաքինություններով այլ եւ ուրիշները անհանգիստ կ'ընէ. որովհետեւ մեր ժամանակներու մեջ, մարդիկ տեղաւորուած հանգստաւետ եւ իրենց չափին համեմատ կերտուած երկբայական բարոյականի մը մեջ, թշնամի կը նկատեն առնք որ իրենց պահանջկոտ հոգիին վրդովմունքը կը կրեն»⁶⁴⁰: Ինչպես տեսնում ենք, սահմանադրական Թուրքիայում մեծ պատ է եղել հասարակության ու մտավորականի միջև, իսկ խոչընդոտի հաղթահարման ելքը գրողը տեսնում էր միասնականության ու հուսահատության բռնկումներին համընթաց ժամանակի հետ առաջ շարժվելու մեջ: Յրանտ Չերքեզյանի միջոցով Չապել Եսայանը բերել է ժամանակի մտավորականության՝ «անհաղթելի տրամադրությունները» բացահայտող բանալիներից ևս մեկը: Այսպես՝ նախկին ուսուցչին տեսնելով՝ նկարչուհին հիշում է, թե ինչպիսի ապրումներ է ունեցել նրա շուրթերից գրաբար հատվածը լսելիս. «...Կարծես խզուած կապ մը պիտի վերահաստատուէր, կարծես հոգիս իր աքսորէն պիտի վերադառնար, ինքզինքը ճանչնալու երջանկութիւնովը պիտի սարսուռար...»⁶⁴¹: Այստեղից տեսնում ենք պոլսաբնակ հայ արվեստագետի անլիարժեքությունն ու մեկուկուսեց անցյալին նայող ու նախնիներից կտրված լինելու բարդույթի հաղթահարման դժվարին ուղին: Արդյունքում մտավորականների շրջանում ստեղծվել է ներկայից աքսորված լինելու, Չապել Եսայանի բնորոշմամբ՝ որոշակի «ուղեկորոյս եւ շուարուն» վիճակ, ինչն էլ նրանց նետել է շարունակական փնտրտուքների մեջ: Ընդգծենք, որ այն հասարակությունը, որը շրջապատում էր նրանց, այն մթնոլորտը, որի մեջ չէին կարողանում ճշմարիտ ուղի գտնել մտավորականները, շատ խոր արմատներից էր սնվում, այն արդյունքն էր 1909 թ.-ի Կիլիկիայի կոտորածների, 1912-1913

⁶³⁸ Արզումանյան Ս., Չապել Եսայան (կյանքը և գործը), ՅՍՍԻ ԳԱ հրատ., Ե., 1965, էջ 212:

⁶³⁹ Եսայան Չ., Յոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 8:

⁶⁴⁰ Նույն տեղում, էջ 8-9:

⁶⁴¹ Նույն տեղում, էջ 6-7:

թվականների Բալկանյան պատերազմի, որը մեծ հույսեր էր առաջացրել հայերի հոգում: Դեռևս 1913 թվականին Նիկոլ Աղբալյանը «Հորիզոն»-ի էջերում ոգևորված գրում էր. «Բնական է այն ուրախությունը, որ պիտի զգայ ամեն հայ՝ լսելով հաշտության լուրը, որովհետև բալկանեան հաշտություն՝ նշանակում է հայոց հարցի յարուցում և ո՞վ գիտե՞ գուցե նաև լուծում այնպիսի ձևով, որ հայությունը ազատւեր թուրքական լուծից...»⁶⁴², իսկ արդյունքում բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմն ու Մեծ եղեռնը, հայկական կոտորածներն ու դրանց արդյունքում 20-րդ դարի 10-ական թվականներին ձևավորվեց մի հասարակություն, որը շնչում էր ժամանակի անկանխատեսելի ու վտանգներով լի օդը, որի կյանքը ամեն վայրկյան վտանգի առաջ էր կանգնած և, բնականաբար, խզված էր կապը հավաքականության դարավոր կյանքի հետ, իսկ վիպակում տեսնում ենք, որ արվեստագետին հուզում էր կարևոր մի հարց. «...Պիտի կարենա՞մ արդո՞ք դուրս գալ իմ հոգեկան առանձնությունես եւ վերստին կապել խզուած կապերէն մէկ քանին»⁶⁴³:

Չապել Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակում առանձնանում է նաև բանաստեղծուհի Սիրանուշ Դանիելյանը: Նրա կերպարում ընթերցողը կարող է գտնել վերոնշյալ «անհաղթելի տրամադրություններից» ևս մեկը. «Գիտե՞ք այդպես է... շարունակեց, մենք կարծես աքսորեալներ ենք օտար եւ հեռաւոր երկրի մը մէջ: Մենք մեր ծննդավայրին մէջ աքսորեալներ ենք որովհետեւ զրկուած ենք այն մթնոլորդէն որ մեր ժողովուրդը իր հաւաքական կեանքով պիտի ստեղծեր մեր շուրջը... դիւրաբեկ եւ ցանցառ թելերով միայն կապուած ենք մեր բնաշխարհին հետ...»⁶⁴⁴: Այստեղ է, որ Էմմային բացեիք բաց ասվում է այն, ինչից փախչելու ճիգ էր նրա հոգեկան ամեն մի փոթորկում, դա հենց այն Նույն «հայրենաբաղձությունն» էր, որի մասին այնքան խորհում էր Նկարչուհին: Գրողը բերում է հոգեկան խարխափումների ճանապարհն անցած բանաստեղծուհու կերպարը՝ ցույց տալու այն լաբիրինթը, որն անել է ժամանակի մտավորականության համար. շատերն արդեն հասկացել են, որ հետդարձի ճամփաներ չունի իրենց աքսորը, շատերն էլ Էմմայի պես փորձում են պայքարել իրականության դեմ «ներշնչման մաքուր եւ հարազատ աղբիւրների» փնտրութեան ճանապարհին, այնինչ անխուսափելի է ճշմարտության հետ բախումը. «Ու ես ինքզինքս այնքան տարբեր պիտի համարեի իրմէն, տարբեր խառնուածք, տարբեր նկարագիր, տարբեր ճաշակ, յանկարծ զգացի ոչ միայն նման իրեն, այլ, Նույն, ինչպես երկու քոյր հոգիներ, աքսորի ընկերներ»⁶⁴⁵: Երևույթը երևան հանելով՝ գրողը մատը դնում է դարասկզբի պոլսաբնակ հայ մտավորականի վերքին, ցույց է տալիս այն ճշմարտությունը, որ քաղաքական անբարեհաջող պայմաններում ազգը տվել է ոչ միայն մտավորականների կորուստ, այլև ողջ մնացողներին էլ հետապնդել է անել «հայրենաբաղձությունը», ամբողջի մասը չկազմելու ցավը և անցյալով ապրելու ճահճացող կարոտը, ուստի պատահական չէ, որ երեկոյթին տեսնելով արվեստագետ մարդկանց ներփակված և առանձնացած հոգեվիճակը՝ հերոսուհին տալիս է ժամանակի իրականության դիպուկ գնահատականը. «Ի՛նչ շռայլութիւն եւ պերճանք ամուլ մնացած: Այն բոլորը որ կայ արդէն այն բոլոր սերմերը որ պիտի ծաղկին, կարող են զարդարել դժուարահաճ ժողովուրդի մը զեղարուեստական կեանքը: Բայց այդ բոլորը ցրիւ են ու ամէն մէկը կղզիացած իր մէջ եւ զրկուած այն կենսահիւթէն որ պիտի ուռճացներ եւ ծաղկեցներ այդ ընդունակութիւնները իրենց սկզբնական ուժին համեմատութեամբ»⁶⁴⁶: Եթե Էմման գտնվում էր արվեստի իրական գործ ստեղծելու որոնումների ճանապարհին և շարունակական փնտրութեան մեջ էր, ապա Էմմայի

⁶⁴² Աղբալյան Ն., Բալկանյան խնդիր, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1913, N 111, էջ 2:

⁶⁴³ Եսայան Զ., Հոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 16:

⁶⁴⁴ Նույն տեղում, էջ 12:

⁶⁴⁵ Նույն տեղում, էջ 13:

⁶⁴⁶ Նույն տեղում, էջ 18:

կերպարին հակադրվող մարդու մեկ այլ տեսակ է Սեպուհյանը: Թերևս թե՛ քաղաքական միջավայրում ծայրահեղության հասած՝ Նա ամեն բան տեսնում է հենց քաղաքական դիտանկյունից. «Այն ինչ որ մեր ուրախութիւնն է, մեր ցաւը, մեր կրօնքը, մեր մոլեռանդութիւնը, մեր անբուժելի հիւանդութիւնը, միջոց մըն է միայն իրեն Նման մարդոց համար, որ արժեք ունի այն ատեն երբ ուղղակի եւ անմիջապէս կը ծառայէ պայքարի մեջ մտած կողմերէն մեկուն կամ միւսին»⁶⁴⁷: Հերոսուհու ըմբռնմամբ՝ արվեստագետի հոգում շարունակական կուտակումի մեջ պետք է լինի կյանքի ու ազատության փիլիսոփայությունը, իսկ քաղաքականության մեջ սուզվելու ծայրահեղությունն ու «հայրենասիրական ռոմանտիզմը» վտանգի առջև են կանգնեցնում արվեստի մնայուն գործ ստեղծելու ցանկացած փորձ:

«Հոգիս աքսորյալ» վիպակում յուրակերպ «հանձնառություն ունի» մեկ այլ կերպար՝ Էմմայի ցուցահանդեսի համար կարգադրիչ հանձնախմբի նախագահ ընտրված Վահան Տիրան բեյը: Նա նախևառաջ միջոց է գրողի համար իր հերոսուհուն համապատասխան իրավիճակում ներկայացնելու և հոգեբանական Նոր շերտեր ի հայտ բերելու համար: Էմման Տիրան բեյի մասին առաջին տեղեկությունները ստանում է՝ լսելով մորաքրոջ պատմությունը Նրա՝ ազնվական ընտանիքից սերելու և ազգային արվեստի գործերի պաշտպան լինելու վերաբերյալ: Գրողը հերոսուհու մեջ կաթիլ-կաթիլ ներարկում է միջավայրի տաղտուկը փարատելու հույսը՝ Նրա առջև կանգնեցնելով մարդու, որը Նրա նկարներում ոսկեփոշուց զատ տեսնում է խորքային առավելություններ՝ «ուժ եւ իմացականութիւն»: Էմման բռնկվում է սիրով, գրողը բացում է Նրա հոգու Նուրբ գաղտնարաններն ընթերցողի առջև. «...Այդ թուպէին իմ կեանքի ամենէն յուզումնային, ամենէն գեղեցիկ ու տառապագին շրջաններէն մեկը կը բանար այդ խօսքերով»⁶⁴⁸: Պարզվում է Նաև, որ Չապել Եսայանն իր վիպակում գալիք սերունդների համար բերել է ոչ միայն սահմանադրական Թուրքիայի փոփոխական ու անկանխատեսելի մթնոլորտում մտավորականների առջև կանգնած «անհաղթելի տրամադրությունները», այլև ցույց է տվել, թե ինչի կարիքն ունեին, ինչով էին փորձում սնվել և հոգեկան ուժ ստանալ արվեստագետները. Նրանց ընդամենն անհաժեշտ էր վայրկյաններ՝ հասկացված լինելու, իրականին ձուլվելու և ամբողջական լինելու զգացում ունենալու համար և կարևոր չէ, որ վերջում Նրանց կարող էր սպասել հուսախաբություն: Հեղինակը վարպետորեն բերում է արվեստի գործի ստեղծման խրթին ուղու դիպուկ նկարագիրը. «Ու մարդիկ որ արուեստագետի մը գործերուն առանջ կանգ կ'առնեն չեն կարող երեւակայել որ մենք ստիպուած ենք մոռցուած եւ անցեալ վիշտ մը հարիւր անգամ վերակենդանացնելու եւ հարիւր անգամ մեր սիրտը արիւնելու որպէս զի անոր կենդանի եւ ներկայ տպաւորութեան կարենանք հաղորդակից ընել անցնող գորշ եւ անտարբեր ամբոխը»⁶⁴⁹:

Վիպակի վերջնամասում մեր առջև ամբողջապէս երևում է Էմմայի՝ արվեստագետի կերպարն իր հոգեբանական բազմաշերտությամբ. Նրա միջոցով հեղինակը ցույց է տալիս, որ անգամ քաղաքական գաղջ ու անկայուն մթնոլորտն անկարող է արվեստագետի՝ ստեղծագործելու բուռն ցանկության առջև, որ վայրկյանների հուզումը բավական է անգամ տարիներ անց ոգեշնչվելու, հիշողության միջոցով սպիացած վերքերը կրկին թարմացնելու և արվեստի մնայուն գործ մարդկությանը տալու բուռն ձգտում առաջացնելու դիմաց. «Այսօր երբ երանգապնակս ձեռք կ'առնեն իմ ուրախութիւններս կը վերադառնան ինձ եւ վրձինս կ'առաջնորդուի իմ ներքին զգացումներուս յուզումովը»⁶⁵⁰: Արվեստագետի խառնվածքի այս բնորոշումը համամարդկային է ու վերժամանակյա, քանզի լայն առումով արվեստը ազգություն չի

⁶⁴⁷ Նույն տեղում, էջ 7:

⁶⁴⁸ Նույն տեղում, էջ 30:

⁶⁴⁹ Նույն տեղում:

⁶⁵⁰ Նույն տեղում, էջ 30:

ճանաչում, նրա համար առաջնայինը չարիքը բարիքի վերածելն է, կյանքի ու գեղեցիկի անունից խոսելը: Ինչպես նկատեցինք, Չապեյ Եսայանի վիպակում իրականության արտացոլման սկզբունքներից մեկը դեպքերի զարգացման ընթացքը պատկերելն էր հոգեբանական փոփոխությունների մեջ, ուստի վիպակի վերջնամասում Էմմայի բանտարկվածության զգացման մեջ լինելն էլ կարելի է համարել գրողի ներկայացրած խտացված պատկերումը. Էմման որոշում է կայացնում գնալ տիկին Դանիելյանի մոտ՝ հույս ունենալով այնտեղ գտնել նաև Զրանտ Չերքեզյանին, քանի որ ինչքան էլ փորձել էր ազատվել իրեն կաշկանդող «անհաղթելի տրամադրություններից», միևնույն է՝ մնացել էր պոլսահայ մտավորականության աթորի ընկերը. «...Յակառակ իմ յանձնապաստան առանձնությունս, հակառակ այն հաւատքին որով կը կարծեի թէ առած եմ իմ ազատութեան թռիչքս, եւ որը ինձ կը հեռացներ իրենցմէ, դարձեալ եւ միշտ աթորի ընկերներ ենք, բանդարկեալ մեր կառուցած ներքին բանդերուն մեջ եւ խիստ բանտապահներ իրարու»⁶⁵¹: Յատկանշական է, որ «Յոգիս աթորյա» վիպակը Չապեյ Եսայանն ավարտում է այնտեղ, որտեղից սկսել էր, այնպես, ինչպես իր հերոսների կյանքն էր անցնում հավաքական կյանքի լաբիրինթներում: Մտավորականության բանտարկվածության հարցը գրողին հուզելու էր անգամ 1928 թվականին, երբ խոսելով պոլսահայ մտավորականության ստեղծագործական գործունեության վերաբերյալ «Նորք» հանդեսում տպագրված «Գաղութահայ գրականությունը» հոդվածում նա ահազանգելու էր. «Մտավորական «ընտանիքն» ուրեմն ապրելով մեծ և հեղաշրջման տաճնապով, գաղափարական պայքարներով հուզումնալի երկրի մը մեջ, ինչպես էր Թյուրքիան, անհաղորդ մնացեր էր անոր կյանքին և իր պատյանին մեջ ամրափակված գոհացեր էր բանաձեւելով իր անմիջական ուշադրության առարկա յեղող առանձին հոգերը»⁶⁵²:

Վիպակի ավարտն առաջին հայացքից ստեղծում է տպավորություն, որ դեռ շարունակություն պետք է ունենար աթորված հոգիների կյանքի ուղու պատկերումը, չէ՞ որ բոլորին Չապեյ Եսայանը թողնում է կես ճանապարհին. ընթերցողը չի էլ նկատում՝ ինչպես է նրանց կորցնում Պոլսի՝ տեսողով համակված հավաքական մթնոլորտում, սակայն խորը մտածելով՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ այստեղ կարևոր չէր, թե ինչ հարաբերություններ ունեին տիկին Դանիելյանն ու Չերքեզյանը, ինչ հանգրվան ունեցավ ժայռի վրա նավաբեկվելու վտանգի առջև կանգնած Սեպուհյանը, ինչ ուղղությամբ գնաց Տիրան բեյը, քանի որ սյուժետային առումով սկիզբ, զարգացում և ավարտ ունեցող գործ չէ մեր առջև. այստեղ հեղինակը, բերելով կոնկրետ մարդկանց կերպարներ, ցանկացել է ընդհանուրի մեջ մասնավորել, պատկերել մտավորականի կյանքից որոշ դրվագներ՝ ցույց տալու իրականությունը և սերունդներին փոխանցելու ժամանակին այնքան կարևոր «անհաղթելի տրամադրությունների» ստեղծման հիմնաքարերը: Վիպակում նկարագրված ճանապարհով գրողը քայլել է գործնականում՝ 1910-ական թվականներին՝ քաղաքական անկայուն իրավիճակում՝ իր մեջ ծնունդ տալով արևով ու լույսով շաղախված գործ գրելու ցանկությանը: Գաղափարի փոխանցման առումով վիպակն ավարտուն է և տարիների հեռավորությունից դեռ կարողանում է հարվածել նշանակետին՝ հնչեցնելով մտավորականի և առիասարակ ազգի զարգացման համար կործանարար թշնամու՝ արմատներից կտրված լինելու, հայրենի հողի ու միասնականության ուժը չզգալու դժբախտության գոյության վտանգը. «Ամեն մեկս մենակ ենք եւ լաւագոյն պարագային ասուլի մը պէս կ'անցնինք օտար երկնակամարներուն վրայէն. ինչքան ալ փայլուն եւ շողշողուն ըլլայ մեր թողած լուսաւոր հետքը, անիկա դատապարտուած է անօտրանալու եւ կորուսելու: ...Մինչ մենք մեր վրայ

⁶⁵¹ Ետպես տեղում, էջ 31:

⁶⁵² Եսայան 2., Գաղութահայ գրականությունը, «Նորք» հանդես, գիրք 1-ին, Երևան, 1927, էջ 221:

խտացած, ստիպուած ենք բիրտեղանալ, խզուած անցեալէն եւ արգելափակուած՝ ապագայէն»⁶⁵³: Յեղինակը սրտացալ կերպով ահագանգում է, որ առանձին ձայները միայն համերգի ներդաշնակութեան մեջ կարող են լսելի լինել⁶⁵⁴, այստեղից էլ գալիս է մենակութեան ավերակիչ զգացումը, ինչը ստիպում է մարդուն ներփակվել, շղթայվել անձնական ցավի և ուրախութեան մեջ, առանձնանալ ներաշխարհում: Գրողն իր վիպակում նաև ցույց է տալիս, թե ինչը կարող էր պարարտ հող դառնալ մտավորականութեան զարգացման համար. «Հաւաքական կեանքի արեւոյն ծովը եւ ազատ հորիզոնը միայն պիտի շնորհէր մեզ ստեղծագործութեան զօրեղ շունչը»⁶⁵⁵:

«Հոգիս աքսորյալ» վիպակի հանգամանալի քննությունը ցույց է տալիս, որ այն Չապել Եսայանի նշանավոր գործերից է և , չնայած իր փոքր ծավալին՝ 31 էջ, ընդգրկուն ու ամբողջական է. քննվում են և՛ ազգային, և՛ համամարդկային նշանակություն ունեցող հարցեր: Յեղինակը վիպակում բերում է հաջողության հասնելու կարևոր մի բանաձև՝ կաշկանդող պատյանները կոտրելու և հոգեկան ազատության ճանապարհին են ստեղծվում մնայուն գործերը:

DESCRIPTION OF THE INTELLIGENTSIA IN THE NOVEL "MY SOUL IN EXILE" BY ZAPEL YESAYAN

ANNA SARGSYAN

*Assistant Dean of the Faculty of Philology of the ASPU after Kh. Abovyan,
Fellow Applicant of the Chair of Armenian New and Modern Literature and its Teaching
Methods after Vache Partizuni /ASPU after Kh. Abovyan/
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to reveal the results of the clash of intelligentsia and surrounding reality in constitutional Turkey in the novel of Zabel Yesayan "My Soul in Exile". The following problems were separated: to present the main ideological orientation of the novel, to comprehensively reflect the unique figurative system of the novel, to show the national element, hidden in the general parallel "naively" portraits given, to reveal the historical foundations of the artistic events that develop in the novel.

In the course of the study, the following methods were applied: comparison, abstraction, analysis and synthesis.

As a result of the study, we came to the conclusion that the novel "My Soul in Exile" of Zabel Yesayan has not only historical, but also universal and artistic great value. The writer in her novel masterfully presented a generalized image of artists engaged in their activities in difficult political conditions: here are clearly depicted artists who, instead of gaining an audience and seeing the true assessment of what they created, are confused in the general mess of everyday life. Thus, the writer not only showed the artist's difficult path in an atmosphere inspired by politics, but also emphasized the path of spiritual freedom and the method of extermination in shells as a precondition for creating a real work of art.

Keywords: *Zapel Yesayan, past, melancholy, roots, soul, exile, intelligentsia.*

⁶⁵³ Եսայան Չ., Հոգիս աքսորյալ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1922, էջ 13:

⁶⁵⁴ Տե՛ս Լույս տեղում:

⁶⁵⁵ Լույս տեղում:

ОБРАЗ ИНТЕЛЛИГЕНЦИИ В ПОВЕСТИ ЗАПЕЛ ЕСАЯН «МОЯ ДУША В ИЗГНАНИИ»

АННА САРГСЯН

*Ассистент декана филологического факультета АГПУ им. Х. Абовяна,
соискатель кафедры новой и новейшей армянской литературы и
методики ее преподавания имени Вацэ Партизуни (АГПУ имени Х. Абовяна),
г. Ереван, Республика Армения*

В статье исследуются результаты столкновения армянской интеллигенции с окружающей действительностью в конституционной Турции в повести Запел Есян «Моя душа в изгнании». Были выделены следующие задачи: представить основную идеологическую направленность повести, всестороннее отразить уникальную образную систему повести, показать национальное, которое скрыто в «наивно» приведенных параллельно общечеловеческих портретах, раскрыть исторические основы художественных событий, развивающихся в повести.

В ходе исследования были применены следующие методы: сопоставление, абстрагирование, анализ и синтез.

В результате изучения мы пришли к выводу о том, что повесть Запел Есян «Моя душа в изгнании» имеет не только историческую, общечеловеческую, но и большую художественную ценность. Автор мастерски представила обобщенный образ артистов, занимающихся своей деятельностью в сложных политических условиях: здесь четко изображены артисты, которые, вместо того, чтобы завоевывать аудиторию и увидеть истинную оценку созданного ими, запутались в общей суеде повседневной жизни. Писатель, таким образом, не только показала трудный путь артиста в атмосфере, дышавшей политикой, но и подчеркнула путь духовной свободы и избавления от оков как предусловия создания реального искусства.

Ключевые слова: *Запел Есян, прошлое, тоска, корни, душа, изгнание, интеллигенция.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
HISTORY, ORIENTAL STUDIES
ИСТОРИЯ, ВОСТОКОВЕДЕНИЕ



**ПРОБЛЕМЫ АКТУАЛИЗАЦИИ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ
АРМЯН УКРАИНЫ: СОБЫТИЯ И ЛЮДИ***

ИРИНА ГАЮК

*Львовская Национальная академия искусств,
кафедра менеджмента искусств, кандидат философских наук, доцент,
г. Львов, Украина
irinahayuk@gmail.com*

В статье освещены основные проблемы, связанные с исследованием и актуализацией культурного наследия армянской диаспоры в Украине. Показано, что за века проживания в инородной социальной среде у армян Украины появились новые законы, обычаи, традиции, изменились язык, имена, быт и состоялась успешная уния Армянской Церкви с Римом, которая зафиксировала изменения, произошедшие с армянами за века их проживания в условиях украинского-польского окружения и стала показателем этно-культурной трансформации и сохранения обновленной этно-национальной идентичности. Раскрыто значение коллективной исторической памяти как основы культурного поля диаспоры. На примере отдельных выдающихся представителей армянской диаспоры показаны их значение и роль для формирования актива исторической коллективной памяти армянской диаспоры Украины.

Ключевые слова: *армяне, диаспора, культура, коллективная историческая память, традиция, трансформация, этнос, этно-национальная идентификация.*

Вопросы актуализации армянского культурного наследия Украины сегодня не менее важны, чем во время СССР с его политикой стирания национальных отличий и формирования новой вненациональной общности – советского народа. Армянское культурное наследие в Украине – тема неисчерпаемая, и освещать ее можно с разных сторон: движимое наследие (созданные армянами артефакты, хранящиеся в музейных и частных коллекциях Украины и зарубежья), недвижимое наследие (памятники светской и церковной архитектуры), значимые события в истории армян Украины и, конечно же, жизнь и деятельность выдающихся представителей армянской культуры, живших на землях Украины.

Еще раз отметим: вопрос не столько в изучении армянского культурного наследия в Украине – написано на эту тему немало, в том числе работ высокого научного уровня (хотя белых пятен и неизученных вопросов много больше), проблема, прежде всего, именно в привлечении внимания к армянскому культурному наследию, которое сегодня малоизвестно не только интеллектуально-культурной элите Украины, но и представителям армянской диаспоры страны.

* Հոդվածը ներկայացվել է 05.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

Между тем актуализация культурного наследия армян Украины непосредственно связана не только с вопросами сохранения богатейшего культурного наследия армян украинских земель, но и с сохранением культурной исторической памяти армян, без которой этнос или нация обречены на исчезновение.

Прежде, чем говорить о культурном наследии диаспоры, следует определить, что есть «культура диаспоры» и обозначить критерии, по которым можно определить национальную или этническую принадлежность человека. Для армян, большая часть которых веками проживает за пределами исторической родины, данный вопрос далеко не риторичен. Как не риторичен он и для представителей стран, ставших для армян второй родиной, не в последнюю очередь потому, что армяне – в высшей мере т. н. исторический этнос, т.е. этнос, представители которого при любых условиях и где бы то ни было достигают высокого привилегированного статуса, входят в высшие социальные страты и, следовательно, являются носителями политической сознательности и элитной культуры⁶⁵⁶.

Профессор В. Налимов считал, что через человека «в его бытии в Мире раскрываются смыслы. Смыслы распаковываются всегда через тексты. Человек... – это текст, или, точнее, многообразие текстов...»⁶⁵⁷. А это значит, что армяне диаспоры привносят новые смыслы в социум, который их принимает, он становится богаче и функциональнее. Следовательно, их присутствие в Украине (как и в любой другой стране) важно не только для них самих, но и для автохтонов. Как отметил М.М. Бахтин, «чужая культура только в глазах другой культуры раскрывает себя полнее и глубже... Один смысл раскрывает свои глубины, встретившись с другим, чужим смыслом, между ними начинается как бы диалог, который преодолевает замкнутость и односторонность этих смыслов, этих культур... При такой диалогической встрече двух культур они не сливаются и не смешиваются, каждая сохраняет свое единство и открытую целостность, но они взаимно обогащаются»⁶⁵⁸. Такое сосуществование разных народов и культур важно и для жизнеспособности общества, страны, т.к. однородная система теряет способность к развитию и, в конце концов, распадается. Поэтому сближение разных культур не должно доходить до слияния и потери самобытности: это не только порождает культурное одичание, но и противоречит закону внутренней неоднородности целого как условия его существования.

Внешняя инкорпорация армян в местную среду, как правило, происходила без особого сопротивления, т. к. армяне всегда были «нужными людьми», т.е. людьми, обеспечивающими экономическое процветание, а, следовательно, и государственную важность нового поселения. Но в любом случае, при массовой миграции армянские переселенцы, пройдя первый этап адаптации к новым условиям, начинают меняться, стремиться к определенному синтезу, суммарности с новым окружением, что диктуется новыми политико-экономическими реалиями, а также совпадает со стремлением государства привлечь эмигрантов в систему своих социально однородных (в идеале) связей. Однако для армян это уже другое, не родное государство, другие связи, поэтому включение в новую социальную систему на равных с автохтонами началах может привести к полной ассимиляции и исчезновению их, как отдельного этноса, на новой Родине. Чтобы этого не произошло, армяне стремятся сохранить свою неповторимость и самобытность и закрепить это уже в новой государственно-правовой системе. Так, в Украине они в 1356 году получают право самоуправления и собственного судопроизводства, а в 1367 году – религиозную автономию и т.д. Однако изменения неизбежны, и они имеют двойкий характер: с одной стороны, происходит ассимиляция

⁶⁵⁶ Мала енциклопедія етнодержавознавства. К.: «Гене́за», «Довіра», 1996. С. 82-83.

⁶⁵⁷ **Налимов В. В.** Спонтанность сознания: Вероятностная теория смыслов и смысловая архитектура личности. М.: Изд-во «Прометей» МГПИ им. Ленина, 1989. Предисловие

⁶⁵⁸ **Бахтин М.М.** Эстетика словесного творчества. М., 1986. С. 354.

части армянских переселенцев с местным населением, а с другой – появляется новое интересное образование, новый социальный организм – армянская диаспора с присущими только ей особенностями культуры.

В этом контексте еще более интересен процесс вторичной (или модифицированной) этносамоидентификации армян диаспоры, механизм, которой имеет скорее метафизическую, чем социальную природу. Речь идет об армянах, которые уже не десятилетиями, а веками проживали в другой стране. Процесс этот затрагивает, в основном, культурную, интеллектуальную элиту общества. Этих людей точнее было бы называть украинскими, польскими или русскими армянами. Но по их вкладу в изучение и сохранение армянского наследия они по праву являются истинными представителями армянской культуры.

Почему социально обеспеченным людям, принадлежащим к элите общества, необходимы поддержка и развитие армянской культуры в том или ином регионе, городе, и почему им так важно и ценно осознание собственной принадлежности к армянской культуре – объяснить рационально-прагматично трудно. Они и без того самодостаточны и успешны. Голос крови? Вторичная этносамоидентификация определяется уже не столько внешними социальными факторами, усвоенными стереотипами поведения человека, сколько, прежде всего, его личным самоопределением, собственным выбором, который зависит от определенного интеллектуально-культурного и духовного уровня и внутренней работы. Но именно эти украинские, польские или русские армяне дали мощный импульс для изучения, развития и популяризации армянской культуры, литературы, искусства, примером чего могут служить армяне Львова XIX – I-й половины XX века, европейские мхитаристы и т.д.

Культура диаспоры является целостным феноменом, возникающим в результате взаимодействия, органического синтеза культуры эмигрантов и доминирующей культуры страны, давшей им приют, которая в дальнейшем развивается как автономное и оригинальное явление. Этот процесс, по-сути, является этно-культурной дивергенцией, когда от этноса отделяется какая-то его часть и создает впоследствии автономную этно-культурную целостность. Результатом этнической дивергенции является появление новых этно-культурных систем схожего типа, и при этом все они сохраняют чувство общности системы. О самобытности этого явления в Украине свидетельствуют основные культурные характеристики развития армянской диаспоры. Армяне создали здесь собственную специфическую среду с большей или меньшей религиозной и административной автономией, развивали традиционные ремесла, которые под влиянием местных условий приобрели черты, не присущие им на родной земле. У них появились новые законы, обычаи, традиции, изменились язык, имена, быт и, наконец, именно в Украине состоялась успешная и стойкая уния Армянской Церкви с Римом, долговременность которой также была результатом изменений, происшедших с армянскими переселенцами за столетия их жизни на этих землях⁶⁵⁹.

Проблему сохранения армянского культурного наследия в Украине можно разбить на несколько пунктов, тем или вопросов: 1. сохранение недвижимого армянского культурного наследия в Украине (светские и церковные памятники, армянские кладбища или захоронения); 2. сохранение движимого армянского культурного наследия, отображенного в предметах культуры, ремесленных изделиях и письменных памятниках. Процесс сохранения культурного наследия, в свою очередь, включает три необходимых составляющих: 1. нужно знать, что сохранять. А это подразумевает изучение истории культуры армян в Украине (а также в регионе бассейна Черного моря и в связях с

⁶⁵⁹ Гаюк И.Я. Армянская церковь как уникальный феномен христианского мира. Львов: Логос, 2005. С. 176-206; см. также: Petrowicz G. La Chiesa Armena in Polonia e nei paesi limitrofi. Roma, 1988; Petrowicz G. L'unione degli Armeni di Polonia con la Santa Sede (1626-1686). Roma, 1950.

Арменией, Румынией, Молдавией, Польшей, Венгрией и Россией), совмещенное с поиском, идентификацией и фиксацией памятников армянской культуры и введением их в научный обиход; 2. сохранение, консервацию и реставрацию памятников армянской культуры; 3. актуализацию армянского культурного наследия, что подразумевает не только изучение и сохранение культурных достижений, но и привлечение к ним внимания широких слоев населения – армян и не армян, формирование такого общественного мнения, которое будет способствовать повышению внимания и заинтересованности в изучении армянского культурного наследия.

2004թ.-ի օգոստոսի սկիզբը նշանավորվեց Պակիստանի բանակի աշխատակազմի ղեկավար Ազիզ Խանի այցով Բաքու, ինչը խթանեց ռազմական համագործակցության հետագա զարգացմանը, մասնավորապես Պակիստանի կողմից աջակցությունը սպայական կադրերի պատրաստման հարցում: Ռազմական համագործակցության քննարկումներն այնպիսի մեծ մասշտաբների հասան, որ 2004թ.-ի վերջերին Պակիստանի դեսպանը Բաքվում հայտարարեց, որ երկու երկրների միջև համագործակցությունը պետք է ընթանա ոչ միայն ռազմական ուղղությամբ: Իսկ 2005թ.-ին Նախագահ Ի. Ալիևը պատասխան այց կատարեց Իսլամաբադ, որտեղ ջերմ ընդունելության արժանացավ: Այս այցի ընթացքում կնքվեցին 6 համաձայնագրեր՝ «Պակիստան-Ադրբեջան մշակութային համագործակցության», «Հուշագիր փոխադրումների ոլորտում», «Կրթության ոլորտում համագործակցության», «Ֆինանսների նախարարությունների միջև համաձայնագիր», «Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության համաձայնագիր», «Ավիացիոն համագործակցության համաձայնագիր»: Այս այցի ընթացքում անշուշտ ռազմական համագործակցության ոլորտի վերաբերյալ ոչ մի համաձայնագիր չկնքվեց, սակայն այցն ինքնին սկիզբ դրեց ռազմական ոլորտում հարաբերությունների հետագա զարգացմանը: Այս ոլորտում երկկողմ հարաբերություններն իրենց գագաթնակետին հասան 2006թ.-ին, և մակարդակը նույնիսկ չիջավ 2007-ին, երբ Պակիստանում ծանր ներքաղաքական իրավիճակ էր տիրում: 2007թ.-ին ապրիլին սպասվում էր Ադրբեջանի Չինված ուժերի նախարարի այցը Իսլամաբադ, որտեղ և քննարկումներ էին ընթանալու համատեղ ռազմական համաձայնագրի համար, քանզի ադրբեջանական կողմը հետաքրքրված էր Պակիստանից ներմուծելու JF-17 բազմաֆունկցիոնալ կործանիչ ինքնաթիռներ, որոնք Չինաստանի ու Պակիստանի համատեղ արտադրանքն են, ինչպես նաև փոքր տրամաչափի զենքեր և պակիստանյան արտադրության հետևակային մարտական մեքենաներ: Այնուամենայնիվ, 2007թ.-ը Պակիստանի համար ներքաղաքական ծանր ժամանակաշրջան էր. ահաբեկչական գործողությունները, Մուշարաֆի հաղթանակը, Պակիստանի ընդդիմության առաջնորդ Բեննազիր Բհուտտոյի մահը, մյուս կողմից՝ արևմտյան ուժերի ճնշումներն Աֆղանստանում թալիբների դեմ, ԵՄ-ի կողմից քննադատությունները Մուշարաֆի ներքին քաղաքականության դեմ հանգեցրին Ադրբեջան-Պակիստան հարաբերություններում որոշակի դադարի: Այդ դադարը շարունակվեց մինչև 2008թ.-ի օգոստոս՝ անգամ Մուշարաֆի իրաժարականից հետո: Պակիստանում իշխանության եկավ Ասիֆ Ալի Չարդարին, թվում էր, թե ռազմական համագործակցության դադարը շարունակվում էր, սակայն 2008թ.-ի նոյեմբերին Ադրբեջանի Չինված ուժերի նախարար Ջամալովի այցը Իսլամաբադ հակառակն էր ապացուցում: Այս այցի ընթացքում քննարկումներ էին ընթանում համատեղ ռազմական համագործակցության համաձայնագրի կնքման համար: 2009թ.-ը երկու երկրների համար ռազմական համագործակցության ոլորտում նշանակալից էր, քանզի այդ ժամանակ Բաքու այցելեց Պակիստանի Դաշնային պաշտպանության նախարարը՝

⁶⁹⁹ Fuad Mukhtarli ,From Weapons to Humanitarian Aid, Azerbaijan & Pakistan Seen As Reliable Partners. <https://caspiannews.com/news-detail/from-weapons-to-humanitarian-aid-azerbaijan-pakistan-seen-as-reliable-partners-2017-8-18-29/>

⁷⁰⁰ Ministry of defence Azerbaijan. <https://mod.gov.az/en/>.

Քննարկելու համագործակցության հետագա ուղղությունները, որը և հիմք հանդիսացավ նոր բանակցությունների համար: Այս ամենի վկայումս է 2009թ.-ի հոկտեմբերին Պակիստանի Չինված ուժերի նախագահ, գեներալ Թ.Մեջիդի այցը Ադրբեջան: Անհրաժեշտ է ընդգծել, որ գեներալ Մեջիդի այցի ընթացքում Պակիստանում լարված ներքաղաքական իրավիճակ էր տիրում, զինված ուժերի պայքարը ակտիվացել էր ծայրահեղական զինյալ խմբավորումների դեմ: Այցի ընթացքում գեներալ Մեջիդը հանդիպեց Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի և արտաքին գործերի նախարար Է. Մամեդյարովի, Ջամալովի հետ, քննարկվեցին ռազմական-տեխնիկական ոլորտում հետագա համագործակցության ծրագրերը և, հարկ է նշել, որ 2009թ.-ի վերջերին ռազմական համագործակցությունը գնալով ընդլայնվում էր: 2011թ.-ի 8-12ը ազերի զինուժի սպասարկող անձնակազմը Ամմանում մասնակցում էր ռազմական դասընթացներին: 2013 թվականի մարտ-հուլիս ամիսներին ադրբեջանական զինուժի ներկայացուցիչները վերապատրաստումներ էին անցնում Պակիստանի Սյուրե քաղաքում: 2013թ.-ի մարտին ադրբեջանական ծովայինները մասնակցեցին Արաբական ծովում Պակիստանի կողմից կազմակերպված Ամման-2013 բազմազգ զորավարժությանը:⁷⁰¹ Իսկ 2015թ.-ին, ըստ Ադրբեջանում Պակիստանի դեսպան Խալիդ Ուսմար Զախերի, 130 ազերի պաշտպանական անձնակազմ հատուկ զորավարժությունների էր մասնակցում Պակիստանում⁷⁰²⁷⁰³:

Համագործակցության շնորհիվ պաշտոնական Բաբուն շարունակում էր պակիստանյան տեխնիկայի օգնությամբ բարձրացնել զինված ուժերի մարտունակությունը, զինվորական անձնակազմի վերապատրաստումները և Պակիստանին դիտարկել հուսալի գործընկեր թե՛ քաղաքական, թե՛ ռազմական ոլորտում: Պաշտոնական Բաբուն այս համագործակցության ընթացքի համար միշտ պատրաստակամ էր աջակցելու Պակիստանին, ինչի վառ ապացույցն այն է, որ 2010 թվականին Պակիստանում տեղի ունեցած ջրհեղեղի ժամանակ Ադրբեջանը այն եզակի պետություններից էր, որ հատկացրեց 1 միլիոն ԱՄՆ դոլլար, 40 տոննա սնունդ, շտապ օգնության և արտակարգ իրավիճակների ջնկատ, դեղամիջոցներ, հագուստ:⁷⁰⁴⁷⁰⁵

Երկկողմ հարաբերությունների հետագա խորացմանը նպաստում էին փոխադարձ այցերը, մասնավորապես 2010թ.-ի սեպտեմբերի վերջին կայացած ադրբեջանական զինուժի ղեկավարության այցը Պակիստան փոխծովակալ Սուլթանովի ղեկավարությամբ: Այցը նշանավորվեց Պակիստանի զինուժի ծովակալ Ն.Բաշիրի հայտարարությամբ, որ քանի դեռ Ադրբեջանին պատկանող տարածքները օկուպացված են, Պակիստանը չի ճանաչելու Հայաստանին որպես պետություն:⁷⁰⁶

⁷⁰¹ Fuad Shahbazov. Azerbaijan's Growing Military Cooperation With Pakistan.<https://thediplomat.com/2017/01/azerbaijans-growing-military-cooperation-with-pakistan/>.

⁷⁰² Zaur Shiriyev, Azerbaijan: Ties with Pakistan Focusing on Arms and Energy. <https://eurasianet.org/azerbaijan-ties-with-pakistan-focusing-on-arms-and-energy>.

⁷⁰³ <http://newtimes.az/en/diplomatik/5005/> հասանելի է 25.11.2019, ժամը 20:58:

⁷⁰⁴ ShahbazovFuad, Azerbaijan's Growing Military Cooperation With Pakistan Baku is seeking out increased defense imports from Pakistan, including JF-17 aircraft. January 13, 2017. <https://thediplomat.com/2017/01/azerbaijans-growing-military-cooperation-with-pakistan/>.https://azertag.az/en/xeber/Azerbaijani_soldiers_to_join_training_course_in_Pakistan-230764.

https://azertag.az/en/xeber/Azerbaijani_servicemen_to_attend_military_training_courses_in_Pakistan-603449.

⁷⁰⁵ Azerbaijan and Pakistan: Historical relations and perspectives. <https://thefrontierpost.com/azerbaijan-and-pakistan-historical-relations-and-perspectives/>.

⁷⁰⁶ Ниязов Н.С., “Развитие Азербайджано-Пакистанских связей в военной области в 1994–2010 годах”, УДК 94.327,ББК 63.3(0)6+68.8(5Азе),2011. This work is licensed under <http://creativecommons.org/licenses/by/4.0/> (the “License”). Notwithstanding the ProQuest Terms and conditions, you may use this content in accordance with the terms of the License.

2014թ.-ի փետրվարին Պակիստանն ու Ադրբեջանը ստորագրեցին Երկկողմ ռազմական համագործակցության համաձայնագիր: Այդ համաձայնագիրը ստորագրվեց Իսլամաբադում Ռազմական համագործակցության աշխատանքային խմբի 5-րդ հանդիպման ընթացքում: Պակիստանյան պատվիրակությունը ղեկավարում էր գեներալ-մայոր Մուհամմեդ Ռաշիդը, մյուս կողմից՝ Ադրբեջանի պատվիրակությունը ղեկավարում էր պաշտպանության նախարարության միջազգային ռազմական համագործակցության վարչության ղեկավար գեներալ-մայոր Ռամիզ Նաջաֆովը: Նույն փաստաթուղթը փոփոխված տարբերակով ստորագրվեց նաև 2015թ.-ին Բաքվում կայացած աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում: Հաջորդ կարևոր հանդիպումը Պակիստանի նախագահի՝ 2015թ.-ին Ադրբեջան կատարած այցն էր, որի ընթացքում երկու երկրների նախագահները ստորագրել են Ադրբեջանի ու Պակիստանի միջև ռազմավարական գործընկերության մասին համատեղ հայտարարություն⁷⁰⁷: Ինչպես նաև պակիստանցիների համար դյուրինացվել է ադրբեջանական վիզան՝ հնարավորություն տալով պակիստանցիներին էլեկտրոնային տարբերակով վիզա ստանալու, ինչն էլ կնպաստի տուրիզմի, մշակութային, գիտական, սպորտի ոլորտների զարգացմանը: Երկու երկրների առաջնորդների ջանքերի և դրական տեսակետների շնորհիվ հարաբերությունները գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա⁷⁰⁸:

Ադրբեջան-Պակիստան ռազմական պաշտպանության համագործակցությունը արդեն հասել է զարգացման բարձր մակարդակի, այնուամենայնիվ, երկու պետությունների համար նման բարձր քաղաքական համագործակցության մակարդակը և միասնությունն ավելի խորը զարգացնելու միտում ունի: Պարբերաբար անցկացվող ռազմական զորավարությունները, զինված հակամարտությունների կառավարման հետ կապված փորձի փոխանակումը, պաշտպանական արդյունաբերության համագործակցությունը, ռազմական տեխնիկայի զարգացումն ու վաճառքը թույլ են տալիս երկու պետություններին մուտք գործելու համագործակցության հաջորդ՝ ավելի ընդարձակ փուլ՝ ընդգրկելով նաև ապագա փոխադարձ տնտեսական զարգացումների, բարոյահոգեբանական պատրաստվածության և հասարակայնության հետ կապերի ուղղությունները⁷⁰⁹:

Ինչ վերաբերում է Յնդկաստանի դիրքորոշմանը, ապա հարկ էմ համարում նշել, որ Յնդկաստանի դերակատարումն ամբողջ աշխարհում և միջազգային հարթակում ավելի ու ավելի է ընդհարձակվում ու ամրապնդվում և, հաշվի առնելով Յնդկաստանի ու Պակիստանի միջև լարված հարաբերությունները և Պակիստան-Ադրբեջան համագործակցությունը, Յնդկաստանը յուրահատուկ դաշնակից է Հայաստանի համար հարավկովկասյան տարածաշրջանում, և այդ դաշնակցային կապը դարերի խորքից է բխում, որի մասին են վկայում դեռևս 12-րդ դարում Մծբին, Դվին քաղաքների աշխույժ առևտուրը Յնդկաստանի հետ, ինչպես նաև 16-րդ դարից սկսած Կալկաթայում, Մումբայում, Չեննայում, Ագրայում հիմնված հայկական համայնքներն իրենց ակտիվ

⁷⁰⁷ Message of H.E Ali Alizada, Ambassador of Azerbaijan on the occasion of 25th Anniversary of Azerbaijan-Pakistan Diplomatic Relations, The Diplomatic Insight. 10.5 (May 31, 2017): p 9.

Copyright: COPYRIGHT 2017 Knowledge Bylanes, http://thediplomaticinsight.com/?page_id=10.

[⁷⁰⁸ Dr Kamal Makili-Aliyev and KhurramAbbas, Pakistan-Azerbaijan Economic and Defence Cooperation, *IPRI Journal XVI*, No.1 \(Winter 2016\), p. 42-58.](http://go.galegroup.com.uaccess.univie.ac.at/ps/retrieve.do?tabID=T003&resultListType=RESULT_LIST&searchResultsType=SingleTab&searchType=AdvancedSearchForm¤tPosition=36&docId=GALE%7CA494897454&docType=Article&sort=RELEVANCE&contentSegment=ZONE-MOD1&prodId=AONE&contentSet=GALE%7CA494897454&searchId=R1&userGroupName=43wien&inPS=true. Հ ա ս ա ն է լ ի է 23.05.2019, ժ ա մ ը 17:10:</p>
</div>
<div data-bbox=)

⁷⁰⁹ Azerbaijan, Pakistan discuss current state of military cooperation. https://azertag.az/en/xeber/Azerbaijan_Pakistan_discuss_current_state_of_military_cooperation-1200330

գործունեությամբ: Ինչ վերաբերում է արդի ժամանակաշրջանին, ապա Հայաստանի ու Հնդկաստանի միջև բարիդրացիական համագործակցային հարաբերություններ են՝ բազմաթիվ փոխադարձ այցերով ու միջազգային հարթակներում միմյանց աջակցելով: Օրինակ, վերջին տարիներին Հայաստանը սատարում էր Հնդկաստանի թեկնածությանը ՅՈՒՆԵՍԿՕ-ում, Զաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում (ICAO) և ՄԱԿ-ի ատոկիտորների խորհրդում, Հեռահաղորդակցության միջազգային միության խորհրդում, Յոգայի ընդգրկումը «ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում»: Հնդկաստանը աջակցել է Հայաստանին 2015թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ազգային հացը՝ Լավաշը, որպես ոչ նյութական մշակութային ժառանգություն հռչակելու պահանջի մասին: Բացի այս, երկկողմ առևտուրը տարեցտարի աճում է. 2017թ.-ին դեպի Հայաստան արտահանումը հասել է մոտ 19.8 մլն. ԱՄՆ դոլարի, իսկ ներմուծումը՝ 2.8 մլն ԱՄՆ դոլարի⁷¹⁰:

Ինչ վերաբերում է Հնդկաստանի ու Ադրբեջանի հարաբերություններին, ապա Ադրբեջանի անկախացումից ի վեր երկու երկրները կառուցել են բարեկամական և բազմակողմանի հարաբերություններ, մասնավորապես տնտեսական բլոկում երկկողմ առևտրի ու ապրանքաշրջանառության մոտ 10 անգամ աճը 2000-2010 թթ.-ին (մինչև 0.5 միլիարդ ԱՄՆ դոլար), 2007թ.-ին Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղի բացմանը զուգընթաց հնդկական նավթ ներմուծող կազմակերպությունների՝ նավթամթերք ձեռք բերելը, հնդկական թեյի առեւտրի քանակի արտահանումը Ադրբեջան (1 մլն ԱՄՆ դոլար), և այլն⁷¹¹:

Այս համատեքստում հարկ ենք համարում նշել նաև ընդհանուր Հարավային Կովկասի դերը, որը, ունենալով ելք դեպի ծով, բնական ռեսուրսներ և այլն, Հնդկաստանի համար տնտեսական ու առևտրային կարևոր նշանակություն ունի Հնդկաստանի համար, ինչպես նաև կարող է դիտարկվել որպես քաղաքական այլընտրանքային ուղի դեպի արևմուտք ու Ռուսաստան: Այդ իսկ պատճառով Հնդկաստանը ավելի չեզոք դիրքորոշում ունի Պակիստան-Ադրբեջան ռազմական համագործակցության և Արցախյան հիմնախնդրի շուրջ:

⁷¹⁰ Bilateral Brief on India- Armenia Relations. https://mea.gov.in/Portal/ForeignRelation/India_-_Armenia_Bilateral_Brief_-_Dec_2018.pdf

⁷¹¹ Douing business in Eurasia. <https://www.eeepindia.org/download/150323164529.pdf>, Հասանելի է 23.05.2019 ժամը 13.39

PAKISTAN-AZERBAIJAN MILITARY COOPERATION AND INDIA'S DECISION**ASHKHEN HOVSEPYAN**

*PhD student, YSU faculty of Oriental Studies,
Department of Iranian Studies
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to introduce military cooperation between Pakistan and Azerbaijan since the 1990s. As well as important military agreements and official visits between the two countries, Pakistan's support to Azerbaijan on international arena for the settlement of the Nagorno-Karabakh conflict.

In the course of the study, both scientific (analysis, the principle of historicity) and special (comparative) methods were applied.

As a result of the study, the following conclusion was formed: Azerbaijan-Pakistan military defense cooperation is in a high level due to joint military exercises, exchange of experience during official mutual visits, defense industry cooperation, development of military equipment and sales. And as to India's position taking into account tense relations among India and Pakistan and Pakistan-Azerbaijan cooperation, as well as economic importance of South Caucasus region for India, then India's decision is more neutral and is considered as a unique ally country for Armenia in South Caucasian region.

Key words: *military and political real allies, 6 agreements, military cooperation, difficult internal political period, Joint statement on strategic partnership, India's decision, unique ally.*

**ВОЕННОЕ СОТРУДНИЧЕСТВО ПАКИСТАНА И
АЗЕРБАЙДЖАНА И ПОЗИЦИЯ ИНДИИ****АШХЕН ОВСЕПЯН**

*Аспирант ЕГУ, факультет востоковедения, кафедра ирановедения
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – представить военное сотрудничество между Пакистаном и Азербайджаном с 1990-х годов, важные военные соглашения и официальные визиты между двумя странами, а также поддержку Пакистана Азербайджану на международной арене в сфере урегулирования нагорно-карабахского конфликта.

В ходе исследования были применены как научные (анализ, принцип историчности), так и специальные (сравнительный) методы.

В результате исследования было сформировано следующее заключение: сотрудничество между Азербайджаном и Пакистаном в области военной обороны находится на высоком уровне благодаря совместным военным учениям, обмену опытом, официальным взаимным визитам, сотрудничеству в оборонной промышленности, разработке военной техники и продажам. Что касается позиции Индии с учетом напряженных отношений между Индией и Пакистаном и сотрудничества между Пакистаном и Азербайджаном, то в этом случае Индия является уникальным союзником для Армении. В контексте экономического значения Закавказья для Индии можно подчеркнуть более нейтральную позицию Индии в вопросе нагорно-карабахского конфликта.

Ключевые слова: *военно-политический реальный союзник, шесть соглашений, сложный внутривосточный период, совместное заявление о стратегическом партнерстве, позиция Индии, уникальный союзник.*

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԶԱՇՏԱԹԱՂԻ ԾՐՁԱՆԻ ՀԱՐԱՎՈՒԽ (ԲԱՐԿՈՒՇԱՏ ԳՅՈՒՂԻ ՕՐԻՆԱԿՈՎ). ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

ԳԱՅԱՆԵ ՇԱԲՈՒՆՑ

Գորիսի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ամբիոնի ասիստենտ, ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն shgayaneg@rambler.ru

Սույն հոդվածում փորձել ենք վերհանել Արցախի Զաշաթաղի շրջանի հարավային թևի վերաբնակեցման դանդաղ տեսլերի պատճառները Բարկուշատ գյուղի օրինակով: Նշելով վերաբնակեցմանը խոչընդոտող խնդիրները՝ տվել ենք նաև այդ խնդիրների լուծման օպտիմալ տարբերակներ: Միաժամանակ նշել ենք, որ Արցախի Հանրապետությունը՝ ի դեմս նախագահի և պետական նախարարի, մշտական ուշադրության կենտրոնում են պահում վերաբնակեցման խնդիրները՝ պարբերաբար այցեր կատարելով Զաշաթաղի շրջանի հարավային թև:

Ուսումնասիրության ժամանակ օգտագործել ենք վերլուծության, համադրման, պատմահամեմատական մեթոդները, ինչպես նաև անհատական հարցապրոպոցներ ենք ունեցել վերաբնակիչների, գյուղի նախկին բնակիչների հետ: Հետապոտության ժամանակ խնդիրների օբյեկտիվ վերհանմանը, վերլուծությանը, պատճառահետևանքային կապերը վերհանելուն, առկա խնդիրների լուծման համար ուղիներ առաջարկելուն մեծապես օգնել է նաև այն հանգամանքը, որ սույն հոդվածի հեղինակը Բարկուշատ գյուղի վերաբնակեցված ընտանիքի անդամ է արդեն 8 տարի, ուստի անընդհատ բախվում է ներկայացրած խնդիրներին:

Հոդվածում ներկայացնելով Որոտան համայնքի Բարկուշատ գյուղի խնդիրները և լուծման տարբերակները՝ խորին համոզմունք ունենք, որ վերաբնակեցման խնդիրների հաղթահարման դեպքում համայնքը կունենա մեծ թվով բնակիչներ, պարզացող՝ իր բոլոր ճյուղերով, իսկ բնակլիմայական պայմաններն ու առկա ռեսուրսները կապահովեն այդ առաջընթացը:

Հիմնաբառեր՝ Արցախի Հանրապետություն, Զաշաթաղի շրջան, Բարկուշատ, վերբաբնակեցում, էլեկտրաֆիկացում, ոռոգում, խմելու ջուր:

Արցախի ազատագրումից հետո՝ 1994թ.-ի հուլիսին, նախկին Լաչինի, Ղուբաթլուի ու Չանգեյանի շրջանների տարածքներում ստեղծվեց ԼՂՀ Զաշաթաղի շրջանը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 1998թ.-ի հունիսի 26-ի որոշմամբ (հետագա փոփոխություններով) հաստատվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկա վարչատարածքային կառուցվածքը՝ բաղկացած 7 վարչական շրջանից (Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Շահումյանի, Շուշիի, Զաշաթաղի) և վարչական շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ քաղաքից⁷¹²:

* Հոդվածը ներկայացվել է 01.10.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

⁷¹² **Ղահրամանյան Հ.,** Տեղեկատու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների և սոցիալ-տնտեսական բնութագրերի, Երևան, Ճարտարագետ, 2015, էջ 7:

Քաշաթաղի շրջանն ամենամեծն է Արցախում 3376,6 բլկմ (որն ամբողջ ԼՂ տարածքի 29,5 % է) և ընդգրկում է Հագարի գետի ավազանը և Որոտանի ստորին հոսանքի ավազանը:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ պատմական Քաշաթաղն ընդգրկված էր Սյունիքի Աղահեջք գավառում⁷¹³: Ղևոնդ Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ ևս տեղեկություններ է հաղորդում Քաշաթաղի մասին⁷¹⁴, ինչպես նաև Բարկուշատի մասին⁷¹⁵, որի վերաբնակեցման հարցերին կփորձենք անդրադառնալ:

Քաշաթաղի շրջանը հյուսիսից սահմանակից է Շահումյանի շրջանին մոտ 33 կմ երկարությամբ, հյուսիս-արևելքից՝ Մարտակերտի շրջանին մոտ 14 կմ երկարությամբ, հյուսիս-արևելքից՝ Ասկերանի շրջանին մոտ 10 կմ երկարությամբ, արևելքից՝ Շուշիի շրջանին մոտ 25 կմ երկարությամբ, հարավ-արևելքից՝ Հադրութի շրջանին մոտ 56 կմ երկարությամբ, հարավից՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ մոտ 36 կմ երկարությամբ, արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետությանը՝ մոտ 170 կմ երկարությամբ: Քաշաթաղի շրջանի բնակչության թվաքանակը կազմում է 10380 մարդ, կա 2884 տնտեսություն⁷¹⁶: Քաշաթաղի շրջանում գործում է չորս քաղաքապետարան և հիսուն համայնքապետարան (գյուղապետարան), մեկ մշակույթի տուն, մեկ հիվանդանոց, յոթ բուժկետ, ինը հիմնական, քառասուներկու միջնակարգ դպրոց, մեկ երաժշտական և մեկ արվեստի դպրոց, երկու մանկապարտեզ: Կան բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ՝ եկեղեցիներ, խաչքարեր, աղբյուր, դամբարան, գյուղատեղեր ու գերեզմանոցներ:

Քաշաթաղի շրջանը կապող օղակ է Հայաստանի ու Արցախի միջև:

Քաշաթաղի շրջանի կենտրոնը Բերձորն է, բնակչության թվաքանակը կազմում է 10380 մարդ, կա 2884 տնտեսություն⁷¹⁷:

Այժմ Քաշաթաղի շրջանում պահպանվել են մոտ 3 տասնյակ վանքեր ու եկեղեցիներ, պատմական հուշարձաններ: Վանքերից շատ հայտնի է 4-րդ դարում կառուցված Ծիծեռնավանքը, որը ազատագրումից հետո հիմնովին վերակառուցվել է: Լավ են պահպանվել նաև 17-րդ դարում կառուցված մի շարք եկեղեցիներ՝ Հակի Սուրբ Մինաս, Միրիկի Սուրբ Աստվածածին, Հոչանցի Սուրբ Ստեփանոս, Հերիկի Սուրբ Գևորգ, Շալուայի, Սթունիսի, Արախիշի, Մագրայի սրբավայրերը: Բերձորից մոտ 60 կմ հյուսիս ընկած Արախիշ գյուղում կիսակործան վիճակում կանգուն է 12-13-րդ դարերի մեկ այլ հուշարձան՝ կամարակապ եկեղեցի, որը պայթեցվել է 1983թ.-ին: Նման և ավելի վատթար վիճակում են Հարարի (16-17-րդ դարեր), Վակունիսի եկեղեցիները, Կաթոսավանքը (9-11-րդ դարեր), Աղբրածորի վանքը (9-11-րդ դարեր): Կան նաև ժայռափոր եկեղեցիներ Ծաղկաբերդում (Քրոնքի վանք), Տանձուտում, Հոչանցում:

Բարենպաստ բնակլիմայական պայմանները, գյուղատնտեսության ու անասնապահության զարգացման համար բոլոր նախադրյալներն առկա են, որպեսզի շատ կարճ ժամանակահատվածում Քաշաթաղի շրջանն ամբողջովին վերաբնակեցվի, մասնավոր, որ Արցախի իշխանություններն էլ ձեռնամուխ եղան այդ օրապահանջ ինդրի լուծմանը: Լեռնասին Համալսարանում և Լուսինյան Համալսարանում 2003թ.-ի սուրբին 15-ի N121 որոշումով ԼՂՀ մեռաբնակվող ընտանիքներին տրվեցին մի շարք արտոնություններ, մասնավորապես.

1. վերաբնակեցված ընտանիքին անհատական տնով կամ բնակարանով ապահովվում,

⁷¹³ Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 374-375:

⁷¹⁴ Ղևոնդ Ալիշան, Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 242, 265, 266, 269:

⁷¹⁵ Եղիշտեղում, էջ 242, 272, 280 :

⁷¹⁶ Ղահրամանյան Հ., Աշխ., էջ 315:

⁷¹⁷ Եղիշտեղում, էջ 315:

2. միանվագ դրամական օգնության ցուցաբերում վերաբնակվող ընտանիքի գլխավորին՝ ԼՂՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի բասնապատիկի, իսկ ընտանիքի մյուս անդամներից յուրաքանչյուրին՝ հնգապատիկի չափով,

3. վերաբնակվող ընտանիքի անդամների և գույքի՝ մինչև նախօրոք որոշված մշտական բնակավայր տեղափոխում կամ տեղափոխման ու ճանապարհածախսի փոխհատուցում, յուրաքանչյուր շնչին ճանապարհածախս՝ 5 հազար դրամ, գույքի տեղափոխում՝ 15 հազար դրամի չափով,

4. վերաբնակիչների սոցիալ-կենցաղային կարիքների բավարարման համար երկարաժամկետ (10 տարով), տարեկան 0.5 տոկոսադրույքով բյուջետային վարկի տրամադրում համաձայն կարգի,

5. վերաբնակվող և գյուղատնտեսական աշխատանքով զբաղվելու պատրաստակամություն հայտնած յուրաքանչյուր ընտանիքին անասունների, սերմացուի և դրա համար անհրաժեշտ այլ նյութական միջոցների ձեռքբերման համար երկարաժամկետ (10 տարով), տարեկան 0.5 տոկոսադրույքով բյուջետային վարկի տրամադրում համաձայն կարգի,

6. վերաբնակվող ընտանիքի յուրաքանչյուր անդամին բնակավայրում գյուղատնտեսական նշանակության հողատարածքների առկայության դեպքում մշտական օգտագործման իրավունքով 0.6 հա հողի անհատույց հատկացում,

7. վերաբնակվող ընտանիքներին 5 տարի ժամկետով բնակարանային կոմունալ ծառայությունների վարձից (բնակվարձ, ջրի և կոյուղու վարձ), ազատում,

8. նոր ընտանիք կազմած զորակոչային տարիքի անձանց ժամկետային զինվորական ծառայության երկու տարով հետաձգում,

9. վերաբնակիչների առաջնահերթ ընդգրկում վերաբնակեցման ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքներում՝ նրանց համար աշխատատեղ ապահովելու նպատակով,

10. վերաբնակվելուց 2 տարվա ընթացքում նոր ընտանիք կազմած անձանց ամուսնության վկայականի առկայության դեպքում միանվագ օգնության ցուցաբերում 30 հազար դրամի չափով,

11. վերաբնակիչների համար ԼՂՀ-ում իրականացվող պետական սոցիալական աջակցության ծրագրերից տեղաբնակների հետ համահավասար օգտվելու իրավունքի ապահովում⁷¹⁸:

Վերաբնակեցման ոլորտի համակարգման գործառնություն իրականացնում է ԱՀ Աշխատանքի սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության ժողովրդագրության և միգրացիայի վարչության պետ Արարատ Բախտամյանի՝ վերը նշված որոշմամբ 2014-2018 թթ.-ին տարբեր բնակավայրերում մշտական բնակություն է հաստատել 301 ընտանիք (1202 մարդ, որից 594-ը՝ երեխա), որոնց տրվել է վերաբնակչի կարգավիճակ⁷¹⁹: Արցախի վերաբնակեցումն ունի համազգային նշանակություն, ուստի այն ավելի արդյունավետ իրականացնելու համար պետք է միշտ լինի ուշադրության կենտրոնում, անընդհատ մշակվեն վերաբնակեցման արդյունավետության բարձրացմանը միտված քայլեր: Իրականացվող քայլերը շատ դրական դինամիկա են ապահովում մասնավորապես Քաշաթաղի Իշխանաձոր, Աղավտ համայնքների համար, որտեղ տարբեր բարեգործական ծրագրերի շնորհիվ արձանագրվում է վերաբնակեցման բարձր ցուցանիշներ: Քաշաթաղի վերաբնակեցման արդյունավետության բարձրացումը և շրջանում առկա խնդիրները մշտապես ԱՀ նախագահի և պետական նախարարի ուշադրության կենտրոնում են: ԱՀ պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը 2019 թվականի ապրիլի 14-ին

⁷¹⁸ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշում, 15 ապրիլ, 2003, N 121:

⁷¹⁹ <http://mss.nkr.am/?p=17831>.

հերթական աշխատանքային այցով Իշխանաձոր համայնքում ծանոթացել է իրականացվող ծրագրերին, պետական միջոցներով այգիների, տնկարանների ստեղծման գործընթացին: Աշխատանքային այցին մասնակցել են նաև գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանը, գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն Տիգրան Ծատրյանը և Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար Ստեփան Սարգսյանը⁷²⁰: Նշենք, որ 2014 թվականի Ազգային վիճակախաղից ստացած հասույթով Իշխանաձորում կառուցվում է 34 տուն: Սակայն պետք է նշել, որ Քաշաթաղի շրջանի Որոտան քաղաքային համայնքում և հարակից գյուղերում վերաբնակեցման գործընթացի արդյունավետությունն այնքան էլ բարձր չէ: Նշենք, որ Որոտան համայնքը Քաշաթաղի շրջանի Բերձոր կենտրոնից գտնվում է 80 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 140 կմ հեռավորության վրա: Որոտան համայնքը գտնվում է հարթավայրային գոտում: Համայնքի սահմանային գոտով հոսում է Որոտան գետը: Համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 556 մարդ, կա 162 տնտեսություն⁷²¹: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ ու հողագործությամբ: Համայնքում գործում է քաղաքապետարան, կա բուժաշխատող: Որոտան համայնքի կազմում ընդգրկված են նաև Անդոկաբերդ, Դողար, Բարկուշատ և Վանանդ գյուղերը: Անդոկաբերդ գյուղում բնակվում է 8 մարդ, կա 2 տնտեսություն, Դողար գյուղում՝ 8 մարդ, կա 4 տնտեսություն, Բարկուշատ գյուղում՝ 20 մարդ, կա 7 տնտեսություն, իսկ Վանանդ գյուղում՝ 16 մարդ, կա 5 տնտեսություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ ու հողագործությամբ:

Այժմ փորձենք վերհանել վերաբնակեցման խնդիրները և դրանց լուծման ուղիները հենց Որոտան համայնքի Բարկուշատ գյուղի օրինակով՝ որպես տվյալ գյուղի վերաբնակիչ և խնդիրների ակնատես:

Բարկուշատ գյուղն իր բնակլիմայական պայմաններով շատ բարենպաստ է գյուղատնտեսության ու անասնապահության զարգացման համար: Գյուղի առաջին վերաբնակիչներից է Ռուբեն Պողոսյանն իր ընտանիքով, որ անմիջապես ազատագրումից հետո բնակություն է հաստատել գյուղում: Շուրջ 26 տարի է, ինչ ընտանիքը բնակվում է այդ գյուղում: Ըստ Ռուբեն Պողոսյանի՝ գյուղում սկզբնական շրջանում բնակիչների թիվը շատ է եղել, որոնք, սակայն, գյուղում վերաբնակչի կարգավիճակով չէին բնակվում: Բնակլիմայական պայմանները շատ նպաստավոր էին գյուղում այգեգործությամբ ու անասնապահությամբ զբաղվելու համար, մասնավորապես տարածված էին նռան, թթենու, արքայախնձորի, ծիրանի այգիները: Սակայն բնակչության թիվը տարեցտարի նվազել է, ինչը պայմանավորված է կենցաղային վատ պայմաններով: Առ այսօր Որոտան համայնքի՝ վերը նշված գյուղերում Անդոկաբերդ, Դողար, Բարկուշատ և Վանանդ, չկա էլեկտրաֆիկացում, խմելու ջուր, իսկ ոռոգման ջրի հունների փակման հետևանքով ոռոգման ջուրը ևս լուրջ խնդիր է: Ոռոգման ջրի բացակայության պատճառով նռան, ծիրանի, արքայախնձորի այգիները չորացել են: Այժմ Բարկուշատ գյուղում գրանցված վերաբնակիչների թիվն ընդամենը 20 է, 7 տնտեսություն: Չրուցելով տարբեր տարիներին գյուղը լքած մարդկանց հետ՝ նկատեցինք, որ բոլորը խորապես ափսոսում են գյուղը լքելու համար, բայց նաև նշում են, որ իրենց աչքի առաջ չորանում են այգիները, բանջարաբուծությամբ զբաղվելը ևս ջրի սակավության պատճառով դառնում է անարդյունավետ, իսկ անասնապահությամբ զբաղվողները խիստ շոգերի ժամանակ չեն կարողանում վերամշակել կաթը, բանի որ չկա հոսանք, ինչը կնպաստեր

⁷²⁰ <https://armtimes.com/hy/article/159119>

⁷²¹ Ղահրամանյան Ռ., նշվ. աշխ., էջ 375:

սառնարանների առկայությանը: Մենք վերհանեցիք առկա խնդիրները, այժմ փորձենք գտնել դրանց լուծումները:

Նախ և առաջ շրջանի վերաբնակեցման համար խիստ անհրաժեշտ պայման է էլեկտրաֆիկացումը: Այն պատճառաբանությունները, թե բնակչության թիվը քիչ է այդ շրջաններում մեծ գումարներ ծախսելով էլեկտրաֆիկացում ապահովելու համար, չի կարող արդարացում լինել, քանի որ բնակչության թվի քիչ լինելը հենց հոսանքի բացակայությունն է իր բոլոր հետևանքներով: Իսկ այդ խնդրի լուծման օպտիմալ տարբերակներից կարող է լինել ընդամենը 3 կմ հեռավորության վրա գտնվող ռազմաուսումնական բազայից հոսանքի անցկացումը գյուղ: Խնդրի լուծման հաջորդ օպտիմալ տարբերակներից է օգտվել արդի գիտատեխնիկական առաջընթացից և պետական սուբսիդավորման կամ ցածր տոկոսադրույքով վարկային պայմանագրերի միջոցով հոսանքի համար նախատեսված արևային կայանների տեղադրումը: Որպես տվյալ գյուղի բնակիչ՝ համոզված կարող եմք ասել, որ այդ խնդրի լուծումը կավելացնի վերաբնակվողների թիվը:

Հաջորդ խնդիրը խմելու ջրի բացակայությունն է: Խմելու ջուրն առկա է գյուղում, բայց տներ չի հասնում: Պետության աջակցությամբ խողովակների տրամադրման դեպքում այն ամենահեշտ լուծվող խնդիրը կարող է դառնալ: Ի դեպ, եթե վերաբնակիչները տեսնեն պետության աջակցությունն այս հարցերում, իրենք ևս ձեռնամուխ կլինեն այդ խնդիրների համատեղ լուծմանը՝ ինի աշխատուժի, թե ֆինանսական միջոցներով:

Ռոռզման ջրի բացակայությունը ևս լուրջ խոչընդոտ է Որոտան համայնքի և Նրա հարակից գյուղերի վերաբնակեցման համար: Իսկ այդ խնդրի լուծման համար ընդամենն անհրաժեշտ է համայնքապետարանի օժանդակությունը գյուղտեխնիկայով ջրատարների մաքրման համար, քանի որ առանց համապատասխան տեխնիկայի կիրառման հնարավոր չէ մաքրել ռոռզման ջրատարները:

Հոսանքի, խմելու և ռոռզման ջրի բացակայությունը բնակչներին կանգնեցնում են ծանր խնդիրների առջև: 1-2 տարի չարչարվելուց հետո Նրանք, չստանալով համապատասխան եկամուտ, լքում են գյուղը: Ուսումնասիրելով Բարկուշատ գյուղի բնակլիմայական պայմանները, այգեգործության ու բանջարաբուծության համար հնարավոր բարենպաստ պայմանները, անասնապահությունը զարգացնելու իրական հնարավորությունները, կարող ենք միանշանակ փաստել, որ նշված խնդիրների լուծման դեպքում շատ կարճ ժամանակամիջոցում Որոտան համայնքը և Նրա շրջակա գյուղերը արագ տեմպերով կվերաբնակեցվեն, և հայությունն արտագաղթելու և այլ երկրներում հողագործական ու անասնապահան աշխատանքներ կատարելու փոխարեն կբնակվի ու նույն գործով կգբաղվի մեր հայրենիքում, ինչը նաև մեծ ազդակ կլինի Սփյուռքի մեր հայրենակիցների համար:

WAYS TO RESOLVE RESETTLEMENT PROBLEMS IN THE SOUTH OF ARTSAXH-KASHATAG REGION (FOLLOWING THE EXAMPLE OF THE VILLAGE OF BARKUSHAT). (SCIENTIFIC AND PRACTICAL ANALYSIS)

GAYANE SHABUNTS

*Assistant at the Chair of History and Law of the Faculty of Humanities and Social Sciences of Goris State University
Goris, Republic of Armenia (RA)*

In this article, we have attempted to identify the reasons for the slow rate of resettlement of the southern part of Kashatagh region in Artsakh by the example of Barkushat village. Noting the problems that impede the resettlement, we have also provided optimal solutions to these

problems. At the same time, we have noted that the President and Minister of State of the Republic of Artsakh is constantly focusing on resettlement issues visiting to the southern part of Kashatagh region.

During the study, we used the methods of analysis, comparison, historical-comparative methods, as well as conversations with settlers and former residents of the village.

The fact that the author of this article has also been a member of the relocated family of Barkushat village for 8 years, and therefore constantly confronts the issues presented, has also greatly helped to the objective identification of the problems, analysis of causal relationships, suggestion of solutions to existing problems during the research.

Presenting the problems and solutions of Barkushat village in Vorotan community, we strongly believe that in case of resettlement problems, the community will have a large population, a developing economy with all its branches, and the climatic conditions and available resources will ensure that progress.

Key words: The Republic of Artsakh, Kashatagh region, Barkushat, resettlement, electrification, irrigation, drinking water.

ПУТИ РЕШЕНИЯ ПРОБЛЕМ ЗАСЕЛЕНИЯ ЮГА КАШАТАГСКОГО РАЙОНА АРЦАХА (ПО ПРИМЕРУ СЕЛА БАРКУШАТ). НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ АНАЛИЗ

ГАЯНЕ ШАБУНЦ

*Ассистент кафедры истории и права факультета гуманитарных и
социальных наук Горисского государственного университета,
г.Горис, Республика Армения*

В данной статье мы попытались определить причины медленного заселения южной части Кашатагского района Арцаха на примере села Баркушат. Отмечая проблемы, связанные с заселением, мы также представили оптимальные, на наш взгляд, решения этих проблем. В то же время мы отметили, что президент и государственный министр Республики Арцах постоянно уделяют внимание вопросам заселения, посещая южную часть Кашатагского района.

В ходе исследования мы использовали методы анализа, сравнения, историко-сравнительные методы, а также беседы с переселенцами и бывшими жителями села.

Объективному выявлению в ходе исследования проблем, анализу причинно-следственных связей, предложению решений существующих проблем в значительной степени способствовало то обстоятельство, что автор настоящей статьи восьмой год является членом переселенческой семьи села Баркушат и поэтому постоянно сталкивается с представленными проблемами.

Указывая проблемы села Баркушат общины Воротан, мы твердо верим, что в случае решения проблем с заселением община будет иметь большое население, развивающуюся экономику со всеми ее ветвями, а климатические условия и имеющиеся ресурсы обеспечат этот прогресс.

Ключевые слова: Республика Арцах, Кашатагский район, Баркушат, заселение, электрификация, орошение, питьевая вода.

ПОСЛЕОБРАЗЫ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ В ОБЩЕСТВЕННОМ ПРОСТРАНСТВЕ ПОЛЬСКОГО ГОРОДА ЭЛЬБЛОНГ*

ЗБИГНЕВ Т. ШМУРЛО

*Президент экономической палаты Польша – Армения,
кандидат гуманитарных наук в области политических наук,
Почетный член Союза художников Армении,
г.Варшава – Эльблонг, Польша
pressart@poczta.onet.pl*

Целью настоящей статьи является рассмотрение вопросов присутствия армян в социальном пространстве Эльблонга. Для этого были поставлены следующие задачи: исследовать генезис и раскрыть культурный феномен «послеобраз»; рассмотреть различные положительные примеры современного интеркультурного диалога в публичном социологическом и общественном пространстве польского города Эльблонг; определить роль и место армян и армянской культуры в интеркультурном диалоге эльблонгского общества.

При проведении исследования автором были использованы как общенаучные, так и частнонаучные методы. Среди них – системный анализ, сравнительно-исторический анализ, а также культурантропологический, биографический и хронологический методы.

В ходе исследования было выявлено, что присутствие армян стало фактом благодаря эмиграционной волне начала 90-х годов прошлого века, когда в результате трансформационных преобразований и распада Советского Союза они стали приезжать через соседнюю Калининградскую область в Польшу, поселяясь как в Эльблонге, так и в других городах региона. Кроме того, в результате рассмотрения различных примеров презентации армянской культуры в Эльблонге, было обнаружено, что она играет важную роль в транскультурном диалоге и взаимном ознакомлении.

Ссылаясь на мероприятия по широкому представлению культуры и искусства Армении в городе Эльблонг, автор, в частности, указывает, что армянский хачкар (культовый каменный крест) установлен в публичном пространстве города и является наиболее четким следом присутствия армян в Эльблонге.

Ключевые слова: *послеобразы остаточные изображения, транскультурность, трансграничное сотрудничество, диалог культур, иммигранты, армяне, Эльблонг.*

Транскультурный диалог в публичном пространстве и жизни польского города Эльблонг, расположенного на севере Польшы, в 40 километрах от Балтийского моря, недалеко границы с Россией, происходит с участием армян и интересным способом вписывается в смежные вопросы, касающиеся восприятия и осмысления наследия армян в наши дни среди других наций.

В условиях перманентной трансформации мировоззрения и миропорядка, а с другой стороны – в период постоянных не только общественных социально-политических, но и культурных кризисов, а также культурных перемен и взаимодействия в условиях глобальных вызовов, особенно важным является положительный

* Հոդվածը ներկայացվել է 29.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

транскультурный диалог. Он происходит на всех уровнях жизни и особенно важен в городском пространстве локальных сообществ.

Следует подчеркнуть, что XX век – это не только столетие двух больших тоталитаризмов, но также период массовых миграций, побегов, выселений и депортаций, а также связанных с этим человеческих трагедий. Характерной чертой современной действительности в глобализированном мире являются миграции, развивающиеся в невиданном до сих пор масштабе. Смена местонахождения и проживания – исконная черта человечества. Деяния нашей цивилизации можно воспринимать как историю переселений народов, заселения новых пространств или миграции.

Среди иммигрантов, прибывших в Эльблонг на склоне XX века, когда в Польше и в Восточной Европе происходили значимые политические и социальные преобразования и перемены, были армяне. Для жителей Эльблонга волна армянских иммигрантов была новым явлением. В интеркультурном диалоге эльблонгского общества армяне и их культура играют важную и довольно особенную роль. Примеры армянских транскультурных «послеобразов» подтверждают, что диалог культур и прежде всего представителей различных наций становится важным и неперенным элементом местных сообществ, обогащающих и дополняющих друг друга именно благодаря присутствию представителей других культур. Открытое общество не может хорошо функционировать без широко понимаемого диалога и, наверное, без взаимного подглядывания. Межкультурные контакты помогают освободиться от социальных предубеждений, злобы и ненависти по отношению к представителям иных культур. Это, в свою очередь, представляет собой сложный и длительный процесс, в ходе которого создается толерантность, понимание, уважение и принятие другой культуры, утверждение культурных различий.

Благодаря различным инетердисциплинарным мероприятиям, организованным не только самими армянами, но и поляками – друзьями Армении, можно говорить о положительных творческих примерах современного интеркультурного диалога в публичном социологическом и общественном пространстве польского города Эльблонг, среди жителей которого находятся и представители армянского народа.

В случае этого культурного феномена используется термин «остаточное изображение», «послеобраз»⁷²², встречающийся главным образом в работах, связанных с психологией, с проблемами зрения и функционированием человеческого глаза, который передает в сознании человека следы памяти. Термин «послеобраз»/ «послеобразы» появился в творчестве и работах выдающегося польского художника Владислава Стржеминского и является ключевым словом его «теории видения»⁷²³.

Владислав Стржеминский (1893 Минск – 1952 Лодзь) – теоретик искусства, художник, дизайнер функционального шрифта, пионер конструктивистского авангарда 20-30-х годов XX века. В 1911–1914 годах обучался в Инженерном военном училище в Петербурге. /.../ В 1918 году посещал Свободные Художественные Мастерские (СВОМАС) в Москве, где установил контакты с Казимиром Малевичем и Владимиром Татлиным. В 1919 году поступил на работу в Отдел изобразительных искусств (ИЗО) в

⁷²² Послеобраз – остаточное явление, возникающее после рассмотрения какого-либо объекта при строго фиксированном взгляде. Обычно послеобразы не наблюдаются из-за их стирания саккадическими движениями глаз и маскировки, но очень яркие объекты (Солнце, пламя огня и т.п.) вызывают достаточно стойкие послеобразы. Послеобраз хорошо заметен на однородном фоне при устойчивой зрительной фиксации неподвижной точки. После каждого скачка глаз послеобраз пропадает, а во время зрительной фиксации вновь появляется, уже ослабленный. Цвет послеобраза является дополнительным к цвету объекта. – Психологический словарь, 2000, <https://dic.academic.ru/dic.nsf/psihologic/1368> (10.06.2019.); С. Ю. Головин, *Словарь практического психолога*, Москва, 1998.

⁷²³ W. Strzemiński, *Teoriawidzenia*, Kraków, 1958.

Народном комиссариате просвещения в Минске; в 1919–1920 годах сотрудничал с Губернским отделом культуры в Смоленске, где вместе со своей женой, Катажиной Кобро, руководил творческой мастерской (изостудией). Кроме того, вступил в группу УНОВИС. Демонстрировал свои конструктивистские работы в Москве, Рязани и в Витебске. /.../ Творческие установки Стржеминского формировались под влиянием кубизма, пуризма и неопластицизма. Особенно важную роль в выработке его собственных творческих концепций сыграл конструктивизм. Однако художник не соглашался с провозглашаемым конструктивистами лозунгом подчинения искусства соображениям общественной пользы, отстаивал идеи автономии искусства и право на «лабораторную чистоту» художественных экспериментов. Он соглашался с необходимостью объединения искусства и общественной жизни, но при этом признавал за искусством моделирующую роль по отношению ко всем формам человеческой деятельности»⁷²⁴.

Стржеминский воевал в Первую мировую войну подпоручиком царских войск, один из немногих выжил во время контратаки российского полка при отражении газового штурма, совершенного немцами и июле 1915 г. (оборона крепости Осовец)⁷²⁵. Будущий художник уцелел чудом, остался калекой без ноги, руки и одного глаза. В 1922 году Владислав Стржеминский вместе с женой, скульптором Катажиной Кобро (1898–1951) покинул Советский Союз и приехал в Польшу.

Для него было чрезвычайно важно искать новые, нетрадиционные формы выражения в искусстве. Его в первую очередь интересовала форма – «изучение достигнутой формы, изобретение идеальной формы»⁷²⁶.

Когда в 1945 году вместе с Красной армией в Польшу была введена коммунистическая идеология, чуждая многим полякам, когда в польскую культуру пытались насильно внедрить соцреализм, знаменитый художник-авангардист Владислав Стржеминский отказывается принять его принципы, а политические деятели начинают преследовать художника – лишают его возможности преподавать и убирают из музеев его работы.

Стржеминский написал важный не только для своего творчества цикл соляристических картин, называемых «последствиями света». В них фиксируются оптические впечатления от созерцания солнца (самая популярная картина «Последствия света», 1948).

В 1950 году приказом министра культуры Польши Владислав Стржеминский был отстранен от преподавания за несоответствие догмам социалистического реализма. Власть социалистической Польши объявила теорию Стржеминского «манифестом империализма», и выгнали его из академии, лишили всех титулов и привилегий – вплоть до возможности покупать краски, оставили голодным подыхать от чахотки. В стране, где всем трудящимся было гарантировано «светлое завтра»⁷²⁷.

Великий польский художник, философ⁷²⁸, теоретик искусства⁷²⁹, преподаватель, лично знакомый с Шагалом и Малевичем, соучредитель важных для искусства

⁷²⁴ И. Коссовская, *Владислав Стржеминский* <https://culture.pl/ru/artist/vladislav-strzheminski>

⁷²⁵ I. Luba, P. Wawer, *Władysław Strzemiński Wielka Wojna*, „Rocznik Histotii Sztuki PAN”, t. XL, 2015, С. 102–103; М. Свечников, В. Буяковский, *Оборона крепости Осовец во время второй, 6,5-месячной осады её*, Издание Главного управления Генерального штаба, Петроград 1917, С. 49–50; А. А. Черкасов, А. А. Рябцев, В. И. В. И. Меньковский, *«Атака мертвецов» (Осовец, 1915 г.): мифы или реальность*, «Былые годы», № 4 (22), 2011, С. 9.

⁷²⁶ W. Strzemiński, *Oszuczerosyjskiej – notatki*, „Zwrotnica”, № 3, 1922, С. 110.

⁷²⁷ Б. Гершгорин, *Последствия хранителя совести. Вайда в Нью-Йорке*

<http://www.gazettco.com/posleobraz-xranitelya-sovesti-vajda-v-nyu-jorke/>, (15.06.2019.).

⁷²⁸ J. Lepieszkwicz, *Władysław Strzemiński jako filozof*, „Śląskie Studia Filozoficzne”, nr 7, 2008, С. 139–160.

⁷²⁹ W. Strzemiński, *Pisma*, Wrocław 1975

авангардных художественных групп Стржеминский сегодня считается художником мирового уровня, художником, который «навязчиво думал глазами»⁷³⁰. К своему творчеству он ставил самые высокие требования, недостижимые для среднего таланта. Он требовал, чтобы каждая картина была изобретением, чтобы она открывала такой принцип композиции цветов и форм, которые никогда не были известны прежде. На самом деле он требовал, чтобы каждая картина была началом нового художественного направления, новой школы⁷³¹.

Термин в течение некоторого времени стал популярным и даже модным благодаря последнему фильму «Послеобразы» Анджея Вайды (1926-1916), героем которого стал Владислав Стржеминский. «В сороковые годы художник ищет глубокие связи между процессом видения и способом его изображения, пытается понять механизм человеческого зрения, стремится запечатлеть остаточные изображения на сетчатке глаза под воздействием солнечного света. Эти эксперименты воплотились в цикле соляристических картин «Остаточные изображения» («Послеобразы»). Фильм повествует о последнем периоде жизни художника. Верный своему пониманию искусства, Стржеминский отказывается работать в русле соцреализма и в одиночку объявляет войну существующему в стране режиму. «Послеобразы» – это история о том, как коммунистическая власть уничтожила человека, но не сломала сильную непокорную личность»⁷³².

Послеобраз в общественном пространстве – это явление, возникающее после рассматривания какого-либо объекта при активном участии и после участия в художественном мероприятии: в человеке создаются определенный образ и воспоминания, удерживающиеся сознанием даже после устранения объекта искусства. Такие послеобразы возникают от сильного переживания и важности события, которое становится явлением и может всплывать в памяти участника в будущем. Такие послеобразы имеют весьма индивидуальный характер, в котором присутствует большая доля психоэмоционального состояния человека.

Остаточные изображения – послеобразы – в этом случае рассматриваются как впечатления, возникающие в результате активного участия в процессе создания и распространения ценностей, идей и культурных ценностей.

Эти остаточные изображения событий создали возможность для позитивного противостояния и проверки идей, знаков, продуктов воображения и человеческих рук, и в то же время появились новые впечатления – запоминания. Контакты с культурой другой нации, в данном случае поляков с культурным наследием Армении, укоренившимся в древние времена, расширяют возможности формирования и развития личности, участвовавшего продолжительное время в тех событиях, которые давали знания, опыт, художественные и эстетические впечатления, привнесли новое творческое вдохновение в жизнь.

В ходе этих усилий и после них происходит процесс переживания эстетических сдвигов, а также формируется навык пронизательного, критического и сравнительного рефлексивного наблюдения. Послеобразы можно рассматривать как эффект увиденного произведения искусства или активного участия в культурном мероприятии, оставшийся в вашем сознании.

Учитывая современное культурное положение Эльблонга в процессе цивилизационных изменений, необходимо обратить внимание на расположение города в

⁷³⁰ **A. Jaworska**, *O Sponad Juliana Przybosa i Władysława Strzemińskiego*, „Przestrzenie Teorii”, nr 11, 2009, С. 98.

⁷³¹ **J. Przyboś**, *Nowatorstwo Władysława Strzemińskiego* (przedmowa do pierwszego wydania), [в:] W. Strzemiński, *Teoria widzenia*, Kraków 1958, С. 6.

⁷³² **Э. Гапарева**, *Последний фильм Вайды*, «Дом Польский», выпуск 8, www.dompolski-journal.ru/articles/article/147/, (18.06.2019.).

приграничной зоне⁷³³ и приграничное сотрудничество местного сообщества. Эльблонг находится в непосредственной близости от Российской Федерации, что дает основание говорить о приграничном и трансграничном сотрудничестве местного сообщества, а также его открытости для иммигрантов представляющих разные цивилизационные пласты.

Армяне составляют одну из групп иммигрантов, которые прибыли в Эльблонг в конце 20-го века. Видимым знаком их присутствия является хачкар – прекрасный крест, высеченный в красном вулканическом туфе в память о геноцидной резне армян, совершенной турками во время Первой мировой войны. Привезен сюда из Армении с приключениями, которые могут стать сюжетом отдельной истории.

Армянская община сегодня состоит из старой и новой эмиграции. Их встреча стала большим опытом для обеих сторон, и хотя они сильно различаются по своему жизненному опыту и статусу в нашей стране, они сотрудничают и сформировали общее представительство – Армянскую ассоциацию в Польше.

Основная роль ассоциации заключалась в том, чтобы помочь прибывающим армянам найти свое место и освоиться в реальности нового пространства. Специфика пограничного района влияет на сознание его жителей, а также на восприятие этнологической идентичности и отношений с представителями других наций. Пространство – это не только место взаимодействия, фон для событий, но и элементарный элемент идентичности.⁷³⁴ Помогает во взаимоотношениях, а также в ознакомлении и обучении друг друга. Межкультурный диалог становится важным элементом.

Надежный диалог возникает из определенного предположения, которое должно быть принято – четко или неявно – обеими сторонами: ни я, ни вы не способны узнать правду о себе, если мы остаемся далекими от самих себя, запертыми в стенах наших страхов. Я должен сравнить наши взгляды в разговоре друг с другом и с вашей стороны, вашими глазами, и только так мы сможем найти ответ на вопрос, как все на самом деле обстоит.⁷³⁵

Հարկ է նշել, որ դրանից բացի Գանձակի դեմ արշավանքը հիմնականում կանխվեց անձամբ Վ. Լենինի ցուցումով: 1918թ.-ի մայիսի 24-ին Ս. Տեր-Գաբրիելյանի միջոցով Ս. Շահումյանին Բաբու ուղարկված նամակում Վ. Լենինը թուրքական զորքերի դեմ կռվելու համար առաջարկում էր դաշնակցել վրացիների հետ և այդ նպատակով խորհուրդ էր տալիս բանակցությունների մեջ մտնել Ն. Ժորդանիայի հետ: Հակառակ դեպքում, եթե վրացիները մերժեին աջակցել Բաբվի խորհրդին, Լենինն առաջարկում էր հետաձգել Գանձակի դեմ ռազմական գործողությունները. «...խորհուրդ կտայի փորձել Ժորդանիայի հետ բլոք ստեղծել: Եթե այդ չի կարելի, պետք է կեղծել և վճիռը ձգձգել (սկատի ունեւր Գանձակի դեմ ռազմական գործողությունների հետաձգումը – Գ. Ս.), մինչև որ զինուորական տեսակետով ուժեղանաք: Լաւ յիշեցէք, դրա համար անհրաժեշտ է ձգձգել, որի համար հարկաւոր է լաւ ծրագիր և քաղաքագիտութիւն»⁷⁷⁸: Թեև Ս. Շահումյանն առաջնորդվեց Վ. Լենինի ցուցումով և բանակցությունների մեջ մտավ Ն. Ժորդանիայի հետ, սակայն դրանք ավարտվեցին անարդյունք. Վրաստանն արդեն օկուպացվել էր Թուրքիայի դաշնակից Գերմանիայի կողմից⁷⁷⁹: Հետագայում, երբ արդեն հուլիսին Գանձակի ռազմաճակատում թուրքական զորքերի դեմ ընթանում էին թե՛ մարտեր, Ս. Շահումյանը, հունիսի 23-ի նամակով Վ. Լենինին իրազեկելով Բաբվի զորքի ծանր դրության մասին, կասկածի տակ էր առնում նրա ցուցումների ճշմարտությունը՝ մարտյան իրադարձություններից հետո Գանձակի գրավումը հետաձգելու մասին. «Տեր-Գաբրիելյանի ինձ բերած փոքրիկ նամակում Դուք գրում եք, որ, սկատի ունենալով մեր դրության դժվարությունները միջազգային տեսակետից, ավելի լավ է սպասել՝ մինչև ամրապնդվենք: ...կարծում եմ, որ ավելի լավ կլիներ, եթե մենք ավելի փոքր ուժերով այնտեղ (իմա՝ Գանձակ – Գ. Ս.) շարժվեինք Բաբվի քաղաքացիական պատերազմից անմիջապես հետո: Այն ժամանակ դրությունը

⁷⁷⁶ Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 14:

⁷⁷⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 70-71:

⁷⁷⁸ Բոլշևիկների նամակները Արտակարգ հանձնաժողովի արխիվից: Լենինի նամակը Շահումյանին, «Արև», Բազու, 1918, սեպտեմբերի 10, N 179: Հմմ. **Խուրշուդյան Լ.**, Ստեփան Շահումյան (պետական և պարտիական գործունեությունը 1917-1918 թթ.), Երևան, 1959, էջ 313:

⁷⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 312:

անհամեմատ ավելի պարզ էր և մենք կկանխեինք այն ամենը, ինչ կատարվեց Բաթումում և Բաթումի բանակցություններից հետո»⁷⁸⁰:

Իսկապես, մարտյան իրադարձություններից հետո Ռոստոմի մշակած ռազմավարական ծրագրով հնարավոր էր թեկուզև փոքրաթիվ ուժերով շարժվել առաջ, գրավել Գանձակը, ջախջախել այնտեղ կուտակված թուրք-թաթարական ուժերը, ապա բացել երկաթուղային ճանապարհը՝ թուրքերի դեմ կռվող նոր կազմավորված Հայկական կորպուսին օգնության հասնելու համար: Դրանով իսկ կկանխվեր այն աղետը, որը հետագայում կրեց Գանձակի, Արեշի, Նուխիի, Գյոքչայի, Շամախիի գավառների և, ի վերջո, Բաքվի հայությունը թուրքական զորքերի արշավանքի ընթացքում: Դավիթ Անանունը, բացահայտելով Ս. Շահումյանի թույլ տված նման ճակատագրական սխալների իրական պատճառները, «Մշակ»-ում 1919թ.-ին հրապարակած «Բագուի շիրիմները» հոդվածում հետևյալ խորհմաստ գնահատականն է տվել նրա՝ Բաքվում ծավալած գործունեությանը. «Ստ. Շահումյանը չէր կարողանում հաւասարակշռված քաղաքական գիծ վարել: Յաճախ էր պատահում, որ նա ջանքեր էր թափում ինքնուրույն լինել և իր մտածածի կերպ շարժվել, սակայն գալիս էր Լենինի հրահանգը, և նա իսկոյն գլուխ էր խոնարհում կուսակցական պետի առաջ: Այդպես էր նրա բռնած դիրքը պատերազմի խնդրում և Հայկական հարցում: Այդպես էր նրա վերաբերմունքը դեպի Բագուի Հայոց Ազգ. [ային] խորհուրդը: Այդ մարմինը բացասվում էր նրա կողմից, բայց միաժամանակ նրա օգնութեամբ էր, որ յարատևում էր բոլշևիկական իշխանությունը Բագումում»⁷⁸¹: Պատմությունը ցույց տվեց, որ կարճ ժամանակ անց նման անհեռատեսության, իրականում խորհրդային կենտրոնական իշխանությունների թելադրանքի արդյունքում Բաքվի Կոմունան դարձավ Անտանտի դեմ պայքարում Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ շարունակական կոմպրոմիսներ փնտրող Վ. Լենինի մարտավարական հաշվարկների և դրանցից օգտվելով՝ Բաքվին զենքի ու զինամթերքի հատկացումները խափանող Ի. Ստալինի քողարկված, նենգադավ գոհը:

Ռոստոմի ռազմագիտական բարձր ունակությունները դրսևորվեցին հատկապես Բաքվի հերոսամարտի շրջանում, նրան վերապահվեց հերոսամարտի իրական առաջնորդ լինելու պատիվը:

Վերագրավելով Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան կայսրությունը 1918թ.-ի գարնանը ներխուժեց Այրարկովկաս: Մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը գրավելուց հետո Էնվեր փաշայի առաջադրած ռազմական ծրագրի համաձայն՝ թուրքական 3-րդ և 4-րդ զորախմբերի խնդիրն էր գրավել Երևանը և ուղղություն վերցնել դեպի Համամյուլ (այժմ Սպիտակ) - Ղարաբաղի սահման (այժմ Վանաձոր), իսկ 2-րդ զորախումբը կովկասյան իսլամական բանակի գլխավոր հրամանատար Նուրի փաշայի հրամանատարությամբ պետք է գրավեր Բաթումը⁷⁸²: Փաստերը վկայում են, որ թուրքերը Բաքվի դեմ արշավանքով նպատակադրվել էին օղակել մայիսյան հաղթական հերոսամարտերի բովում ծնված հայոց պետականությունը և իրագործել հայությանն իսպառ բնաջնջելու համաթուրքական ծրագրերը:

Մուսավաթական կառավարությունը, կանխագգալով, որ Բաքվի դեմ արշավող թուրքական զորքերի դեմ հիմնական կռվող ուժը լինելու են Բաքվի Հայոց Ազգային խորհրդի և ՀՀԴ-ի տրամադրության տակ գտնվող հայկական զորամիավորումները, փորձեց ազդել Ազգային խորհրդի վրա, որպեսզի վերջինս ճանաչի Բաթումի հաշտության պայմանագրի 11-րդ կետը, որով «Հայկական Հանրապետութեան կառավարությունը պարտավորվում էր գործ դնել իր բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանները

⁷⁸⁰ Շահումյան Ս., ԵԼԺ, հ. 5 (1918 թ. մայիսի 29-սեպտեմբերի 20), Երևան, 1978, էջ 147:

⁷⁸¹ Անանուն Դ., Բագուի շիրիմները (II): Ստեփան Շահումյան, «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 29, դ 69, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 54:

⁷⁸² Տե՛ս Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 174-175, 207:

ստորագրելուց անմիջապես հետո հեռացնի Բագու քաղաքից այնտեղ գտնվող հայկական ուժերը»: Յայոց Ազգային խորհրդի պատասխանը կախված էր խորհրդում ծանրակշիռ դեր ունեցող ՅՅԴ կուսակցության դիրքորոշումից, ուստի Բաբուն Ադրբեջանի կառավարությանը հանձնելու խնդիրը քննարկվեց այդ օրերին գումարված ՅՅԴ Բաբվի Ոսկանապատի Կ. Կոմիտեության շրջանային ժողովում, որտեղ ելույթ ունեցավ Ռոստոմը: «Մենք գիտենք, - ասում էր Ռոստոմը, - որ Ադրբեջանի կառավարության թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է, որ գծում է ադրբեջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակետից պարզ է: Տաճիկները ձգտում են հայ ազգի ֆիզիքական ոչնչացման եւ արդեն մեկ միլիոն սրածել են եւ մայր երկիրը աւերել: ...Վաղը, հենց որ բացուեն Բագուի դռները Ադրբեջանի բանակի առջեւ եւ տաճիկները տեղաւորուեն Բագուում, իսան-խոյսկու ամբոխը եւ տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաեւ Բագուի ու Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Չանգեզուր եւ Երեւանը ոտնատակ պիտի տան»⁷⁸³: Ժողովը, հիմնվելով Ռոստոմի ռազմավարական կանխատեսման վրա, իր ընդունած բանաձևով միահամուռ որոշում է մերժել Ադրբեջանի կառավարության պահանջը և «...պատերազմի մեջ մտնել Ադրբեջանի թուրքերի ու տաճիկների դեմ եւ քշել ու հետապնդել թշնամուն եւ հասնել մեր երկրի սահմանները: Իսկ եթէ չյաջողինք անել այդ, կամրանանք Բագուում, կը կվտանգենք Ադրբեջանի ամբոխի եւ տաճիկ բանակի թիկունքը, որով՝ կարգի ենք նրանց խժոժութիւնները հայաշատ միւս գաւառներում»⁷⁸⁴: Որոշումը հիմնավորվում էր այն վճռորոշ հանգամանքով, որ Բաբվի հայկական զինուժը, հակառակորդին պարտադրելով իր վրա կենտրոնացնել թուրքական բանակի հիմնական խմբավորումները, ոչ միայն կանխում էր Երևանին սպառնացող վտանգը, այլև - վճռորոշ նշանակություն ուներ Արցախի, Գանձակ-Ելիզավետպոլի ու Բաբվի նահանգների հայության ու նորաստեղծ Յայաստանի Յանրապետության հետագա ճակատագրի համար: Այսպիսով, Բաբվի Յայոց Ազգային խորհուրդն ու ՅՅԴ Բաբվի Ոսկանապատի Կ. Կոմիտեն հրաժարվեցին կատարել Յայաստանի Յանրապետությանը պարտադրված Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածը, որով «Բաբու քաղաքից անհապաղ դուրս պետք է բերվեն հայկական բոլոր զորամասերը», այսինքն՝ Բաբվի Կոմունայի պաշտպանների հիմնական կորիզը⁷⁸⁵: Ուստի Երևանում Ա.Մանուկյանն ու Բաբվում Ռոստոմը, ճիշտ կողմորոշվելով ռազմաքաղաքական այդօրինակ բարդ պայմաններում, ըստ էության, փոխահամաձայնեցված էին գործում: Բաթումի պայմանագրով Բաբուն հայկական ուժերից դատարկելու վերաբերյալ Յայաստանի Յանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման հարցում արտաբուստ հակադրվելով իրար՝ ներքին համաձայնությամբ նրանք ձգտում էին կանխել թուրք-թաթարական արքայի մեջ Յայաստանը խեղդելու՝ օրավուր ահագնացող վտանգը: Ինչպես իրավամբ գրում է Գ.Խուդինյանը. «...Երևանում գտնվող և առերևույթ Բաթումի պայմանագիրը հարգող Արամը և Բաբվում գտնվող, սակայն քաղաքից հայկական ուժերի դուրսբերման՝ Բաթումի պայմանագրով նախատեսվող ՅՅ պարտավորության կատարումից հրաժարվող Ռոստոմը, ձևով հակադրվելով իրար, բովանդակությամբ նույն խաղն էին առաջ տանում: Նրանք գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաբվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը»⁷⁸⁶:

Ռոստոմն ու Արամը գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաբվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը: Ռազմա-քաղաքական

⁷⁸³ Ալյուշեան Ա., Ռոստոմը Բագուում (Ա), «Յայրենիք», Պոսթըն, 1956, ԼԴ տարի, յուլիս, N 7, էջ 6:

⁷⁸⁴ Նույն տեղում, տե՛ս նաև ՅԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 14:

⁷⁸⁵ Տե՛ս Վրացեան Ա., Կեանքի ուղիներով (Դեպքեր, դեմքեր, ապրումներ), հ. 2, Պեյրուֆ, 1967, էջ 337, տե՛ս նաև Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ... (ակնարկ հայկական հարցի պատմության վրայ), Գ. տպ., Լոս Անճերս, 1986, էջ 111:

⁷⁸⁶ Խուդինյան Գ., Յայաստանի Յանրապետության հիմնադիր հայրերը, էջ 62-63:

այդ բարդ իրադրության պայմաններում հայության գոյությունը պաշտպանելու գեր-խնդիրը լուծելու համար Բաբվի Յայոց Ազգային խորհուրդն ու ՅՅԴ-ն հմտորեն կարողացան զուգակցել ազգային նպատակները Ռուսաստանի շահերի հետ և ինքնապաշտպանության սկզբնական շրջանում համագործակցեցին Ա.Շահումյանի գլխավորությամբ հաստատված Բաբվի բոլշևիկյան իշխանության՝ Բաբվի Կոմունայի հետ: Քաղաքական այդ երկու ուժերի զինական համագործակցության մասին Մ.Վարանդյանն իրավամբ գրել է. «...Յ.Յ. Դաշնակցութիւնը ազգային պաշտպանութեան գերագոյն մտահոգութեամբ որոշել էր միանալ ռուս բոլշևիկներուն եւ Ռոստոմ ու Շահումեան, հակառակ գաղափարային խորունկ տարածայնութեանց, կը գործէին թեւ թեւի»⁷⁸⁷: Բաբվի դեմ արշավող թուրքական զորքերի դեմ հիմնական կռիվող ուժը Բաբվի Յայոց Ազգային խորհրդի և ՅՅԴ-ի տրամադրության տակ գտնվող հայ զինվորականությունն էր: Փոխգնդապետ Յարությունյանը հետևյալ բնութագրումն է տվել բանակի կազմին. «...Միայն դրոշն էր բոլշևիկյան, իրականում հայ զինվորները կազմում էին 95% և գրեթե 100% հայ սպաներ, որովհետև մեր նպատակները համընկնում էին բոլշևիկների հետ, այդ պատճառով ծառայության էինք մտնում նրանց մոտ»⁷⁸⁸: Փաստորեն, Բաբվի Կոմունան հենվում էր առավելապես հայ զորքի վրա⁷⁸⁹:

Ռազմաճակատը հայաշատ զավառների բնակավայրերից հեռու պահելու մտադրությամբ Կովկասյան Կարմիր բանակը հունիսի 5-ին Եվլախ-Գանձակի ուղղությամբ անցավ հարձակման: Բաբվի Յայոց Ազգային խորհրդի լիազորությամբ ռազմաճակատի առաջին զօնում էր Ռոստոմը: Յարկ է նշել, որ թեև Ռոստոմը երբեք կանոնավոր զինվորական կրթություն չէր ստացել, բայց զործի մեջ հանձնարարություններ կատարելիս և ամենուր երկաթյա կարգապահություն էր պահպանում և պահանջում ուրիշներից: ՅՅԴ անդամ Ե.Խաթանասյանի դիպուկ բնութագրմամբ՝ «Ռոստոմը անսասան կամք էր, Արարատի նման, սեգ ու վեմ, պատկառազուր եւ հայրական, բայց հրաբուխ էր՝ լուռ ու մխացող»⁷⁹⁰:

Յունիսի 27-ից-30-ը Գյոքչայի մոտ տեղի ունեցած ծանր մարտերից հետո Բաբվի զորքը բանակի գերագոյն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների, թիկունքի անկազմակերպ վիճակի և թուրքական մեծաքանակ զորքի հակահարձակման պատճառով նահանջեց⁷⁹¹: Բաբվի զորքի կրած ռազմական պարտությունը զրկեց Բաբվի նահանգի հայ բնակչությանը թուրք-թաթարական միացյալ ուժերից պաշտպանվելու կայուն երաշխիքից: Գավառների հայկական գյուղերից տեղահանված և Բաբու նահանջող հայ բնակչության անկազմակերպ գաղթին կազմակերպված բնույթ տալու գործում մեծ ներդրում ունեցավ Ռոստոմը: Յայ բնակչությանը սպասվող կոտորածից փրկելու նպատակով նա հետևյալ հանձնարարականն էր տվել Ե. Պահլավունուն. «Գալառի ամբողջ հայութիւնը տեղահան ենք անելու եւ այս ձորով (Դավա-Բաթան – Գ. Ս.) բարձրանալու ենք Սաղիան, ու այնտեղից մինչեւ Բագու: Մինչեւ վերջին մարդը պետք է նահանջի կռուելով եւ պաշտպանելով նահանջող ժողովուրդը: Ուրիշ որեւէ օգնական զորամաս նա չպիտի ունենայ»⁷⁹²: Ահա թե ինչ է գրում այդ մասին դեպքերի ամփոփական ականատես Արամ Ալչուջյանը. «Անցուդարձին շատ մօտիկ կանգնած էինք եւ լաւ գիտէինք, որ եթէ Ռոստոմը տեղին վրայ չլինէր, ոչ ոք պիտի մտածէր Շամախու գալառի հայ

⁷⁸⁷ **Վարանդեան Մ.**, Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), Պոսթըն, 1931, էջ 326:

⁷⁸⁸ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 14:

⁷⁸⁹ Տե՛ս **Ներհակ [Աշոտ Հովհաննիսյան]**, Դեպքերը Բագում (Յայ Յեղ. Դաշնակցութիւնը և Բագի խորհրդային իշխանութիւնը), էջ 13:

⁷⁹⁰ **Խաթանասեան Ե.**, Ռոստոմ (Ստեփան Չօրեան), «Յայրենիք», Պոսթըն, 1957, ԼԵ տարի, մայիս, N 5, էջ 79:

⁷⁹¹ Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Համագասպ Սրվանձոյանց, էջ 538:

⁷⁹² **Ալչուջեան Ա.**, Ռոստոմը Բագում (Ա), էջ 9:

գիւղացիութիւնը տեղահան անելու եւ նրա նահանջը պաշտպանելու մասին»⁷⁹³: Ռոստոմի ձեռնարկած մարտավարական հմուտ գործողությունների շնորհիվ կոտորածից փրկվեց Գյոբջայի ու Շամախիի գավառների բազմահազար հայությունը:

Թուրքական բանակը Բաքվի գործի դիմադրական կռիվներով շարունակեց իր ռազմարշավը և հուլիսի վերջերին մոտեցավ Բաքվի մատույցներին: Թուրքական զորամասերի ու հայ դիմադրական ուժերի միջև մարտերը վերսկսվեցին օգոստոսի 2-ին Սալիանի գորանոցների և Բիբի-Յեյբաթի շրջանում: Հայկական ուժերը կռվում էին անօրինակ քաջությամբ: Համախմբելով իրենց ուժերը և գործի դնելով մարտական կարողությունները՝ նրանք արիաբար պաշտպանվում էին՝ ձախողելով հակառակորդի ձեռնարկած բոլոր գրոհները: Դաժան մարտերը շարունակվեցին նաև օգոստոսի 3-ին, 4-ին և հատկապես 5-ին⁷⁹⁴: Օրհասական այդ օրերին Ռոստոմը գեներ ձեռքին Բաքվի պաշտպանների կողքին եր՝ առաջնագծում, ինչը մեծապես նպաստում էր դիմադրական ոգու բարձրացմանը: Հայկական ուժերին մեծ կորուստների գնով հաջողվեց ոչ միայն կասեցնել թշնամու առաջխաղացումը, այլև շրջանցել հակառակորդին և թիկունքից հարվածել նրան: Արդյունքում թուրքերը, մարտի դաշտում թողնելով ավելի քան 1000 սպանված, հետ շարտվեցին Բաքվից ավելի քան 40 կմ հեռու գտնվող Այլաթ կայարան⁷⁹⁵: Թուրք ջարդարարների դեմ անհավասար գոտեմարտում անձնվիրաբար ընկան բազմաթիվ հայորդիներ, որոնց թվում՝ լեգենդար հայդուկ Սեբաստացի Մուրադը: Հարկ է նշել, որ Բաքվի մատույցներում հուլիսի 3 1-ից մինչև օգոստոսի 5-ը տեղի ունեցած 6-օրյա հերոսամարտը ռազմագիտական բոլոր չափանիշներով հավասարազոր է Սարդարապատի, Բաշ-Ապարանի և անգամ Ղարաքիլիսայի հերոսամարտերին: Հիրավի, պատմական իրադարձությունների քննական վերլուծությունը ցույց է տալիս, որ ահռելի էր Բաքվի մատույցներում ու քաղաքի փողոցներում ծավալված ճակատամարտերի նշանակությունը ոչ այնքան ողբերգությամբ ավարտված Բաքվի պաշտպանության, որքան ողջ հայ ժողովրդի և Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ճակատագրում: «Եթե մեծ պատերազմի ընթացքին մեզ յաջողել է քաջաբար դիմադրել եւ ջարդել թշնամուն, այդ լավագոյն եւ մեծ օրերի շարքին անպատճառ պետք է դասել եւ Օգոստոս հինգը, երբ հայ երիտասարդութեան, նրա մարտական կուսակցութեան եւ ընդհանրապէս հայ զինուորի ցուցադրած քաջութիւնը հասաւ չտեսնած հերոսութեան...»⁷⁹⁶, - գրում է Ա. Գյուլխանդանյանը: Բարձր գնահատելով օգոստոսի 2-5-ը տևած մարտերի նշանակությունը՝ «Հորիզոնը» գրել է. «Օգոստոսի 2-5-ի հերոսամարտը արժանի է յաւերժացման պատմութեան էջերում: Կարելի է ասել, որ այդ երեք օրւայ ընթացքում բոլոր բազմեցիք անխտիր հերոսներ էին դարձել»⁷⁹⁷:

Սեպտեմբերի 14-ին փոփոխական հաջողություններով մղված մարտերի շնորհիվ Բաքվի պաշտպաններին հաջողվեց կասեցնել քաղաքի գրավումը՝ շահելով այն թանկագին ժամերը, որոնք անհրաժեշտ էին հայ բնակչությանը քաղաքից հեռացնելու համար: Տարհանման աշխատանքները կազմակերպելու համար դեռևս օգոստոսի սկզբներին ստեղծվել էր հատուկ հանձնաժողով՝ կառավարության անդամ Լեմելյնի նախագահությամբ⁷⁹⁸: Տարհանման աշխատանքները հաջող կազմակերպելու գործին ձեռնամուխ էր եղել նաև Հայոց Ազգային խորհուրդը՝ Ռոստոմի և Ա.Գյուլխանդանյանի

⁷⁹³ Նույն տեղում:

⁷⁹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 9, տե՛ս նաև **Գիւլխանդանեան Ա.**, Օգոստոս հինգը (մի էջ Բագուի հերոսամարտից), «Վեմ», Փարիզ, 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, Ա տարի, N 2, էջ 118:

⁷⁹⁵ Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.**, Օգոստոս հինգը (մի էջ Բագուի հերոսամարտից), էջ 120:

⁷⁹⁶ Նույն տեղում:

⁷⁹⁷ «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 25, N 218:

⁷⁹⁸ Տե՛ս **Մելիք-Եօլջեան Ա.**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, 4 տարի, օգոստոս, N 10, էջ 110:

ղեկավարությամբ, որոնք ուժերի գերագույն լարումով ջանում էին հնարավորինս անխուճապ իրականացնել այդ⁷⁹⁹:

Ստեղծված իրադրության պայմաններում իրավիճակից ելք գտնելու համար սեպտեմբերի 14-ին Կենտրոնական Կասպիի կառավարության գումարած նիստին, որին - մասնակցում էր նաև Ռոստոմը, որոշում կայացվեց դադարեցնել դիմադրությունը, և քաղաքը հանձնել թշնամուն: «Երբ հարց է ծագում,- վերհիշում է Ռ. Խոյյանը,- թե ո՞վ պիտի յանձնի քաղաքի բանալիները, մեր անմահ Ռոստոմը ինքն է ցանկութիւն յայտնում մնալ ու յանձնել բանալիները: Բայց քաղաքագլուխ Տեր Միքայելեանը վճռական կերպով մերժում է, թե ինքն է քաղաքագլուխը եւ ինքն էլ կը յանձնի բանալիները»⁸⁰⁰: Մոտենում էր քաղաքի պաշտպանության վերջին օրը՝ սեպտեմբերի 14-ը, երբ պետք է վճռվեր ինչպես Բաբվի պաշտպանության, այնպես էլ քաղաքի ավելի քան 100.000 հայերի հետագա ճակատագիրը: Սեպտեմբերի 15-ին Բաբվի մատույցներում փոփոխական հաջողություններով մղված մարտերից հետո թուրքական զորամասերը ներխուժեցին քաղաք և մուսավաթական կառավարության համաձայնությամբ երեք օր շարունակ կոտորեցին ավելի քան 30 հազար հայերի՝ կողոպտելով նրանց ունեցվածքը⁸⁰¹: Նպատակը մեկն էր՝ զավթած Բաբուն «Աղրբեջան» արհեստածին պետության կազմում ամրագրելու և այն որպես զուտ թուրք-թաթարական քաղաք դարձնելու միտումով ցեղասպանության ճանապարհով հայրենագրվելու Ապշերոնյան թերակղզու տեղաբնակ ժողովուրդներից հայերին, բռնազավթելու նրանց՝ Բաբվի հարստության առանցքը կազմող հարստությունը:

Այսպիսով՝ Բաբվի հերոսամարտի ընթացքում, թեև չհաջողվեց իրագործել նախապես մշակված ռազմական ծրագիրը, սակայն հայկական զորքի աներևակայելի քաջագործություններով առլեցուն ինքնապաշտպանական կռվիների արդյունքում մեծաթիվ զոհերի գնով թուրքական զորամասերը մինչև սեպտեմբերի 15-ը գամված մնացին Բաբվի շրջանում, երբ Օսմանյան կայսրության անձնատվությանը հաշված օրեր էին մնացել: Դրանով իսկ թուրքական զորքերը չկարողացան օղակել Հայաստանի Հանրապետությունը և իրագործել հայությանը իսպառ բնաջնջելու համաթուրքական ծրագրերը: Կանխելով Արցախի ու Երևանի հանդեպ ծրագրավորվող թուրքական ագրեսիան՝ Բաբվի հերոսամարտը վճռական դեր խաղաց նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետության պաշտպանության գործում: Հիրավի, մայիսյան գոյամարտի

⁷⁹⁹ Տեղին է նշել, որ Ռոստոմը կազմակերպչական մեծ աշխատանք է տարել նաև Բաբվից Էնզելիում հանգրվանած շուրջ 7000-ի հասնող գաղթահայության տեղավորման խնդիրները լուծելու ուղղությամբ: Նրա անմիջական նախաձեռնությամբ մաքրվեցին ծովափին գտնվող բարաքները, և այնտեղ տեղավորվեցին 2000 հոգի (տե՛ս **Սեպուհ**, Էջեր իմ յուշերէն, հ. Բ, Պոստոն, 1929, էջ 201, տե՛ս նաև **Ստեփանյան Գ.**, Բաբվի անկումը և հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), «Իրան-Նամե», Երևան, 2000, հ. 35, էջ 58-65): Ռոստոմի մարդկային բարձր արժանիքների մասին է վկայում նաև հետևյալ դիպվածը, որը տեղի է ունեցել քաղաքից հայ բնակչության տարհանման ժամանակ, կապված ռազմածովային կոմիսար գեներալ-մայոր - Հակոբ Բագրատունու հետ: Գնետրալը, որ ամենայն պատասխանատվությամբ մինչև վերջ կատարեց իր վրա դրված պարտականությունները, Բաբվից Էնզելի հեռացավ միայն ստիպողաբար: Երկար համոզելուց հետո հաջողվում է առավոտյան ժամը 5-ին նրան դուրս բերել փողոց, որտեղ նրան սպասում էր մեթենան: Գ. Ամիրյանը վկայում է, որ Բագրատունուն ստիպողաբար տանից դուրս հանողը եղել է Ռոստոմը, ով «...ամեն վտանգ աչք առնելով՝ կերթայ ազատելու խեղճ զորավարը, կը շալակէ գայն ու սանդուղքներէն վար կիջեցնէ» (**Ամիրեան Գ.**, Ռոստոմի հետ (Ա), «Հայրենիք», Պոսթըն, 1960, ԼԸ տարի, ապրիլ, դ 4, էջ 17):

⁸⁰⁰ **Խոյյան Ռ.**, 1918 և Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1966, ԽԴ տարի, մարտ, N 3, էջ 70:

⁸⁰¹ Տե՛ս **Իշխանեան Բ.**, Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 185, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 96-99, տե՛ս նաև Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией **М. Г. Нерсисяна**, Ереван, 1982, док. N 245, с. 524.

հաղթանակների և Առաջին Հանրապետության հիմնադրման գործում ըստ արժանվույն պետք է գնահատել Բաքվի հերոսամարտի քաջարի հայորդիների սխրագործությունը և հատկապես հերոսամարտի իրական առաջնորդ Ռոստոմի անուրանալի ավանդը հայոց պետականության վերականգման և նրա անվտանգության ապահովման գործում:

ROSTOM ZORYAN'S ROLE IN THE HEROIC BATTLE OF BAKU IN 1918 AND IN PROVIDING SECURITY FOR THE NEWLY-INDEPENDENT REPUBLIC OF ARMENIA

GEVORG STEPANYAN

*Head of the Chair of History of Armenian Settlements and Diaspora of the Institute of History, NAS, RA, Doctor in Historical Sciences, Professor
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present the importance of Baku's 1918 heroic war in ensuring the security of the First Republic of Armenia on the basis of various facts (archival documents, memoirs, periodicals).

The work consists of a comparative examination of the facts, the application of the principles of historical-comparative analysis. We have verified the reliability and validity of the sources through their comprehensive study.

Combined with the facts, it is reported that as a result of Baku's four-month heroic battle with unbelievably brave Armenian troops, Turkish military units remained in Baku until September 15 at the expense of the Ottoman Empire. Thus, the Turkish troops failed to encircle the Republic of Armenia and implement the all-Turkish plans to exterminate the Armenians.

Although there are many references to the Baku war in historiographic literature, the work of Rostom (Stepan) Zoryan, a true leader of the heroic struggle, an Armenian public-political figure, a member of the ARF Dashnaktsutyun, has not been the subject of separate investigation.

The article substantiates the fact that by preventing the planned Turkish aggression against Artsakh and Yerevan, the Baku heroic battle played a decisive role in ensuring the security of the newly established First Republic of Armenia.

Key words: *Rostom Zoryan, Armenian Revolutionary Federation (ARF)/ Dashnaktsutyun/, Hamazasp Srvandztyants, Armenian National Board of Baku, The Armenians of Baku, May heroic battles, Battle of Baku.*

РОЛЬ РОСТОМА ЗОРЯНА В ДЕЛЕ ОРГАНИЗАЦИИ ГЕРОИЧЕСКОГО СРАЖЕНИЯ ЗА БАКУ 1918 ГОДА И ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ НОВОСОЗДАННОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЕВОРГ СТЕПАНЯН

*Заведующий отделом «Истории армянских колоний и диаспоры»
Института истории НАН РА, д.и.н., профессор,
г.Ереван, Республика Армения*

Цель работы – представить на основе различных фактов (архивные материалы, мемуары, периодическая печать) значение Бакинского четырехмесячного героического сражения 1918 года в обеспечении безопасности Первой Республики Армения.

Статья написана на основе анализа и синтеза исторических фактов, а также с применением историко-сравнительного метода. Достоверность и обоснованность источников проверена путем их всестороннего изучения.

Посредством сопоставления фактов показывается, что благодаря невероятному мужеству армянских войск в четырехмесячных бакинских сражениях турецкие подразделения понесли многочисленные потери и до 15 сентября были скованы в окрестностях Баку, в то время как до признания поражения Османской империи в Первой мировой войне оставались считанные дни. Таким образом, Османской империи не удалось осуществить окружение Республики Армения и реализовать пантюркистский проект полного истребления армян.

Хотя в исторической литературе много написано о Бакинском героическом сражении, тем не менее деятельность армянского общественно-политического деятеля, члена АРФ «Дашнакцутюн» Ростом (Степана) Зоряна, организатора Бакинского героического сражения, не стала предметом отдельного исследования.

В статье обосновывается тот факт, что, предотвратив запланированную агрессию Турции против Арцаха и Еревана, Бакинское героическое сражение сыграло решающую роль в обеспечении безопасности новосозданной Первой Республики Армения.

Ключевые слова: *Ростом Зорян, АРФ «Дашнакцутюн», Амазасп Срвандзтянци, Армянский национальный совет Баку, армянское население Баку, Майские сражения, Бакинское сражение.*

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐՈՆԱՓՈԽ ԵԶԴԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ, ՀԻՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ)*

ՍԵՅԵԴԵՅՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ

Հայ-ռուսական համալսարանի

արևելագիտության ֆակուլտետի հայցորդ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
saramn834@gmail.com

Վերջին տասնամյակներում նկատվում է եզդիների կրոնափոխության ակտիվ միտում դեպի այլ կրոններ՝ Եհովայի վկաներ⁸⁰² և Հիսունականներ: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել, թե ինչպիսի՞ն է կրթության դերը Եհովայի վկա դարձած եզդիների և եզդի հիսունականների շրջանում: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել այն սկզբունքային տարբերությունները, որոնք առկա են կրթության հիմնախնդիրների մեջ երկու կրոններում, դրանց ազդեցությունները եզդի կրոնափոխների մտածելակերպի վրա և առօրյա կյանքում:

Վերլուծել ենք աշխարհիկ ու աստվածաբանական դպրոցների դերաբաշխումը և դրանց առանձնահատկությունները կրոնափոխ եզդիների (Եհովայի վկաներ ու Հիսունականներ) շրջանում: Սույն հոդվածի հիմքում ընկած են հեղինակի դիտարկումները՝ համեմատության ու վերլուծության մեթոդով, և անհատական ու խմբային հարցազրույցները Հայաստանի ու Ռուսաստանի Եհովայի վկաների ու Հիսունականների կրոնը ընդունած եզդիների հետ:

Հոդվածում հանգել ենք այն եզրակացությանը, որ կրոնափոխ եզդիները ձեռք են բերում նոր հոգևոր արժեքներ՝ սովորելով աստվածաբանական դպրոցներում, իսկ աշխարհիկ կրթությունը ստանալու տեսանկյունից Հիսունականներն ավելի են խրախուսում կրթությունն ընդհանրապես և առանձնապես բարձրագույն կրթությունը:

Հիմնաբառեր՝ կրոնափոխ եզդիներ, Եհովայի վկաներ, Հիսունականներ, կրթության հիմնախնդիրներ, եզդիների համայնքներ, աստվածաբանական դպրոց, բարձրագույն կրթություն:

Ավանդական եզդիական համայնքներում եզդիները ոչ միշտ են լիարժեք կրթություն ստանում: Նրանք հիմնականում սահմանափակվում են միջնակարգ կրթությամբ, երբեմն՝ թերի միջնակարգ կրթությամբ: Հիմնականում տղաներն են ստանում միջնակարգ կրթություն, իսկ աղջիկների մեծ մասը ստանում է թերի միջնակարգ կրթություն, և շատ քչերն են շարունակում ուսումը մինչև միջնակարգ կրթության ավարտը:

Եզդիների շրջանում բարձրագույն կրթության խնդիր հիմնականում չի դրվում մանավանդ աղջիկների պարագայում: Սակայն հանդիպում են ընտանիքներ, որոնք թե՛ աղջիկներին, թե՛ տղաներին տալիս են բարձրագույն կրթություն՝ կարևորելով կրթության դերը նրանց կյանքում:

* Հոդվածը ներկայացվել է 07.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

⁸⁰² **Фатемн, С.С.** «Езиды Армении в секте «Свидетелей Иеговы» (первичный анализ мотивации)». Регион и Мир, научно-аналитический журнал, Том IX, No 4, 2018, С.111-115.

Եզդի Եհովայի վկաներ

Կրթության դերը էապես չի փոխվում նաև այն եզդիների համար, որոնք Եհովայի վկա են դառնում: Նրանք լիարժեք կրթություն չեն ստանում, քանի որ ըստ Եհովայի վկաների՝ կրթությունը հարկավոր է, որ մարդ կարողանա կարգալ և ուսումնասիրել Աստվածաշունչը: Եհովայի վկաները չեն ձգտում բարձրագույն կրթության՝ այն համարելով ժամանակի անօգուտ վատնում:

Ըստ նրանց՝ Աստվածաշունչն ուսումնասիրող մարդն արդեն իսկ բարձրագույն կրթություն ունի⁸⁰³: Չուրկ լինելով բարձրագույն կրթությունից՝ կրոնափոխ երիտասարդ եզդիները չեն կարողանում պատշաճ աշխատանք գտնել և այդ պատճառով արհեստներ են սովորում առօրյա կարիքները հոգալու համար: Նրանք մնացած ժամանակը տրամադրում են Աստվածաշունչը ուսումնասիրելուն ու քարոզելուն, քանի որ ասում են՝ «մարդը պետք է սովորի արհեստ իր հացը վաստակելու, իսկ մնացած ողջ ժամանակը հատկացնի Աստծուն՝ քարոզելու և Աստվածաշունչն ուսումնասիրելու համար»:

Հարցազրույցների արդյունքների հիման վրա կրոնափոխ եզդիների կրթական մակարդակը պայմանականորեն բաժանել ենք երեք խմբի.

- Կրթություն չունեցող,
- Միջնակարգ կրթություն ստացած,
- Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող և կրոնափոխությունից հետո ուսումից հրաժարվող:

Կրթություն չունեցող եզդիները, Եհովայի վկա դառնալով, սովորում են գրել ու կարդալ, բայց ոչ ավելին: Նրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք ուզում են մասնագիտական կրթություն ստանալ, սակայն նրանց երազանքը չի իրականանում, քանի որ Եհովայի վկաները այն չեն խրախուսում: Նրանք ասում են. «Ավելի ճիշտ է ժամանակը օգտագործել Աստվածաշունչն ուսումնասիրելու և Եհովայի խոսքը ուրիշներին քարոզելու համար»:

Միջնակարգ կրթություն ստացողները ևս, որոնք նախկինում երազում էին շարունակել կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, Եհովայի վկա դառնալով՝ հեռանում են իրենց վաղեմի երազանքից՝ ապագան տեսնելով միայն Եհովա Աստծուն ծառայելու մեջ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող և կրոնափոխությունից հետո ուսումից հրաժարվողների խմբում ներգրավված են եզդիների միայն հինգ տոկոսը:

Կրոնափոխ եզդիների կրթության հիմնախնդիրներն ավելի լավ պատկերացնելու համար ներկայացնում ենք մեր ուսումնասիրած օրինակներից երեքը:

Առաջին օրինակ: *Վերջերս Եհովայի վկաների կրոնը ընդունած մի 30-ամյա կին պատմեց, որ 8-րդ դասարանից հետո չի շարունակել կրթությունը: Ծնողները թույլ չեն տվել, որ նա քաղաք գնա և շարունակի ուսումը՝ համարելով այն ամոթալի արարք: Հետագայում՝ ամուսնանալուց հետո, ժամանակի սղության և հնարավորություններ չունենալու պատճառով չի կարողացել անգամ ինքնակրթությամբ պատվել, չնայած նրան, որ միշտ երազել է բժիշկ դառնալ... Տարիների ընթացքում տնային հոգսերը, երեխաների դաստիարակությունը չթողեցին կնոջը նույնիսկ պատվել ինքնակրթությամբ: Նա անտեղյակ էր, թե բացի Եհովայի վկաների կրոնից աշխարհում ի՞նչ ուրիշ կրոններ կան: Իսկ երբ ասեցինք, որ համակարգչի օգնությամբ նա կարող է ստանալ շատ հարցերի պատասխաններ, ասաց, որ կարծում էր, թե համակարգիչը երեխաների խաղերի համար է: Այդ կինը կորցրել էր հետաքրքրությունը ամեն ինչի հանդեպ և,*

⁸⁰³ <https://www.jw.org/hy/էհովայի-վկաներ/հտհ/jw-կրթություն-ն-դպրոց/>, 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.

վիակված իր տանը, իրեն երջանիկ էր համարում և իր ողջ ժամանակը տրամադրել էր միայն Աստվածաշունչն ուսումնասիրելուն:

Երկրորդ օրինակ: 20-ամյա մի տղա պատմեց, որ նկարչական քոլեջի 5-րդ կուրսում է սովորել, բայց չի շարունակել ուսումը, քանի որ այն խանգարել է իրեն հոգևոր կյանքին անմասցորդ նվիրվելուն. «Եթե Եհովայի վկաների հետ չծանոթանայի, հիմա երևի նկարիչ կլինեի», - ավելացրեց նա:

Երրորդ օրինակ: 19 տարեկան աղջիկ. «Ես Եհովայի վկա եմ դարձել և արհեստ եմ սովորել, որ հետագայում կարողանամ աշխատել: Կան եզդիներ, որոնք կրթությունը թողել են, երբ Եհովայի վկա են դարձել, որովհետև կրթությունն իրենց հոգևոր աճին խանգարել է: Մենք առաջնությունը տալիս ենք հոգևորին: Երբ դպրոցն ավարտեցի, ծնողներս առաջարկեցին, որ բժշկական ինստիտուտում շարունակեմ կրթությունս: Ես հրաժարվեցի: Եթե ես գնայի սովորելու, առավոտյան 9-ից մինչև 5-ը համալսարանում էի լինելու, սակայն ժամը 16:00-ին Եհովայի վկաների ժողովի ժամն է, և ես չէի կարողանա ներկա գտնվել, իսկ չմասնակցել չէի ցանկանում: Եիշտ է, բարձրագույն կրթություն չստացա, բայց հազուստի մողելավորմամբ եմ կրթություն: Որպես Եհովայի վկա՝ ուզում եմ ավելի շատ ծառայել Աստծուն և իմ ապգին օգնել գտնելու ճշմարիտ ուղին»:

Պետք է սակայն նշել, որ չնայած նրան՝ Եհովայի վկաները չեն խրախուսում բարձրագույն կրթությունը, նրանք քաջալերում են եզդիներին և, առհասարակ, բոլոր Եհովայի վկաներին (անկախ տարիքից ու սեռից) սովորել օտար լեզուներ: Սա ինքնին նպատակ ունի ավելի հեշտացնելու օտարազգիների հետ հաղորդակցումը և Աստվածաշնչի քարոզումը: Իսկ այն տարեց եզդի տղամարդկանց ու կանանց, որոնք զբաժանաչ չեն, օգնում են սովորելու գրել ու կարդալ, որպեսզի նրանք կարողանան ուսումնասիրել Աստվածաշունչը:

50 տարեկան մի եզդի կին, որն ուներ միջնակարգ կրթություն, սովորել էր պարսկերեն, որպեսզի Եհովայի վկաների ուսմունքը քարոզեր Հայաստանում ապրող պարսիկներին: Կինը հարցապրոցի ժամանակ նշեց, որ իրեն արդեն հաջողվել է պարսիկ մի քանի ուսանողների կրոնավորել անել:

Մի 65 տարեկան եզդի կին էլ ռուսերեն էր սովորել՝ Հայաստանում գտնվող ռուսներին քարոզելու նպատակով:

Եհովայի վկաների դպրոցները (Աստվածապետական դպրոցներ)⁸⁰⁴

Եհովայի վկաները մկրտվում են որոշակի գիտակցական մակարդակի հասնելուց և ուսմունքը բավարար տիրապետելուց հետո միայն: Այնուհետև մկրտվողը մեկ տարի շարունակում է ծառայել և ուսումնասիրել ուսմունքը, մեծ ակտիվության դեպքում հնարավոր է նաև կիսով չափ կրճատվի այդ ժամկետը, որից հետո դիմում է երեցներին՝ խնդրելով իրեն թույլադրել հաճախելու ռահվիրական դպրոց:

Ռահվիրական դպրոց

Դպրոցի ուսումնառությունը չորս տարի է, ընդ որում՝ յուրաքանչյուր ուսումնական տարուց հետո աշակերտի ուսումը ընդամիջվում է, և նա իր գիտելիքները հինգ տարի կիրառում է քարոզչության մեջ, հետո սկսվում է ուսումնառության երկրորդ տարին, և այդ սկզբունքը գործում է մինչև ուսումնառության ավարտը: Ուսումնական տարին բաղկացած է տասնօրյա դասընթացներից, մնացած ժամանակը հատկացվում է քարոզչությանը և Աստվածաշնչի ուսումնասիրմանը:

⁸⁰⁴ <https://www.jw.org/hy/հրատարակություններ/ամսագրեր/w20120915/աստվածա-պե-տական-դպրոցներ/>, 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.

Երեցների դպրոց

Կանայք իրավունք չունեն այս դպրոցում սովորելու: Երեցների դպրոցում ուսումնառության տևողությունը չորս տարի է: Տարվա ընթացքում տասը օր հատկացվում է Աստվածաշնչի խոր ուսումնասիրմանը և ժողովները վարելու հմտությունների ձեռքբերմանը: Մնացած ողջ ժամանակը անցնում է քարոզչության ու Աստվածաշնչի ուսումնասիրման վրա: Ուսումնառության առաջին տարուն հաջորդում է չորս տարի տևողությամբ պրակտիկ գործունեությունը, դրանից հետո սկսվում է ուսումնառության երկրորդ տարին, որից հետո նորից չորս տարվա պրակտիկ գործունեություն և այս ձևաչափով մինչև ուսման ավարտը:

Շրջանային դպրոց

Այստեղ ուսումը տևում է երկու ամիս, որից հետո նրանք հինգ տարի զբաղվում են քարոզչությամբ և Աստվածաշնչի ուսումնասիրությամբ: Հետևում է ևս երկու ամսվա ուսումնառություն, և սրանով ուսումն ավարտվում է: Այն ներառում է Աստվածաշնչի ուսումնասիրությունը, քարոզելու մեթոդիկան և ժողովները կառավարելու հմտությունները:

Եզրի Եհովայի վկաներն առանց ջանք խնայելու ծառայում են Եհովա Աստծուն և քարոզում են, որպեսզի հետագայում կարողանան սովորել այդ դպրոցներում:

Եհովայի վկաները հոգևոր կիրակնօրյա դպրոցներ չունեն երեխաների համար, քանի որ «Եհովա Աստված ուզում է, որ բոլորը միասին իրեն երկրպագեն⁸⁰⁵»: Այդ պատճառով երեխաները իրենց ծնողների հետ վաղ հասակից մասնակցում են հոգևոր ժողովներին: Բացառություն չեն նաև եզրի Եհովայի վկաները: Գոյություն ունի հատուկ մշակված ծրագիր Եհովայի վկաների կայքում՝ «Աստվածաշնչային ուսմունքներ» երեխաների համար, որը ներառում է ֆիլմերի, երգերի ու առաջադրանքների⁸⁰⁶ ցուցադրում Աստվածաշնչի թեմաներով: Եհովայի վկաները շաբաթը երկու անգամ միասին մասնակցում են ժողովներին՝ երկու-երեք ժամ տևողությամբ, որտեղ ուսումնասիրում են Աստվածաշունչը (Հին ու Նոր կտակարանները): Մնացած ողջ ժամանակը զբաղվում են անձնական ուսումնասիրություններով ու քարոզչությամբ⁸⁰⁷:

Եզրի Հիսունականներ

Եզրի հիսունականները, բացի հոգևոր կյանքից հաճախելով աստվածաբանական դպրոցներ (Ռահավիրների դպրոցներ⁸⁰⁸, Երեցների դպրոցներ⁸⁰⁹), մեծ կարևորություն են տալիս աշխարհիկ կրթությանը՝ մասնավորապես բարձրագույն կրթությանը: Միջնակարգ ուսումից հետո շատ եզրի հիսունականներ շարունակում են ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրանց մեջ քիչ չեն գիտության ու արվեստի գործիչներ՝ բժիշկներ, իրավաբաններ, ինժեներներ, մանկավարժներ և այլն: Նրանք չեն զբաղվում միայն սպորտով ու պարով: Ինչպես իրենք են նշում՝ «Այդ գործերով զբաղվելը Աստվածահաճո չէ»: Երեխաների համար գործում է կիրակնօրյա հոգևոր դպրոց, որտեղ նրանք հատվածներ են արտասանում Աստվածաշնչից, երգում են Աստվածաշնչի թեմաներով գրված հոգևոր երգեր: Այստեղ գործում են երկու տարիքային խմբի 5-ից 10 տարեկան և 10-ից 14 տարեկան երեխաների երգչախմբեր: Աստվածաբանական դպրոցների աշակերտների

⁸⁰⁵ S ե ս ՝ <https://www.jw.org/hy/ե հ ն վ ա յ ի վ կ ան ե ր / հ տ հ / յ ա - կ ր թ ու թ յ ու ն - դ պ ր ո ճ />, 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.

⁸⁰⁶ S ե ս ՝ <https://www.jw.org/hy/ա ս տ վ ա ծ ա շ յ ն չ յ ա ն - ու ս մ ու ն ք ն ե ր / ե ր ե խ ան ե ր /> 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.

⁸⁰⁷ **Фатемп, С.С.**, Проповедники Свидетели Иеговы и их методы пропаганды в ездских общинах, “Danish Scientific Journal”, №21/2019 ISSN 3375-2389 Vol. C. 70-74

⁸⁰⁸ Կարող են սովորել տեղամարդիկ ու կանայք:

⁸⁰⁹ Կարող են սովորել միայն տղամարդիկ:

տարիքը 3-ից 14 տարեկանն է: 14-ից բարձր տարիքի երեխաները համարվում են հասունացած և ժողովներին մասնակցում են բոլորի հետ միասին: Կիրակնօրյա դպրոցների աշակերտները մասնակցում են մեծահասակների հոգևոր ժողովներին՝ մեկ ժամ ասումնաթում և երգում են հոգևոր երգեր, իսկ մնացած երկու ժամը շարունակում են ուսումը հոգևոր դպրոցում: Ինչ վերաբերում է մեծահասակներին, նրանք շաբաթը հինգ անգամ հավաքվում են որևէ մեկի տանը կամ ժողովի սրահում և երկու ժամ տարբեր ձևաչափերով ուսումնասիրում, վերլուծում ու քննարկում են Աստվածաշունչը (միայն Նոր կտակարանը): Մնացած ողջ ժամանակը զբաղվում են իրենց առօրյա գործերով, ուսումով:

Ստորև ներկայացնում եմ երեք օրինակ՝

Առաջին օրինակ: Մի եզրի Հիսունական աղջիկ (Հայաստանի մի շրջանից). «Մեր տանը բոլորը Հիսունականներ են: Ես փոքր տարիքից մեծ սեր եմ ունեցել գիտելիքի ու կրթության հանդեպ: Ծնողներս միշտ ինձ խրախուսում էին, երբ գերազանց առաջադիմություն էի ունենում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվեցի ու ավարտեցի Երևանի պետական համալսարանը: Ես կարողացա բարձրագույն կրթություն ստանալ ծննդավայրիցս հեռու՝ քաղաքում, քանի որ Հիսունականների կրոնը խրախուսում է բարձրագույն կրթությունը և չի խոչընդոտում աղջիկներին՝ այլ քաղաքներում ուսում ստանալու»:

Երկրորդ օրինակ: Մի Հիսունական եզրի ընտանիք (Ռուսաստան). «Տղաս ու աղջիկս սովորել են Կոնսերվատորիայում: Ավարտելուց հետո աշխատում են նվագախմբում, իսկ երբեմն նվագում են նաև Հիսունականների ժողովներում»:

Երրորդ օրինակ: Մի եզրի Հիսունական կին. «Երեխաներս հաճախում են դպրոց և ունեն գերազանց առաջադիմություն: Նրանք հաճախում են նաև Հիսունականների կիրակնօրյա աստվածաբանական դպրոց: Ես շատ եմ ուզում, որ նրանք անպայման բարձրագույն կրթություն ստանան, քանի որ այն խրախուսվում է նաև մեր կրոնի կողմից»:

Հիսունականները հատուկ քարոզելու չեն գնում: Կրոնի հետ ծանոթանալը և հետագայում ընդունելը տեղի է ունենում այն դեպքում, երբ որևէ եզրի հետաքրքրվում է Հիսունականների կրոնով, գալիս ու մասնակցում է ժողովներին: Հիսունականները երբեմն կրոնական գրույցներ են վարում հասարակական վայրերում, նույնիսկ՝ զբոսայգիներում: Նրանք մեկնաբանում են Աստվածաշունչում գրված մտքերը, կրոնական երգեր են երգում: Հաճախ առանց պարտադրանքի, բավական զուսպ ձևով նրանք կրոնական թեմաներով գրուցում են իրենց բարեկամների ու հարևանների հետ և եթե վերջիններս հետաքրքրվում են կրոնով, սկսում են ավելի ակտիվ ու նպատակային ձևով նրանց ծանոթացնել Հիսունականների կրոնին:

Այսպիսով, եզրիները կրոնափոխությունից հետո ձեռք են բերում Նոր հոգևոր արժեքներ, սովորում են օտար լեզուներ և այլն: Եզրի Եհովայի վկաները խորանում են իրենց հոգևոր ուսումնասիրություններում, իսկ եզրի Հիսունականները հոգևոր կյանքին զուգահեռ ավելի նպատակային են աշխարհիկ գործերում ու կյանքում:

EDUCATION ISSUES AMONG CONVERTED YEZIDIS (JEHOVAH'S WITNESSES, PENTECOSTALS)

SAYEDEHNASIM FATEMI

*PhD Student, Faculty of Oriental Studies, Armenian-Russian University,
Yerevan, Republic of Armenia*

In recent decades, an active trend of Yezidis converting to other religions such as Jehovah's Witnesses and Pentecostals has been observed. This article attempts to present the role of education for those Yezidis who became Jehovah's Witnesses and Pentecostals.

The purpose of this article is to examine the principal differences that exist between education issues in the two religions and their effects on the converted Yezidi's thinking and daily life. The study analyzes the distribution of the roles of secular and theological schools and their peculiarities among the converted Yezidis (Jehovah's Witnesses and Pentecost).

This article is based on the author's observations, method of comparison and analysis, individual and group interviews with converted Yezidis (Jehovah's Witnesses and Pentecost) from Armenia and Russia. Thus, the article concludes that converted Yezidis acquire new spiritual values by studying in theological schools and in terms of secular education, the Pentecost encourage education in general and in higher education in particular.

Keywords: *converted Yezidis, Jehovah's Witnesses, Pentecostals, education issues, Yezidi communities, theological school, higher education.*

ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ СРЕДИ ОБРАЩЁННЫХ ЕЗИДОВ (СВИДЕТЕЛИ ИЕГОВЫ, ПЯТИДЕСЯТНИКИ)

СЕЙЕДЕХНАСИМ ФАТЕМИ

Российско-Армянский (Славянский) университет,
соискатель Института востоковедения,
г. Ереван, Армении

За последние десятилетия у езидов заметна активная тенденция обращения в другие религии – Свидетели Иеговы и Пятидесятники. В данной статье предпринята попытка представить, какова роль образования у езидов, ставших свидетелями Иеговы и пятидесятниками. Целью статьи является изучение тех основных различий, которые существуют в проблемах образования обеих религий, и их влияния на мышление и повседневную жизнь езидов, поменявших религию. В исследовании анализируются распределение ролей светских и богословских школ и их особенности среди новообращенных езидов (свидетелей Иеговы, пятидесятников).

В основе данной статьи лежат наблюдения автора методом сравнения и анализа, индивидуальные и групповые интервью среди обращенных в религию Свидетелей Иеговы и Пятидесятников езидов Армении и России. Таким образом, мы приходим к выводу, что, обучаясь в богословской школе, обращенные езиды приобретают новые духовные ценности, а с точки зрения светского образования, пятидесятники более поощряют образование вообще и особенно высшее образование, чем свидетели Иеговы.

Ключевые слова: *обращенные езиды, Свидетели Иеговы, Пятидесятники, основные проблемы образования, езидские общины, богословская школа, высшее образование.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՆՆ
TRIBUNE OF YOUNG SCIENTIST
ТРИБУНА МОЛОДОГО УЧЕНОГО



**INDUSTRY 4.0.
CHALLENGE OR OPPORTUNITY FOR GOVERNMENTS?***

VAHE BAYADYAN

Technical University of Munich (TUM)

Master in Management

B.Sc. of Engineering

Munich, Germany

bayadvahe@gmail.com

TATEVIK HOVHANNISYAN

Technical University of Munich (TUM)

MA in Economics

Munich, Germany

tatevik.hovhannisyan@tum.de

The aim of this article is to discuss the challenges governments face in the new digital era and underline the activities states should take to not only regulate the industries but also to encourage innovations. The Fourth Industrial Revolution caused rapid changes in all the aspects of our lives. Due to the digital transformation and active implementation of the latest disruptive technologies (e.g. Internet of Things (IoT), artificial intelligence (AI), blockchain etc.) in business operations, companies manage to reshape the traditional business models and provide advanced products and services which meet the increasing needs of the customers. Meanwhile, as governments try to keep pace with technological developments and employ effective regulatory frameworks for modern enterprises, our task is to reveal the paths that are available for doing so and to analyze those. The research method used in the paper is the detailed review of the corresponding literature and the data, provided by National statistical services of some countries. The article suggests that governments should actively promote innovations by creating and enhancing proper ecosystems and infrastructures.

Keywords: *digital era, Fourth Industrial Revolution, disruptive innovation, policymakers, regulatory framework, entrepreneurial state, development.*

Introduction: The rapid changes that the Fourth Industrial Revolution brought about are obvious nowadays. Started from the second half of the twentieth-century innovation keeps driving the economy and increasing living standards through more productive and enhanced technical solutions. Technologies like artificial intelligence, robotics, and virtual reality have revolutionized not only the lifestyle and consumer behavior of people but also disrupted the traditional business models paving a way for sharing economy, digital enterprises and cloud-based businesses. In the epoch of transformative scientific and technological progress,

* Հոդվածը ներկայացվել է 28.09.2019թ., գրախոսվել՝ 30.10.2019թ., տպագրության ընդունվել՝ 12.12.2019թ.:

companies are not only introducing new products and services but also “reshaping industries, blurring geographical boundaries and challenging existing regulatory frameworks”⁸¹⁰. Moreover, considering the huge economic gains digitalization delivers to companies, it can be predicted that enterprises, which are incapable to adopt up-to-date technologies in their daily activities, will not survive in the age of so-called “digital Darwinism”, where innovations and customer demands are developing much faster than a company can react. Up-to-date information technologies assure not only higher productivity and growth, but also provide a basis for more stable growth, especially in terms of reducing transaction and logistic costs and optimizing the entire supply chain⁸¹¹.

The phenomena of the Fourth Industrial Revolution, which is also referred to as Industry 4.0, and its consequences are widely discussed both in academic literature and during various forums of local and international level. The concept of Industry 4.0 originates from Germany. “Industrie 4.0” was a national strategic initiative from the German government through the Ministry of Education and Research and the Ministry for Economic Affairs and Energy aimed at driving digital manufacturing forward by increasing digitization and the interconnection of products, value chains and business models⁸¹². As a part of the German High Tech 2020 Strategy launched in 2011, “Industrie 4.0” suggested that the government will support research, the networking of industry partners and standardization and will secure and develop Germany’s leading position in industrial manufacturing. Obviously, this is one but not the only example of how governments try to respond to the new developments in the economy resulted from the implementation of modern technologies in different industries.

Nowadays, the concept of Industry 4.0 is used to characterize current technological developments and emerging innovations based on big data, information systems, digital products and many others. Industry 4.0 is characterized by a ‘fusion’ of technologies that destroys the boundaries between the physical, digital and biological spheres⁸¹³.

What should be the role of the governments in this fast-growing digital era? How should the governments respond to the Fourth Industrial Revolution? Should the governments regulate every industry more actively or they should care more about promoting innovations and implementing the latest technologies in the national economies? *The answers to these questions address not only the concerns of the governments as policymakers but also the expectations of citizens and entrepreneurs in terms of decreasing the level of existing uncertainty about the state role.* Traditionally, state’s actions as a regulator are considered to be mainly connected with customer welfare protection, particularly, protection from externalities, unfair competition, asymmetric information and other so-called “market failures”⁸¹⁴.

This article aims to identify the main challenges states face in the Fourth Industrial Revolution era and discusses the actions governments take to both overcome those challenges and deliver value to society and economy. The article explores the economic theories about the role of the governments to show how the views on this topic fluctuated over time due to historical alterations. With the purpose of making policy recommendations for emerging countries, the article examines the policy papers and best practices of the leading economies and highlights the directions governments can follow for more effective performance. Apparently,

⁸¹⁰ **Broekaert K, Espinel V.A.** (2018) How can policy keep pace with the fourth industrial revolution? Retrieved from <https://www.weforum.org/agenda/2018/02/can-policy-keep-pace-with-fourth-industrial-revolution/>.

⁸¹¹ **Stiglitz, J. E., Orszag, P. R., & Orszag, J. M.** (2000). Role of government in a digital age.

⁸¹² **Klitou, D., Conrads, J., Rasmussen, M., Probst, L., & Pedersen, B.** (2017). „Germany: Industrie 4.0”. Digital Transformation Monitor, Germany.

⁸¹³ **Schwab, K.** (2018). The Global Competitiveness report 2018. Geneva: World Economic Forum.

⁸¹⁴ **Koopman, C., Mitchell, M., & Thierer, A.** (2014). The sharing economy and consumer protection regulation: The case for policy change. *J. Bus. Entrepreneurship & L.*, 8, 529.

Ազգային գաղափարախոսությունը միտված է ուղղորդելու ազգի ու պետության գործունեության բոլոր ոլորտները: Այն հանդիսանում է պետության արտաքին քաղաքականության, անհատի վարքը կարգավորող գրված ու չգրված նորմերի ու դրույթների հիմնական աղբյուրը: Եվ այս դեպքում որքան էլ ընդգծենք, թե ազգային գաղափարախոսության ակունքը ազգի հոգեբանության և համազգային շահերի գերակայության դաշտում է, չպետք է մոռանալ, որ հենց ժողովուրդը կարիք ունի ուղղորդվելու ազգային գաղափարախոսության պահանջներին համապատասխան սկզբունքներով: Այստեղից ենթադրենք, որ ազգային գաղափարախոսությունը ազգի կեցության փիլիսոփայության առանցքն է:

Պետականության վերականգնումից հետո թվում էր՝ հայագիտության աշխարհացրիվ ուժերն ի մի կերպվեն և հնարավոր կլինի պետության հովանավորության ներքո ապահովել Նրա հետագա զարգացումը: Սակայն պատմությունն այլ ընթացք ստացավ, և արդյունքում ՀՀ-ն ո՛չ ի գորու եղավ միավորելու աշխարհասփյուռ հայությանը, ո՛չ ձևավորելու ազգային գաղափարախոսություն, ինչը կլիներ միավորման գործընթացի հիմնական ուղեւիշը:

Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության հաջողության գրավականը կարող է լինել բավական հստակ ու ամուր կերպով հաստատված ազգային

գաղափարախոսությունը, ինչը պարզորոշ կերպով կսահմանի ՀՀ ցանկացած նպատակ և քաղաքացիներին կմղի դեպի դրանց իրագործումը:

Նշված հիմնախնդրի համալիր ուսումնասիրման համար անչափ կարևոր է հասկանալ, թե որոնք կարող են լինել հայոց ազգային գաղափարախոսության հենքային գաղափարները: Մեր կարծիքով, հայոց ազգային գաղափարախոսության առաջին հենքային գաղափարը պետք է լինի միասնական հայրենիքի, մեծ Հայաստանի գաղափարը: Խոսքը գնում է արևմտյան ու արևելյան Հայաստանների վերամիավորման, Նախիջևանի և այլ պատմական հայկական հողերի միավորման մասին:

Սա պետք է դառնա Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող յուրաքանչյուր հայի բարեկեցության գաղափարը: Հայի բարեկեցությունը Հայաստանի հզորության ու պաշտպանվածության ամենակարևոր երաշխիքներից է: Այստեղից հետևություն, որ յուրաքանչյուր հայի համար մեկ ուրիշ հայի բարեկեցությունը պետք է դիտվի որպես համընդհանուր շահի բաղադրիչ, ինչն իր հետ կրթի փոխօգնության շատ կարևոր գաղափարի ձևավորման նախադրյալ: Գործանակում նմանօրինակ վարքագծի վառ օրինակ է «հրեական սփյուռքի հրաշքը»: Վերոնշյալ գաղափարի իմաստն այն է, որ յուրանքանչյուր հրեա աշխարհի որ անկյունում էլ հայտնվի, վստահ է, որ մենակ չէ, որովհետև կգտնվի մեկ ուրիշ հրեա, որը իրեն կօգնի և կդառնա հուսալի հենասյուն: սա խոսում է նախապես մշակված բավական վեհ գաղափարի մասին: Կարելի է եզրակացնել, որ այդ գաղափարի արմատավորումը կարող է լինել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական ուղղություններից մեկը:

Հաջորդ գաղափարը ամբողջացնենք որպես ազգի բարոյական հզորության գաղափար: Այդ առումով շատ կենսունակ ու գերակշռող կարող են լինել Նժդեհի գաղափարները, խաչքարը՝ որպես հայ ազգի մշակութային գաղափարախոսության բաղադրիչ տարր, Սայաթ Նովան, Փարաջանովը և այսպես շարունակ: Բավական կարևոր է պատմական ազգ լինելու իրողությունը և անցյալի բարոյական ժառանգությունը, որոնք, անշուշտ, պետք է լինեն ամուր հենարաններ՝ կառուցելու ազգի բարոյական չափանիշներն ու առաջնահերթությունները:

Վերջին գաղափարը, թերևս, իր նշանակությամբ առաջնայիններից է, եթե ոչ առաջատար. դա ազգին ծառայելու գաղափարն է: Այն ազգային գաղափարախոսության հենասյուններից մեկն է, որն ակնառու չէ այսօր ազգային հոգեբանության մեջ: Օրինակ՝ աշխատանքը անձնական բարեկեցության գործոնից դուրս պետք է ունենա նաև ազգին ծառայելու նշանակություն ու ենթատեքստ: Դա վերաբերում է հասարակության բոլոր շերտերին՝ վերևից ներքև, ինչն իր հերթին կհանգեցնի բարեկեցիկ և գաղափարապես անվտանգ պետության կերտմանը: Աշխատանքի վերաբերյալ հենց նմանօրինակ հոգեբանության ձևավորումը թույլ կտա սահմանել ու հետևել ազգային գաղափարախոսությանը: Տեղին է մեջբերել հայրենիքի մասին Չորավար Անդրանիկի այն միտքը, ըստ որի, երբ երեկոյան մարդը գլուխը բարձին է դնում՝ քնելու, նա պարտավոր է մտածել իր երկրին, պետությանը ծառայելու մասին: Մեր կարծիքով, Չորավարը բավական դիպուկ դիտարկում է կատարել, ինչը հանգամանորեն շաղկապված է պետության նկատմամբ հոգեբանական մոտեցումների հետ:

Ազգային գաղափարախոսության գլխավոր շարժիչ ուժը պետք է լինի հայրենասիրությունը: Այլ խոսքով՝ այդ ամենը քաղաքացուն պետք է դրդի հայրենասիրության, սակայն խոսքը պաթոսային հայրենասիրության մասին չէ, այլ գործնական դաշտում խոսքը գործի վերածելու մշակույթի ձևավորման անհրաժեշտության, քանի որ հայրենասիրության իմաստը և նշանակությունը լեզվով չեն արտահայտվում, այլ գործով, այդ գաղափարը գլխում չէ, այլ հոգում: Այդ առիթով հայ մեծանուն պատմաբան Րաֆֆին նշում է, որ առանց հայրենագիտության չկա

հայրենասիրություն, հենց իսկական հայրենագիտության շնորհիվ է, որ մարդը դառնում է հայրենասեր:

Այստեղից եզրակացնենք, որ անհատը պետք է իմանա իր հայրենիքի պատմությունն ու մշակույթը, այնուհետև գնահատի այդ իմացությունը, այդ ամենը բովվի ու մշակվի, ինչից էլ սկիզբ է առնում հայրենասիրությունը:

Ազգային գաղափարախոսության ջատագով տիտանները՝ Մովսես Խորենացուց, Նարեկացուց մինչև Շահամիր Շահամիրյան ու Գարեգին Նժդեհ, յուրովի փորձել են մշակել հայրենասիրական գաղափարախոսության հայեցակարգեր: Օրինակ՝ Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փռացը» հայ իրավունքի փաստաթուղթ է, որում ընդհանրացվել են հայ և համաշխարհային հասարակական մտքի, ինչպես նաև պետական նոր մտածողության սկիզբը⁸⁴⁹: Այդ աշխատությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, թե ինչպիսի արժեք է այն ներկայացնում ազգային գաղափարախոսության հիմնադրույթները որոշակիացնելու գործընթացում:

Յետադարձ հայացք գցելով 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Յովհաննես Թումանյանի կողմից հիմնված «Վերնատանը»՝ պարզ է դառնում, որ այն ոչ միայն գրական ակումբ էր, այլև ազգային գաղափարախոսության դարբնոց: Յայ գրողներից շատերն էին այդ խմբակի անդամ՝ Յովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Ավետիք Իսահակյան, Լևոն Շանթ, Դերենիկ Դեմերիճյան, Նիկոլ Աղբալյան⁸⁵⁰: Յետագոտելով նրանց ստեղծագործությունների զգալի մասի բովանդակությունը՝ ակներև է դառնում, որ դրանց ճշշող մեծամասնությունը գրված է ազգային գաղափարախոսության սկզբունքներով:

Ուսումնասիրվող հիմնահարցի մեկ այլ ուշագրավ խնդիր է ազգային գաղափարախոսության ու քաղաքական գաղափարախոսության նմանությունների, տարբերությունների և դրանց համակցման խնդիրը: Այդ հիմնահարցին հաճախ բախվում ենք, երբ խոսք է գնում ազգային գաղափարախոսության բովանդակության մասին, հետևաբար ուշագրավ է ընդգծել դրա բաղկացուցիչ մասերը:

Նախ նշենք, որ մասնագիտական գրականությունում ազգային գաղափարախոսությունը բաժանվում է ռազմավարական ու մարտավարական ծրագրերի: **Ռազմավարական** ծրագիրն իր հերթին բաղկացած է ազգի գոյապահպանման, ամբողջական հայրենիքի, ամուր պետականության, ազգային մշակույթի և կրոնական հիմնադրույթներից: Այդ ծրագրում պատշաճ տեղ են զբաղեցնում նաև յուրաքանչյուր ազգի պատմական առանձնահատկություններից բխող առանձնահատուկ հիմնախնդիրները:

Մարտավարական ծրագիրը ժողովրդի պատմության տարբեր փուլերում, տարբեր պատմական պայմաններում ռազմավարական ծրագրի հիմնախնդիրների լուծման ուղիների համակարգն է: Այստեղ անչափ կարևոր է, որ մարտավարական ծրագիրը ելնի պատմական իրականության բոլոր անհրաժեշտ գործոնների գիտական, մշակութապատմական և քաղաքական վերլուծություններից, հակառակ դեպքում նրա մեխանիզմը չի գործի: Յետևաբար մարտավարական ծրագրի տապալմամբ չի իրականանում նաև ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական ծրագիրը կյանքի է կոչվում երկարաժամկետ, իսկ մարտավարական ծրագիրը՝ ավելի կարճաժամկետ խնդիրների լուծման համար: Մարտավարական ծրագիրը ճկուն է և առավել հաճախ է ենթարկվում փոփոխության, տարբեր ժողովուրդների շրջանում պատմության թելադրանքով այն տարբեր ձևերով է արտահայտվում: Օրինակ, սիոնիզմը (հրեական ազգային շարժում, գաղափարախոսություն) 19-րդ դարավերջում միտված էր Պաղեստինյան տարածքներում վերականգնելու հրեական պետությունը:

⁸⁴⁹ Այս մասին տե՛ս **Շահամիրյան Շ.**, Որոգայթ Փռաց, 1773:

⁸⁵⁰ Այս մասին տե՛ս **Մովսիսյան Դ.**, Վերնատուն (պատմահայրենասիրական հուշապատում), Երևան, 2009, էջ 15-21:

Ինչ վերաբերում է «ազգային» և «պետական գաղափարախոսություններ» հասկացությունների տարբերություններին ու ընդհանրություններին, ապա պետք է նշել, որ ժողովուրդը պետություն է ստեղծում որոշակի նպատակներից ելնելով, որոնք, հետագայում միավորվելով, հանդես են գալիս գրավոր կամ ոչ գրավոր գաղափարախոսության տեսքով, իսկ պետական իշխանություններն էլ կազմում են որոշակի ծրագրեր, որոնք ընդհանրացվում են պետական գաղափարախոսություն հասկացության շուրջ, այլ կերպ ասած՝ պետությունը կյանքի է կոչվում ազգային գաղափարախոսության հիմնադրույթներն իրագործելու նպատակով: Եզրակացնենք, որ պետական գաղափարախոսությունը ամփոփվում ու իրագործվում է ազգային գաղափարախոսության համաձայն, քանի որ պետական գաղափարախոսությունը բավական ճկուն է և մեծամասամբ միտված է ազգային գաղափարախոսության երկարաժամկետ ծրագրերին փոկային և հստակ մարտավարական լուծումներ տալուն: Այդ տեսանկյունից պետական գաղափարախոսությունը, ելնելով ազգային գաղափարախոսության մի շարք հիմնախնդիրներից, գեներացնում է ազգային անվտանգության հայեցակարգ, որն ազգային գոյապահպանման հիմնական երաշխիքն է: Պետք է անդրադառնալ նաև պետության կայացման ու հզորացման վերաբերյալ հարցերին, քանի որ դրանք նույնպես վերաբերում են ազգային գաղափարախոսության հիմնադրույթներին: Ազգային անվտանգության ու հզորացման գործում պետությունը հանդես է գալիս գործիքակազմի տեսքով և խթանում է ազգային գաղափարախոսության ծրագրերի իրականացմանը:

Ամփոփելով վերոնշյալը՝ նշենք, որ պետական գաղափարախոսությունը, ելնելով աշխարհաբաղաբանական տարբեր իրադրություններից, իր մարտավարական ծրագրով լայնածավալ ու մշտական պայքար է մղում ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների բարեհաջող լուծման համար: Այդ տեսանկյունից պարզ է, որ ազգային ու պետական գաղափարախոսությունները, անընդմեջ կապի մեջ գտնվելով, լրացնում են միմյանց և ավելի հեշտ դարձնում ազգի գոյապահպանման ու հավերժացման համար մղվող պայքարը:

Ընդհանրապես յուրաքանչյուր ժողովրդի ազգային գաղափարախոսություն միշտ էլ իր ռազմավարական ծրագրում ունենում է մոտակա և հեռավոր խնդիրներ: Պետք է հասկանալ, թե որոնք կարող են լինել Հայաստանի երրորդ Հանրապետության ռազմավարական և մարտավարական տեսլականները:

Մեր խորհին համոզմամբ ՀՀ-ին հույժ անհրաժեշտ է ամբողջացնել ու միավորել այն բոլոր նպատակներն ու առանցքները, որոնք կհամախմբեն ազգային գաղափարախոսության շուրջ:

Ժամանակակից աշխարհում շատ և շատ ժողովուրդներ և պետականություններ ունեն իրենց ազգային գաղափարախոսությունները, սակայն հաջողության է հասնում միայն նա, ով կարողանում է իր ռազմավարական շահերը բավարարելու համար ճիշտ շարժվել մարտավարական քայլերով: Այս տեսանկյունից հստակ է այն, որ ազգային գաղափարախոսությունը պետք է լինի անփոփոխ և յուրաքանչյուր խնդիր լուծելիս առաջադրել նորը, իսկ պետական գաղափարախոսությունները պետք է լինեն ճկուն և համապատասխանեցվեն տվյալ պահի իշխանություններին: Այլ կերպ ասած նպատակը (ազգային գաղափարախոսություն) պետք է անփոփոխ լինի, իսկ դրան հասնելու մեթոդները (մարտավարություն) կարող են ենթարկվել փոփոխության:

Հայոց ազգային գաղափարախոսության գլխավոր նպատակը պետք է լինի հայ ժողովրդի գոյապահպանման և նրա բնականոն զարգացման ընթացքի ապահովումը, իսկ ազգի գոյապահպանման առաջին նախապայմանը՝ անկախ պետականության առկայության շարունակականության ապահովումը, երկրորդը՝ միավորված հայրենիքի վերականգնումը (հայրենիքի կորցրած տարածքների ազատագրում): Տեղին է ընդգծել անվանի ազգագրագետ Էնթոնի Սմիթի խոսքերը, ըստ որի հողը հայրենիք է դառնում, երբ այն վերածվում է պատմական հուշերի ու պատկերների շտեմարանի, ուր ապրում

են սվյալ ժողովրդի իմաստունները, ուր սրբերն ու հերոսները, լեռներն ու ձորերը սրբագործվում են: Այս ամենը հայրենիքը դարձնում են միակը և անկրկնելի⁸⁵¹: Ազգային գաղափարախոսության նպատակներից երրորդը ազգային մշակույթի պահպանումն է: Այստեղ անչափ կարևոր է ընդգծել, որ հայկական ազգային մշակույթի պահպանումը հայ ազգի համար ունի բավական կարևոր էթնոպահպան նշանակություն, սակայն չպետք է ներփակվել միայն սեփական ազգային մշակութային արժեհամակարգի մեջ, այլև պահպանելով հինը՝ փորձել ինտեգրվել նաև ժամանակակից աշխարհին, ինչը որևէ կերպ չի խոչընդոտի հայ էթնոսի գոյության հարատևությանը: Եզրակացնելով նշենք, որ հայ ժողովուրդի մշտական գոյության մեծագույն նախապայմանը ազգի, հայրենիքի, մշակույթի և անկախ պետականության գաղափարները ազգային դաստիարակության առանցք դարձնելն է:

Եվ որպես ամփոփում ավարտենք Օգոստոս Երանելու հետևյալ ձևակերպմամբ. «Միասնություն՝ առաջնայինում, ազատություն՝ երկրորդականում և սեր՝ ամեն ինչում»⁸⁵²: Սա է գոյակցության ուսմունքի արդյունավետության միակ բանալին:

THE STRATEGIC SIGNIFICANCE OF NATIONAL IDEOLOGY IN THE CONTEXT OF ARMENIA'S CONTINUITY

VAHE POGHOSYAN

RA Prime Minister's Office,

Master's student at YSU Faculty of International Relations,

Department of Regional Policy,

v. Ptghni, Republic of Armenia

The article discusses several theoretical and practical issues on national ideology. It substantiates the idea that under today's developing geopolitical conditions, the Republic of Armenia is in extreme need of a national ideology, which will foster a strategy for state ideology and exact tactical steps concerning the implementation of its components. An analysis is conducted considering a number of concepts of national ideology from the historic past as well as the presence of foreign ideologies in the political life of states. The main objective of this article is to justify and suggest methods for the formation and development of a national ideology. Through comparative and analytical methods, a number of ideas are suggested for the design and development of a national ideology, Armenian people's development and survival, and preservation of national culture. The conclusion of the research is that, despite the fact that in the modern world the national ideology became secondary, it is one of the most important bases, on which a state can unite and, for the benefit of the public good, mobilize both the entire state apparatus and the wider strata of the population.

Key words: *National ideology, people's identity, globalization, united homeland, cultural value system, inferiority complex, national interest, national security.*

⁸⁵¹ Anthony D. Smith, *National Identity*, 1991, p. 37.

⁸⁵² <https://www.ligonier.org/learn/articles/essentials-unity-non-essentials-liberty-all-things/>.

СТРАТЕГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕОЛОГИИ В КОНТЕКСТЕ ДОЛГОВЕЧНОСТИ РА

ВАԳԵ ՍՈՍՅԱՆ

*Аппарат премьер-министра РА, магистрант отдела региональной политики
факультета международных отношений ЕГУ,
с. Птгни, Республика Армения*

В статье обсуждается ряд теоретических и практических вопросов национальной идеологии. Обосновывается идея, что в современных развивающихся геополитических условиях Республике Армения крайне необходима национальная идеология, которая будет иметь исходящую из нее стратегию государственной идеологии и четкие тактические шаги для реализации ее составляющих.

Анализируется ряд концепций национальной идеологии, нашедших место в историческом прошлом, а также наличие иностранных идеологий в политической жизни государств. Посредством применения сравнительных и аналитических методов предлагается ряд идей, необходимых для разработки и формирования национальной идеологии, сохранения и развития армянского народа, сохранения национальной культуры.

Вывод исследования состоит в том, что, несмотря на отступление в современную эпоху на задний план национальной идеологии, она является одним из важнейших стержней, вокруг которого государство может объединить, сплотить и задействовать во имя общественного благополучия как весь государственный аппарат, так и широкие слои населения.

Ключевые слова: *национальная идеология, идентичность народа, глобализация, единая Родина, культурная система ценностей, комплекс неполноценности, национальный интерес, национальная безопасность.*

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ

«ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 4-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

«Արցախի երիտասարդ գիտնականների ու մասնագետների միավորում» ՀԿ-ի նախաձեռնությամբ 2019թ.ի սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում կազմակերպվեց «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովը, որը նվիրված էր **Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին** և նպատակ ուներ քննարկելու հայոց պետականության՝ մասնավորապես վերջին հարյուրամյակի հիմնախնդիրները, ձեռքբերումները, հեռանկարային զարգացման գերակայությունները, բացահայտելու երիտասարդ հետազոտողների գիտական ներուժը և երիտասարդացնելու գիտությունը:

Գիտաժողովի համակազմակերպիչներն էին Երևանի պետական համալսարանը և Արցախի Մերուպ Մաշտոց համալսարանը:



Միջազգային ասպարեզում ակադեմիական բարձր վարկանիշ ունեցող գիտաժողովը հայ և օտարերկրացի անվանի գիտնականների, երիտասարդ հետազոտողների մասնակցությամբ արդեն չորրորդ անգամ է կազմակերպվում Արցախում և հանդիսանում է ԱԵԳՄՄ-ի գլխավոր միջոցառումը:

Միավորման գլխավոր առաքելությունը՝

գիտական դիվանագիտության զարգացման միջոցով Արցախն աշխարհում ճանաչելի դարձնելը, Արցախում գիտահեն միտքը խթանելը, գիտության մեջ արժանի սերնդափոխություն ապահովելը և, այդպիսով, գիտության զարգացմանն ու հանրայնացմանը նպաստելը, լիովին համապատասխանում է միջազգային ճգնաժողովի կազմակերպման գաղափարին, թեմատիկ ուղղվածությանն ու գիտագործնական առաքելությանը:

Գիտաժողովին առկա և հեռակա ձևաչափով մասնակցում էին 114 գիտնականներ ու մասնագետներ Գերմանիայից (Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, ի.գ.դ. **Օտտո Լուխտերհանդտ**), Ֆրանսիայից (Արևմտահայոց ազգային համազումարի նախագահ, ի.գ.դ. **Սուրեն Սերայդարյան**), Լեհաստանից (Օլշտինի Վարմիա և Մազուրի պետական համալսարանի քաղաքական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ք.գ.դ., պրոֆեսոր **Արկադիուշ Ժուկովսկի**, ք.գ.դ. պրոֆեսոր **Մարեկ Ժեյմո**, Լեհաստան-Հայաստան տնտեսական պալատի նախագահ, ք.գ.թ. **Զբիգնև Շմուրլո**), Ռուսաստանից (Նովոսիբիրսկի պետական համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ. **Վլադիսլավ Տոլստիխ** և ուրիշներ), Ուկրաինայից (Լվովի արվեստի ազգային ակադեմիայի արվեստի մենեջմենթի ամբիոնի դոցենտ, փ.գ.թ., հայագետ **Իրինա Հայուկ** և ուրիշներ), Հարավային Օսեթիայից (Չ.Վանենի անվան հարավօսական գիտահետազոտական ինստիտուտի ավագ

գիտաշխատող, դոկտորանտ, ք.գ.թ. **Սոսլան Պլին**, Հարավօսական պետական համալսարանի գիտության բաժնի վարիչ, պ.գ.թ. **Թայմուրազ Տարտան**) և այլ երկրներից: Հայաստանից ու Արցախից գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Արցախի պետական համալսարանի, Մեսրոպ Մաշտոց համալսարանի, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայ-ռուսական համալսարանի, Պետական կառավարման ակադեմիայի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի, ինչպես նաև գիտական տարբեր կենտրոնների ու կազմակերպությունների երիտասարդ գիտնականներ ու հետազոտողներ:

ԱԵԳՄՄ-ն, հետամուտ գիտական դիվանագիտության իրականացման իր գլխավոր առաքելությանը, այս տարի նույնպես գիտաժողովի աշխատանքներում ներգրավվել էր անվանի ու փորձառու գիտնականների, որոնք ոչ միայն հանդես եկան լիազումար զեկուցումներով, այլև նախագահեցին բաժանմունքներում իրենց փորձը փոխանցելով երիտասարդ հետազոտողներին:

Մեկնարկին գիտաժողովի կազմակերպիչ, ԱԵԳՄՄ հիմնադիր նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ավետիք Հարությունյանը**, հանգամանալից ներկայացնելով գիտաժողովի նպատակը, նշանակությունն ու կարևորությունը, փաստեց, որ «մասնակիցների որակյալ կազմը, զեկուցումների թեմատիկ շրջանակը հրաշալի նախադրյալներ են ստեղծում մեկտեղելու հայոց պետականության հիմնախնդիրներով զբաղվող գիտնականներին, լսելի և քննարկելի դարձնելու գիտության մեջ նախաքայլեր անող երիտասարդների նորահայաց տեսակետները, ստեղծելու բարենպաստ մթնոլորտ՝ գաղափարների փոխանակման, գիտական երկխոսության ծավալման, արտասահմանյան գիտական հաստատությունների ու գիտնականների հետ համագործակցության ձևավորման համար, ինչպես նաև հուսալու, որ նրանցից շատերը կդառնան Արցախի գիտության դեսպանները՝ Արցախի Հանրապետությանն առնչվող իրողությունների վերաբերյալ տարբեր միջազգային հարթակներում, մասնագիտական բնագավառներում ներկայացնելով բացառապես օբյեկտիվ տեղեկատվություն»: Նա համոզմունք հայտնեց, որ նաև այսպիսի միջոցառումների կազմակերպմամբ Արցախն աստիճանաբար կդառնա արդիական գիտական հիմնախնդիրների քննարկման տարածաշրջանային ու միջազգային կենտրոն:

Բացման արարողությանը մասնակցում էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ **Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը**, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար **Նարինե Աղաբեյանը**, ԵՊՀ պրոռեկտոր **Ռաֆայել Բարխուդարյանը**, պաշտոնատար այլ անձինք, որոնք հանդես եկան ելույթներով և ուղերձներով:

Լիազումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին չորս բաժանմունքներում՝ Իրավագիտություն, Զաղաքագիտություն, Պատմություն, Տնտեսագիտություն, Արվեստագիտություն, գրականագիտություն, լրագրություն և մանկավարժություն: Օրակարգի թեմատիկ բազմազանությունը վկայում էր

բովանդակային առումով խորքային ընդգրկում ունեցող նստաշրջանի գիտագործնական առաքելության մասին:

Գիտաժողովի շրջանակներում իրականացվեցին պաշտոնական հանդիպումներ Արցախի Հանրապետության Նախագահ **Բակո Սահակյանի**, պետական նախարար **Գրիգորի Մարտիրոսյանի** հետ: Օտարերկրյա գիտնականները դասախոսություններով հանդես են եկել Արցախի բուհերում: Օրակարգը հագեցած էր նաև պատմաճանաչողական այցերով դեպի Դադիվանք, Գանձասար, Տիգրանակերտ, Արցախի պատմաերկրագիտական թանգարան, զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունների թանգարաններ:

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփվեցին եզրափակիչ նիստով, որի ընթացքում մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր: Գիտաժողովի բաժանմունքների նախագահողները հաղորդումներ ներկայացրին քննարկումների արդյունքների մասին, որոնք ընդհանուր առմամբ հատկանշվում էին գիտական արգասիքի բազմակողմանիությամբ և արդիականությամբ:

Փակման արարողությանը հաջորդեց հայ և օտարերկրյա գիտնականների մամուլ աուսլիսը՝ գիտաժողովի կարևորությունն ու նշանակությունն արժևորող էլոյթներով:

Վերջին չորս տարիների ընթացքում մոտ 360 մասնակիցների միջև կապի հաստատումը, նրանց գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործումը դարձել է Արցախի երիտասարդ գիտնականների ու մասնագետների միավորման հաջողություններից մեկը, ինչը, անտարակույս, կլինի շարունակական և գիտաժողովի իրականացման հայնպաստ գաղափարի շուրջ կմեկտեղի ավելի շատ մասնակիցների՝ ավելի լայն աշխարհագրությամբ:

Միջազգային գիտաժողովի շրջանակներում կյանքի կոչվեց ԱԵԳՄՄ-ի բացառիկ նախաձեռնությունը՝ **«Արցախի գիտության դեսպան»** կոչման ու համանուն մեդալի հիմնադրումն ու անդրանիկ պարգևատրությունը: «Արցախի գիտության դեսպան» կոչում և մեդալ ԱԵԳՄՄ-ն շնորհում է այն անձանց, որոնք նշանակալի ավանդ ունեն գիտական հետազոտությունների, գյուտերի, գիտական դիվանագիտության զարգացման ու տարածման միջոցով Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելու գործում, ինչպես նաև այլ ակնառու ծառայությունների համար՝ ի նպաստ դարաբաղյան հակամարտության խաղաղ ու արդարացի կարգավորման և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման: Կոչման առաջամարտիկները դարձան Գերմանիայի Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, իրավագիտության դոկտոր **Օտտո Լուխտերհանդտը** և քաղաքական գիտությունների դոկտոր պրոֆեսոր **Մարեկ Ժեյմոն** Լեհաստանից:

Արցախի գիտության անդրանիկ դեսպանները, պարգևատրման հանդիսավոր արարողությանը շնորհակալություն հայտնելով ԱԵԳՄՄ նախագահ Ա.Հարությունյանին՝ իրենց վաստակը գնահատելու և նման պարտավորեցնող կոչման արժանացնելու համար, խոստացան շարունակել նպատակադիր գործունեությունը՝ ի շահ Արցախի միջազգային ճանաչման, գիտատեխնիկական զարգացման ու առաջընթացի:

«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի մասնակիցներն ընդունեցին ու հանրայնացրին **բանաձև**՝ որոշելով մեկտեղել մասնակից երկրների ներկայացուցիչների ջանքերն՝ ակադեմիական շարժունության ապահովման ու փորձագիտական միասնական

ցանցի ստեղծման նպատակով, ակտիվացնել մասնակից երկրների երիտասարդ գիտնականների ու մասնագետների գիտական, ակադեմիական շփումները՝ խթանելով հետազոտական համատեղ նախագծերի ու ծրագրերի իրականացումը, ձևավորել միջազգային գիտական համագործակցության ձևավորման նոր ինստիտուցիոնալ հարթակներ, մասնակից երկրների երիտասարդության շրջանում հանդես գալ խաղաղության, հանդուրժողականության, համերաշխության ու մարդասիրական այլ արժեքների տարածման ու հանրահռչակման նախաձեռնություններով, ինչպես նաև ձևավորել միջազգային համակարգող խորհուրդ՝ 2020թ.-ի սեպտեմբերին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում անցկացվելիք հոբբյանական 5-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի կազմակերպման նպատակով:

Անուրանալի է գիտաժողովի նշանակությունն Արցախում գիտության զարգացման նոր շեշտադրումների կյանքի կոչման և միջազգայնացման շնորհակալ գործում:

Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ

«ԱՐՑԱԽԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ԿԱՅՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ

The screenshot shows the website for the Artsakh E-Library. At the top, there is a header with the library's name in three languages: Armenian (ԱՐՑԱԽԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ), English (Artsakh E-Library), and Russian (ЭЛЕКТРОННАЯ БИБЛИОТЕКА АРЦАХ). Below the header are social media icons for Facebook, Twitter, YouTube, and VK. There are three main logos: the Artsakh Republic coat of arms, the Artsakh E-Library logo, and the ZCMC logo. A navigation bar contains menu items: 'Home', 'About', 'Services', 'Publications', 'News', 'Partners', and 'Contact Us'. The main content area features a search bar, a list of books under the heading 'ԱՆՆԱԴԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ' (New Arrivals), and a featured article titled 'Բանաձև «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի' (Format of the 4th International Youth Scientific Conference on 'The Past, Present and Future of the Republic of Armenia').

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման կարևոր նախագծերից «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքի (www.artsakhlib.am) հանրայնացման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ իրականացվող ծրագիրը՝ կայքի բազմապրոֆիլ շտեմարանի մասսայականացման առաջադիր նպատակով, կազմակերպության իրականացրած

կարևոր ծրագրերից է՝ միտված ՀՀ-ի ու Արցախի գիտակրթական կազմակերպություններում ճանաչողական հանդիպումների միջոցով խթանելու լսարանի հետաքրքրությունը **ԱԷԳ-ի** մատուցած հանրագուտ ծառայությունների նկատմամբ:

«Արցախի էլեկտրոնային գրադարան»-ի հանրայնացման քայլերը զգալիորեն կազմելացնեն էլեկտրոնային գրադարանից օգտվողների թիվը, կապահովեն տեղեկատվական հասանելիություն ու մատչելիություն՝ դրանով իսկ նպաստելով կրթության և գիտության զարգացմանը, ընթերցանությանը, ինքնակրթությանը, քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին, ուսումնառության ու գիտական հետազոտությունների ժամանակ կայքի էլեկտրոնային պաշարների նպատակային օգտագործմանը:

Ի սկզբանե ԱԷԳ-ի նպատակը եղել է մեկտեղել Արցախի վերաբերյալ գիտական ու գեղարվեստական գրականությունը, այն օտարերկրացիների համար դարձնել Արցախի մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու աղբյուր, խթանել Արցախի ու Հայաստանի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև որոշակիորեն հակազդել տարբեր մեդիահարթակներում դարաբաղյան հակամարտության, հայոց պետականության կերտման և այլ իրողությունների վերաբերյալ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից խեղաթյուրվող նյութերին:

Օգտվելով ցանցի հնարավորություններից՝ «Արցախի էլեկտրոնային գրադարան»-ը տեղեկատվական պաշարների համակարգված համալրման ու հանրայնացման միջոցով մասնակցում է ուսումնական ու գիտահետազոտական գործընթացներին, ապահովում է դասախոսների, ուսանողների, գիտական աշխատողների, մասնագետների և այլ անձանց գրադարանային-տեղեկատվական սպասարկումը՝ նախընտրելի բնագավառի, հիմնախնդրի վերաբերյալ տրամադրելով անհրաժեշտ տեղեկույթ:

ԱԷԳ-ի հանրայնացման ծրագրի շրջանակներում 2019 թվականի նոյեմբերի 1-30-ը ՀՀ-ում և Արցախում կազմակերպված շնորհանդեսներին մասնակցել են 2000-ից ավելի շահակիցներ: Արցախում մեկնարկը տրվել է Բերձորից՝ հանրակրթական դպրոցների մասնակցությամբ, իսկ ՀՀ-ում՝ Գորիսի պետական համալսարանից, որ ԱԷԳՄՍ-ի գործընկեր կազմակերպությունն է:

ԱԷԳՄՍ նախագահ **Ավետիք Հարությունյան** ԱԷԳ-ի մեդիա հնարավորությունները ներկայացրել ու լուսաբանել է շուրջ երկու տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններում ու հանրակրթական դպրոցներում: Այսպես՝

Արցախի շրջկենտրոններում՝

1. Բերձոր (04.11.2019թ.),
2. Զարվաճառ (08.11.2019թ.),
3. Մարտակերտ (08.11.2019թ.),
4. Շուշի (14.11.2019թ.),
5. Հադրուբ (14.11.2019թ.),
6. Ասկերան (28.11.2019թ.),
7. Մարտունի (29.11.2019թ.),

Հայաստանի Հանրապետության բուհերում՝

8. Գորիսի պետական համալսարան (01.11.2019թ.),
9. Գավառի պետական համալսարան (15.11.2019թ.),
10. Երևանի պետական համալսարան (18.11.2019թ.),
11. Հայաստանի պետական մանկավարժական համալսարան (18.11.2019թ.),
12. Արդարադատության ակադեմիա (19.11.2019թ.),
13. Եվրոպական համալսարան (19.11.2019թ.),
14. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (20.11.2019թ.),

Արցախի Հանրապետության բուհերում՝

15. Մեսրոպ Մաշտոց համալսարան (28.11.2019թ.),
16. Շուշիի տեխնոլոգիական համալսարան (28.11.2019թ.),
17. Արցախի պետական համալսարան (29.11.2019թ.):

Նշենք, որ ԱԷԳ-ի գործարկումից անցել է մեկ տարուց փոքր-ինչ ավելի ժամանակ, և այդ ընթացքում կայքն ունեցել է աշխարհի մոտ 100 երկրներից 50.000 այցելու, էջերի դիտումների թիվն անցել է 190.000-ի սահմանը, ինչը խոսուն ցուցանիշ է սկսնակ կայքի, առավել ևս՝ էլեկտրոնային գրադարանի համար:

Նման պարագայում կարևորվում է ԱԷԳ-ի մշտական արդիականացման խնդիրը՝ տեղեկատվության տարածման ու հանրայնացման նորարարական մեթոդների կիրառմամբ:

Հետևաբար անհրաժեշտ է նման հանդիպումների, քննարկումների, հարցումների միջոցով հասկանալ, թե ի՞նչ ակնկալիքներ ունեն օգտվողները ԱԷԳ-ից, ծառայությունների ինչպիսի՞ ցանկ է հարկավոր նրանց, ինչքանով է հարմար ու մատչելի կայքի ծրագրատեխնիկական ապահովումը:

Ներկայումս ԱԷԳ-ի էլեկտրոնային գրացուցակը պարունակում է 3000 հեղինակի մոտ 6000-ից ավելի նյութեր, և կայքն անընդհատ թարմացվում է: Ի վերջո, կայքի առավելություններից մեկն այն է, որ նյութերի ներբեռնումն ԱՆՎՃԱՐ է, իսկ գլխավոր նպատակը Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելն է:

ԱԷԳՄՍ-ն համոզված է, որ «Արցախի էլեկտրոնային գրադարան»-ի հնարավորություններն ու նպատակները լուսաբանող նման ճանաչողական հանդիպումները մեծապես կնպաստեն ԱԷԳ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և նախադրյալներ կստեղծեն տարբեր գիտակրթական համագործակցությունների ձևավորման, ինչպես նաև ՀՀ-ում ու Արցախում կատարվող գիտահետազոտական աշխատանքների առաջնային արդյունքները նաև ԱԷԳ-ի հարթակում լուսաբանելու համար:

«Արցախի էլեկտրոնային գրադարան»-ը Հայաստանի ու Արցախի գիտական մտքի զարգացման տեղեկատվական ռեսուրսների հիմքերից է, որի պահպանման, զարգացման ու հանրայնացման խնդիրն ունի ռազմավարական ու տեսամեթոդական գլոբալ նշանակություն:

Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՍ) հասարակական կապակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան առնվազն 2 անգամ:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ուսեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված:

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.aegmm.org կայքի «Գիտական Արցախ» պարբերականի բաժնում ծանոթանալ գիտական հրատարակումների Էթիկային և խստորեն հետևել դրան:

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՍ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 173*246 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 18 մմ:

Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն՝ Arian AMU, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է իրենից ներկայացնի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է գրել «Հիմնաբառեր» և նշել 7-10 բանալի բառեր:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (*Alignment: Justify*): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, աճման կարգով՝ 10 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (*Alignment: Justify*): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (*Bold*), այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ Ավետիք Հարությունյանի հետ՝ գրելով avetiq.hh@gmail.com էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770 հեռախոսահամարին:

The requirements for «Scientific Artsakh» journal

The «Scientific Artsakh» journal of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published at least twice a year.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal.

Before submitting the article, the authors are required to become familiar with the ethics of scientific publications set on the website www.aegmm.org in the «Scientific Artsakh» journal section and strictly follow it.

The articles published in the «Scientific Artsakh» journal are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent to the scientific.artsakh@gmail.com e-mail, with the obligatory indication of the mobile number of the author and the actual address (postal code is required).

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.

Page format: 173*246 mm, margins (left, right, top, bottom)՝ 18 mm.

Volume: 7-20 pages (summary inclusive).

Text font: Armenian-Arian AMU, Russian and English – Times New Roman.

Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree, title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author’s email is provided.

Over a line, font size 12, bold, italic an abstract (աճիքնիշխու, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB:

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References required are listed in the bottom of the page, on the rise, font size 10 pt with line spacing 1pt. The link text must be aligned on both sides (Alignment: Justify). Paragraphs begin with a space of 1 cm, using the TAB: The link indicates the name and the first letter of the author’s name of the source used (Bold), then the title of the work, volume, place of publishing, year and page.

For more information, please contact the editor-in-chief of «Scientific Artsakh» journal, PhD in Law, Associate Professor Avetik Harutyunyan, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770.

Требования к оформлению статей журнала «Научный Арцах»

Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается не менее двух раз в год.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи, рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью.

До предоставления статьи авторы обязаны ознакомиться с этикой научных публикаций на сайте www.aegmm.org в разделе журнала «Научный Арцах» и неукоснительно следовать ей.

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhlib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи должны быть присланы на электронный адрес scientific.artsakh@gmail.com, с обязательным указанием номера мобильного телефона автора и фактического адреса (почтовый индекс обязателен).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 173*246 мм, поля (левое, правое, верхнее, нижнее) – 18 мм.

Объем: 7-20 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский – Arian AMU, русский и английский – Times New Roman.

Язык представления статей: армянский, русский, английский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (աղմուտիչիղ, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, описывающий основные результаты исследования без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB:

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны, указываются в конце страницы по нарастающей кеглем 10 с межстрочным интервалом 1 пт. Текст ссылки должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзацы начинаются с отступом в 1 см, используя TAB. В ссылке указываются фамилия и первая буква имени автора использованного источника (Bold), затем название работы, том, место издательства, год и страница.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту Аветику Арутюняну, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(3), 2019

*«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն 2 անգամ:
 Հրատարակվում է 2018 թվականից:*

The «Scientific Artsakh» journal is published at least twice a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит не менее двух раз в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝
 Editor-in-Chief:
 Главный редактор:

Ավետիք Հարությունյան
Avetik Harutyunyan
Аветик Арутюнян

Գլխավոր խմբագրի տեղակալ,
 սրբագրիչ
 Deputy Editor-in-Chief, Corrector
 Заместитель главного редактора,
 корректор

Թեհմինա Մարության
Tehmina Marutyan

Теймина Марутян

Անգլերեն լեզվի պատասխանատու՝
 Responsible for English
 Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան
Alvina Nersesyan
Альвина Нерсесян

Ռուսերեն լեզվի պատասխանատու՝
 Responsible for Russian
 Ответственный за русский язык

Աշոտ Բեգլարյան
Ashot Beglaryan
Ашот Бегларян

Համակարգչային շարվածքը, ոճը,
 տառաձևերը և էջադրումը՝
 Computer set, style, font and layout
 Компьютерный набор, стиль, шрифт
 и верстка

Գիտական Արցախ
Scientific Artsakh

Научный Арцах

Շապիկի ձևավորումը՝
 Cover design
 Дизайн обложки

Արմինե Քոչարյան
Armine Kocharyan
Армине Кочарян

E-mail: scientific.artsakh@gmail.com,
avetiq.hh@gmail.com.
 Tel. (+374) 97277770.

Ստորագրված է տպագրության՝ 15.12.2019թ.:
 Չափերը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսետ, տպագրությունը՝ օֆսետ:
 Ծավալը՝ 29,5 տպ. մամուլ:
 Տպաքանակը՝ 250 օրինակ:

Տպագրված է «Անտենոր» տպագրատանը: